w 249

12004

2341 1156-ԱՀ
91(47.925)
Հ-79

# ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

կաթուղիկէ Էջմիածնի,

և հինգ

գաւառացն Արարատայ

Աշխատասիրութեամբ Յովհաննու եպիսկոպոսի շահխաթունեանց շահրի– արցւոյ միաբանի սրբոյ Էջմիածնի

Բովանդակեալ յերկուս հատորս

## ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

տպագրեալ

Հրամանաւ վեհափառ կաթուղիկոսի ամ հայոց Տ. Յովհաննու կարբեցւոյ և զանազան նշանակրի Տէրութեանն Ռուսաց

Ի Ս. կաթուղիկէ Էջմիածին

1842 = ռմղա.

1004
1844

91(47.925)+9(47.925)

Ո՛չ ՚ի կարծ ընդոստուցեալ, և ո՛չ ՚ի լուր զարթուցեալ, այլ ես ինքնին ՚ի տեղւոջն պատահեցի և տեսի.

Եղիշէ. Յեղանակ Է:

Լերինք, Գետք և Երկրաշարժութիւնք յայս Նահանգ Երեւան։

## Լերինք։

336, Մասիս լեառն Արարատեան կամ Արարատ անուանեալ ՚ի սուրբ գիրս և ՚ի մատենագրաց ազգաց յանուն Արարատ աշխարհի՝ յորում է. և ըստ տաճկականին աղր տաղ՝ ծանր, մեծամարմին լեառն. և ախրը տաղը. յանուն գեղջն Ակոռոյ. իսկ անունս Մասիս եդաւ յԱմասիա նահապետէ Հայոց յանուն նորին. Խորենացի ՚ի հատորն ա, գլուխ 11. և է լեառն բարձրագագաթ անմատչելի ոտից մարդոյ յաղագս դժուարին ելից նորա. երորդ մասն բարձրութեան սորա գագաթան հանդերձ թաղեալ կայ ընդ թանձր ձեամբ և ՚ի տօթագին աւուրս ամառան։

՚Ի ձիւնապատ գագաթանէ անտի յարևելից հիւսիսոյ ցանկոյ գիւղ պատառեալ է մարմին մեծի լերինս. և յայսմ պատառուածի են մեծամեծ ձորք և ծործորք, և ՚ի վեր անդր քան զաղբիւր սրբոյն Յակոբայ գտանի վէհ մեծ անհնարին խորութեամբ՝ զոր ռամիկք կոչեն սառցատուն. զայս պատառուածոյ գրէ Խորենացին ՚ի հատորն ա, գլուխ 29. ,,Նայց զնախատացեալ կինն (Աժդահակայ) Անոյշ բնակեցուցանէ (Տիգրան ա,) որդւովք իւրովք յանդորրութեան պատառուածի փլածի լերինն (Մասեաց)՝ զորմէ լեալ ասեն յահագին իմն շարժմանէ, զոր պատմեն՝ որք բազմաշրջութեան հրամանաւ Պտղոմեայ աշխարհիզօք զննութեամբ մարդկան չափեցին ,,։ Զայն յիշատակէ

և Մխիթար անեցի ի ժամանակագրութեանն։

Ստորոտք լերինս 'ի հիւսիսոյ կողմանէ կարի խոնարհ իջանէ ցդաշտանդր և ցգետն Երասխ. մասն արևելակողման գրեա՛ թէ են խիճք և աւազք հոսեալք 'ի վերուստ անտի լերինն ըստ մեծի մասին 'ի պատառուածէ անտի հանապազորդեն իջմամբ հեղեղացն. իսկ յայս հիւսիսակողմն են կուտակ կուտակ բլրակք մեծամեծ քարանց՝ սկսեալ յականէ սեաւ ջրոյն և 'ի Թարակիթ անուանեալ գեղջէ (Տաշպուրուն) ցՄ՛ըրհաճի գիւղ և անդր ցաւերակն Արշակաւանի. այսր կողման մարմին լերինս ունի առաւել խորաձոր տեղիս և ծործորս բացեալս 'ի հեղեղաց և 'ի գետնաշարժութեանց՝ յորոց քարինք անկեալք 'ի բարձրութեանցն կան այնպէս կուտակեալք՝ 'ի կողմանէ աստի առաւել հնարաւոր է ընթացից մարդոյ 'ի վեր 'ի լեառն։ Իսկ ստորոտքն արևելեան, հարաւային և արևմտեան կցեալք են ընդ երից խոնարհ լերանց աղխեւոց ընդ այլ լերինս։ Հարածուլթիւն ստորոտի լերինս դնեն հնգօրեայ ճանապարհ ձիաւոր առն։

'Ի բարձրութեան գագաթան սորա անդր քան զսպառուած պատառուածին են երեք ձիւնաթաղ բլրակք. հիւսիսայինն խոնարհ, իսկ միւս երկուքն արևելեան և արևմտեան սրածայրք և անմատչելիք իսպառ. յորս իսկ նոքին պարոն Պարրոտն և ընկերք իւր չկարացին մատչել յամին 1829, յամսեանն սեպտեմբերի, և 'ի ստորոտի անդ բլրակացն՝ ուր կարացին ժամանել, կառուցին ըզփոքրիկ խաչ փայտեայ՝ յոր պնդեալն էր տախտակ կապարեայ այսու գրուածովք։

,,Այն սա եղև ապաստանարան ամենայն քրիստոնէից ըստ հրամանի ՆՈՐԻՆ կայսերական մեծութե ինքնակալի ամենայն Ռուսաց ՆԻԿՈԼԱՅ ՊԱՒԼՈՎԻՉԻՆ, քաջայաղթ սպառազէն բազկաւ անպարտելի ապարապետին Պասկևչին ե-

րևանայ. 1829, սեպտեմբերի 17ին:

Առաւել 'ի պատառուածի անդ է հեղեղ՝ հալոցք ձեանց, քան յայլ կողմանս՝ որ հոսել հասարակօրէն ը̃ ձորն և անցեալ զհիւսիսային կողմամբ աւազանին աղբեր սրբոյն Յակոբայ, և ըզհարաւային կողմամբ մենաստանին նոյն սրբոյ՝ մըտանէ 'ի գիւղամէջ անդր Ակոռւոյ, և դարձուցեալ զաղօրիսն իջանէ յոռոգումն արտորէից և այգեստանեայց այնր գեղջ: Իսկ երբեմն 'ի փլուզանիլ և յանկանիլ լեռնանման մեծակուտակ ձեան հիւսոյ 'ի կատարածէ անտի պատառուածին ընդ զառ 'ի վայրն, թնդիւն և արձագանք մեծահնչիւն արձակի՝ մինչև լսելի իսկ լինել 'ի դաշտամէջ անդր հարուստ հեռաւորութ̃ե. և այն յորդահոսան հեղեղ բերով սրընթացութեամբ երբեմն երբեմն վնաս մեծ գործէր գեղջն և անդաստանացն:

'Ի հոսիլ ձեանն 'ի վայր և 'ի ցրուիլ մեծամեծ սառուցեալ հատորոցն ելանեն մեծամեծ որդնուկք, այսինքն զեւլալ, զոր խորտակեալ գտանեն 'ի նմա ամենամաքուր ցուրտ ջուր առողջարար և զովացուցիչ. տայր բերել աստի 'ի մերում ժամանակի Հիւսէյին խան սարտարն Երևանայ՝ այն ինչ ապահովանայր 'ի ջերմագին աւուրսն ամառան անդ յակոռի յիւրում առանձին պալատան: Այս գիւղ բազմամարդ և այս պալատ խանին և մենաստանն վերոյիշեալ սրբոյ բընակչօք և անասնօք հանդերձ ծածկեցան ընդ քանդուածովք լերինն՝ ընդ ձեամբք, ընդ սառուցօք և ընդ խճովք և մեծամեծ քարամբքն հոսելովք 'ի վերուստ անտի ընդ զառ 'ի վայր հեղեղացն 'ի շարժէն եղելոյ յանցեալ 1840, 'ի 20, յունիսի:

'Ի նորբաղնին անուանել բառարանի Ռուսաց 'ի տառն ա, և 'ի բառն Արարատ դնի վանն լերինս թէ՝ է ընդ 39. 30, աստիճանօք հիւսիսային

լայնութեան , և ընդ 42՝ 15 , աստիճանօք արևելեան երկայնութեան . իսկ վասն բարձրութեանն՝ առեալ 'ի գրուածոց պարոն Ֆարրօտի , գտնէ թէ՝ բարձր է գագաթ լերինս 'ի վեր քան զմակերևոյթ ծովուն Ովկիանոսի 16 , 254 ֆուտ փարէժու՝ որ լինի ըստ ռուսաց 17 , 284 ֆուտ . և թէ՝ բարձրութիւնն գագաթան Արարատայ 'ի վերայ հարթայատակ դաշտի իբր 3 , վերստ :

Գրի անդ ևս թէ՝ ,, 'ի ցրուելն թանձրամած ամպոց 'ի կատարէ անտի լերինն Արարատայ՝ բարեկրօնքն 'ի հայոց անտի անկեալ յերկիր՝ խաչակնքեն և աղօթեն ,, ։ պարոն գրիչն այսմ բարեկրօնութեան հայոց՝ որպէս ինձ թուի , չէ՛ ինքնին լեալ ականատես . և գուցէ ընկալեալ իցէ զայն յանինայ օտարատեաց գրչէ իմեմնէ . քանզի այդօրինակ բարեկրօնութիւն 'ի հայս՝ առաւել պարտի լինել յայս նահանգ Արարատայ՝ յորում իսկ ծընեալ և սնեալ եմ ես ինքն . և 'ի միջոցս քառաներեքամեայ հասակի իմոյ չե՛ք իմ տեսեալ երբէք զայդ բարեկրօնութիւն 'ի բնակիչս այսր նահանգի : Ապաքէն պարտ է խոհական մտաց խղճել յայդպիսիս զերևելի ազգէ իբրև զհայոց :

337 , Մասիս փոքր . ոստ ինչ մեծի լերինն հաւաք սրածայր 'ի բարձրաւանդակ ստորոտի նորին՝ փոքր ինչ յարևելեան հարաւ . թէպէտ աւազուտ և խճոտ է 'ի չորից կողմանց , այլ դիւրագնաց է 'ի գագաթն . Ընդ 'ի գագաթան ունի տափարակ տեղի՝ ուրանօր գտանին ինչ ինչ կոփածու վէմք դրոշմեալք պարսկական տառիւք ըստ աւանդելոյ ոմանց ականատեսից , և շիրիմք ինչ անդէն ամփոփելոց 'ի վաղուց :

338 , Լեառն Մաղարթայ՝ աւելի քան զոտան ժամ հեռաւորութեամբ ուղղակի յարևելս 'ի մեծ լեռնէ անտի Արարատայ . և է մերձ 'ի հին Ջուղայ յարևմտից հարաւոյ նորա , և յարևելից

հարաւոյ աւերակին Խրամ քաղաքի · առ որով է
հոչակաւոր մենաստանն յանուն Ստեփաննոսի Նա-
խավկայի 'ի հիւսիսային ստորոտի նորա՝ կալով ին-
քեան 'ի հարաւային եզեր ձորոյն Նորասխոյ · և
այն մենաստան անուանէր 'ի հնումն յանուն լե-
րինն՝ մենաստան Սաղարթայ լերին ։

339 · Լեառն Կարուայ՝ է յարևելեան ծայ-
րի գաւառին Արարատայ՝ որ բաժանէ զսահմանս
վիճակին Ջաւթևոյ և գաւառին Կողթան, որոյ 'ի
ծոցաւոր արևմտեան ստորոտի է գիւղաքաղաքն
Ագուլիս և 'ի հարաւային ստորոտի Որդուար՝ որ
այժմ ասի Օրտուպատ ։

Կոտի այսր լերին 'ի հիւսիսակողմանէ սկը-
սեալ՝ այն է, յարևելեան ծայրէ ծովակին Գե-
ղարքունւոյ և յառաջացեալ ուղղակի ընդ հա-
րաւ՝ աւարտի 'ի մեծ գետն Երասխ առ Որդուար
գիւղիւ ։ 'Ի հիւսիսային ծայրէ գօտւոյ այսր լե-
րին երկու այլ ևս գօտիք լերանց յառաջացեալ
յարևմուտս յերկուց կողմանց ծովակին Գեղար-
քունւոյ՝ հարաւայինն գայ աւարտի 'ի Կառնի հին
գիւղաքաղաքն և 'ի Կոտայս գաւառ · իսկ հիւսի-
սայինն՝ որ անուանի այժմ գիւնէլիք ([illegible])
աւարտի 'ի Ծաղկունիս գաւառ և կցի ընդ լե-
րինս Սպարանու՝ այն է, յարևելեան ստորոտս մե-
ծի արագած լերին · այս երկու լերինք փակեն
յինքեանս զծովակն և զշրջակայ գաւառսն յա-
նուն Գեղարքունւոյ ։

340 · Լեառն գեղամայ · Թէպէտ ընդարձակ
է այս անուն 'ի սահմանի ասա Գեղարքունւոյ,
այլ այժմ՝ որպէս և նկատի 'ի հինսն, է այն լեառն
բարձր քան զայլսն՝ որ 'ի հարաւոյ ունի զմենաս-
տանն Արիւանոց և զհին գիւղաքաղաքն Կառնի,
յարևմտից զգաւառն Կոտայից ([illegible]) 'ի հիւ-
սիսոյ զմասն ինչ Ծաղկունեաց ([illegible]), զգա-
ւառ անուանեալ գիւղաքաղաքն բնակեալ այժմ

'ի գաղթականացն Պայաղիտոյ. իսկ յարեւելից՝ է հարաւ զԼողեգնաձոր, եւ ընդ հիւսիս՝ զծովակն. Եւ ունի 'ի բարձրութեան անդ ընդարձակ վայրս արօտից եւ զլճակս՝ ժողովս ջուրց. 'ի տեղիս տեղիս այսր բարձրութեան գտանին ձիւնք եւ յամառան:

341, Լեառն Շամիրամայ. ոչ այնքան լեառն, որքան մեծ բլրակ, եւ է 'ի կոտայս գաւառի յարեւմտեան ստորոտի լերինն Գեղամայ. յայս անուն անուանեցաւ ըստ հին աւանդութեանն. քանզի 'ի գալ տիկնոջն Շամիրամայ պատերազմաւ 'ի վերայ գեղեցկին Արայի հայկազնոյ՝ յստորոտի այսր բլլրակի բանակեցաւ նա զօրօքն Ասորւոց. եւ երեւի սոյն աւանդութիւն. զի մերձ յայս բլրակ 'ի դաշտի անդ Կոտայից գտանին գիւղօրայքն՝ տեղի անկմանն Արայի, Արզնի եւ Արամուս՝ այն է, արամօնս, եւ ըստ ոմանց արախոյզ:

342, Լեառն Արայի է յարեւմտից լերին Շամիրամայ հանդիպահայեաց իրերաց. յորոց միջոցի է գաւառն Կոտայից եւ արեւելեան մասն գաւառին Նիգայ. եւ սա եւս ըստ վերնոյն համարի ոստ ինչ մեծի լերինն Արագածու յարեւելեան ստորոտի նորա. 'ի հարաւոյ եւ յարեւելից սորա է ընդարձակ դաշտ մինչեւ ցգետն Հրազդան. Անուանի այս լեառըն ըստ այլազգականին ղարնը եարըղ. զի ունի 'ի գագաթանէ ցստորոտն պատառուած 'ի հարաւոյ կողմանէ: Յայսմ դաշտի եւ յստորոտի լեռնաձեւ ոստոյս այսորիկ՝ ասեն բնակեալ գեղեցկին Արայի զօրօք իւրովք ընդդէմ ճակատու զօրացն Շամիրամայ. յոյր անուն կոչի ցարդ Լեառն Արայի:

343, Արագած լեառն 'ի հիւսիսային եզեր դաշտին Արարատայ՝ որ բաժանէ զսահմանս այժմեան Արարատայ եւ Շիրակ գաւառի, ունելով զայն 'ի հիւսիսոյ կողմանէ. յարեւմտից ունի զԱ

խուրեան գետ և զԼինի քաղաք ։ Ըստ բարձրութեանն է կարի լայնանիստ՝ երկայնել ստորոտովք. մեծ մասամբք ընդ արևելս և ընդ արևմուտս ։ ՚Ի գագաթան այսր լերին են սեպացեալ ոտք չորք միմեանց հանդիպահայեաց՝ որոց միջոց գոգով վայր գոգաւոր ունի զծողով ջուրց · շրջապատ այսր լճի և ծմակային առապարք սեպացեալ ոստոցն են ձիւնաթաղ և յամարայնի · ՚ի գագաթանէ արևելեան ոստոյ յարևելեան կողմանէ ծորի ծծումբ ամենամաքուր, և սառուցեալ կախի ՚ի բարձրութենէ անտի՝ յորմէ երբեմն ՚ի վայր ընկենուն ումբովք հրացանից ։

՚Ի բարձրութեան անդ յստորոտի արևմտեան ոստոյն է միւս լիճ ընդարձակ՝ ժողովեալ յաղբերց անտի ոստոյն և ՚ի հալոցաց ձեանցն · ՚ի լճէ աստի որպէս ՚ի հնումն, նոյնպէս և ՚ի մերում ժամանակի ետ հանել՝ կամ լաւ ևս ասել, նորոգել զառուակ ջրոյն Հիւսէյին խան սարտարն երևանայ վասն անդաստանաց գեղջն Նիւրականայ և այլոց ։ Յերկուց լճաց աստի են բովանդակ ջրաբաշխութիւնք լերինս ՚ի կողմանս իւր չորեսին, և ակունքն իսկ մեծի շամբին սևաւ ջրոյ (ղարասու) որ գետակնացեալ անկանի յԱրաքս ։

Ալալեան ըստ ջրաւէտութեանն է և խոտաւէտ և ծաղկաբեր · և ունի մեղր պատուական յինչ ինչ գիւղօրայս մերձ ՚ի Կարբի · ուստի և քաղաքանայ յամառան ողջոյն բազմամարդութիք վրանաբնակաց՝ քրթաց, տաճկաց և սակաւաթիւ հայոց՝ որք են ամենեքեան խաշնադարմանք և տավարածք ։ Զանուանադրութէ լերինս չէ՛ պարտ երկարել · զի քաջայայտ է ամենեցուն թէ՝ ընկալաւ զայն յանուանէ Արմենակայ նահապետի որդւոյ Հայկայ ։

344, Նարդող լեառն · ըստ այլազգականին Թաքալթաւ · անկանի ՚ի Ճակատ գաւառ ՚ի հա-

բուայլն եզեր Երասխայ, յարեւմտեան սահմանի Մեծի դաշտիս այսորիկ. ունի յարեւմտից զԿաղզուան գիւղաքաղաք, և 'ի հարաւոյ զհովասուն բարձրաւանդակ վայրն՝ (Սինակ) կոչեցեալ 'ի վըրանաբնակ քրդաց. և յարեւելեան ստորոտի իւրում զաղահանան և զԿողբ գիւղ: Գօտի այսր Արարատ լերին յառաջացեալ դէպ յարեւելս ըղհարաւ կողմամբ այսր դաշտի միանայ ընդ Մեծի լերին Մասեաց. 'ի միութեան աստ է անցք Ճանապարհին՝ որ ընդ Երեւան և ընդ Պայազիտ:

345, Լեառն Բամբակի է 'ի միութե անդ յարեւմտակողման Ճանապարհին Պայազիտոյ. կոչեցաւ յայս անուն 'ի բնակչացս. քանզի երկրագործք սերմանեն զունդ բամբակի մինչ չև է բոպառեալ ձիւն 'ի գագաթանէ սորին, այլ 'ի սպառելն ոչ ևս սերմանեն, զի ոչ գայ 'ի հասունութի:

346, Ակոքիւք լերամբք և աղխախեալ գօտեօք նոցին ձեւացեալ է այս դաշտ Արարատեան երկարաձիգ բոլորակ. և բաժանի 'ի վեց մասունս. դաշտն Սուրմալւոյ 'ի միջոցի Երասխայ, Արարատ լերին, Ալամբակի լերին, Մեծին Մասեաց և սեաւ ջրոյն Ակոռոյ. դաշտն Սարդարապատու՝ այն է, Արմաւիրայ հնագոյն քաղաքի հայոց, և է 'ի միջոցի Երասխայ ունելով զնա 'ի հարաւոյ՝ Ախուրեան Գետոյ, Մեծի լերին Արագածու և Մեծի շամբին սեաւ ջրոյ. դաշտն Վաղարշապատու է 'ի միջոցի՝ յիշեալ Մեծի շամբին, Արագած լերին և Արայի, Հրազդան գետոյն և Երասխայ. դաշտն Գառնայ է 'ի միջոցի Հրազդան գետոյ, լերին Գեղամայ, Շարուրայ, և Երասխայ. դաշտն Շարուրայ բաժանեալ 'ի դաշտէն Գառնայ խիտաախիտ բլրակօք երկայնեալ 'ի հիւսիսոյ՝ 'ի լերանց Եղեգնաձորոյ ընդ հարաւ ցգետն Երասխ. և այս աղխախ բլրակաց կոչի 'ի տաճկաց Գռահնա, և է 'ի միջոցի Երասխայ, լե-

րանցն Եղեգնաձորոյ և սահմանին Նախիջևանայ, և է փոքր քան զայլսն. իսկ աստի անդր ընդ յարևելս է դաշտ կամ սահման Նախիջևանայ ընդարձակօրէն առեալ է 'ի միջոցի Երասխայ, լերանցն Գարուայ և Եղեգնաձորոյ, որ պարունակէ յինքեան և զսահմանս Երնջակայ և Գողթան։

Գետք.

347. Երասխ. որ սկզբնաւորի 'ի լերանցն Կարնոյ (Էրզրում) և գայ մտանէ յայս դաշտ յարևմտից առ աւերակօք Երուանդաշատ քաղաքի որ յստորոտի անդ Նարդող լերին. և ընթացեալ 'ի ձորամիջի և անցեալ ընդ Սուրմարի աւանաւ ցԵրուանդակերտ՝ ելանէ 'ի դաշտն յընդարձակ ընթացս՝ զոր ընդ մէջ հատեալ, զմեծ մասն թողլով 'ի հիւսիսակողմն՝ գնայ մինչև ցՆախիջևան և ցմեծաստանն Աստապատու, և անդ ևս մտեալ 'ի խորաձորս՝ ելանէ անդրէն 'ի դաշտ զառաջեաւ հին Ջուղայու մինչև ցսահմանս Օրդվատ գեղջ. ապա ևս մտանէ 'ի խորաձորս. և անցեալ այնպէս ընդ սահմանսն արևելեան սիւնեաց, 'ի վերջոյ ելեալ յընդարձակ դաշտ՝ գնայ, միանայ ընդ Կուր-գետ և անկանի 'ի ծովն Կասպից։

Այս գետ բաշխէ զջուր յիւրմէ մասնաւորապէս 'ի փոքրիկ գաւառն Սահաթլու կոչեցեալ այժմ, 'ի դաշտավայրսն Սուրմարւոյ և Սարտարապատու. որոց բովանդակ գիւղօրայք վասն անդաստանաց իւրեանց առնուն որոշ որոշ առուօք զջուրս։

Հինգ կամրջատեղիք են 'ի վերայ գետոյս 'ի սահմանի դաշտիս Արարատայ շինեալք 'ի հնումն քարամբք և կրովք, այլ անցել բազում դարուց 'ի վերայ՝ քայքայեալ են իսպառ թէ 'ի յորձանաց գետոյն, և թէ յայլ պատճառաց. ա. կամուրջն

Նորուանդաշատ քաղաքի, Ե՝ Նորուանդակերտի, Զ՝ Մրտաշատայ, Է՝ Նախիջևանայ և Ը՝ Հին Ջուղայու, որոց հազիւ նշմարանք հետոցն երևին:

Գետք որք անկանին յԵրասխ 'ի հիւսիսոյ կողմանէ.

348, Ախուրեան գետ սկզբնաւորի յերկուց ձիւղից, մին յանտառէն Դասենոյ անցեալ ընդ քաղաքն Կարուց՝ գայ յարևմտից. և միւսն 'ի հիւսիսոյ կողմանէ 'ի լճէն անուանեալ գայլոյ անցեալ յԱլէքսանդրապօլ քաղաք (Գիւմրի) մերձ նմին յարևմտից նորա, և այնպէս յառաջացեալ գան, միանան մերձ 'ի գիւղորայսն՝ Փիրվալու յարևելից, և Աստախան յարևմտից և ուղղեալ զընթացս ուղղակի ընդ հարաւ՝ անցանէ 'ի ձորամիջի ընդ Անի քաղաք, ընդ ամրոցն Բագարան, և գայ, խառնի յԵրասխ զառաջեաւ Նորուանդաշատի:

349, Մեծամօրի գետ. ջուր մեծի շամբին ժողովեալ 'ի բազմակն աղբերց հեռի յԷջմիածնէ յարևմտից նորա միջոցաւ երկուց ժամուց. այս գետ յետ բաշխելոյ յիւրմէ զմասնաւոր ջուր քանի ինչ գիւղօրէից՝ ընթանայ ընդ յարևելս հարաւոյ Էջմիածնի և յինքն ընկալեալ զՔասաղ գետ՝ անկանի յԵրասխ. կամուրջ Մեծամօրի կոչեցեալ 'ի գիրս, գտանի 'ի վերայ գետոյս յառաջ քան զխառնուրդն ընդ Քասաղ: Յայս շամբ անկանի խոզակերպեալ մեծ արքայն Տրդատ զկնի նահատակելոյն զկուսանսն:

350, Քասաղ գետ. սա սկզբնաւորի յԱրագած լեռնէ յստորոտէ նորա արևելեան հիւսիսոյ 'ի յորդաբուխ աղբերց առ Պաշ ապարան կոչեցեալ գիւղիւ. և 'ի մերձակայից ևս ընկալեալ զջուրս մանունս 'ի լեռնոտաց անտի Ապարանու ընթանայ փոքր ինչ ընդ յարևելս, և ապա ընդ արձակ պտոյտ առեալ՝ շրջի ընդ հարաւ կոյս, և մը-

տեալ 'ի խորաձորս ընթանայ այնպէս ցվախճան անդաստանացն Օշականու և ելանէ 'ի դաշտ. և ընկալեալ յինքն զջուրսն փարպւոյ և Ներբերդայ՝ անցանէ յարևմտից Էջմիածնի, և խոտորեալ յարևելեան հարաւ խառնի 'ի Մեծամօրի գետ և անկանի յԵրասխ:

Բազում գիւղօրայք են առ գետովս. ուստի աւելի քան զերկուս ամիս յամառնային եղանակի ոչ գտանի ջուր յընթացս գետոյն յստորև քան զԷջմիածին. բայց 'ի գարնան բազմիցս զայրացեալ յորդութեամբ՝ քակէ զջրաղացսն Աշտարակ և Օշական գիւղից և ողողէ զանդաստանս Էջմիածնի և այլոց. որպէս յամին 1834, հիմնովին խլեալ անհետ արար զեկեղեցի անապատին Յոհանավանաց 'ի ձորամիջի անդ:

Ջուր սորա կարի առողջարար է յընթացս իւր մինչև ցմենաստանն Յօհանավանաց. այլ անդ 'ի ձորամիջի թղխմունք աղբերց վասն ջուրց վնասեն մաքրութեան նորին. ուստի և մինչ ցանդր գտանին յոլով կամրախայտ ձկունք. իսկ յստորև այլատեսակք:

351, Հրազդան գետ ունի զերկուս ճիւղս՝ յորոց սկզբնաւորի, մին է 'ի ձորոյ անտի պղնձահանից յարևմտակողման, և միւսն յարևելից՝ յարևմտեան ծայրէ ծովակին գեղարքունւոյ՝ որք յառաջացեալ գան, միանան մերձ յԱրնտամալ գիւղ ծաղկունեաց. և անտի ուղղակի ընդ հարաւ՝ յարևմտից եկեղեցեացն կեչառուաց ընդդառ 'ի վայր 'ի խորաձորն ընթացեալ գայ, անցանէ ընդ Երևան քաղաք յարևմտից նորա. և մերձ 'ի կեօքբիւմբէթ ելանէ 'ի դաշտ, և այնպէս գնայ անկանի յԵրասխ. պատուական ձկունք են 'ի սմա կարմրախայտ, կապիտ ախորժաճաշակ, սարիկեօղ, մուրզի և գոճի: Նոյնովին արդիւնաբեր է այս գետ, և է մեծ քան զՔասաղ. ուռ-

գանէ զայգիս, զպարտէզս և զծառաստանս Երե-ւանայ և զանդաստանս գիւղօրէիցն՝ որք յստորև քան զԵրևան։

352. Աղատ գետ․ է ջուր Գառնւոյ՝ որ սկզբնաւորի 'ի լեռնէն Գեղամայ մերձ 'ի մենաստանն Այրիվանից, և ընդունելով յինքն զմեծամեծ աղբերակունս 'ի խորաձոր անդր մերձ 'ի Գառնի՝ գնայ, ելանէ 'ի դաշտ մօտ 'ի Դւինն յարևմտից նորա․ և այնպէս ընթացեալ անկանի յԵրասխ։ Համառնային եղանակի ոչ գտանի և յընթացս սորա ջուր յստորև քան զառուագլուխսն գիւղօրէից սակս յոլովութեան անդաստանացն․ ջուր սորա առաւել առողջարար է քան Երասխ և Հրազդան գետոց և ունի զկամրախայտ ձկունս։

353. Գետ Շարուրայ․ թէ յառաջին զինչ անուանակոչութիւն այսմ՝ չէ՛ք ինչ յայտնութիւն 'ի ծանօթ մատենագիրս, այլ այժմ վերաձայնի առ հասարակ 'ի բնակչացս արփայ չայը յանուն Արփայ գեղջն՝ որ գտանի յԵղեգնաձոր (վայոց ձոր) 'ի հարաւային եզեր այսր գետոյ, հեռաւորութեամբ 'ի հիւսիսային ծայրէ դաշտին Շարուրայ 'ի ձորամէջ անդր իբր ժամս երկուս․ յորոյ վերայ տեսանի մերձ 'ի գիւղն և աւերեալ տեղի քարաշէն կամրջոյ՝ որ թերևս իցէ շինեալն 'ի Սարգիս եպիսկոպոսէ Նորավանից հրամանաւ Տարսայիճ իշխանին Սիւնեաց։

Այս գետ ժողովեալ յարևմտեան լերանց Եղեգնաձորոյ և ընթացեալ յարևմուտս կոյս գայ մինչև ցԱրփայ գիւղ, և փոքր ինչ ևս այնպէս յառաջացեալ՝ ապա ուղղի ընդ հարաւ, և մտեալ 'ի դաշտ Շարուրայ մերձ առ Նորաշէն գիւղ՝ բաժանի մասամբ արուեստաւորեալ առուակօք, և արբուցանէ զբովանդակ անդաստանս գիւղօրէից դաշտին Շարուրայ, և անցեալ ընդ մէջ այնր

անկանի յԵրասխ : Կարի զայրանայ այս գետ ՚ի գարնան, և բազմիցս ոչ տայ անցս անցորդացն յորդութեամբ և սրընթացութեամբ իւրով՝ թէ և ՚ի տեղիս տեղիս յընդարձակս տարածի. գտանին և ՚ի սմա կամրախայտ ձկունք :

354, Ջուր Նախիջևանայ ժողովեալ ՚ի լերանց Եղեգնաձորոյ և անցեալ Է ջահուկ՝ գընայ ՚ի Նախիջևան և արբուցանէ զանդաստանսն և զայգիս, և անկանի յԵրասխ :

355, Գետ Երնջակայ նոյնպէս ժողովեալ յարևելեան սահմանաց Եղեգնաձորոյ, և անցեալ ընդ Երնջակ և ընդ մենաստանն սրբոյ Կարապետի յարևելից նորա՝ բաշխի ՚ի գիւղօրայսն. և ընթացք իւր յառաջացեալ անկանի յԵրասխ մերձ յԱստապատ :

356, Ջուր Ազատն գիրանայ՝ որ նոյնպէս յարևելեան ծայրէ Եղեգնաձորոյ ելեալ, և անցեալ ընդ Ազատն գիրան, և բաշխեալ ՚ի գիւղօրայսն՝ յանգի հեղեղատ նորա յԵրասխ յստորև քան զՀին Ջուղայ :

357, Բաց յայսոցիկ վերոյիշեալ ջուրցս՝ որք ՚ի հիւսիսակողմն Երասխայ՝ սկսեալ յարևմտեան ծայրէ գաւառին աւարտեցաւ ասա յարևելս ցԳողթն գաւառ, են և այլ ջուրք մանունք թէ ՚ի միջոցս այսոցիկ գետոց, և թէ յայլևայլ կողմանս նոյն նշանակեալ լերանցն. որպիսի են ջուրքն Սատարայ գիւղի, Խանայ, Արուձայ, Կուաշայ, Սըժանայ, Անբերդայ, փարպւոյ, Կարբւոյ և Շիրաղօլայի գեղջ Ապարանայ. այսոքիկ յորագած լեանէ անտի. ջուրքն Եղիվարդայ, Կեչառուաց, Կոտայից (Զէնգի–չայ), Ս էտէի կամ վէթու, Սատարակայ, Խոզբայ և աւանին Ագուլիսայ. և քսան և չորք ջուրքն՝ որք բղխեալ ՚ի շրջակայ լերանց ծովակին Գեղարքունւոյ անկանին յայն, և բազմօք նպաստեն անդաստանաց և աղօրեաց բնակչացն :

18474
ИМЕНИ ... Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Իսկ ՚ի հարաւային կողմանէ մեծի գետոյն Երասխայ սկսեալ յարեւմտից անտի՝ ջուրքն Կողբայ, գեղջն Զնչաւատից, Մէրկէկուլապայ, Որկովու (օրկով), Նկոռոյ, և գետն Ը, Մեծամօրի՝ այն է, եղեգնուտ սեաւ ջուրն Նկոռոյ. առ որում երբեմն անյայտ լինելն ՚ի խորափիտս ինչ երկրաւոր իւրով Նռաւագ Ը, որդի Նռաշխի Ը, պատճառաւ որսոյ. գոն թէպէտ յայս կոյս և այլ հեղեղատ ջուրց, այլ փութով ցամաքին ՚ի բառնալ ձեանցն ՚ի լերանց անտի.

Նշանաւորութիւնք :

358, Ա. Զօրմէ գրէ Խորենացին. Ա հատոր, գլուխ 29. որով ըստ նկատելոյ բացաւ այն խորաձոր պատառուած յարեւելեան հակատու մեծի լերին Մասեաց՝ յորմէ անտարակոյս երբեմն լինել և այլ մեծամեծ քանդմանց, աւերանաց և կոտորուածոց բնակչաց ընդ փլատակօք. որք սուգին ՚ի յետագայ ճառելեաց ասաի: Յիշատակէ զմանէ և Մխիթար անեցի ՚ի ժամանակագրութեանն.

359, Բ. Շարժն որ եղև առաւելապէս յԵղեգից ձոր՝ յորմէ դիպուածոյ փոխարկել անուան գաւառին կոչի Վայոց ձոր ևս. ոմանք դնեն զայս շարժ ՚ի պատճառս մահուան իբր, եպիսկոպոսի սիւնեաց Ստեփաննոսի՝ որ դիպաւ ՚ի սկզբան անդ ութներորդ դարու:

360, Գ. Նոյն շարժ սաստիկ ՚ի Թուականին հայոց ՅԺԲ. յամի 863. ըստ Ասողկայ. իսկ ըստ պէս պէս հին օրինակաց Սամուէլի միով ամաւ յառաջ. և աւերեաց զբազում շէնս քաղաքաց, գիւղորէից, եկեղեցեաց, և զբազմութիւն մարդկան թաղեաց ընդ աւերածովքն՝ առաւել ՚ի Դուին քաղաքի ըստ Յովհաննու կաթուղիկոսի. այլ Մխիթար անեցի դնէ զթիւ վտանգեալ մեռելոցն

տասներկու հազար (12000)։

361, Դ. Շարժ կարի սաստկագոյն քան զայլն դիպեցաւ յելս՝ անդ Թ. դարու ՚ի գիշերի միում. և զգլխովին յեղծուածս դարձոյց զԴուրին քաղաք փլուզանելով յական թօթափել՝ ըստ Յովհաննու կաթուղիկոսի, զպարիսպն հանդերձ բրգամբքն, զտունս, զեկեղեցիսն և զկաթուղիկոսարանն. և զանհամար բազմութիւն մարդկան հեղձամահ արար ընդ փլատակօք. զորոց զթիւ գրեն առաւել քան զեօթանասուն հազար ոգիս. դիպեցաւ այս շարժ ըստ չամչեան Միքայելի յամի 894։

362, Ե. Յամի 1319, և ՚ի Թուին հայոց չհը, եղև շարժ սաստիկ յաշխարհի աստ Արարատայ և ՚ի սիւնիս՝ յորում քանի աւանք բնակչօք հանդերձ ընկղմեցան ՚ի Գեղարքունի. կործանեցաւ և մենաստանն Թադէոսի առաքելոյ տաճարաւն հանդերձ որ յԱրտազ գաւառի, յորում մեռան և ոգիք 75. իսկ աւերութիւն քաղաքին Անւոյ մեծագոյն։

363, Զ. Երկրաշարժութիւնն ՚ի սիւնիս յամի 1622, զոր պատմէ Առաքել դաւրիժեցի ՚ի 21, և ՚ի 22, գլուխսն պատմութեան իւրում։

364, Է. Շարժ դիպեալ յամի 1679. ՚ի Թուին հայոց ռճիը, ՚ի 4, աւուր ամսեան յունիսի, յեօթներորդ ժամու աւուրն՝ աւերեաց զբաղում տեղիս. կործանեաց զամրոցն Երևանայ և զկամուրջն գլխովին՝ որ առ Նովաւ ՚ի վերայ Հրազդան գետոյ, կործանեաց զեկեղեցիս և մզկիթս և զբաղում տունս քաղաքին և գիւղօրէից. զեկեղեցիս մենաստանացն Աղջոց վանաց, Արիվանաց, Հաւուց թառայ, Խորվիրապայն, զեկեղեցին Ջրվէժ գեղջ, զՋագավանից, զՆորագաւիթն, զՆորագեղջն, զՆորքայն, զԳետամրէզ գեղջ, զսարաւոյրն Տրդատայ՝ որ ՚ի գառնի, ([illegible])։ Զայս ամենայն յանուանէ նշանակէ Զաքարիա սարկաւագ.

Յօհաննավանաց. Է հատոր, 51, գլուխ. և յարէ ապա. ,, Այլ 'ի հայրենի գիւղն իւր 'ի Բռնաքեռ թուեցին զմեռեալսն՝ 1228 ,,: Փլան և շինուածք մենաստանին Յօհաննավանաց, խախտեցաւ և եկեղեցին. և եղեն քանդմունք ոչ սակաւ յայլ և այլ կողմանս, և վտանգ մարդկան. զորոց զթիւ՝ ասէ Զաքարիա սարկաւագ, չկարողացայ համարել: Եւ տեւեաց այս շարժ գրեա՛ թէ յամենայն աւուր մինչեւ ցհոկտեմբեր ամիս: Գրեն զայսմանէ երկաբօրէն՝ և յիշատակարանն գրչագիր յայսմաւուրի միոյ, որ 'ի գրանոց Աթոռոյս՝ յորում և ասէ. ,,'Ի յաւագ լեառն Մասիս մինչև 'ի բլուրն Տամիրամայ խաղաղ քակեաց, և մեծ աւերումն եղեւ ,,. և առանձին գրուածն 'ի վախճանի ատեան ժամագրքի իւրք՝ ըստ այսմ. ,, Պատառեցան վէմք և լերինք. և 'ի պատառմանէ վիմացն բոց ծիրանացեալ ելանէր յօդս, բարձրացաւ մառախուղն և ծածկեաց զերկիր 'ի գաւառէն Գառնւոյ մինչեւ ցլեառն Արագած հանդերձ լերամբք և դաշտօք .... Եւ դարձեալ շարժէր շարժն, և յիններորդումն աւուր 'ի հինգշաբաթւոջ .. և զոր ինչ խախտեալ մնացեալ էր յառաջին շարժէն, սա խաղաղ կործոյս և տապալեաց ,,: Այս գրուած ասէ, տեւեաց շարժն մինչև 'ի լրութիւն տարւոյն, և այլ աւելի:

365, Ը. յամի 1827, յամսեանն հոկտեմբերի եղև շարժ ոչ այնքան սաստիկ. անկան միայն խախտեալ եկեղեցի մենաստանին Ուշւոյ՝ որ յանուն սրբոյն Սարգսի, կաթուղիկէն մեծի եկեղեցւոյն Կեչառուաց. և յինչ ինչ տեղիս մասնաւոր հնացեալ շէնք:

366, Թ. 'ի 1840 ամի, յամսեանն յունիսի 'ի 20, յեօթն և կէս ժամու աւուրն ըստ եւրոպացւոց՝ մերձ 'ի Մասիս արևու. շարժեցաւ երկիր լերամբք և դաշտօք հանդերձ. և տեւեաց այս շարժ

միջոց առ միջոց գրեմ թէ ցամբողջ ամ․ այլ կարի զգալիքն դղրդմամբ շինուածոյն՝ զկնի առաջնոյն․ և 'ի 14, յուլիսի 'ի մէջ գիշերին՝ յորում լուսանայր օրն կիւրակէ, երից միջոց առ միջոց․ 'ի 28, սեպտեմբերի նոյնպէս 'ի մէջ գիշերի յառաջին ժամուն ըստ եւրոպացւոց․ այլ որ ինչ վնասք ներգործեցան՝ էին յառաջին նուագի սաստկութեն․ և մեծապէս 'ի լեառն Մասիս եթող զհետս աւերանաց․ և ըստ պատմելոյ ականատես Ակոռեցւոց՝ յառաջին նուագի անդ 'ի զնին կացելոց, այն լեառըն աճագին իբրև ծառ ինչ բաղխեալ 'ի սաստիկ հողմոյ դողայր և աճագնագոչ դղրդմունս պակուցանողս հնչեցուցանէր․ և 'ի սաստկագին երերմանէ աստի, 'ի գագաթանէ մեծի լերինն՝ ուր ծայրացեալ է մեծ պատառուածն, և 'ի հիւսիսոյ կողմանէ նորին մեծամարմին հատուած ինչ՝ կոչեցեալ 'ի բնակչացն կարմիր քարափ, ոստեալ 'ի լեռնէ անտի հանդերձ բազմամեայ ամենաթանձր հիւսմամբք ձեռանց, և այլովք քանդուածովք քարանց, ձեռանց սառուցից ամենասաստիկ շառաչմամբ անկանի 'ի սառցառուն կոչեցեալ մեծ գոգաւոր փոսորակն․ և 'ի նմա ժողովեալ կիտուածովքն հանդերձ իջանէ ընդ զառ 'ի վայր ընդ ձորն հեղեղատի մեծի պատառուածին իբրև աճագնատեսիլ թխպագին կուտակ ինչ ամպոյ․ և այն ինչ բովանդակ բնակիչք գեղջն Ակոռւոյ 'ի սաստկութենէ շարժին և յաւերանաց տանցն զանձինս իրեանց՝ ընտանեաց և որդւոց, ձողոպրել փութային արտաքոյ քան զշէնն 'ի բարձրաւանդակ տեղիս, և սոսկացեալ եւս կային ընդ իջումն այնպիսի թխպագին և որոտալից ամպոյ ընդ զառ 'ի վայրն յինքեանց վերայ, և չև եւս զեղծեալ ոմանց յապահովս, այն փլուածք ամենարագ իջմամբ ծածկեալ զմենաստան սրբոյն Յակոբայ և զեկեղեցին բնակչացք հանդերձ՝ էջ, կալաւ և ծածկեաց զքո-

վանդակ գիւղն Ակոռի և ընակիչսն՝ բաց յոմանց եղելոց արտաքոյ շինին յանդաստանսն, և 'ի կարի սակաւ զերծելոցն 'ի գեղջէն. վերջին ծայր այսր փլածի անցեալ ընդ գիւղն՝ եհաս մինչև ցվերջին ստորոտս մեծի լերին՝ ցՍևծամօրի գետ, և ցԵ-րասխ:

Շարժն յառաջին նուագի կարի յընդար-ձակս տարածեցաւ. ընդ յարևելս՝ 'ի Սիւնիս մին-չև 'ի վերջին արևելեան սահմանս վիճակին Տա-թևու, ընդ հիւսիս՝ մինչև 'ի Տփխիս քաղաք, ընդ հարաւ՝ մինչև 'ի Պարունս (Պայազիտ) և 'ի Մակու, և անդր ևս. ընդ յարևմուտս՝ մինչև յարևմտեան ծայր սահմանին Երասխաձորոյ: Ամ-առ 'ի միրամիրջէ նշանակել զվնասսն և զներ-գործութիւնսն նորին, դիցուք աստէն զթարգ-մանութիւն գրուածոցն յօրագրութիւնս Ս. Պ. բուրգեան՝ զոր 'ի լոյս էած ռուս աստիճանաւո-րն մայեօր Ոսկաբօյնիկովն 'ի կարգէ լեռնային ինժինէրաց՝ առաքեալ 'ի սպարապետէն կովկա-սու Պ. եներալ Օտինֆանտերի Գոլովինէ յիս-կական տեղին առ 'ի քննել զաւերութիւն պատ-ճառեալս 'ի շարժմանէ աստի:

„Այս շարժումն պատահեցաւ 'ի 20, յու-նիսի, 'ի վախճանի եօթներորդում ժամու՝ որ զկնի ճաշու. ստորերկրեայ ուժգին որոտմունք և թնդմունք հանդերձ դղրդմամբք, և երեր-մամբք երկրի տևեցին մինչ ցերկուս րոպէս. առա-ջին չորեքին որոտմունքն կարի սաստիկք՝ հանդերձ ստորերկրեայ հնչմամբ՝ երթային յԱրարատ լեռ-նէն յարևելս կոյս և յարևելս հիւսիսոյ՝ որք 'ի տեղիս տեղիս թողին զհետս ամենակործան աւե-րութեանց. մանաւանդ 'ի գաւառս Երևանոյ և Նախիջևանոյ, 'ի հարթայատակ եզերս Երասխայ և Սևծամօրի, սկսեալ յականց վերջին գետոյս 'ի ստորոտիցն Արարատայ մինչ ցխառնուրդս Ա-

խուրեան գետոյ Երասխ. կազմեցան քանի մի կարգք պատուարուածոց ուղղակի ըստ ընթացից այսոցիկ գետոց: Պատուարուածքս այսոքիկ յերերմանէ անտի երկրի 'ի տեղիս տեղիս բացան մինչ ցերկու ձողաչափ | սաժէն | լայնութեամբ, և ապա միացան վերստին. 'ի նոցունց և 'ի ճեղքուածոցս պատահելոց յերբեմնական արտաթորմանց հողոյ երկրի, ելին մեծամեծ շատրուանք ընթացիկ ջրոյ՝ որք ցնդէին 'ի վեր կոյս զյոլով գետային աւազս և գայուս 'ի բարձրութիւն երկու ձողոյ. Ջուրն Երասխայ 'ի տեղիս տեղիս բարձրացեալ և ծածկեալ ունելով զեզերս իւր, դիզացեալ 'ի վեր կոյս՝ երևէր բնական յատակ խորութեանն իբրև ծոց . . . և 'ի վայրկեանսն ահեղագոյն շարժման՝ խորագոյն տեղին Երասխայ մնայր ամենևին չոր, կամ ընդր խոխոջմամբ և կարկաջմամբ զօրէն եռացեալ ջուրց բարձր քան զսովորական հորիզոնն. նաև յելս անդ օգոստոսի 'ի յատակին Երասխայ երևէին բազում պատառուածք և այլ մեծամեծ վիհք՝ յորոց խաղային ջուրք,, :

,,Աստանօր քաջայայտ է ինքնին, զի այսպիսի ահեղ սասանութիւն պատահելոց էր զմեծ աւերմունս և քանդմունս. 'ի պարսկական քաղաքին Մակու՝ կործանեցաւ մեծ մասն շինուածոց. 'ի Պայազիտ՝ անկան յոլով տունք, դղեակն և մեծակառոյց ապարան փաշային տեղւոյն. բայց շատ քան զամենեսին հարուածեցան բնակիչք նահանգին Հայոց, ուրանօր 'ի փլուածոց գագաթան մեծին Արարատայ 'ի հիւսանց անտի սառուցից և յանհեթեթ կտորոց քարանց ստորասուզեալ կորեան մենաստանն սրբոյն Յակոբայ, և աւանն Ակոռի. յորում գտանէին աւելի քան զհազար բնակիչս: 'Ի բաժնին Շարուրայ հիմն 'ի վեր տապալեցան 3135, տուն բնակութեանց, և 75, աղօ-

րեք ։ Ի գաւառին Նախիջեւանայ կործանեցան 2, եկեղեցիք հայոց · 5, մզկիթք · 776, տունք · 25, կըր- պակք ։ Ի բաժնին Օրտուպատայ՝ (Օրդուբադ) 476, տունք ։ Այնանգամայն թիւ աւերելոյն ՚ի սահմա- նս մեր ՚ի բաց բարձեալ զխախտեալսն՝ որք յետոյ գուցէ ըստ առաջնոյն կործանեսցին, են 6119, տունք · 92, ջրաղացք · 3, եկեղեցիք · 7, մզկիթք և 25, կրպակք · թիւ մարդկան կորուսելոցն ՚ի ժամ այսպիսի եղկելի անցից չէ՝ այնքան մեծ՝ որպէս պարտն էր · քանզի այն պատահեցաւ յերեկոյի, ըստ սովորութեան իւրեանց շրջելով ընդ օդ զո- վարար՝ գտանէին արտաքոյ քան զշէնս · ՚ի գաւա- ռէն Շարուրայ՝ կորեան արք 33 · և ՚ի Նախիջե- ւանայ՝ 16 · ՚ի Նիչանակ (Նչ՝ջէւ) տեղւոյն՝ 5 · որոց գումարն է 54, արք · և ս և 12, անձինք վնասե- ցան սաստկապէս · սակայն երկրաշարժութիւնն այ- սու ոչ բաւականացաւ՝ ՚ի բազում տեղիս խցան աղբերականք, և ուրեք ուրեք յաւելան ջուրք · ՚ի մասին Շարուրայ յեզերս Արասխայ, ՚ի ժամ շարժմանն բացան ՚ի ժայռաւոր տեղիս խոռոչք մեծամեծք և փլուածոյք, ընդ որս կորեան տունք ինչ և սերմնաւոր անդաստանք · իսկ այլ անդաս- տանք և սիզավայր դաշտք այնպէս եղծեալ ապա- կանեցան, մինչև ոչ լինել հնար բնակչացն ընդեր- կար հերկելոյ զայնս,, ։

,, Ի պատահիլն առաջին ընդգետնեայ դըր- ղրդմանն՝ . . . բնակիչք Վարահասանլու գեղջ այն ինչ ընդարմացեալ լինէին ՚ի սարսափելի կայծա- կնընկեցութեանց՝ որ իջանէր ՚ի շրջանխոտ լերան- ցն, չև ևս կորզեալ զանձինս յանհեթեթ կոտո- րոց անտի քարանց՝ որք մահասպառ ՚ի վերուստ յերկիր յարձակէին, պատահեցաւ նոցա միւս ևս ահընկէց ստորերկրեայ որոտմունք · ամենայն հո- ղակերտ շինուածք նոցա գոչմամբ և ճայթմամբ դարձան յաւեր և ծածկեցան յաչաց նց ՚ի թան-

Ձրագոյն փոշխակազմ ամպս. 'ի սոյն իսկ միջոցի լայնաբերան հերձեալ երկրի՝ ուժգին վիժմամբ և թնդմամբ 'ի վեր մղէր 'ի խորոց անտի զվտակս յորդահոս ջուրց, զկոյտս աւազոց և զյոլով գայռս. այսու սրտաբեկեալ բնակչաց տեղւոյն՝ ճիչ բարձեալ և 'ի դուրս վազեալ ձեպէին կորզել զանձինս 'ի մերձակայ բարձրանիստ դաշտս, սակայն և անդանօր իսկ գո՛գ մի ուրաքանչիւր քայլափոխս հանդիպէին այսպիսի երկեղուկ տեսարանաց. վա֊զի ընդ ամենայն տեղիս ո՛չ այլ ինչ էր տեսանել, եթէ ոչ զհերձս 'ի վեր կործանուածս տանց, զխորաբաց ծոցս երկրի, զըղխուածս յորդագնաց ջուրց որք յանդիման աչաց նոցա՝ է՛ր որ կործանէին ըղձկացեալ մասունս որմոց տանց, և է՛ր որ ծովացել հեղձուցանէին զմարգագետինս: Եւ յայսմ ամենայնէ կարի շուարեալ և ապշեալ գտանէին յանհնարին իմն վտանգի՝ սպասելով անդարձ վայրկենի կատարածի ողջոյն հողագնդիս: Մի՛ող զայս կործանուածս գեղջն Ակուռոյ և մենաստանի հայոց սրբոյն Յակոբայ միաձայնու բնակչօքն հանդերձ առաւել ևս սարսափելի մեզ տեսանի,,:

,,Աստանօր ընդ երեկին առաջին ստորերկրեայ թնդմանց և որոտմանց 'ի կատարէ անտի մեծին Արարատայ և յապառաժուտ կողիցն պատառուածոց հատուածեալ մեծամեծ վիմաց և հարիւրամենի ձեանց և յարձակեալ 'ի վեհ փլուածոյն գո՛գ 6000, ոտն բարձրութեամբ՝ ահագին ճայթմամբ բեկեալ մանրէին 'ի մասունս մասունըս՝ որք և կայծակնօրէն լցեալ զփոր պատառուածոյն՝ յակման թօթափել դաշտացուցին զայն խորխորատ եօթն մղոն երկայնութեամբ՝ ընդ մեծակոտոր հատուածոց սառին և քարանց. յայնժամ ծածկել կայր միանգամայն մենաստանն սըրբոյն Յակոբայ և գիւղն Ակոռի, բայց այնինչ տակաւ առ սակաւ սկսան լուծանիլ՝ որով և քակ-

տեցաւ ընդ հանուր ամբողջութիւն նոցա 'ի 24, յուլիսի յիններորդ ժամու զկնի գիշերոյն. քանզի մեծահատոր հիւսք ձեանց և քարանց՝ որ կախեալ կային 'ի վերայ հովտին, յանկարծուստ փըրձեալ սաստկագոյն սրընթացութեամբ յարձակեցաւ 'ի խոնարհ կոյս 'ի դաշտն լայնանիստ՝ որ զափամբք սեաւ ջրոյն, մինչ զի ցերկուս բոպէս, էանց իբր ընդ քսան վերստ տարածութիւնս. զկնի որոյ յերեւան եկին կորստական և բազմավնաս ողմուտ հեղեղք. արագագոյն սրընթացութիւն այսր ողմահոս վտակի սարսափելի իմն երևի ամենայն հետախուզից. անհեթեթ համոզք քարանիւթ հողոյ որք յառաջ քան զայս կործանէին զամենայն որ ինչ դիպէր 'ի ճանապարհի, այսօր այնինչ հալիլ սկսան պաղինք՝ այնք ամենայն ցնդել լուծան 'ի ցեխոտ վտակս, յորոց մին խաղաղ տապալեաց զդարպաս նախնի խանին Երևանայ. յանցանել վայրկենից ինչ՝ այսորինակ անհուն հեղեղք ծածկեցին զմեծ մասն դաշտին 'ի բերանոյ անտի Ակոռեան գոգոյն մինչև ցգետն Սեծամօր, և 'ի տեղիս տեղիս սպառեցին զցանս և զայգիս յերկոտասան վերստ լայնութեան. բաց յայսմանէ՝ մին 'ի մեծագոյն հեղեղաց անտի իջեալ խառնեցաւ ընդ գետն Սեծամօրի՝ զորոյ զմակերևոյթ առաջին ընթացից ջրոյն փոխեաց. սմին իրի 'ի յորդուէ ջուրց 'ի բազում տեղիս վնասս մեծամեծս կրեցին բրձրանիստ շէնք, և գարդոնեան կացուրդն ղազախաց՝ որ գտանէր առ սալոնոլեան կամրջաւն: Ողմահոս հեղեղքս 'ի 5, յուլիսի սկսան նուազել և 'ի վերջոյ միանգամայն լռեցան՝ որք և թաւալգլոր ածին ցեզր սեաւ ջրոյն զայնպիսի ահագին իմն բազմութիւն պատառոտեալ անդամոց հեղձեալ մարդկան և անայն անասնոց, մինչև է երկար անհնար լինել ըմպել զջուր գետոյն այնուրիկ:

,, Զև ակոռեան գոգոյն միանգամայն այլա-

փոխեցաւ. այժմ բարձրութիւն նորա երկիցս մե-
ծացաւ ՚ի տարածութեան իւրում՝ և յոլով ևս
՚ի բարձրութեան իւրում՝ մանաւանդ յարևե-
լեան կողմանէ. և դարաւոր ձիւնք՝ որք նախ քան
զայս չէշտակի ամբարել կային ՚ի գմբէթաձև գա-
գաթան մեծին Արարատայ, անկեան ՚ի խոնարհ ի
նորակազմ զառ ՚ի վայր լերինս: Այլև ՚ի բարձ-
րաւանդակ վայրս մարթ է ցուցանել զտեղիսն,
ուրանոր ՚ի բարձրագագաթան ամբարձեալ կային
մենաստան և շինուածն աղբեր սրբոյն Յակոբայ:
Ընթանան աղբիւրք երկոքին՝ որք մղեալ ի թան-
ձրագոյն կոյտս խճախառն տղմին, ուր չէ՝ հնար ա-
մենևին գտանել վէմ ինչ, որում մարթ էր լինել
ապացոյց ամբողջութե նոցա: Շինուածքս այսո-
քիկ բոլորովիմբ կործանեցան, նոյնպէս և դաշտն
առ մենաստանաւն՝ որ մինչ ցայժմ ծածկեալ կայ
տղմով յահեկակողմն հեղեղատին՝ որ անդրէն
խաղալ սկսաւ, ուրանոր կորեան մինչ ց30 տունք
քրթաց անդանօր թափառելոցն: Ի տարածութե-
անդ որ ընդ մէջ մենաստանին և Ակոռւոյ՝ որք և
յառաջն էին վարելահողք և այգեստանք տեղա-
բնակ ժողովրդոցն, այժմ իսկ շեղջեալ կան զա-
նազան գօտիք քարանց և սառուցից, որ և մինչև
ցայսօր գտանի ի փլուածումն անեղծ և ամբողջ:
Ի վերայ բլրոցս այսոցիկ ըստ մակերևութին ՚ի
լուծմանէ անտի պաղակաց և փշրելոցն ցեխա-
նիւթ քարանց և մանրելոցն ՚ի մասունս, բացեալ
են մեծամեծ պատառուածք և խորխորատք՝ յորս
ուրէք ուրէք ամբարձեալ գտանին արջասպային
ջուրք, և երևին դէզք բազմակոյտ կոտորոց վէ-
մաց, որոց վասն և անանցանելի միանգամայն ե-
րևի, և զուցէ ՚ի հպիլն ներքին կամարաց սա-
ռուցից յանցանել ժամանակաց բազմասցին ան-
դանօր նորանոր խորափիկք և վիհք,,:
,, Խափառական քուրթք պեղեցին զմեծ

մասն բնակարանաց ծողովրդոց գեղջն Ակոռոյ՝ ո-
րոնելով յայնս զմնացորդս հարստութեանց. 'ի խու-
զարկելն զայնոսիկ վիհս, տեսաւ՝ զի գերանք որով
ծածկեալ կային տունք, գտանէին ընդ փլուածով
նոցա և մասունք որմոց ինչ ինչ շինուածոց գտա-
նէին ամբողջ՝ յորմէ մարթ է եզրակացուցանել
թէ՝ աւանն Ակոռի տապալեցաւ ոչ 'ի հոսմանց ան-
տի քարանց, այլ 'ի շեշտակի իջուածոց: Ս լէնի ա-
հեղ երկրաշարժութեան որ 'ի 20, յունիսի մին-
չև ց28, յուլիսի, տևէին երբեմն երբեմն սաստիկ
ստորերկրեայ որոտմունք և թնդմունք. բայց յայ-
սոցիկ ժամանակաց մինչ ց5, սեպտեմբերի 'ի տե-
ղիս տեղիս՝ մանաւանդ 'ի գաւառին Արարատայ
պատահէին թեթևագոյն երերք, և սուղ ինչ ընդ-
գետնեայ բոմբիւնք,,:
,, Ջանացեալ մասնակցել ընթերցանելեաց
զինչ ինչ տեղեկութիւնս՝ զամենայն արժանաւոր
անցից հայրենեաց մերոց, պարտաւորիմք խոստո-
վանել զազնուութիւն դրից աշխարհի մերոյ. և
տորին վասն կարծել բազմօք զյայտարարութիւնս
պարոն Ասկաբօյնիկովին. Խորհուրդ տամք ըն-
թեռնուլ զայս հետաքօտելի անցագրութիւն լի-
ովին յառաջնում համարի Ա. Պ. բուրգեան
տեղեկութեանց տպելոյ յայսմ ամի,,:

## Գաւառ Սարդարապատու․

367, Այս գաւառ պարունակէ յինքեան ըստ այժմեան գրուածոց մեր զսահման Թագաւորանիստ հին քաղաքին Արմաւիրայ, զփոքրիկ գաւառն՝ այժմ |Սահաթլու| կոչեցեալ՝ որ է մասն հին Երասխաձոր գաւառի ՚ի ձորի անդ ՚ի հիւսիսակողման գետոյն Երասխայ, և զԱրագածոտն ընկլուեալ յԱխուրեան գետոյ՝ յարևմտեան ստորոտէ մեծի Արագած լերին ընդ հարաւակողմն ընդ արեգդէմ մինչև ցձոր գետակին Ամբերդայ ցարևելեան սպառուած բլրակացն ականց գետոյն մեծամօրի, այն է՝ ցարևմտեան եզր դաշտին Վաղարշապատու, որ և բաժանի յերկուս փոքրիկ գաւառս յանուն Խալենայ ․ և Խալեշոյ (Աշոտ)։

## Արմաւիր քաղաք․

368, Արմենակ որդի Հայկայ զկնի մահուան հօր իւրոյ տիրապետեալ հայկազանց իբրև հայրենի ժառանգութեան՝ ելանէ անտի ՚ի Հարք գաւառէ յարևմտեան հարաւոյ Արարատայ՝ ուր վախճանեալ էառ Հայկ, և գայ ընդ յարևելս հիւսիսոյ և ժամանէ ՚ի դաշտ մի ընդարձակ պատեալ բարձրաբերձ լերամբք՝ զոր ընդ մէջ հատեալ անցանէր գետ՝ յարևմտից յարևելս ուղղակի ընդ երկայնութիւն դաշտին․ և անցեալ ընդ գետն ընդ այն ՚ի կողմն հիւսիսային, առ ստորոտով լայնանիստ լերին միոյ՝ յորմէ բղխէին կարկաջաձայն ջուրք աղբերց ոչ սակաւ՝ ընդ զառ ՚ի վայրն․ և կալեալ անդէն վայր բնակութեան՝ անուանէ ըզնոյն զայն լեառն յանուանիւն՝ | Արագած | յ՟, ագած տեղի Արմենակայ և զստորոտս նորա՝ որ ձգի յարևելից յարևմուտս արեգդէմ և ընդ հարաւ | Արագածոտն |։ Իսկ ապա զպայազատութիւն

ազգին յանձն արարեալ որդւոյ իւրում Արա֊մայիսայ՝ վախճանի ։

Իսկ Արամայիս ՚ի ժամանակի տիրապետութեան իւրոյ հիմնարկեալ կառուցանէ ինքեան տուն բնակութեան ՚ի վերայ բլրակի միոյ ՚ի դաշտի անդ առ եզերբ գետոյն ՚ի հիւսիսոյ կողմանէ՝ զորմէ Խորենացին հատոր Ա․ գլուխ II․ „ Իսկ որդի նորա (Արմենակայ) Արմայիս շինէ տուն բնակութեան ՚ի վերայ սատոյ միոյ առ եզերբ գետոյն, և անուանէ զնա յիւր անուն Արմաւիր 1, և զանուն գետոյն յանուն թոռին իւրոյ Երասխայ՝ Երասխ „ ։ Եւ եղև այնուհետև այս քաղաք յառակացեալ տեղի բնակութեան հայկազուն նահապետաց․ և է մի ՚ի հնագոյն քաղաքաց աշխարհի ըղկնի ջրհեղեղին և առաջին շինուած յԱրարատեան դաշտին՝ զոր զկնի իբր հարիւր յիսուն ամաց, այն է յամի աշխարհի 2142, ըստ ժամանակագրաց՝ Յարմա որդին Գեղամայ չորրորդ ծնունդ յԱրամայիսայ, կրկին նորոգեալ մեծացոյց՝ պատեալ կոփածոյ որձաքար վիմօք և հաստատեաց զորքունիս իւր ՚ի նմա՝ ըստ յառաջ բերելոյ հայր Միքայէլի չամչեան․ հատոր Ա, յերես 72։

Այս քաղաք՝ որպէս և ասացաւ, եղև բնիկ տեղի ապարանից հայկազն նահապետաց մինչև ցըլվախճան իշխանութեան նոյն ցեղապետութեան ։ Նստան աստէն և արշակունի թագաւորք ոմանք

1, Աշխարհագրութիւնն Հին Հայաստանի յերես 498, ՚ի ծանօթութեան յերրորդ համարին՝ յանգագոյն իմն առաջաբանէ՝ ըստ Տրօփէրայ զանուանն Արմաւիր՝ Արմայիսի էր, այսինքն գործ, շինուած Արմայիսի․ մանաւանդ և Սեբէոս եպիսկոպոս պատմիչ զնոյն հաստատէ․ „ Ծնանի Արամենակայ որդի նորա Արամայիս շինէ իւր ՚ի վերայ գետեզերին տուն բնակութեան և անուանէ զանուն նորա Արամայիր „ այսինքն Արամայ էր ։

մինչև ցԵրուանդ Է · որոյ տեսեալ թէ՝ գետն Երասխ որ քան զոր հեռանայ 'ի քաղաքէ անտի ընդ հարաւ · յորմէ և դժուարին լինի բնակչացն առնուլ զջուր 'ի ձմեռնային սառնամանեաց եղա_նակի , մանաւանդ թէ դիւրին է առնուլ զայն թշնամեաց , վասն որոյ լքեալ զայն՝ երթայ ընդ յարևմուտս իբրև եօթն ժամ հեռաւորութեամբ և շինէ անդ 'ի խառնուրդս Երասխ և Ախուրեան գետոց 'ի քարակտուր ինչ բլրի քաղաք , և անուա_նէ զայն յիւր անուն | Երուանդաշատ | , յամի տեառն իբր 77 :

Նա ապա զկնի այնր լքեալ 'ի նորոգութեց և զրկեալ 'ի բնակչաց մնայ յամայութեան · և 'ի յետագայից իսկ | լքեալ աբքունիք | անուամբ յիշատակի ՟Ը Խորենացւոյն , ՟Գ , 31 · յորում ժա_մանակի ըստ մնաց պատմութեանն եղեալ են ան_դէն ինչ ինչ շինուածք արքունի ապարանից · իսկ այժմ ամենևին անհետացեալ · բայց միայն այնց հնութեանց շինուածոց հիմունք յատոյտս և յայլ տեղիս բլրակին երևին · և 'ի դաշտածն նորուն գտանի դիտանոցաձև բարձր ինչ շինու_ած աւելի քան զութն կանգուն որձաքար վիմօք ընդ իրերարս ագուցելովք և կիթովք ձուլեալ՝ յո_րոյ վերայ ելեալ մարդոյ համարձակ տեսանէ զեզե_րս դաշտին՝ յոր կողմն և հայեսցի , և զհին անցս Երասխայ որ առ նովաւ , յայտնագոյն ևս , որ 'ի բնակչացս (շուռա արաղ) ցամաք երասխ անուանի : 'Ի սոյն յայս շինուածոց յորձաքար խարտեալ վի_մաց 'ի մերում ժամանակի ետ քակել Հիւսէյին ղուլի խան սարտարն Երևանայ և տանել 'ի պէտս շինութեանց դրանցն ամրոցին (Սարտարաբադ) յիւր_մէ կառուցելոյ :

Տեղի սոյն քաղաքիս Արմաւիրայ Ճշտօրէն հայեցեալ ըստ դրութեան դաշտին , և ըստ լինե_լոյն առ եզերբ Երասխայ 'ի հիւսիսոյ կողմանէ՝

երևի լինել այն ապառաժուտ բլուր՝ որ ունի յարևելից զակունս շամբին սևաւ ջրոյ, այսինքն Սևծամօր գետոյ՝ հեռաւորութեամբ է ժամուց, յարևմտեան հիւսիս զամրոցն Սարտարապատ միով ժամու, ընդ հարաւ զԱրասխ գետ հեռացել յիւրմէ իբրև ժամ մի, իսկ յարևմտից զդաստակերտն Արուանդայ է, իբրև երեք ժամ՝ որ այժմ 'ի բնակչաց անուանի (ղարաղալա) սևաւ բերդ· որոյ և ստուգութեանն ապացոյց դաշտն՝ որ կայ 'ի հիւսիսոյ բլրոյն ձգեալ դէպ յարևմուտս ցքաղաք ձորոյն Արասխայ և Ախուրեան գետոյ, կոչի ցարդ 'ի ծերագունից | Արմաւու դիւղ | դաշտ Արմաւիրայ:

Այսմ տեղւոյ սորին Արմաւիրայ ստորագրութիւնք հին և նոր հայաստանի ցուցանեն լինել Սուրմարի՝ որ օտար է ամենևին· զի Սուրմարի աւան գտանի 'ի ձախակող գաւառի ըստ նորուն հին հայաստանի· իսկ Արմաւիր ըստ իմիք յստորոտս Արագածու՝ թէ և փոքր ինչ 'ի բացեայ իցէ· և դրութիւն տեղեաց երկոցունցն իսկ բացեայ 'ի միմեանց իբրև յերից ժամուց· քանզի Սուրմարի նովին հնչմամբ անուանն յորջորջի մինչև ցայսօր, և տեղին ծանօթ ամենեցուն, մինչ զի և կառավարութիւն տէրութեանն պարսից զմասն Արասխաձոր գաւառի՝ որ անկանէր ընդ իշխանութեամբ իւրեանց նովին անուամբ յիշատակէր 'ի գրուածս իւր | Սուրմարի մահալ | (գաւառ)· զոր 'ի գործ դնէ և այժմ կառավարութիւն Տէրութեանն Ռուսաց, թէ և 'ի վաղուց հետէ՝ այն է, 'ի վերջին ասպատակութենէ կովկասեան լեզկեաց մնայ դատարկ 'ի բնակչաց և յաւերութե. մանաւանդ տեղին Սուրմարւոյ է դաշտ փոքրիկ յարևմուտս դաստակերտին Արուանդայ է, 'ի վերայ քարաբաշի ձորոյն Արասխայ 'ի հարաւոյ կողմանէ· իսկ Արմաւիր 'ի վերայ բլրակին ըստ գրե-

ցելումն 'ի մեծի դաշտին առ եզերբ գետոյն Արասխայ 'ի հիւսիսոյ կողմանէ, և թէ՝ գետն որքան զօր հեռանայր յԱրմաւիրայ ըստ Խորենացւոյն, Բ, 36. այլ անցք Արասխայ 'ի Սուրմարի է 'ի ձորամիջի և յերկուց կողմանց քարակտուր ապառաժուտք, որոյ վասն անդ 'ի Սուրմարի չկարէ ամենեւին խոտորել Արասխ՝ ո՛չ յաջ և ո՛չ յահեակ:

Մերձ յայս քաղաք Արմաւիր էր անտառ մեծ սօսեաց (չնարի) տնկեալ յԱրամենակայ հօրէ հիմնադրի քաղաքիս. և 'ի շարժիլ տերևոց ծառոց անտառին 'ի շնչմանէ հեզիկ հողմոց հմայէին պէսպէս առասպելս, ուստի և համարեալ էր այն անտառ՝ սրբազան տեղի դիցն, որում և ձօնէին զորդիս, և անուանէր այնուհետև սօսանուէր, այն է՝ դիւցազն. ըստ Խորենացւոյն. Ա, 19:: Քանզի ձօնեալ էր ըստ պաշտամանց 'ի սօսին Արամենակայ՝ որ յԱրմաւիր (անուանեալն սօսանուէր), զորոց զաղարթուցն սօսաւիւն հանդարտ և սաստիկ շնչելոյ օդոյն և եթ՝ ոստոց շարժումն, սովորեցան 'ի հմայս յաշխարհիս հայկազանց, և այս ցբազում ժամանակս:

Բայց հաւաստեաւ չլինի գտանել՝ թէ յոր կողմն քաղաքին լեալ իցէ անտառն, այլ եթէ ընդ յարմարութիւն դրից քաղաքին, դաշտին և Արասխայ հայեսցուք, հաւանական երևի լինել յարևմտեան կողմն քաղաքին ընդ մէջ Արասխայ և երկարաձիգ առապարին մերձ եղելոյ անդր՝ պատշաճեալ սօսեացն յարբուումն 'ի ջուրց անտի Արասխայ, ըստ որում և ծերունիք՝ ընկալեալ աւանդութեամբ 'ի միմեանց, պատմեն՝ թէ գտանէին 'ի սոյն յայս ասացեալ տեղւոջ ստուար արմատք ծառոց, որք 'ի հերկելն անդ երկրագործաց 'ի յայտ գային:

### Կեղչրայ՝ տաճարն Արմաւիրայ կամ գաւառին Սարդարապատու ։

369 , Սարտարապատ ամրոց 'ի հիւսիսային դաշտի Արմաւիրայ հեռի 'ի նմանէ յարեւմուտս հիւսիս երբեմն ժամու միով , շինեալ 'ի Հիւսէյին ղուլի խան սարտարէ Երեւանայ՝ որոյ հիմնարկութիւնն եղև յամի 1819 · տեղին այսր ամրոցի նախ քան զայս շինութիւն անուանէր Քեալակեարխ յանուն մեծի առուի նորին՝ որ սկզբնաւորէր յԵրասխայ անդր քան զԵրուանդակերտ , և էր յաւերութեան որպէս և տեղի ամրոցին · իսկ թէ 'ի հնումն զինչ անուն ունէր , չունիմք ինչ ծանօթութիւն 'ի գրոց և ոչ յաւանդութեանց ։ 'Ի շինութեան այսր ամրոցի և առուի նորին՝ որոյ ընթացք տեւէ յԵրասխայ ցայս ամրոց երբեմն չորս ժամ , աշխատեցոյց կարի անգթութեամբ գրեթէ զբովանդակ բնակիչս այսր նահանգի · և պատեաց զամրոց կրկին պարսպաւ բարձր և հաստատուն հանդերձ մեծամեծ բրգամբք և զմէջ նորին լարաչափ բաժանեաց ընդարձակ փողոցաւ 'ի թաղս թաղս այնպէս , զի չորեքին դրունք ամրոցին յընդարձակ փողոցսն հանդիպահայեացք էին առ միմեանս · և բնակեցոյց 'ի թաղսն զգաղթական հայս՝ զորս ածեալ էր ասպատակութեամբ 'ի սահմանացն Պայազիտոյ և Արճիշոյ և զսակաւաթիւ մահմէտականս՝ որոց գումար եհաս ց355 , գերդաստան · կառոյց 'ի նմա ընդ հարաւակողմն առ պարսպաւ և տուն բնակութեան իւրեան · յայն կողմն արտաքոյ պարսպին ետ ձգել այգի խաղողոյ և ծառաստանս կարի ընդարձակ տարածութեամբ և հասոյց 'ի բերս պտղոց · ստանայր և զմեծ արդիւնս յերկրագործ բնակչաց ամրոցին՝ որք վաստակէին յընդարձակ արդիւնաբեր դաշտն չորեքկուսի շուրջ զամրոցաւն · բայց այսու ամենայնիւ տա-

կային թերի էր շինութիւն ամրոցին ՚ի խրամն (խանդակ) նորա՛ և յինչ ինչ մասնաւոր տեղիս, այն ինչ զինուորութիւն Ռուսաց պաշարեաց զայն յամի 1827, և ՚ի միջոցի վեց աւուրց գրաւեաց զայն ընդ իշխանութեամբ ՚ի 20, սեպտեմբեր ամսոյ:

Յայս զկնի փոխարկութեան աշխարհական իշխանութեանն ելին մեծ մասամբ բնակիչք յամրոցէ աստի՝ թէ յաղագս ակամայ բնակութեանն անդէն, և թէ յաղագս առանց նորոգութեան մնալոյ մեծի առուին ամրոցամէ, ՚ի մերձակայ գիւղորայս այսր գաւառի. իսկ որք մնացին են այժմ տունք 65, յազգէ Հայոց և ունին եկեղեցի յամրոցի անդ շինեալ յառաջագոյն՝ յանուն սուրբ Աստուածածնի:

370, Շահրիար, շէհրիեար կամ շահինշահ՝ որ թարգմանի թագաւոր մեծաշուք (ուլու փատիշահ). այս գիւղ մերձ յԵրմաւիր յարեւմտից նորա հեռի իբրև կէս ժամ. ունէր յառաջագոյն շուրջանակի պարիսպ ՚ի հողոյ՝ որպէս այլ բազում գիւղորայք ՚ի դաշտի աստ Արարատայ ՚ի պատճառս ասպատակութեան լէզկեաց և այլ մերձակայ սահմանակից թշնամեաց. այլ ՚ի նուազիլ ինքնագլուխ բռնաւորաց և ՚ի տարածիլ օրինաւոր իշխանութեան՝ անխնամ մնացեալ քակտեցան հետ զհետէ այնպիսի պարիսպք գիւղորէիցն և ընդարձակեցան բնակութիւնք բնակչացն. ուստի բնակիչք այսր գեղջ՝ տունք 83, որք ունէին յառաջին զեկեղեցի ՚ի պարսպի անդ յանուն սբ Աստուածածնի շինեալ ՚ի ժամանակս Սիմէոն կաթուղիկոսի Երեւանցւոյ, ելին ՚ի քայքայեալ պարսպէ անտի արտաքոյ և շինեցին ինքեանց բնակութիւնս ընդարձակ. մնաց եկեղեցին ՚ի բացեայ ՚ի նորոգ բնակութեանցն, և գրեա՛ թէ խախտեալ ևս էր. վասն որոյ յամին 1836, պատուաւոր բնակիչ այսր գեղջ Յօհան սուլթան Գէորգեան շահխաթու-

նեանց հարազատն մեր եւ նորոգ հիմնարկութ̄ե կառուցանել եկեղեցի սեպհական արդեամբ իւրով 'ի յարմար տեղւոջ նորոգ բնակութեանցն. հիմունք որմոցն յորձաքար վիմաց աւերակացն Արմաւիրայ և 'ի կրոյ բարձրացան յերկրէ աւելի քան զկանգուն մի, և անտի ցկատար որմոյն 'ի հասարակ աղիւսոյ. իսկ կամար սեղանոյն եւս 'ի քարանց և 'ի կրոյ. և ծածք նորա փայտեայ հիւսնաշէն կամարաձև հանդերձ վեց սեամբք, և տանիք նորին ծածկեցաւ կիսախողովակ կղմինտրբք. իսկ հանդէս օծութեանն կատարեցաւ 'ի յաջորդ ամ 1837, յամսեանն հոկտեմբերի 'ի 24, ներկայութեամբ Յովհաննու Ը̄, սրբազնակատար կաթուղիկոսի և ամենայն Արքեպիսկոպոսաց և վարդապետաց. օծաւ սեղան խորհրդոյն յանուն գիւտ խաչի՝ որոյ իսկ տօն էր յաւուրն, և եկեղեցին յանուն սրբոյն Գէորգեայ զինաւորի յատկացեալ պաշտպանին այսր գեղջ:

Գրեցաւ 'ի վերայ վիմեայ վերին բարաւորի արևմտեան դրան արձանագիր ըստ այսմ:

,, 'Ի կայսերութեան ռուսաց ՆԻԿՈՂԱՅ Ա-ՅՈՒՆ ա̄, և 'ի կաթուղիկոսութեան Հայոց Ը̄րդ Յովհաննու կարբեցւոյ, և 'ի նահանգապետութեան հայաստանի կնեազ Աալի բէհպուտեանց կառուցաւ եկեղեցիս 'ի Շահրիար գիւղ ինքնայօժար արդեամբք սուլթան Յօհաննու գէորգեան շահխաթունեանց յամի տեառն 1837, իսկ հայոց ռմձզ, սեպտեմբերի ժգ ,,:

Մերձ յայս գիւղ 'ի հիւսիսոյ է երկարաձիգ տապարն Արմաւիր քաղաքի՝ որոյ 'ի բարձրութեանն գտանին տակաւին հիմունք շինուածոց մնացեալ 'ի հին շինութեանցն Արմաւիրայ, ուրանօր 'ի միջին տեղւոջ գոյ ուխտատեղի յանուն սուրբ Գուլթայ՝ ուր գնան մերձակայ բնակիչք յուխտ զառաջակայ կիւրակէի սրբոյ Զատ-

կին. այս տեղի որպէս նկատի լեալ է յառաջագոյն ՚ի հեթանոսութեան յանուն կռոց, այլ ՚ի քրիստոնէութեան վարդապետք առ ՚ի չկարող լինելոյ արգելուլ զժողովուրդն ՚ի նախնի սովորութեց անտի հեթանոսութեան, անուանադրեալ են ըղ-տեղին յանուն այնր սրբոյ, այլ թէ որ Պուխթ իցէ՝ չգիտեմ. և զի զտեղին սոսկ հասարակ քարամբք հիւսեալ են. և ունի փոքր տեղի դրան կարի խոնարհ՝ ընդ որ ՚ի ծունկս մտանեն ՚ի ներքըս. և ՚ի միջին տեղւոջ ամրացեալ կայ սիւնաձև վէմ միխբըրև երկու կանգուն: Նմօրինակ տեղի կռոց թերևս իցէ և այն՝ որ է ՚ի ձորամիջի անդ Երուանդակերտի ՚ի հարաւային եզեր Երասխայ, զոր անուանեն Լուսայ սուրբ Նշան Ի, իսկ ռամիկք՝ Թխամիրշան. չիք անդ նշան ինչ հնութեան, այլ հասարակ շարաքար գերեզմանաձև. որում մերձ ծխանէ և յորդ աղբիւր սառնորակ ջրոյ. յանուն այնր գնան մերձակայ բնակիչք ՚ի վարդավառ կիւրակէի:

371, Պետղշէարխ. տունք 14, եկեղեցի նոցա յանուն սուրբ Ածածնի. անուանակոչութի գեղջս առեալ է յանուանէ մեծի առուին Սարտարապատու՝ որ անցանէ զհիւսիսային կողմամբ գեղջս: Յարևմտից այսր գեղջ մերձ յեզերս Երասխայ աւանդին լինել տեղի մեծի շինու՝ թէ և չերևին նշմարանք շինուածոց արտաքուստ յառաջս կարի հնութեան ժամանակին. բայց անդր ՚ի տեղիս տեղիս մերձ յերեարս երևէին փոքր ինչ բարձր տեղիք յերեսաց երկրին՝ զորոց զմիոյն ըղհողն պեղեալ բնակչաց գեղջս, բացու հաստատուն շէնք իբրև փոքրիկ մատուռն ՚ի կոփածոյ քարանց կամարայարկ բոլորովին ամբողջ՝ առանց մտից. զոր քակեալ ՚ի բաց առին ՚ի քարանց անտի ՚ի պէտս իւրեանց, և գտու այն ըստ ամենայնի դատարկ. այլ թէ ՚ի յատակի նորա գտանիցին շի-

բնմք և կամ այլ ինչ, չեղև որ հետախոյզ. և գու-
ցէ թէ միւս տեղիքն ևս իցեն այսօրինակ:

372, Ջափարապատ. տունք 35, եկեղեցի սոցա յանուն սուրբ Յարութեան: Սուլդաշա-շէն. տունք 55, եկեղեցին յանուն սբ Ածածնի: Խաթաթափէ՝ յաղագս լինելոյ այսր գեղջ յարևելեան ստորոտի բլրակին Արմաւիրոյ, տունք 20, եկեղեցին յանուն սուրբ աստուածածնի: Պաղտաղուլէ. տունք 35. եկեղեցին յանուն սուրբ աստուածածնի: Պաղչաչէթան. տունք 20. եկեղեցին յանուն սուրբ Գէորգայ: Կէնէկօ. տունք 52 եկեղեցին յանուն սուրբ աստուածածնի: Արմաւալու. տունք հայոց 16, տաճկաց 9. եկեղեցին հայոց յանուն սրբոյն սահակայ: Ալաքնօղայ. տունք 22, եկեղեցին յանուն սբ աստուածածնի: Ղաճիլուր. տունք 18. եկեղեցին յանուն սուրբ ածածնի: Զէպախէճ. տունք 38. եկեղեցին յանուն սուրբ աստուածածնի: Մարգարէ գիւղ. տունք 20, եկեղեցին յանուն սուրբ ածածնի:

Իսկ տաճկաբնակ գիւղօրայքն և տունքն ոցին: Ջանփօլադ. տունք 52: Իւնձապարալու՝ 12: Իւթալու՝ 31: Պէտարէպարէ՝ 49: Աղջամառէ՝ 26: Սառէճալօ՝ 5: Պառնէն՝ 49: Խէտէրպէնալու՝ 13:

## Սահաթլը կոչեցեալ փոքրիկ գաւառ:

373, Սահաթլը. կոչեցեալ ի̄ յայլազգականին՝ թերևս յանուանէ այլազգի իշխանին այնորիկ Սահաթ կոչեցելոյ՝ որ յամի 1387 կալեալ յանիրաւի զերևելի այրն Սարգիս անուն՝ յազգէ հայոց ի բնակչացն Կողբ գեղջ՝ նահատակեաց վասն հաւատոյ հեղձուցեալ ի գետն Երասխ. Սոփերք հայկեան հատոր Գ, համար 422. քանզի ի հնումն անկանէր այս փոքրիկ գաւառ յԱրշարունիս, և այժմ կոչի Սհաթլը. և բաղկանայ յութն գիւղօ-

րեից հանդերձ բնակչօք այլազգի մահմետականաց· որպէս ասացաւ՝ ՚ի ձորամիջի անդ ՚ի հիւսիսակողման Երասխայ, ընդ մէջ որոյ անցեալ Ախուրեան գետ խառնի յԵրասխ. ունի ՚ի հանդիպոյ ը̅ հարաւ զաւերակն Երուանդաշատ քաղաքի, զլեառն Նարդոզ, զաղահանսն և զԿողբ գիւղ· որոյ գիւղօրայք են 1. Ղուխուր՝ տունք 5, ուր է իջեւան հեծեալ ղազախաց: 2, Չիւաքին ջէտոռ՝ տունք 3· աստ ևս իջեւան ղազախաց· 3, Չէլէպին, յարևմտեան եզեր Ախուրեան գետոյ· 4, Չամշիքայլու՝ տունք 50, յարևելեան եզեր նոյն գետոյ. սա ունի ամրոց քարակերտ հիւսեալ ՚ի յետնոց. այլ որպէս երևի՝ է տեղի հնագոյն և մի յարուարձանացն Երուանդաշատ քաղաքի. քանզի յասորև քան զգիւղն ՚ի վերայ գետոյն է և տեղի հնագոյն քարաշէն կամրջոյ, և քարինք ամրոցին ևս ցուցանեն քակեալ և անդրէն հիւսեալ. աստ ևս գոյ իջեւան ղազախաց՝ ուր նստի և մասնաւոր ատրճանաւոր կառավարիչ նոցին և հրամայող:

՚Ի Հաճիբայրամայ ը̅ արևելս հարաւոյ ցհանդէպն աւերեալ ամրոցին Սուրմարւոյ իբրև երկու ժամ և կէս առ հիւսիսային եզերբ մեծի գետոյն, են և միւս երեք գիւղօրայքն՝ 5, Խէրդէւըլ՝ տունք 21, 6, Չիւար՝ տունք 11, և 7, Ղոփրըլ՝ տունք 4. ՚Ի ձորամիջի աստ յանդաստանըն բնակչաց լինին պատուական որիզ, բամբակ և պտղատու ծառք ծիրանի և ընկուզենի ևն, մանաւանդ ՚ի Հաճիբայրամ:

՚Ի Հաճիբայրամ գեղջէ ընդ գետն ՚ի վեր իբրև քառորդ մի ժամու ՚ի ձորամիջի անդ է աւերեալ տեղի բազում տանց. ուր է և փոքրիկ ամրոց աւերեալ, այլ արևմտեան բուրգն նորա մեծ մասամբ կայ կանգուն, և յարևմտեան հակառի այնր բրդան գտանի արձանագրութի հայկական տառիւք, այլ վասն բարձրութեանն և ՚ի

տեղիս տեղիս եղծեալ գոլոյն՝ չկարողացաք առ-նուլ 'ի գիր: Յարևելից այսր ամրոցի իբրև քա-ռընկէց մի՝ է մատուռն փոքրիկ 'ի կոփածոյ կար-մրագոյն քարանց. հիւսիսային որմն մատրան կայ ամբողջ, ձորոյ ներքին կողմանէ դնի սոյն արձա-նագիր շինութեանն՝ ըստ այսմ:

„Թվ. ՈԿԷ (յամի 1218) շնորհիւն ամենակալին Քրիստոսի . . յիշատակ է վասն երկարութեան և մեծ պարոնութեան մերոյ Շահանշահի, ես Սար-գիս որդի աւագ երէց Գրիգոր քահանայի շինե-ցի զիմ հայրենի զսուրբ Աստուածածին եկեղե-ցի ևն. . . . „

Հանդէպ այսր տեղւոյ յայնկոյս գետոյն ե-րևին բազում աւերակք տանց և փոքրիկ ամրո-ցի միոյ և մատրան:

Ընդ գետն 'ի վեր աւելի քան զմի ժամ է գիւղն Այրիսըլվառ կոչեցեալ՝ (տուն I,) սակս կրկ-նակ ունելոյ անդ ձորոյն և գետոյն. զի հոսեալ 'ի հիւսիսոյ՝ աստ խոտորի ը արևմտեան հարաւ. և 'ի հաճիբայրամ խոտորեալ ևս ընդ հարաւ՝ խառնի յԵրասխ. աստ ևս իջևան ղազախաց:

Աստի ևս ընդ գետն 'ի վեր դէպ 'ի հիւսիս իբրև երկուս ժամս՝ է Միրզախան կոչեցեալ տե-ղին. աստ է հուն (կէչիտ) գետոյն, ընդ որ անցեալ գնան 'ի բազարան՝ որ երևի 'ի վեր անդր 'ի ձո-րամիջի. և է հնագոյն տեղին՝ ուր նստէր Եր-ուազ քրմապետ եղբայրն Երուանդայ Բ, արքայի հայոց. աստ 'ի Միրզախան ևս իջևան ղազախաց. 'ի հաճիբայրամայ մինչև ցաստ Ճանապարհն է 'ի ձորամիջի և կարի դժուարագնաց սակս քարալից գոլոյն. աստ վերջանայ սահման Ահաթլը գաւառի:

374, Ճանապարհն չունելով զայլ ևս անցս ընդ ձորամէջն 'ի վեր, ելանէ յիջևանէ աստի 'ի սարահարթն և գնայ ժամ և կէս և հասանի 'ի Բարվանսարայն՝ ուր է ևս իջևան ղազախաց. յայս

մին տեղւոջ է պանդոկ մեծ կիսաւեր. զի զմեծամեծ խարտեալ քարինսն քակեալ 'ի շինուածոց անտի՝ տարեալ են այլուր 'ի պէտս այլ շինութեանց, որոյ և կամար դրանն խապառ քանդեալ՝ վասն որոյ և չգտաւ նշմարանք ինչ գրուածոց։ Տարածութիւն տեղւոյ պանդոկին աւելի գտանէր քան զհազար քառակուսի գազ պարսից, բովանդակն տեղիք սենեկաց կից առ միմեանս՝ յորոց երեք կամ չորք հազիւ կային ամբողջ։

'Ի պանդոկէ աստի իբրև քան քայլ ընդ հարաւակողմն են երկու որոշ տեղիք աւերածոյ մեծի շինուածոց 'ի խարտեալ քարանց, այլ որպէս երևէրն՝ դարձել չէնք պանդոկաց. զի քայքայեալ քարինք և հիմունք նոցա զնոյն տուգէին. և որպէս թուէր, լեալ է անդէն և բնակութիւն հիմնաւոր գերդաստանաց՝ թերևս սակսնոցին երթևեկք կարաւանացն 'ի հնումն. քանզի յարևելակողմն պանդոկին էր և գերեզմանուտ և կային տակաւին յինչ ինչ շիրիմս և տապանաքարք, այլ առանց գրչութեան։ Նոյն և որպէս 'ի միրզախան՝ ունի հուն ընդարձակ՝ գետոյն և ձորն։

Յարևմտակողմն յայնկոյս գետոյն 'ի բաւականաչափ դաշտաձև տեղւոջ է մեծ աւերակն Արենայ, ուր երևին 'ի կանգուն ինչ ինչ խաչքարինք և մատրունք, և մեծ կաթուղիկէ եկեղեցին՝ զորմէ աւանդեն պատմիչք, շինեալ 'ի Նուաթայ սահառունեայ. զայս տեղի այլազգի մահմետականք անուանեն | ղարաբաղ |, իսկ հայք՝ պարզ կոչմամբ Արէն, մանաւանդ բնակիչքն բագարանոյ՝ որ 'ի Արենայ ընդ հարաւ է իբրև մի ժամ հեռի։

'Ի քարվանսարայէ աստի ցմիւս իջևանն ղազախաց երկու ժամ հեռաւորութեամբ, որոյ տեղին կոչի | ուզուն քեանտ |, քանզի 'ի ձորամիջէանդ 'ի միջոցս գետոյն և քարատակին երկայնել

կարգաւ են ձմեռնային բնակարանք քրթաց · որոյ վասն և կոչի յայն անուն · չիք աստ շինուած ինչ ՚ի հնոց կամ ՚ի նորոց բաց յիջևանէն ղազախաց՝ որ ՚ի ձորամիջի անդ ։

Աստի ևս ցմիւս իջևանն ղազախաց մի ժամ հեռաւորութեամբ , իջևանն ՚ի վերայ սարահարթի ձորոյն յարևելից նորա · և կոչի այս տեղի ՚ի բնակչաց կողմանցս | քիւմպէզ | , քանզի յանցս անդ ճանապարհին՝ որ մտանէ ՚ի ձորն , է մատուռն մի բոլորակաձև վեցանկիւնի կառուցեալ ՚ի կարմրագոյն խարտեալ քարանց · շրջապատ մատրանս արտաքուստ որմովն հանդերձ է երեսուն գազ պարսից , իսկ բարձրութիւնն իբրև երեք գիրկ · վերին բաժին շէնքն՝ որ է գմբէթն , ծածկեալ է ընտիր տեսակ իմն կղմնտերբք · ունի զերիս լուսամուտս յարևելից , յարևմտից և ՚ի հարաւոյ · իսկ գմբէթն ՚ի չորից կողմանց ևս · չգրտաւ արձանագրութիւն ինչ՝ թերևս եղեալ ՚ի վերայ վիմին ՚ի կամարի անդ դրանն հարաւակողման , ընդ վիմին անհետացեալ է չարութեամբ այլազգեաց · զի բաց ՚ի կամարէ և ՚ի սեմոց դրանցն , ամբողջ են միւս կողմունքն և գմբէթն · չիք աստ այլ նշմարանք ինչ հին շինուածոց , այլ գուցէ եղեալ են երբեմն ոմանք կրօնաւորք , աստ ևս ՚ի ձմրան բնակին քուրթք ։ Հանդէպ այսր մատրան յայնկոյս գետոյն յարևմտից հարաւոյ ՚ի սարահարթի անդ ձորոյն է կիսաւէր բրգաձև բարձր շինուած ինչ քառակուսի ։

Աստի ևս հեռաւորութեամբ կէս ժամու յայսկոյս գետոյն յարևելակողմն անմիջապէս յեզեր քարափան ձորոյն է հին շինուած ինչ քառակուսի ՚ի սևագոյն խարտեալ քարանց · հարաւային կողմն խապառ քանդեալ · իսկ հիւսիսային ճակատն՝ որ յերկոսին անկիւնսն ունի զերկուս կիսաբոլորակ բրգունս , կայ ամբողջ · և որպէս նկա-

տի՛ է և սա կառուցեալ 'ի հնոց սակս երթևեկաց և կարավանաց 'ի ձմեռնային եղանակին։

375, Կէս ժամ ևս աստի 'ի վեր ընդ սարահարթն ձորոյն է վերջին իջևանն ղաղախաց արևմտեան հիւսիսոյ անկեան այժմեան սահմանին Խորևանայ. և կոչի 'ի բնակչաց անուամբ Ղզըլղուլայի. այս ղզըլղուլայ (Կըզըլ Քուլէ) երևի յիջևանէ աստի ղազախաց 'ի հիւսիսակողմն անդր 'ի լանջս դիւր առապարի. ուր յառաջացեալ մեր իբրև կէս ժամ 'ի զննութիւն այնմ, հասաք և տեսաք զայն՝ ամենապայծառ հոյակապ եկեղեցի, կառուցեալ կարմրերանգ սրբատաշ քարամբք. տարածութիւն ամբողջ շինուածոյն՝ ընդ երկայնութին 36, գազ պարսից. իսկ ընդ լայնութիւնն 22, գազ և կէս. յայսմ ընդարձակութեան ունի յերեսին կողմանս ևս՝ բաց յարևելից, զգաւիթս սինազարդ. և 'ի չորեսին անկիւնսն 'ի նոյն ընդարձակութեան սենեակս, կամ լաւ ևս ասել՝ աւանդատունս. միջին ծածք տաճարին օրոցաձև և անսիւն, այլ խոնարհեալ բոլորովին. լայնութիւն տաճարին իբրև տասն գազ. նոյնպէս խոնարհեալ են ծածք գաւթացն և սիւնքն անկեալք, և ծածք երկուց արևմտեան աւանդատանցն. իսկ միւս երկուքն, և կիսաբոլորակ կամարայարկն սրբոյ սեղանոյն կան յանբողջութեան. մեծամեծ լուսամուտքն յարևմտից և 'ի հարաւոյ տանն. զի չի՛ք 'ի հիւսիսակողմն լուսամուտ՝ թերևս սակս ձմեռնային հոսանաց ձեանն և բքաբեր հիւսիսային հողմոցն. ունի և երեք դրունս՝ երկուքն ընդ հարաւ և մին ընդ արևմուտս 'ի մէջ գաւթացն. չդտաւ այլ գրուած ինչ բաց 'ի միոյ՝ որ յորմն անդ հարաւային արտաքուստ 'ի մէջ գաւթին՝ յարևմտակողմն առաջին դրանն հարաւոյ, և այն փոքր ինչ անհարթ գրչութեամբ. և ունէր օրինակ ըստ այսմ։

„Յանուն աստուծոյ. ՚ի Թվականիս ՆՁԷ.
(յամի 1038) ես բարեպաշտ Թագուհիս դուստր Ա-
բասայ Սմբատ շահանշահի կինս և մայր որ պա-
տեցի զԵրերվաց դաստակս յորդեց յորդիս
„Սմբատ շահանշահանի հզաւրի և արքայի արև-
շատութեան, և անուոյ իմ հայոց.....ամ գը-
րոցս հակառ կամ ՚ի մեծաց կամ ՚ի փոքրաց՝ յԺԸ
Հայրապետացն նզովեալ եղիցի„:

Միջոց տաճարիս և ձորոյն գետոյ է ընդար-
ձակ տեղի աւերակաց տանց բնակութեան. շինու-
թիւնք տանցն եղեալ են մեծ մասամբք ՚ի կո-
փածոյ քարանց. աստ անդ յեղերս աւերակին են
գերեզմանունք, և կան անկեալ խաչքարինք և
՚ի շինամէջսն. աստ եւս բնակին ՚ի ձմրան ՚ի նոյն
վրանաբնակ քրդաց. և որպէս երևի յարձանա-
գրութենէ անտի՝ կոչէր յառաջագոյն անուն տե-
ղւոյս | Երերվաց դաստակ |:

376, յԵկեղեցւոյ աստի ընդ արևելեան
հիւսիս երբև հինգ ժամ հեռաւորութեամբ է
Մաստարա գիւղն բնակեալ ՚ի Հայոց. ՚ի միջին
տեղւոջ երկարութեան այսր ճանապարհի ՚ի հիւ-
սիսային կողմն | բուղուլթլու | կոչեցեալ մեծի
բլրոյն, ՚ի վերայ հարաւային եզեր հեղեղատին ջը-
րոյ Մաստարա գեղջ՝ է քառակուսի բարձր շինո-
ւած ինչ ամրոցի, ունի զչորս բրգունս յանկիւ-
ն չորեսին ՚ի կարմրագոյն կոփածոյ քարանց որ-
պէս և չորեքին որմունքն. և երբև քարնկէց մի
՚ի հարաւակողմն այսր շինուածոյ՝ է այլ շինուած
ինչ քայքայեալ. և գիւղատեղին աւերակ յարև-
ելից ամրոցին. այժմ այս ամրոց կոչի | քեալաշ
բէկի ղուլլայ |. այս Քեալաշ բէկ՝ որպէս պատ-
մեն բնակիչք կողմանցս, լեալ է իբր հարիւր ա-
մօք յառաջ, և ինքն յազգէ քրդաց. որում խանն
Երևանայ յանձնէ զերեսնիւ չափ հայազգի գեր-
դաստան առ ՚ի բնակել անդ ընդ նոսա, այլ զկնի

անցման փոքր միջոցի սակս պակասութեան ջուր-ցն ելանէ անտի՝ Պեալաշ բէկ այլուր, և հայք ևս գաղթեալ բնակին ընդ բնիկ մաստարացիսն։

յՄիջոցէ աստի ընդ հիւսիս է ընդարձակ դաշտավայր՝ զոր բնակիչք կոչեն | դեն զօվի |, և ՚ի սպառուածի դաշտիս այսորիկ և յարևմուից Մաստարայ գեղջ են քանի ինչ խանգարեալ քարա-շէն եկեղեցիք, զոր անուանեն բնակիչք | զարըն-ձի, կամ ղզըքիլիսայք |։

Այն ընդարձակ խառաւէտ միջոց՝ յորում իբր ՚ի կեդրոնի բարձրացեալ կայ հանդերձ այ-լովք փոքր բլրակօք | բուղութլու | կոչեցեալ մեծ բլրակն, ունի յարևելից զսահմանս Նորակա-ւոյց ամրոցին Սարտարապատու, և Խալֆայ, յա-րևմուից զգետն Ախուրեան, ՚ի հարաւոյ գրեա-թէ՝ զԵրասխ. իսկ ՚ի հիւսիսոյ զերկայնաձիգ ա-ռապարն Մաստարայ գեղջ՝ որ կոչի | գիւնէիք | (ուբէգտէ՛) և զաւերակս վերոյիշեալ եկեղեցեա-ցըն։ Սոյն են տեղիք վրանաբնակ քրթաց ՚ի միջոցս աւուրց ապրիլ և մայիս ամսոց՝ այնինչ դեռ մա-տաղ են գառինք հօտից նոցա։

## Արագածոտն գաւառ.

377, Այս սահման պարունակէ զինքեան և զստորագրութիւնն ՚ի վերոյ՝ սկսեալ ՚ի Միրզա-խան կոչեցեալ տեղւոյ և այսր. իսկ աստի ընդ-արեգդէմ լերին Արագածու մինչև ցարևելեան ստորոտ նորա՝ ցսահմանս գաւառին Նիգայ. իսկ ըստ այժմեան որոշողութեան յանուն փոքրիկ սահմա-նավայրացն՝ զգաւառն Խալֆայ, Խալիշայ (Արտծ), Թիւրականայ (Անբէէրտոյ), Կարբւոյ և Ապարանու (Նէգ)։

Գաւառ Արագածոտն գիւղօրայք:

378. Արուճ գիւղ. բնակեալ 'ի հայոց տունք 85, յատորոտի արեւմտեան հարաւոյ Արագածու 'ի վերայ արքունի ճանապարհին. յորում է եւ իջեւան արքունի 'ի սակս անցորդացն ընդ Աղեքսանդրապօլ (Գիւմրի) եւ ընդ Երեւան. ունի հին եկեղեցի բոլորակաձեւ ութն անկեամբք, եւ բաւականաչափ մեծ առանց սեան. ունի եւ կաթուղիկէ 'ի միջավայրին, զմի սեղան եւ զերկուս փոքրիկ աւանդատունս յերկոսին կողմանս սեղանոյն. եւ է յանուն յովհաննու կարապետի, բայց յարձանագիրս՝ աստուածածնի. շէնք սորա կարի հնագոյն, եւ որպէս նկատի՝ յեօթներորդ դարու անդ, եւ այն՝ թերեւս 'ի Գրիգորէ մամիկոնեան իշխանէն Հայաստանի. քանզի այս անուն տեսանի յարձանագրութիս այսր եկեղեցւոյ. ունի զարձանագիր շինութեան առանց թուականի 'ի վերայ կամարի լուսամտին՝ որ յարեւելից հարաւային դըռանն՝ ըստ այսմ:

,,Յամս տեառն Թէոդորոսի գնունեաց եպիսկոպոսի շինեցաւ Ածածին տունս քաւել զԳրիգորս անարժան,,:

Զայլ եւս մի կարգ գիր 'ի ներքոյ կամարի նոյն լուսամտին, այլ մեծ մասամբ եղծեալ գոլով՝ մնաց անվերծանելի: Թերեւս սոյն Թէոդորոս գնունեաց եպիսկոպոսն իցէ՝ որ յիշատակի (ըստ ընտիր ձեռագրաց) 'ի ժողովն Դվնայ 'ի ժերրորդում կարգի եպիսկոպոսաց ստորագրողաց զայն սահմանադրութիւն՝ որ առ Գ, Ներսէս կաթուղիկոսիւ եւ Կոստանդին կայսերբ Յունաց. զսոյն Թէոդորոս եպիսկոպոս զնէ Միքայէլ չամչեան յերեքտասաներորդ կարգի. եւ անուանէ Թադէոս. յ345, համար Բ հատորոյ:

Գտանին եւ այլ ինչ ինչ արձանագրութիւնք

յորմունս եկեղեցւոյս այսորիկ , այլ վասն կարի հնութեանցն չեղև տանուլ ի գիր լիովին · յորոց մին 'ի հարաւային բաժնի յարևմտեան կողմն 'ի բարձրութեան անդ քան զլուսամուտն յարտաքին կուսէ որմոյն' որ ըստ նկատողութեան , է յանուն նորին Մամիկոնեան Գրիգորի' ըստ յայտնութեան ամբողջ սակաւաթիւ բառիցն , որք են այսոքիկ :

,, Գոհանամ զԱստուծոյ որ ետ ինձ Գրիգորոյ.... ըղձացելոյ որդւոյ եղբաւր Գրիգոր իշխանի.... տալ , եւ սովաւ .... սա է աղաւ .... ազգա . . . մեղաւորաց յիշատակարան ինձ եւ . . . . . . . . յիշեցէք . . . . . ,, :

Իսկ երկրորդն' յորմն հարաւային յարևմտեան դրանն այնր կողմանն' ըստ այսմ :

,, 'Ի ՆԿԴ , (յամ 1015) Թուականութեանս Թորգոմեան ես սահռամ (Բեբեա Մ Ահրան) իշխանաց իշխան որդի Համազէի թողի զՄատարան շարիատն վասն Գագկայ շահնշահի կենդանութեան , եւ որդւոց իւրոց , և վասն հոգւոյ իմոյ փրկութեան : Որդ այսմ գրոյս չունի ոք իշխանութիւն' ոչ ես սա համզէ · և ոչ 'ի մերոց ոք և ոչ յիշխանաց . . . հակառակի և այլն ,, :

Շուրջ զեկեղեցեաւս անմիջոց ընդ որմն եկեղեցւոյն քարամբք և կրովք բարձրացուցել են յետինք զորմն նոր անդր քան զտանիք եկեղեցւոյն , և արարեալ են զեկեղեցին իբրև բուրգ և ամրոց իմն առ 'ի պահպանութի բնակչաց գեղջն 'ի ժամանակին ասպատակութեանց թշնամեաց , ըստ որով ծածկեալ կայ և այժմ արևմտեան դուռն եկեղեցւոյս · այս կրկին շինուած 'ի չորից կողմանց եկեղեցւոյս քակեալ անկել կայ , բայց միայն 'ի հիւսիսակողմն իբրև չորս գազ լայնութբ միոյ ցկատար շինուածոյն տակաւին ամբողջ գըտանի · և ինչ ինչ սալքարինք տանեաց և կաթու_

ղիկէին քայքայեալ։

՚Ի մէջ գեղջս ՚ի հարաւակողմն եկեղեցւոյն իբրև քարընկէց մի՝ է աւերակ ինչ փոքրիկ մատրան, զոր անուանեն բնակիչքն | Թուխ մանուկ |։

Յարևմտից հիւսիսոյ գեղջս ՚ի բարձրաւանդակի է աւերակ ինչ տեղի շինուածոց. յորում տեսանի և տեղի փոքրիկ եկեղեցւոյ. զայսր տեղւոյ ասեն՝ բնակեալ երբեմն աբեղայից ոմանց. և զանուն եկեղեցւոյն կոչեն | սուրբ Ստեփաննոս Նախավկայ |։

Յարևելից հիւսիսոյ է փոքրիկ ձորակ, և կոչեն նմա անուն՝ (պոչիկ ձոր). զի երկարութիւն նորա է կարի կարճ. ՚ի մէջ այսր ձորակի ՚ի հարաւակողման է փոքրիկ մատուռն աւերեալ, և տեղի երկուց սենեկաց. ուր ասեն բնակէր երբեմն վարդապետ ոմն ազգային կամ եղբայր տոհն գեղջս՝ որում տուեալ ըստ հայրենի ժառանգութեանն զփոքրիկ սահման արտօրէից յարևելակողմն գեղջս, ՚ի պէտս նշխարի սրբ. խորհրդոյն և ապրուստի նորա՝ կոչեն զձորակն և | նշխարաձոր |։

՚Ի չորեսին կողմանս այսր գեղջ են յոլով գերեզմաննոց՝ մանաւանդ յարևելակողմն. ուր գոյ և մատուռն կիսաւեր՝ որոյ յարևելեան ճակատի գնի հայ Թուական ՆԿԶ, (1017). գտանին և խաչքարինք ՚ի շիրիմսն անդ՝ յորոց միջի միոյն ունի զգրուած ինչ այսպիսի. „ ՚ի Թուին ՈԿԲ, (1223) ես. . . . քահանայ և եղբարք իմ կանգնեցաք ըզսուրբ նշանս բարեխաւս յահեղ աւուրն մեր ծընողի ևն„։

Ընդըր քան զայսր կողման զգերեզմաննոցն ՚ի բարձրաւանդակի ՚ի վերայ Մծամծ սալայել քարանց կառուցեալ կայ ամենիմնտիր փորածու խաչվէմ՝ երեք գազ բարձրութբ, գազ և կէս թանձրութեամբ. ՚ի գլուխ այսր խաչվիմի եդեալ կայ միւս այլ վէմ քանդակագործ իբրև պսակ

նմին, և է մի քառակուսի գազ թանձրութեամբ. ՚ի հիւսիսային ճակատի այսր վիմի է գրուած յանուն կառուցանողի այնմ Խաչատուր վարդապետի վասն հոգւոյ ծնողաց և եղբարց իւրոց, բայց որչափ երևէր՝ թուական նորա ՚ի սկսուածի անդ, եղծեալ էր. այս խաչվէմ ՚ի բարձրաւանդակէ անտի հայի ընդ արևմուտս ընդ բովանդակ սահմանս անդաստանաց և արտօրէից այսր գեղջ. և գուցէ այս վարդապետ իցէ բնակեալն ՚ի վերոյիշեալ Նշխարաձորի:

Ջուր այսր գեղջ իջանէ ՚ի բարձրութեց անտի Արագած լերին կիսով չափ յաղբերականց և կիսով ՚ի հալոցաց ձեանց. ուստի մինչև ցյունիս ամիս առատ է, այլ զկնի այնր սակաւացեալ՝ հազիւ բաւական լինի գեղջս, և այլ մերձաւոր տեղեաց. իսկ յառատութեանն՝ աւերէ երբեմն ըզհիւսիսակողման արտօրայսն սահմանին Սարտարապատու, ընդ որ անցեալ՝ անկանի ՚ի Մեծամօրի (ռէա- ջուր):

379, Խալէն անուամբ կրկին տեղիք՝ առաջինն հեռաւորութեամբ ՚ի մաստարա գեղջէ ընդ հարաւ իբրև ժամ մի, իսկ երկրորդն՝ իբրև ժամ երկու. ՚ի յետնոց անուանեցան հին և նոր, յորոշումն ՚ի միմեանց. հինն ունի զիսկական անուն իւր զԽալէն յարձանագրութեան անդ ՚ի հին շինուածսն. իսկ անուն նորոյն չգտաւ ուրեք յարձանագրութիւս իւր. և գուցէ է Բաղեն անուանեալ տեղին՝ զոր ը̃ Թալնայ յիշատակէ Սամուէլ երէց ՚ի 773, թիւ փրկչին. „Յաւուրս յայս եղև կոտորումն Բաղինոյ (ռաղէնոյ), Արենոյ, Թալնայ. ուր սպանան ոգիք 700, և գերեցան 1200.„:

Այս տեղի հին Խալէն կոչեցեալ ՚ի լեռնոտի անդ ՚ի տափարակ տեղւոջ. բնակիչքն հայազգիք ՚ի գաղթականաց սահմանին ղարսայ՝ տունք 43: Ի հնումն կարի բազմամարդ է եղեալ այս տե-

ղի՝ որպէս ցուցանեն աւերակքն և մեծ եկեղե-
ցին կաթուղիկէ. և աւանդութիւն կողմանցս
ծէ՝ 'ի հին Խաչին 360, նորոգեալ հարուանք 'ի
մեծ տօնի աստուածայայտնութեան և զատկի ար-
ծաթապայտ մուծանկաւ գնայլն յեկեղեցի:

'Ի հիւսիսակողմն գեղջս է փոքրիկ տաճար անսիւն 'ի կարմրագոյն խարտեալ քարանց հաստատ շինուածովք. ունի զմի դուռն 'ի հարաւոյ և փոքրիկ կաթուղիկէ, և զմի սեղան տեղի պատարագելոյ, կառուցեալ 'ի Ներսեհէ կամսարական իշխանէ Արշարունեաց՝ որոյ յիշատակագրութեանն արձան փորագրեալ արտաքուստ յորմն արևմտեան յերկուս կողմանս քակեալ լուսամրտին՝ ըստ այսմ:

,, Ես Ներսեհ ապոհիպատ պա... ակայ եւ Արշարունեաց տէր, շինեցի զեկեղեցիս յանուն սրբ.... Աստուածածնին 'ի բարեխաւսութիւն ինձ Եւ Շուշանա..... յամուսնոյ իմոյ Եւ Հրահատայ որդւոյ մերոյ ,,:

Չունէր թուական. այլ որպէս կարծի, է այս Ներսեհ որդի ծերունւոյն Սահանայ կամսարականի՝ որ յամի 690, կարգեցաւ 'ի Ե, Յուստինոս կայսերէ կիւրապաղատ 'ի վերայ Հայոց հիւպատոս և պատրիկ անուամբ. աստ այժմ աղօթեն բնակիչքն:

Կարի մերձ յայս տաճար յարևմտից՝ լեալ է միւս եկեղեցի մեծ, այլ բոլորովին խոնարհեալ անկեալ դնի առ տեղեաւն:

Հեռի աստի իբրև քարընկէց մի ընդ հիւսիս է մեծ կաթուղիկէ եկեղեցի կառուցեալ 'ի վերայ չորից հաստատուն սեանց. ունի 'ի չորեսին կողմանս զկիսաբոլորակ բրգաձև կամարայարկս, ըստ չորից թևոցն մեծի կաթուղիկէ եկեղեցւոյն Աղարշապատու. միջին ընդարձակութիւնն՝ յերկայնութեան թևէ 'ի թև, 33 գաղ

պարսից, ՚ի լայնութեան 23․ ընդ հարաւ և ընդ հիւսիս ինն ինն մեծամեծ լուսամուտք․ 5, դըրունք՝ 2, ընդ հարաւ, 2, ընդ հիւսիս և 1, ընդ արևմուտս․ կաթուղիկէն որ ՚ի վերայ չորից սեանցն՝ մեծ մասամբ խոնարհեալ է․ Մասն արևմըտեան հարաւոյ հանդերձ այնր բաժնի շինուածովք յարկին, յամին 1830, անկեալ ծածկեաց զ25, բեռնակիր եզինս ՚ի ներքոյ՝ որոց տէարք յայլազգի մահմէտական յանձրևոտ եղանակի խոտորեալ յարքունի պողոտայէն անդր ՚ի պատսպարել՝ պատահեալ են այդմ դիպուածոյ, այլ ինքեանք անդր գոլով քան զփլածն՝ ազատ մնացեալ են։

Չգտաւ արձանագիր շինութեան եկեղեցւոյս, այլ թէ ընդ փլածովքն անյայտացեալ՝ չըգիտէ ոք․ գտանին քանի ինչ արձանագրութիւնք նուիրանաց․ մին յարևմտեան ճակատի սեան արևելեան հարաւոյ․ որոյ եղծուածն շատ գոլով չեղեւ առնուլ ՚ի գիր․ բայց ՚ի սկսուած անդր ունէր զթուական հայոց ամբողջ մ՛լբ․ նոյնպէս մերձ ՚ի դուռն արևելեան հարաւոյ եղեալ արձանագրութեան մեծ մասն վիմովն հանդերձ բեկեալ անհետացեալ էր, և ունէր յսկսուածին թիւ հայոց Յ․ (851․) իսկ երրորդն ՚ի հարաւային ճակատի սեանն արևմտեան հարաւոյ գտանելով ըստ մեծի մասին յամբողջութեան, յառաջ բերեմք աստէն՝ ըստ այսմ օրինակի։

„ ՚Ի Ն ԵՒ ՃԹ (1040)․ Թուականութեանս հայոց ՚ի հայրապետութեան տեառն Դէոսկորոսի Հայոց կաթողիկոսի կամ եղեւ իմ Սմբատա շահանշահի որդո Գ․ակա՝ որ ետու ՚ի սուրբ կաթողիկէ ՚ի թա ա ընծա . . . յաւիտենից զկոստանդեանց այգին յառաջնորդութեան հաւր Ստեփաննոսի․ ես արարի արձանագիր անջնջելի ՚ի սբ կաթողիկէս․ եթէ ոք այս գրոցս հակառակ լինի կամաց կամ յաւտարաց, ՚ի մեծաց կամ ՚ի փոքանց

պարտական լիցի . . . տեառն . . . ,, :

Մերձ յայս եկեղեցի և 'ի փոքր տաճարն են աւերակք տանց եղելոց 'ի կոփածոյ քարանց ներքնատամբք հանդերձ:

'Ի միջոցս ճանապարհին այսր տեղւոյ և Նոր Թալին կոչեցելոյ է պանդոկ մեծակառոյց բազմասենեակ, որոյ մեծ մասն կայ յամբողջութեան. իսկ միւս մասն ոչ այնքան 'ի հնութենէ քայքայեալ որչափ խարտեալ քարինք նորա հանեալ յամրութենէ որոնց նորա՝ բարձեալ են յայլուր 'ի պէտս նորոգ շինութեանց. և անուանի առ հասարակ 'ի բնակչացս Պէրմանսարայ Թալնոյ:

380, Թալին Նոր կոչեցեալ հեռի 'ի մաստարայ գեղջէ՝ որպէս գրեցաք 'ի վերոյ, երկու ժամաւ՝ ուղղակի ընդ հարաւ 'ի վերայ աղբունի պողոտային 'ի բարձրաւանդակ տափարակ տեղւոջ վերջին սպառուածի ստորոտի մեծի Արագած լերին. լեալ է և սա 'ի հնումն մեծ շինանիստ, ըստ ցուցանելոյ աւերակացն և տեղւոյ այգեաց և ծառաստանացն. 'ի հնութեց նշանք գտանին այսօքիկ. 'ի միջին բարձրաւանդակ տեղւոջն կառուցեալ կայ 'ի հնոց անտի կոփածոյ քարամբք և կրովք բերդաձև շինուած ինչ լայնանիստ և եռայարկ. ներքնայարկ նորա է ընդարձակ սենեակ մի բարձրակամար հաստատուն շինուած 'ի խարտեալ մեծամեծ քարանց առանց ինչ լուսամուտի. և ունի տեղի դրան միոյ յանկեան արևմտեան հարաւոյ, և դուռն նորա միաստանի կոփեալ 'ի վիմէ՝ որ անկեալ դնի անդէն ամբողջ. չորք կիսաբոլորակ բրգունք են 'ի չորեսին կողմանս այնր մեծի կամարայարկին անմիջապէս կից շինեալք ը̄ նմա, և փոքրիկ ելանելիք նոցա 'ի ներքուստ 'ի մեծ կամարայարկէ անտի, այլ որովհետև ծածք վերնայարկացն խախտեալ և քայքայեալ են, բացեալ է և լուսամուտաձև տեղի ինչ յառաստաղն

մեծի ներքնայարկին. մեծ մասամբք կրաշաղախ որմունք այսր շինուածոյ ցկատար անդր կան յամբողջութեան. 'ի միջոցս չորից բրգանցն կից յորմունս մեծի կամարայարկին շինեալ են այլ եւս չորք բրգունք 'ի չափ մեծութեան եւ բարձրութե միւսոցն՝ թերեւս յօսմանեանց 'ի ժամանակի տիրապետութեան նոցին յայսոսիկ կողմանս. քանզի 'ի բուրգն արեւմտեան ընդ հարաւակողմն 'ի բարձրութեան անդ արտաքուստ 'ի վէմ մի՝ գտանի քանի կարգ գրուած մեծամեծ տառիւք նոցին, եւ 'ի վերն անդ 'ի հաւաքեալ եռանկեան անուն ինչ փակատառ (Տուղրայ) անուանեալ 'ի նոցունց յօսմանեանց, այլ ըստ մեծի մասին եղծեալ են տառքն 'ի կարկտաբեր հողմոց:

Զանդէպ այսր արձանագրի 'ի հին բուրգն անկեան արեւմտեան հարաւոյ գտանի արձանագիր հայացի տառիւք՝ յայսօրինակ:

,,Թվին չԺԶ. (1267):

,,Շնորհիվ ողորմածին յաստուածոյ այս իմ գիր է պարոն Աղպուղայիս թոռն մեծին Շահանշահի, որդի Իվանէի՝ որ կամ եղեւ ինձ յաստուծոյ, եւ թողի զիմ հայրենիքս գեղիս զԹալնայ գինոյ խալէն վասն արեւշատութեան ամիր սպասալար Շահանշահի եղբաւր իմոյ եւ ինձ Աղպուղայիս, եւ Ախթի խաթունիս եւ զաւակաց մերոց, եւ վասն մեր պապերուն նախնեացն յիշատակութեան. Եթէ ոք այս գրիս հակառակ կայ յիմոց կամ յաւտարաց, մարդն այն դատի յաստուծոյ, եւ մեր՝ եւ մեր . . . նախն . . . յանցանացն պարտական լիցին առաջի Քրիստոսի յահեղ ատենին. կատարողքն աւրհնին յաստուծոյ եւ յամենայն սրբոց, ամէն,,:

'Ի հարաւակողման 'ի բարձրութեան անդ որմոյ բրգանն տեսանի 'ի վէմ մի քանդակեալ պալարուն արձան մարդոյ փոքրահասակ՝ որոյ զգլուխըն ձեռնաձիգ քարամբք, կամ ումբաւ խորտա-

կեալ արկեալ են ՚ի վայր. ևս մերձ յայս արձան մարդոյ՝ քանդակեալ կան երկու արծուիք։

Որպէս գրեցաւ ՚ի վեր անդր՝ ըստ մեծի մասին ամբողջ կան որմունք այսր բրգաձև մեծի շինուածոյս. և ընդարձակութիւն սորին հանդերձ բրգամբքն երկպատիկ լայն է քան զդիտանոցն (قو-لهسى) Պէրայի՝ որ ՚ի Կոստանդնուպօլիս, այլ ոչ նովին չափ բարձր. արևելեան հարաւոյ բուրգն ևեթ կիսով աւելի վերուստ ՚ի վայր խոնարհեալ է. ընդ որ կարող է ոք անարգել ելանել ՚ի վեր. ուր ելեալ և մեր ՚ի կատար որմոցն՝ համարձակ տեսաք զկէս բաժին մեծի դաշտին մինչև ցսահմանս Ոնծամօր գետոյն։

Այս բուրգ՝ միջնաբերդ (ایچقلعه) ունի շուրջ զիւրև քառակուսի պարիսպ հանդերձ ութըն աշտարակօք. չորքն ՚ի չորեսին անկիւնսն, և չորքն ՚ի միջոցս նոցին ՚ի կոփածոյ կամրագոյն քարանց՝ որպէս և պարիսպն, իբրև երից գրկաց բարձրութեամբ. միջոց միջնաբերդին և այսր պարսպի իբրև քսան գազ պարսից՝ ընդ չորեսին կողմանսն ևս ։ Այս պարիսպ ունի զմի տեղի դրան և եթ հանդէպ դրանն միջնաբերդին, և կրկին մեծ քան զայն. դուռն սորա ևս է միապաղաղ վէմ կոփածու՝ անկեալ անդէն առ տեղեաւն ամբողջ։

՚Ի մէջ այսր պարսպի յանկեանն արևելեան հիւսիսոյ է փոքրիկ տաճար ՚ի խարտեալ քարանց, օրոցաձև. կամար նորա խոնարհեալ. չգտաւ արձանագիր շինութեանն, որպէս և աշտարակին և պարըսպին։

Կայ ՚ի մէջ այսր պարսպի և վիրապ մի խորագոյն՝ յատակ նորա լայն, և բերանն նեղ, փորեալ ՚ի վիմի. թերևս էր յառաջագոյն ՚ի հնումն տեղի մահապարտաց՝ որոյ նմանն տեսանի և ՚ի հին քաղաքս։

՚Ի մերում ժամանակի յամի 1812, Հիւսէ-

յին խան սարտարն Երեւանայ աշխատեցուցեալ զբնակիչսն Նահանգին ի կառուցանել շուրջ զհին շինուածովքն ընդարձակագոյն պարիսպ ութն անկիւնի հանդերձ ութն մեծամեծ բրգամբք 'ի հասարակ քարանց՝ բարձր եւ ստուար · եւ ունի զմի դուռն մեծ 'ի հիւսիսակողմն · արար 'ի սմա եւ զայլ շինուածս , եւ համբարանոցս · եւ կացոյց 'ի սմա բէկ անուամբ զայլազգի ոմն հանդերձ սակաւաթիւ գերդաստանօք 'ի պահպանութիւն երթեւեկացն 'ի Կարս եւ 'ի Շիրակ գաւառ · իսկ 'ի տիրապետութեան Ռուսաց գաղթականք 'ի Ղարսայ իբրեւ յիսուն տունք յազգէ հայոց բնակեցան աստէն · այլ զկնի քանի ամաց անդրէն ելեալ՝ ոմանք անցին 'ի Շիրակ եւ ոմանք 'ի հին թաղին · եւ այժմ է իսպառ անբնակ ։

'Ի մէջ այսր վերջին պարսպի գտանին տեղիք երկուց տաճարաց եւս , մին կարի փոքր եւ իսպառ աւերակ · իսկ միւսն յարեւելից միջնաբերդին եւ պարսպի նորա , միջակ մեծութեամբ 'ի հընագոյն շինուածոց անտի · որոյ հիւսիսային եւ արեւելեան կան կիսով չափ 'ի կանգուն , եւ 'ի չորից միափերթ սեանց՝ երկուք · իսկ միւս շէնքն քակեալ իսպառ · 'ի հիւսիսային հիման կամարի սեղանոյն տեսանէ այս արձանագիր ։

,, Նկէ , Թուականիս (1018) ես Սարխամ որ եդու զիմ գիրքս 'ի սուրբ Սարգիս ստ.. իմ հոգւոյս պարտականէ տարոյն Է աւուր Ժ . . . ,, ։

Արտաքոյ մեծի պարսպին շուրջանակի են աւերակք շինուածոց · 'ի հիւսիսակողմն են շիրիմք այլազգի մահմէտականաց յօսմանեանց , եւ 'ի նմա քանի թիւլպէք գմբէթաձեւք 'ի վերայ շիրմաց ։ Յարեւելից 'ի վերայ հաստատուն սալքարուտ բարձր տեղւոջ է փոքրիկ մատուռն 'ի յղկեալ կարմիր քարանց · յորոյ հարաւոյ արտաքուստ գտանի արձանագիր անուան շինողի այնր մատրան՝ Ջուր-

ջուր անուանելոյ։

'Ի հարաւակողմն ամրոցին իբրև քառորդ ժամու 'ի լանջի անդ է տաճար միջակ մեծութե առանց սեան 'ի խարտեալ սևագոյն քարանց․ անկեալ է կաթուղիկէն, և կիսով չափ որմն հարաւոյ խոնարհեալ ծածկեալ է արտաքուստ զներքին մասն այնր որմոյ՝ որով և զինչ ինչ արձանագրութիւնս՝ որք նշմարին ի սկսուածն։

Արձանագրութիւն մի յարևմտեան ճակատի որմոյն արտաքուստ 'ի հարաւակողմն դրան ըստ այսմ։

„Յանուն աստուծոյ, 'ի Ն եւ Է, թուականնութեան հայոց, (981) 'ի հայրապետութե Անանէի, և 'ի թագաւորութեան Աշոտոյ որդ․․․․․ա կամ եղեւ յաստուծոյ ես խոսրոա․․․․ հայոց թագուհի որ կարգեցի․․․․․․„։

Շուրջ այսր տաճարաւ եղեալ են սենեակք՝ որոց աւերակացն հիմունք կան տակաւին․ եւ որպէս երևի՝ լեալ է այս տեղի մենաստան կուսակրօնից․ շուրջ զմենաստանաւս յընդարձակութ անդ են վայրք այգեստանեայց և ծառաստանաց մինչև ցստորոտն առապարին ցդաշտ անդր․ և գրեա թէ յիւրաքանչիւր բաժինս այգեացն գտանին մի մի ընդարձակ քարայրք (հաղարոց) տեղիք հնձանաց։

Վերջին աւերութի այսր այգեաց և ծառաստանաց՝ որպէս պատմեն ականատեսքն, եղե յամին 1804․ քանզի 'ի գալ զինուորութեցն Ռուսաց պատերազմաւ 'ի վերայ Երևանայ յայնմ ամի, և 'ի գաղթել բովանդակ բնակչացն ահագին յայլևայլ ամուր տեղիս լերանց և ձորոց և 'ի հեռաւոր սահմանս, Ջաֆար խան անուն ոմն յայլազգի մահմետականաց իբրև եօթն հարիւր գերդաստանօք ամրացեալ գոլով 'ի լեառն Բարդողի իջանէ անտի այնու բազմութեամբ և անցեալ ը Երասխ՝ գայ բնակի աստ յամանաչափ միջոցս և յա-

պականութիւն դարձուցանէ զամենայն. և զկնի առանց բնակչաց մնացեալ՝ խապառ չորանան տունկքն և անհետանան. իսկ նա ինքն Ջաֆար խան որոշեալ 'ի պարսից և անցեալ ընդ հիւսիսային ստորոտով Արարատ լերին 'ի վանսն Հառիճոյ, և անտի ընդ Ապարան, և ընդ Եղիվարդ գիւղ՝ գնայ, միանայ ընդ զօրսն Ռուսաց և հպատակի իշխանութեան նոցին:

381, Աշնակ՝ աւան 'ի հնումն, այլ 'ի նորումս գիւղ փոքրիկ նովին հնչմամբ անուան 'ի Հայոց և յայլազգեաց. և է յարևելակողմն Թալնոյ իբրև մի ժամ հեռաւորութեամբ 'ի տափարակ ընդարձակ դաշտավայր տեղւոջ, յստորոտի անդ Արագած լերին. ուր բնակին այժմ այլազգի մահմետականք՝ տունք 15. գտանի 'ի սմա աւերակ հին եկեղեցւոյ 'ի տաշածոյ քարանց. այս աւան յիշատակի 'ի պատմութիւս նովին անուամբ և դասի 'ի կարգս ձմերոցաց զօրացն Հայոց:

Զայս աւան աւերեաց յառաջն յամի 450, ուրացեալն Վասակ սիւնի ընդ այլ երևելի աւանաց և քաղաքաց. և յերկրորդումն այրեաց չարագլուխն Ելտկուզ. զորմէ Սամուէլ անեցի 'ի թուին փրկչական 1163. „Զմեծ աւանն Աշնակ այրեաց չարագլուխ Ելտկուզ. զոր Ե, (5000) այրեցածոն ասեն„:

382, Եւ որովհետև յիշատակեցաւ ձմերոց զօրաց Հայոց, կարևոր է գիտել հայրենասէր անձանց և զանուն մշտապատրաստ զօրացն զթիւ՝ 'ի ժամանակի անդ Թագաւորացն հայոց. զայս ծանօթութիւն ոչ ոք 'ի պատմագրաց եթող 'ի գրուածս իւր յաղագս ապագայից. այլ 'ի խուզարկութեան մերում 'ի մատեանս հնոց՝ գտաք զայն աշխատասիրեալ յԱնանիայ շիրակունւոյ 'ի վախճանի ժամանակագրութեան նորին. զոր ձևացուցեալ էր 'ի քառաբաժին բոլորակ աղիւսակի մի-

ում, և զբաժինսն որոշեալ անուամբ դրանց՝ ժբ դրունք հիւսիսային, հարաւային, արևելեան և արևմտեան. և յիւրաքանչիւր բաժինսն դաստ-ւորութք շարակարգեալ զնախարարս կամ զազ-նուականս և զաշխարհսն, և զթիւ յատկացեալ զօրացն նոցին. որոց ամենեցուն գումար թէպէտ ոչ համեմատի ամբողջ թուոյն՝ որ ՚ի լուսանցի անդ-ագիւսակին նշանակի՝ և այն թերևս ՚ի սխալմանց գրչաց մատենին, բայց այնու ամենայնիւ դարձել հարկաւոր դատեցաւ ՚ի մէնջ դնել աստ զօրինա-կն այնր ագիւսակի՝ զոր հազիւ ուրեմն ՚ի հնու-թեանց անտի թղթոցն կարողացաք կենդանացու-ցանել:

383. Տաշղալայ՝ տունք 38, եկեղեցին յանուն սուրբ Աստուածածնի: Աշտարակ՝ տունք 10, եկեղեցին անուամբ սբ. Սարգսի: Աբէլեան՝ տուն 1, եկեղեցին քարաշէն ՚ի հնոց: Պարտաւէլի՝ տունք 9, եկեղեցին չէ օծեալ տակաւին: Պիշլու՝ տունք 11, եկեղեցին յանուն սբ. Աստուածածնի: Տափալու՝ տունք 14, եկեղեցին անուամբ սրբոյն Յովհաննու: Կէօշլու՝ տունք 12, եկեղեցին յանուն սբյն Ստեփաննոսի:

Տաճկաբնակ գիւղօրայքն: Ահանճի՝ տունք 9: Իւրէնը՝ տունք 8: Մէհրիպան՝ տունք 14: Պաղչաճըղ՝ տունք 11: Արալըղ՝ տունք 4: Ճիհանճի՝ տունք 7: Նաշէն՝ տունք 5: Պաղշահաղ՝ տունք 5:

Գաւառ Ապարանայ և գիւղօրայքն.

384. Ապարան. քաղաքագեօղ կամ դաստակերտ անուանեալ ՚ի պատմագիրս. իսկ այժմ ըստ այլազգականին Աբարան վերակոչի. և է հեռի ՚ի Աշտանայ ուղղակի ընդ արևելս իբր չորս ժա-մու, ՚ի լեռնոտի անդ Արագածու ՚ի դաշտավայր տեղւոջ. ունի յարևելակողմն իւր զկրկին ձո-



րակս · մին՝ որ փոքր ինչ հեռի գտանի , սկսանի 'ի վերին ստորոտէ բարձրութեան լերինն , և անցեալ ընդ շէնն հարուստ միջոցաւ աւարտի 'ի հիւսիսային եզր անդ դաշտին Արմաւիրայ · իսկ միւսն՝ կարի փոքր և մերձ յաւերակն պալատան Գրիգոր իշխանի մամիկոնեան ։ Հին աւերակն տեղւոյս ընդարձակ , այլ այժմ բնակչին սակաւաթիւ գեղջատունք 'ի մահմետականաց՝ տունք 13 ։

Հին եկեղեցի սորա կառուցեալն 'ի Գրիգոր իշխանէ մամիկոնեան 'ի մէջ Էրդ դարու՝ կարի ընդարձակ մեծութեամբ առանց սեան, երկար քառակուսի՝ բոլորովին 'ի սրբատաշ քարանց · յերկուսին կողմանս՝ ընդ հիւսիս և ընդ հարաւ են եօթն եօթն մեծամեծ լուսամուտք կարի ցած դրութեամբ՝ այնպէս , զի աղօթաւորք համարձակ տեսանեն ընդ լուսամուտս զհանդիպակացսն · և որպէս ինձ թուի՝ այս առաջին շինուած յԱրարատ նահանգի 'ի մասին պայծառութեան ընդարձակ լուսամուտից · ծածք սորա օրոցաձև · կաթուղիկէն որ 'ի միջավայր տանեացն , քակեալ անկեալ է իսպառ · սալայատակքն տանեաց քայքայեալ , այլ որմունքն և մասամբ ինչ 'ծածք առաստաղին կան յամբողջութեան · ունի զմի և եթ տեղի պատարագելոյ՝ յորոյ յերկուսին կողմանսն են երկու աւանդատունք կրկնայարկք · ունի և զերկուս դրունս յարևմտակողմն և ընդ հարաւ ։

Աւերակն պալատան բնակութեան Նորուն Գրիգորի մամիկոնեան յարևելից հարաւոյ եկեղեցւոյն հեռի իբրև յիսուն քայլ յարևմտեան եզեր անդ փոքրիկ ձորակին · եղեալ է համակ 'ի կոփածոյ քարանց , այլ համակ ևս աւերեալ անկեալ՝ դնին վէմք շինուածոյն առ տեղեաւն ։

Զեկեղեցւոյ աստի և զպալատանից Նորուն Գրիգոր իշխանի գրէ զ , ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՊԱՏՄԻՉՆ՝ ըստ այսմ ։

„Յայսու ժամանակս (՚ի կաթողիկոսութե-Ներսիսի) բարեպաշտ իշխանն Գրիգոր Մամիկո-նեան աստուածային այցելութեամբ հիմնադրեալ զչքնաղագեղ եկեղեցին՝ որ ՚ի մեծ դաստակերտին Արուճ, շինէ զնա տախտով երկնային իմն ձեմա-րան յարդարեալ ՚ի վերայ երկրի. եւ ՚ի հարաւոյ կողմանէ դնէ զարքունիսն իւր յեզր քարաժայռ ձորակին՝ յորում բղխէ ականակիտ *, աղբիւր պղպջակեալ ընդ քարածերպս վիմարդ քարանցն՝ որ զեզերս ունի իբրև զպսակ պատուարի. և այս հաստահեղոյս քարամբք և կրով պարապեալ՝ կար-գէ տուն բնակութեան իւրոյ„։

Այս անայար եկեղեցւոյ գրէ և Պ. Նոյր պատ-միչն ՚ի Ժըր-րդ Գլուխ. „Նա շինեաց նա (Գրիգոր Մամիկո-նեան) տուն աղօթից ՚ի գաւառն Արագածոյ ոտին՝ ՚ի յաւանն Արուճ տաճար փառաց անուան տեառն՝ գեղեցիկ վայելչութեամբ զարդարեալ ՚ի յիշա-տակ անուան իւրոյ„։ Իսկ Սամուէլ Անեցին որոշէ և զթուական շինութեանն ՚ի 671, ամ տեառնն և ՚ի ճժը թուին Հայոց՝ յորում ասէ . „Շինեաց կա-թուղիկէին յԱրուճ, յորում մկրտի նահատակն Քրիստոսի Դաւիթ ևն„։

Եգտաւ յանուն նորուն Գրիգոր իշխանի գրուած ինչ յորմունս. և թէ գայր ՚ի վերայ գրանն արևմտեան չեղաք կարող նկատել, զի կից գրանն արտաքուստ հաւասար որմոյն բրգաձև շի-նուածն ՚ի հատաքակ քարանց յարդի այլազգեաց արգել գտաւ։

Գտան ինչ ինչ արձանագրութիւնք յայլ

*, Այս ականակիտ աղբիւր "Շէկէթ" կոչի ազգայն.
ձմռան ամենայն տեղ անմահական երաշտի, և ամառն հեղեղ
անցելոյ և հալոյն ձեանց ՚ի լերանց անտի, դադարի և
աղբիւրն. որպէս և փեսայ յանուանն օգտակար. և զնայն պաշ-
տեցին բնակիչք։

նութս ներքոյ և արտաքոյ յորմունսն անդ եկե_
ղեցւոյն՝ յորոց առաջինն 'ի ներքս անդր յորմն հա_
րաւային ։

,, յՃԺԸ, ( 869 ) Թուականին Հայոց յիշխա_
նութեան Աշոտոյ , և 'ի տէրութեան Սմբատայ
Հայոց սպարապետի բագրատունւոյ, և 'ի կաթու_
ղիկոսութեան Զաքարիայ եղեւ կուռ ընդ յՍ_
րուած և Է Սոշ և ընդ գաւառն է . . Ճ . արարուած
զկոշ , և զգաւարին , և կամաւ զՍոշա վանականն
և 'ի քրթավաքին ընդ անկին մին Թանխված առե_
ցին . ես Գրիգոր որդի վառամա ծառա Սմբատա
եկի հրամանաւ Սմբատա , և ես հաւաստարեցի ըղ_
ջուրն Է Սոշ և Է յՍ.րուած զինչ խուրեանց......,,։

Այս 'ի ներքս անդր .

,, Յանուն Աստուծոյ 'ի . . Թուական ՆԼԶ .
( 987 ) ես Սմբատայ շահան որդի Աշոտոյ շահան_
շահի ազատեցի վանն իմ հօրն հաւգոյն , և իմ ա_
րեւշատութեան և մեղաց Թողութեան զչալակա_
նոր բաժէ շնորհիւն Աստուծոյ . և եթէ ոք իմ
վՃաւխս դիմադարձ լինի նզովեսցի յԱստուծոյ ,
յԺԸ հայրապետացն ,, ։

Այս 'ի ներքս անդր .

,, 'Ի Թուխս հայոց ՉԼԴ , ( 1385 ) 'ի փարշայու_
Թեան Արղուն խանին , 'ի Թագաւորութե Դե_
մետրէի , պարոնուՏ սպասալար Խարկրծեալին եղ_
բօրն Խվանէի որդւոյն մեծին շահնշահի ես Սակ_
լի խուսան աղայխս որդիս եկի Արուած , իմ հօրս
դանձագին գեղս , և Թողի զհացին շարիատն հաս_
տից . . . . . ,, ։

Աստ 'ի շինամէջին տանց այլազգեաց բացա_
կայ յեկեղեցւոյ և յաւերակէ յիշեալ արքու_
նեացն 'ի հարաւոյ՝ է քարամբք և կրով շինուած
ինչ իբրև ամրոց . զորմէ ասեն բնակիչքն՝ 'ի ժա_
մանակէ անտի իշխանութեն օսմանեանց մնացել ։

'Ի վեր անդր 'ի հիւսիսոյ կողմանէ տեսա_

նի աւերակ շինուածոց․ զորմէ ասեն յառաջին լի-
նել պալատ և տեղի վաճառաց․ քանզի է և յանցս
ճանապարհին՝ որ գնայ յԱշնակ, ՚ի Խնալին և ՚ի
Ստառապա գիւղ։ Պատմին և բազում տեղիք ան-
դաստանաց մշակելոց ՚ի քարանց և ՚ի խճոյ, և
աւեր տեղիք այգեաց և ծառաստանաց՝ որպէս
պատմեն ամենայն ծերունիք, թէ զտեղւոյ
վաճառին, և պանդոկին, և թէ զայգեաց և ըղ-
ծառաստանացն․ սահման անդաստանաց որ կից է
ընդ սահմանս Կոշայ յարևելից և հիւսիսոյ։

385, Կոշ գիւղ բնակեալ ՚ի հայոց՝ տունք 15․
և ՚ի տաճկաց՝ Ա․ և է հեռի ՚ի Նմանէ իբրև ժամ
և կէս․ այլ բարձրանիստ դրութբ քան զայն,
զի է ՚ի լանջի անդ Արագածու ՚ի վայելուչ դի-
րս․ որ ուղղակի ընդ հարաւ ունի զակունս Սեծա-
մօրի գետոյն իբրև միով ժամաւ՝ որոց միջոյն է
ընդարձակ դաշտավայր՝ տեղի սերմանց և ցանից
բնակչաց գեղջս․ ջուր սորա իջանէ ՚ի բարձանց
լերին մեծի, և մերձ գեղջս յարևմուից անկանի
զառ ընդ թափ արծաթափայլ և դարձուցանէ զա-
ղօրիս․ է և ջուր յորդ աղբեր միոյ յարևելեան
եզեր տանցն ՚ի փոսորակ տեղւոջ, յորոյ ական վե-
րայ գոյ շէնք կամարաձև ՚ի հնոց ՚ի կոփածու խար-
տեալ քարանց։

Եկեղեցիք սորա․ մեծն ՚ի սրբատաշ քարանց
՚ի հնոց անտի՝ փլուզեալ անկեալ կայ խոպան ա-
տեղեալն․ փոքրն քան զայն՝ ուր աղօթեն այժմ
հայազգի բնակիչքն․ սեղան նորա կամարաւն հան-
դերձ ՚ի խարտեալ քարանց նովին հին շինութեն․
իսկ երեք որմունքն և փայտեայ ծածք նորա ՚ի
նորոյ շինեցան․ և անուանի յանուն սրբոյն Գէ-
որգեայ․ յաճախեն աստ ուխտաւորք․ և աւան-
դութիւն է՝ թէ ՚ի բերելն զնշխարս սրբոյն յա-
րևմուից ՚ի հայաստան՝ աստ հանգուցեալ են գի-
շեր մի․ և է ՚ի մէջ եկեղեցւոյս զառաջեաւ բե-

մին սեղանոյ տապանաքարն մի յանուն նորին սբյ:
Հարաւմտից գեղջս է գերեզմանատ՝ յորում է մատուռն տեղի պատարագելոյ ՚ի կոփածոյ քարանց յօրինեալ:

Սորա գեղջս յարեւմտից հիւսիսոյ է շինուած ինչ անկատար՝ ՚ի քառակուսի դրութեան ՚ի բարձրադիտակ տեղւոջ ՚ի մեծամեծ կոփածոյ քարանց. և հազիւ բարձրացեալ շինուածոյն երկկանգնաչափ ՚ի հարաւոյ կողմանէ. և այն համարեալ նման ՚ի տեղի հիմանց, կայ այնպէս. և որպէս երեւի՝ է ՚ի նորոց, թերեւս յօսմանեանց:

Հատորև տանց գեղջս ՚ի հարաւոյ է փոքրիկ քարայր, ուր մտեալ և ունկնդիր եղեալ՝ լսեն զքաղցրահնչիւն խոխոջս ջրոց ՚ի յատակէ քարայրին. ուր մտեալ և մեր՝ ստուգեցաք. անդ՝ ուր հնչի ձայնն, աշխատեալ՝ փոքր ինչ քակեալ են բնակիչք գեղջս, թերեւս կարասցեն գտանել զջուրն և հանել արտաքս յօգուտ անդաստանաց իւրեանց: Այս ջրանցք ըստ երկրաւ՝ թերեւս են սկզբնաւորողք Սեւծամօրի գետոյն. ջուրք այսր լերին են մաքուր և առողջարար, այլ ջուր Սեծամօրի գետոյն սեաւ, ծանր և անախորժ յորքում՝ պատճառեալ յաղտաղտուկ հողոյ, և ՚ի հանքային քարանց և խճից ջրանցից նորա՝ որ ՚ի միջոցս այսր գեղջ և ականց գետոյն:

Թերեւս այս գիւղ իցէ Կուաշ անուանեալ աւանն յստորոտի առ Արագած լերինն՝ զորմէ գրեն պատմիչք. Մովսէս Խորենացի, հատոր Գ. գլ, 22. ,, Իսկ Գնէլ եկեալ յաւանն Կուաշ՝ որ յատին Արագածն կոչեցեալ լերինն, առ կուրացեալ հան իւր Տիրան: ...... վասն որոյ հեղձամահ եղեալ ժիւրոց սենեկապետաց (Տիրան) ՚ի հրամանէ արքայի ՚ի գաղտնի. և ՚ի նմին աւանի Կուաշ Թաղեցաւ ,,: Կոչէ և զայս տեղի Կուաշ անուամբ Զաքարիա սարկաւագ Յօհաննավանից, կից այսմ

և զվժան՝ որ է յարևելից այսր գեղջ. ա, գլ 34:

Նազովմ այգեստանք եղեալ են յառաջա-գոյն ատ՝ յորս գոն տակաւին հնձանք փորեալք 'ի վիմի, և յարդարեալք 'ի բնական քարայրսն. և արդէն իսկ տեսանին 'ի տեղիս տեղիս որթք խա-ղողոյ և արմատք թզենւոյ:

386, Ս.-Նշանայն այսր Կուաշ ատանի յանուն սրբոյն Ստեփաննոսի Նախավկայի յարևմտեան ե-զեր փոքրիկ ձորոյն՝ որ մերձ յայս գիւղ հեռի իբրև քառորդ մի ժամու՝ յարևմտից նորա. եկե-ղեցին փոքր, խաչաձև, գմբէթաւոր. այլ սակս 'ի վաղուց անբնակ գոլոյն, քայքայեալ, աւերեալ կայ. գմբէթն անկեալ և որմունքն փոքր մասամբ փլասեալ և պատառեալ և զրկեալ յինչ ինչ քա-րանցն. ուստի խոշորատառ արձան շինութեանն յարևմտեան որմն նորա արտաքուստ՝ 'ի պատճառս անկեալ քարանցն 'ի միջոցաց կարգի գրոցն, չեղև յարմար առնուլ 'ի գիրս այս. այլ 'ի քայքայեալ կարգի անդ գրոցն պարզապէս տեսանէր՝ եկեղե-ցին գոլ յանուն յիշեալ սրբոյ Նախավկային: Նշմարին հետք նկարուց և անդրուանի պատկերաց և սրբոց յորմունս այսր տաճարի 'ի ներքուստ. որպէս 'ի կաթուղիկէ եկեղեցին հին Խաչնայ, և յեկեղեցին Երերվաց դաստակի և յայլս:

Գտանի արձանագրութիւն ինչ նուիրանաց մերձ 'ի դուռն տաճարիս յորմն հարաւոյ՝ ըստ այսմ:

,,ՆԼ. (981) թուականին, 'ի կաթուղիկո-սութեան տեառն Խաչկայ, և 'ի թագաւորութեանն Սմբատայ, և 'ի յասպարապետութեանն Գուրգա-րո, յիշխանութեան Աշոտ՝ որ երէտ Աշոտ յա-վանէ զջաղացն և զէգին, և զհողն կովերձ 'ի սբ. եկեղեցիս վասն շահանշահի արևշատութեան և մեղաց թողութեան. և որ ոք սպասաւորեցան 'ի սուրբ եկեղեցիս, Աստուած յիշէ 'ի միւսանգամ

գաւառ. . . . . . ,,:

Այցարանք կամ խրճիթք վանականացն մերձ յեկեղեցին խապառ աւերեալ և խանգարեալ կանգուանին և 'ի կոփածոյ քարանց յարկք 'ի լանջի անդ՝ կիսով թաղեալ 'ի հող. որպէս և մին՝ յարևմտից տաճարին, կամարայարկ ծածք նորա կիսովչափ իջեալ է, այլ միւս շէնքն կայ ամբողջ առանց դրան և լուսամտից. և թերևս եղեալ է ջրշեղջ (սառնիճ). զի ոչ գոյ ջուր 'ի ձորակի աստ, այլ եթէ 'ի ժամանակս անձրևաց և հալոցաց ձեանց:

387, Աժան գիւղ. այժմ անուանեալ յայլազգեաց Աջան հեռի 'ի Կոշայ ուղղակի յարևելս իբրև ժամ մի. գոյ 'ի սմա սրբատաշ քարամբք եկեղեցի քայքայեալ. բնակին աստ այժմ այլազգի մահմէտականք՝ տունք 7. այս գիւղ է 'ի լանջի անդ մեծի լերին. և թերևս անուանս Աժան ընկալաւ 'ի ձայնէ ջուրց սորին՝ որ իջանէ 'ի վերուստ անտի զառընդթափ զգլխով վիմաց ընդ քարուտ առուակս վժալով կարի սրընթաց:

Սորա գեղջս ընդ հարաւ է բաւականչափ ընդարձակ դաշտավայր արդիւնաբեր հողոյ. 'ի դաշտի աստ ժողովեալ բանակեցան զօրք հայոց ընդ արքայ Սմբատ յամի 895, ըստ Դ. Յովհաննու կաթուղիկոսի՝ ընդ դէմ հագարացի ոստիկանին Ափշնի բանակելոյն զօրօք 'ի Դողս գիւղ՝ որ յարևելից այսր գեղջ հեռաւորութեամբ աւելի քան զմի ժամ 'ի հիւսիսային եզեր դաշտին Աղարշապատու՝ որ տակաւին կայ նովին անուանակոչութեամբ: 'Ի գեղջէ աստի էր երևելի վարժապետ վարդապետն Մելքիսէթ յաւուրս կաթուղիկոսութեան Մովսէսի սիւնեցւոյ:

388, Նշոյ գիւղ. հեռի 'ի Աժանայ իբրև ժամ մի ուղղակի յարևելակողմն, 'ի վերայ յարևմտեան քարափան ձորոյն Աբերդայ. ուր բնակին այժմ այլազգի մահմէտականք՝ տունք 9, և

անուանեն զանուն գեղջս այս․

Զգեղջէ աստի Մովսէս Խորենացի, հատոր Գ, Գլուխ 27 ։ „ Իսկ սպարապետն պարսից եկեալ 'ի Հայս` 'ի ձեռնտու լինելոյ նախարարացն, առնու զամուրն Անի (Կամախ), և գերէ զամենայն գանձս արքունի որ 'ի նմա․ այլ և զոսկերս թագաւորացն․ ոչ գիտեմ թէ վասն նախատինս առնելոյ Արշակայ, և եթէ վասն հմայից ինչ հեթանոսականաց․ զոր ապա մաղթեալ նախարարացն` թափեալ թաղեցին յաւանին յԱղձս` որ յոտին Արագած կաճեցեալ լերինն․ քանզի ոչ գիտացին ընտրել զոսկերս հեթանոսաց և հաւատացելոց, զի ընդ միմեանս էր խառնակեալ գերեզմանացն․ յաղագս այնր ոչ արժանի համարեցան 'ի գիրս սրբոցն թաղել 'ի Վաղարշապատ քաղաքի „ ։ Զայս գիտելով մեր զննեցաք 'ի շինամէջ գեղջս, և ապա 'ի վերջոյ տեսաք զաւերակ մեծի եկեղեցւոյ յարևելեան եզեր գեղջս 'ի վերայ քարափան ձորոյն, 'ի վերայ Ճանապարհին` որ իջանէ 'ի խորաձոր անդր․ և մերձ այնմ 'ի հիւսիսոյ անմիջապէս 'ի վերայ նոյն քարափանէ գետնափոր մատուռն մի կամարայարկ 'ի հիւսածոյ խարտեալ քարանց, և տանիք մատրանն հարթ, հաւասար գետնոյն, և դուռն նորա փոքրիկ յարևմտից 'ի խոնարհ դիրս․ ընդ որ մտեալ մեր` զննեցաք․ երկայնութիւն մատրանն 5, գազ և կէս, լայնութիւնն 2, գազ, երեք չարեք․ իսկ բարձրութիւնն 2, գազ և կէս․ շէնքն արևելեան կողման կիսաբոլորակ և յատակ նորա բարձր քան զմիւս յատակն չորս մատնաչափ, և էր իբրև տեղի բեմբի սեղանոյ, և 'ի միջին տեղւոջ կանգնեալ քարեայ սիւն մի զօրէն սեան սեղանոյ․ յերկոսին կողմանս յորմունսն հիւսիսոյ և հարաւոյ ծոցաւոր կիսաբոլորակ կամարօք տեղիք, և զառաջեաւ ծոցաւոր տեղեացն վանդակք քարեայ` Թզաւ լայնութեամբ, և 3, չարեք բարձրութբ 'ի յատա-

կէն. իսկ երկայնութիւնքն 7, ոտն և կէս՝ հաւասար ոլմոցն. յերկոսին վանդակսն անդ արտաքուստ էին քանդուածք երկաթի գործեալ. 'ի հիւսիսայինն՝ էր բազկատարած այր մի և երկու առիւծք յերկուց կողմանց յարձակեալ 'ի վերայ, և այլ գիծք ինչ փաթոյթք՝ երկկարգ. իսկ 'ի հարաւայինն՝ յերիս բաժանեալ քանդակքն. ա՛, բոլորակն բաժանեալ քառաբաժին, 'ի վերին երկու բաժնի՝ երկու թռչունք կացահարեն զթերթ ծաղկանց, իսկ 'ի ստորին բաժինսն են մի մի վարդաձև քանդուածոյք. 'ի միջին բաժնի են երկու որթք խաղողոյ փաթութեալ ընդ իրեարս. աղուէս մի 'ի ստորև. և թռչուն մի կացեալ 'ի վերայ որթոյն՝ ուտեն զխաղողն. իսկ յերորդ բաժնի արևմտեան՝ որսական այր մի 'ի ձեռին նիզակ հարեալ ընդ ծամելւոյն գազանի իմիք, և շուն որսական առնմին։

Ունէր բնաւին լուսամուտ ինչ այս մատուռն, այլ զկնի այլազգեաց յերկուստեղիս քակեալ մրճովք՝ բացեալ էին զփոքրիկ լուսանցոյցս՝ յարևելից և 'ի տանեացն. և 'ի կարևոր մաքրութեան պահէին նոքին այլազգի բնակիչքն. յորոց 'ի հարցանել մեր զտեղւոյս, պատասխանէին. [illegible] ; [illegible]. և երբեմն լոյս էս վառեն անդ՝ բայց չգիտեն զինչ լինելն. և 'ի հարցանել զմերձակայ հայ բնակիչս, թէպէտ ոչինչ ասեն զտեղւոյս, այլ աւանդութե՛ լուեալ 'ի միմեանց՝ պատմեն. թէ երբեմն 24, ուղտու բեռն մասունք բերեալ ամփոփեալ են աստ 'ի սմին գեղջ։

Աից այսմ մատրան են և այլ շինուածք թաղեալք ընդ հողովք և փլատակօք. և 'ի պեղել ըզհողն 'ի յայտ գան ընտիր տաշածու քարամբք որմունք շինուածոց. յայսոսիկ շինուածս և մերձ այնց՝ անկեալ և փշրեալ՝ ցանեցիր կան խաչվէմք և պատուանդանք նոցին, և սալայատակեալ ճա-

նապարհք՝ որք ցուցանեն լինել տեղի ինչ նշանաւոր. և ըստ նկատման մերում՝ հաւանական թուի լինել այնմ մատրան ամփոփիչ ոսկերց հաւատացեալ և հեթանոս թագաւորացն Հայոց, թէ և բազում որոնեալ՝ չկարացաք գտանել զնշմարանս ինչ գրուածոց յաւերանման անդ:

Ընդարձակ գերեզմանուտ այսր աւանի գտանի յարևմտակողմն բացակայ 'ի շինէս՝ ուրոց խաչվէմք զարդարեն զայն տեղի. կան և յոլովք 'ի նոցունց տակաւին 'ի կանգուն 'ի վերայ պատուանդանաց իւրեանց:

389, Տեղեր. կոչեցեալ 'ի բնակչացս և յարձանագրութիս այլ մենաստանաց յայս անուն. հեռի է 'ի վերայիշեալ Աղցք գեղջէ դէպ 'ի վեր 'ի լեառնն ընդ հիւսիս իբրև ժամ մի՝ 'ի բարձրաւանդակ դրութեան յարևմտեան եզեր փոքրիկ ձորակի՝ որ փոքր ինչ յստորև խառնի 'ի մեծ ձորն Աշբերդայ: Այս անուանակոչութիւն անծանօթ 'ի պատմագիրս Հայոց՝ այլ կարի յաճախեալ 'ի բնակիչս այսց կողմանց, զոր և այլազգի մահմէտականք յորջորջեն ՏԸՂԸՐ առ 'ի չկարող լինել արտաբերել զհայացի անուանս տեղեր. եւ թերևս անուանի գոլով 'ի սկիզբն անդ ժգ-րդ դարու 'ի պատճառս մեծակառոյց եկեղեցւոյն որ 'ի նմա՝ զոր ետ կառուցանել բարեպաշտ տիկինն Մամախաթուն՝ ամուսին Վաչէ իշխանի. որոյ շինութեանն արձանագիր դնի 'ի վերայ արևմտեան դրան գաւթի տաճարին՝ յայսօրինակ:

,, ոձա. (1232):

,,Ի՛ Նորհօքն Աստուծոյ ես Մամախաթունս շինեցի զեկեղեցիքս զմեծ և զփոքր, և զժամատունս յիշատակ ինձ և առն իմոյ Վաչէի. իսկ բնակիչք սուրբ ուխտիս հաստատեցին մինչ'ի տարին պատարագ 'ի տօնի Վարադայ սուրբ խաչին զամենայն եկեղեցիքս մատաղով և սիրով. իսկ որ

զգրեալս խափանէ՝ Աստուծոյ տայ պատասխանի առաջի Յիսուսի Քրիստոսի: Մխիթար գրիչ»:

Միջին տաճարն առանց սեան. և ընդարձակ գաւիթ նորա ՚ի վերայ չորից միաստանի սեանց. հանդերձ մատրամբքն են վայելչաշէնք, բարձրակամարք յամրակուռ սրբատաշ քարանց. երեք փոքրիկ կաթուղիկէք են ՚ի նմա՝ մին ՚ի վերայ տաճարին և երկուքն ՚ի վերայ գաւթին. այս երկու կաթուղիկէք ՚ի ներքոյ իւրեանց ունին զերկուս փոքր այլ մատրունս ՚ի միջոցի անդ առաստաղի և տանեացն, և փոքրիկ դրունք նոցա ՚ի վերուստ անտի տանեացն:

Այս մեծագործ եկեղեցի՝ որ յամենահովասուն վայրի, ՚ի վայելուչ բարձրադիտակ տեղւոջ, դիտող յընդարձակ դաշտ Արարատայ՝ կայ այնպէս լքեալ և ամայի. և բնակիչք անդէն այժմ այլազգի մահմէտականաց՝ տունք 6: Իսկ որպէս երևի չէ՛ն եղեալ աստ յառաջագոյն ամուսնաւոր գերդաստանք, զի կարի սակաւք են անդաստանք սերմանց. այլ միայն եղեալ է մենաստան կուսակրօնից. և թէ եղեալ իցէ աստ նախ քան զշինութիւնն այսր տաճարի բնակութի կուսակրօնից և եկեղեցի նոցա, հաւանական երևի:

Այցարանք կամ տունք նոցին կուսակրօնիցն չունին ինչ հետս շինութեց, քանզի միշտ փոփոխ բնակութեամբ այլազգի մահմէտականաց՝ քակել և անհետացեալ են. նախ քան զամս իբրև յիսուն այլազգի բնակիչք շուրջ զգերդաստանօք իւրեց և զեկեղեցեաւն ածեալ կառուցել են պարիսպ ՚ի հաստարակ քարանց և ՚ի հողոյ ՚ի պատճառս ասպատակութեց, այլ այն պարիսպ ևս քայքայեալ կայ մասամբ ինչ ՚ի կանգուն:

Եկեղեցին ՚ի տեղիս տեղիս ունի աւերմունս քարանց, և պատառուածս ՚ի գետնաշարժից, այլ մեծ մասամբ կայ յամբողջութեան. և անո-

ւանակոչութիւն իւր յայլոց մեծ մասամբ եղծեալ արձանագրութեանց՝ յիշատակի |ա̄ծածին|:

390, Յատորև քան զայս տեղի՛ն ՚ի լեզուակի անդ երկուց ձորոց՝ որ անկանի ընդ մէջ այսր Տեղերոյ և Նիւրականայ, աւանդեն լինել ասոր Խոշվանից՝ զոր վարդան աշխարհագիր թուէ ընդ միւս երևելի մենաստանս. այլ եկեղեցի նորա և կացարանք կրօնաւորացն խախտ աւերեալ հաւասարեալ են երկրի:

391, Միւս տաճկաբնակ գիւղօրայքն: Նորխաչ՝ տունք 9: Սողոայ՝ տունք 6: Խոան՝ տունք 12: Կարաճալար՝ տունք 8: Կէֆեան՝ տունք 6:

## Գաւառ Ամբերդայ կամ Նիւրականայ:

392, Ամբերդ ամրոց. հեռի ՚ի Նիւրականայ ը̄ հիւսիս ՚ի վեր անդր ՚ի լեառն մեծ իբրև երկուց ժամուց՝ յորմէ ՚ի վեր անդր չիք այլ տեղիք ինչ գիւղից կամ աւանաց, է կառուցեալ ՚ի վերայ հատածի միջոցաց խառնուրդի երկուց ձորոց. ՚ի հարաւոյ՝ նոյն խառնուրդ ձորոցն և ջուրց նոցին, յարևելից և յարևմտից՝ նոյն խորաձորք. երեքեանքն ևս զառընթացք և անմատչելիք. Այս հատած լեզուակ ՚ի հիւսիսոյ կողմանէ որոշեալ է հաստատուն բարձր պարսպաւ՝ որձաքար մեծամեծ տաշածու վիմօք. և է միջոցն բաւական ընդարձակ տարածութիւն եռանկիւնաձև, ուրանօր տեսանին հետք կիսաւեր շինութեանց՝ բնակարանաց, դիտանոցաց, և ջրշղջի ([illegible]). և ՚ի խախտուածի անդ հատածին հարաւակողման է տաճար գեղեցիկ միջակ մեծութեամբ՝ կառուցեալ առանց սևան յորձաքար տաշածու վիմաց. ունի զմի և եթ սեղան և զերկուս փոքրիկ աւանդատունս և զկաթուղիկէ ՚ի միջավայր տանեացն և զմի դուռն ՚ի հարաւոյ. Թէպէտ յամբողջութեան

կայ տաճարն, այլ ինչ ինչ քարինք 'ի ծայրէ որմոցըն, 'ի տանեացն և 'ի կաթուղիկէին անկեալ կան շուրջ զեկեղեցեաւն. ունէր արձանագիր՝ թերևս շինութեանն, 'ի վերայ դրան. այլ 'ի կարկտաբեր հողմոց և յանձրևաց հարթեալ գրոցն՝ չեղև հնար ընթեռնուլ. քանզի հազիւ նշմարէին տառերըս ինչ ինչ տառից. գտաւ 'ի մէջ եկեղեցւոյն յորմն նորա այս արձանագիր նուիրանաց առանց թուականի՝ թէև յայտ իսկ է ժամանակն ցիշատակեալ 'ի նմին իշխանաւորաց:

,, 'Ի ժամանակի տէրութեան Իվանէի և Շահնշահի, վերակացութեան գաւառիս Վաչէի մեք ամեն . . . տուաք . . . առուին կէան Տեղերու. և որք հաստատեցին զխաչին շաբաթն և կիրակէ պատարագ մեր ննջեցելոց ,,

Անուանակոչութիւն տեղւոյս նշանակի 'ի պատմագիրս Անբերդ և Ամբերդ. այլ առաջինն ուղղագոյն երևի. քանզի բացատական մասնիկն՝ ան, 'ի բաց բառնայ զիրական նշանակութիւն բերդի՝ որ կայանայ շրջապատ պարսպօք և աշտարակօք. այլ զայն չունի տեղիդ այդ բաց 'ի հիւսիսային միակ պարսպէն՝ որ ձգի ուղղագիծ բաշէ 'ի բաշ երկուց ձորոցն. վասն որոյ անուանիլ պարտի Անբերդ, իսկ Ամբերդն նշանակէ կից ընդ ամպում. որպէս ամուսին՝ այն է, համուս. ուսակից (օրտաղ-տաղ):

393, Արփաչայ. գիւղ այժմ բնակեալ 'ի հայոց. է 'ի վերայ արևելեան եզեր մեծի ձորոյն Անբերդայ 'ի տափարակ դիւր տեղւոջ որ ունկանի հանդէպ մեծի եկեղեցւոյն Տեղերայ ունելով զայն յարևմտից յայնկոյս ձորոյն. զորմէ գ̃, Յովհաննէս կաթողիկոս պատմէ. ,, Ոչ դարձեալ՝ չու յուղի անկեալ չոգաք մինչև 'ի ձեռակերտ ամրոցին իմ Արփական՝ զոր առացեալն էր իմ գանձի գնոց, ուր և շինեալ յարդարեալ իսկ էի եկեղեցի հաստա-

հեղոյս կոփածոյ քարամբք, պերճապաճոյճ պճնողութեամբ և նկարակերտ յօրինուածով, և վանս կուսակրօն միանձնացելոց զնա հաստատեալ։....., և մարտամբոխ բազմութե զօրաց հորդանտուեալ, զի գոնեա՛ 'ի գաղտնիս իմն ծածկաբար 'ի վերայ ամրոցկանն Բիւրականու հասեալ (ըստ Լուկայ Տաէջանի)` 'ի կապանս կալեալ տարցին զնա, և որ ընդ իմն էին կղերիկոսք...... ։ իսկ բնակիչք բիւրականու ծանուցեալք զանբժշկելի միոս հեթանոսացն.... փակեցին զդրունս առաջի իւրեանց..... էին ումանք և հեթանոսք 'ի բնակչաց տեղւոյն հողագործ մշակութեան պարապեալ, և հարկս մեզ հարկանէին,,։

'Ի պատմութենէ աստի երևի թէ` եղեալ է աստ յառաջագոյն և ամրոց փոքրիկ` որոյ չև՛ք նշմարանք այժմ. և գուցէ հնութիւն ժամանակին ծախեալ զայն` անհետացուցեալ է ։ Գտանի տակաւին որմունք եկեղեցւոյն կառուցելոյ 'ի յիշեալ կաթուղիկոսէ յամբողջութեան, այլ կամարայարկ ծածկոյթ նորա իսպառ խոնարհեալ է. և լեալ է առանց սեան և բաւականին ընդարձակ. ունի զմի սեղան տեղի պատարագելոյ և զերկուս աւանդատունս յաջմէ և յահեկէ սեղանոյն. շուրջ զեկեղեցեաւս են բնակութիւնք ժողովրդոցն` տունք 33. և ժողովուրդքն կատարէին զաղօթս իւրեանց 'ի սմին եկեղեցւոջ, իսկ պատարագն և այլ սրբազան խորհուրդք մատչէին 'ի միում յաւանդատանցն, մինչև յանցեալ թիւ 1841, փայտայարկ արարեալ զեկեղեցին` յարդարեցին բաւականաչափ հարկաւոր պիտոյիւքն և կոչի եկեղեցին անուամբ սբ Յովհաննէս։

Այս գիւղ ունի զբաւական արտորայս սերմանց` որոց ջուրն իջանէ 'ի գագաթանէ անտի լերինն 'ի մեծ լճակէն (344) հեռաւորութե իբրև հնգից ժամուց. ունի և զայգիս խաղողոյ և ծա-

ռաստանս. ունի և կարմրախայտ ձկունս 'ի ձորամիջի անդ 'ի ջուրն Անբերդայ:

'Ի վեր անդր դէպ 'ի լեառն 'ի գեղջէ տատի և յարևելակողմն Անբերդայ և ձորոյն է ցածուն անտառ կաղնի փայտից՝ ուստի ամ յամէ հատեալ բնակչաց այսոցիկ կողմանց վճարեն այնու արքունի հարկն փայտից, և իջուցեալ ևս 'ի դաշտ՝ 'ի Վաղարշապատ և յայլս վաճառեն 'ի պէտս վառելեաց. առնեն անտի և ածուխ (քէօմիւր):

Առողջարար է օդ տեղւոյս և ջուրն. վասն որոյ յանցել թիւ 1835, շինեցան աստէն յարևելեան եզեր գեղջս ամառնային կացարանք կառավարչի կողմանցս և պարագայից նորին. իսկ ձմեռնային կացարանք են 'ի Զէյվա գեղջ հայոց:

394, Արտ—աւէն. կոչի մատուռն փոքրիկ որրածայր կաթուղիկէիւ և է յարևելակողմն Բիւրականայ 'ի մէջ փոքրիկ ձորոյն՝ յարևմտեան եզեր փոքր ջրոյ ձորակին. այս մատուռն կայր 'ի կանգուն ցամն 1840, այլ 'ի գարնան այնր ամի անկեալ խոնարհեցաւ 'ի հեղեղաց ջուրց ձորոյն. վասն անուանակոչութեան և շինութեան այսր մատրան աւանդեն բնակիչք՝ թէ 'ի հնումն սրբակեաց այր ոմն 'ի ճգնող արանց վախճանէր աստէն՝ մնաց անթաղ. և ապա հրեշտակ տեառն 'ի տեսլեան երևեալ քահանայի ուրումն և բերեալ հանդէպ այնմ տեղւոյ 'ի բարձրաւանդակ ինչ վայր՝ որ է 'ի մատրանէն յարևմտեան հիւսիս՝ յարևմտեան եզեր ձորակին, ցուցանէ զմարմինն վախճանեալ ճգնաւորի. ասելով, Որդ աւասիկ երթ և ամփոփեա զայն: Զարթուցեալ նորա 'ի քնոյ՝ գնայ անդր և որոնեալ գտանէ զմարմինն յարևելեան եզեր ջրոյ ձորակին և անդ ամփոփէ 'ի շիրմի. յորոյ վերայ կառուցանեն ապա խաչվէմ մեծ՝ որ կայ և ցարդ, և զմատուռն սրածայր կաթուղիկէիւ հանդէպ այնմ յարևմտեան եզեր այնր ջրոյ:

'Ի գեղջէ աստի Նիւթիկանոյ ուղղակի դէպ յարեւելս յառաջացեալ իբրեւ կէս ժամ իջանի 'ի խոնարհ 'ի գոգաւոր դաշտավայր ինչ տեղի՝ պատեալ յերից կողմանց դիւրագնաց առապարօք 'ի հիւսիսոյ, յարեւելից և յարեւմտից. ուրանօր են դիւղօրայք երեք՝ Լաշբէշան, Խնէշէ և Փոքրի:

395. Լաշբէշան. (թերեւս լազարու վան, կամ լաւ եւս ասել՝ ղազարու վանք. հին եկեղեցի գեղջս 'ի հարաւակողմն. կան որմունքն և եթ. զի կամարայարկ նորին խոնարհեալ է բոլորովին, և եղեալ է առանց սեան. ունի զմի սեղանատեղի. զերկուս աւանդատունս և զմի դուռն. աւանդեն բնակիչք կողմանցս զայս եկեղեցի յանուն Ղազարայ փարպեցւոյ պատմագրի, և զգերեզման նորին ցուցանեն 'ի հարաւային աւանդատան եկեղեցւոյս, որպէս և աւերակն տեղւոյն ցուցանէ 'ի խոնարհ անդ զփոքրիկ ցածուն կամարայարկ ինչ: Որմունք աւերակ եկեղեցւոյս երեւէր կրկնաշէն. քանզի յաւերակէ անտի առաջին շինութեանցն առեալ զքարինս այլեւայլ դրութեամբ հիւսեալ էին յորմունսն. եւս և յառաջին շինութեանց անտի զհատուածեալ վէմսն արձանագրութեց խառն ընդ այլ քարանց եդեալ էին 'ի շարս անդ՝ որք թերի գոլով 'ի շարակարգութեանցն՝ յայտնէին և ոչինչ. բնակին աստ այժմ այլազգի մահմէտականք՝ տունք 21:

Յարեւմտից և 'ի հարաւոյ տանց գեղջս և յստորոտ եկեղեցւոյս բղխին ականակիտ աղբիւրք առողջարար ջուրց, և սկզբնաւորեն զփոքրիկ գետակն | Ղազարու | կոչեցեալ՝ կամ այն է. Ջուր փարպւոյ՝ որ յառաջացեալ իբրեւ ժամ մի՝ անկանի 'ի գետն Քասաղ յստորեւ քան զՕշական. գոն 'ի սմա ախորժահամ կարմրախայտ ձկունք:

'Ի հարաւային ստորոտ տեղւոյ եկեղեցւոյն բղխէր ջուրն յեօթն աղբերականց՝ անկանի

յառուակ լինի և ընթացեալ ընդ լանջս առապա-րին, և անցեալ ընդ Փարպի յարևելից՝ ոռոգա-նէ զարտորայսն. և անուանի 'ի բնակչացն՝ եօթնաչոյ ջուր, այսինքն եօթն ականց ջուր:

396, Փարպի. գիւղ հռչակաւոր 'ի պատմա-գիրս յանուանէ Ղազարայ պատմագրի, և յայ-սմիկ կողմանս 'ի յիշատակութենէ մենաստանին որ 'ի նմա յանուն սրբոյն Գրիգորի: Այս գիւղ հեռի է 'ի Երևանայ աւելի քան զքառորդ միոյ ժամու՝ յարևելեան եզեր փոքրիկ գետակին. բը-նակիչք սորին հայազգիք՝ տունք 28. գոն և քանի մի գերդաստանք 'ի մահմէտականաց. նիստ գեղջս տափարակաձև. եկեղեցին կարի փոքր անմիջաբար յեզեր անդ գետակին 'ի բարձր դրութեան՝ կա-ռուցեալ 'ի սրբատաշ քարանց 'ի վաղ ժամանա-կաց. և է խորթին և մթին. եւ զկնի՝ իբրև յԺԳրդ դարու 'ի պատճառս երկիւղի ասպատակութեանց 'ի չորից կողմանց կարի ստուար կրաշաղախ մեծա-մեծ վիմօք հիւսեալ են զայն. որոյ կից է որմունս եկեղեցւոյն, և այնպէս բարձրացուցեալ անդր քան զտանիքն՝ արարեալ են իբրև աշտարակ հզօր ընդդէմ հինից և ասպատակողաց. և արդէն կան տեղիքն նետաձգութեանց կամ հրացանից 'ի բար-ձանց անտի՝ կոչեցեալ ռամկօրէն յայլազգի լե-զուս (թօփղու-ղըլլուղնի). ունի փոքրիկ անցս դրան միոյ յարևմտից և դուռն 'ի վերայ նորա միաս-տանի ամրակուռ սեաւ վէմ. 'ի միջոյ այսր դրան ասեն, էր գետնափոր ճանապարհ 'ի խոնարհ ցգե-տակն վասն առնլոյ անտի զջուր 'ի ժամանակի պա-շարման:

397, Մենաստան. յանուն սրբոյն Գրիգորի լուսաւորչի է 'ի մէջ այգեստանացն յարևելից գեղջս, կացարանք և պարիսպ նորա շուրջանակի խախտեալ քայքայեալ աւեր կան. իսկ տաճարն խան-գարեալ յառաջին շինութեանց անտի՝ կան որ-

մունք նորա և է 'ի փոքր գրութեան . զոր ծած-
կեալ փայտիւք ընակչացն գեղջս՝ տան անդէն կա-
տարել զորբազան խորհուրդ պատարագին , իսկ
զհասարակ ժամերգութիւնն 'ի միւսումն՝ որ առ-
դետակաւն :

Դուռանի արձանագրութիւն այսպիսի 'ի վե-
րայ դրան եկեղեցւոյս արտաքուստ :

,, Յանուն հաւր ամենակալի , կամաւ որդւո
Միածնի և միջնորդութեամբ սուրբ Հոգւոյն ,
ես Աղբուղայ որդի Իվանէի որդւոյն մեծի շահան-
շահի . ես Աղբուղայ թողի զփարպոյ այգեաց շա-
րիատն , և արարի յիշատակ ազգէ յազգ : Արդ՝ ա-
մենայն ով 'ի մերոց կամ յօտարաց խափանել կա-
րէ . և որ խափանէ , յժ՟ը հայրապետաց նզոված .
և յամէն ազգէ նալաթ . չժ՟գ ,, (1264) :

'Ի հնումն կրօնաւորէին աստ բազմութիւնք
կուսակրօն միանձնացելոց , յորոց մի էր և Յով-
սէփ՝ որ 'ի վաղնջան ութներորդ դարու կացու-
ցաւ յաթոռ հայրապետութեան :

Յարևելից այսր մենաստանի 'ի բարձրաւան-
դակի անդ առապարին 'ի վայելուչ դիրս՝ է աւե-
րակ տանց և փոքրիկ խաչաձև մատրան՝ զոր ընա-
կիչքն անուանեն | սուրբ Թարգմանիչք | . և 'ի
հարցանել զզխարդն , ասեն . աստ Թարգմանեցին
սուրբ վարդապետքն մեր զհոգևոր օրէնքն :

Այլս գիւղօրայք Աներդայ տանձկարնա-
կք . Ազարան՝ տունք 29 : Բամբքին՝ տունք 11 : Խա-
չեայ՝ տունք 26 : Փէրոխ՝ տունք 9 : Ջղրադ՝ տունք
7 : Ղ.եօքանլու՝ տունք 11 : Մօլլաղասլու՝ տունք 4 :

Գիւղօրայք Արբլայ և Տալին Ալաբրլապատու :

398 , Օշական գիւղ հեռի յԷջմիածնէ ընդ
հիւսիս իբրև երկու ժամ՝ 'ի վերայ հիւսիսային
եզեր 'ի կրկնակի անդնդոյն Քասաղ գետոյ , սեպ-
հական կալուած աթոռոյ Էջմիածնի և այժմ հան-
դերձ բնակչօք (139) . զայս գիւղ պարգևեաց Խոս

րով արքայ Հայոց Վահանայ Ամատունւոյ՝ ՚ի պատճառս քաջութեան նորա ՚ի խորտակելն զպապատակիչ զօրսն հիւսիսական, և ՚ի հարկանելն ՚ի մահ զզօրագլուխ նոցին զհոնայն Վիթխարի յամի 351, ըստ Խորենացւոյն. հատոր Գ, գլուխ 9։

Յայս գիւղ ամփոփեցաւ մարմին որդիւնաշատ սուրբ վարդապետին Մեսրովպայ, և է գերեզմանն նր̅ ՚ի ներքոյ բեմին սեղանոյ, և մօտ նր̅ ը̅ ճակատ բեմին՝ ուր դնի գրակալն ընթերցուածոց. զայս եկեղեցի ետ կառուցանել նա ինքն Վահան Ամատունի հազարապետ ՚ի պատիւ մաքուր մարմնոյ սրբոյ վարդապետին. զոր և զկնի նորոգեաց Փիլիպպոս կաթուղիկոս Հաղբակեցի յամի 1639. այլ կամարայարկ նորա խոնարհեալ՝ փայտիւք եառուն ծածկել ՚ի ժամանակս մեր. և են ամբողջ որմունք նորա կարևոր բարձրութբ̅, և միջոց նորա բաւական ընդարձակ՝ լեալ յառաջագոյն առանց սեան. ունի զմի և եթ սեղան սրբազան խորհրդոյն, և զերկուս աւանդատունս. յորմն հիւսիսոյ արտաքուստ զբրգունս՝ որք կիսովչափ խոնարհեալ են։

Չգտաւ արձանագիր շինութեանն, և գուցէ ընդ աւերման հարաւային որմոյն անհետացեալ է. քանզի այս որմոյն արտաքին երես գրեա՛ թէ ՚ի հիմանց նորոգեալ են, և թերևս ՚ի նորոգութեանց՝ որ յամի 1639. այլ գտանին գրուածք ինչ առ այլ նպատակ՝ որք են։

Յորմն հարաւային աւանդատան ՚ի ներքուստ.

„ Ես Իշխան Յօհան ամատունի յազգէն Հայոց եդի սահման գաւառիս իմոյ Յօշականայ հասանի մինչ ՚ի բլուրն 1, Էջմիածնի. և անտի վայր

1, ՚Ի գիրս Օշականայ և Էջմիածնի՝ ՚ի բաց ա-

մինչ 'ի Նաստի (գետ)։ Հիւսիսոյ կուսէ գետն փարպաւ մինչ 'ի քաղաքն Համանկ պողոտայն, և ան- տի վեր կորբաւ գարերն (ապարաժ տաղադարացն)։ Յա- րևելից կուսէ ճանապարհն եղէ վարդայ տափ մինչ 'ի էջմիածին. այլ որք այս ցանկս պատառէ, սևե- րես լինի առաջի Աստուծոյ, ամէն ։։

'Ի հիւսիս ճակատ հաւատակողման ներքին դրան.

։։ 'Ի Թուին ՉԽԴ, (1295) 'ի Թագաւորու- թեանն աստուածասէր արքայ Կեղաթու ղա- նին, և 'ի հայրապետութեանն տէր Համազասպայ, ես Նէսութեայս որդի պարոն Ամիրբէկին, որդ- ւոյ պարոն Սահմադինին Թողի զՀօշակման գզեալոյ զհարկն, զգեղխս և զվանորայից վասն արեւշատու- թեան հօր իմոյ, և իմ քէսութեան, և 'ի փրկու- թեան հոգւոյ ամիրի իմոյ. Որք՝ յետ ժամանակաց 'ի Թագաւորաց կամ՝ յիշխանաց զոմն այս մերիս փոխել ջանայ, յԺԸ հայրապետացն նզովեալ է, և վարձ զուգայի և զկայենին առցէ, և 'ի լոյս փրկ- չական մի՛ հայեսցի, և մեր մեղացն պարտական է. կատարիչք գրոյս օրհնին յԱստուծոյ. ամէն ։։

'Ի Գիւղս Վերաջերբեալ եղծաց արձանագրութ.

։։ 'Ի Թուին ՉԼԷ, (1288) Ես Ներսէս բարե- բարին Աստուծոյ յամի Թագաւորութեան աս- տուածասէր արքայ Արղուն ղանին. ես պարոն Սահմանինս որդի պարոն աւետեացն Թողի զՀօ- շակման զհացի և զգարմանի զշարիատն, զմերի և զմեղբէի զամէն հանդի վասն փրկութեան հոգւոյ

ուէրէլ շխարաց տառադարն առ Ս [illegible] մնացեալ գնեաց [illegible] առ 'ի [illegible] 'ի Գ- [illegible] 'ի ծանօթութեան 84, յառաջադոյ.

իւրոց և ծնողաց իւրոց, և յարևշատութեան որդւոց իւրոց ամիրբէկին, հաղաբբէկին և այլոցն։ Արդ՝ յետ ժամանակաց, և թէ ՚ի թագաւորաց կամ՝ յիշխանաց զընծայս մեր խափանել ջանայ, յԱծ հայրապետացն նզովեալ է, վարձ զուդայի զաս-տուածավաճառին և զկայենին առցէ, և մեր մե-ղացն պարտական է ։։

՚Ի Հեռափառայքին Հինման կամարին ունդամոյ յարևմտեան ճախարա.

՚Ի թուին եօթն հարիւր երեսուն և հինգին (1286) ազգամոլութեամբն Աստուծոյ և հրամանաւ պարոն սահմանբնին ես Մանափոններ Ճենաւորս, և Մ արհամ՝ քեթոքաբո ... Թողցուք զՀնօշակաւ քահանայից զինչ որ հարկ կայր այգւոյ, բամբակի ... և ժամահարին՝ յիշատակ հոգւոյ մերոց և ա-մուսնոյ և որբոյ խոստացան ՚ի տարւոջն Գ ժամ-յաւուր ծննդեանն, Ը, աւետմանն, Ժ վերջա-նոյ, ով որ ժամանակաց խափանել ջանայ, յԱծ հայրապետացն նզովեալ է, և մեր մեղացն պարտա-կան է ։։

՚Ի Հինման կամարի Հեռափառայքին որոյ վերջին թուղթ.

։։ ՚Ի թուականին ՉԼԷ, (1288) յառաջնոր-դութեան տէր Համազասպայ, և ՚ի պարոնութեան սահմանցբնին, և իւր որդւոցն ամիրբէկին, հա-ղարբէկին, ես գէշ մարգասէր ամիրայ, և համբկս Ճենաւոր՝ Թողցուք զատուրս Սարաւպէանն այգեացն, զՀնօշակաւ, զմիբնա, (Բերբեր Ագնոց) զՃենա-նաւորին զյարկն՝ զինչ որ կայր, վասն փրկութե հոգւոյ մերոյ և յարևշատութեան պարոնացն։ Արդ՝ յետ ժամանակաց զընծայս մեր խափանել ջանայ, յԱծ հայրապետացն նզովեալ է, և վարձ զյուդայի առցէ, և հող օրհնութեան զնա մի ծածկեսցէ, կատարիչք գրոցս օրհնին յԱստուծոյ.

ամէն ,,,։

Մերձ յեկեղեցին 'ի հարաւոյ իբրև քառասուն կանգուն հեռի է բուրգ մի հնագոյն շինուածովք 'ի կոփածոյ քարանց, և կից նմին յարևելից փոքրիկ կամարայարկ տեղի ցածագոյն' յորոց տանեաց վերայ կանգնեալ խաչվէմն անկեալ' կայ միայն սիւնաձև պատուանդանն. յայսմ տեղւոջ աւանդեն բնակիչքն լինել գերեզմանի մեծի իշխանին Վահանայ ամատունւոյ։

Ի մէջ գեղջն' որ ունի շուրջ զբնակութիւն պարիսպ 'ի հաստատուն քարանց և 'ի հողոյ հոգացեալ 'ի Միհրան կաթողիկոսէ երևանցւոյ, յարևմտից եկեղեցւոյն է սիւն մի քարեայ միաստանի կանգնեալ 'ի վերայ բազմաստիճան քառակուսի պատուանդանի, և բարձրութիւն նորին իբրև գիրկս երկուս. եղեալ է յառաջագոյն 'ի գլուխ այսր սեան յիւրմէ և խաչաձև կերտուած, այլ մաշեալ և փշրեալ 'ի հողմոյն անձրևոյ' անհետացեալ է. և թէ առ ի՞նչ վախճան այս սիւն' չէ՛ք ինչ ծանօթութիւն. թէ և զինչ ինչ նշանակէ աւանդեն բնակիչքն, բայց և ոչ մին անսանի յարմարութեամբ։

Յարևելից հիւսիսոյ գեղջս է բարձրաւանդակ քարուտ բլրակ, յորում են բազում բնական և արհեստական քարայրք, և գագաթն նորին է իբրև գիտանոց' յոր անուն յորջորջեն և բնակիչքն զայն բլրակ' գիտի կոնդ. յստորոտս այսր բլրակի' մանաւանդ յարևմտեանն և 'ի հարաւայինն են ընդարձակ շիրիմք հայազգեաց, յորս գտ՟ն և գամբարանք խաչվիմօք զարդարեալք. յարևմտեան ստորոտի է փոքրիկ մատուռն անուանեալ յանուն սրբոյն Գրիգորի' տեղի պատարագելոյ յաւուրս յիշատակութեան ննջեցելոց. և մերձ յայս մատուռն 'ի հիւսիսոյ կայ բարձր աւելի քան զմի գիրկ խաչվէմ փորածոյ' ամրացեալ յերից կող-

մանց 'ի կրամած տաշեալ քարանց․ յարևմտից է փորուած խաչքն․ 'ի պատուանդանի նորին գրեալ այս ինչ ։

„ Թուին ՉԺԴ․ (1265) ես Գուտագանս գծա-ցի կանկեցի սուրբ նշանս բարեխաւս զաւեր իմոյ Նաւասուղին՝ որ փոխեցաւ 'ի Քրիստոս „ ։

Հարևելից գեղջս յեզր ձորոյն Բատաղ-գետոյ 'ի սարահարթի անդ է տափարակ ինչ տեղի ընդարձակ՝ յորում են կարի լայնագիր հիմունք որմոց 'ի մեծամեծ վիմաց․ և զամենէ ասեն լինել տեղի պալատան նորին Աշհանայ ամառնանոյ ։

Փոքր ինչ հեռի աստի գէպ յարևելս իբրև քարընկեց մի 'ի քարի անդ ձորոյն է ծոցաւոր ինչ տեղի՝ նոր տաշածոյ քարամբք կազմեալ՝ արարեալ են մատուռն մի փոքրիկ՝ յորում գոյ և տեղի սեղանոյ․ և անուանեն զայն՝ սուրբ Ծածկին ։

'Ի սկիզբն անդ այգեստանեայց յարևմտից գեղջս է և այլ մատուռն գերեզմանոցաց՝ լքեալ այժմ․ է և Գրդ մատուռն 'ի հարաւոյ գեղջս յայնկոյս գետոյն 'ի կուրծս անդ հանդիպակաց քարափանց ձորոյն, և դժուարելանելի ընդ բնա-կան սանդղաձև քարուանս, ուր ասեն երբեմն ճգ-նեալ ոմն 'ի Թարգմանչաց վարդապետացն մերոց, և ամփոփեալ անդէն 'ի վիմի․ 'ի հարաւոյ և յա-րևմտից է նոյն քարն ուղղաբերձ․ իսկ 'ի հիւսի-սոյ և յարևելից որմունքն են 'ի տաշածոյ քա-րանց․ ունի տեղի սեղանոյ և գփոքրիկ գանձակ․ արձանագիր վիմին՝ որ 'ի վերոյ դրանն․ եղծեալ գոլով, և մանաւանդ տեղին վտանգաւոր կալոյ ը երկար՝ մնաց անվերծանելի․ 'ի վեր անդր քան զայդ արձան գոյր և համառաւտութի ինչ գրուա-ծոյ, այլ այն ևս դժուարընթերցի, բայց ունէր թուական հայոց ռհգ․ անուանեն զայս մատուռն սրբոյն Սարգսի ։

399, 'ի ձորամիջի աստ 'ի վերոյ գետոյն ձը-

գեալ է խաչքար բազմածախ 'ի տաշածոյ քարանց, և է հնգակամար՝ կառուցեալ 'ի Նահապետ կաթուղիկոսէ աթոռոյ Էջմիածնի՝ որոյ արձանագիր մի և նոյն վերտառութեամբ և թուականաւ դնի յերկոսին կողմանս կամրջոյն՝ ըստ այսմ։

„Յիշատակ է կամուրջս տեառն Նահապետ կաթուղիկոսին սուրբ Էջմիածնի. ՌՃԾԵ թվին„ (1706)։

Այս կամուրջ արար նորոգութիւնս ինչ և Սիմէոն կաթուղիկոս Երևանցի՝ որոյ արձանագիր նորոգութեանն դնի 'ի հարաւոյ՝ յարևելից արձանագրի Նահապետ կաթուղիկոսի, ըստ այսմ։

„Նորոգեցաւ կամուրջս 'ի ձեռն տեառն Սիմէոնի սրբազան կաթուղիկոսին սրբոյ Էջմիածնի Երևանցւոյ, 'ի ՌՄԻԷ թուին մերոյ„ (1778)։

400, 'Ի հիւսիսակողմն գեղջս Օշականայ 'ի մէջ անդաստանացն՝ յարևելեան կողմն գետակին փարպւոյ է փոքրիկ տաճար մի, շուրջ զորով են աւերակք տանց, և կոչեն զանուն նորա Մանկանոց I, այլ անուն տաճարին ըստ արձանագրոցն է Սիոն. չունէր արձանագիր շինութեանն, բայց գոն երկու յանուն նուիրատուաց ոմանց՝ որք են։

„'Ի Թ. հա. ոխ եւ Թ, ես Ապաս որդի Մրտաշրի մինչդեռ հնգետասան ամեայ, եւ սրախողխող... սրտիւ 'ի սմա վճաւցւոց. յորժամ հասաւ հարուածն աւշականտ եւ տու զսեւս հողն 'ի տուրք Սիոն յեկեղեցիս, և վանական ամենից 'ի ձեռն հաւր Ս արդանայ, և սպասաւորք սորա խոստացան յամենայն ամի յանուն իմ պատարագել ըզ-

I, Այոր անուանակոչութեան վասն աւանդեն բնակիչքն թէ՝ եղեալ երբեմն աստ յ( )չակն եղբարք երեք և բաժանեալք 'ի միմեանց, մին 'ի նոցանէ՝ որոյ անունն |Մանուկ| էջեալ աստ արկանէ բնակութիւն, և յօրէ անտի ցայսօր անուանի տեղիս յանուն նորա՝ |Մանկանոց|։

Քրիստոս յեկեղեցիս, զտօն վարդավառին, եթէ ոք խափանէ դատի 'ի Քրիստոսէ յաւուր գալստեան,,:

,,Ի Թվ. ՈՀ. ես... շահ.... հայրենի այգին յերև... զիմ 'ի սուրբ Սիոն առաջնորդութեամբ հաւր Սարգարէի. և սպասաւորք սորա հաստատեցին յամէն ամի պատարագել զՔրիստոս յաւուր տօնի Դաւթի և Յակ. Դ աւր. Է, ինձ, և ա.....,,:

Յարձանագրութեանց աստի քաջայայտ է րևի թէ՝ էր տեղիս այս մենաստան կուսակրօն անձանց. այլ թէ ե՛րբ վերջացեալ իցէ անտի այն կրօնաւորական միաբանութիւն՝ չէ՛ք ինչ ծանօթութիւն. և որպէս երևէր, կայ այնպէս աւերակ 'ի վաղ ժամանակաց, որպէս և այլ այսպիսիք յորովք:

401, Նորաշէն Գիւղ յարևելից հիւսիսոյ Օշականայ հեռի 'ի նմանէ իբրև ժամ մի, և յարևելից հարաւոյ Փարպւոյ, 'ի վերայ հիւսիսային եզեր Քասաղ գետոյ 'ի սարահարթի 'ի կրկնակ տեղի վայելուչ և այգաւէտ. որոյ գինին առաւել օգտակար և առողջարար քան այլ տեղեաց Արարատայ. առողջարար և ջուր սորա. քանզի առուակ սորին սկզբնաւորի 'ի վեր անդր քան զՍօղնի գիւղ. յորմէ յստորև ելանեն սեաւ ջուրք աղբերց և խառնին 'ի գետն. և այն առուակ յորդ մտանէ 'ի գիւղամէջ անդր, և անցեալ բաշխի յայգեստանսն:

Յարևելից գեղջս 'ի ձորամիջի անդ ձգեալ է 'ի վերայ գետոյն կամուրջ եռակամար 'ի կոփածոյ խարտեալ քարանց. եղեալ է արձանագիր շինութեանն յարևմտակողմն 'ի միջոցի երկուց կամարացն, այլ եղծեալ է բոլորովին. բայց բնակիչքն աւանդութեամբ ասեն՝ շինեալ է այն ծախուք քանաքեռցի խօջայ Փլաւ անուանեալ հայազգի մեծատան ուրումն:

'Ի կրկնակի անդ երկայնեալ սարահարթի
լեալ է յառաջագոյն ամրոց՝ որոյ պարիսպն յարե֊
մտից կայ տակաւին կիսաւեր. իսկ միւս կող֊
մունքն են զառընդթափ ձոր խորին ցգետն. 'ի
մէջ ամրոցիս և արտաքոյ են բնակարանք ժողովր֊
դոց՝ որք ամենեքեան են յազգէ Հայոց. յառա֊
ջագոյն 'ի ժամանակս իշխանութեան օսմանեանց
էին 'ի սմա գերդաստանք իբրև եօթն հարիւր.
այլ այժմ գտանին տունք 153. 'ի հինգ եկեղե֊
ցեաց սորա բ, են յամրոցի անդ. ա՝ ծերունազարդ կո֊
չեցեալ յանուն սբ Աստուածածնի 'ի կոփածոյ
քարանց. անմիջապէս շուրջ զորմովք նորին բարձ֊
րացուցեալ զորմն կրկին՝ որպէս զեկեղեցին
Սատարայի և փարպւոյ, արարեալ են արդարև
աշտարակ անմատչելի յամրոցի անդ. նախ քան զա֊
մրս ինչ սաստ կատարէին բնակիչքն զժամերգու֊
թիւնս իւրեանց, այլ 'ի խոնարհիլ կամարայարկի
տանեաց նորա յամի 1815, կատարեն զայն յԱմենա֊
փրկիչ եկեղեցին. բ՝ կոչեցեալ ողէփոխանոր և կայ
յանգործածութեան. գ՝ 'ի գիւղամիջի. Ս. Գինատր֊
նէկ անուամբ որոյ սեղանն տեղի պատարագելոյ է
բոլորովին 'ի սրբատաշ քարանց 'ի հին ժամանա֊
կաց. իսկ ժողովրդանոց նորա զկնի 'ի մերձ ժամա֊
նակի շինեալ՝ որմունքն 'ի հասարակ քարանց և 'ի
հողոյ և ծածկոյթն 'ի հասարակ փայտից. դ՝ սուրբ
Սարգիսնէ. տաճար փոքրիկ վայելչաձև սրածայր կա֊
թուղիկէիւ, և է յարևմտեան եզեր գեղջս. և
ունի շուրջանակի պարիսպ հանդերձ բրգամբք 'ի
մեծամեծ հասարակ որձաքար վիմաց. զեկեղեցւոյ
սատի և զպարսպէ սորին աւանդեն բնակիչքն թէ՝
երիտասարդ քահանայի ուրումն վախճանեցաւ
կին. և այնինչ յառնեցաւ նա յընկալնուլ զերկ֊
րորդ ամուսնութի, կաթուղիկոսն աթոռոյ Էջ֊
միածնի եդ 'ի վերայ նորա այսօրինակ ապաշխա֊
րութիւն. նախ շինել զեկեղեցի մի 'ի սրբատաշ

քարանցն. և այնպէս ընկալեալ զհրամանն բ̄ ամուս-
նութեան. աշխատեալ նորա ոչ սակաւ ամս՝ եհան
'ի կատար զայս փոքրիկ տաճար. տեսեալ կաթու-
ղիկոսին զերկարատև զանխոնջ աշխատանս նորին,
յաւել և զայս. թէ ածցես շուրջ զդովաւ պա-
րիսպ քարեայ՝ յայնժամ ունիս հասանել բաղ-
ձանաց քոց. յանձն առեալ և զայն՝ կատարեաց
թէպէտ և եհաս յամբոկ գործոյն, այլ երկարա-
տեւ միջոց գործառնութեանցն խոնարհեցոյց ըզ-
հասակ նորա յալիս ծերութեան, և գործն բազ-
մածախ թափեաց 'ի նմանէ զինչս և զհարստու-
թիւնս. այլ 'ի հրամայել կաթուղիկոսին մատ-
նել նմա յԹ̄ ամուսնութիւն, եւ հրաժեշտ քա-
հանայն 'ի հրամանէ անտի և թողեալ զառաջին
դիտաւորութիւն իւր՝ եկաց բարեկրօնութեամբ
ցմահ իւր:

Արձանագրութիւնք յորմունս այսր տա-
ճարի յանուն նուիրատուացն՝ որ գտանին 'ի ներքս
և յարտաքս եկեղեցւոյն:

Ա̄, 'Ի վերայ դրան հարաւային ատենդատան.

„Յառաջնորդութեան Գրի. վարդապետին
'ի շինութեան սուրբ եկեղեցւոյս՝ ես Թագուհի
դուստր Սահակ երեցո ետու զիմ հայրենի տու-
նըն, և զքարահանացն այգին 'ի սուրբ Սարիա-
նէս. և խոստացան 'ի տարին՝ Գ̄ պատարագ ինձ
առնեն 'ի Նոր կիրակէն անխափան. 'ի թվ. ՉԼ̄. .
„ (1281):

Բ̄, Վերջ այլ 'ի հարաւոյ.

„ Կամաւ ամենակալին Աստուծոյ ես Սա-
նատրս և ամուսին իմ Վուտալչաք և զաւակ
մեր Զաքարիա միաբանեցաք ընդ Սարիանէիս,
գնեցի զքարգործենս հոգոյ 'ի հալալ ընչից մերոց՝

որ 'ի տեառնըն. . . . 'ի Թվ. չհե ,, (1326)։

'Ի մէջ եկեղեցւոյս են և այլ երկու ար_ձանագիրք՝ մին այգւոյ 'ի չկա Թուին. և միւսն՝ ջրոյ 'ի չկդ Թուին։

Ե, յորմն հարաւային արտաքուստ յարևելս դրանն.

,, Կամաւ ամենակալին Աստուծոյ և ողոր_մութեամբ պարոն Ագուղային և Միթի խաթու_նին ես Յակոբ երէց 'ի վանքս շինեցի հայրատուն (հիւրատուն), զ դուռն 'ի պարսպին և Յ. 'ի Թվ. չկզ ,, (1317)։

Զ, յարևելս այսր աղբեանի.

,, Կամաւ ամենակալին Աստուծոյ ես տիկ_նաց տիկին ամուսին Որջուկին միաբանեցա ս̄բ Մարիամէիս և ետու զխարասանց այգոյն կէսն. ի. յ. գ. որպէս գնեցի և տվի. սպասաւորք սորոյս խոստացան 'ի տարին ՟Բ պատարագ 'ի տաւնին Վ_զարու. կատարիչք աւրհնին յաստուծոյ, ամէն ,,։



Այսպիսի քանդակք ժա_մացուցի արեգական 'ի հարա_ւային որմունս արտաքուստ գը_տանին և յայլ բազում եկեղե_ցիս մենաստանաց, քաղաքաց և գիւղօրէից 'ի Հա_յաստան. որպէս և այս 'ի սմին եկեղեցւոջ։

Է, յորմն արևելեան արտաքուստ.

,, 'Ի յոյսն ամենեցուն 'ի Քրիստոս ապա_ւինեալ ես Միթի խաթուն ամուսին Ագուղա_յին ետու 'ի ս̄բ Մարիամէ 'ի միաբանութիւնն զփարպոյ հողին կէսն՝ որ այծամանց երկիրն, որ զկենսակու ապաղարի փիր որդին գնեալ է, 'ի Թուրաննէ 'ի խոսմոյէ. . . . Մարիամէիս տվել որ զս̄ն էլկխանէս տվի ու յմ՟ ազատեցի. . . . ոչ

շարխառ, ոչ էլ մեծ կամ փոքր խարձող զմեր հաւատարմայիշատակ խափանել ջանայ 'ի մերոց կամ աւտարաց՝ դատի յաստուծոյ, և անէծս առցէ, և մեր մեղացն պարտական է. 'ի Թվ. ՉՀԲ ,,:

,, Ես Յակոբ աղաչեմ մեր որդի աւել տէր հետ իմ գնած փարպոյ հողեն զիմ գնած խուպանն՝ որ աւշականայ հանդին են ,,:

Այս եկեղեցի 'ի վաղուց կայր լքեալ՝ որոյ և ժողովրդանոցն համարակ շինուածովք աւերեալ՝ բաց յորմոցն, այլ յամին 1839, զարդարել հարկաւոր սպասուք՝ սկսան և 'ի սմա առնել աղօթս, և կատարել զամենայն պաշտամունս որովհետև Ամենափրկիչ եկեղեցին չէ՛ր բաւական ժողովրդոցն. փայտայարկ առնեն և այժմ ահա ըզ ժողովրդանոցն: Ի վերայ դանեաց եկեղեցւոյս 'ի Թևի անդ արևմտեան հարաւոյ ետ կառուցանել զանգակատուն փոքրիկ 'ի յղկեալ քարանց բնակիչ գեղջս Գէորգ փարվանեանց իւրով արդեամբ:

Է, Աստուածածին կոչեցեալ եկեղեցի յեզեր գեղջս յարևելեան հիւսիս 'ի բարձրաւանդակի. է փոքրիկ տաճար խաչաձև, և ունի փոքրիկ կաթուղիկէ կղմինտրովք ծածկեալ. ունի և շուրջանակի պարիսպ. այլ է այժմ անբնակ. և առեն. երբեմն բնակէին աստ կուսանք և յաշխարհէ հրաժարեալ կանայք. ուստի և կուսանոց: Արձանագիր շինութե եկեղեցւոյս սկսեալ միակարգ 'ի ծայրէ հարաւային որմոյն, և անցել զԹիկամբսեղանոյն աւարտի 'ի ծայրն արևմտեան որմոյն հիւսիսոյ, այլ եղծեալ մինչ ինչ տեղիս՝ յայսօրինակ:

,, Ես Դաւիթ մեղաւոր . . . գիւղաքաղաքէս յերեցունեաց Գրիգորի քահանայի և մանաս և որդիք տուաք շինել զեկ . . . աստուածածինս վասն խաղաղութեան ամենայն աշխարհիս, շինուե աշտարակի և պտղաբերութեան սահմանիդ . . . .

և վան ․ ․ ․ հոգւոց ․ ․ ․ ․ ազգի մերոյ ․ ․ ․ ․ ․ ․ ․

՚Ի ներքոյ ոլորտաձոյ այդր արձանագրի գտանի և այս արձանագիր յորմն անդր ·

„ Շնորհիւն Աստուծոյ ես Յակոբ երէցս ըստ կարի մերոյ նորոգեցի զմեծ առու տեղւոյս բազում աշխատութեամբ՝ որ խախտ էր ՚ի հիմանց յիշատակ հոգւոյ իմոյ, և որք աւգնական եղեն տրաւք․ և աւանդ գրեցի որ շինած տուն էկեղ տնանգաց աւթեան (օրհնեան) լինի ։ որ ՚ի գըրաց սորին․ ․ եան ՚ի ձեռն յիշատակ իմո․ և ՚ի տարին Ժ աւր․ յորս յանուն ՚ի տաւնի խ նիցն․ ով խափանէ դատի յաստուծոյ․ կատարիչք գրոյս աւրհնին յաստուծոյ․ թվ․ չխա „ (1292)։

՚Ի վերայ հարաւային դրան պարսպին գրի այս արձանագիր ·

„ Կամաւ ամենակալին Աստուծոյ և ողորմութեամբ պարոն Աղպուղային և Միթի խաթունին ես Անաւորս և Պուտալչաքս միաբանեցաք սուրբ Աստուածածնիս և շինեցաք զպարիսպ զշրջայ ․ ․ ․ ․ և զդուռն յիշատակ մեզ և զաւակի մեր Օւքարի, և տվի տարենն Ժ ․ ․ ․ յայդոյն, ով որ զայգին ուտի, բաժակ տա․ և սպասաւորք սրբոցս խոստացան ՚ի տարին Է աւր պատարագ, Ա անաւորին, Ա ղուտալչաքին․ ՚ի տաւնի աստուածածնին կատարեն․ թվ․ չԳ „ (1254)։

Գոյ միւս ևս տեղի աւերեալ եկեղեցւոյ ՚ի հարաւային եզեր գեղջս ՚ի մէջ այգւոյն կոչեցելոյ յանուն շուխեանց, և կոչեն զտեղին սուրբ Ներսէս․ ուր անկեալ դնի և պսակ գմբեթին։

՚Ի մէջ պարսպի այսր փոքրիկ տաճարի կուսանաց և ՚ի շրջակայս սորին, մանաւանդ ՚ի հիւսիսային և յարևելեան կողմունսն են գերեզմանք բազումք, յորս և երևելի շիրիմք խաչվիմօք հան-

դերձ պատուանդանօքն 'ի հիւսիսակողմն 'ի բարձրաւանդակի յարևելից ճանապարհին վանաց Սբ Գէորգայ է խաչվէմ՝ բարձր հրաշալի քանդակածովք. և պատուանդան նորին կազմեալ իբրև մատուռն 'ի մեծամեծ վիմաց առանց կրոյ, և գոյ տեղի սկհւոյ, զոր և անուանեն բնակիչքն՝ ծոց խաչ. և կառուցեալ է այն վասն արևշատութեան Սադուն իշխանի յազգէ արծրունեաց, 'ի Խօշմաս քահանայէ. և ունի արձանագիր 'ի կատար պատուանդանին յարևմտից՝ ըստ այսմ.

,, 'Ի թվ. չժէ (1268) 'ի թագաւորութեան . . . . . . . րհիւն Աստուծոյ ես տր Խօշմաս կանգնեցի զսուրբ նշանս վասն յերկար կենաց պարոն Սադունին և զաւակաց իւրոց.

Կառուցեալ է այն արձան յաւուրս կենդանութեան նոյն իշխանի, և թերևս կառուցանող քահանայն յազգականաց նորին. 'ի շրջապատ եզերս մեծի խաչվիմին յարևմտից՝ էր միակարգ գրչութիւն, այլ ըստ առաւել մասին եղծեալ գոլով՝ չեղև հնար առնուլ 'ի գիր կամ հասկանալ ինչ.

Այս գիւղ Ը յատկութեանցն է մի 'ի հնագոյն գիւղօրէից Արագածոտն գաւառի, զորմէ Ստեփաննոս տաղէն յԺԲ. Է գլուխ.

,, Նաև ապա տէր Գէորգ (ժամանակագրքն հայոց 'ի վախճան Թըտ տարւոյ) 'ի յԱրագածոտնէ 'ի գեղջէ Աշտարակայ, ամս Գ,, : Այս գիւղ ստորագրութիւնն հին Հայաստանի շփոթեալ միացուցանէ Ը միւս Աշտարակաց գիւղի Բագրևանդ գաւառի. երես 412 :

402, Ոսկի անուանեալ գիւղ՝ սեպհական կալուած աթոռոյ Էջմիածնի և արդէն, է հեռի յԱշտարակ գեղջէ Ը հիւսիս իբրև կէս ժամու 'ի վերայ սարահարթի արևմտեան եզեր Քասաղ գետոյ. յառաջագոյն լեալ էն ստս բազմութիւն

ընակչաց, որպէս ցուցանեն աւերակքն տանց և եկեղեցւոյն որ ՚ի ձորաբաշի անդ. այժմ գտանին սակաւաւթիւ գերդաստանք յազգէ Հայոց (139):

403, Մենաստան յանուն սուրբ Գէորգայ յարևմտեան եզեր այսր Մուղնի գեղջ: Զսկզբնաւորութենէ այսր մենաստանի ճառէ Զաքարիա սարկաւագ Յովհանավանից. յորմէ համառօտեցաւ ըստ այսմ: Եբեր ՚ի Հայս մեծն Ներսէս ըզմարմին սրբոյն Գէորգայ և եդ ՚ի Յովհաննուվանս՝ որ մերձ ՚ի կարբի, և ժողովեաց զուրուկս և զգոլթիսն անդէն. և հետ զհետէ ՚ի բազմանալ ուխտաւորաց յայն վանս ՚ի պատիւ նշխարաց սրբոյն, վտանգէին երբեմն նորատի մանկունք ուխտաւորացն գահավէժ խորտակմամբ ընդ զառ ՚ի վայր խորաձորն գետոյն. որոյ վասն կալեալ լինէին վանականք վանացն յայլազգի իշխանաւորաց և ոչ շերծանէին առանց մեծի տուգանաց. ուստի առաջնորդք վանացն առ ՚ի անվտանգ պահել զնոսին և զանձինս, յաւուրս տօնից սրբոյն յամի ամի տանէին զնշխարսն ՚ի կարբի. ուրանօր ժողովեալ ուխտականացն՝ կատարէին զջերմեռանդական պաշտամունս իւրեանց. ապաքէն անտանելի լեալ բազմութեան ժողովելոցն և կարբեցւոցն, շինեցին մատուռն մի փոքրիկ և փայտեայ գաւիթ առ նմին մերձ ՚ի գիւղն Մօղնի, և անդ ետուն փոխադրել զնշխարսն յաւուրս տօնից. ուր ՚ի տանել և ՚ի վերադարձուցանել ՚ի Յօհանավանս վշտանային վանականքն. վասն որոյ խորհուրդ արարեալ՝ իսպառ թողին անդէն և կացուցին սպասաւոր զոմն վանական. և զարդիւնս ուխտականացն ստանային ՚ի վանսն Յօհաննու ցբազում ամս. և այնպէս օրըստօրէ անուանի եղև տեղին, և գոլթիքն ևս փոխադրեցան անդ ՚ի վանացն Յօհաննու. և այնուհետև արդիւնքն եղև երկուբաժին, մին՝ վանականացն Յօհաննու, և մին՝ անդ.

սպասաւոր կացելոյն վերահասութեամբ միումն ՚ի վանականացն Յօհաննու. այլ որովհետև երթևեկք ծանրանային ծախուք այսր վանաց, տնօրէնութեամբ մեծամեծացն կարգեցուց սահմանեցաւ. զի միայն զկէս բաժին արդեանց յատկացեալ աշնանային ուխտին առցեն վանականք Յօհաննավանից առանց վճարելոյ զմասն ինչ ծախուց. Եւ այսօրինակ տևեաց մինչև ՚ի ժամանակս Նորին Զաքարիա սարկաւագի. և ապա ասէ նա ինքն.,, Իսկ ՚ի մերում ժամանակի եպիսկոպոս ոմն Մարտիրոս անուն քակեաց զմատուռն և զգաւիթն (զշինեալն ՚ի կարգեցուոց), և շինեաց կոպիտ քարիւ հոյակապ եկեղեցի, և շուրջանակի պարսպեց. Եւ յետոյ եղբօրորդի նորա Յովհաննէս 1, վարդապետ քակեաց զայն և շինեաց կոփածու քարամբք եկեղեցի զարմանալի. և յարևմտեան դրանն զանկականուն, և չև ևս էր կատարեալ րդսակք տանեացն՝ վախճանեցաւ. և եղբօրորդին իւր Դաւիթ վարդապետ կատարեաց զայն: Սա է այժմ հրաշափառ եկեղեցի, և Դաւիթ վարդապետ առաջնորդ նորին,,: Սա աւարտէ զայս գրուած իւր ՚ի Թուականի հայոց ռճլբ. 1683:

Այժմ այս տաճար սրբութեան կառուցեալ ՚ի սրբատաշ քարանց ՚ի վերայ չորից սեանց բաւականաչափ մեծութեամբ, բարձրակամար. ունի զմի կաթուղիկէ ՚ի միջավայր տանեացն, զմի սեղան սրբազան խորհրդոյն և զերկուս աւանդատունս. ՚ի հիւսիսայինն դրանն կազմեալ գամբարան հան-

1, Սա Յովհաննէս վարդապետ յառաջագոյն հայցեալ հանդերձ էր զհրովարտակ շինութեան տաճարին. և այնպէս յետ ձեռնարկեալ ՚ի շինութիւնն. և այն հրովարտակ ՚ի ձեռն Սուլէյմանայ արքայի պարսից կայ ընդ այլ հին հրովարտակաց յարկեղ Էջմիածնի:

դերձ տապանավիմաւ յանուն Յացեալ Ձ, Նշ-խարաց սրբոյն Գէորգայ զօրավարի նահատակե-լոյն ՚ի Նիկոմիդիա քաղաքի բիւթանացւոց. ունի և զերկուս դրունս՝ մի ՚ի հարաւոյ. և միւսն մեծ յարևմտից. և զգաւիթ վայելուչ ՚ի վերայ այսր դրան նոյնպէս ՚ի սրբատաշ քարանց հաւասար ընդ-լայնութիւն տաճարին. յորում ՚ի միջին բաժնի՝ որ անկանի ուղղակի ՚ի վերայ դրանն, է զանգա-կատուն վայելչակերտ:

Արձանագիր շինութեան եկեղեցւոյս գը-տանի յարևմտեան որմն տաճարին ընդ յարկաւ գաւ-թին ՚ի հիւսիսային բաժնի ՚ի ծոցաւոր տեղւոջ՝ այս օրինակ:

,, Շնորհօք ամենակալին ՚ի թվին ՌՃԺԳ. (1664) ՚ի թագաւորութեանն պարսից փոքր Շա-հապազին և ՚ի բռնակալութեան երկրիս Ապաղ-ղուլի խանին, և ՚ի հայրապետութեան հայոց տէր Յակոբայ սրբազան կաթուղիկոսի սուրբ Էջմի-ածնի՝ որոյ հրամանաւ և օժանդակութեամբ, թղթով, բանիւ, և արդեամբք, ընդ հանուր քրիս-տոնէից որիւք. ընդ նմին և զամենայն ինչս և ըն-տացուած հոգւոյս և մարմնոյս վատնեցաք. ես Յովհաննէս վարդապետս մօղնեցի որդի յակոբայ եղբօր որդի մարտիրոսի եպիսկոպոսին քակեալ ՚ի հիմանց սուրբ Գէորգայ եկեղեցիս, և շինեցի

2, ՚Ի պատճառս գոյութեան այսպիսի վերաշինելոյ որ-դւոյ Թագաւորին Վրաց Դաւիթ անուանելոյ տարան նշխարս սրբոյն [illegible] անդր ՚ի Տփխիս (որ էրդա ՚ի [illegible] ա-նուանեալ [illegible] նահանգին [illegible]) պայծառանան անդ-րէն վերադարձեալ նշխարան. որոյ վասն և յառաջագոյն յղեալ էր Թագաւորն պատուէր զձեր [illegible] յաղագս Հրաց. նախ քան [illegible] ՚ի Տփխիս [illegible] Թա-գաւորին. [illegible] նշխարան. և [illegible] [illegible] [illegible] նոյն [illegible]

զսա հանդերձ գաւթովս հրաշակերտ յօրինուա-ծօք ներքուստ և արտաքուստ կոփածու քարօք 'ի թվին ՌՃԺԸ · 'ի թագաւորութեան պարսից շահ Սուլէմանին, և 'ի բռնակալութեանն երկրիս Սէ-ֆիլի խանին աւարտեցի · Ու ես ընդ նմա աւար-տեցայ 'ի կենցաղոյս և փոխեցայ առ տէրն ամենից· Մնաց միայն գլխի սալքն և ներքին տօշամէն եկե-ղեցւոյս և գաւթիս՝ զորս կատակաւ յանձն արա-րի եղբօրորդւոյ իմոյ Դաւիթ վարդապետին փո-խանորդ լինել ինձ, և կատարել զպակասութիւն եկեղեցւոյս և գաւթիս · որք տեսանէք զյիշատա-կըս իմ, ա՛ծ ողորմի ասացէք ինձ և ծնողաց իմոց · տէր Աստուածն ձեզ ողորմեսցի, ամէն ։ Ալէք-սան քարտուղար հայոց յիշեցէք 'ի Ք՛ս ,,։

'Ի վերայ արևմտեան ճակատու սեանն արևելեան հա-րաւոյ 'ի դէմ եկեղեցւոյս գտանի այս արձանագիր ։

,, Յիշեցէք 'ի Քրիստոս զպարոն Սարդա-նըն՝ որ է եղբայր որդին յովհաննէս վարդապետի շինողի սուրբ եկեղեցւոյս և գաւթիս, և եղբայր դաւիթ վարդապետին փոխանորդի նորին՝ որ 'ի հալալ ընչից իւրոց ետ զխարջն շինութեան այս սեանս և ա՛ կամարին յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողացն · հօրն Կարապետին, և մօրն Խուրվան-տին, եղբարցն Զաքարիային և Մարգարէին, և կենակցաց նոցին, զարմից և զաւակաց, կենդա-նեաց և հանգուցելոց · որք ողորմի ասէք, տէր Աստուած ձեզ ողորմեսցի, ամէն ։ գրեցաւ 'ի թվին ՌՃԺԹ (1670) · ձեռամբ ալէքսանին ,,։

'Ի գլխոյ բարաւորի դրսի դրանն արևմտեան և ճան-դաջագործ ճակատի նորին դնի այս արձանագիր ·

,, Շնորհօքն Աստուծոյ ես Պետրոս վար-

դապետ որ յազգուլեաց անձամբ և ժողովրդեամբ իմով օժանդակ եղէ շինութեան սուրբ եկեղեցւոյս, և շինեցի զդուռն սրբոյն Գէորգայ զօրավարի երկնաքատակ կամարօք, և կանգնեցի 'ի վերայ զսուրբ խաչս 'ի բարեխօսութիւն հօրեղբօրիմոյ տեառն Խաչատրոյ արհի եպիսկոպոսին Գողթան գաւառի և բեմբասաց վարդապետի· յիշեցէք 'ի Քրիստոս, 'ի թուին ռճժը,, (1669), ամէն,,:

Ճարտարապետ և քարահատ շինութեան այսր եկեղեցւոյ եղեալ է Սահակ անուն հիզանեցի ոմն որ հասուցեալ զշինութիւնն մինչև ցամն 1666, վախճանի· և գերեզման նորին գտանի 'ի շիրիմն անդ յարևելեան հիւսիս եկեղեցւոյս արտաքոյ պարսպին մեծ վիմաւ և արձանագրով· որոյ փեսայ և աշակերտ Մուրատն անուանեալ՝ յետ վախճանի նորին լրացուցանէ զբովանդակ շինուածն:

Կայ այժմ այս եկեղեցի յամբողջութեան, պատուեալ ուխտական այցելութեամբ 'ի բնակչաց Արարատայ և 'ի մերձակայ գաւառաց նորին, առաւել յեօթն կիւրակէսն՝ սկսեալ յօրէ անտի յառակացեալ տօնի սրբոյն յաշնանային ժամանակի, և կայ 'ի շինութեան բնակեալ ոմանց վարդապետաց ընդ անմիջական տեսչութեամբ լուսաւորչեան Հայոց Սիւնհոդոսի սրբոյ Էջմիածնի:

Զսալ քարինս տանեաց սրբոյ եկեղեցւոյս զխախտեալսն և զփշրեալսն ետ նորոգել առաջնորդ վանացս Թէլաւեցի գիտնական Ստեփաննոս արք եպիսկոպոսն սբյ Էջմիածնի, յամի 1830:

Զծայր կաթուղիկէին՝ որ 'ի միջավայր տանեացն, յամի 1839, փշրեալ խորտակեաց կայծակըն· զոր 'ի նոյն իսկ ամի անդրէն նորոգեալ հաստատեցին՝ պնդելով 'ի նմին և զերկաթի խաչն, որ խախտեալ կախեալ էր յաւերածոյ անտի,

Շուրջ զեկեղեցեաւս ածեալ է և պարիսպ քառակուսի բաւականաչափ բարձր 'ի հասարակ քարանց և 'ի հողոյ, և դուռն մի մեծ ընդ հիւսիս, և դուռն մի փոքր ընդ արևմուտս 'ի ծառաստունկ պարտէզն՝ յորում գտանին և որթք խաղողոյ, 'ի մէջ առաջին քառանկեան պարսպի՝ յերից կողմանց, յարևելից, 'ի հիւսիսոյ և 'ի հարաւոյ առ որմովք պարսպին են քարայարկ սենեակ հոգևորականաց և այլ հարկաւոր պիտոյից՝ կառուցեալք ընդ եկեղեցւոյն. յորս արար ինչ ինչ նորոգութիւնս Մարտիրոս արք եպիսկոպոս կեսարացի տեղապահ Եփրեմայ կաթուղիկոսի՝ ընդ որոյ տեսչութեամբ էր այս մենաստան: Այս մենաստան ունի կալուած զայգի մի յԱշտարակ գիւղ և արդիւնք ծախուց նորա գոյանայ 'ի նուիրանաց ուխտաւորացն՝ յորմէ և աւելորդ դրամն մտանէ 'ի գանձարանն աթոռոյ Էջմիածնի. զեկամուտ արդիւնս յանդաստանաց այսր գեղջ Մօղնւոյ որ յանուն աթոռոյն Էջմիածնի՝ բազմիցս շնորհեալ լինի կառավարութեան մենաստանիս:

Մենաստան Յօհանավանից, Ա:

404, Այս տեղի 'ի Մօղնւոյ կէս ժամ հեռաւորութեամբ ուղղակի ընդ հիւսիս, անմիջապէս 'ի վերայ սարահարթի քարափան ձորոյն նոյն

Ա, Նա հասարակ՝ թէ պատմիչն և թէ աւանդութիւն [illegible] Հայոց [illegible] (Յօհանավանս) [illegible] (Հանաւանս), այլ ըստ [illegible] նոյն Օ[illegible] [illegible] (Մեղւի վան) յանուն [illegible] վանահօր [illegible] անդէն 'ի [illegible]. [illegible] (Յօհանավանս) յանուն [illegible] վանահօր: Նա 'ի ժամանակի անդ [illegible] որ [illegible] անդէն [illegible] [illegible] 'ի [illegible]

Ատաղ գետոյ, և յարևելից գիւղաքաղաքին Կարբւոյ իբրև քառորդ մի ժամու. շինեալ եկեղեցին որ 'ի նմա 'ի սկզբանն՝ 'ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէ և 'ի մեծէն Տրդատայ արքայէ Հայոց՝ ամփոփելով 'ի նմին և զմասն ինչ 'ի նշխարաց Յօհաննու կարապետի՝ զորոյ զվկայութիւնս յառաջ բերեալ՝ հաստատէ Զաքարիա սարկաւագն քանաքեռցի 'ի հոգևորականացն այսր վանաց յառանձին գրուածի իւրում՝ որ անուանի (կոնդակ Յօհանավանից), ուրանօր շարակարգէ 'ի հաստատութիւն զաւանդութիւնս հնոց, զարձանագրութիւնս և զյիշատակարանս մատենից եւն:

Զկնի շինութեանց անտի մեծին Գրիգորի Լուսաւորչի՝ այն է, յամի 553, կարգեալն 'ի վանահայրութիւն յայսմ մենաստանի Աշոտ Գունեցի, 'ի ժամանակի եղբայրակցութեանն իւրոյ սատէն, ետ կառուցանել կոփածու քարամբք ըղծածք յարկի այնր եկեղեցւոյ, զի յառաջագոյն փայտիւք էր ծածկեալ՝ ըստ յառաջ բերելոյ յիշատակարանի աստուածաշունչ մատենի իրիք որ 'ի կոնդակի անդ:

Վաչէ կարգեալ 'ի Զաքարիա սպասալարէ իշխանաց իշխան 'ի վերայ գաւառացն՝ որ շուրջ զԱրագած լերամբ և Արասխաձորոյ, ետ քակել զփայտեայ շինուած գաւթին որ 'ի հարաւոյ եկեղեցւոյն, և կառուցանել կոփածոյ քարամբք պէսպէս գրուագօք, զորոց լռովին ճառէ յիշեալ սարկաւագն, և աւարտի բովանդակ շինուածն յամի 1217. և ինքն Վաչէ իշխան վախճանեալ՝ ամփո-

ցանուան նոցա յիշէր և երբեմն (Սողի վանս), ըստ վկայելոյ և վարուց սրբոց, հատոր Ա, երես 199, և 213՝ յերկրորդ տեղին. այլ երկրորդն անուանադրութիւն շարունակեալ անդ ցարդ, և այն ըստ որում 'ի պատճառս ամփոփելոյն անդ 'ի ժամանակի հիմնարկութեանն մասունս ինչ Յօհաննու կարապետի:

մի ՚ի մէջ եկեղեցւոյն ՚ի հարաւակողմն առ դրան աւանդատան։

Քուրդ Ա, որդի վերոյիշեալ Վաչէ իշխանի կարգեալ ՚ի տեղի իշխանութեան հօր իւրոյ ՚ի Շահնշահէ որդւոյ Զաքարիա սպասալարի, և ըստ հրամանի նորա առ ՚ի կանգնել զգաւիթս եկեղեցեացն կառուցելոց ՚ի Վաչէէ, տայ կանգնել զայնպիսի գաւիթ յարևմտակողմն կաթուղիկէ եկեղեցւոյ մենաստանիս ՚ի խարտեալ քարանց ՚ի վերայ չորից միաստանի սեանց, և փութացեալ տայ գլխաւորել զայն ՚ի միջոցի միոյ ամի, այսինքն յամի 1251. եւ կառուցանել և ՚ի վերայ տանեաց այսր գաւթի զանգակատուն սիւնազարդ, և կախել ՚ի նմա զանգակ զարթուցիչ ամենեցուն ՚ի փառաբանութիւն Աստուծոյ և ՚ի հոգևոր պաշտօնակատարութիւն։

Զկնի գերելոյն Շահապասայ զԱրարատեան աշխարհ և զմերձակայս նորին, և ՚ի դատարկանալ այնց գաւառաց ՚ի բազմամբոխ բնակչացն՝ յարէն ելուզակք, ջալալի կոչեցեալք գունդք գունդք և խապառ ձռաքաղ արարին զփախստեայ մնացորդ բնակիչսն. ոմանք յելուզակաց անտի ՚ի

1, Թէպէտ զսա զՔուրդ անուն իշխան նոյնացուցանէ Զաքարիա սարկաւագ ընդ այլում Քուրդ անուանելոյ՝ որ գտանի յարձանագրութեան Սևան կղզւոյ, այլ որդէգիր մնացեալ յարձանագրութեանցն, են այլ և այլ անձինք նոքին անուանակցութեամբ. քանզի թուականն շինութեան գաւթիս ՚ի սմանէ, ո՛չ համեմատի թուականին եղելոյ յիշատակինէ դրանն եկեղեցւոյն սրբոց առաքելոց՝ որ ՚ի Սևան. զի տարւոյն ողը. և նորայն ոճէ. զանազանութիւն ՚ի միջի 74, ամաց, ապացէն այլ ևս առ որդի Վաչէի, և այլ ևս նախորդէս այլ անևս Քուրդ անուամբ յարձանագրութեան միոյ եկեղեցւոյն Գեղարդայ, յորում նոյն զինչս որդի հախայրէիր. և երկարեալ անդէն՝ անուանեցաւ Յովհաննէս, ՚ի թիւ հայոց ոճգ.

գնաց Խօթալ օսմանին մտեալ յայս մենաստան՝ գտին զոմն հիւանդ աբեղայ, և զայլսն փախստեամբ զերծեալ. զնա յերկս աւուրս գանալից չարչարանօք տագնապեցին ցուցանել զդարան վանացն, այլ նա ոչինչ խոստանայր. ապա կախեալ զնա յամորձեացն և խոշտանկեալ դառնապէս՝ եցոյց նոցա զտեղին. յայնժամ սպանեալ զաբեղայն՝ կողոպտեցին 'ի դարանէ անտի զբազում արծաթեղէնս և զայլ ինչս, ընդ որս և զյոլով մատեանըս ամբարեալս յառաջնորդաց մենաստանիս. զորոց ասէ Առաքել Դաւրիժեցի 'ի գլուխ Էրդ. «Սրբ էին ամենեքեան պատուական գրեանք վարդապետականք. . . զորս առեալ զամենեսեան ջալալեքն՝ և տարեալ կորուսին»:

Յակոբ վարդապետ առաջնորդ այսր մենաստանի տեսանելով զաւերումն փոքրիկ մատրանն՝ որ 'ի լուսաւորչէ անտի կառուցեալ, հոգ տարեալ նորոգէ զայն 'ի Թուականին հայոց ՌՃՁԳ. այն է, յամի 1734. և վասն օծման այսր մատրան և սեղանոյ նորին հրաւիրէ զԱբրահամ կաթուղիկոս մշեցի յաթոռոյ Էջմիածնի. որոյ գնացեալ անդր օծանէ զայն յամսեանն օգոստոսի. ընդ կաթուղիկոսին էր յայնժամ և Աբրահամ արք եպիսկոպոս Թրակիոյ նորոգ եկեալ յաթոռ այսր՝ որ և պատմէ զայսմանէ յԻԳ րդ գլուխ գրուածոցն իւրոց:

Այս եկեղեցի հանդերձ մենաստանաւն կայր 'ի շինութեան 'ի բազում ժամանակս շարունակաբար մինչև 'ի Թուականն հայոց ՌՃԼԱ. յորում ժամանակի վարէր զառաջնորդութիւն վանահայրութեան Սարգիս վարդապետն՝ եպիսկոպոսացեալ յԱղէքսանդր կաթուղիկոսէ Էջմիածնի. և նա ինքն սարկաւագն Զաքարիա վախճան տայ գրուածոցն իւրոց 'ի սոյն յայս Թուական. և անտի և այսր որպէս աւանդեն՝ տևէր անդ միաբա-

նութիւն եղբարց հանդերձ առաջնորդաւ և մին-
չև ՚ի ժամանակս Սիմէոն կաթուղիկոսի երևան-
ցուց, և յաջորդի նորին Ղուկասու. այլ զկնի
այնորիկ անբնակ մնացեալ՝ փութով աւերեցաւ
և քայքայեցաւ՝ որպէս պարիսպ նորա և սենեակ-
քն, նոյնպէս և եկեղեցին՝ որ թէպէտ կայ ՚ի կան-
գուն, այլ խախտեալ է մեծ մասամբ, և վէմք
տանեացն և որմոցն անկեալ և խորտակեալ. և
օրըստօրէ քայքայի. և այժմ գիւղ անուամբ յի-
շատակի. զի ՚ի նմա բնակէին յառաջագոյն այլազ-
գի մահմէտականք, և այժմ հայազգիք՝ տունք 25:

405, Զարձանագրութիւնս շինութեանց
և նուիրանաց յայս մենաստան գրեալ յորմունս
եկեղեցւոյն յառաջ բերցուք աստէն ըստ գրո-
ւածոցն նորին Զաքարիա սարկաւագի՝ որք են:

՚Ի ճակատէ ան՟տ ՚ի վերոյ դրանն.

,, ՈԿԵ, թուին. (1216):

,, Շնորհօք բարերարին Ա՟ծոյ ես Սահրամ
որդի եղբայրական և զուգակից իմ Խայէկ ՚ի սը-
կիզբն շինութեան եկեղեցւոյս զամենայն զստա-
ցուածս մեր ՚ի ծախս սորա, և զԳպրավանաց այ-
գին: Եւ առաջնորդք սուրբ ուխտիս սահմանե-
ցին յամենայն ամի շրջագայութեան, գ՟ օր ժամ.
զնոր եկեղեցիքս՝ զՃրագալուցն, զԶատիկն և
զԳալուստ հոգւոյն սրբոյ՝ յանուն մեր պատարա-
գել զՔրիստոս՝ ա՟ օր ինձ, ա՟ օր Թայիկանն, ա՟ օր
բոլոր ազգին մերոյ. կատարիչք գրոյս օրհնին ՚ի
Քրիստոսէ, և որք խափանեն՝ ընդ զինն յեկեղե-
ցիսն դատին յաստուծոյ, և յամենայն սրբոց նո-
րա, ամէն,,:

՚Ի ճակատէ ան՟տ ՚ի խաչին ներքոյ.

ՈԿԶ, (1217):

,, ՚Ի ծագմանէ շնորհացն Աստուծոյ ,,

և հիմնարկել և 'ի լուսաւորել եկեղեցեացս գաւառիս Արարատու, 'ի ձեռն երկուց եղբարց հարազատաց Զաքարիայի և Իւանէի, և արդարածնունդ զաւակաց նոցա Շահնշահի և Աւագի· ես Վաչէ իշխանաց իշխան որդի սարգսի վաչուտանց, սիրեցեալ 'ի սոցանէ մեծաւ պատուով վասն հաւատարիմ ծառայութեան իմոյ, կոչեցայ 'ի վերակացութն գաւառիս, միաբանեցայ հանդերձ զուգակցաւ իմով Մամա խաթունաւ որք ուխտիս վանացս Յօհաննու, բաղում տրօք և ընծայիւք օգնական եղաք 'ի շինութեան մեծափառ նորակերտիս, Եւ առաջնորդք սուրբ ուխտիս հաստատեցին յամենայն ամի պատարագել զՔրիստոս յանուն իմ զտօն Ղազարու զամենայն եկեղեցիքս՝ զհին և զնոր, և զօր խաչգիւտին Մամա խաթունին պատարագել զՔրիստոս զհին և զնոր եկեղեցիքս անխափան մինչև 'ի գալուստ որդւոյն Աստուծոյ։ Եւ որք չառնեն դատին 'ի Քրիստոսէ ,,։

Արտաքոյ տաճարին 'ի վերայ դրանն արևմտեան.

,, Շնորհօք բարերարին Աստուծոյ, տէր Կոստանդին կաթուղիկոս Հայոց, 'ի թուին ոՂԲ· (1243) յիշխանութեան Շահնշահի որդւոյ Զաքարիայի· և մերում նահանգիս Վրդին որդւոյ Վաչէի, միաբանեցայ սուրբ ուխտիս Յօհաննու, և ետու անբերդու երկիրս սեպհական վիճակ որ Կարապետիս, 'ի յապարանուց ընդ որ բաժանի գետոյն քասախ, մինչև յԱշնակ· և սպասաւորք սորա Սարգիս եպիսկոպոս և եղբարքս խոստացան կատարել զյիշատակս մեր յետ ելից մեր՝ է քառասունք, զամենայն 'ի կարգին· և սուրբ կաթուղիկէն Թ խորանաւ յամենայն ամի պատարագել ըզՔրիստոս՝ 'ի տօնի տեառնընդառաջին։ Եւ թէ ոք

յազատաց կամ յիշխանաց հանել ջանայ զվիճակս 'ի սուրբ կարապետէս, անէծս առցեն յաստուածոյ, և յերից սուրբ ժողովոյն և 'ի սուրբ գրիգորի լուսաւորչի աջէս, և 'ի մէնջ, ամէն,,։

'Ի գաւթին' 'ի խորշին հիւսիսոյ.

,,Յամի ՈՂԹ. (1250) 'ի տէրութեան Տ̃ահանշահի որդւոյ մեծին զաքարիայի, ես Պ̃ուրդ-որդի Ս̃ահէի, և ամուսին իմ Խորիշահ' դուստր մարծպանայ և մամքանայ. խնամօքն Աստուծոյ հաճոյ եղեալ այլազգի զօրացն նետողաց' զանձն իմ եդի 'ի վերայ եկեղեցեացն հայոց. և փառն առ աստուած սիրոյն կրկին հաստատեցաք զմիաբանութիւն մեր առ սուրբ Կարապետս, և եղաք սկիզբն մեծափառ տանս, և բազում արդեամբք հասուցաք 'ի կատար։ Նաև սպասաւորք սորա հաստատեցին 'ի տարւոջն' Ի օր ժամ. Ժ ինձ Պ̃րոշի, և Ժ Խորիշահին. որչափ կենդանի եմք, և Ժ Ս̃ահէի. և Ժ Մ̃ամա խաթունի. եւ յետ ելից մերոց մեզ 'ի նոր կիրակէին սկսանին, և անխափան առնեն. որ խափանէ, մեր մեղացն պարտական է. կատարիչք գրոյս օրհնին յաստուծոյ, ամէն,,։

Արտաքոյ գաւթին 'ի վերայ դրանն.

,,'Ի թուին ՉԷ. (1258).

,,'Ի կամս Աստուծոյ հզօրին. այս իմ հրամանն և արձան սահմանի Տ̃ահանշահի, մանաւանդ որ Թախուցէսի որդւոյ Զաքարիայի ամիր սպասալարի հայոց մեծաց և վրաց' զոր գրեցի իմ շինած ժամատանս. տուի զգեղն Տ̃ուլուաշէն 'ի սուրբ Կարապետս' յիշատակ հոգւոյ իմոյ և Խոշաքին. և յարևշատութիւն որդւոց մերոց։ Նաև կրկին հաստատեցի զիմ հօրն հրամանքն, զիւրն որ

գրած են. ես 'ի ժամանակունս որ տուեալ էր ըղգեղն Սրդկան, և զ Տաճկամարդն, և աղաւ էր արարեալ զամենայն հայրենիք սոցա՝ որ 'ի գաւառիս. եւ հաստատեցի՝ որ այրող լինի և աղմուկ անէ, գիշերօք չտան առնել. ստացուածն տէրունի լիցի: Արդ՝ եթէ ոք 'ի թագաւորաց կամ մեծխանաց հանել ջանայ, մեր մեղացն պարտական եղիցի, ամէն,,:

'Ի գաւառի անդ չորին հարաւային:

,, 'Ի թուին ՉԻԸ. (1279:)

,, Շնորհօք բարերարին Աստուծոյ 'ի տէրութեանն Հասանայ. մեք Վարդան վարդապետ և մխիթարիչ ծառայք Քրիստոսի արարաք արդիւնս բազում 'ի փրկութիւն հոգւոց մերոց. տուաք եկեղեցւոյս զԱյնթեղուտն՝ որ էր հայրենիք, ո̄ր Կարապետիս. շինեցաք հնձանս մեծամախըս. արարաք քշոցս արծաթիս պատեալ ոսկւով: Եւ սպասաւորք սորբոցս՝ տէր Համազասպ և այլ եղբարք խոստացան 'ի տարին ծը ժամ, 'ի տօնի Անդրէի առաքելոյն. վեց ինձ վարդապետիս. զ̃ օր Մխիթարչին: Արդ եթէ՝ ոք յառաջնորդաց կամ պարոնաց հանել ջանայ զընծայս մեր յեկեղեցւոյս, նզովեսցի մարդն այն յԱստուծոյ, և յերից սուրբ ժողովոյն. և մեր և բովանդակ ազգի մերոյ մեղացն պարտական եղիցի յահեղ հրապարակին, կատարինչք գրոյս օրհնեին յԱստուծոյ. և որ խափանէ, դատի 'ի տեառնէ,,:

'Ի տաճարի անդ չորին հարաւային.

,,Թուին ՉԼԲ. (1283):

,,Կամաւ բարերարին Աստուծոյ ես Հասան իշխան՝ որդի Վրդին իշխանաց իշխանի. և մօր խորիշահի՝ յազգէ մամիկոնեանց, թող մեծին վա-

չէր, և բարեպաշտ ամուսին իմ Մարուս խաթուն յազգէ ուքանանց, տարաժամ և կէս աւուրց ելեալ յաշխարհէ, աւանդեցաք զհոգիս մեր, և զամէն հայրենիսն և զզաւակսն մեր Պուխթի եղբօր մեր հարազատի և աստուածասիրի. վասն սիրոյն աստուծոյ և փրկութեան հոգւոյ մեր տուաք 'ի սուրբ Կարապետս՝ ես և եղբայր իմ Պուխթ ըզմեր գանձագին գեղն՝ զԱհրամագեղ և զԱմազանցն իւրեանց ամէն հողու ջրով, և ընորդի մարդկօք. կարբի զմեր գնած և զմեր ձեռատունկ այգին, և զքարկենց փոսն և Օրդկան՝ որ սեպհական հայրենիք էր եկեղեցւոյս. և 'ի չար և 'ի դառն բերմանց ժամանակիս ելեալ էր 'ի վանացս, բազում աշխատութեամբ և յոլով ծախիւք դարձուցաք 'ի սուրբ ուխտս. ընծայեցաք և պահարան զարդարեալ ոսկւով և արծաթով: Արդ առաջնորդ ս̅բ ուխտիս տէր Համազասպ և եղբարքս սահմանեցին կատարել զյիշատակս մեր մին քառասուն պատարագել զՔրիստոս, յանուն մեր. Ա Հասանայ, Բ Մարուս խաթունին: Արդ եթէ ոք թագաւորաց կամ իշխանաց, 'ի մերոց կամ յօտարաց՝ զինչ և իցէ պատճառանօք հանել ջանայ զմեր յիշատակն 'ի սուրբ Կարապետէս՝ ըզվերոյ գրեալ բովանդակն, մարդն այն նզովեսցի յամենասուրբ երրորդութենէն, յերից սուրբ ժողովոյն, և յամենայն սրբոց,,:

'Ի տաճարի անդ 'ի վերայ աւազանին:

,,Թուին չխթ. (1300):

,,Շնորհիւ բարերարին Աստուծոյ, ես Հէձէպ Պուխթ որդի հոնային, թոռն ալուեցւոյն, և ամուսին իմ Խանա դուստր տուտկան վասն աւ աստուած սիրոյն վերստին հաստատեցաք զմիաբանութիւն հարցն մեր 'ի սուրբ Կա-

րապետս, վասն փրկութեան հոգւոց մեր, տուաք շինական 'ի շինութիւն ձորագեղին զաւետիս՝ մականուն կոնկիկ, արարաք և այլ արդիւնս: Առաջնորդ վանացս տէր Համազասպ և այլ եղբարքս խոստացան պատարագել յանուն մեր՝ 'ի տարին ժ̄ պատարագ, 'ի տօնի Կոստանդիանոսի թագաւորի· ժ̄ Յեձուպին, է̄ Նանային· որչափ կենդանի եմք մեր հարցն ամենեն՝ Խոնային և Պետլին· և յետ ելից մեր յաշխարհէ, 'ի մեր անուն կատարին անխափան· կատարիչք գրոյս օրհնին յաստուծոյ, և խափանօղքն դատին 'ի քրիստոսէ, ամէն,,:

'Ի գաւթի անդ յորին հիւսիսային·

,,Թուին պհդ· (1425):

,,Կամաւն ամենահզին Աստուծոյ ես Զաքարիա Թոռն Գամրիկէլին, և որդւոյ պարոն Աղիզբէկին, գնեցի զգեղն Մօղնի հալալ արդեանց իմոց· սուրբ Գէորգայ մուտքն սուրբ Կարապետիս էր, զիմ բաժինն էլ սուրբ Կարապետիս տուի՝ յիշատակ ինձ և ծնողաց իմոց· եթէ ոք խափանել ջանայ, մեր մեղացն պարտական լինի,,:

'Ի տաճարի անդ յորին աւագ խորանի·

,,Թուին պհզ· (1427):

,,Շնորհօք բարերարին Աստուծոյ ես պիտակ վարդապետ Սիմէոն ընծայեցի զայս նորընծայ յայսմաւուրք սուրբ Կարապետիս վասն փրկութեան հոգւոյ իմոյ, և քաւութիւն յանցանաց իմոց, որքան իմ գիրքս կայ, հանապազ զայս կարդան 'ի յատենիս, զմեզ յիշեն 'ի Քրիստոս 'ի յոյսն իմ 'ի սուրբ աղօթս իւրեանց,,:

Ի գառնէն յորին հայրապետէն.

,,Յամի ռլգ թուին (1584), ես Պօղվաթ բէկ Թոռն մալխութին գնեցի հալալ արդեանց իմոց Սոկոմհող, տուի 'ի դուռն սուրբ Կարապետին յիշատակ ինձ. և սպասաւորքն խոստացան 'ի տարին ճ պատարագ՝ կարմիր կիրակի օրն,,:

Ի տաճարի անդ յորին արձանագրեալ.

,,Թուին ռձը. (1639):

,,Զօրութբն հոգւոյն սրբոյ ես Երևանցի Աւագս որդի Աղաբաբին, և ամուսին իմ Պասատգուլ, միաբանեցաք և գնեցաք ճ ստակ մուլք 'ի փարպի, և տուաք 'ի դուռն սուրբ Կարապետին, յիշատակ հոգւոց մերոց և փրկութիւն յանցանաց, և յարեշատութիւն զաւակաց մերոց: Նու առաջնորդ սորա Զաքարիա վարդապետ, հանդերձ կ, միաբանօք խոստացան պատարագել զՔրիստոս վասն մեր զտօն մեծահրաշին յամենայն ամի: Արդ՝ եթէ ոք 'ի մերոց կամ յօտարաց, որդւոց կամ դստերաց հանել ջանայ զմեր տուեալ տասանորդն՝ դատի յաստուծոյ, և ընտրելոց նորա. որք հակառակին ճ ոսկի տուգանս տացեն, իսկ կատարօղքն օրհնին 'ի տեառնէ, ամէն,,:

Ի չէշտաշխարանէ աւետարանի.

,,Մեք հանամանցիք, ես Ճահվէլիս, ես Զաքարէս, Մկրգէս, ես Ամրուամ, ես Գրիչէս, ես զաքարի տղայ Մկրգէս, ես Աւետիս, ես հօրու տղայ Ճանէս, ես Պօչէս, ես Մկրտիչս միաբանեցաք, դիլանջու ամրուլ այգին տուինք յիշատակ 'ի դուռն սուրբ Կարապետին: Ինչ մարդ էս բանիս միջումն, այլևայլ իրօք, յետ և յառաջ

բան ասա ու կորայ՝ սուրբ Կարապետն իւր յիշատակն կորայ։ Մ՟նք սպասաւորք խոստացաք ՚ի տարւոջն է ժամ ՚ի տօնի վարդավառին, սուրբ խաչին. կատարողք աղաչանաց գրոյս օրհնին ՚ի յաստուծոյ, և ամենայն սրբոց, յաւիտեանս յաւիտենից, ամէն. հայր մեր որ՞ ՚ի թուին ռծը (1609),,։

Արձանագրութիւնք տուանց Թուականաց։

՚Ի քարէ մէջ ջրին հիւսիսայէն.

,, Շնորհիւն Աստուծոյ ՚ի տէրութե՟ պարոն Գ՚դօփալ Թամարի, իր Թագաւորաց որդի մեծին Մ՟ելքիսեդեկի գործէ. ես Ամաջան որդի գրիգորին, և ամուսին իմ Ռէուձ հէնց էլաւ պարոնաց ձեռնէ զերկիրս առին. ես չբաժնեցայ ՚ի ծառայութենէ։ Աստուած պարոնաց աջողումն երետ երկիրս երեկ, ոհանաժանք ինձ տվին հէրէնիք, հասարակաց տունս խլած էր. էգոց, հողի շարատ էր գրած, մեք էլ հասարակ ՚ի սուրբ Կարապետս ապսպարեցաք, վանաց էգոյ հողի շարինատ վերկալաք, վասն արևշատութեան պարոնաց մերոց. և պարոն աթաբակ Շահանշահի, և Շ՟րվանշահի հոգւոյն համար, և արձան գրեցաք յաւիտենական։ Ես ամմաջանս վերկալայ, և հաստատեցի պարոնացն հրամանաւ. ով որ զայս արձանս խափանել ջանայ, պարոնաց և մեր մեղաց պարտական էլնի, դատի յաստուծոյ. վարձս յուդայի և կայենի առցէ, և երից սուրբ ժողովոյն նզոված եղիցի։ Եւ սպասաւորք սուրբ ուխտիս խոստացան ՚ի տարւոջն ժը պատարագ ՚ի տօնի Հոգւոյ գալստեանն. գ՝ Շահանշահի, գ՝ Շ՟րվանշահի, է՝ ջանէ, է՝ ամմաջանի, է՝ բէսուձէ. կատարողք գրոյս օրհնին յաստուծոյ, ամէն ,,։

՚Ի վերայ տապանի խաչին.

„ զԱստուածաբնակս զայս խորանս և զխա-չս տէրունական. ես Ղանայս դուստր մեծ հազա-րապետին սարգսի որդւոյ զաքարէի որդւոյ ա-ւագ սարգսի կանգնեցի ՚ի վերայ նորակերտ վար-դապետիս Մարգարէի՝ որ սկիզբն յաշակերտու-թեան իւրոյ որդիացաւ ինձ և առաւել եղև քան զծնունդ յորովայնի. և հոգայր զօգուտն հոգւոյ իմոյ. Եւ իմ տեսեալ զյօժարութի սրտի նորա, անկայ ՚ի շինութիւն պարսպին՝ նորա առաջնոր-դութեամբ. և մինչ նա յայս բարւոյ գործոյս վե-րակացութեան էր, մերձեցաւ կատարած կենաց նորա և ՚ի հող էջ մանկահասակ. և մեզ սուգ անմխիթար եղև փոխումն նորա: Եւ ես Ղանայս աղէխարշեալ ՚ի գթոյ նորա, զայս գտի հնար ըս-փոփանաց անձին իմոյ՝ զփոքր յիշատակս զայս ՚ի դիրս նորա հաստատել, զի անմոռանալի լիցի ա-ռաջի աստուծոյ յիշատակ նորա, և անվախճան առ ՚ի սէր որդիութե նորա. „ Արդ՝ ով մանկունք նոր սիոնի՝ սիրով ցաւակցութե յիշեսջիք զտա-րաժամ փոխեցեալն զամենաշնորհն զՄարգարէ, զի պայծառ և զուարթ երեսօք տեսցէ զՔրիս-տոս, և մերս անշարժ մնասցէ միաբանութիւն ՚ի դուռն սուրբ Կարապետի, և ՚ի հանդերձեալն առաջի աստուծոյ, ամէն „:

՚Ի պատուարէ տան ջրին հաւասայէն.

„ Կամաւ բարերարին Աստուծոյ՝ Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն, ես Թէոդոս մակա-նուն չըքին՝ իշխանաց իշխան, որդի անբերդեցի քրդին իշխանաց իշխանին, որդւոյ տայիրին; Թոռն մեծ քրտին, որդի արի և քաջին վաչէի. զայս հաս-տատ արձան գրեցաք, և տուաք ՚ի մեր պապանց

հալալ գանձագին հայրենիք՝ 'ի հանդէն Սերկևի-լւոյ 'ի սուրբ Կարապետս և 'ի սուրբ կաթուղի-կէն, որ եդեալ է չիրիմ պարոն հայրն իմ, այր ամատունի՝ տէրն · խոռն կայծանովէն գուլթանա-ւի գլխովն, որ ճանապարհն գուբթայիս սերկև-լւոյ ծովն, ուչնայի ըղեղ, և կաւանոցն հայրենիք է սբ Կարապետիս ։ Նոյս իմ տուած հանդս 'ի սերկևլւոյ հանդէն էլ հէնց հաստատ հայրենիք է սբ Կարապետիս ։ Նու ես Խյուանդ խալթուն ա-մուսին անբերդեցի Քրդին, մայր չքնին և Թայի-կին կրկին հաստատեցի զմերոյ գրեալս ։ Նու եղ-բարքս խոստացանք ։ խ, պատարագել զՔրիստոս ամէն ամի ։ Նորդ՝ եթէ ոք յիմոց կամ յօտարաց հանել ջանայ զմեր ընծայն 'ի սուրբ Կարապետէս, մարդն նզովեսցի յԱստուծոյ և երից սբ ժողո-վոյն, մասն յուդայի և կայենի առցէ և մեր մե-ղացն պարտական եղիցի · կատարողք գրոյս օրհնի-ն յաստուծոյ, և 'ի սրբոյ ,,։

'Ի գաւթի անդ յորմն արևելեան ·

,, Ողորմութեամբն Աստուծոյ ես Օպքա-րիա որդի փաղթանկայ եղբայր Ջալալին, և ամու-սին իմ Խոռիշահ դուստր վաւակայ՝ միաբանեցաք սուրբ ուխտիս, և գնեցաք զՆշարակոյ նոյքն · և տուաք 'ի սուրբքս · և սոքա խոստացան Ղ օր, ժամ 'ի տօնի Թէոդոսի Թագաւորին · ով խափանէ դատի 'ի տեառնէ ,,։

'Ի գաւթի անդ յորմն արևմտեան ·

,, Յանուն Աստուծոյ՝ ես տէր Յուսիկ Երևանայ և ամուսին իմ Սօլթան խանում միա-բանեցաք՝ տուինք մեր հալալ գանձագին հայ-րենի այգին 'ի դուռն սուրբ Կարապետին · և ըս-

պատուորքն խոստացան ՚ի տարւոջն ՟Դ պատարագ, ՟Բ ինձ, ՟Բ կողակցին իմոյ. ով խափանէ վարձս՝ կայենի առցէ, ամէն ,,:

՚Ի տաճարի անդ յորմն հիւսիսային.

,, Ողորմութեամբն աստուծոյ ես Մխիթար քահանայ, աշակերտ մեծին ռուփինայ քահանայի՝ ետու զիմ այգին ՚ի սուրբ ուխտս՝ որ է տանձուտ. և սպասաւորքս սոցա սահմանեցին ՚ի տարին ՟Դ օր ժամ. ՚ի տօնի սրբոյն Յակոբայ, ՟Ա ինձ, ՟Ա խաչկայ. ՟Ա ռատինկայ, ՟Ա գինէվարդին. որ չառնէ, ՅԺԸ հայրապետացն նզովի ,,:

՚Ի տաճարի անդ յորմն հարաւային.

,, Յուսով անմահին Աստուծոյ՝ ես Զան-խաթունս դուստր աւագ պարոնին և Թաքան խա-թունին, միաբանեցայ սուրբ Կարապետիս՝ ետու զիմ կէս այգին՝ որ խութուխթէ գնելի զուս-փանց փոխ: Եւ տէր Համազասպ և եղբարքս խոս-տացան տարին ՟Դ օր ժամ, ՚ի տօնի Մեկղի. որչափ կենդանի ենք, իմ մօրն առնեն, և յետ ելից իմ՝ ինձ. որ խափանէ դատի ՚ի տեառնէ ,,:

՚Ի տաճարի անդ հարաւային յորմն.

,, Կամաւն անմահին Աստուծոյ, ես Մխի-թար և Պետրոս քահանայքս միաբանեցաք սուրբ ուխտիս, և տուաք նորընկանին մեր բաժին, և այլ արդիւնք ՚ի շինութի եկեղեցւոյս. և սոքա հա-ստատեցին ՟Գ օր ժամ, ՟Բ մեզ, և ՟Ա յովաննէս սար-կաւագին կենդանութեան ՚ի տօնի Դաւթի և Յակոբայ. ով չառնէ նզովի ՚ի Քրիստոսէ ,,:

'Ի պատուհանատան չորին հորատայնի.

„Ես Աշոտ որդի Երկաթոյ տարաժամ ե֊լայ յաշխարհէ, տուի զիմ այգին 'ի սուրբ Կա֊րապետս. և սորա խոստացան 'ի տարին Ը պատա֊րագ, Ե ինձ, մէկ իմ հօրն, մէկ իմ մօրն. և ես Ուղուքան մայր Աշոտոյ իմ հայրենիք, թէ ինչ.ք, տուի որ Կարապետիս յետ ելից իմոց: կատարողքն օրհնին յաստուծոյ„:

Արտաքոյ տաճարին չորին հորատայնի.

„Շնորհօքն Քրիստոսի. ես Աղադոն է֊րէց յԱրենոյ որդի Մեդարայ միաբանեցայ սուրբ ուխտիս, գնեցի զայգին խառաբէլանց, և ետու 'ի սուրբքս. և սպասաւորք սորա սահմանեցին 'ի տարին Ը ժամ, 'ի տօնի Կիւրղի. ով չառնէ նզո֊վեսցի 'ի Քրիստոսէ„:

Բաց յայսոցիկ նշանակեալ կալուածոց վա֊նացս յարձանագրութիւնան անդ, էին և այլ յո֊լով անշարժ կալուածք նուիրեալք 'ի բարեպաշտ ժողովրդոց՝ որք նշանակին մի առ մի 'ի կոնդակի գրեցելոյ ի Զաքարիա սարկաւագէ, այլ յաղա֊գըս չձանձրացուցանելոյ զընթերցողսն թողաք 'ի բաց զայն ամենայն:

405, Ա. Ազատահայրք կամ տասանորդք վանացս ԺԸ ցու֊ցանելոյ նոյն Կոնդակի, և այլ գրուածոց. բայց որոց գոն թուականք՝ այնք ոչ են սկզբնաւորու֊թեան պաշտաման նոցին, այլ յորում ամի և դի֊պողութիւն ժամանակի եղեալ է ըստ բացայայ֊տութեան արձանագրաց, յիշատակարանաց մա֊տենից և այլոց ծանօթութեանց նորուն սարկա֊ւագի և մեր:

Ա, Գրիգոր լուսաւորիչ մեծն պարթև նախ կին հիմնադիր և կառուցող մենաստանիս, և որ֊

պէս ընդհանուր կաթուղիկոս ազգի Հայոց, Համարի և տեսուչ կամ՛ նախկին վանահայր այսր մենաստանի՝ որպէս և ամենայն կրօնաւորանաց 'ի նըմանէ կառուցելոց. քանզի և յայս տեղի երբեմն երբեմն յամառնային ժամանակի պարապէր յերկնաւոր աղօթս և խրախոյս մատուցանէր քաջալերութե՝ որպէս 'ի սմա կացելոցն բոլորովիմբ հըրաժարելոցն յաշխարհէ, նոյնպէս և ժողովրդականացն ինքեան յանձնեցելոյ հօտին:

Ե, Աբուղոս ամն կարգել 'ի լուսաւորչէ անտի տեսուչ և վանահայր յայսմ. ուստի և կոչեցաւ երբեմն այս մենաստան (Աբուղի վանք), որպէս յիշատակի 'ի Մարտիրողք Ճառընտրի:

Զ, Ղազար փարպեցի՝ 'ի ժամանակի անդ կաթուղիկոսութեն Յովհաննու մանդակունւոյ. զի որպէս էր վանահայր և տեսուչ Կաթուղիկէ եկեղեցւոյն Վաղարշապատու ըստ Ասողկայ պատմագրի, նոյնպէս և այսր վանաց:

Է, Յովհան անուն ամն 'ի կենդանութեան Ղազարայ փարպեցւոյ՝ յոր անուն և մենաստանն կոչեցաւ (Յօհաննու վանք, և կոչի ցարդ ևս:

Ը, Աշոտ դունեցի յերկրորդում ամի թուականութեն Հայոց. այն է, յամի տեառն 553. և սա ինքն քակեալ զփայտայարկ եկեղեցւոյ մենաստանիս՝ ետ կառուցանել կոփածոյ քարամբք, այն ինչ տակաւին չունէր զպաշտօն վանահայրութե:

Թ, Բարեղամ՝ որ մարդասիրութեամբ հիւրընկալեաց զՄովսէս եպիսկոպոս Յուրտաւոյ, և գաւառ 'ի ժողովն դվնայ վասն ընտրութեան ա Աբրահամ կաթուղիկոսի. յիշատակի սա յինչ ինչ գլուխս Ե հատորոյ պատմութեան Ուխտանէս եպիսկոպոսի:

Ժ, Յօհան 'ի թուականին Հայոց ՃԾԲ, այն է յամի 703. և ըստ վարուց սրբոց՝ Յովհաննէս, 'ի ՃԿԶ, կամ ՃԿԷ թուին՝ (թէ չիցէ այլ ոք) որ

ընկալաւ սիրով զՍահան գողթնացի և յուղե-
ճարկ՝ ընդ նմա գնելով և զոմանս ի կրօնաւո-
րացն իւրոց վանաց. վարք սրբոց հատոր Ա, երես
199. և 213:

Ը, Մխիթար ի թուին հայոց ՆՁԲ, յամի
1033. յաւուրս սորա եկն Երեմիա հայրն Մարմա-
շինու յայս մենաստան և աստ վախճանեցաւ. և
կայ գերեզման նորա անդ՝ որոյ և զարձանագիր
շիրմի, և զանցսն նորին ի հնագոյն մատենէ եղե-
լոյ ի վանս Սանահնի՝ յառաջ բերէ նոյն Զաքա-
րիա սարկաւագ:

Թ, Խաչիկ ի թուին ՈԻ, յամի 1171. ստու-
գէ զայս արձանագրօք խաչի եղելոյ ի գերեզմա-
նոցի մենաստանիս:

Ժ, Մկրտիչ ի թուին ՈՂԲ, յամի 1243. յա-
ւուրս Կոստանդին կաթուղիկոսի ըստ յայտարա-
րութեան արձանագրի նորուն իսկ կաթուղիկոսի՝
որ ի վէր անդր (406):

ԺԱ, Համազասպ ի թուին ՉԻԸ, յամի 1279.
յազգէ մամիկոնէից՝ այր փառահեղ և ահարկու՝
որ ի ժամանակի առաջնորդութեան իւրոյ փա-
թամացոյց զմենաստանն. և ստացաւ զբազում գը-
րեանս և յաւել ի գրանոց մենաստանիս՝ յորոց
արդէն քանիք գտանին աստ ի գրանոց աթոռոյս
Էջմիածնի. որպիսի են մի հատ Ճառընտիր մեծ-
գրութեամբ, և պատմութիւնն Աղուանից հան-
դերձ պատմութեամբն Սոկրատայ յունի, և ըն-
դարձակ պատմութեամբն Սեղբեստրոսի հայրա-
պետի՝ թարգմանեալ ի Գրիգորէ ձորափորեցւոյ:
Անուն սորին յիշատակի ի վէր անդր և յարձա-
նագրութիւնս եկեղեցւոյ մենաստանիս:

ԺԲ, Սահիլ ի թուին ՉԿ, յամի 1311. զայս
ուսաք՝ աստ սարկաւագն, յարձանաց խաչին՝ յո-
րում գրեալ էր. զՀայր Յոհաննու վանից, ա-
ռաջնորդ Ո Իրակայ և ամենայն անբերգու յի-

շեցեք ՚ի քրիստոս. Թուին ՉԿ:

ԺԳ, Ներսէս ՚ի Թուին ՉԿԷ, յամի 1318. յազգականաց վերոյիշեալ Համազասպայ, զոր յառաջ բերէ սարկաւագն ՚ի յիշատակարանաց գըրոց. յիշատակի և ՚ի յեռնագրութեան աւետարանի ՚ի ՉԾԹ, թուի:

ԺԴ, Աբրահամ ՚ի Թուին ՊԱ, յամի 1352. զոր ստուգէ յարձանագրաց եկեղեցւոյն և ասէ. յաւուրս սորա ամենայն ինչ հասարակաց էր. և ոչ ոք ստանայր առանձին ինչ:

ԺԵ, Կարապետ ՚ի Թուին ՊՂ, յամի 1441. յաւուրս նորոգութե՟ան աթոռոյ կաթուղիկոսութեան յԷջմիածին. և էր սա մի յանդամակցաց ժողովոյն՝ որ վասն Սիւրակոսի վերապետեցւոյն և էր ինքն եպիսկոպոս:

ԺԶ, Գաբրիէլ եպիսկոպոս. սա էր՝ ասէ սարկաւագն Օձաքարիս, աթոռակալ յԷջմիածին յաւուրս Սիւրակոսի վերապետեցւոյ՝ որ ՚ի վախճանի պատմութեան մեծոբեցւոյն յիշատակի է Սիւրակոսի վարդապետի ուրումն. և ապա եղև առաջնորդ այսր մենաստանի. և գոլով աշխատասէր ՚ի գրչութեան, գրեաց զբազում գրեանս որ ՚ի նախնեաց. յորոց յիշատակարանաց ստուգի առաջնորդութի սորին ՊՂ նորուն Օձաքարիսյի:

ԺԷ, Գրիգոր՝ միանգամայն և առաջնորդ վանաց Բջնւոյ. և ինքն ՚ի բնակչաց նոյն Բջնի գեղջ. սա յաւելու զբազում գրեանս ՚ի գրանոց մենաստանիս՝ որոց և յիշատակարանք յայտնեն զժամանէ՝ ասէ զաքարիա սարկաւագն:

ԺԸ, Խաչատուր՝ մականուն ալթիղօլաձ, որ ետ շինել վասն վանացն զմի ծիթիհանք և զմի ջըրաղաց:

ԺԹ, Նահապետ՝ միանգամայն և առաջնորդ վանաց սրբոյն Սարգսի՝ որ յՈւշի գիւղ. և սա յաւել զբազում գրեանս ՚ի սաղմոսավանք:

Ի, Միքայէլ՝ զոր ստուգէ սարկաւագն Զաքարիա ՚ի բանադրանաց թղթոյ միոյ:

Իա, Գրիգոր վարդապետ կարբեցի ՚ի թուին ՌԺԹ. յամի 1570. զոր ստուգէ նոյն սարկաւագ պատմութեամբ ծերունեաց:

Իբ, Մատթէոս այր խոհեմ և երկիւղած, ՚ի թուին ՌԽԲ, յամի 1593. ըստ բացայայտելոյ յիշատակարանի աւետարանի միոյ:

Իգ, Ղուկաս ՚ի թուին ՌԽԸ, յամի 1599. միանգամայն և առաջնորդ Տեղերոյ վանաց, սա տայ գրել զաւետարան մի:

Իդ, Յովասափ ՚ի նոյն գեղջէ վանացս՝ յազգէ սէթեանց ՚ի թուին ՌԿԷ, յամի 1618. ստուգի ՚ի կազմել տալոյն նորա զճաշոց մի:

Իե, Յովհաննէս կարբեցի ՚ի թուին ՌՀԸ, յամի 1629. յաւուրս սորա յաւար առաւ մենաստանն և դարան նորա յելուզակաց՝ Ջալալի կոչեցելոց՝ (405):

Իզ, Ղուկաս բազմահանճար վարդապետ առաջնորդ և դպրապետ՝ ՚ի թուին ՌՁ, յամի 1631. կարգեալ ՚ի Մովսէս կաթուղիկոսէ սիւնեցւոյ՝ յորոյ աշակերտաց տեղեկանայ նոյն սարկաւագ:

Իէ, Յովհաննէս եպիսկոպոս կարբեցի այր սուրբ և գիտուն՝ ՚ի ՌՁԳ, յամի 1634:

Իը, Առաքել վարդապետ դաւրիժեցի պատմագիր ՚ի թուին ՌՁԵ, յամի 1636. կացեալ ամ մի յառաջնորդութեան՝ հրաժարի և գայ յԷջմիածին:

Իթ, Զաքարիա եպիսկոպոս վաղարշապատեցի ՚ի թուին ՌՁԶ, յամի 1637. այր ժիր և հանճարեղ. սա է որ յիշատակի յարձանագրութիւնս Էջմիածնի ՚ի համարն (17). զորմէ և չամչեան Միքայէլ յԳ, հատոր, երես 648:

Լ, Յովհաննէս վարդապետ կարբեցի ՚ի թուին ՌՃ. յամի 1651, յորում ամի վախճանեալ

ամփոփեցաւ մարմինն 'ի միջին տաճարի անդ առ որմով հիւսիսային դասուն մերձ 'ի դուռն մատրան որ 'ի լուսաւորչէ, և տակաւին գտանի տապանաքարն 'ի վերայ և ամբողջ գրուած նորին ըստ այսմ ։

,, Այս է տապան գերեզմանի,
կարբեցի օհանս ՞սբ վարդապետին,
որ վախճանեցաւ ռճ թուին ,, ։

Լա, Սարգիս վարդապետ կարբեցի 'ի թուին ռճիը. յամի 1679. 'ի սորա ժամանակի էր նա ինքն Զաքարիա սարկաւագ այսր մենաստանի և գրիչ պատմագրութեանս այսորիկ. որ և գրեաց զպատմութիւն յերկուս հատորս՝ առեալ ինչ ինչ 'ի հնոց և 'ի հնացորդացն յԱռաքելէ դավրիժեցւոյ և 'ի գործելոցն յիւրում ժամանակի. և աւարտէ զայն 'ի թուին հայոց ռճխը ։

ԼԲ, Յակոբ վարդապետ 'ի ռճձգ թուին, յամի 1734. նորոգող հնացեալ մատրանն որ 'ի լուսաւորչէ անուի. (405) ։

406, Սերկևլի. հին գիւղ յիշատակեալ 'ի պատմագիրս վասն մահուն Սահակայ պահլաւունւոյ հօր Գրիգորի մագիստրոսի. և է 'ի սարահարթի ձորոյն Քասաղ գետոյ մերձ 'ի Յօհաննավանք 'ի հիւսիսոյ նորա իբրև քառորդ ժամու, և է անբնակ այժմ. զի 'ի մասնաւոր անդաստանս սորին սերմանեն բնակիչքն 'ի Յօհաննավանք ։ 'Ի գրուածս կալուածոց Յօհաննավանաց յիշատակի վասն անդաստանի միոյ 'ի սահմանս այսր գեղջ յանուն Սահակայ պահլաւունւոյ (Սահականոց) 'ի յիշատակ մահուան նորա յանգէտս ։

Եկեղեցի գեղջս 'ի կոփածոյ քարանց փոքր գրութեամբ առանց սեան. սալքարինք տանեացն անկեալ են խապառ, այլ որմունք նորա և ներքին առաստաղ կամարին յամբողջութեան կան. չգտաւ ինչ գրուած յորմունսն. ուստի և անուն եկեղե-

ցուոյն անյայտ։

407, Վարէ. գիւղաքաղաք յարևմտից վե-
րոյիշեալ վանաց Հնահանու՝ հեռի 'ի նմանէ իբ-
րև քառորդ մի ժամու. աւերակ նորա ընդարձակ
'ի դիւր տեղւոջ. յառաջքան զտիրել երկրիս մե-
ծի կայսերութեանն Ռուսաց ոչ կայր 'ի նմա բը-
նակիչ, այլ 'ի գաղթիլ պայազիտցւոց յաւմանեն
իշխանութենէ յայս երկիր յամին 1829, բնակեցան
և բնակին 'ի նոցունց անտի 'ի հայազգեաց և են
տունք 84.

Տէնք տանց առաջին բնակչացն թէպէտ բը-
լորովին քայքայեալ էին, բայց յարդեան նորո-
գութեան գտան յոլով ներքնայարկք 'ի կոփա-
ծոյ քարանց ընդ փլատակօք, որպէս և յայլ բա-
զում տեղիս այսր նահանգի։

Գտանին յայսմ ընդարձակ տարածութե-
ան աւերակաց տանց գիւղաքաղաքիս հինգ եկեղե-
ցիք գլխովին աւերեալք, բայց վեցերորդն մեծ-
ութեամբ կայ 'ի կանգուն յամրութեան 'ի
միջավայր տեղւոջ գերեզմանատանցն՝ կառուցեալ
օրոցաձև 'ի վերայ չորից սեանց 'ի սրբատաշ քա-
րանց. ունի զմի և եթ սեղան տեղի պատարագե-
լոյ և զերկուս աւանդատունս յաջմէ և յահեկէ
սեղանոյն և զերկուս դրունս. արևմտեանն կայ
հիւսեալ քարամբք։

Զայս եկեղեցի ետ կառուցանել արդեւք
խուրոմ խօջայ պարոն Ալվազն բնակիչ տեղւոյս 'ի
թուին հայոց ռ.ճխ, յամի 1691. և արձանագիր յի-
շատակի նորին գտանի յորմն հարաւային արտա-
քուստ՝ յարևմտից դրան այնր կողման՝ ըստ այսմ
օրինակի։

,,Կամօքն մարդացեալ բանին Աստուծոյ և
բարեխօսութեամբ և օժանդակութեամբ մաքուր
ծնողի իւրոյ կուսին Մարիամու, սկիզբն եղև շի-
նութեան սրբոյ եկեղեցւոյս՝ որ յանուն սուրբ

Աստուածածնի, 'ի գիւղաքաղաքին 'ի Կարբի՝ ուր դեամբք և գոյիւք խօջայ պօղոսայ պարոն Ա.ջվազի 'ի Թուականին Հայոց ռՃխ, ամին՝ 'ի Թագաւորութեանն պարսից շահ Ա.տուլային, և 'ի բռնակալութեան երկրիս Արարատեան Զօհրայ խանին, և 'ի հայրապետութեն սրբոյ աթոռոյն Էջմիածնի տեառն Փ, սհապետ կաթուղիկոսին և խըրոխտի և ալերձի, յառաջին յառաջնորդութեան սրբոյ ուխտին մերոյ Յօհաննու վանք տեառն Սարգսի հեզահոգի վարդապետին: Իսկ կատարումն սորին եղև ռՃխբ թուին, յաւուրս նոյն հայրապետի և նոյն առաջնորդի, բայց ոչ նոյն թագաւորին և իշխանին: որք պատահիք այսմ արձանի կարդալով կամ լսելով՝ յիշեսջիք միով ողորմեայիւ զպարոն Ա.ջվազն հանդերձ ծնողօք իւրովք և ամենայն արեանառու մերձաւորօք, զի և դուք յիշեալ լիջիք յառաջի անմահ գառին Աստուծոյ: զՄարկոս յիշեսջիք,,:

Զշինողէ եկեղեցւոյս զպարոն Ա.ջվազէ գրէ Զաքարիա սարկաւագ զբազում գովութիւնս. և զկնի բազմապատիկ ջերմեռանդութեց և բարեպաշտութեանցն յարէ և զշինութենէ սորին՝ յորում ժամանակի էր և ինքն Զաքարիա. ,,Եւ 'ի վերայ այսր ամենայնի յաւել և սա մեծ բարութիւն, զի շինեաց 'ի մէջ գեղջին (կարէզոյ) եկեղեցի մեծ, հոյակապ կոփածու քարամբք, չորիւք սեամբք, կաթուղիկէ. և բազմացոյց զանօթն և զգեստն, և շուրջանակի պարսպեաց ապառաժ քարամբք. այլև եբեր ջուր յՄրդկան գեղջէ փողրակաւ և քնկաւ մինչև 'ի դուռն եկեղեցւոյն, զի 'ի ձմռան եղանակի մի՛ պակասեսցի ջուր 'ի գեղջէն. հատոր Է, գլ-խ ԿԳ,,:

Պարիսպ եկեղեցւոյս խախտ քայքայեալ և անհետացեալ է, միայն նշմարին հիմունքն. ջուրն որ յՄրդկան գեղջէ, յաղագս աւերման ջրանցիցն

չէք 'ի մէջի. 'ի վերայ տանեաց եկեղեցւոյն ոչ գոյ այժմ կաթուղիկէ և ոչ յառաջագոյն եղեալ է. այլ բաժան յեկեղեցւոյն յարևելից նորա գոյ կրկնայարկ քառակուսի շինուած 'ի խարտեալ քարանց. ներքնայարկն նորա քառակուսի կամարայարկ. իսկ վերնայարկն սիւնազարդ զանգակատուն. Թերևս զսա յիշէ Զաքարիա սարկաւագ (Քանաքեռցի):

Մենաստան Աւշի գեղջ.

408, Մենաստան յարևմտից գեղջն Աւշւոյ իբրև քառորդ մի ժամու 'ի վերայ բարձրաւանդակ բլրակաձև վայրի՝ յստորոտի անդ Արագած լերին հեռի 'ի կարբւոյ յարևմտից նորա աւելի քան զկէս ժամ: Կառուցաւ սա յառաջն 'ի սրբոյն Մեսրովպայ մեծ վարդապետէ յանուն սրբոյն Սարգսի զօրավարի՝ զորոյ զնշխարսն բերեալ նորին մեծ վարդապետի 'ի պարսից 'ի Հայաստան՝ ամփոփեաց աստէն. և արար զտեղին վանք միաբանակեցաց 'ի սկզբան Երդ դարու, որպէս աւանդի յայսմաւուրս յ31, յունվարի և կոչի Աւշւոյ Սուրբ Սարգիս:

Պարսպապատ է այս մենաստան, և է պարիսպ նորա երկար քառանկիւնի 'ի հիւսիսոյ ընդ հարաւ՝ կառուցեալ 'ի հասարակ քարանց. 'ի միջին տեղւոջ պարսպի են տաճարքն՝ եկեղեցիք երեք կիցք իրերաց. հիւսիսայինն փոքր 'ի հին աւուրց. և ունի փոքրիկ դուռն մի յարևմտից. և գտաւ Թէպէտ արձանագիր ինչ 'ի վիմին եղելոյ 'ի վերայ դրանն, այլ գոլով կարի հնացեալ՝ մնաց անվերծանելի. միջին տաճարն միջակ մեծութեամբ առանց սեան՝ ունէր կաթուղիկէ վայելչաձև, այլ յամին 1827, անկաւ կործանեցաւ յերկրաշարժութենէ, որպէս կաթուղիկէն, նոյնպէս և տանիքն հանդերձ արևմտեան որմովն բոլորովիմբ. և ա-

ւանդէն ականատեսքն թէ՝ գերեզման սրբոյն Սար-
գսի էր յայսմիկ տաճարի, և այժմ ծածկեալ
ընդ փլածովքն կայ յանյայտութեան. կամարա-
յարկն միակ սեղանոյ այսր տաճարի հանդերձ ա-
րևելեան որմովն գտանի 'ի կանգուն: Երրորդ տա-
ճարն՝ այն է, գաւիթն միջին տաճարի կառուցեալ
'ի հարաւոյ նորա անմիջապէս կից ընդ այն 'ի վե-
րայ չորից միաստանի սեանց վայելչաձև կամարա-
կապ. 'ի կամարաց սորին և 'ի տանեացն խախտեալ
աւերեալ կան կիսովչափ: 'Ի վերայ հարաւային
դրան միջին տաճարի՝ որ ընդ գաւթաւս, դնի այս
թերի մնացեալ արձանագիր:

„ Թվ. չհը, (1329) կամաւ ամենահին Աստու-
ծոյ և ողորմութեամբ պարոն Բրդէն, խու" „:

'Ի ներքսագոյն յորմն հարաւային այսր գաւթի դնի այս
արձանագիր:

„ Թվ. չհը, կամաւ ամենահին Աստու-
ծոյ և ողորմութեամբ պարոն Բուրդէնի, և Խուշ-
խաթունին ես Հոռոմ էրէց որդի մաւր և հաւմայ,
և ամուսին իմ Սելու խաթուն միաբանեցաք
սուրբ զաւրավարիս տուաք մեր հազար մանին
այգին. . . . . „:

Իսկ արձանագիր շինութեան այսր տաճարայարկի գը-
տանի 'ի վերայ արևմտեան մեծ դրան սորին արտաքուստ 'ի դի-
աց վէմն մեծ այս օրինակ:

„ Աստուծոյ ողորմութեամբն, սբ Սարգսի
զաւրավարիս աւգնութեամբն, աշխարհակալու-
թեանն այլ ղանացն, տէրութեան տեղւոյս աւագ
Սարգսի շինեցաւ հաստատ մեծ տաճարս Աստու-
ծոյ 'ի կանգնումն խախտեալ եկեղեցւոյս՝ զոր էր
շարժեալ 'ի հիմանց, 'ի տէր Յոհաննիսէ 'ի հալալ
ընչից իւրոց. որում ողորմեսցի նմա Քրիստոս,
տացէ 'ի լուսեղէն յարկացն հոգւոյ նորայ. և տէր
համազաս.... որք աշխատեալք էն 'ի սմա. զհա-

մայն միայքանք սուրբ ուխտիս յիշեցէ՛ք 'ի տէր. 'ի թուիս չԺԳ. (1264),, :

Կացարանք հոգևորական ուխտի սորին իսպառ յաւերութեան կան. գտանի 'ի մէջ պարսպի մենաստանիս 'ի հարաւոյ գաւթին ընական քարայր մի :

Յիշատակին 'ի գիրս քանի առաջնորդք այսր մենաստանի : Ոսկան վարդապետ՝ որ և եպիսկոպոս, որ եկաց աստ աշակերտօքն իւրովք յամի իբր 1654, և պարսպեաց զայս տեղի և շինեաց ըղտունս բնակութեան : Նարսեղ վարդապետ յամի 1443, ըստ յիշատակարանի աւետարանին նուիրելոյ յայս մենաստան : Միքայէլ եպիսկոպոս 'ի քանաքեռ գեղջէ յաւուրս Փիլիպպոս կաթուղիկոսի հաղբակեցւոյ :

409, Մշէ գիւղ մերձ յայս մենաստան յարևելից՝ բնակեալ այժմ յայլազգի մահմէտականաց՝ տունք 29. եկեղեցի գեղջս 'ի հնոց 'ի սրբատաշ քարանց կայ աւերակ. և միայն մասն ինչ որմոյ նորա կայ 'ի կանգուն :

## Սաղմոսավանք

### այն է սուրբ Սիոն եկեղեցի.

410, Այս մենաստան յԱրագածոտն գաւառի, յարևելից նոյն Արագած լերին և յարևմտից Արայի՝ 'ի վերայ բարձրադիտակ սարահարթի ձորոյն Քասաղ գետոյ յեզեր նորին արևմտեան, և ձորն որ առաջի՝ զարհուրելի իմն խորութեամբ. հեռի գտանի ուղղակի ընդ հիւսիս 'ի Յօհաննավանից իբրև ժամ մի : Հիմնարկութիւն մենաստանիս ըստ ազգային աւանդութեանն լեալ է 'ի ժամանակէ անտի սրբոյն Գրիգորի լուսաւորչի, որպէս և ցուցանէ առանձին կոնդակն յանուն

այսր վանաց՝ նորոգեալ ՚ի մագաղաթի ՚ի Թուա-
կանին Հայոց ռՀբ, ՚ի յամի 1623, յաւուրս վար-
դապետութեանն Մովսէսի սիւնեցւոյ՝ որոյ կե-
նիք տեսանի դրոշմեալ անդէն ՚ի կոնդակի յեր-
կուս տեղիս սներանգ դեղով. տեսակ կնքոյն՝ ՚ի
մէջին տեղւոջ կիսով ՚ի վեր պատկեր փրկչին,
յերկուս կողմանս և կիսով ՚ի վայր վերտառու-
թիւն այսպիսի. ,, Յի Քի ծառայ Մովսէս վար-
դապետ ՚ի վիճակ Տաթեւի ,,. յորում նշանակի
բաց յայս մենաստանէս և անապատ անուանեալ
տեղի ՚ի խորաձորի անդ. գտանին ՚ի խորաձորի
աստ ինչ ինչ մասնաւոր տեղիք աղօթից և խրճի-
թաց՝ կոչեցեալ ՚ի բնակչաց ևս անապատ՝ յանուն
Սաղմոսավանաց, Յովհաննավանաց ևն. յորոց մին
հանդէպ Մօղնի գեղջ ՚ի ձորի անդ ունէր տա-
ճար ՚ի խարտեալ քարանց և պարիսպս և խրճի-
թս աղօթաւորաց, այլ յամին 1834, ՚ի գարնանն
կարի առատացել ջուրց գետոյն ՚ի հալոցաց ձենց
յաւուրս քառասնորդաց պահոց, հիմնովին խլել
զայն իսպառ անհետ արար: Օդ և ջուր մենաս-
տանիս առողջարար և տեղին հովասուն. հայե-
ցուածն կարի ընդարձակ՝ և գրեա թէ ընդ բո-
վանդակ դաշտն Արարատեան:

Շէնք մենաստանիս և եկեղեցւոյ նորա ՚ի
ժամանակէ անտի լուսաւորչին մինչև ցամն 1215,
թէ յորպիսի դրութեան եղեալ է, և ո՛յք ոմանք
շինութիւն և նորոգութի արարեալ իցեն՝ չէ՛ք
ինչ ծանօթութիւն. ո՛չ նշանակին և ՚ի յիշատա-
կեալ կոնդակին. այլ ՚ի նոյն յիշել թիւ Վա-
չէ իշխանաց իշխան տայ կառուցանել տաճար վա-
յելուչ ՚ի կոփածոյ քարանց, և է կրկին. առա-
ջինն՝ փոքր և անսիւն և ունի զմի սեղան խորհր-
դոյ պատարագի. իսկ երկրորդն՝ որ համարի գա-
ւիթ նորա, մեծ քան զայն կառուցեալ ՚ի վերայ
չորից սեանց. երկոքին ևս ունին զփոքրիկ կա-

Թուղթկէս 'ի միջավայր տանեացն. այլ չէնք նոցա խախտեալ՝ և յինչ ինչ տեղեաց որմոց և տանեացն անկեալ են քարինք և լքեալ կայ 'ի պահպանութե_նէ. ուրանօր բնակին այժմ յազգէ հայոց՝ տունք 4, և աղօթատեղի է նոցա այդ եկեղեցի. և 'ի մահմետականաց՝ տունք 6 ։

'Ի վերայ դրան մեծին տաճարի դնի այսն արձանագիր շինութեանն՝ ըստ այսմ ։

„ Թվ. ՈԿԴ, ( 1215 ) ։

„ 'Ի հրամանաւ սիրոյն Քրիստոսի յորդո_րեալք, և 'ի սէր արարչին վստահացեալք՝ ես Վա_չէ իշխանաց իշխան որդի Սարգսի, և ամուսին իմ Մամա խաթուն ծանեաք զաւրութիւն տեառն մերոյ, և շինեցի զեկեղեցիս սուրբ Սիոն 'ի փըր_կութիւն հոգւոց մերոց, և յիշատակ ամիր սպա_սալար Զաքարէի, և 'ի պահպանութիւն կենաց որդո նորին Շահնշահի՝ որ է լոյս աչաց և ապա_ւէն կենաց մերոց. և ողորմութեամբ պարոնին տվաք զգեղն Մղկունծ 'ի սուրբ Սիոն սաղմոսա_վանացս, և հաստատեցաք զաւագ բեմն ամէն շա_բաթ աւր պատարագ Զաքարիայի՝ որ կատարի անխափան մինչև 'ի հաստատութեան է սուրբ ուխտս: Լա զանծագաւիթ այգին յիւր եկե_ղեցիս. 'ի նորագեղ քարափաւն և գետաւն, և 'ի նորաշինիկ զաղբիւրատնիսն դռնաբացէք եկեղե_ցւոյս „ ։

'Ի վեր քան զվերագրեալ արձանագիր 'ի վերայ նոյն ևս դրան գրի և այս ինչ ։

„ Շնորհաւք բարերարին Աստուծոյ ես Վաչէ որդի Սարգսին որդո Վաչէի, և Տաւրխու_շահի դուստր մարզպանա Մամիկոնէից գնեցի զԱ_րերունս 'ի մեծ պարոնէն Շահնշահէ և ետու 'ի վանս Սաղմոսի, և զկէսն իմ եղբաւրն Հասա_

նա՝ որ չէն պահէ վանիցս համար. և յորժամ եհաս ինձ փոխիլ 'ի կենցաղոյս տարաժամ և կէս աւուրց, յանձնեցի զհոգիս իմ և զգոյս հաւր և մաւր իմո, և գնեցին յընչից իմոց ժռ, սպիտակի զՄղկունծ յԽուանէէ յորդո Տաննշահի՝ որ է սեպհական տէր գաւառիս Մնբերդո՝ զոր յառաջ պապն իմ Մաչէ գնել էր 'ի մեծ սպարապետէն Օտաքարէէ և գրել 'ի դուռն եկեղեցւոյս՝ զոր խափանել էր 'ի չար պատահմանց եկել 'ի վերա աշխարհիս. դարձեալ վերստին գնեցաք և գրեցաք. զի որ զանձայգին յաւշական և զտուննն տորոզոնոնց 'ի կարբի իւր հայրենիքն ետուն յիմքն արնասեւ գրեցին զհամբարձումն և զգալուստ հոգոյն պատարագել զՔրիստոս յանուն Կուլթաղի. որք խափանէ յիմոց կամ յաւտարաց անէծս առցէ յերից սուրբ ժողովոյն, և պատասխանի տայ առաջի Աստուծոյ, և կատարիչքն աւրհնին 'ի Քրիստոսէ, ամէն ,,:

Կից ընդ հարաւային որմ գաւթի տաճարին է՛ և եկեղեցի մի անսիւն և ունի զմի և եթ սեղան. և կամար սեղանոյն ձգեալ 'ի խոնարհ՝ ունելով 'ի վերայ զփոքրիկ սենեակ իբրև մատուռըն, և դռնակ նորա ընդ հիւսիս՝ ընդ որ հնար է սանդղովք ելանել. ուր ըստ վկայելոյ արձանագրութեանն՝ որ զկնի, պահէին զմատեանս այսր մենաստանի. միակ դուռն տաճարիս 'ի հիւսիսոյ 'ի մէջ յիշատակեալ գաւթին.

Արձանագրութիւն շինութեան եկեղեցւոյս գնի 'ի ներքուստ յորմն ներքին դրանն՝ ցոյց օրինակ:

,, 'Ի Թվ. . . ձդ. ես Գուրգս և ամուսին իմ Խորիշահ շինեցաք զգրատունս և հաստատեցաք զմատուռս յանուն դստեր մերո Մամա խաթունին՝ որ տարաժամ փոխեցաւ 'ի ք͞ս. և մեք զարդիւնք նորա արարէք խաչ ոսկի, և աւետարան

ոսկետուփ, է Նափորտ և վառ. և զարդք եկեղեցւո, և սահմանեցաք զՅայտնութիւն և զԶատիկըն Ճրագալուցին, զԱստուածածինն և զսուրբ Խաչն Նաւակատօքն յայսմ խորանի պատարագել զՔրիստոս յանուն Սամս խաթունին. կատարիչ գրոյս աւրհնին յԱստուծոյ. ով խափանէ դատի տեառնէ, ամէն,,:

Տանիք եկեղեցւոյս 'ի միջանկիտին ունի ըստ միւսոցն զփոքրիկ կաթուղիկէ՝ յորոյ միջին կողմըն գտանի երկկարգ արձանագրութիւն զբոլորակութեամբն՝ յայս օրինակ:

,, Թվ. ՌՃԺԸ, ( 1669 ) Նորոգեցաւ սբ. Աստուածածինս..... հոգաբարձութեամբ Գաբրիէլ վարդապետի, աւժանդակութեամբ.....,,:

Ասացարանք հոգևորական ուխտի վանացս խապառ անհետացեալ՝ մինչև չնշմարիլ և տեղւոյ այնց: Յիշատակին յինչ ինչ գրուածս վանահարք այսր մենաստանի: Գրիգոր վարդապետ ականատես կոչեցեալ յաւուրս շինութեան եկեղեցւոյս 'ի Սաչէ իշխանէ՝ ըստ աւանդելոյ վերոյիշեալ մագաղաթեայ կոնդակին: Սարգիս եպիսկոպոս՝ որ ամփոփեաց 'ի շիրմի զանապական մարմին ուրումն կրօնաւորի վախճանելոյ յանծանօթս յայրի միում՝ յԱրագած լերին, յամի 1609: Գրիգոր վարդապետ նորոգող մագաղաթեայ կոնդակին՝ յամի 1623: Սամուէլ եպիսկոպոս յամի 1636: Յովհաննէս պարոն տէր յամի 1651. սա ինքնին հրաժեշտ տուեալ՝ կարգէ փոխանակ իւր զԳաբրիէլ վարդապետ զեղբօրորդի իւր՝ ըստ Զաքարիա սարկաւագի. հատոր Բ, երես 29: Ոսկան վարդապետ երևանցի՝ յիշատակեալ 'ի Սիմէոն կաթուղիկոսէ, յամի 1661: Գաբրիէլ վարդապետ 'ի վեր անդր յարձանագիրն փոքրիկ՝ յամի 1669: Աւետիք վարդապետ յամի 1736՝ յիշատակեալ 'ի Սիմէոն կաթուղիկոսէ:

411 · ՍԵՐՏԻՆ գիւղ· մերձ 'ի սաղմոսավանք յարեւմտից հարաւոյ նորա· յիշատակի այսու անուամբ ուրեք ուրեք յարձանագրութիւնս, եւ 'ի գրուածըս Օձաքարիս սարկաւագի (409)· Այժմ կոչի այս գիւղ (Էլանչալան) անուամբ 'ի բնակչացս· ուր բնակին արդէն հայազգիք՝ տունք 11·

412 · ԵՂՎԱՐԴ գիւղ· որպէս 'ի հնումն նովին անուանակոչութեամբ եւ այժմ յԱրագածոտն գաւառի 'ի հարաւային ստորոտի լերինն Արայի 'ի տափարակ դաշտավայր տեղւոջ, ուղղակի յարեւելից կարբւոյ 'ի միջոցի Քասաղ եւ Հրազդան գետոց· բնակիչք նորա 'ի վաղուց անտի՝ որպէս եւ այժմ յազգէ հայոց· Դաշտավայրն անդաստանաց այսր գեղջ բերրի սպիտակահատ ցորեան ընտիր· 'Ի գեղջէ աստի էր Ե՛ Մովսէս կաթուղիկոս՝ որ եկաց յաթոռ հայրապետութեանն յամի 551· Յառաջագոյն բազում բնակիչք եղեալ են 'ի սմա՝ որպէս ցուցանեն աւերակքն, այլ այժմ գտանին գերդաստանք՝ (139)·

Եկեղեցի գեղջս յանուն սուրբ Աստուածածնի· որ է փոքր դրութեամբ ըստ տարածութեանն, այլ եռայարկ կարի բարձր նման մեծի զանգակատանն Կաթուղիկէ Եկեղեցւոյ սրբոյ Էջմիածնի՝ համակ 'ի սրբատաշ կարմրերանգ քարանց· Ներքնայարկ նր ունի զմի սեղան տեղի պատարագելոյ հանդերձ բարձր բեմիւ· միջնայարկ նր եւս ունի սեղան սրբազան խորհրդոյն· իսկ եռայարկն է սիւնազարդ կաթուղիկէ զանգակատուն· այլ զի որովհետեւ փոքր է այս տեղի յաղագս աղօթից ժողովրդեանն, շինեալ են յարեւմտից կից այնմ ժողովրդանոցս ընդարձակ 'ի հատարակ քարանց եւ 'ի փայտէ·

Զգուշ յորմունս այսր շինութեան արձանագիր կառուցանողի այնմ· այլ միայն Թուական շինութեանն գտանի յերկոսին կողմանս մի-

ակ մեծի դրան նորա՝ որ ընդ յարկաւ ժողովրդանոցին, ՚ի գլուխս երկուց վիմարդեայ սեանցն.„ ՚Ի Թվ. չհ (1321) շինեցաւ եկեղեցիս „: Եւ ՚ի վերնայարկի ՚ի մէջ սիւնազարդ կաթուղիկէին սպիտակ դեղով գրեալէն այս ինչ. „՚ի Թվին չհե, շինեցաւ „:

Յարձանից ՚ի հիւսիսակողմն դրան վերնայարկին յորմն անդր դնի այս արձանագիր:

„ Ես Սամուէլ եպիսկոպոս որդի պարոն Նէաղբին Թոռն պարոն աղբեկի եւ տու զիմ այգին Ըշտարակ՝ որ է աղիզեան. և ջաղաց իմ որ է տեղն ընական վանիցս, և հաստատեցի սուրբ ատուածածնիս, ով որ.... յիմոց կամ աւտարաց, ի յժը հայրապետաց անիծած եղիցի. Թվ. Ջի. „ (1471):

413, Ընդ հարաւային որմով եկեղեցւոյս ամփոփեալ կայ մարմին նահատակ կուսին Խամամ անուանելոյ՝ դստեր մալխաս անուն առն շաղկերացւոյ ՚ի Գողթն գաւառէ. որ չարութե անզգամ հօր իւր տուաւ ՚ի հարսնութի Մուրթուզաղուլի խանին Երևանայ որդւոյ Մահմատըուզա խանին Նախիջևանայ, այլ չև՛ ևս եղեալ հարսնեացն՝ օրիորդն Խամամ՝ այն է, կատարեալ յառանձին պահու տեառնագրեալ զանձն՝ անկաւ ՚ի պալատէ խանին ՚ի ձորն Հրազդան գետոյ. և անմիտս մնացեալ՝ փախուստ առնէ անտի և անցեալ ընդ այգեստանսն գայ հասանէ յայս գիւղ Եղեգվարդ. և ՚ի պատճառս այսր փախստեան՝ մերձ յայս գիւղ հեղձամահ լինի ընդ խեղդ առասնաւ յանօրէն ձեռաց. և ապա քահանայական պաշտամամբ ամփոփի անդէն յամի 1691. Է: Կէ, 62,

Օ. հաւաքեա արձանագ:

Այս գիւղ ունի ՚ի հիւսիսոյ զլեառն Արածի և յարևմտից զԿասաղ գետ իբրև միով ժա-

մաւ, յարևելից գՏրագդան գետ իբրև երկու ժամ հեռաւորութեամբ․ ՚ի հարաւոյ դաշտ ընդարձակ՝ որպէս գրեցաք ՚ի վերոյ։ Յայսմ ընդարձակութեան դաշտավայրիս եհար Թահմազղուլի խան (Նատր) զզօրս օսմանեանց յամի 1735․ յ8 րդում աւուր յունիսի՝ կրկնակրկին հատուցանելով զվրէժն․ քանզի ՚ի սոյն դաշտավայրի ժե, ամաւ յառաջ քան զայս պատերազմ՝ զժբ, հազար պարսիկս կոտորեցին օսմանեանք․ իսկ պարսիկք յայս նուագ՝ զխ, հազարս յօսմանեանց։

Ի յարևելեան հարաւ դաշտիս են ինչ ինչ բլրակք՝ յորոց ՚ի միոյն վերայ հարեալ էր Թահմազ խան զվրան իւր․ և այն բլրակ անուանէր յառաջն (Մէխի Թափէսի), այլ զկնի այնօրինակ յաղթութեանն՝ ետ անուանել (Մուպարէք Թափէսի)․ և հրամայեաց զ, Աբրահամ կաթուղիկոսի՝ զոր առ իւր ունէր քաղցրութեամբ, տալ շինել ՚ի բլրակի անդ կոթող մի ՚ի ձև վրանին իւրոյ․ որ և կատարեցաւ զկնի քառասուն աւուր ՚ի կոփածոյ քարանց, այլ այժմ կայ աւերեալ այն կոթող։ Զայս ամենայն պատմէ նա ինքն զ, Աբրահամ կաթուղիկոս ՚ի գիրս իւր, ՚ի գլուխն՝ 14․ 16․ և 17։

### Մենաստան Եղիվարդայ․

414․ Այս մենաստան յարևելից լերին Արագի յստորոտի անդ նորա, հեռի ՚ի գեղջէն յարևելից հիւսիսոյ իբրև կէս ժամաւ՝ շինեցաւ ՚ի մէջն անդ է րդ դարու ՚ի Գրիգոր մամիկոնեան իշխանէ Հայաստանի․ զորմէ զ, Յովհաննէս կաթուղիկոս պատմիչ․ „Շինէ նաև (շինէ եկեղեցւոյն որ յԱրուճ) նուիրանոց ուխտի կրօնաւորական դասուց՝ յորում և եկեղեցի պայծառապանծ ՚ի նմա յարդարեալ, ըստ արևելից կուսէ դաստակերտին մեծի Եղիվարդայ՝ տուն բնակութեան

կուսակրօնից զնա հաստատէ 'ի փրկութիւն հո-գւոյ իւրոյ ,,:

Այս եկեղեցի որպէս նկատի ըստ շինուա-ծոյն է նոյն խակ առաջին շէնքն 'ի մէ. եալ իշխա-նէն. և է բոլորակաձև ութն անկեամբք, և նոյն անկիւնքն 'ի ներքուստ բոլորակք, և ընդ հակա-ռակն՝ արտաքուստ սրանկիւն, վայելուչ և չքնաղ դրութեամբ առանց սեան. ունի 'ի միջավայրին գմբէթ կիսաւէր և զերկուս դրունս՝ յարևմուից և 'ի հարաւոյ:

Անուանակոչութիւն եկեղեցւոյս յարձա-նագրութիւնս նուիրատուաց կոչի Ս. Զօրամէր. չը-գտաւ արձանագիր շինութեանն. բայց զմի ևեթ յեղելոցն յանուն նուիրատուաց՝ որ յորմունս ե-կեղեցւոյս. դիցուք աստէն:

,, Այս արձանագիր է Արտաշրէ որդի Աբշրաա որդւոյ Աղ վարդա. 'ի Թվ. ոխ. (յամի 1191): Կամաւն Աստուծոյ ես Արտաշիր անարժան ծառայ Քրիստոսի ետու զիմ գանձագին այգին 'ի սուրբ տաճարս զմատնիկ՝ վասն փրկութեան հոգւոյ իմոյ. և առաջնորդք սորա հաստատեցին 'ի տարւոջն ժամ ժէ աւր. զժբ ինձ, և զէ Ասին. եթէ ոք խափանէ, զանէծս գյուդայի առցէ ,,:

Ամենեակք կուսակրօնիցն քայքայեալ ա-ւերակ կան՝ սակս ընդերկար անբնակ լինելոյ տե-ղւոյս. գտանին մնացուածք ինչ հին շինութեանց շենեկաց 'ի կողմանց քարանց՝ յարևմուից հարա-ւոյ եկեղեցւոյն կարի մերձ նմին: Ի հիւսիսակողմն եկեղեցւոյն հեռի իբրև քարընկէց մի է գերեզ-մանոցն և օրոցաձև մատուռն փոքրիկ 'ի նմին:

Զայր եկեղեցւոյ՝ 'ի հարցանել ցբնակիչս Նորվարդայ, տան զանուն Վարժատրան. այն է՝ վար-ժատուն, տեղի ուսման. քանզի 'ի հայաստան 'ի բազում ժամանակս որդիք բնակչաց գաւառի կամ գեղջ՝ ուրանօր գտանէր մենաստան, անդ ու-

տանէին զուսումն, մինչեւ անդ 'ի վերջին ժամանակս անիշխանութեան Հայոց. այլ վասն և գրեթէ՝ չգտանի ուրեք շինուած ինչ առանձին յանուն ուսումնարանի. որովհետև ուսմունք հայ լեզուի և այլ բարձրագոյն գիտութիւնք 'ի հոգևոր մասին լինէին 'ի վանորայս մենաստանաց, որպէս 'ի մենաստանին Տաթևոյ, Ագուլեաց, Հառիճոյ են. և յայն սակս հայազգի ժողովուրդք ջերմացեալ էին 'ի տուրս և 'ի նուէրս մենաստանաց առ 'ի սնունդ և զաւակաց իւրեանց վարժելոցն անդէն:

Ջուր Նողիվարդ գեղջս ըստ ընդարձակութեան անդաստանացն է սակաւ. և գայ 'ի հիւսիսոյ՝ յարևելից լերինն Արայի 'ի Նիգ գաւառէ, և անցեալ ընդ ստորոտ մենաստանիս՝ հոսանէ յանդաստանսն և 'ի գիւղն: 'Ի հին ժամանակաց գտանի և տեղի առուի միոյ սկզբնաւորելոյ դարձեալ 'ի Նիգ գաւառէ 'ի Քասաղ գետոյ մերձ յԱծ̄ընկալ մենաստանն՝ որ յարևմտից լերինն Արայի. և այնպէս ընդ առապար խորաձորոյն յիջեալ գետոյ ամենադժուար ճանապարհաւ մինչև ցհանդիպահայեացն Յօհանավանից, ուրանօր ելեալ 'ի դաշտ՝ գայ մտանէ 'ի սահման Նողիվարդայ: 'Ի սկիզբն ժդրդ դարու նորոգեաց զայս առու, զՆողիվարդ և զմենաստանն Աղբերէկ հայազգի ոմն յազատ տանէ հանդերձ Սախախ անուն ամուսնով իւրով. զորմէ ծանուցանէ երկարաձիգ յիշատակարան աւետարանի միոյ եղելոյ 'ի Թուականի հայոց չկէ, յամի 1318. «Արդ գրեցաւ սա 'ի Թուաբերութեանս հայկազեան տումարիս եաւթն հարիւր վաթսուն և եաւթն 'ի խնդրոյ հրաշափառ և հաւատարիմ ծառայիցն Քրիստոսի պարոն Աղբերէկին և ամուսնոյ իւրոյ պարոն Սախախին. որք էին բարեպաշտ ծնողաց զաւակ, և յազնուական ազգաց և տոհմից. . . .

եկեալ տեսին զընակութիւն նոցա (Ճնապատին) աւերեալ և կործանեալ, և զաւանս իւրեանց զԵղիվարդ ընակութիւն աւազակաց. և կամակցութեամբ ամենակալին Աստուծոյ զամենայն ըզպարտսն հատուցին և վերստին նորոգեցին զսա բազում ջընութեամբ և չարաչար վտանգաւք մի մի ժողովել զցրուեալսն, բազում և յոլով աշխատութեամբ ծառայութիւն կատարելով մեծափառ տերանց իւրեանց մեծին Շահինշահի և Խոյանդգային... և ամենայն դիմաւք հաստատեցին զմեծ մենաստանս, զԵղիվարդ, շինել զամենայն քանդեալս:... սկսան շինել վանս 'ի կորդոյ զուխտն սրբոյն Յակոբայ յանուն որ առաքելոցն [1], և զարդարեցին զնա մեծամեծ վայելչութեամբ. ստացան բազում այգիս շուրջ զընակութեամբն ուխտին. և զներքս եկեղեցին զարդարեցին քանդակով նաղաշութեամբ, ձևացուցին զպատկեր

1, Մենաստան Եղիվարդայ 'ի ԺԶ էրդ դարու և անուն նորա Օծումն. իսկ աստ ասէ՝ շինել վանս 'ի կորդոյ, այսինքն նոր 'ի նորոյ ըստ տեղւոյն, ըստ հիմնարկութեանն և ըստ շէնքն՝ որպէս թէ չէր լեալ յառաջագոյն, այլ 'ի նորոյ շինեցաւ. և թէ՝ զուխտն սրբոյն Յակոբայ յանուն առաքելոց. եղաւ օտարացուցանէ 'ի վերայ շինեալ Ճնապատնէ՝ թէև մասամբ եւեթ Պըջեցուցանէ այնմ. քանզի ասէ. և զներքին եկեղեցւոյն զարդարեցին քանդակով նաղաշութեամբ, ձևացուցին զպատկեր Աստուածածնին և այլն. Երևին արդէն հետք տեղնքար զեղաստեալ պատկերաց 'ի Ճնապատնի անդ Գրիգոր եղծանի յորմանն պատճառին 'ի ներքսատ, այլ ո՛չ քանդակ: Իսկ Թադուսն զեղասակարանին դուռ ենք համեմատ Թղթոյ շէնութեան եդրայր զանգական զամ եկեղեցւոյն՝ որ 'ի գիւղաքէջ անդր Եղիվարդայ: Եւ ահա՛ այսօրինակ խառն տեսանի Ճոռ գործածոյ զեղաստարաններն. այլ շէնքը և է, յաղագս ծանօթութեան ընթերցողաց՝ յառաջ բերել զայս էան զեղաստականն:

Ամենափրկչին և զմաւրն իւրոյ Ածածնին և զառաքելոց և զմարգարէից .... և զմեծագին գրեանս ազգի ազգի. և մեծագին զգեստուք զարդարեցին զնա և արարին բնակութիւն կուսանաց և ետուն զամենայն ուխտս զգեստից և կերակրոց. և ոչինչ կարաւտք եղեն յամենայնէ՝ զորինչ պէտս էր հոգևոր և մարմնաւոր։ Եւ ածանէր տիկինն մեր ուրախութիւն և ցնծութիւն մեծ արար բազում գաւառաց և մեծ մենաստանիս Աղվարդայ։ Գնացեալ 'ի սուրբ ուխտն Ածընկալ և տեսեալ զգնացս ջրոյն Աղվարդայ աւերեալս և խոպանացեալ. որպէս զի թերևս երևէին հետք նորա. և ածային նախախնամութեամբն վառեալ սիրտ նոցա և աջովն ապէնխաղ թագաւորին Քրիստոսի զօրացան և պնդեցին իբր այր զմէջ... արիացան՝ ոչ հաշվելով զծախսն որպէս զուարդուն հրեղէն տագնապէին՝ ոչ ունելով զհանգիստ և զքուն 'ի տուէ և 'ի գիշերի, և շրջապատեալ զլեառն Արարատեան (Արայէ) հատուցին զջուրն յորդառատ վտակաւք փոյթընթաց յԱղվարդ. և զդժվարութիւն սահմանացն և զյոլով աշխատութիւնս և զտուրս արդեստաւորացն և զամենայն ծախսն ով կարէ ընդ գրով արկանել, և զանհասանելի երկրաչափ զհեռաւորութի տեղւոյ... որ 'ի քաղաքէն Բջնոյ մինչև Կարբի ոչ գտանէին ջուր յարբումն մարդկան և պապակէին անցորդք ճանապարհաց 'ի տապոյ՝ յաւուրս ամարայնոյ ևն ևն։

415, Միւս գիւղօրայքն հայաբնակք. Պ[illegible]՝ տունք 46. եկեղեցին անուամբ սուրբ Յովհաննու։ Փ[illegible]՝ տունք 17. եկեղեցին յանուն սրբոյն [illegible]։ Ա[illegible]՝ տունք 19. եկեղեցի նոցա յանուն սուրբ Գէորգայ։ Օշական՝ տունք 19. եկեղեցին յանուն սուրբ [illegible]։ Աղջաղալայ՝ 'ի հայոց տունք 11. եկեղե-

ցին անուամբ սրբ Գէորգայ. ՚ի տաճկաց տունք 3։
Բուլը (388)՝ ՚ի հայոց տունք 6. եկեղեցին տակա-
ւին չէ՛ օծեալ. ՚ի տաճկաց 15։ Ինէօրփուլու՝ տունք
34. եկեղեցին անուամբ սուրբ Աստուածածնի։
Հայբաղ՝ տունք 40. եկեղեցին յանուն սուրբ Աս-
տուածածնի։ Սամաշար՝ տունք 38. եկեղեցին ա-
նուամբ սուրբ Յարութեան։ Սուղանճաղ՝ տունք
21. եկեղեցին յանուն սուրբ Սարգսի։ Կիրամիբայ՝
տունք 18. եկեղեցին յանուն սուրբ Աստուա-
ծածնի. ՚ի տաճկաց ևս 18։ Համզլու՝ տունք 6. ե-
կեղեցի տակաւին ոչ գոյ. ՚ի տաճկաց 12։ Վերին
Ակնըլու՝ տունք 14. եկեղեցին անուամբ սուրբ
Աստուածածնի։ Աչքէքլու՝ տունք 34. եկեղեցին
անուամբ սուրբ Լուսաւորչի։ Ներքին Ակնըլու՝
տունք 30. եկեղեցին յանուն սուրբ Սարգսի։
Օջալու՝ տունք 60. եկեղեցին յանուն սուրբ Աս-
տուածածնի։ Վերին Խաթունարխ՝ տունք 21. եկե-
ղեցին անուամբ Բարդուղիմէոսի առաքելոյ։
Ներքին Խաթունարխ՝ տունք 67. եկեղեցին յանուն
սուրբ Սարգսի։ Կամըլու՝ տունք 13. եկեղեցի
տակաւին ոչ գոյ. ՚ի տաճկաց 17։ (Զարնէլէան կոչին
Կէօյն) Սաղօղլուգօ՝ տունք (139). եկեղեցին յա-
նուն սուրբ Աստուածածնի։ Խաչէ Կէօղ (Խաչը-
քօչարան)՝ տունք 11. եկեղեցին անուամբ սուրբ
Խաչին. ՚ի տաճկաց 13։ Համզըղարայ՝ տունք 13. եկե-
ղեցին յանուն Աստուածածնի. ՚ի տաճկաց 4։

Տաճկաբնակք. Ինճէճէրան՝ հարկատուքն
և եթ, տունք 2։ Ալէարլու՝ տունք 11։ Ղարաթիլու՝
31։ Համամլու՝ 3։ Իփրաթէանլու՝ 9։ Օջալ՝ 46։ Ինէօյ-
լնիէ և Արաւըղ՝ 47։ Սէփէաղա՝ 12։ Կարղադաղ։
Տօլու և Սէհմանար՝ 290։

416. Իսկ ՚ի վերոյիշեալ գերդաստանաց
քիւրդերէնցն դաւանին ՚ի սոյն Արագածոտն գա-
ւառի և վրանաբնակ գերդաստանք՝ որք չեն ՚ի
հաշուոյ երկրագործացն, այլ են խաշնադարմանք

և տաճարածք. և են 'ի մահմետական տաճկաց և 'ի քրդաց՝ որոց կոչմունք և թիւք գերդաստանացն ըստ այսց:

| | |
|---|---|
| Զօղանքեարս խողէցեալ [illegible] | 170: |
| 'Ի Սուրաց ([illegible]). | |
| Տավշանլու խողէցեալ | 18: |
| Դուրեկրեն | 70: |
| Սելման | 53: |
| Ասորեցի | 22: |
| Ճանցի | 7: |
| Բէգլենցի | 7: |
| Բուրամանցի | 3: |
| Կէսարացի | 2: |

Կոտայք գաւառ (Ղըրխպուլաղ).

417. Այս գաւառ անուանի է 'ի հնոց անտի, և է մի 'ի գաւառացն Արարատայ. անուանի գտաւ և 'ի յետնոց. քանզի երբեմն քաղաքագեօղ նորա զկնի եղև իշխանանիստ տեղի դաշտին Արարատայ և ինչ ինչ մերձաւոր գաւառացն:

Այս գաւառ անկանի 'ի հիւսիսակողմն մեծի դաշտին. որ ունի յարևելից զլեառն Գեղամայ, 'ի հիւսիսոյ զլեառն Ծամբրամայ և զսահման Սարաժնունեաց, կամ Ծաղկունեաց (Դարաչիչակ), յարևմտից զՀրազդան գետ. և 'ի հարաւոյ զդաշտըն Գառնոյ: Այս սահման ունի երկուս նիստս. հարաւայինն՝ քաղաքաւն հանդերձ ստոր է քան զմիւսն քանակութեամբ և դրիւք, և սակս մերձ գոլոյ դաշտին՝ վատանայ օդն յամառնային եղանակի. իսկ վերին նիստն ընդ հիւսիս բաղկացեալ յինչ ինչ փոքր բլրակաց. և գուցէ 'ի բլրակաց աստի ընկալեալ իցէ զանուանադրութիւն իւր այս գաւառ. զի բլրակն յայսոսիկ կոմանս հասարակօրէն անուանի և կոնտ. և 'ի կոնտից այնց անուա-

նեալ իցէ կոտայք ։ Օդ սորա միջակ է և առողջ, ջուր սորա առողջարար՝ բղխեալ յարևմտեան ըս-տորոտէ լերին Գեղամայ բազմակն և յորդառատ՝ որ դետագնացեալ բաշխի 'ի գիւղօրայսն, և մասն ինչ անցեալ ընդ Նուան գիւղ և մտեալ 'ի փոքր ձորակ՝ իջանէ յերևան քաղաք ։ 'Ի պատճառս այ-սըր աղբերց անուանեցաւ այս գաւառ 'ի տաճկաց (Պըրխպուլաղ). յայս ջուր գտանին բազում կարմ-րախայտ ձկունք ախորժաճաշակք ։

418, Երևան. 'Ի տափարակ գոգաւոր տե-ղւոջ, յարևելից և 'ի հիւսիսոյ պատեալ դիւրա-ռապարօք. և յարևմտից 'ի Հրազդան գետոյ. Այս քաղաք յառաջագոյն չէ՛ր այնքան ինչ նշանաւոր տեղի. և անուանէր քաղաքագեօղ այսր գաւառի ըստ գրելոյ Զ̃, Յովհաննու կաթուղիկոսի. „Յայնմ ժամանակի (այս ինքն յաւուրս հասարակացն Պա-բէ Պ[illegible] և [illegible]) աւեն լինել զկռւին՝ որ 'ի քաղաքագիւղն Երևա-նի, զոր և բաւական քեզ ուսուցանեն զայնր պա-տերազմի զհանգամանս՝ որ նախ քան զմեզ զնա պատմագրեցին„։ Որդ՝ պատմիչ նախ քան զՅով-հաննէս կաթուղիկոս և քան զայլ ժամանակակից-սըն նորա՝ է Սեբէոս եպիսկոպոս բագրատունեց, յորմէ որպէս առնու Յովհաննէս կաթուղիկոս, նոյնպէս և Վ Լոնդ, և Ասողիկ և Սամուէլ, այլ ոչ ոք 'ի սոցանէ բացայայտ գրեաց զկռւին Երև-անայ, որպէս նա ինքն Սեբէոս՝ թէ չգուցէ այլ Երևան անուամբ բերդ կամ ամրոց 'ի Կոգովիտ գաւառի, կամ 'ի մօտակայս նորա. քանզի գրէ նա ինքն Սեբէոս եպիսկոպոս վասն երկրորդ յարձակ-ման իսմայելացւոց 'ի Հայս, և դնէ զերիս բաժա-նեալ զօրաց նոցա՝ որոց մի մասն յարձակեալ 'ի կողմանս Սեպհական գնդին՝ թերևս 'ի վերայ զօ-րացն յունաց որ 'ի Կոգովիտ, ասէ. „Եւ հա-րեալ զամենայն կողմանն զայնոսիկ սրով սուսե-

ըր՝ առին զաւար և զգերութիւն և եկին ժողովեցան ՚ի յԵրևան. և մարտեան ընդ բերդին, և ոչ կարացին առնուլ. եկին ՚ի Յորդասպու, և ոչ նմա ինչ կարացին առնել. գնացին անտի և բնակեցան յՈրծափս հանդէպ բերդին առ ջրովն,,: և թէ՝ զկնի առման Ործափայ յիսմայելացւոցն. և յանհոգ մտաց նոցին, յարձակեցաւ ՚ի վերայ Թէոդորոս Ռշտունի վեց հարիւր արամբ և կոտորեալ զբազումս՝ թափեաց զաւար և զգերութիւն: Եւ եղև այս յերկրորդ ամի Կոստանդնի կայսեր յունաց, ՚ի 23 ամսոյն հոռի յաւուր կիւրակէի, ըստ նորուն Սեբէոսի: զայս պատերազմ դնէ Սամուէլ երէց ՚ի ՃԷ, թուականին հայոց. (658):

Անուանադրութիւն այսր քաղաքի տակաւին չգտանի թէ արդեօք յումմէ՞, յի՞նչ պատճառս և ե՞րբ եղաւ. թէպէտ և երևոյթ հնչմանն ոչ այնքան անծանօթ՝ յորմէ մակաբերէ Ղազար կաթուղիկոս Ջահկեցի և դնէ շինեալ յԵրուանդայ Ա, արքայի հայոց, այլ թէ ուստի՛ իցէ առնել զայս տեղեկութիւն՝ չէ՛ յայտնի. և ոչ գտանի ինչ յայժմեան ծանօթ եղեալ պատմագրութիւնս հայոց:

Զայսր տեղւոյ գրէ չամչեան հայր Միքայէլ՝ թէ է տեղին, ուր վանեցաւ Երուանդ Բ, յԱրտաշիսէ և կոչեցաւ (Երուանդավան). և զկնի Երևան. բայց այս բան նորա ոչ ստուգի. զի պատերազմն Արտաշիսի ընդ Երուանդայ եղև ՚ի Շիրակ գաւառի՝ ՚ի մերձակայսն Աղէքսանդրապօլսոյ (Գիւմրի). և անտի վանեալ զԵրուանդ՝ տարեալ եմոյծ ՚ի քաղաքն նորա Երուանդաշատ՝ որ էր շինեալ ՚ի նմանէ ՚ի խառնուրդս Երասխայ և Ախուրեան գետոց. և այժմ քաջածանօթ տեղին ՚ի սահմանին Կողբ գեղջ և կոչի կարմիր քարափ: փախուստն Երուանդայ ՚ի կողբ, կամ ՚ի խառնուրդս անդ գետոցն՝ ընդ ճանապարհն արևմտից

Արագած լերին · իսկ տեղին Երևանայ ըստ հին և ըստ այժմեան դրութեանն գտանի կարի բացեայ յԱրագած լեռնէ ընդ արևելս։

Իսկ ստորագրութիւնն հին հայաստանի անկայս եղեալ 'ի պատմութեանց՝ յառաջ բերէ զաւանդութիւնս բնակչացն · և այնպէս զանուանադրութիւն քաղաքիս տարեալ հասուցանէ ց'Նոյ նահապետ՝ իբր 'ի նմանէ անուանադրեալ · քանզի ասէ՝ ցամաք այսր կողման նախ և յառաջ եւ յերևան 'ի նուազիլ ջուրցն յետ ջրհեղեղի · վասն այնորիկ և 'ի նմանէ կոչեցաւ Երևան։

Ըստ այսոցիկ՝ անուանադրութի քաղաքիս տակաւին մնայ անծանօթ՝ թէ ե՛րբ կամ յումմէ՞։

Այս քաղաք՝ որպէս գրեցաք, չէ՛ր յառաջագոյն այնպէս հռչակեալ և անուանի որպէս այժմ · քանզի զկնի բարձման թագաւորութեանն Հայոց յԱրարատայ և աւերելոյ թագաւորաբընակ քաղաքացն Արտաշատայ, Վաղարշապատայ և Դունայ, և նուազելոյ նախարարազուն իշխանացն Հայոց՝ տիրեցին երկրիս օտարազգի թագաւորք՝ պարսից և հագարացւոց · և 'ի նոցունց առաքեալ իշխողք երկրիս տեսանելով զյարմարութի դրից սորին և զամրութիւն ընդդէմ յարձակման թըշնամեաց՝ աստ նստան · և հետ զհետէ շինութեամբ և նորոգութեամբ կացուցին իշխանանիստ քաղաք նահանգիս Արարատայ։ Եւ այնպէս զայս քաղաք հանդերձ նահանգաւն տիրեցին պարսիկք և հագարացիք փոխանակելով զմիմեանս բուռն իշխանութեամբ աւերանաց և գերութեանց։

419, Արդ՝ զփոփոխութիւնս զայնոսիկ և զիշխանաւորսն հանդերձ ժամանակագրութեամբք նոցին յամէ 1441, ցամի 1827 · և անտի ցայսր հաւաքեալ յինչ ինչ հաւատարիմ գրուածոց՝ դիցուք առաջի 'ի ծանօթութիւն ընթերցանելեաց,

ամք տռն

1. Եղուպ կամ Եաղուպ բէկ հրամա-նաւ Ջահանշահայ յամի տռն. | 1441:
2. Հասանխան՝ ուզուն կոչեցեալ. 1471:
3. Հասան բէկ Թոռն բայընտուրոյ. 1475:

Տիրեցին օսմանեանք յարձակմամբ սուլ-թան Սելիմայ՝ եաւուզն կոչեցելոյ. | 1513:

Ընդրէն առին պարսիկք յարձակմամբ շահ Թահմազայ ա. | 1521:

Վերստին ձգեցին յինքեանս օսմանեանք. 1534:

Յայսոսիկ միջոցս դարձեալ էառ շահ Թահմազ. յորմէ կրկին յինքն կորզեաց սուլթան Սուլէյման.

Վերստին էառ շահ Թահմազ. 1550:

4. Յաղուպ բէկ՝ որ եկաց խան յամիսբըր 1557:
յորում ամի յիշատակի յարձանագիրն Ճարտարարուեստ դրան եկեղեցւոյն սբց առաքելոց՝ որ ՚ի Սևան.

Ընդրէն առին օսմանեանք յաւուրս սուլթան Մուրատայ՝ զօրավարութբ Լալայ փաշայի՝ ղարամուստաֆայ կո-չեցելոյ. | 1577:

Վերստին պարսիկք՝ յաւուրս շահ Խուտաբանտայի. յորում ժամանակի եկաց իշխող | 1578:

5. Մահմատ խան՝ Թօխմախ կոչեցեալ.

Ընդրէն առին օսմանեանք զօրավար-ութբ Ֆահրատ փաշայի՝ որ շինեաց զբերդն Երևանայ յաւուրս սուլթան Մուրատայ. | 1583:

Վերստին պարսիկք՝ յաւուրս Շա-հապասայ ա, յորում միջոցի եկաց իշ-խող | 1605:

6. Ամիրգունա նախարար.

Զկնի ամիրգունայ նախարարին ե-

7 . կաց իշխող որդի նորա Թահմազղուլի
ցթիւն. 1635 :

Ընդրէն օսմանեանք՝ յարձակմամբ
սուլթան Մուրատայ Դ, որ յառման
անդ քաղաքին առաքեաց զԹահմազ- 1635 :
ղուլին ՚ի կոստանդինուպօլիս, և ըղ-
8 . քեռայր իւր զՄուրթուզայ փաշայ եդ
յԵրևան 15 հազար զօրօք.

Վերստին էառ շահ Իսմայել սէ-
ֆի, և յառնուլ բերդին Մուրթու-
զայ փաշայ ինքնին դեղակուր եղեալ 1636 :
մեռանի. և յառման բերդին կացու-
9 . ցաւ ՚ի շահէն խան Երևանայ Քէլ-
պալի անուն.

10 . Մահմատ խան՝ չաղաթայ քեօթիւկ
կոչեցեալ. 1640 :

11 . Քէյ Խոսրով խան յազգէ վրաց ան-
միջապէս զկնի նախորդին. 1648 :

12 . Մահմատ ղուլի խան որդի Լալայ
բէկի՝ որ արգել զշինութիւն մեծի 1654 :
զանգակատանն Էջմիածնի.

13 . Նաջաֆ ղուլի խան. 1660 :

14 . Ապաս ղուլի խան, որդի Ամիրկիւ-
նայ նախարարի՝ այր ծերունի. 1663 :

15 . Սաֆի խան ազգաւ լէկզի. 1667 :

16 . Սարուխան բէկ՝ տեղակալ է ամս.

17 . Սաֆի ղուլի խան, որդի Ռուստամ
խանին Թավրիժոյ՝ միջնորդութեամբ 1670 :
Դ, Յակոբ կաթուղիկոսի.

18 . Զալ խան յազգէ վրաց, յորոյ ա-
ւուրս ՚ի յամի 1679, եղև շարժն սաստ- 1679 :
կութեամբ.

19 . Մուրթուզայ ղուլի՝ որդի Մահ-
մատ ռզայ խանին Նախիջևանայ. տե-
ղակալ է ամ և կէս.

20 · Մահմատ ղուլի · տեղակալ եկաց զ̃ ամ և կէս ամենայն բարելաւու-թեամբ ·

21 · Զօհրայ խան · 1691 ։

22 · Փարզալի խան 'ի Թոռանց Միրդի-ւնայ նախարարին · այր գերփիչ և կա-շառառու · 1699 ։

23 · Մէհրալի խան · 1709 ։

24 · Ալահղուլի խան · 1719 ։

Անդրէն առին օսմանեանք յաւուրս սուլթան Ահմէտայ, յամի 1722 ։

25 · Ռաջաբ փաշայ · 1725 ։

26 · Իբրահիմ և Մուստաֆայ փա-շայք · 1728 ։

27 · Ալի փաշայ · սա մեռանի 'ի 12 նոյեմբերի · 1734 ։

28 · Հաճի Հիւսէյին փաշայ տեղակա-լօղ նորին, և էր տեղեաւ տէրէնտէցի ·

Սերատին տիրեցին պարսիկք 'ի 22, էն սեպտեմբերի յամի 1735 ։

29 · Մահմատ ղուլի խան յազգէ մու-սաբէկեան սիւնեցւոյ կացուցաւ յառման անդ բերդին ·

30 · Փիրմահմատ խան · 1736 ։

31 · Խալիլ խան օղբէկ՝ հրամանաւ աղուան Ազատ խանին · 1752 ։

32 · Հասանալի խան ղաջար · 1755 ։

33 · Հիւսէյին ալի խան՝ եղբայր վեր-նոյն · 1764 ։

34 · Գուլամալի խան որդի վերնոյն՝ որ 'ի նոյն ամի սրախոխող լինի · 1778 ։

35 · Մահմատ խան փոքր հասակաւ · եղբայր յիշեալ Գուլամալի խանին յայլմէ մօրէ · 1779 ։

Աւողբէկ վերոյիշեալ չորեքին

խանք 'ի շփոթիլ իշխանութեան աթոռոյ պարսից, և գոլով ինքեանք ինքնա-գլուխք, երբեմն նուաճեալք ընդ իշխանութեամբ Ռուսաց՝ հարկս նոցա հարկանէին.

36. Մէհտի ղուլի խան 1805։

37. Ահմատ խան մարաղացի 1806։

38. Հիւսէյին խան ղաջար եկն յԵրևան յամի 1807. հանդերձ եղբարբ իւրով Հասանաւ ընդ իշխանութեամբ Ֆ՝ շահին պարսից. և ապա 'ի տիրել զինուոր-ութեանցն ռուսաց՝ անց, գնաց անդ-րէն 'ի պարս. 1827։

39. 'Ի տիրել զինուորութեանցն ռու-սաց յամի 1827, կացուցաւ նահան-գապետ գեներալ լէյտենանտ Կրա-սովսկին. 1827։

40. Գեներալ մայիօր կնեազ (իշխա-նաց) Ալէքսանդր Գարսեւանեան Ճավճավաձէ. 1828։

41. Արտիլերիի պօլկօվնիկ Կանտիրօ՝ տեղակալ.

42. Պօլկօվնիկ կնեազ Մօվսէս Զաք-արեան երկայնաբազուկ Արղութեանց՝ տեղակալ. 1829։

43. Գեներալ կնիազ Բարսեղ յովսէ-փեան բէհպուտեանց. 1830։

44. Գեներալ մայիօր Պացովսկի. 1838։

45. Պօլկօվնիկ Գէորգ ստեփաննոսե-ան սմբատեանց. յամի 1841. փոխար-կեցաւ անուանադրութիւն երկրիս Արարատայ և կոչեցաւ գաւառ Երև-անայ. ուստի և իշխողքն գաւառա-պետ. 1839։

46. Կօլլէժսկի սովետնիկ զինամէ

կանդրատիչ Կրասովսկի ·

47. Կօլեժսկի ասեսօր Պօպով ·

48. Միխայիլ Ֆէօդորովիչ Կալաչևսկի
որ կայ այժմ 'ի պաշտաման ։

420, Երևան քաղաք բաժանի 'ի վեց թա-ղս, ա՝ կոչի ըստ այլազգականին Շ՜հր, ուր բնա-կին հայք և այլազգիք խառն և բազում գեր-դաստանք ունին զպարտէզս զառաջեաւ տանց · երկու եկեղեցիք են հայոց 'ի սմա 'ի կոփածոյ քարանց · մին անուանեալ Կաթողիկէ էջէջեցի, կա-ռուցեալ 'ի վերայ չորից հիւսածու սեանց օրո-ցաձև · ունի զմի և եթ սեղան յանուն սրբու-հւոյ աստուածածնի, որոյ կամարայարկն փոքր ինչ խորագոյն երկայնեալ է արևելս, և քարակերտ կաթուղիկէ կրկին 'ի վերայ սեղանոյն և 'ի վե-րայ տանեաց նորին և զերկուս աւանդատունս · և զերկուս դրունս ընդ արևմուտս և ընդ հա-րաւ · են և երկու փոքրիկ սեղանք հանդերձ քա-րակերտ կաթուղիկէիւք 'ի միջոցի աստիճանաց բեմի սեղանոյն և դրանց աւանդատանցն յանուն սրբոցն Յովհաննու մկրտչի, և Ստեփաննոսի նա-խավկայի · ունի և շրջապատ պարիսպ, և զսենեակս քահանայից · այս եկեղեցի չունէր արձանագրու-թիւն շինութեանն որպէս և միւս եկեղեցիք քա-ղաքիս, այլ գտանի 'ի ճակատ արևմտեան որմոյն արտաքուստ թուական հայոց ռճխբ (1693) · ոչ մի-այն սա, այլև միւս եկեղեցիք և այլ շէնք մզկիթաց և պանդոկաց և՛ն · շինեցան զկնի մեծի երկրա-շարժութեանն դիպելոյ յամի 1679 · յորում մի-ջոցի որ ինչ շինուածք էին յառաջնոց կործանե-ցան իսպառ · իսկ միւսն՝ յանուն առաքելոցն Պետ-րոսի և Պօղոսի, մեծ դրութեամբ քան զկաթուղի-կէ եկեղեցին և քան զմիւսն՝ նոյնպէս 'ի վերայ չորից հիւսածու սեանց · ունի զերիս սեղանս ·

մին ՚ի միջին տեղւոջ ՚ի կիսաբոլորակ կամարա-
յարկի, և երկուքն ՚ի միջոցս դրանց աւանդա-
տանց և ատախձանաց բեմին՝ նոյնպէս ՚ի խարտեալ
քարանց՝ յանուն Ստեփաննոսի նախավկայի, և
Յովհաննու մկրտչի. այսոքիկ Է. սեղանք համդերձ
կաթուղիկէիւքն ՚ի նորոյ կառուցան արդեամբք
պարոն Ստեփաննոսի Ջալալեանց, և Վարդանայ
կարապետեան բնակչաց Երևանայ. ունի և զեր-
կուս դրունս՝ յարևմտից և ՚ի հարաւոյ և շրջա-
պատ պարիսպ: Յայս եկեղեցի ՚ի տանիսն և յոր-
մունսն եղեալ են ինչ ինչ նորոգութիւնք՝ ՚ի թու-
ին հայոց, ռմիէ: ռմկթ ևն. իսկ այժմ լաւա-
պէս նորոգեալ պատեն ահա զտանիքն տախտա-
կօք ժեշտից. Գ. մզկիթք են այլազգեաց յայսմ
մասին քաղաքիս. Ա՝ շինեալ ՚ի Օալ խանէն, Բ՝
՚ի հաձի Նաւրուզալի բեկէ, Գ՝ կարի փոքր ՚ի
Մահմատ խան սարթիպէ:

421, Է, Նոր Բաղ՝ կոչեցեալ յանուն խան-
լըղ այգւոյ. քանզի ՚ի միջոցս առաջին Թաղիշու-
կայի, կոնդի և եկեղեցւոյն զօրավարի էր ընդար-
ձակ տարածութեամբ մեծ այգի խանիցն Երևա-
նայ՝ որ աւելի քան 30 ամ կայր յաւերութեան.
այլ ՚ի գաղթիլ հայազգեաց յԱտրպատականէ յայս
նահանգ և ՚ի քաղաքս Երևան յամի 1828, կառա-
վարութիւն իշխանութեանն զայն տեղի ձևեալ
ըստ յարմարութեանն ետ նորեկ գաղթական հա-
յազգեաց՝ յորս կառուցեալ զտունս և տնկեալ
զպարտէզս բնակեցան ՚ի նոյնս. ուստի և կոչի Նոր
Բաղ. ՚ի ձևացութեան անդ գերդաստանացն թո-
ղին և զտեղի եկեղեցւոյ միոյ՝ որ կայ ցարդ ան-
ձեռնարկելի. ուստի յաղագս անկարութեան ժո-
ղովրդոցն ՚ի շինութիւն եկեղեցւոյ յայսմ տե-
ղւոջ, սրբազնագոյն կաթուղիկոսն Յովհաննէս
վերակոչել զմնահայր վարդապետն յանապատէ
եկեղեցւոյն Մանիխա առաքելոյ՝ յանձնեաց զայն

„Թիւ մեր է հազար երկերիւր հասեալ.
Իսկ, ընդ նոյն համամթուեալ.
սուրբ Էջմիածնի մինչ էր գահակալ,
Ղուկաս սրբազան հայրապետն ընտրեալ.
յաջողմունք շնորհաց տեառն ժամանեալ,
տանիք տաճարիս եղև նորոգեալ.
ծախիւք բարեպաշտ անձին գովելի,
պարոն Գաբրիէլ Հարիւրապետի.
՚ի պատճառ անեղծ յիշեցման բարի,
իւրն և իւրայնոցն առ հասարակի.
հօրն Աղահվերդի իւզբաշու մեծի.
և մօրն երկիւղած Նոփրոսինէի.
և եղբարցն իւրոց պարոն Ստեփանի,
և Յօհաննիսի քաջ զինուորի.
իսկ և կրտսերի պարոն Գրիգորի,
սոյն գործառնութեան ծիր վերակացուի.
նա և որդեկացն ազնուականի,
պարոն Նարսեղի և ա̄ծատուրի.
որոց յիշատակն օրհնութ̄ լիցի,
այժմ և ՚ի գալուստ տեառն կրկնակի..:

Սուրբ գետնափոր դամբարանի հուշակելոյ յանուն Անանիա առաքելոյ է ՚ի մէջ եկեղեցւոյն մերձ ՚ի սիւնն արևմտեան հիւսիսոյ, ընդ որ մըտեալ և իջեալ ընդ աստիճանս ինչ յարևմուտս կոյս. և ապա իբրև քայլս հինգ՝ է փոքրիկ կամարայարկ և ՚ի նմա դամբարանն սրբոյն՝ որ անկանի ուղղակի ՚ի ներքոյ հիւսիսային բաժնի գաւթին. յանուն այսր սրբոյ յաճախեն ուխտաւորք ՚ի բընակչաց քաղաքիս յայս եկեղեցի և յանուն հրաշագործ աւետարանի միոյ՝ յորոյ անուն կոչի երբեմն այս եկեղեցի և Ծօրտոր: Ի մենաստանի աստ սկսեալ ՚ի Մովսէսէ սիւնեցւոյ նստեալք յաջորդաբար վանահայր վարդապետք մինչև ցամ̄ 1835. և ՚ի սնունդ այսց վանահարց տուեալ էր որդիւնք յուխտաւորացն յայս եկեղեցի և բերքն

որ ունի զանգակատուն 'ի միջին բաժնի որ 'ի վերայ դրանն, և անուն եկեղեցւոյն ըստ արձանագրութեանն սուրբ Աստուածածին:

Արձանագիր շինութեան տաճարիս յորմն արևմտեան արտաքուստ ընդ յարկաւ գաւթին 'ի հիւսիսակողմն դրան՝ յայս օրինակ:

„ 'Ի թուականիս հայկազունի,
...... որ աստ շարագրի·
'ի քառեակ Ժ երորդի,
երկեակ թուով յարոբարդի·
'ի հայրապետութեան սրբազանի,
տեառն Նահապետ կաթուղիկոսի·
որի և քաջ հովուապետի,
լուսաւորիչ հայոց ազգի·
մեծ և ազնիւ բարեպաշտի,
Ածասէր երկուղածի·
խոջայ փանոս վերաձայնի,
սուրբ Ածածինս շինողի·
յիշատակ ուրն և նախնի,
ծնողաց ուրոց հարցն առաջի·
որդւոց ուրոցն Եղիազրի,
և Մովսեսի քաղցր ողկուզի·
թոռան ուրոյ Ահարոնի·
զանգակատունս սա զարդարի·
սուրբ անապատս Անանիայի·
Մեսրոբ աւ տր հեզահոգի,
որ և յաջորդ է սուրբ տեղիս,
վերակացու համագործի·
դաւիթ անուամբ վերաձայնի „:

Ապա յամի 1793, Գաբրիէլ հարիւրապետ այր երևելի 'ի բնակչաց քաղաքիս ետ նորոգել զբովանդակ տանիք տաճարիս 'ի նոյն խարտեալ քարանց. և ունի արձանագիր այս նորոգութիւն յորմն արևմտեան արտաքուստ ընդ յարկաւ գաւթին 'ի հարաւակողմն դրան՝ ըստ այսմ:

․․ Թիւ մեր է հազար երկերիւր հասեալ։
իէ․ ընդ նոյն համաթուեալ․
սուրբ Էջմիածնի մինչ էր գահակալ,
Ղուկաս սրբազան հայրապետն ընտրեալ։
յաջողմունք շնորհաց տեառն ժամանեալ,
տանիք տաճարիս եղև նորոգեալ․
ծախիւք բարեպաշտ անձին գովելի,
պարոն Գաբրիէլ հարիւրապետի․
՚ի պատճառ անեղծ յիշեցման բարի,
իւրն և իւրայնոցն առ հասարակի․
հօրն Ալահվերդի իւզբաշու մեծի․
և մօրն երկիւղած Նիփրոսինէի․
և եղբարցն իւրոց պարոն Ստեփանի,
և Յօհաննիսի քաջ զինաւորի․
իսկ և կրտսերի պարոն Գրիգորի,
սոյն գործառնութեան ժիր վերակացուի․
Նա և որդեկացն ազնուականի,
պարոն Նարսեղի և ա̃ծատուրի․
որոց յիշատակն օրհնութ̃բ լիցի,
այժմ և ՚ի գալուստ տեառն կրկնակի ․․։

Մուտ գետնափոր դամբարանի հռչակելոյ յանուն Անանիա առաքելոյ է ՚ի մէջ եկեղեցւոյն մերձ ՚ի սիւնն արևմտեան հիւսիսոյ, ընդ որ մտեալ և իջեալ ընդ աստիճանս ինչ յարևմտակոյս․ և ապա իբրև քայլս հինգ՝ է փոքրիկ կամարայարկ և ՚ի նմա դամբարանն սրբոյն՝ որ անկանի ուղղակի ՚ի ներքոյ հիւսիսային բաժնի գաւթին․ յանուն այոր սրբոյ յաճախեն ուխտաւորք ՚ի բընակչաց քաղաքիս յայս եկեղեցի և յանուն հրաշագործ աւետարանի միոյ՝ յորոյ անուն կոչի երբեմն այս եկեղեցի և Օրաւոր։ Ի մենաստանի աստ սկսեալ ՚ի Մովսէսէ սիւնեցւոյ նստեալք յաջորդաբար վանահայր վարդապետք մինչև ցամ̃ 1835․ և ՚ի սնունդ այսոց վանահարց տուեալ էր արդիւնք յուխտաւորացն յայս եկեղեցի և բերքն

այգւոյն որ առ մենաստանաւս, և հատոյթքն ըստ հոգևոր մասին յորոշեալ առանձին ինչ ժողովրդոց յանուն այսր մենաստանի՝ բնակելոցն 'ի Թաղն Կոնդի: Ապա այնինչ 'ի յիշեալ 1835 ամի յանձնեցաւ այս եկեղեցի՝ (որ ունի շրջապատ պարիսպ և բոլորաշուրջ սենեակս) հայազգի գաղթականացն մարաղեցւոց, վերակոչեցաւ վանահայրն յԷջմիածին, այն որոշեալ առանձին ժողովուրդ համաթուեցաւ ընդ ժողովրդեան վիճակին. այգին մնաց ընդ իշխանութեամբ աթոռոյ Էջմիածնի, և արդիւնք ուխտաւորացն յանուն նոյն եկեղեցւոյ:

422, Գ, Թաղ քաղաքիս է Կոնդ անուանեալ՝ զոր այլազգիք կոչեն Թէփէպաշի, որ է մեծ քարուտ բլրակ լայնեալ ստորոտովք յարևելից և 'ի հարաւոյ. իսկ 'ի հիւսիսոյ՝ կողեռն կոչեցեալ բլրակ, և յարևմտից արդիւնաբեր խորաձորն Հրազդան գետոյ. բնակիչք այսր Թաղի նոյնպէս հայք և մահմետականք. եկեղեցի հայոց 'ի հիւսիսակողմն բաժնի այսր Թաղի կառուցեալ 'ի տաշածոյ քարանց, և ըստ մասին յանհարթ որձաքար վիմաց 'ի Թուին հայոց ՌՃԾԷ. ( 1708 ) 'ի վերայ չորից սեանց օրոցաձև բաւականաչափ մեծութբ. և է յանուն Յովհաննու մկրտչի. ունի զերիս սեղանս, զերկուս աւանդատունս յաջմէ և յահեկէ, և զերկուս դրունս յարևմտից և 'ի հարաւոյ. ունի և պարիսպ շուրջանակի, և սենեակս քահանայից: Եւ 'ի հարաւային բաժնի է մզկիթն մահմետականաց 'ի Թրծեալ աղիւսոյ՝ մերձ 'ի բաղանիսն որ անդր:

423, Դ, Թաղն կոչեցեալ Ձորագիւղ՝ որ 'ի Զաքարիա սարկաւագէ յիշատակի և Խնձորոց ձոր. բնակիչք սորա կիսով են 'ի ձորի անդ գետոյն, և կիսով 'ի սարահարթի նորուն՝ նոյնպէս խառն 'ի հայոց և 'ի մահմետականաց. 'ի սարահարթի աստ է Ձորագիւղի Նապատ կոչեցեալ տեղին՝ որ է

իջեան կաթուղիկոսաց աթոռոյ Էջմիածնի. և տեղին բովանդակ սեպհականութիւն նոյն կաթուղիկոսական աթոռոյն Էջմիածնի, և որոշեալ է ընդարձակ պարսպաւ յայլոց գերդաստանաց. և նոյնն բաժանեալ է 'ի չորս մասն. ա՛, մասն շինուածք կաթուղիկոսարանին՝ շրջապատեալ յերեց կողմանց այլով պարսպաւ անմիջապէս 'ի վերայ քարափան ձորոյն. յորում էր և փոքրիկ եկեղեցի կաթուղիկոսական՝ զոր 'ի 1837, ամի յարդարեցին տեղի հոգևոր ատենի վիճակին Երևանայ՝ բաժանեալ յերկուս սենեակս՝ մին խորհրդարան և միւսն գրագրանոց (տիւանխանէ): Այս եկեղեցի փոքրիկ յանուն սրբոյն Գէորգայ գոյր շինեալ յառաջագոյն՝ Թերևս յԵղիազար կաթուղիկոսէ՝ զոր զկնի 'ի մերում ժամանակի Դաւիթ կաթուղիկոս Էնէկեթեցի նորոգ հիմնարկութե՟ ետ կառուցանել հանդերձ ներքնատամբ 'ի վիմ անդ. իսկ իջեան կամ տունն կաթուղիկոսական յառաջագոյն շինեալ 'ի Նահապետ կաթուղիկոսէ, զկնի ապա նորոգ 'ի հիմանէ ետ կառուցանել Յակոբ կաթուղիկոս շամախեցի յամի 1779, յանեփ աղիւսոյ և 'ի փայտէ, և այն շինութիւն է որ տեւէ ցարդ. ուրանօր նստի այժմ արք եպիսկոպոս փոխանորդն Թէմակալի. բ՛, մասն 'ի հիւսիսակողմն վերնոյն՝ նոյնպէս 'ի վերայ նոյն քարափան ձորոյն. յորում է եկեղեցի յանուն սրբոյն Յակոբայ հայրապետի կառուցեալ 'ի վերայ չորից սեանց՝ որմունքն 'ի հասարակ քարանց և 'ի հողոյ, իսկ սիւնքն և կամարքն հանդերձ առաստաղօք 'ի թրծեալ աղիւսոյ. այժմ հայազգի բնակիչք այսր ձորագեղջ աստ աղօթեն. յայսմ բաժնի կային յառաջագոյն բազում սենեակք և փուռն հացի՝ ուր յաճախէին երթևեկք հայազգի վաճառականաց յորոց և շինեալ առ այս եկեղեցի Ը՟ աւանդութեանն. այլ այն սենեակք և փուռն

հացի յաւերութեն եղեալ, վերջացել են երթեւեկքն վաճառականաց. Գ, մասն յարեւելից սորա է ծառաստանք եւ պարտէզ բանջարոյ. Դ, մասն 'ի հարաւոյ տան կաթուղիկոսարանին. յորում էր խսկական եկեղեցի ժողովրդոցն յանուն սրբոյն Սարգսի զօրավարի՝ շինել 'ի Նահապետ կաթուղիկոսէ, այլ յաղագս կարի հնութեանն եւ վտանգաւոր գոլոյն աղօթաւորացն 'ի նմա ժողովրդոց ըստ խարխուլ շինուածոյն՝ յամի 1835, 'ի ժամանակի պաշտամանս մերում հոգեւոր այցելութեամբ տուաք քակել զայն բոլորովին 'ի հիմանց՝ հրամանաւ վեհափառ կաթուղիկոսին, եւ նոր 'ի նորոյ 'ի նոյն տեղւոջ ընդարձակ եւս հիմնադրութեամբ տուաք կառուցանել զորմունսն՝ որոյ չէնք համբերձ չորս սեամբքն 'ի տաշածոյ եւ 'ի հասարակ քարանց եւ 'ի կրոյ հասանի գրեա թէ 'ի կատար յայս ամ:

Յայսմ անապատ անուանեալ տեղւոջ նորատէր առանձին վարդապետ ոմն առաքեալ յաթոռոյ Էջմիածնի՝ յաղագս պահպանութեան տան կաթուղիկոսարանին եւ վերահասութեան այլոց կալուածոց Աթոռոյն՝ այգեաց եւ ջրաղացից եղելոց յայս քաղաք Երեւան. եւ տուեալ էր նմա եւ երթեւեկացն յաթոռոյն 'ի սնունդ՝ վարձք յառաջագոյն աստէն եղեալ կրպակացն, արդիւնք ջրաղացացն որ 'ի ձորամիջի աստ, եւ յատկացեալ առանձին այգւոյ միոյ, եւ նուէրքն ըստ հոգեւոր մասին 'ի ժողովրդոց այսր թաղի. Այլ 'ի փոխարկութե իշխանութեանն նահանգիս 'ի 1827, ամի վերջացաւ եւ այն յաջորդութիւն վարդապետաց աստի:

Հայր Ղուկաս վարդապետ Ինճիճեան յառաջին հատոր աշխարհագրութեան Ասիոյ, 'ի ստորագրութեան Երեւանայ՝ յերես 254, առեալ 'ի Շարտինէ՝ դնէ մերձ յառաջնորդարանն Երեւանայ Աշտարակ ինչ հնագոյն շինուածովք եւ այլն.

յՈրեւոն քաղաքի բաց ՚ի Մնասատանէն Սնանիա տառքելոյ և յՍնապատէն ձորագեղջ չէ՛ք այլ այնպիսի առաջնորդարան կամ արքեպիսկոպոսարան. Սնապատն Սնանիայի չունի մերձ իւր այնպիսի շինուած աշտարակի և ոչ եղեալ է յառաջագոյն. իսկ Սնապատն Ձորագեղջ ևս չունի այժմ առինքն զայնպիսի ինչ. այլ մեր չքաւականացեալ այսու տեսութեամբ մերով՝ և ոչ հաւանելի դատեալ զմակաբերութիւն նորին ինձինձեանի յաղագս պալատանն Խոսրովիդխտոյ ՚ի Գառնի՝ որ բացակայ է յՈրեւանայ ընդ արեւելս իբրև երից ժամուց, հետաքրքիր եղաք և տուգեցաք այսպիսի ինչ: Հանդէպ անապատին Ձորագեղջ յայնկոյս գետոյն և ձորոյն ՚ի վերայ քարափանն եղեալ է արդարև շինուած ինչ այնպիսի, այլ իբրև նախ քան զամս 30, և աւելի ևս, այլազգի ոմն մահմետական գնեալ զայն տեղի շրջակայիւքն հանդերձ առ ՚ի անկել զորթս անդէն՝ զայն շինուած հիմնովին քակեալ ամացեալ է ՚ի ձորն առաջակայ. և աւանդեն ևս թէ՝ գտեալ է անտի և ինչ ինչ հրնութիւնս ՚ի հիմանց կամ ՚ի ներքնայարկ դարանաց նորա: Գոն արդարև մերձ նմին փոքր ինչ բարձր քան զայն՝ անդր քան զայգին աւերակք ինչ. և զառաջեաւ նորա ՚ի վերայ գետոյն ձգեալ յառաջագոյն կամուրջ՝ որոյ հետք աւերանացն երևին տակաւին. զայն այգի գնեալ են այժմ հայք և ՚ի տեղին այնր աշտարակի շինեալ են հրնձան. և է հանդէպ անապատին Ձորագեղջ:

424, Է. Թաղն Տէփրլուլուղ՝ զի ելանէն անտի սև որակ աղբիւրք ջուրց. կոչի և ՚ի հայոց Քարահանոյ Թաղ, զի գտանի մերձ անդր և հանք հասարակ քարանց. Այս թաղ է ՚ի ստորոտ անդ առապարին այգեաց Նորքեցւոց, ՚ի հարաւոյ կողմանէ Ա, թաղին շհար կոչեցելոյ, և յարևելից ամրոցին, բնակեալ ՚ի մահմետականաց որք ունին մզկիթ. և

՚ի սակաւաթիւ գերդաստանաց Հայոց՝ որք չունելով յատուկ եկեղեցի՝ գնան յեկեղեցի սրբոցն Պետրոսի և Պօղոսի։

425, Է. Թաղ Նոր կոչեցեալ գիւղն՝ ըստ այժմեան կառավարութեան. քանզի ՚ի ժամանակս պարսից էր ՚ի հաշուի գիւղօրէիցն. և է յարևելից քաղաքիս ընդ զառ ՚ի վեր ՚ի բարձրաւանդակի՝ որոյ այգիք խառն են ընդ այգեաց բուն քաղաքացեացն՝ ՚ի դարէ անտի մինչև ցքաղաքն. և այս տեղի կոչի յայլազգեաց Չէմլէքճի. զի գոն անդ կաւագործ բրուտք՝ որք կազմեն զխեցեղէն անօթս. և են բնակիչքն յազգէ Հայոց և եթ. և ունին եկեղեցի քարաշէն ՚ի հին աւուրց՝ յանուն Սիմէոնի ծերունւոյ. այլ ՚ի ժամանակի անդ մեծի երկրաշարժութեանն դիպելոյ յամին 1679, զրկեալ է ՚ի գմբեթէն և խախտեալ մեծ մասամբ. թէև մինչև ցայժմ տևէ, և կարի երկիւղիւ աղօթեն ՚ի նմա։

426, Աճառանոց քաղաքիս կամ շուկայն առևտրութե է ՚ի միջոցի Նոր Թաղին, արևելեան ստորոտին Կոնդի, վերին Թաղի Զորագեղջ և Տէմիրպուլաղայ. մեծ մասամբ կրպակքն վաճառականաց են ՚ի ներքոյ երկայնեալ կամարայարկաց ՚ի թրծեալ աղիւսոյ և ՚ի կրոյ՝ որպիսի է Ս՝ուք չարշըն ՚ի Կոստանդինուպօլիս. իսկ միւսքն հասարակ շինուածովք. գոյ ՚ի սմա և պանդոկ մեծ՝ կոչեցեալ կէօրճի չէարշլնարս և քանի ևս փոքր պանդոկք։ Ն. ՚ի սմա և մեծաշէն մզկիթ մահմէտականաց ըստ ձևոյ պարսից՝ ՚ի թրծեալ աղիւսոյ և ՚ի կրոյ. գմբէթ մզկթին և ծայր մինարէյին պատեալ են յախճապակեօք. և ունի ՚ի հիւսիսակողմն բակ ընդարձակ և շուրջանակի պարսպապատ օթևանս՝ յորս ուսանին մանկունք նոցին մահմէտականաց. և ՚ի միջին տեղւոջ նորա մեծ աւազան ջրոյ. ունի և զերիս դրունս՝ մին փոքր ընդ արևելս, միւսն

մեծ 'ի կողմն շուկայի ընդ հարաւ և երրորդն նոյն-
պէս մեծ՝ յարևմտից. զայս մզկիթ հանդերձ այ-
սու շինուածովք եա կառուցանել Հիւսէին ա-
լի խան քաղաքիս 'ի հիճրէթին 1186:

Յարևելից շուկային յընդարձակ հրապա-
րակի 'ի նորոյ կառուցաւ յարքունեաց նահանգա-
կան ուսումնարան բազմասենեակ՝ ուրանօր ու-
սանին մանկունք հպատակաց յիւրաքանչիւր ազգէ
յերիս լեզուս՝ 'ի ռուս, 'ի հայ և 'ի տաճիկ:

427, Ամրոց կամ բերդ-քաղաքիս 'ի հարա-
ւոյ կողմանէ բաժանեալ 'ի նոյն իսկ 'ի քաղաքէն
մեծ հրապարակաւ. կառուցեալ է 'ի տափարակ
դիրս 'ի վերայ արևելեան սարահարթի քարակտուր
ձորոյն Հրազդան գետոյ. յերից կողմանց՝ յարևե-
լից, 'ի հարաւոյ և 'ի հիւսիսոյ պատեալ է կրկին
պարսպաւ հանդերձ հաստատուն մեծամեծ բուր-
գամբք, այլ 'ի հողոյ. որպէս պարիսպն նոյնպէս և
յիսուն բրգունք նորին, թէպէտ և 'ի հիմունս և
յայլ ինչ տեղիս 'ի գործ եդան և քարինք յաւե-
րակաց անտի եկեղեցեաց և բնակութեանց քաղա-
քացեացն 'ի շինութեանն ամրոցիս. որ իսպառ քայ-
քայեալ էր 'ի վերոյիշեալ երկրաշարժութեան:
Իսկ յարևմտից 'ի վերայ քարափան ձորոյն կարգաւ
կառուցեալ են ապարանք և բնակարանք մեծա-
մեծ անձանց: Ապարանք խանիցն սկսեալ 'ի հիւ-
սիսոյ կողմանէ է ընդարձակ և մեծանիստ բա-
ժանեալ 'ի զանազան դիրս՝ որոշ խանիցն և որոշ
տիկնանց նոցին. 'ի պալատի անդ խանիցն անուա-
նի է այն որոշ շինուած՝ որ կոչի ըստ տաճկակա-
նին Շուշապանէ այվան, անմիջապէս 'ի վերայ քարա-
փանին. բովանդակ առաստաղ նորա և սիւնքն՝ որ
փոխանակ հիւսիսային որմոյ, և կիսով որմունքն
պատեալ են մեծ և մանր ապակի հայելեօք, և զար-
դարեալ է նկարուք և պատկերօք ոմանց շահ ար-
քայից նոցին և խանից. և զայս եա կառուցանել

Մահմուտ խան որդի Հիւսէյին ալի խանին 'ի հիճ-
րէթին 1208 · իսկ պալատն տիկնանց նոյնպէս 'ի մէ-
րայ քարափան՝ է կարի մեծանիստ երկար քառան-
կիւնի բազմասենեակ՝ կրկնայարկք և եռայարկք ·
այս տեղի նորոգեալ վայելչապէս յայժմեան իշ-
խանութենէ՝ պատրաստեցաւ հիւանդանոց՝ բա-
ժանեալ յինչ ինչ մասունս ԺԲ ցաւոց ախտակրացն։

Է, մզկիթք էին յամրոցի աստ՝ մին շինեալ
յիշխանութեան անդ օսմանեանց 'ի Աւաջար փաշա-
յէ 'ի հիճրէթին 1135 (1725), և է քառակուսի 'ի
վերայ չորից սեանց բաւական մեծութեամբ ըն-
դարձակ կամարօք · զայս մզկիթ յառման անդ ամ-
րոցիս յամին 1827, իշխանութիւնն ետ յարդարել
և օծանել եկեղեցի յանուն հովանաւորութեան
Տիրամօր կուսին · և զաշխատակերտ մինարէ նորին
որ մերձ յորմն արևմտեան, խոնարհեցուցին ցյա-
տակն, իսկ միւսն շինեալ 'ի մերում ժամանակի
'ի Հիւսէյին խան սարտարէ 'ի Թրծեալ աղիւսոյ՝
ըստ ձևոյ նոցին պարսից հանդերձ սրահօք և սե-
նեկօք · զգմբէթն և զճակատն հիւսիսային ետ պա-
տել կապոյտ և կանաչ յախճապակեօք · այս տեղի
է այժմ զինարան իշխանութեանն ։

Յոլով բնակութիւնք էին յամրոցի աստ՝
նոցին պարսից, այլ այն ամենայն քանդեալ հար-
թեցան բաց 'ի սակաւուց և եղելոցն 'ի վերայ սա-
րահարթի ձորոյն · նոյնպէս կան և մեծամեծ համ-
բարանոցն և այլ ինչ ինչ հարկաւոր շէնք ։

Ածեալ է յերից կողմանց շուրջ զպարսպօքն
և խրամ (խանդաք) խոր և լայն · ունի այս ամրոց
զերիս դրունս, զմեծն 'ի հիւսիսոյ՝ կոչեցեալ Բա-
բէ շէհրան, և զերկրորդն 'ի հարաւոյ՝ կոչեցեալ
Մէյտան գափուսի · իսկ զերրորդն 'ի Թագնութեան
'ի պալատի անդ խանին՝ որ ընդ երկրաւ իջանէ 'ի
գետն Հրազդան և 'ի գործ ածի յաւուրս պա-
շարման ։

Այս ամրոց՝ որպէս պատմեցաւ, գոյր յառաջագոյն 'ի ժամանակս իշխանութեան Հայոց և անուանէր Բերդ Երևանայ ըստ Սեբէոսի. այլ թէ յումմէ՛ կառուցեալ, և զի՞նչ նորոգութիւն ընկալեալ մինչև ցամ տեառն 1583, չե՛ք ինչ յայտնութիւն 'ի գիրս. իսկ 'ի նոյն ամի այն ինչ առին Օսմանեանք պատերազմաւ 'ի ձեռաց պարսից, և կացուցաւ իշխող երկրիս Ֆահրատ փաշայն, նորոգեաց բոլորովին զպարիսպ բերդիս. և զկնի այնր 'ի ժամանակս իշխանութեան պարսից յամին 1679, եղեալ մեծ երկրաշարժութիւն՝ կործանեաց ըզբազում տեղիս ընդ որս և զպարիսպ բերդիս՝ և զկամուրջն որ առ նովաւ 'ի վերայ գետոյն. իշխողն երկրիս յայնմ ժամանակի Սալ անուն խան ծանոյց Շահ արքային պարսից, և ընկալեալ զհրաման ընդ ձեռն միրզայ Իբրահիմ Հատրպէջան վէզիրի անուանելոյ՝ կառոյց անդրէն զպարիսպն և զկամուրջն. և յորդոր եղեալ բովանդակ բնակչաց երկրիս եա նորոգել զաւերեալ տեղիսն ըստ կարելոյն՝ մանաւանդ զեկեղեցիս Հայոց և զմզկիթս նոցին մահմէտականաց. և ահա այն նորոգութիւն է, որ տեւէ ցարդ:

428. Կամուրջն քարաշէն ձգեալ 'ի վերայ Հրազդան գետոյ մերձ առ անկիւնն ամրոցիս արեւմտեան հիւսիսոյ՝ ուր է պալատ խանին, շինեալ կայր յառաջնոց անտի, այլ 'ի շարժէն 1679 ամի քակեալ իսպառ՝ շինեցաւ անդրէն ընդ ամրոցին 'ի խարտեալ քարանց, և է քառակամար, մին 'ի միջին կամարաց կարի բարձր և ընդարձակ՝ է որ և եթ հոսի գետն. իսկ միւս կամարքն են փոքր, ընդ որս անցանեն ջուրք առուացն ստորին գիւղօրէից և այգեաց. գտանի հետք կամրջոյ միոյ փոքր ինչ 'ի վեր 'ի Թաղի անդ Ձորագեղ:

429. Այս քաղաք առատ է 'ի մասին ջրոյ, զի ունի զերկուս առուս ընկալեալ 'ի Հրազդան

գետոյ անտի անդր քան զքանաքեռ գիւղ. մեծն՝ որ կոչի Մասիս, է 'ի հնոց անտի և է թերևս այն՝ զոր ետ հանել Սմբատ մեծ իշխանն հայոց ըստ Սամուէլ Անեցւոյ 'ի միջոցս թուոցն նճ=նդ,, Սմբատ իշխան բժու, հեծելովս շինեաց զԱկեչառուս, և եհան զառուն Նորևանայ,,, իսկ երկրորդն կոչեցեալ Մզօ-հասանը՝ որ նախ մտեալ 'ի թաղն Կոնդի, մասամբ ինչ գնայ 'ի թաղն Չորագեղջ, և անտի ևս փոքր մասամբ գնայ ընդ երկրաւ յամբոցն. իսկ միւս մասամբ իջանէ 'ի Նոր թաղն. ունի և զվերջացեալ գետակն այսր գաւառի (Քէօր գէլտի-լուղու), և զսևորակ ջուրն որ ելանէ 'ի թաղի անդ Տէրտի-լուղու: Այսքիկ ջուրք բաշխին ըստ մեծի մասին յամենայն պարտէզս և յայգիս, և առա աւելորդացն իջեալ ընդ հարաւ՝ ոռոգէ զբացակայ պարտէզսն և զինչ ինչ արտօրայս քաղաքին: Այլ է և առուն Նորք կոչեցեալ [1], թաղի՝ որ ընկալեալ 'ի գետակէն յատորև քան զՄաւան գիւղ՝ գայ յարևելից շինին և բաշխի յայգեստանսն:

430, Նոյն քաղաքիս այսորիկ բազում այգիք խաղողոյ և ծառաստանք զանազան մրգեղինաց, և կոչին յանուն վայրացն. Չհարի, Նորքայ, Ձորագեղջ ընդ գետն 'ի վեր 'ի ձորամիջան ցքանաքեռ, Նորագեղջ 1, և տալմայի. այգիք այսր վերջին տեղւոյ նորոգեցան 'ի մերում ժամանակի. քանզի առու ջրոյ նորա կայր 'ի վաղ ժամանակաց յաւերութեան՝ զոր ետ նորոգել Հիւսէյին խան սարտարն և զընդերկրեայ Ճանապարհ նորին մաքրել և զջուրն յորդութեամբ հասուցել 'ի տե-

1, Աւերակն այսր գեղջ և եկեղեցւոյն որ 'ի նմա է 'ի հանդէպ այգեստանեացն յարևմտակողմն յանկեան գետոյն առ բլրականն որ կոչի (Քօրօղլի Թէփէ), Նուրբ Նորայ էն բազմաբերանս այգեաց՝ որոց գինին ընտիր քան այլ տեղեացն:

ղին ՚ի Հրազդան գետոյ անտի բաժանեաց և ընդ-վայրն ՚ի վերայ բնակչաց քաղաքին. ուրանօր տըն-կեալ այգիս՝ հասուցին ՚ի բերս. և անկանի տե-ղին յարևմտակողմն Զօրագեղի։

431, ՚Ի մէջ այգեստանեայց շհարի ՚ի հիւ-սիսակողմն անդր է աւերակ մատրան միոյ Գէբ-ւէճանի անուանելոյ՝ շուրջ զորով են բազմութիւք շիրմաց. այգին՝ յորում գտանի աւերակն մատ-րան, էր սեպհական կալուած աթոռոյ Էջմիածնի և վաճառեցաւ ումեմն հայազգւոյ բնակչի Ե-րևանայ։

Աղշէտն կոչեցեալ բլրակ ՚ի հիւսիսակողմն քաղաքիս է գերեզմանատուն հայազգի բնակչացն. ուրանօր ՚ի միջին տեղւոջ ՚ի բարձրաւանդակի է մատուռն տեղի պատարագելոյ ՚ի վերայ գե-րեզմանի Յովհաննու վարդապետի կողեան անո-ւանելոյ՝ յոր անուն կոչի և բլրակն. առ ընթեր գերեզմանի յիշեալ վարդապետին ամփոփեցաւ և մարմին Մովսէս կաթուղիկոսի սիւնեցւոյ՝ ո-րոյ և տապանաքարին գրուած ունէր օրինակ զայս։

„Այս է տապան դամբարանի,
եդեալ շիրմի Ա, ճանապարհի.
տեառն Մովսէսի վարդապետի,
ընտրեալ սուրբ հայրապետի.
որ է տեղեաւ տաթևացի,
նորոգող սուրբ Էջմիածնի.
բացող և շինող գմբէթի,
թուին ՌՁԲ, ին (1633)„։

Այս մատուռն յաւերութեան կայր ՚ի վա-ղուց անտի, զոր նորոգ ետ կառուցանել մէլիք

Ա, Արքունի ճանապարհն՝ զոր ընդարձակ և դիւր ետուն շի-նել յամին 1836, անցանէր և անցանէ ընդ այս բլուր յարևե-լից նորա՝ Բաղլըղ չէշմա նման գերեզմանոցին յառաջ. վասն այնորիկ ասէ. եդեալ շիրմի ճանապարհի։

Սահակ մելիք աղամալեանց այրն մեծատոհմ՝ քա-րամէք և կրօղ յամին 1829. և ինքն ես յամին 1834, փախճանեալ եղաւ ՚ի շիրիմ ՚ի մէջ մատրանս։ Պող և մատուռն մի ՚ի մէջ այգեստանեայց Թաղին Կոզբրայ յանուն սուրբ Աստուածածնի՝ որ յաճախեն ուխտաւորք ՚ի բնակչաց քաղաքիս ՚ի կիւրակէս յինանցն զկնի սրբոյ զատկին։

432, Համար բովանդակ գերդաստանաց և շնչոց նոցին բնակչաց Երևան քաղաքի։

՚Ի Շահրն և ՚ի Կոր Բաղն ՚ի Դաւին.

| համար տանց | | համար շնչոց արուաց | իգաց |
|---|---|---|---|
| 742 | մահմետականք . . . . . . . . . . . . | 1552 | 1513 |
| 191 | բնիկ հայք . . . . . . . . . . . . | 453 | 410 |
| 352 | գաղթական հայք . . . . . . . . . . . | 890 | 794 |
| | ՚Ի Բաղն Տէփէրգաւլ. | | |
| 409 | մահմետականք . . . . . . . . . . . . | 868 | 837 |
| 50 | գաղթական հայք . . . . . . . . . . | 132 | 110 |
| | ՚Ի Կոնդն և ՚ի Չարահբաղն. | | |
| 517 | մահմետականք . . . . . . . . . . . . | 1179 | 1111 |
| 243 | բնիկ հայք . . . . . . . . . . . . | 632 | 522 |
| 11 | գաղթական հայք . . . . . . . . . . | 23 | 17 |
| | ՚Ի Բաղն Նորք Քէշիշեաւլ. | | |
| 84 | բնիկ հայք . . . . . . . . . . . . | 287 | 241 |
| 19 | գաղթական հայք . . . . . . . . . . | 58 | 47 |
| 1668 | մահմետականք միանգամայն . . . . | 3599 | 3461 |
| 950 | բնիկ և գաղթիկն հայք միանգամայն | 2474 | 2141 |

433. Խանաքեռ գիւղ՝ տունք 57. հեռի է յԱլա-
րեւան քաղաքէ երրեւ ժամ մի ընդ հիւսիս՝ 'ի բարձրաւանդակ վայելչուչ տեղւոջ յարեւելեան եզեր Հրազդան գետոյ. այս գիւղ յառաջագոյն եղեալ է բազմամարդ՝ որպէս ցուցանեն աւերակքն տանց: Աւանդութիւն այսր գեղջ աւանդեն ծերունիք թէ՝ երբեմն Խանան անուն կամ քանանիդ ոմն թագաւոր ([illegible]) բնակէր աստ՝ որոյ և զանեղի պալատանն ցուցանեն մերձ յայս գիւղ յարեւելակողմն, և գտանին իսկ հիմունք շինուածոյն. իսկ քոյր նորա աստէն 'ի բուն տեղւոջ գեղջս. և յաճախակի 'ի գործ ածելոյ զանունս քանանաքոյր կամ քանանաքեռ՝ կոչեցաւ Խանաքեռ և եհաս ցմեզ:

Նոյնին եկեղեցիք են 'ի սմա կառուցեալք 'ի կոփածոյ խարտեալ քարանց. մեծ եկեղեցին յանուն սրբոյն Յակոբայ հայրապետի Մծբնայ քաղաքի՝ օրոգաձեւ 'ի վերայ չորից սեանց. ունի զմի սեղան, զերկուս աւանդատունս և զերկուս դրունս արեւմտեան և հարաւային. 'ի վերայ արեւմտեան դրանն եղեալ է գաւիթ փոքրիկ՝ որ այժմ կայ խոնարհեալ. իսկ եկեղեցին յամբողջութեան է՝ ուր աղօթեն բնակիչք գեղջս. չուներ արձանագիր շինութեանն, այլ թուական միայն գտանէր 'ի ճակատի անդ արեւմտեան որմոյն արտաքուստ. ՌՃԽԴ. (1695) զորմէ ասեն լինել շի-

1. [illegible] Կոտայից [illegible] (Հայոց գաւառի և [illegible]) է [illegible]. և այն՝ [illegible] էին [illegible]. և [illegible] էին [illegible] գիւղօրէից. [illegible] Գառնոյ՝ որ [illegible] գաւառ [illegible] Գառնւոյ:

նութեանն. իսկ նորոգութիւն տանեացն և խաչկալին սեղանոյ յամին 1793, որ հանդերձ այլ գըրուածովք ՚ի վերայ դրանն հարաւային:

Իսկ միւսն փոքր քան զայն նմանապէս օրոգած, և է հեռի ՚ի նմանէ իբրև երկուս քարընկէցս ՟Է հարաւակողմն ՚ի բարձր տեղւոջ. ունի զմի սեղան, զերկուս աւանդատունս և զերկուս դրունս արևմտեան և հարաւային. ՚ի վերայ արևմտեան դրանն լեալ է գաւիթ, այլ անկեալ խոնարհեալ կայ առ տեղեաւն. ունի արձանագիր շինութեան ՚ի վերայ արևմտեան դրան՝ ՟Ը այսմ:

,, Աստուածային շնորհաց հոգւոյն արքաեարան, որ և կոչի աստուածածին կոյս մարիամ, գեղեցկաշէն և բարձրաբերձ յոյժ աննման. և անմարմնոց լուսեղինաց է բնակարան, քրիստոնէից մեղաց որբիչ և քաւարան. վաճառականքն ամենեքեան ժողովեցան, հալալ ընչից և մթերից յօժար տ.. վանս, կանգնեցուցին պայծառ դիմօք ազնուական. գլուխ կանգնեալ վերակացու խօջայ Աղաջան, թվին հայոց՝ որ է ՟Ռ, երկ որբելին, խդ ,, (1695):

Ունի շուրջանակի պարիսպ և սենեակս առ պարսպօքն, ուստի երևի լինել մենաստան կուսակրօն աբեղայից: Զաքարիա սարկաւագ դնէ յայս գիւղ զմենաստան ինչ՝ յորոյ ՚ի բնակչացն յիշատակէ զերկուս՝ զՓիլիպպոս եպիսկոպոս և զՄիքայէլ աբեղայ, ՚ի ժամանակս անդ իշխանութեն Միրզինայ խանին. հատոր ՟Ա, գլուխ 29: Ապաքէն բաց յերկուց եկեղեցեաց աստի չիք այլ եկեղեցի կամ տեղի մենաստանի ՚ի գիւղամէջ այսր կամ ՚ի շրջակայսն. ուստի յիշատակեալ մենաստանն ՚ի Զաքարիա սարկաւագէ՝ է սոյն այս եկեղեցի. և եղեալ իսկ է նախ քան զայս վերջին շէնք՝ միւս հնագոյն շինուած մենաստանի ըստ մտաց նորին սարկաւագի դրութեանն:

'Ի մեծի շարժին եղելոյ աստ 'ի Նահանգիս Երեւանայ յամին 1679, մեռան 'ի բնակչաց գեղջս ընդ փլատակաւ շինուածոց 1228, անձինք՝ զորմէ յիշէ նոյն Զաքարիա սարկաւագ. հատոր Բ, երես 51:

Այս գիւղ ունի շուրջ զիւրեւ զայգիս խաղողոյ եւ զծառաստանս պէսպէս պտղոց՝ յորս ընտիր են տանձ եւ խնձոր եւ պահպանին ցնորն. Նոյնպէս եւ 'ի ձորամիջի անդ յերկուս կողմանս գետոյն են ծառաստանք պտղոց՝ յորս ընտիր է սպիտակ թութն եւ տեւէ մինչեւ եւ ցամիսն օգոստոս:

Որջանաքարակուսի հիւսեալ կոփածոյ քարամբք. յոր ագուցեալ կայ յարեւմտեան ճակատի անդ խաչվէմ մեծ ընտիր փորածու. եւ է մերձ գեղջս քանաքեռայ յարեւելեան հարաւ՝ 'ի վերայ ճանապարհին որ տանի 'ի Գեղարքունի եւ 'ի Ծաղկունիս, կից յայգեստանսն այնր կողման. եւ շուրջ զորով են շիրիմք. ունի արձանագրութիւն յարեւմտեան ճակատի անդ 'ի շրջանակս փորածու խաչվիմին 'ի վերայ հիւսեալ քարանցն՝ ըստ այսմ:

,, Ահաւոր անուամբն Աստուծոյ ես Պետերին եւ կենակից իմ աւագ տիկին կանգնեցաք զխաչս բարեխաւս մեզ եւ յիշատակ հոգոց մերոց, եւ զաւակաց մերոց. եւ հայրենիք այգիս զաւակաց մերոց՝ Տաւղապալանին եւ այլ տղոցն. եւ սահմանեցաք ըդտեղիս հանգստարան մեզ, եւ խաչս գերեզմանաց մերոց պահապան: գրողս զմխիթարիչս յիշէք, 'ի թիւ չժդ (1265),,:

Գրուած 'ի հարաւային մուտք 'ի վերայ հիւսեալ քարանց որջանին:

,, Յանուն այ ես պարս... գի իմ ճաճնա եւ մայր իմ եւ քվէրք իմ մաթութս, նաս խաթունըս ծախեցաք մեր սրտայաւժարութեամբ զմեր

հարենիք այգիս պետեւանին ։ գ․ռ ։ ըձ ։ ապ ։ անպա-
կաս առաք · ԱԾ շնորհաւոր առնէ հալալ հայրենիք
յորդեցէ յորդիք · ոչում դաւի չկա՛ ո՛չ մերոց ո՛չ
աւտարաց , ով դաւի անէ , յԾ՟ր լից նզոված · տու-
գանք տայ · ծ · դեկ · Թվիս չժե · (1266) ։ վկա ԱԾ
և աղուչափն · կուլալն · տէրերն · վահրամ · մանԹն ·
դաւիԹ · առաքելն · կարապետն · ստեփաննոս մխի-
Թար վդ · խոցադեղ դեղ յակոբ աշրափն · խաչե-
նեցի վահրամ գ ը գ · անպատ բարսեղ Տրէց · ա-
միրդատն բձնեցի և մխիԹարիչ Տրէց որ զգիր-
գրեցի · դահիակն · յի · ա՟պ · ի պարտն և ։ ծ ։ պ ։ շահ-
նաին և մեղուանային ,, ։

434 , Ա․ինչ · բնակեալ ՚ի հայոց՝ տունք 30 ·
եկեղեցին յանուն սբ ածածնի ։ Կոյ մատուռն
գերեզմանոցաց ՚ի տաշածոյ քարանց յարևելից
գեղջն՝ կիսաւեր · յոլով գերեզմանունք են յե-
զերս այսր գեղջ և խաչվէմք ՚ի շիրիմսն անդ ։

435 , Ա․ան · Թերևս ոմայից գիւղ՝ յորմէ էր
Տ․ Յովհաննէս կաԹուղիկոս · տունք 18 · եկեղեցին
յանուն սբ Ա․ծածնի · հին եկեղեցի գեղջս ՚ի կո-
փածոյ քարանց յաւերուԹեան կայ · որոյ յորմն
արտաքուստ արևմտեան հիւսիսոյ գրի այս ինչ ․․
՚Ի Թուիս ՉԼԴ · (1285) յաշխարհակալուԹեան ար-
քայից արքային Ա․րղուԹեան , ՚ի ԹագաւորուԹե-
վրաց և հայոց Դիմէտրէի ես Դաւիթ որդի Դե-
մէտրէ Թագաւորին Թողի զԱ․անայ զայգեաց
չարէտն վասն միամտուԹեան սոցա և երկարու-
Թեան կենաց մերոց և ԹողուԹեան մեղաց մերոց ։
Արդ՝ որք ՚ի մերոց կամ յօտարաց տէր լինի Ա․տա-
նայ և զհաստատեալ գիրս մեր խափանել ջանայ ,
և շարէտ առնու կամ · · · · · · նզովեալ լիցի ՚ի
սբց առաքելոցն և ՚ի սրբոց հայրապետաց · ընդ
յուդայի դատապարտի և ընդ այլ խաչահանուա-
ցըն , ամէն ,, ։

436 , Ջ․ուղէժ · գիւղ ՚ի հարաւակողմն գա-

ւառիս 'ի վերայ բարձր լեռնաձև առապարի՝ որ հայի հանդէպ դաշտին Գառնւոյ. Թերևս այս լեռնաձև առապար իցէ յիշատակեալն 'ի Ղազարայ Փարպեցւոյ յանուն Ծիրմէժ լերին. զոր և դնէ Տեղագրութիւնն հին հայաստանի թղթա. 470, 'ի սահմանի դաշտին Գառնւոյ. հին եկեղեցի սորա 'ի տաշածու քարանց կործանեալ յերկրաշարժութենէն դիպելոյ յամի 1679, ըստ Զաքարիա սարկաւագի. և կայ տակաւին աւերակն։ Նժմեան եկեղեցին հասարակ շէնք՝ կաթուղիկէ անուամբ և բնակիչքն յազգէ հայոց՝ տունք 22։

437, Տաձորաբակ. այժմ Գծրաբակ. տունք 21. եկեղեցին անուամբ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի. հին եկեղեցի սոցա ևս 'ի խարտեալ քարանց յաւերութեան կայ։

438, Սէմէրէս. տունք 41. եկեղեցին անուամբ սրբոյն Յովհաննու Մկրտչի. և է 'ի կոփածու խարտեալ քարանց 'ի վերայ երկուց սեանց օրոցաձև. և ունի զմի սեղան պատարագի. չէ՛ յայտ թէ ե՛րբ է կառուցեալ և յումմէ՛. այլ որպէս նկատի՝ զկնի երկրաշարժութեանն եղելոյ յամին 1679։ Այս գիւղ ունի զմեծ ակն աղբեր առատ ջրոյ 'ի հիւսիսային սահմանէ (ջորան և բնութ.) մեծի առապարին՝ որ բաժանէ զԿոտայս 'ի սահմանէն Գառնւոյ։ Զկնի ալափարս գիւղի՝ հաւանական երևի թէ այս գիւղ է, որ 'ի հնումն կոչէր Աղբեբերեց կամ Աղբերեց գիւղ 'ի Կոտայս գաւառի։

439, Ջաբղան. տունք 39. եկեղեցին յանուն սրբոյն Գէորգայ. և է այս գիւղ յարևելից կեամփիս գեղջ 'ի սահմանի վերոյիշեալ առապարին։

440, Աշտոր կամ Աշտար. տունք 7։ Ռաշկեւղ. տունք 29. մերձ յայս գիւղ բղխին աղբերակունքն ջրոյ այսր գաւառի։ Եւ Ը հիւսիս իբրև քառորդ մի ժամու 'ի հարաւային սահմանի լերին

Տամրամայ 'ի ծոցաւոր ինչ տեղւոջ է գերեզմանուտ· և կիսաւեր մատրունք է, 'ի նմա:

441, Արամուս· 'ի հնումն Արամօնս, և ըստ ոմանց թերևս Արախոշ· (341)· տունք 45· եկեղեցին անուամբ սրբոյն Յակոբայ: Պաւլին Ա, կաթուղիկոս՝ որ 'ի գեղջէ աստի էր, շինեաց աստ եկեղեցի փառազարդ և տուն բնակութեան իւրեան որ արդ յաւերութեան կայ· և գտանին մասնաւոր որմունք եկեղեցւոյն 'ի սրբատաշ քարանց և 'ի կրոյ· և անդ այս գերեզման նորին Պաւլեայ Ա, որ առ եկեղեցեաւս ամփոփեցաւ: Սուրբ Ծածին· մատուռն ինչ կիսաւեր 'ի վերայ բլրոյն եղելոյ մերձ յայս գիւղ արամուս· յորում գտանի եղծուած արձանագիր այսպիսի· ,, յծզ (907) թուականութեանս Թորգոմեան ես Գրիգոր սիւնեաց տէր որդի վասակայ շատածախ գանձիւք գնեցի 'ի հագարացեաց... ընդ նմին և նորոգեցի զսոր......,,:

442, Տահաղ· տունք 28· եկեղեցին յանուն սբ. Աստուածածնի: Պտղնի· տունք 13· յայս գիւղ գտանի աւերակ մեծի ընդարձակ եկեղեցւոյ 'ի կոփածոյ քարանց: Մէհրաբ· տունք 4: Նուռա· տունք 26· եկեղեցին անուամբ սրբոյն Ստեփաննոսի· աստ է ճանապարհ արքունի անցորդաց: Նորագիւղ· տունք 16, եկեղեցին յանուն սբ. Ածածնի: Արզաքէլ· տունք 29· եկեղեցին անուամբ սրբոյն Յովհաննու: Ներքին Ջիլխէ· տունք 6· եկեղեցին յանուն սբ. Յովհաննու: Մերձ յայս գիւղ յարևմուից 'ի վերայ բլրակաձև առապարի՝ յատորոտի անդ լերինն Տամրամայ է փոքրիկ տաճար գեղեցկաշէն սրածայր կաթուղիկէիւ, այլ չունի գրուած ինչ հայացի կամ անուանակոչութիւն· ուստի 'ի տաճկական լեզու վերաձայնի յայն անուն:

443, Զագ· գիւղ 'ի հնումն 'ի պատմագիրս և է յայսմ գաւառի յարևելից առինջ գեղջ. ջ'ք այժմ աստ բնակիչ հարկատու գերդաստա-

նաց · յորում ՟ը՟ հրամանի իշխանութեն կառու_
ցին յարքունեաց զմեծամեծ բնակարանս դաստ_
ւորեալ կարգաւ վասն զօրաց՝ որք և գտանին այ_
ժմ աւերն և ըստ յատկացեալ ժամանակին փո_
փոխին այլուր և անդրէն դառնան · և է տեղին
՚ի վայելուչ դիրս յարևմտեան ստորոտի բլրակի
միոյ · ուր գտանի և հին եկեղեցի գեղջս ՚ի կո_
փածոյ քարանց · այլ մեծ մասամբ յաւերութե ։

444 , Չագաշնոյ . ես՝ Չնոյ Գէորգէլաւորենշնի ·
է յարևմտից հարաւոյ ձագայ՝ ՚ի հարաւային ըս_
տորոտի այլ բլրակի · յորում են ՟բ՟ շէնք տաճա_
րաց · մին փոքր իբրև մատուռն արտաքոյ աւերա_
կաց տանցն · որոյ և փոքրիկ գմբէթն՝ թերևս
յերկրաշարժութեանց , անկեալ դնի անդէն ամ_
բողջ · և սա է որ անուանի մատուռն գետարգել
սուրբ նշանի · քանզի պահէր այն սուրբ նշան եր_
բեմն աստ · և այժմ իսկ թէպէտ և յաւերութե՝
գնան յուխտ մերձակայ բնակիչք յաւուրս յի_
նանց յանուն այնր սուրբ նշանի ։

Յարեւմտեան որմն նորա ՚ի հարաւակողմն դրան դնի այս
արձանագիր ։

,, Թվ · չհդ · (1325) ։

,, ՚Ի պարոնութեան Զաքարիա թոռն ա_
ւագին մեք Պուլիթ և Սահակ եփաթա , և որ_
դիք մեր բահադնին , և որդիք մեր սարգիկ և
բահադին և աւդուլավայու սոյն որ աւ աստ_
ուած և մեր արևուս համար թողաք զվանաց կո_
ռս՝ զմարդո , եզինւիշո · զամենայն ցեղ կոռ և ըդ_
հասարա · · · ·քո միացուցաք · թէ ոք ՚ի տերանց
կամ աւտարաց կամ աւագաց խափանել ջանայ՝
մեր ազգի մեղացն պարտական է , և յերից սուրբ
ժողովոյն նզոված · զկայենին և զուդային ժա_
ռանգէ և ամենայն ազգաց նալաթ լինի · կատա_
րիչքն աւրհնին յաստուծոյ ,, ։

'Ի հոռոմայերէն գրին արտասանութ.

,,Թվ. . . . կամաւն աստուծոյ ես Գրիգոր կթ. (կաթողիկոս) ամենայն հայոց ամենայն վարդապետօք եւ եպիսկոպոսօք շնորհեցաք զծագ ընծայ գետադարձ սուրբ նշանիս. մի՛ ոք իշխեսցէ հակառակիլ հրամանաց մերոց,,:

'Ի հեթանոսայերէն գրին արտասանութ.

,,Կամաւն աստուծոյ ես մոծակենց Մըկրտիչս ձագավանայ հանդն (…) գնեցի և ետու վախմ գետարգել սուրբ նշանիս. ով որ ետ և առաջ տանէ զձեռ, հայրապետացն նզովածլինի. Թվին ռմէ. (1758):

Իսկ միւս տաճարն նոյնպէս 'ի խարտեալ քարանց և մեծ գրութեամբ՝ փոքր ինչ հեռի Ը արևմուտս հարաւոյ մատրանն իբրև տասն քայլ հանդերձ տամբք բնակութեանցն և պարապաւն իսպառ յաւերութեան գտանի. որոյ հիմունքն և եթ ևեսանին: Օ քարինս յաւերակաց աստի վերածին 'ի ձագ յաղագս նորոգ շինուածոցն անդէն:

Ընդ աստանաք այսր վանաց՝ թէ ջրարբիք և թէ ոստին տեղիք (…) են սեպհական կալուած այժմ աթոռոյ սրբոյ Էջմիածնի. (147):

445. Ծաղկէ, զորմէ յիշեցաք (341). աւերակըն այսր գիւղաքաղաքի գտանի յարևելեան եզեր Հրազդան գետոյ հեռի յԱպրեանայ ընդ հիւսիս իբրև ժամս երկուս, 'ի սարահարթի անդ ձորոյն, և ունի պարիսպ 'ի հաստարակ քարանց. տունքըն իսպառ և պարիսպն մեծ մասամբ յաւերութեան կան. 'ի պարսպի անդ է աւերակ եկեղեցւոյ. գոն արտաքոյ պարսպին 'ի հիւսիսակողմն մատրունք երկու 'ի սրբատաշ քարանց՝ ուր է և գերեզմանատուն, յորս գոն և խաչվէմք շքեղք:

Նախքան զամս ինչ իբր ութսուն գտանէին աս-

տէն հայազգի բնակիչք՝ որք գաղթեալ յայլե-
այլ տեղիս բնակեցան. յորոց ոմանք արդ ևս կո-
չին Արղնեցիք:

446. Անուանքն և [illegible] գիւղօրայց յայսմ
գաւառի:
Ռէտուանջան՝ տունք 16. Զար՝ տունք 41. Մա-
րդուրայ՝ տունք 11. Խանըքիա՝ տունք 19. Պամակէն-
ձոյ՝ տունք 14. Գէօլէճայ՝ տունք 19. Խէշիրբայ՝
տունք 2. Անտօրայ՝ տունք 6. Աշճաբէրր՝ տունք 17.
Ռէֆաշտի՝ տունք 3. Մանգիա՝ տունք 16. Պաղըն-
լու՝ տունք 8. Ռէշամաւ՝ տունք 6:

Նէկ գաւառ կամ Նկարան.

447. Այս գաւառ ունի 'ի հարաւոյ զԱրա-
գածոտն, յարևմտից զնոյն լեառն Արագած, յա-
րևելից զԽորհնունիս և 'ի հիւսիսոյ զԲամբակա-
ձոր (Բէյրի էյէ Չօրն ալլայ). և է արգաւանդա-
հող և ջրաւէտ՝ մեծ մասամբ յաղբերականց. որոյ
օդն և ջուր առողջարար. և են տեղիք հովասուն,
խոտաւէտ և ծաղկաբեր. և ունի անտառ ցածուն
'ի լերինսն և 'ի ծործորսն արևելեան և հիւսիսոյ.
ուրանօր և հանքս պղնձոյ և կապարոյ. և ծծումբ
'ի սահմանի Խուրում՝ յարևելեան գագաթի անդ
Արագած լերին (343): Արևմտեան մասն սորին՝ որ
անկանի առ ստորոտով լերին Արագածու, է դաշ-
տաձև. իսկ արևելեանն և հիւսիսայինն են գրեթէ
թէ լերինք և ձորք. դիրք սորին ընդհանրապէս
առեալ բարձր է քան զսահմանս շրջակայ գաւա-
ռաց:
Որոշմունք գաւառաց ըստ իմիք բացայայտ
են և է դիւրին որոշել զայնս ըստ որում նախ-
նի հարք աւանդեցին 'ի գրուածս իւրեանց, այլ
որոշումն սահմանեզերաց նոցին գիւղօրէիւք

հանդերձ է՝ կնճիռ անլուծանելի գրեա՛ թէ․ և չլինի ճշտորէն որոշել․ զի թէ առնումք զգետս որոշողացն, գիւղ՝ որ ՚ի մի կողմն գետոյն, ըստ մտաց գրուածոց նախնեացն անկանի ՚ի միւսն․ իսկ թէ առնումք զկատարս լերանց, դարձեալ նոյն դժուարութիւնք ելանեն ընդառաջ․ որպէս է ընդ այս սահման և ընդ վարածնունիս: Ապաքէն յայսմ վայրի ոչինչ հայեցեալ ընդ այժմեան որոշմունս ՚ի յետին և ՚ի ներկայ իշխանութեանց, դընեմք պարագապէս միջոց այսց երկուց գաւառաց զգետն հրազդան՝ որոյ յարևմտեան կողմն է սոյն ՚Նիգ գաւառ:

Գիւղօրայք որք անկանին յարևմտեան կողմն Քասաղ գետոյ:

448, Մէրաշէն Ջանղու կոչեցեալ քարվանսարայի՝ որ է յեզեր այսր գաւառի յարևմտեան հիւսիսոյ ՚ի վերայ ճանապարհին՝ որ տանի ՚ի շիրակ:

449, Սէնքի գիւղ բնակեալ ՚ի հայոց՝ տունք 41․ եկեղեցին յանուն սրբոյն Յովհաննու:

450, Տանաճէրան․ տունք 7․ եկեղեցին անուամբ սրբոյն Սահակայ պարթևի: Վասն անուանակոչութեան գեղջս ասեն թէ՝ այնքան գիրանան անասունք մինչև չկարել մտանել ընդ դըրունս տանցն․ վասն այնորիկ ասեն ևս․ տանա տանաճէրան:

451, Պռօշ․ գիւղ ՚ի գլուխ անդ գետոյն՝ որ յանուն գեղջս անուանի նոյնպէս Պռօշ, զոր ՚ի քանի տեղիս յառաջբերէ Զաքարիա սարկաւագ ՚ի պատմութեան իւրում և յարձանագրութիւնս Յօհաննավանաց․ այլ այժմ կոչի Բաշ ապարան ըստ այլազգականին․ տունք 39․ եկեղեցին յանուն սըրբոյ Խաչի․ և է կառուցեալ ՚ի հին ժամանակաց բաւականաչափ մեծութեամբ ՚ի խարտեալ մեծամեծ վիմաց առանց սեան․ և է թերևս գործ ճար-

տարապետին՝ որ շինեաց զեկեղեցին նորատուայ և գանձակայ 'ի գեղջքունի, զի է ըստ ձևոյ նոցին. խոնարհեալ է կամարայարկ նորա՝ զոր 'ի նորոյ փայտայարկ արարին բնակիչքն:

452, Սուրէ գիւղ. տունք 14. եկեղեցին անուամբ սրբուհւոյ Ածածնի:

453, Մէլլուֆայ. տունք 33. եկեղեցին յանուն սուրբ Ածածնի:

454, Չամլու. տունք 46. եկեղեցին անուամբ սրբոյն Գէորգայ: Յարևմտից գեղջս 'ի վերայ քարուտ բլրակի միոյ գտանի բոլորակ շարաքար ինչ և ունի տեղի մտից. յարևմտից շարաքարին արևելեան եդեալ կայ հատուած սիւնաձև արձանի. յորոյ երկու կողմանսն են քանդակք կուռնի. 'ի մին ձևացուցեալ է թևատարած այր մանկահասակ արևելեան հանդերձիւք և հասակ նորա երկթզաչափ. 'ի ներքոյ ոտից այսր այրարձանի երկու տեղիք փորածոյք դաշխուրանաձև. իսկ 'ի միւսումն նոյնպէս երկու դաշխուրանաձև փոսորակեալ տեղիք և 'ի միջոցս նոցին փաթոյթք գրուագեալ գծից. և միւս երկոքին կողմանքն անհարթ. եթէ լինէր ամբողջ այս սիւնաձև արձան՝ որոյ մեծ մասն չգտաւ անդէն, կարելի՛ էր ասել ինչ. այլ այնու ամենայնիւ երևի մնացեալ 'ի վաղ ժամանակաց անտի հեթանոսութեան:

455, Ահմէտլու. տունք 62. եկեղեցին յանուն Սբ Խաչի: Այս գիւղ գտանի 'ի հարաւային ստորոտի փոքրիկ առապարին՝ որ բաղկացեալ է յինչ ինչ քարուտ բլրակաց աղխախելոց ԺԷ իրերօք 'ի վերուստ անտի ընդ արևելս երկայնեալ. յստորոտէ անտի բղխին ականակիտ ջուրք յորդահոս սառնորակ աղբերց:

456, Խնէքէրլու. տունք 18. եկեղեցին անուամբ սրբուհւոյ Ածածնի:

457, Պանչալգը. տունք 50. եկեղեցին յա-

նուն սրբուհւոյ Ածածնի: Այս բնակի մելիք կոչ-
մամբ պատուաւոր բնակիչն այսր գաւառի:

458. Ճէրաշլու. տունք 38. եկեղեցին անու-
ամբ սրբոյն Սինակեռիոսի՝ որ է փոքրիկ մատու-
ռն ի կոփածոյ քարանց և կարի անձուկ վասն
ժողովրդեանն. ուստի մտադրեալ են բնակիչքն
շինել ի նորոյ աղօթատեղի ի մէջ տանց գեղջն:
Մերձ ևս քան զայս մատուռն ի բարձր տեղւոջ
է ամրոցիկ ինչ յորձաքար կռանակոփ վիմաց և
ի չորեսին անկիւնսն չորք հաստատուն բրգունք
կրաձոյլք. և որպէս նկատի, է գործ հին նախնի
հայոց ի ժամանակի անդ հեթանոսութե և տե-
ղի ապահովութեան նախնի թագաւորացն յամա-
րայնի. զի ոչ այնքան ասի ամրոց, որքան պալատ
կամ ապարան իշխանաւորի ուրուք. քանզի չո-
րեքկուսի ընդարձակութի նորա չէ՛ աւելի քան
ինն հարիւր քառակուսի գազ պարսից. և բաց ի
չորից բրգանցն՝ տարածութի միջին տեղւոյ նորա
լեալ է յառաջագոյն կամարայարկ երկբաժին.
և զտանին տակաւին հիմունք սալաթոռոցն կա-
մարաց ընտիր տաշածու ի նոյն յորձաքար վիմացն
և սեամքն մտից դրան ընդ արևելս. ուստի և
չէ՛ օտար ասել՝ ընկալեալ այս գաւառ երկրորդա-
բար զանուն իւր ի շինուածոյ աստի ապարանից
Ազարան:

459. Պաշարճող. տունք 21. եկեղեցին յա-
նուն սրբուհւոյ Աստուածածնի:

460. Պալուճէ. տունք 7. սոտ տակաւին ոչ
գոյ եկեղեցի: Ի միջոցս այսց երկուց գիւղօրէից
է աւերակ կոփածոյ քարամբք պանդոկի. որոյ
կամարայարկքն խախտ իջեալ են. կան մեծ մա-
սամբ չորեքկուսի որմունքն յամբողջութեան.
դուռն նորա ի հարաւոյ կամարակապ. ի վերայ
դրանս ի տաշածու շարաքարի անդ ունէր ար-
ձանագիր ընդարձակ հայացի տառիւք, այլ ոմանք

՚ի քարանց անտի անկեալ և անհետացեալ, և մնա-
ցեալ քարանցն գրուած ևս եղծեալ ՚ի թշնա-
մեաց հնութեան. ուստի բաց ՚ի թուականէն՝ որ
՚ի սկսուածի անդ, չեղև ընթեռնուլ զայլ ինչ.
և էր ,, ոկբ ,, (1213). և որպէս ցուցանէ թուա-
կանն՝ կառուցեալ է այս պանդոկ յաւուրս իշ-
խանութեան այսորիկ կողմանց Աչէի իշխանաց
իշխանի որդւոյ Սարգսի ՚ի ժամանակի անդ Զա-
քարիա սպասալարի. և կոչի այժմ այս պանդոկ յա-
նուն գեղջն՝ Ղալայճըգ Պէտրէվանտըսը:

461, Պլէխէր. տունք 30. եկեղեցին յանուն
սուրբ Աստուածածնի:

462, Սարաչըլըխայ. տունք 30. եկեղեցին ա-
նուամբ սրբուհւոյ Աստուածածնի. սա եղել
է յառաջագոյն ՚ի կոփածու խարտեալ քարանց
եկեղեցի՝ որ այժմ խախտ աւերեալ կայ. և քա-
րինք շինուածոյ նորին գոլով սեաւ՝ կոչեցել է
այս գիւղ յայն յանուն. զի կան մասնաւոր որ-
մունք:

463, Սողճի. տունք 14. եկեղեցին յանուն
սուրբ Աստուածածնի:

464, Սուրբ Աստուածընկալ 1. տունք 22. այսպէս կոչի
՚ի վաղուց անտի յանուն մենաստանին եղելոյ ան-
դէն. և է ՚ի ձորամիջի յարևելեան եզեր Պա-
սաղ գետոյ. բնակութիւնք տանցն երկայնեալ են
առ քարատակաւն և եկեղեցին մենաստանաւն

1, Սանդուխտին է՝ թէ ՚ի նուաճանել զայս փառաւոր ան-
ձօնեցին ՚ի հիման սեղանոյն սրբոյ Զէող սրբոյն Յակոբայ
առաքելոյ. ևս և զմասն ինչ յաստուածընկալ խաչէն Վարա-
գայ. և վասն այնորիկ եկեղեցին (աստուածընկալ սուրբ նշան)
զոր այժմ անուանեն բնակիչքն սուրբ աստուածածին:
Նաև ասանդի՝ թէ երբեմն ոմն ՚ի հայաստանի բնակ-
չաց տեղւոյս պատահեալ ոմն այլազգւոյ ՚ի ճանապարհի,
հարցեալ էր՝ թէ ուստի՛ գաս. սա պատասխանի՝ (Աւնոհ

հանդերձ անմիջոց յեզեր գետոյն ՚ի բարձր դը-
րութեան և անկանի յարևմտեան հիւսիս լերինն
արայի · տաճարն՝ որ անուանի կաթուղիկէ ը̄ ար-
ձանագրին, է անխուն, փոքր դրութեամբ և ունի
զմի սեղան տեղի պատարագելոյ, զերկուս փոք-
րիկ աւանդատունս, զերկուս դրունս՝ արևմտեանն
ը̄ մէջ գաւթին, իսկ հարաւայինն՝ որ վասն այնր
կողման փոքրիկ մատրանց, հիւսեալ է ՚ի յետնոց
տաշածու քարամբք: Այս տաճար փոքր կաթու-
ղիկէիւ շինեցաւ ՚ի Բուրդ անուն իշխանաց իշ-
խանէ որդւոյ Վաչէի՝ որոյ և շինութեանն արձա-
նագիր գտանի յորմն հարաւային աւանդատան
անդր քան զբարաւոր դրանն՝ յայս օրինակ:

,, Շնորհօք և ողորմութեամբն աստուծոյ
ես Բուրդ իշխանաց իշխան որդի մեծին Վաչէի,
և կենակից իմ Խորիշահ դուստր մարզպանա շի-
նեցաք զսուրբ կաթուղիկէս յիշատակ հոգոց մե-
րոց · ամենայն զարդուք զարդարեցաք · տուաք
ընծայ զմեր գնած այգին ՚ի Փարպի, ա̄ խուպան
աւշական, ա̄ այգի ՚ի Կարբի, ա̄ շինական, գ̄ ողջա-
տուն . . . . . ո̄ղ̄գ̄ թուիս ,, (1244):

Դաւիթ սորա՝ այն է, դրսին տաճարն կա-
ռուցեալ է ՚ի վերայ չորից մենաստանի սեանց և
է վայելչաձև, այլ այժմ կայ իբր կիսաւեր · չունի
առանձին արձանագրութիւն ինչ շինութեան · և
թերևս շինեց և զսա նոյն իշխանաց իշխանն Բուրդ
ընդ ներսին տաճարին · զի յայն ժամանակն ա-

տեղւոյն) · Երկրորդ այլազգին ընդ [illegible] պատասխա-
նին և հարկանէ զնա և խոցոտեալ [illegible] [illegible] [illegible]
[illegible], այլ նորա [illegible] ընդ [illegible]՝ [illegible] [illegible]
[illegible], [illegible] [illegible] [illegible]՝ նոյն է [illegible] · [illegible] [illegible]
[illegible] · [illegible] [illegible] [illegible] · և [illegible] [illegible]
[illegible]՝ [illegible] [illegible] ՚ի [illegible]: [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] ՚ի [illegible] [illegible]՝ [illegible]:

ռաւելապէս տեսանի շինութիւն գաւթաց կամ տաճարաց կից ընդ իսկական եկեղեցիան· որպէս ՚ի մենաստանին յօհանավանաց, սաղմոսավանաց, հառիճոյ վանաց ևն· որք յայնմ դարու կառուցան։

Կից ՚ի ներքին տաճարն ՚ի հարաւոյ են փոքրիկ մատուռնք կամ խորշիթք ՚ի խարտեալ քարանց· ՚ի վերայ դրան միոյ ՚ի նոցանէ գտանի գրուած նորոգութեանն՝ ըստ այսմ։

„՚Ի ոծզ (1207) թվին նորոգեցաւ Աստուածածինս և հաստատեցաք առաջնորդ տր ուխտիս՝ տէր գրիգոր· եղազար· վարդա· յօհան· հար· ծերթա· ածատ· ըռստակ· սարգ· փա· և այլ միաբանացս՝ որ հաստատեցաք զուխտ միաբանութե հոգոց մերոց· · · տր եկե· · · · · · · · „։

՚Ի Թուականէ այսր գրուածոյ երևի թէ՝ նախ քան զշինութիւնն ՚ի Քուրդ իշխանէ գոյր աստ եկեղեցի և միաբանութիւն կուսակրօն եղբարց· ուստի և այն շինուած եղեալ է կրկին կառուցումն և ոչ նորապէս և առաջին հիմնարկութիւն։

՚Ի շրջակայս այսր տաճարի են աւերակք տանց· և մեծամեծ խաչվիմօք շիրիմք· յորոց ոմանք անկեալք և բեկեալք և ոմանք կան տակաւին ՚ի կանգուն· և միոյն կիսաբեկ վիմին գրուած՝ ըստ այսմ։

„՚ի Թ· Վ։ ռկթ· ՚ի կամս աստուծոյ ես յոհաննէս որ ետո կանկնել սուրբ նշանս աստուածատուր քահանայ· · · · „։

465, Ճնաւէղ· յաղագս ունելոյ սորա յերկուց կողմանց զերկուս փոքրիկ ձորակս բացելս ՚ի հեղեղաց· տունք 44· եկեղեցին յանուն սուրբ Աստուածածնի։

Գիւղօրայք որք անկանին յարեւելեան կողմն գետոյն.

466, Պարանըրրգիւղ. Հանդէպ քաղաք գեղջ՝ ունի 19. եկեղեցին յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչի։

467, Հաճիգողըր. ունի 10. եկեղեցի ոչ գոյ տակաւին։

468, Սամադարլըն. ունի 14. եկեղեցին անուամբ սրբոյն Ստեփաննոսի Նախավկայի։

469, Իմրլու. ունի 18. եկեղեցին յանուն սրբոյ Յարութեան։

470, Պիւլալլէ. ունի 24. եկեղեցին անուամբ սրբոյն Յօհաննու։

471, Հաճըլու. ունի 29. եկեղեցին յանուն սուրբ Աստուածածնի։ Այս գիւղ գտանի յարեւելեան կողմն այսր դաշտի, յարեւմտեան սորոտի լերին՝ որ երկայնեալ 'ի հիւսիսոյ ընդ հարաւ, բաժանէ զայս գաւառ յերկուս մասունս. և է 'ի ծոցաւոր տեղւոջ, զի 'ի հիւսիսոյ և 'ի հարաւոյ են դիւրագնաց առապարք։

Եկեղեցի այսր գեղջ 'ի սրբատաշ քարանց, և է կրկին. միջին տաճարն բարձրակամար և անսիւն. ունի զմի սեղան սրբազան խորհրդոյն և զերկուս աւանդատունս հանդերձ վերնայարկօք. հանդէպ որոց յանկիւնսն արեւմտեան են նոյնպէս աւանդատունք համակ 'ի կոփածոյ քարանց. ունի և կաթուղիկէ, բայց քայքայեալ. տաճարն 'ի ներքուստ յամբողջութեան, այլ արտաքուստ յորմոց նորա անկեալ կան ինչ ինչ քարինք, իսկ կաթուղիկէն փայտայարկ արարաւ 'ի նորոյ. ունի և տաճար արտաքին մի գաւիթ 'ի վերայ չորից մխատանի սեանց մեծ դրութեամբ քան զմիջինն, բայց կամարայարկն որ 'ի վերայ չորից սեանց խախտ խոնարհեալ դնի առ տեղեաւն և ինչ ինչ տեղիք որմոց նորա. արձանագրութիւն շինութեան մե-

ծագումն տաճարիս լեալ է ՚ի վերայ մեծամեծ վէմին բարաւորի դրան միջին տաճարի արտաքուստ, այլ յաղագս անպիտանութեան վիմին խապառ անհետացեալ են տառքն բազմատող յանձրևաց. և հազիւ գտանին Ե կամ Զ տառք յամբողջութեան և միւսքն հիմնովին ոչնչացեալք. ուստի չեղև ընկալնուլ զծանօթութիւն ինչ՝ թէ ե՞րբ կամ յումմէ՝ ձեռնարկեալ, թէև ձևն կառուցման ցուցանէ լինել ՚ի սկիզբն անդ ԺԳ՚րդ դարու. գտանին երկու և եթ դժուարընթերց արձանագիրք ՚ի հարաւոյ կողմանէ արտաքուստ յորմն միջին տաճարի՝

որք են.

„՚Ի թուիս ՈԾԷ (1208). կամաւ բարերարին աստուծոյ ես Մխիթար ծառայ քի միաբանեցա եկեղեցւոյս և զիմ հոգեպահուստ ետու սոցա և սպասաւորք սորա խոստացան պատարագել զՔրիստոս ՚ի տարին՝ եղիականն շաբաթ աւրն. կատարիչք հրամանաց մերոց աւրհնեալ եղիցին. և խափանեն, մեղացն պարտական է առաջի աստուծոյ, ամէն.“

Յարևելեան դրան արձանագիրն.

„Կամաւ աստուծոյ ես Սոզէ աշտարակեցի ետու զիմ այգիս յածածինս. և սպասաւորք սորին հաստատեցին ՚ի տարէն Ե աւր պատարագել զքս զածածնին շաբաթ աւր .......“

Այս մնաց արձանագրացս Երևի թէ՝ էր այս տեղի հուչակաւոր մենաստան ինչ. զի և շուրջ զտաճարաւն գտանին ընդարձակ հիմունք պարսպի նորա ՚ի կրոյ և ՚ի քարանց՝ որք վասն վաղեմնի աւերանացն անկեալ են ընդ շինուածովք տանցն բնակչաց. նոյնպէս և տեղիք սենեկացն կրօնաւորաց. և ըստ որում բնակիչքն ՚ի նոր գաղթակա-

նաց՝ չունին զաւանդութիւն ինչ ՚ի մասին այսր տաճարի և յատկացեալ անուանակոչութեան նորա կամ գեղջն ։

Ունի այս մենաստան յարևելից զգերեզմանոցս հին աւուրց․ որոյ մատուռն ՚ի կոփածոյ քարանց աւերեալ կայ և միայն հիւսիսային որմն նորա գտանի ՚ի կանգուն առանց ինչ գրուածոյ , նոյնպէս և տապանավէմքն ։ Մերձ յայս որմն ՚ի հիւսիսոյ կառուցեալ կայ մեծ խաչվէմ ընտիր փորածու․ շուրջ զորով և հիւսուած տաշածու քարանց հանդերձ կրով․ յարևմտեան ճակատի անդ՝ անդր քան զկատար փորածու խաչվիմին ՚ի վերայ հիւսածու քարանցն գրի այս ինչ ․ ,, Ո մխիթարիչս աւշականեցի որթեվա . . . իշէ ,, ։ Յարևելից հարաւոյ գեղջս է ձորակ ինչ անտառուտ․ զորմէ այլազգիք ասեն․ Խահրատ փէրէօէ․ վարդապետի ձոր ։

472, Մօլլաղա․ տունք 24․ եկեղեցին յանուն սբ̃ցն Պետրոսի և Պօղոսի ։

473, Կարապօղլաղ․ տունք 23․ եկեղեցին անուամբ սրբուհւոյ Աստուածածնի․ և է այս գիւղ ՚ի հիւսիսային ստորոտի լերինն արայի ։

474, Աղըլը․ տունք 25․ եկեղեցին յանուն սբ̃ Աստուածածնի ։

475, Կարաջալէրան կամ Ղարաջօրան․ յստորոտի արևելեան հիւսիսոյ լերինն արայի․ տունք ՚ի հայոց 9․ եկեղեցին յանուն սբ̃ Ածածնի․ տունք ՚ի տաճկաց 29 ։

476, Համամլու և Կօշղար ալը․ կրկին գիւղօրայք յարևմտեան ստորոտի լերին արայի․ յառաջինն 9, տունք և յերկրորդին 8․ երկոցունցն բընակիչք են ՚ի տաճկաց ։

477, Ղարաքէշլի․ տունք 9 ։ Ղըփրաձըլու․ տունք 28 ։ Ղէմալըղ չէմէն․ տունք 11 ։ Կիւզլուք․ տունք 11 ։ Ղէմալըղըն կամ Ղափանլու․ յարևմտեան եզեր ՚ի քա֊

բափան ձորոյն Հրազդան գետոյ. տունք 7։

478, 'Ի վեր անդր քան զԲաբաքիշէ գիւղ հեռի իբրև կէս ժամ 'ի ծործորս լերինն է սիւնազարդ փառացի տաճար. շուրջ զորով և սենեակք կրօնաւորաց. այլ որպէս տաճարն մեծ մասամբ, նոյնպէս և սենեակքն խպառ յաւերութեկան. լեալ է և այս տեղի մենաստան հռչակաւոր և անուանի. և կոչեն այժմ այլազգիք զանուն տեղւոյս Մուղ քիլիսէ, ևս՝ [illegible]. զի գոլով տեղւոյն անտառուտ՝ գտանին և արջք։

Արձանագիր շինութեան տաճարիս գտաւ յորմն նորա հիւսիսային 'ի ներքուստ 'ի բարձրութեան անդ և էր բազմատող, այլ գրեա՛ թէ բոլորովին եղծեալ էր յայլազգի ձեռաց. և հազիւ նշմարեցաւ 'ի սկսուածի անդ թուականն և անուն կառուցանողի այնր. „ Ի Թվ. ՈԿ (1211). Ես Սամս խաթուն ամուսին Վաչէի, դուստր ..... ... „ ։ գտան և ինչ ինչ արձանագիրք նուիրատուաց յորմունսն և 'ի կամարսն՝ որք ոչ յայտնէին զհարկաւոր ինչ պարականս. յորոց մին անհա՛ ըստ այսմ. „ Կամաւն Այ ես Նիկիկս միաբանեցա սբ ածածնիս և տվի սբ նշան և այլ արդիւն. և սպասաւորք սրբոյս հաստատեցին 'ի տարին Ե աւր ժամ.... „։

479, Մենաստան մի ևս գտանի յարևելեան լանջի անդ լերին՝ յորոյ ստորոտի է գիւղն Բջնի անուանեալ և խորաձորն Հրազդան գետոյ. և հեռի է 'ի գեղջէ անտի 'ի վեր ընդ լեառն աւելի քան զքառորդ մի ժամու. տաճարն փոքրիկ խաչաձև 'ի կարմրերանգ կակուղ քարանց՝ որոյ հիւսիսային որմն և եթ գտանի 'ի կանգուն. քանզի միւս փլուածքն ամեն եղեալ 'ի շարժէն դիպելոյ յամին 1827։

Զգտաւ ամենևին նշմարանք ինչ արձանագրութե ոչ յամբողջ որմն նորա և ոչ յաւերած-

ըն · գտանին և քանի ինչ աւերակք տանց 'ի հարաւոյ և յարևմտից տաճարին և անհեթեթ վէմ մի մեծ 'ի հիւսիսոյ մերձ այն · հայեցեալ յանուանակոչութիւն գեղջն Ալիշար , կամ լաւ ևս ասել ըստ պատմագրաց Ալեքսնիս · վասն որոյ կարելի է ասել վասն տեղւոյս՝ թէ է մենաստանն թեղենեաց · զորմէ յիշատակեն պատմիչք և դնեն 'ի Նիգ գաւառի , զի յանուանէ գեղջն կոչի և մենաստանն : Ի մենաստանէ աստի էր և Կիրակոս գծծակերպ գիտնականն՝ որ վարուք առաւել քան թէ բանիւք վերծանէր , որ բնակէր յոլովակի յանապատին՝ որ Թեղենիան կոչի 'ի Նիգ գաւառի՝ առ հօր Սրբեմիայի , ճգնաւորի քաջի և ընկերակցի իմոյ ,, Մեռանի · Ջ · Թ , գլ · 'ի Ժ , րդ դարուն : Վանահայր տեղւոյս Տուրքիկ անուն ըստ Կիրակոսի գանձակեցւոյ 'ի Ժբ , րդ դարուն ,,, որ բարիոք կարգաւորեաց զվանքն (Թեղենիս)՝ զամենայն ինչ հասարակաց լինել , և առանձին ոչ ինչ ստանալ ,,:

480 , Աջղուան գիւղ՝ որ գտանի 'ի ծագաւոր վայրի յարևելեան ստորոտի լերին բնակեալ 'ի հայոց և 'ի տաճկաց · տունք հայոց 34 · եկեղեցի նոցա է կրկին՝ մին 'ի հիւսիսոյ արևելից յեզեր բնակութեանց , որ լեալ է յառաջագոյն թերևս մատուռն գերեզմանոցաց , այլ զկնի աւերութե խարտեալ քարամբ շինուածոյ նորին՝ հասարակ քարամբք և փայտիւք ծածկեալ զայն բնակչացն՝ աղօթելին 'ի նմա և կոչի յանուն սրբոյն Գէորգայ , շուրջ զորով է և գերեզմանուտ · իսկ միւսն 'ի գիւղամէջ անդր՝ զոր նորոգ շինեցին բնակիչքն սակս փոքրկութե առաջնոյն և է յանուն սրբոյն Ստեփաննոսի Նախավկայի · տունք տաճկաց այս գիւղ՝ 15 :

481 , Անուանք արգաքանոյ · այսպէս անուանի այժմ , այլ հին աւանդութիւն բնակչացն կոչէ զայն Սուրբ Յածածին Նեղոսի · զի ըստ մէջ մենաստա_

ծին և գեղջն գտանին աւերակք տանց և անուա-
նեն զայն Լեղու․ և ասեն՝ լեալ է անդ յառաջն
բնակութի ամուսնաւոր գերդաստանաց և գիւղ
իսկ յայն անուն․ յոր անուն կոչի և այն մենաս-
տան․ և է հեռի յԱշտարակայ ՚ի վեր ընդ ծործորս լե-
րինն աւելի քան զքառորդ մի ժամու․ որոյ եկե-
ղեցին է կրկին՝ միջին և արտաքին․ միջին տաճարն
փոքր և անսիւն․ ունի զմի սեղան սրբազան խոր-
հրդոյն, զերկուս փոքրիկ աւանդատունս և զմի
դուռն յարևմտից ընդ արտաքին տաճարաւն և
է ՚ի միջավայր տանեացն կաթուղիկէ փոքրիկ․ իսկ
արտաքին տաճարն կառուցեալ ՚ի վերայ չորից մի-
ասնանի սեանց վայելչաձև կամարայարկ՝ ընդար-
ձակ քան զմիջին տաճարն․ յերկոսին անկիւնսն ա-
րևելեան՝ յաւելորդսն անդ քան զմիջին տաճա-
րին շինուած են կրկնայարկ փոքրիկ մատրունք
տեղիք պատարագելոյ․ միակ դուռն այսր արտա-
քին տաճարի յանկեան արևմտեան հարաւոյ․ և
արտաքին կամար նորա անկիւնաւոր պալարուն է
որմն ՚ի ներքս կարի չքնաղակերտ կերտուած․ յորոյ
վերայ ընդ անկիւնաւոր կորնթարթսն գտանի քա-
նի ինչ բառ միատող ամենամեծ տառիւք՝ ԹՎ այսմ
,, Մեծաւին շնորհիւն ՚ի յաշխա… ակա ի ոք
թէ,,․ վերջին երկու բառքն՝ որպէս նկատէր, վնա-
սեալ ՚ի շարժէ՝ յայտնէր և ոչինչ։

Գտան թէպէտ ինչ ինչ գրուածք յորմուն-
սրն արտաքին տաճարի, այլ ոչ ամենայն յանուն
նուիրատուաց․ և ոչ յանուն կառուցանողի զայս․
և այնք ևս դժուարընթերցք․ յորոց մին ՚ի վերայ
վերին բարաւորի դրան միջին տաճարի ԹՎ այսմ․

,, Յուսովն աստուծոյ ես Հայրապետս միա-
բանեցայ ՍԲ ուխտիս և ետու Ճ․․․․ գինն որքա
շնորհեցին Ի աւր․ Ա ժամ ինձ գործ……․ թվ․
չԻ,, (1271)։

Բնակութիւնք կամ խրճիթք կրօնաւորացն

իսպառ աւերեալք. յարեւմտից տաճարիս իբրեւ քառորդնկէց մի 'ի բարձր դիրս է աւերակ գեղեցկաշէն մատրան միոյ. որոյ 'ի շրջակայս են շիրիմք 'ի վաղ ժամանակաց. որոց խաչ վէմք անկեալ դնին առ տեղեաւն. 'ի վերայ միոյն գտաւ գրուած այսպիսի. ,, Կամակցութ͞ե ս͞բ եւ արժանաւոր վարդապետի մարգարէի կանկեցի ... ,,:

482, Տէւլէւէ. Գիւղօրայք կրկին նովին անուամբ վերին եւ ներքին անուանեալք. յորս տունք բնակեալք 'ի տաճկաց են 17: Վանզի այս ձոր՝ որոյ յստորին ծործորի է գիւղն արզաքան եւ մենաստան նորա, երկայնեալ է ընդ հիւսիս իբրեւ ժամս երկուս եւ երկոքին կողմանքն են անտառուտ առապարք. 'ի վերին ծայրի ձորոյն 'ի բարձրաւանդակի երեւի հանքն կապարոյ՝ ուր ասեն բնակիչքն թէ՝ 'ի ժամանակս խանութեան հիւսէյին սարտարի աշխատեցան ոմանք յոյնք 'ի վրացտանէ: Յարեւմտից այսր հանքի 'ի միւս անտառուտ առապարի ասեն լինել միւս եւս տեղւոյ մենաստանի, այլ սակս դժուարութեան ճանապարհին չկարողացաք հասանել անդր եւ ստորագրել:

483, Յարեւելից հիւսիսոյ ներքին Տէւլէւէի գեղջ է ծործոր ինչ զոր անուանեն Զորոտ. յորում 'ի բարձրութեան անդ 'ի կուրծս հարաւային առապարի ձորակին է աւերակ տեղի մենաստանի 'ի վայելուչ դրութեան շրջապատեալ անտառօք. որոյ եւ ջուրն 'ի վերուստ անտի յաղբերց՝ մաքուր, մարսողական եւ ընթանայ խոխոջանօք ընդ առուակ ինչ առ մենաստանաւն. են անդէն եւ պտղատու ծառք՝ յորոց եւ քաղեցաք զսալոր 'ի վերջին աւուրս օգոստոսի այսր ամի 1842:

Եկեղեցի մենաստանին մեծ մասամբ կործանեալ է՝ եւ գուցէ՛ յերկրաշարժութենէ. եւ կայ 'ի կանգուն միայն որմն հիւսիսային. լեալ է

միջակ մեծութեամբ միով սեղանաւ և երկու փոքր աւանդատամբք. յորմէ այն 'ի ներքուստ մերձ 'ի դուռն աւանդատան այնր կողման գտան սոյն արձանագիրք։

,, Կամաւն աստուծոյ ես Սեւորբ երէց գնեցի զշատլըյսենց այգոյն չորեքն զանձրեւին բաժինն 'ի խ. դաշեկան և ետու սուրբ աստուածածինս. և սպասաւորքս ետուն Է պատարագ 'ի տարւոջն. ո՛վ խափանէ իմ մեղացն պարտի...,,։

'ի ներքոյ նորին.

,, Կամաւն աստուծոյ ես քահանայապետս և դասապետս միաբանեցաք սուրբ ուխտիս... աշտարա... ու այուն դրաւք զնծանս շինեցաք և այլ ինչս տվաք. և միաբանքս հաստատեցին 'ի տարին Է պատարագ մեզ 'ի Թուիս ոծզ (1207),,։

'ի ներքոյ նորին.

,, Կամաւն աստուծոյ մեղաւորս սարգիս վարդապետ՝ որ առաջնորդ եղէ և շինեցի զսուրբ աստուածածինս և ետու զդրած այգին և հնձան 'ի շէնդաւիթ և յէր. և զիմ բաժին այգին 'ի ձիթէնիս և հնձան... շալ. .ն զիմ բաժինն. հայրս և եղբարքս հաստատեցին 'ի տարին Ժ աւր ժամ. ով խափանէ...,,։

Յարձանագրութեան աստ նշանակի՝ թէ ,, շինեցի զսուրբ աստուածածինս ,,. այն շինութի ոչ նշանակէ զայն 'ի հիմանէ, այլ զնորոգութիւն ինչ: 'Ի փլեալ քարինսն որմոց բազում աշխատեցաք գտանել զայլ ինչ գրուած յայտարար անուան կառուցանողի սորին և կամ մենաստանին. չե՛ղև հնար։

Այս ձոր իջէ թերևս անուանեալն Պ թո-

ջոր 'ի նահանգին Ի՚ջնոյ ըստ յառաջբերելոյ Վին
Հայաստանի. Թղթա. 453. և ձիրաւի գտանի մերձ
'ի բջնի յարևմտից նորա. և ունի ջուր առատ ժո֊
ղովեալ յաղբերականց 'ի ծործորաց եղելոց ձին֊
քեան՝ որ ընթացեալ ընդ ձորն յարևելս հարա֊
ւոյ և անցեալ զառաջեաւ արգաքան գեղջ՝ ան֊
կանի 'ի հրազդան գետ. ուր է կամուրջ փայտեայ
'ի վերայ գետոյն: Յայսմ ձորի գտանին օգտակար
բոյք և ընտիր ծաղիկք՝ յորս կարի հոտաւէտ
ծաղիկն բրաբիոն, զոր կոչեն ծաղիկ [illegible]. և բոյսն
երկարացօղուն իբրև երկու կանգուն՝ որ տայ 'ի
ծայրսն գնդակաձև ծաղիկ. կոչեն սմա պլպղգա֊
կան անուն՝ ղանբաֆ. և է սեւն փորձեալ դեղ առ֊
Բըձամ կոչեցեալ ակարութեանն, զի 'ի ծաղկանց
անտի առեալ և եռացուցեալ 'ի ջուր՝ տան ըմ֊
պել հիւանդին. որ զկնի քրտնաբեր լինելոյն,
մաքրէ և զկիտուածս մեռեալ արեանն և առող֊
ջացուցանէ զախտակիրն փութով:
484, Ինջնի. 'ի վեր անդր է ձորն հրազդան
գետոյ հեռի յարգաքանայ իբրև ժամ մի 'ի մէջ
ձորոյն՝ յարևմտեան եզեր գետոյն. հնագոյն ամ֊
րոց նորա կամ բերդն է՝ ուստ ինչ բնական դրու֊
թեամբ, 'ի հարաւոյ և յարևելից ուղղաբերձ քա֊
րակտուր անմատչելի. յարևմտից և 'ի հիւսիսոյ փո֊
քր ինչ սատարատովք և հնարաւոր ընթացից մարդոյ,
այլ այնք ևս ամրացեալ բարձրաբերձ պարսպօք
և աշտարակօք յորձաքար վիմաց և 'ի կրոյ. և մուտ
ելից նորա յարևմտից. ինչ ինչ տեղիք այսց պար֊
պաց քայքայեալ են. յաղագս հին աւուրց գոլոյ
շինութեանն. գլուխ կամ կատար նորա տափա֊
րակ և բաւականաչափ ընդարձակ. ուր տեսանին
աւերակք հին շինուածոց՝ յորոց երկուք 'ի կո֊
փածոյ քարանց և 'ի կրոյ, թերևս տաճարք՝ տե֊
ղիք աղօթից փոքր դրութեամբ. յաղագս աւե֊
րմանցն չգտաւ 'ի նոսա գրուած ինչ:

Քաղաք ըստ հնոց, կամ գիւղն ըստ ար֊դեանս անմիջապէս յարեւմտից ամրոցին եւ 'ի հիւ֊սիսոյ գետոյն՝ է բաւականաչափ տարածութիւն 'ի խորաձորի անդ երկայնեալ ընդ գետն, եւ ծա֊ցաւորեալ յատորոտի անդ լերինն. 'ի վաղեմնի շի֊նուածոց սորա գտանին քանի փոքրիկ տաճարք խոնարհեալք. իսկ աւագ եկեղեցին աւելի ընդ հիւսիսակողմն շինուածոցն կայ յամբողջութեան եւ է կառուցումն նորա հաստատուն 'ի սրբատաշ մեծամեծ քարանց. միջին երկայնութիւն նորա 'ի ճակատէ բեմին ցդուռն արեւմտեան 21, քայլ հա֊սարակ եւ լայնութիւնն 17. եւ է առանց սեան, բայց յերկուց կողմանց կից ընդ որմունսն հարա֊ւային եւ հիւսիսոյ՝ թողլով զմեծ բաժին ընդ սե֊ղանն, բարձրացուցեալ են իբրեւ գազ եւ կէս լայ֊նութեամբ 'ի մեծամեծ վիմաց զասլաթոռսն՝ յո֊րոց վերայ ձգեալ բարձր հաստատուն կամար, կա֊ռուցեալ են զկաթուղիկէն 'ի միջավայր տանեաց այսր արեւելեան բաժնի. եւ է ընտիր տաճար փա֊ռացի. միակ սեղան նորա ընդ արձակակամար, ունի եւ յերկուս կողմանս զերկուս աւանդատունս, եւ զերկուս դրունս. արեւմտեանն հիւսեալ է այ֊ժմ հասարակ քարամբք եւ ընդ հարաւայինն մու֊տանել անեն: Այլքարինք տանեացն մեծ մասամբ խախտեալ են, բայց հոգեւոր ատեանն երեւանայ մտադրեալ է տալ նորոգել զայն:

Արձանագրութիւնք յորմունս այսր տաճա֊րի են յետագայքդ. յորմն հարաւային արտաքուստ:

Առաջին արձանագիր համարեալ շինութեանն գտանի յարեւելս դրանն երկաթապատ՝ ըստ այսմ:

‚Թ. ՆՁ (1031). շնորհիւն աստուծոյ այս հր֊րամանք է իմ տեառն Պետրոսի հայոց կաթուղի֊կոսի եւ Սմբատայ շահնշահի որ հաստատեաց . . .

ոպոսարան 'ի Իջնի քաղաք զսուրբ աստուածա-
ծինս. հիմնարկել կատարեաց Գրիգոր իշխանաց
իշխան որդի Վասակա և տուաւ վիճակ 'ի սուրբ
աստուածածինս 'ի փոշեհանից մինչև 'ի՝ Սիգ (Կա-
տա) և գիւա..ուն..զաւակս և յաղստեւ. և
տվաք գաւազան և սուրբ նշան և աթոռ: Արդ՝ ե-
թէ ոք խափանել ջանա զաթոռս կամ յայլ տե-
ղիս փոխել կամ զհողն յապիշտակել կամ զա-
ւանդ եկեղեցոյս գողանալ՝ թէ յեպիսկոպոսաց
կամ յիշխանաց, կամ ով որ հակառակի նզովեսցի
յաստուծոյ և 'ի մէնջ, և 'ի յԺԸ հայրա...ա-
տոքի ընջեսցի յիշատակ նորա յերկրէ և անլոյծ
կապեսցի: Իսկ արդ՝ այս է բնական և առաջին սահ
մանահատ վիճակ և աթ....հաստատեցաք ար-
ձանագրով և շրջաբերականավ զսահմանահատ վի
ճակի սորայ. որ է արեւելից 'ի Օար գետո մին-
չև 'ի գետն Ախուրեան (Բերեա ախուրեան), յանուոյ և
'ի հիւսիսային պետս խո.....և հատանել ջա-
նա յայսմանէ 'ի միջոց կամ յեզերաց, աւելի կամ
մասն ինչ զվերասացեալ զանէծս և զպատիժս կը-
րեսցէ աստ և 'ի հանդերձելումն, ամէն,.:

'Ի վերայ ճակատի բարաւորի դրանն հարաւային
գաւթի այս արձանագիր:

,,Թվ. ՈԾԸ (1209),,.

,,Յաշխարհակալութեան քաջաց և յաղթո-
ղաց, մեծ շահանշահաց Զաքարէի և Իւանէի որ-
դւոց սարգսի, յեպիսկոպոսութեան Տ Բթանեսի.
ես մեղուցեալ ծառայ աստուծոյ Տ Աճանս....
շինեցի իշխանավանից մեծ եկեղեցին յանուն սբ
աստուածածնին. և զայս աստուածածինս նորո-
գեցի սալով որ 'ի բնէ չէր սալած. և հաստատե-
ցին 'ի տարին է աւր ժամ. 'ի տաւնի սբ ծնըն-
դեանն վասն փրկութեան հոգւոյ իմոյ. ով խափա-

նէ զպատարագն . . . մեղացն պարտական է առաջի քրիստոսի,, ։

'Ի վէր քան զկամար այն հարաւային դրան գրի այս ինչ·

„ Ի թվիս Հայոց Չ (1251) · ազդմամբ ե հրամանաւ հոգոյն սրբոյ ե Կոստանդեայ կաթուղիկոսի հաստատեցաք զխախտեալ կանոնքս ե … սա ծառայքս քրիստոսի տէր Սանական ե տէր Գրիգոր ողորմութեամբն որ …. ոպք ըջնոյ ե սա · յիշխանութեան մեծին շահնշահի ե որդոյ . . . . զի յայսմ հետէ մինչե 'ի կատարած չունի կաշառաւք ձեռնադր . . . . ինչ հրամանացս աւրհնի յԱծոյ ,,։

'Ի վէր անդր քան զվէրագրեալն ։

„ Յուսովն անմահին այ ես Օշաքարէ որդի սահիպ դիվանին ե պարոն խօշաքին, Թոռն աթաբակ ավագին որդոյ աթաբակ իվանէի վասն մեր յերկար կենդանութեան ե փրկութեան հոգոյ իմոյ 'ի վեր կալայ որ 'ի ըջնի այլ մարդոյ տիրութիւն չէրնի, ե թողի զամէն հարկ՝ զամիրայ հակն, զհարսանէ հակ · զկովայ համարն, զկալաթաղարն, զսայլխոպն, զմահկանէն ե աւտարականն քան ըղ դաղմէն այլ իրք չտա · յաղման չանեն՝ որ յայսմ հետէ մինչե յաւիտեան հաստատուն կացէ արձանս իմ · եթէ ոք խափանել ջանայ յիմոց կամ յիմ զաւակաց կամ յաւտարաց, իմ մեղացն պարտական է առաջի աստուծոյ ,, ։

'Ի վէր անդր քան զդոյն վէրագրեալն 'ի ներքոյ լուսանցոյց պատուհանին ·

„ Թվ · ՊԷ (1358) „ ·

„ 'Ի զարմէ երկուց հարազատաց քաջաց ե

յաղթողաց ամիր սպասալար ։ Օ՛ զաքարիայի և աթա_բակ իւանէի. ես աթաբակ շահնշահ որդի աթա_բակ զաքարայն ՚ի ժամանակս բռնակալութեան մէլիք Աշրաֆին զմեր հայրենիքս զԱնի քաղաք յիւնէ հուքմով խլեր էր՝ զիր ձորոերրին էսիր կացու_ցեր, և հաճի բէկ նիազեցավ ու զքաղաքս ՚ի հի_մանց քակեց ու շատ յանուանի մարդ ՚ի սուր քա_շեց ու զեկեղեցիքս տապալեց ու զերկիրս ՚ի չորս դիաց անբնակ արար ու զքրիստոնէք անխնայ կո_տորեաց. մեք յաստուած ապաւինելով զմեր սա_լահրի..... հեծելին գլուխ կացուցաք՝ որ ՚ի վե_րա նստաւ բազում աշխատութեամբ, զիր ապ_րանքն նախ նա բաշխէր, որ աստուած խղճաց մեզ ու մեր հայրենիքս զԱնի բերդս ՚ի մեր ձեռս բե_րաց. վասն փրկութեան հոգւոյ և յերկար կեն_դանութեանս մերոյ կրկին նորոգեցաք զեկեղե_ցիս և զբունիաթ (բնաջան) արձանս վերստին հաս_տատեցաք զվիճակ, զվանք, զգեղ, զարի, զդաշ_տի հայրենիք բէց ու շինական ու գործաւոր զինչ եծ.., ածածնա ծառ.... ազատ և թարխան արա_րին հարկէ և ՚ի ծառայութենէ. տէր վանական և սպասաւորքս խոստացան մեզ յակոբա տի (տարին) գիշերապաշտաւն առնեն. ով ոք զմեր հաստատած արձանս խափանել ջանայ դատի յայ և մեր մեղա_ցըն պարտական եղիցի,,։

՚Ի ներքս եկեղեցւոյն յորմն հարաւայինն ցարեւմտա_դրանն այնր կողման.

,, Շնորհաւք նախախնամող այ հոգւոյն ես Բողչաքշեր՝ և ամուսին իմ Խորիշահ միաբանե_ցաք այ ածածնիս և տուաք արդիւնք ՚ի հալալ յընչից մերոց. և սպասաւորք սորա ար յվե. ար ադ. կարգեցին ՚ի տարին դ աւր պատարագել ընդ_քրիստոս ՚ի տաւնի ծննդեանն. է քողչաքշերին առ_

նեն և Է խորիշահին · ամին · չծե (1306) ,,։

Յարեւմտակողմն նոյն դրան 'ի ներքս՝ կայր դժուարընթերց ·

,, չծը ,, ·

,, կամաւն ամենակալին աստուծոյ ես Գրիգոր իշխան որդի · · · · թոռն դուքին · · · · · · · · ,,։

Գտանի և բազմատող արձանագիր մի յորմն հիւսիսային 'ի ներքս հանդէպ դրանն հարաւային, այլ է ըստ մի և նոյն մտաց հանդերձ նոյն թուականաւ մեծի արձանագրութեանն եղելոյ 'ի ներքոյ լուսանցոյց պատուհանին յորմն հարաւային արտաքուստ՝ զոր 'ի վեր անդր օրինակեցաք · վասն որոյ երկրորդել աստէն զնոյն աւելորդ համարեցաք · և էր սկսուած նորա՝ ըստ այսմ · ,, Կամաւ անմահին այ և ողորմութբ իմ պարոն շահանշահի ես ամիր Ոէսի 'ի ժամանակիս բռնակալութե մելէք Աշրափին և հաճի պէկին ևն ։ երեմիա գրիչ ,,։

'Ի հարաւոյ փառացի տաճարիս կից ընդ որմըն յարևելս դրան կառուցեալ են յետինք զմատուռն մի փոքրիկ · ուստի երրորդ մասն արձանագրութեան շինութեան մեծի տաճարիս՝ զոր 'ի վերոյ օրինակեցաք, մնացեալ է ընդ որմով մատրանն, բայց կառուցանողն այնր 'ի վեր առեալ զայն մասն արձանագրին՝ ըստ յարմարութեան տողիցն փորագրել տուեալ էր 'ի վերոյ արևմտեան որմոյ մատրանն · յորմէ օրինակեցաք մեք ամբողջապէս բաց 'ի մասնաւոր եղծուածոցն ։ Համառօտ արձանագիր շինութեան մատրանս գոլով 'ի քուէս (տաշած) անդ շինուածոյն, և անկեալ ինչ ինչ քարանցն և անհետացեալ՝ զթուականն և եթ ունէր ամբողջ՝ որ է · չիա · (1272) ։

Այս փառացի տաճար ունի շուրջ զիւրև պարիսպ ընդարձակ 'ի հասարակ կոփածոյ քարանց · արքեպիսկոպոսարանն՝ որ կայ արդէն յա-

ւերութեան, է յարեւելից եկեղեցւոյն առ պա-
րսպաւն. իսկ խահանոցն և շտեմարանք յարեւմ-
տից եկեղեցւոյն. ուր գտանին տակաւին քանի
ինչ քարայարկ շինուածք. և մեծ դուռն պարս-
պին 'ի հարաւոյ հանդէպ այնր կողման դրան տա-
ճարին, որոյ սեամքն և վերին բարաւորն 'ի մե-
ծահատոր սրբատաշ քարանց. յարեւելս տաճարին
'ի մէջ պարսպին են չորս մեծամեծ խաչքարինք
հանդերձ պատուանդանօք. յորս 'ի պատուանդա-
նի միոյն գրուած քանի տող, բայց առաջին տողն
և եթ ամբողջ՝ ՈՒ այսմ.,, 'Ի թուիս 'ի ՈԿԸ (1219).
մեք աւշիրա . . . . . . . . . . . . :ջիք 'ի ք̄ս,,: Յայսմ
տաճարի աղօթեն հայազգի բնակիչք տեղւոյս՝ որք
են տունք 29. և տունք այլազգի մահմէտականաց
30: Ի և աստ փայտեայ կամուրջ 'ի վերայ գե-
տոյն՝ ընդ որ անցեալ բնակչացն հերկեն զերկիր
և սերմանեն 'ի սահմանին վարաժնունեաց. ուր
լինի ցորեան ընտիր:

Յարեւելից ամրոցին փոքր ինչ բացակայ է
լեզուակ իմն առապարի. յորոյ վերայ է գերեզ-
մանուտ և 'ի ծայրացեալ վիմուտ սպառուածի
նորա կառուցեալ է մատուռն փոքրիկ հանդերձ
կաթուղիկէիւ, այլ ոչ գտանի գրուած ինչ՝ ոչ յոր-
մունսն և ոչ 'ի տապանավէմսն:

Մեր եպիսկոպոսաց առաջնորդարանին 1, Ինջոյ՝ որ
գտանին չինչ ինչ գրուած:

485, Եփրեմ եպիսկոպոս. առ որ գրեաց

1, Այս յիշատակն չէնք լինելոյն առաջնորդարան
ինչեան յառաջացեալ վիճակին, եւ և դ 'ի չորից Դծանծ
աշխարհին. սաանց որոց առաջնորդացն շինէր ընտրութիւն
յամ օծման յանդուգնական բառ յանձնարարութեան եղելոյ ոչ,
ծոցն 'ի սեառ լերին յառաջ Գորեգորի պատմութեան՝ յա-
Դ 1114: պատ. հայոց. հատոր Գ, Երես 37:

Թուղթ Գրիգոր մագիստրոս վասակեան բանադրելով վասն նոցա։

Սրթանէս եպիսկոպոս՝ որ գտաւ 'ի ժողովըն լօռւոյ առ զաքարիա սպասալարիւ յամի 1205. և յիշատակի յարձանագիրն 'ի վերայ յամի 1209։

Գրիգոր եպիսկոպոս. որ եղև մի յայնց՝ որք ընկալան զկանոնադրութիւն և զկոնդակ Կոստանդին կաթուղիկոսի սորա. յամի 1246, ըստ չամչեան հայր Միքայելի. հատոր Գ, հմր 229. սա յիշատակի 'ի վերայ յարձանագիրն ընդ տէր Սանականայ՝ յամի 1251. և այն արձանագիր է վասն կանոնադրութեանն յիշեալ կաթուղիկոսի։

Յովհաննէս եպիսկոպոս. զոր յիշատակէ հայր Միքայել չամչեան հատոր Գ, համար 291։

Տէր Յովհաննէս և տէր Սարգիս. 'ի վեր անդր յարձանագիրն յամին 1306։

Տէր Սանական. և ս 'ի վերայ յարձանագիրն յամին 1358։ Օսմանէ ասէ Թովմա մեծոբեցի՝ թէ յառնուլ բերդոյ 'ի թագաւորէն աղախու թաթարաց, սպանաւ եպիսկոպոս գաւառին տէր Սանական։

Սանակ եպիսկոպոս. զոր սպանին զօրք լանկթամուրայ առնլով զբջնի և կոտորելով չարաչար զբնակիչսն յամին 1387։

Յովհաննէս եպիսկոպոս. որ գտաւ 'ի ժողովն ընտրութեան կիրակոսի վիրապեցւոյ յէջմիածին յամին 1441։

Փիլիպպոս 'ի քանաքեռ գեղջէ յաշակերտաց Մովսեսի սիւնեցւոյ՝ ձեռնադրեալ 'ի նմանէ յեպիսկոպոսութիւն՝ գայ այսր և առնէ զբազում նորոգութիւնս։

Մովսէս վարդապետ փիլիպոսեայ կոչեցեալ՝ առաքի յառաջնորդութիւն տեղւոյս 'ի Փիլիպպոսէ հաղբակեցւոյ. երկոքին սոքա յիշատակին 'ի գիրս Զաքարիա սարկաւագի։

Մեսրոպ վարդապետ.
Դաւիթ վարդապետ.
Յովհաննէս վարդապետ.
Սիմէօն վարդապետ.

Կարապետ վարդապետ. հնգեքին այսոքիկ եւս յիշատակեալք 'ի Սիմէոն կաթուղիկոսէ երեւանցւոյ 'ի ջամբռ անուանեալ մատենին:

486, 'Ի բջնոյ աստի 'ի վեր ընդ գետն իբրեւ ժամ մի է գիւղն Սօլակ կոչեցեալ յարեւելեան սարահարթի անդ ձորոյն. եւ 'ի ձորամիջի անդ է եւս կամուրջ փայտեայ. հանդէպ այսր գեղջ յարեւմտեան կողմն գետոյն 'ի բարձրութեան անդ 'ի ծործորս լերինն կայր դժուարին ելիւք 'ի տափարակ դիրս է տաճար փոքրիկ 'ի սրբատաշ ամրակուռ քարանց եւ շուրջ զնովաւ աւերակք սենեկաց. չգտաւ թուական շինութեն, այլ երկու արձանագիրք յանուն նուիրատուաց:

Առաջին արձանն 'ի հիւսիսային հիման կամարէ դրան ներքին արեւմտեան՝ ըստ այսմ.

,, Կամաւ ամենակալին աստուծոյ ես ա̄ծատուր 'ի հալալ արդեանց ստացայ զմեն. . . . ա̄տուռն եկեղեցւոյս եւ առաջնորդ ուխտ բան. . . . հաստատեցին 'ի տարին է̄ պատարագ զտաւն ո̄ր յակոբայ. ով հանէ դատի յաստուծոյ ,, :

Երկրորդ արձանն յորմն արեւմտեան 'ի ներքսոյ 'ի հիւսիսակողմն դրան.

,, Ես յովհաննէս ծառայ քի̄ ետու զիմ հագոյ արդիւնս քան զոր սոսա. . . . 'ի յարդար վաստակոց 'ի սուրբ աստուածածինս 'ի տափակ մայրոյ. եւ սպասաւորք սուրբ եկեղեցւոյս խոստացան 'ի տարւոջն է̄ . . . . ա̄, աստուածածնին տաւնին

և տ․ սուրբ սարգսին․ որ խափանէ դատի յաս_
տուծոյ և իմ մեղացն պարտական է։ տ․ մատուռն
յովհաննիսի է․ ՚ի թ․ ոհգ (1224)․․․

Այս տեղի է Մայրոյ վանք կոչեցեալն ՚ի գիրս․
զորմէ գրեն պատմիչք՝ մերձ ՚ի բջնի ՚ի ծործորս լե_
րինն, ըստ Զ․ Յովհաննու կաթուղիկոսի․ յոր և
բնակեցաւ ծերունին Յովհան յաւուրս կաթու_
ղիկոսութեանն Նզրի․ և նա ինքն Նզր յաղագս
ատելութեանն առ Յովհան՝ փոխեաց զանուն այ_
որ մենաստանի և կոչեաց Մայրագոմ և զՅովհան
Մայրագոմեցի։ Այս ծործոր և առապարքն շրջապա_
տել զմենաստանաւն են անտառուտ․ չգտաւ ջուր
՚ի մենաստանի աստ, զի հեղեղատն ցամաքեալ էր
և էին աւուրք օգոստոսի այնինչ եղաք անդր և
չէ՛ր աղբիւր անդէն․ և գուցէ յառաջագոյն ե_
ղեալ և պատճառաւ ինչ ցամաքեալ․ և էր տե_
ղին թէպէտ դժուարաելք, բայց յաղագս բարձ_
րութեանն ունէր զվայելչանկատ հայեցուածս ը
լերինան գեղամայ, ընդ բովանդակ գաւառն կո_
տայից և կիսով աւելի ընդ վարաժնունիսն։

Զգտաւ յատկացեալ ինչ նշանօք մենաս_
տանն յանուն գեղջն կոչեցեալ՝ Նշիգատուղ․ և
թերևս իցէ մին ՚ի մենաստանացն վերոյիշելոց ե_
ղելոցն ՚ի գիւղօրայս (471) (478) (483)։

487․ Բաղէ գիւղ՝ տունք 51․ եկեղեցին ա_
նուամբ սուրբ աստուածածնի․ հին է ի մայրոյ
վանաց ընդ գետն ՚ի վեր իբրև ժամ մի՝ ՚ի ձո_
րամիջի անդ գետոյն յարևմտակողմն նորա․ եկե_
ղեցին շինեալ ՚ի վաղ ժամանակաց ՚ի տաշածու_
քարանց, այլ տանիք նորա և մասնաւորապէս որ_
մունքն աւերեալ գոլով ծածկեալ են փայտիւք։
փոքր ինչ ՚ի վեր քան զգիւղն է կամուրջ փայտեայ
՚ի վերայ գետոյն՝ ընդ որ անց և դարձ առնեն
բնակիչքն, մանաւանդ ՚ի ժամանակս ամառան՝ յո_
րում միջոցի գտանի նահանգական առեանն ՚ի կե_

չառուս:

488. Նշփարոյ գիւղ՝ տունք 29. եկեղեցին յանուն սրբոյն Ստեփաննոսի. անկանի այս գիւղ յարեւմտեան կողմն գետոյն յարեւելեան լանջի անդ լերին՝ հեռի 'ի քաղսի գեղջէ ընդ հիւսիս իբրեւ ժամ մի:

489. Սարաշէնք. գիւղ՝ յորում բնակին յազգէ հայոց՝ տունք 28. եկեղեցին յանուն սբ. Աստուածածնի. կոչումն գեղջս է յանուանէ եկեղեցւոյն՝ որ կառուցեալ է յորձաքար վիմաց բարձրակամար եւ անսիւն, որոյ եւ զտեղի կործանեալ կաթուղիկէին ծածկեալ են փայտիւք. իսկ այլազգիք տան զանուն գեղջս եւ եկեղեցւոյն Էշէք Ղութուրան. քանզի աւանդութիւն է՝ թէ երբեմն դիպեալ աստ ուրումն շահ արքայի պարսից, եւ այն ինչ կամեցեալ նորա տալ քակել զայս եկեղեցի եւ քարամբք նորա կառուցանել 'ի վերայ Հրազդան գետոյն զկամուրջ, պատահի կատաղութեան իմիք եւ այնու արգելեալ լինի քակտումն եկեղեցւոյն. որոյ աղագաւ անուանի յայնժամ Ղոհ Ղութուրան. իսկ մահմետականք վասն բառնալոյ յինքեանց զայս նախատինս՝ փոխեն զայն եւ անուանեն մինչեւ ցայժմ Էշէք Ղութուրան, որ ըստ իմիք աւելի եւս նախատինք է: Տեղի եկեղեցւոյս եւ գեղջս հեռի յեկեղեցեացն Կեչառուաց աւելի քան զկէս ժամ՝ ընդ հարաւ 'ի վայելուչ վայրի յարեւմտակողմն գետոյն:

Եկեղեցիք կամ Ճնապան Կեչառուոյ.

490. Այս մենաստան կոչեցեալ Կեչառուս, կամ Կեչառուոյ՝ հեռի 'ի Մաքրավանքայ ընդ հիւսիս իբրեւ կէս ժամ՝ բաժանեալ միմեանց յառապարէ անտի եղելոյ 'ի մէջ երկոցունցն. եւ է հանդէպ Անտամալ գեղջն վարաժնունեաց յա‿

րեւմտակողմն գետոյն հեռի իբրեւ քառորդ ժա-
մու՝ ունելով զԱւան կղզի ուղղակի ընդ արե-
ելս հեռաւորութեամբ չորից ժամուց և զԵրե-
ւան քաղաք ութն ժամուց՝ ընդ հարաւ. և է ՚ի վա-
յելուչ վայրի շրջապատեալ անտառախիտ լերամբք
յերից կողմանց՝ ՚ի հիւսիսոյ, ՚ի հարաւոյ և յարե-
մտից. տեղին կամ վայրն՝ ուր կան կառուցեալ
տաճարքն չորեքին, տեսանի արդարեւ իբրեւ լանջ
կամ կուրծք առն և լերինքն յերկուց կողմանց
զօրէն բազկաց ՚ի վերուստ անտի խոնարհեալ ընդ-
յարեւելս՝ աւարտին ՚ի գետն Հրազդան:

Սա շինեալ ասի յառաջագոյն եկեղեցի
յՍմբատայ մեծ իշխանէ հայոց՝ ըստ Մխիթարայ
այրիվանեցւոյ ՚ի թուին ՆՁ. (1031). և ըստ Միքա-
յէլի չամչեան. հատոր Բ, Թղթա″ 897:

Զկնի նորա ապա ետ կառուցանել ՚ի սմա
զաւագ եկեղեցին յանուն սրբոյն Գրիգորի Լու-
սաւորչի՝ Գրիգոր մագիստրոսն վասակեան պահ-
լաւունի. առ Մխիթարայ այրիվանեցւոյ ՚ի թուին
ՆՂԳ. (1044) ,, Իսկ Մոնոմախն՝ (կայսր յունաց) որ
կալաւ զԳագիկ թագաւորն, եւ զիշխանութիւն
երկրիս Գրիգորոյ մագիստրոսի որ շինեաց զեկե-
ղեցին կեչառուաց. սա է որդին հօլում Վասա-
կայ շինողին Բջնոյ և Կայենոյ և Կայծոնոյ, զոր
յանդէտս սպանին ՚ի Սերկևլէ ,,: Զև կառուցման
այսր տաճարի է արդարև գործ մնաց այնպիսի խո-
հական և ուսումնական առն՝ որ զքանչացուցանէ
զտեսողս. անսխուն է և կամարակապ՝ հաւաք գոր-
ծեալ. ունէր ՚ի մէջին տեղւոջ տանեացն և կա-
թուղիկէ վայելչաձև, այլ ՚ի շարժէն դիպելոյ յա-
մի 1827, անկեալ կործանեցաւ. ունի և գաւիթ
վայելուչ ՚ի վերայ չորից միատասանի սեանց հանգոյն
գաւթի եկեղեցւոյն Այրիվանից, և զերկուս դը-
րունս՝ արեւմտեան և հարաւային. ՚ի վերայ հարաւա-
յին դրանն արտաքուստ դնի արձանագիր շինութեան՝ ըստ այսմ:

,,ՆՁԲ․ (1033) Թ․ Հ․ 'ի Թագաւորութեան Գագկայ և 'ի հայրապետութեան տեառն Սարգսի ես Գրիգոր մագիստրոս որդի Հասանայ շինեցի զեկեղեցիս ինձ 'ի բարեխաւսութիւն և իմ պարոնին և իմ որդեացն․ որք ընթեռնոյք՝ զիս յաղաւթս յիշեցէք 'ի Քրիստոս, աղաչեմ,,։

'Ի վերայ արեւմտեան դրան գաւթին արտաքնոյ դնի այն արձանագրութիւն՝ այս օրինակ։

,, 'Ի Թու, ՈՂԳ (1244 ,,

,, Կամաւն աստուծոյ ես Խուրդս որդի կախայլբերին զմտաւ ածի 'ի սէրն աստուծոյ և եկի 'ի սբ ուխտս 'ի կեչառուս և կրաւնաւորեցայ 'ի դրան սուրբ լուսաւորչիս և անուանեցայ Յոհաննէս, և արարի պահարան սուրբ Յոհանիսի․․ անիս․ որք ընթեռնոյք յիշեցէք յաղաւթս,,։

'Ի ներքոյ այն արձանագրութեան դնի և այս․

,, Աւգնութեամբն աստուծոյ մեք մարասայ եղբարս տէր Սարգիս և տէր Սըրթանէս միաբանեցաք կեչառուցս սուրբ լուսաւորչիս և տըվաք 'ի մեր հալալ արդեանց․ Մ․ դահեկան յառաջնորդութեան մն ։ վէ վղերս․ և միաբանքս ընկալաք․ ՃԲ․ ջաղացն անցուցաք․ Ճ․ ժամատուն․ սահմանեցաք ամէն ամի․ Գ․ աւր պատարագ 'ի տաւնի Ռըստակիսի և վԹի․ գողդ վԹ․ որ խափանէ նոցա մեղացն պարտական է․ կատարիչքն աւհի յայ,,։

'Ի հարաւային դրան գաւթին արտաքնոյ 'ի վեր քան լուսանցոյց պատուհանն գրի այն արձանագիր․

,, 'Ի ՈԿԲ (1213) Թու, կամաւն աստուծոյ ես

Վաչէ որդի սարգսի որդւոյ վաչուտի և ամուսին իմ Մամա խաթուն, և որդիք իմ Քուրդս և Վաչուտ միաբանեցաք ՚ի սուրբ ուխտս կեչառուս. և տուաք ՚ի գանձագին գեղն մեր շէնգաւիթ այգի... սպասք եկեղեցոյ և տէր գրիգորին. և գրիգոր վարդապետս զծառազարդարն ինձ վաչէի. և ղազարայն մամա խաթունին. և զնոր կիւրակէն քրդին, ամէն եկեղեցիքս. և ով առաջնորդ անի զսէրն, առնէ նոր կիրակէին անխափան,,:

՚Ի ներքոյ սոյն արձանագրութեան գրի և այս.

,,Թուիս մերոյ չԻԱ. (1272) կամաւն աստուծոյ ես Աշխրապ շահ միաբանեցայ սրբոյ նշանիս յառաջնորդութեան տեառն Աթանասի. և տվի իմ հալալ արդեանց իմոց. և ետուն ինձ Է աւր ժամ ՚ի տաւնի առաքելոց. կատարիչ աւրհնին ՚ի Քրիստոսէ,,:

Ուղղակի ընդ արեւելս այսր արձանի ՚ի վերոյ որմոյ մեծի տաճարին դնի այս արձանագիր՝ որոյ բաւական ՚ի սկսուածի անդ եղծեալ էր.

,,... Թուականութեանս հայոց ՚ի հայրապետութեան տեառն Գրիգորիսի, և ՚ի թագաւորութեանն վրաց Գէորգէ և մերոյ իշխանին ես Հայր Պետրոս և եղբայր իմ տէր Յովսէփ և Սարգիս կրօնաւոր և միաբան ուխտիս հաստատեցաք Ստեփաննոսի աղուանից կաթուղիկոսի ՚ի տարին զՔրիստոս ՚ի տօնի առաքելոցն, դաւթի, պետրոսի, յովհաննու ամէն եկեղեցիքս. եթէ ոք խափանէ յԺԸ ցն նզովեալ եղիցի,,: Ես Սիմէօն քահանայ գնեցի յեկեղեցիս՝ որ առնեն ինձ ՚ի տարին Է աւուր ժամ. որ խափանէ դատի յԱյ,,:

'Ի վէր քան վերոյգրեալ արձանն 'ի ներքոյ լուսան-ցոյց պատուհանոյն 'ի նոյն հարաւային որմն արտաքուստ ծայ-րէ 'ի ծայր ընդ երկայնութեան գրի այս յիշատակագրութիւն.

'Ի հինգ հարիւր երորդի (1051) ամի Թուականութեանս Թորգոմեան 'ի Թագաւորութեանն սուրբ և ինքնակալ Թագաւորին Կոստանդեա Մաւնումախին բերաւ ոսկի մատանիս, զոր հզաւ-րին և առաքինոյն բարեպաշտին Գրիգորո մա-գիստրոսին կիտաւնտին, եւտուկին Վասպու-րականի և Տարաւնո արշակունոյն և հայկազնոյն. մեծաւ աշխատութեամբ ազատեալ էր զմեծ և հռչակաւոր եկեղեցիքս իւր. և ոչ այլինչ հայցէ, բայց միայն աղաւթս առնել սուրբ և ինքնակալ Թագաւորին Կոստանդեայ. ընդ նմին ծառային քրիստոսի Գրիգորոյ և որդւոց իւրոց, և յիշա-տակ կարգեալ յեկեղեցիքս կեչառուաց՝ ուր մա-գիստրոս կենդանի է. ամենայն շաբաթ աւր զժամն Հասանայ արասցեն անխափան. և յետ ելիցն մա-գիստրոսին արասցեն անխափան: Արդ՝ որ ոք այ-սմ վճռի հաստատնո խափանել ջանա՝ թէ յա-ռաջնորդաց ոք իցէ կամ յիշխանաց կամ 'ի քա-հանայից, այնպիսին Յ և Ժը հայրապետացն նզո-վեալ եղիցի՝ և բաժինն ընդ յուդայի եղիցի և ընդ տիրասպան քահանայիցն. և այս գիր մեր է Յովաննիսի շնորհիւն աստուծոյ Բջնո եպիսկոպո-սիս, և սուրբ և մեծի հաւր Բարսղիս է. թէ ոք այս գրոյս խափանել ջանա, այնպիսին նզովս չարա-չարս ընկալցի 'ի սրբոց լուսաւորչէն գրիգորո և յամենայն սրբոց և 'ի մէնջ. կատարինչք գրոյս աւրհնեալ եղիցի,,:

'Ի մէջ գաւթի եկեղեցւոյս 'ի հարաւային ճակատ հիւսիսային կամարի գրի այս ինչ.

,,Աւգնութեամբն ամենասուրբ երրորդու-

թեան . . . Հասան որդի Վախթանգայ որդւոյ մեծին Հասանայ տէր Խոյախանբերդոյ, Խաչենոյ և ամուսին իմ Մամքան . . սոր բաղայ Թագաւորին միաբանեցաք մեծ և հռչակաւոր սբ ուխտիս Կեչառուաց և . . . յաւերման նետողաց բազում գանձիւք . . . նորոգեցաք և այլն ,, :

'Ի ներքոյ այնր 'ի նոյն խաչ հանարի .

,, Ի թվին ՈՂԷ (1248) . յառաջնորդութեան Մխիթար, վրդ, գէ, վարդապետերս և այլ միաբանքս ընկալան և սահմանեցին մեզ Ե աւր պատարագ ամէն եկեղեցիքս՝ զաւագ զատիկն իմ, և Գ շաբաթ աւրն Մամաքանայ . կատարիչք գրոյս աւրհնին յաստուծոյ . իսկ որ խափանէ 'ի մերոց կամ յաւտարաց, կամ յիշխանաց և յառաջնորդաց՝ մեր մեղացս պարտական է, և յԺԲ հայրապետացն նզոված է . կատարիչքն աւրհն",, :

'Ի վերայ սեան արևելեան հիւսիսոյ գրի արձանագիր յանուն Սարգսի ուրումն . և յիշատակի անդէն Ներսէս անուն առաջնորդ մենաստանիս ԼՆ . են և այլ յոլով արձանագրութիւնք երկարաձիգք 'ի ներքս անդ գաւթին յորմունս նորա, այլ գոլով դժուարընթերց և եղծուած 'ի տեղիս տեղիս և կարօտ ընդարձակ միջոցաց՝ վասն որոյ մնացին անձեռնարկելի 'ի մէնջ :

Կարի մերձ յորմն հարաւային աւանդատան մեծի եկեղեցւոյս է տաճար փոքրիկ գմբէթաւոր . յորոյ արեւմտեան դրան վերայ գրի սոյն արձանագրութիւն :

,, Յիշեսջիք յաղաւթս զտծաւէր պատրոն զՄաչէ՝ որ նորոգեաց վերստին զեկեղեցիս, թւին ՈՀԲ, էր (1223) ,, : Կից այսմ . ,, կամաւն աստուծոյ ես պատրոն Սարդ երևանոռ եւտու զիմ հայրենի այգին՝ որ չմնկան կոչի 'ի հայր Պետրոս, և արարի

իւձ որդի. և ես Հայր պետրոս ետու 'ի սուրբ լուսաւորիչս. որ առնեն 'ի տարին ը ժամ. դ վար-դին. դ անխարբին. որ Հակառակ կա կամ այգւոյն կամ ժամին յԺ ըրեցն և յայս սրբոցս նզովեալ եղիցի.,

'Ի վէր նան ըսոյն 'ի Հարաառայէն ևզէին ըսսան-
ցոյց պասսՀանէին վէրէ ոյս էին:

,, Կամաւն աստուծոյ ես Մխիթարիչ որդի գրիգորի ետու զիմ ախ . . . այգին յերանելի սբ ուխտս կեչառուս Հրամանաւ տեառն Գրիգորիսի և Գրիգոր վարդապետացն և յառաջնորդութեան Համազասպայ գրեցաւն ժամանակն. և իւձ մխի-թարչիս. գ. տիկնակոկորին և տեառն գրիգորոյ մամկայ. Հաստատուն գիրս կամաւն աստուծոյ. ով խափանէ է մեղացս տէր առաջի քրիստոսի,,,

'Ի Հեւոխանջողին սոյն ֆերբէն սանարէս տնէ
ոյս արձանագիր..

,, 'Ի ոծգ. (1204) կամաւ բարերարին աստուծոյ ես Սարգրմբել որ նորոգեցի 'ի յԱյ-րևան զմեղխումնոյ էգդյն չարէքն. և ետու 'ի սբ գրիգորս. սպասաւորք սորա աւանդեցին տարին Ճ ժամ. որ խափանէ իմ մեղացս տէր է առաջի աստուծոյ, ամէն,,:

'Ի Հարաւոյ կողմանէ այսր փոքրիկ տաճա-րի իբրև քայլս տասն է երորդ եկեղեցին. և է գմբէթաւոր և անսիւն՝ չքնաղ տեսլեամբ զօրէն պՃնազարդ Հարսի. շինեալ 'ի Սասակայ որդւոյ խաղբակայ որ ունի արձանագիր ընտանիենան 'ի վէրայ ա-րևմտեան դրանն՝ րստ այսմ:

,,Ես Սասակ որդի խաղբակա շինեցի զսբ կաթուղիկէս յաւգնութիւն կենաց իմ պարո-նացն՝ Իւանէ աթաբակի և արեան Հարազատի իւ-

րոյ Շահնշահի և Աւագին և իւր մաւրն պատ-րան Խոշաքին և իմ եղբարցն և որդեացն յարև-շատութիւն. ինձ և ամուսնոյ իմոյ Մամային մե-ղաց թողութիւն. որք երկրպագէք յիշեսջիք 'ի Քրիստոս աղաչեմ: գրիս ընծա ե̅ լաւ շինակն, ե̅ տուն 'ի Նորաշէնքն. երեւ և ե̅ 'ի կարենիսն,,:

Ունէր սոյն այս կաթուղիկէ եկեղեցի 'ի հարաւակողման յորմն անդր արտաքուստ զայլ-մուս արձանագրութիւն երկարաձիգ բանիւք, այլ ինչ ինչ քարինք 'ի շարակարգէ անտի գըր-ւածոցն անկեալ և անհետացեալ գոլով՝ թողաք 'ի բաց և զմնացորդն:

Յարեւմտոս այսոցիկ երից եկեղեցեաց հե-ռի իբրև քարընկէց մի է տաճար փոքրիկ՝ որ ունի գաւիթ և գմբէթ սրածայր. կառուցեալ գոլով սա յանուն սրբոյ յարութեան՝ է իբրև մատուռն գերեզմանոցի, զի 'ի շրջապատն են շիրիմք ըստ կարգի. շինուածք տաճարիս ըստ փոքրկութեանն է կարի հաստատուն և այժմ, և է ամբողջ բոլո-րովիմբ,

Արձան յիշատակագրութեանն գտանի 'ի ներքս 'ի մէջ գաւթին 'ի վերայ դրան տաճարին՝ ըստ այսմ:

,, Ի թւին ՈԿԹ, (1220). շինեցաւ սուրբ Յա-րութիւնս առ 'ի յիշատակ համաւրէն ննջեցելոց 'ի Քրիստոս և ծնողաց իւրոց հասանայ և ռուզու-քանայ, և զաւակաց . . . արձանս աւրհնութեան տիրոյն որ առ աստուած և առ սուրբս ն̅ր, ամէն,,:

Բաց 'ի շինութեանց եկեղեցեաց աստի գը-տանին և աւերակք և տեղիք պէսպէս յոլով շի-նուածոց՝ է՛ զի կոփածոյ քարամբք, և է՛ զի հա-սարակօք. և որպէս տեսանին ըստ դրութեանն՝ են կացարանք առաջնորդաց և կրօնաւորաց. նկատին և հիմունք պարսպի կամ արտաքին որմոյ կացա-

րանացն յարեւելակողմն ստորագրեալ երից եկեղեցեաց, և երկոքին ծայրքն հիւսիսային և հարաւային՝ որք ունին զնշան հիմանց ընդ արեւմուտս, երեւին յայտնապէս. և ընդ հանրապէս նկատեալ՝ եղեալ է արդ՚րեւ մեծահռչակ մենաստան ճոխացեալ բաւականաչափ կրօնաւորօք. շիրիմք շուրջ զտաճարօքն ցուցանեն զբազմամարդութէ բնակչացն։ Որպէս ասացաւն՝ գտանին յոլով շիրիմք և դամբարանք՝ յորոց ոմանք պատուեալ են մեծամեծ խաչվիմօք, այլ սակս ՚ի վաղ ժամանակաց անբնակ լինելոյ մենաստանիս՝ ե՛ն որ անկեալ յերկիր ընդ հողով և ընդ փլատակաւ ծածկեալ կան, և ե՛ն որ բեկեալ՝ այսր անդր ցանեցիր ձրգեալ կան քարինքն արձանունակ. և ե՛ն ևս որ պատեալ գոլով ՚ի կարծրացեալ մամռոյ՝ մնան անվերծանելի։ Յարեւելս մեծի եկեղեցւոյ սրբոյն Գրիգորի՝ ՚ի թիկանց կողմանէ սեղանոյն գտանին դամբարանք երեւելի անձանց՝ յորոց մին յանուն վեցիկ վարդապետի. կանգուն կայ սեղան քառակուսի և ՚ի նմա հաստատեալ խաչվէմ բարձր և տապան առաջի նորա առանց գրչութեան. իսկ ՚ի հիման անդ խաչվիմին գրի այս. „ Օ վեցիկ վարդապետ յաղաւթս յիշեսջիք ՚ի քրիստոս աղաչեմք „. և յարեւելս խաչվիմին գոյ երկարաձիգ գրուած, այլ անվերծանելի սակս մամռապատ լինելոյն։ ՚Ի հարաւոյ նորին է և միւս դամբարան նման նմին բարձրացեալ խաչվիմաւ՝ որոյ մակագրութիւնն ևս գոլով դժուարընթերց, թիւ նորա դնի ՚ի ճակատն արեւմտեան՝ որ է այս. „ թիւ ոկթ „ (1220).

Յայս մենաստան բերեալ մեծահանդէս ուղարկաւորութեամբ յերկրէ Գաբեղեանց մարմին Գրիգոր իշխանի, եղբօր Բարսղի կաթուղիկոսի՝ ամփոփեցաւ յամի 1099։

Ջուր մենաստանիս իջանէ ՚ի բարձանց ան-

տի լերինն՝ որ յարևելեան հիւսիս այսր գաւառի, և գնայ ընդ փոքր ձորակն որ 'ի հիւսիսոյ. և է մաքուր և առողջարար. յառաջագոյն 'ի շինութեան մենաստանիս բերեալ են 'ի վերուստ այլով ճանապարհաւ զայն ջուր 'ի մէջ պարտիզին՝ ուր կայ տակաւին կիսաւեր աւազանն կամ աղբիւրն. այժմ ևս նոյն ջուր գայ անցանէ ընդ նոյն ճանապարհ 'ի պէտս բազմութեան բնակչացն արքունի գործակատարաց՝ որք յամառան ելեալ յԵրևանայ գան այսր և անցուցանեն աստ զամառնային տօթաւոր աւուրսն՝ սկսեալ 'ի 10, էն յունիսի ց 10, սեպտեմբերի:

491, Մերձակայ վայրքն՝ լերինք և առապարք, զարդարին 'ի գարնան և յամառն բազմատեսակ գոյն զգոյն ծաղկամբք. յորս գտանի ջաւձար կոչեցեալ արմատն. և տեսակ իմն խոտոյ՝ որ բարձրանայ իբրև կանգուն մի՝ միացօղուն. և է շիկագոյն, թաւամազ, և 'ի ծայրն բանայ ծաղիկ դեղնագոյն ողկուզաձև. տերևք նորա շարակարգին ընդ ցօղունն 'ի ներքուստ մինչև ցվեր, և նման են տերևոյ ուռենւոյ կամ ձիթենւոյ (չէօ-բանի), զոր և 'ի գործ դնեն զօրէն թէյի (չայ). քանզի եթէ արկցի ըստ այնմ 'ի ջուր եռացեալ և ըմպեսցի շաքարաւ, լինի դեղ քրտնաբեր և օգտակար՝ (ութպէօ ափաչային). գտանի և հօքի անուանեալ պտուղ մի յանտառսն անդ. բոյս նորա հազիւ բարձրանայ յերկրէ ցքիլ մի և տայ զպտուղ քաղցրահամ իբրև թութ՝ մի կողմն կարմիր և միւսըն սպիտակ. համեղութեամբն, գունովն և այլ յատկութեամբքն նմանի չիլէկ անուանեալ պտղոյն՝ որ յաճախ գտանի 'ի Կոստանդինուպոլիս. 'ի մերձակայ անտառս այսր մենաստանի բազում են և պտղատու ծառք՝ ընկուզենի, տանձենի ևն, որք որպէս նկատին՝ սկզբնաւորեալ են կամ պատւաստեալ 'ի ժամանակէ անտի շինութեն մենաս-

տանիս։

Չիք նշան մերձաւորութեան Արէշրոյ անուանեալ քաղաքին ընդ այս տեղի. քանզի ըստ յառաջ բերեալ բանից հին Հայաստանի Թղթա 504. Արէշրոյ անկանի 'ի սահմանս Արասխաձոր գաւառի. իսկ տեղի եկեղեցեացս կեչառուաց 'ի սահմանէ անտի ընդ արեւելս հիւսիսոյ հեռաւորութեամբ երկուց աւուրց ճանապարհի և աւելի ևս. որոց ընդ մէջ անկանի լայնանիստ լեառն Արագած։

Առաջնորդք մենաստանիս.

492. Նարսեհ. որ յիշատակի յարձանագրութիւն այսր վանաց յամի 1051։

Մանոնիկ գրիգոր. թերևս 'ի միաբանից նմ վանահայր վանացս` որ գտաւ 'ի ժողովն Լօռւոյ առ Զաքարիա սպասալարիւ յամի 1205։

Գրիգոր վարդապետ. որ ասա յարձանագրութեան Վաչէ իշխանի յամի 1213։

Պետրոս. որ յիշատակի 'ի վերայ յերկուս արձանագիրս յամի 1223։

Աթանաս. որ ասա յարձանագրութե Ա Իբաղշահի յամի 1272։

Մխիթար. յիշատակի սա 'ի վերայ յարձանագրութեան։

Ներսէս. յիշատակի և սա յարձանագրութեան մենաստանիս։

Համազասպ. որ 'ի վերայ յարձանագիրն Մխիթարչի։

Փիլիպպոս պարոն տէր կոչեցեալ` որ 'ի յիշատակարանի մաշտոց գրոց յաւուրս Թադէոս կաթուղիկոսի, այլ յառաջնոյն թէ երկրորդին` չէ յայտ. ուստի ասել իբր յամին 1498. 1575։

493. Մենաստան. հեռի յեկեղեցեացն կեչառուաց ընդ արեւմտեան հիւսիս աւելի քան զմի

ժամ՝ հանդէպ Թայչարուխ գեղջ ՚ի հարաւա-կողմն գետակին՝ ՚ի հիւսիսային լանջի անդ ան-տառախիտ առապարին ՚ի տափարակ դիրս. է ե-կեղեցի բարձրակամար և անսիւն օրոգաձև կա-ռուցեալ՝ միջակ մեծութեամբ. ուր հետախոյզ եղեալ մեր չգտաք զարժանաւոր գրուած ինչ հա-կացի, այլ ՚ի բարձրութեան անդ եկեղեցւոյն արտաքուստ յատորև քան զքուէսն տանեաց տե-սանէր միակարգ գրուած շրջապատեալ զեկե-ղեցեաւն վրացի տառիւք. ունէր տաճարն շուրջ զխուրև զաւերակս քառակուսի պարսպի և առ-նովաւ սենեկաց թաղեալ ՚ի մնացառուտս և ՚ի թուփս. ուստի և եղեալ է յառաջագոյն մենաս-տան՝ թերևս յիշխանութեան վրաց ՚ի ժամանակս Զաքարիա մեծանուն սպասալարի հայազգւոյ: Իսկ ՚ի վեր անդր ՚ի ձորամիջի՝ ուր փոքր ինչ հեռի յարևմուտս, է Պղնձահանքն՝ որ այժմ կայ անգործ, և առ նովաւ աւերակք շինուածոց՝ թե-րևս գործաւորաց նորին: ՚Ի ձորամիջի աստ ըն-թանայ ջուր փոքր և մինչև ցռնտամալ գիւղ (507) վարաժնունեաց աճի բաւականաչափ և է առա-ջին ճիւղ սկզբնաւորող զՀրազդան գետ:

### ՎԱՐԱԺՆՈՒՆԻՔ՝ ԱՅԺՄ ԶՈՒԱՂԽՈՒՆԻՔ.

494, Գաւառ Վարաժնունեաց. այսպէս ա-նուանեալ ՚ի հնումն՝ յաւուրս Ա. Արտաշէսի ար-քայի հայոց յանուանէ Վարաժ անուն առն միոյ քաջի՝ որ ՚ի ծննդոցն Գեղամայ. զսա կարգեալ նոյն Արտաշէսի վարժիչ որդւոյ իւրում Տիգ-րանայ ՚ի նետաձգութիւնս՝ պարգևէ նմա զէնսն առ եզերբ Հրազդան գետոյն. Խորէնացի. Բ. 11: Ե. 10: Իսկ ՚ի յետագայից անուանեցաւ Զուաղխունիք և յայլազգեաց Գարաշիշամ. ընկալեալ զայս կոչումն ՚ի համանուն գեղջէ՝ որ արդ ևս կոչի Զուաղխուն.

(501)· հասարակօրէն զայս յետին անուանակոչութիւն էառ 'ի գործս կառավարութի իշխանութեանն և առնու. և ունի սահման ըստ այժմեան առմանն, յարևելից՝ զարևմտեան եզր ծովակին գեղաքունւոյ. 'ի հիւսիսոյ՝ զհարաւային ինչ լերինս գուգարաց. յարևմտից՝ զարևելեան եզր նգայ և 'ի հարաւոյ՝ զկոտայս.

ՈՐՈՑ ԳԵՂՕՐԱՅՔ ԵՆ ՀԵՏԱԳԱՅՔՍ.

495, Չիբուխլու· յեզր ծովակին յարևմտեն հիւսիս՝ յարեգդէմ լանջս լերինն 'ի վերայ առքունի պողոտային· յորում է և իջևան անցորդաց· բնակիչքն գաղթականք յարծափ գեղջէ Պայազիտոյ՝ տունք 63· եկեղեցին յանուն սուրբ Աստուածածնի։

496, Ցամաքաբերդ· անմիջոց յեզր ծովակին հանդէպ Սևան կղզւոյ՝ տունք 15· եկեղեցին անուամբ սրբոյն Գէորգայ· գիւղն է 'ի տափարակ տեղւոջ, իսկ ցամաքաբերդ կոչեցեալն է բլրակ ինչ 'ի հարաւոյ գեղջն՝ յերից կողմանց պատեալ ջուրբք ծովակին։

497, Գոմաձոր· հեռի 'ի ցամաքաբերդէ յարևմուտս իբրև կէս ժամ՝ յարգաւանդահող ձորակի 'ի հարաւային լանջի փոքր լերին՝ որ յարևմտից յառաջացեալ յանգի 'ի ծովակն· տունք 15· եկեղեցին յանուն սրբյն Յակոբայ Մծբնայ հայրապետի։

498, Գորդան· այժմ Օրտակլու· հեռի 'ի ցամաքաբերդէն ընդ հարաւ անմիջոց յեզեր ծովակին՝ տունք 44· եկեղեցին շինեալ 'ի նախնեաց թէպէտ, այլ գոլով քայքայեալ՝ նման հետք 'ի հին շինուածոցն որմունք ինչ սեղանոյն· որոյ ըղփլեալն հիւսեալ 'ի թափեալ քարանց անտի ծածկեալ են փայտիւք և անուանեն սբ Յով-

հաննէս:

499, Մարուէր. այժմ Ջուչրա կոչեցեալ. մի֊շատակի այս գիւղ նախադաս անուամբն յինչ ինչ արձանագրութիւս մենաստանաց. և են բնակիչքն՝ տունք 27. եկեղեցին յանուն սրբոյն Ստեփաննոսի:

500, Տահրէչ. տունք 45. եկեղեցին անո֊ւամբ սրբոյն Յովհաննու:

501, Ոսադիոնա. յանուն սորա կոչի և գա֊ւառն՝ Ոսադիոնիա. տունք 42. եկեղեցին յանուն սուրբ Յարութեան:

502, Պիբնաչէն. տունք 61. ՚ի սմա հին շինո֊ւած եկեղեցւոյ ՚ի խարտեալ քարանց, այլ կա֊մարայարկ նորին ՚ի վաղուց իջեալ՝ ծածկեցին ՚ի նորոյ փայտիւք և անուանեցաւ յանուն Մատթէ֊ոսի առաքելոյ:

503, Նոայծի. տունք 29. եկեղեցին անուամբ սրբոյն Ստեփաննոսի:

504, Նաբաթէշէ. տունք 18. եկեղեցին յա֊նուն սրբոյն Յովհաննու:

505, Փորաթի. տունք 27. եկեղեցին անուամբ սրբոյն Ստեփաննոսի:

506, Մասաչարաթ. ՚ի ձորամիջի ՚ի հիւսիսային եզեր. տունք 44. եկեղեցին յանուն սուրբ Աս֊տուածածնի. բնակիչք սորին ևս գաղթեալք յար֊ծաթի գեղջէ Պայազիտոյ:

507, Սնդամալ. տունք 115. եկեղեցին յանուն սրբոյ Կարապետի. զառաջեաւ այսր գեղջ միւս երկրորդ ձիւղ հրազդան գետոյ՝ որ ՚ի ծովակէն, խառնի ընդ ջուր պղնձահանքի (493). և երկոքին ՚ի միասին հանդերձ այլ առատ ջուրբք աղբերց յստորև քան զխառնուրդն՝ սկզբնաւորեն զհրազ֊դան գետ:

508, Այս երկրորդ ձիւղ որ ՚ի ծովակէ՝ ու֊նի ելս իւր ՚ի միջոցի անդ երկուց գիւղօրէիցն՝ ցամաքաբերդայ և օրդակլուայ. ՚ի տեղւոջն անդ

ելից ջրոյն տեսանին կուտակ կուտակ բլրակք ա-ւազոյ և խճից քարանց. քանզի ՚ի նուազել ջուրց ծովակին նուազի և գետակն, և վասն այնորիկ ՚ի պէտս անդաստանաց գիւղօրէից այսր գաւառի և այգեստանեացն երևանայ՝ իշխողք այսր նահանգի աշխատեցուցեալ զմշակս՝ ընդարձակեալ են զան-ցըս ջրոյն. զի որպէս իշխողք երևանայ, նմանապէս և կաթուղիկոսունք աթոռոյ Էջմիածնի երբեմն երբեմն ծախուք իւրեանց ընդլայնելով և խո-րացուցանելով զբերան ելից ջրոյն՝ առատացուցել են զայն վասն կալուածոց աթոռոյն որ առ գետա-փըս. որպէս Փիլիպպոս կաթուղիկոս հաղբակեցի՝ ըստ յիշատակութեանն ՚ի ջամբռ անուանեալ գի-րըս կալուածոցն ՚ի Սիմէոն կաթուղիկոսէ երև-անցւոյ. և յայնժամ եղեալ են այն կուտակք ա-ւազոյ և խճից: Այլ ընդ հակառակն՝ երբեմն եր-բեմն ՚ի յորդել և յառատանալ ջուրց ծովակին առատանայ և գետն և վնաս մեծ գործէ անդաս-տանաց գաւառիս և կալուածոցն որ ՚ի ձորամիջի անդ երևանայ. որպէս յայս ներկայ ամ ՚ի վերջին աւուրս յուլիսի. վասն որոյ անդրէն աշխատե-ցուցանելով զմշակս առնուն զառաջս նորա դը-ժուարութեամբ քան զառաջինն:

509, Քարվանսարայ. տունք 50. եկեղեցին ա-նուամբ Սբ Ծածնի. և է հանդէպ մաքրավանք գեղջ՝ յարևելակողմն գետոյն ՚ի տափարակ դիրս: Պանդոկն՝ յանուն որոյ կոչի այս գիւղ, է ՚ի հարա-ւոյ և կառուցեալ է վասն երթևեկացն յերևանայ և ՚ի Տփխիսոյ, այլ թէ ե՛րբ և յումմէ՛. չէ՛ յայտ:

510, Սուքէնէն. ջրառ կամ ջուր հարկանող. է առապար ինչ անմիջոց յեզեր գետոյն յարևելից նորա՝ մերձ գեղջն Քարվանսարայի ՚ի հարաւոյ. զճանապարհն որ ընդ մէջ գետոյն և առապարին. ծածկէ երբեմն յորդութիւնն ջուրց գետոյն և արգելու զանցորդսն. վասն որոյ կոչեցաւ ՚ի բար-

բառ այլազգեաց յայն անուն ։

Յարեւելից առապարին և յարեւմտից պոր- տակ գեղջ երկու համանուն գիւղորայք ·

511 , Ներքին Մխոոյ · տունք 65 · եկեղեցին յա- նուն սբ Խաչի ։ Մօտ է իջեւան անցորդաց յարքու- նի ճանապարհին ։

512 , Վերին Մխոոյ՝ տունք 58 · եկեղեցին ա- նուամբ սբ Աստուածածնի ։

513 , Սոլոյէ գիւղ՝ տունք 44 · եկեղեցին յա- նուն սրբոյն Յովհաննու · հեռի է այս գիւղ ՚ի քարվանսարայ գեղջէ ընդ հարաւ իբրեւ ժամ՝ և կէս՝ յարեւելեան եզեր գետոյն ՚ի սարահարթի անդ- ձորոյն · բնակիչքն ըմպեն զջուր ՚ի գետոյ անտի նե- ղութեամբ , զի է խորաձոր ։

514 , Մուշեղէց գիւղ կամ Մջեղէց · այլ այ- ժըմ ՚ի տաճկաց բարբառ կոչի Մուշտուր · բնակիչքն ՚ի գաղթելոց անտի Սալմաստայ՝ տունք 79 · եկեղե- ցին՝ զոր նորոգ կառուցին և զճակատ բեմին և զկամար սեղանոյն ՚ի տաշածոյ քարանց՝ որոյ զծախ- սըն մեծ մասամբ ետ մելիք Մեսիք բաղալեան պատուաւոր բնակիչն տեղւոյս , է յանուն սրբոյ Մեծին Վարդանայ Մամիկոնեան ։ Այս գիւղ որ- պէս ինձ թուի է՝ նոյն իսկ գիւղն Մուշեղէց , զի տաճիկք ոչ կարելով ուղղակի արտաբերել զայն հնչումն , սովորեցան յերկրորդն · և զի կոչի գիւղ Մջեղէց կամ Մջեղ-էց · ունի արդարեւ յարեւե- լակողմն իւր յատորոտի անդ առապարին երկակն աղբիւր յորդ ականակիտ մաքուր ջրոյ՝ որ ելեալ ՚ի քարուտի անդ՝ մերձ յինքն դարձուցանէ ըղ- ջրաղաց մի և արբուցանէ զջրարբի արտորայսն · այսոքիւք յատկութեամբք և ըստ գրուածոց պատ- մաբանիցն՝ զորս յառաջբերէ Ստորագրութիւնն հին հայաստանի , չիք այնպիսի գիւղ ՚ի կոտայս գաւառի բաց ՚ի կեամրիս գեղջէ ( 438 ) ։ Այս գիւղ գտանի յարեւելեան եզեր հրազդան գետոյ՝

հեռի 'ի սօլակայ ընդ արեւմուտս իբրեւ ժամ մի և գրեալ թէ մերձ 'ի սահմանակցութեան կոտայից ։ 'Ի մէջ գեղջս գտանի աւերակ հին եկեղեցւոյ 'ի սրբատաշ քարանց՝ միջակ մեծութե̄ խաչաձեւ. լեալ է արձանագիր շինութեանն երկտող 'ի վերայ հիւսիսային որմոյն արտաքուստ ընդ երկարութիւն որմոյն, այլ յաղագս աւերանացն անկեալ են քարինքն արձանագրութեանց. 'ի սկսուածի անդ տեսաւ թիւ հայկական ,, յծ ,, (901). և մերձ 'ի դուռըն արեւմտեան յորմն անդ հիւսիսային 'ի կարգի անդ երկտող գրչութեան՝ անունս (Գրիգոր) համդերձ քանի ինչ այլ բառիւք. ըստ ամբողջ թուականին հաստատի թէ՝ շինեցաւ և այս եկեղեցի 'ի հրամանէ Գրիգոր իշխանի սիւնեաց որդւոյ գաբուռն վասակայ ։

515, Ղեօղան տաղը. է լայնանիստ ստորոտովք բըլրակ ինչ յարեւելից ալափարս գեղջ և յարեւմտից լերին Շամիրամայ (341)՝ փոքր քան զայն. և երկոքին են խոտաւէտ տեղիք, բայց առանց գնացիկ ջրոյ. և 'ի միասին բաժանեն ստորոտովք իւրեանց զսահմանն երկուց գաւառաց՝ զկոտայիցն թողլով ընդ հարաւ, և զվարաժնունեացն ընդ հիւսիս ։ Յարեւմտից հիւսիսոյ յիշեալ բլրակիդ 'ի վերայ արքունի պողոտային է Տանձըր կոչեցեալ տեղին. և է փոսորակ ինչ վայր բացեալ 'ի ջուրց հեղեղաց. յարեւելից փոսորակին է ծոցաւոր ինչ վիմուտ տեղի՝ ուր կաթիլ կաթիլ ժողովեալ ջրոյն՝ բաւականանայ յարբումն անցորդաց՝ մարդոց և անասնոց ։

516, Կարէնիս. գիւղ յիշատակեալ 'ի Մատեն Վարդապետէ Տաղերժեցւոյ. գլ, ժզ. թղթա՛՛ 176. 177. յաղագս նշխարաց Անդրէի առաքելոյ և Մատթէոսի աւետարանչի. այս գիւղ եւս 'ի վերայ հըրազդան գետոյ յարեւելեան եզեր նորին՝ 'ի հարաւոյ ալափարս գեղջ. եկեղեցի գեղջս յաւե-

րութեան կայ և լեալ է 'ի կոփածոյ քարանց. ընակին այժմ ատ տաճիկք մահմետականք՝ տունք 14. ուստի և կոչի անուն գեղջս 'ի տաճկաց՝ Սէգիւլ:

Մենաստանն յանուն վերոյիշեալ առաքելոց է 'ի ձորամիջի անդ և ճանապարհն 'ի գեղջէ անտի. կացարանք միաբանիցն իսպառ կործանեալ. տաճարն մեծ մասամբ յամբողջութեան կայ և է օրոցաձև միջակ մեծութեամբ. դարան տաճարին՝ ուստի հանին պատրէքն զնշխարան, եղեալ է զառաջեաւ բեմին սեղանոյ և է բաւականաչափ ընդարձակ. վերին ծածք նորա 'ի կոփածոյ քարանց՝ թերևս 'ի ժամանակէ անտի այնպէս աւեր կայ:

Ընդ այլ տաճկաբնակ գեղջ գաւառին են այսոքիկ:

517, Օշանլար՝ տունք 14: Պօղուշ Գիւնէյ՝ տունք 7: Սուշաղէն՝ տունք 10: Պարաղալըս՝ տունք 4: Խնաշէարլու՝ տունք 20: Պստաղղըշլաղ՝ տունք 15: Պօրշալու՝ տունք 10: Ճլիչօփուր՝ տունք 8: Լուրնուս՝ տունք 15: Ճվէրան՝ տունք 15: Փաղաշէանդ՝ տունք 17:

Ծովակ Գեղարքունոյ:

518, Այս ծովակ շրջապատեալ 'ի լերանց՝ երկայնեալ է յարևելից յարևմուտս. և շրջապատ նորա իբրև չորից աւուրց ճանապարհի հետևական. ընդունի յինքն 'ի շրջապատ լերանց՝ յերից կողմանց գ.քսան և չորս ընդ մեծ և ընդ փոքր գետակս ջուրց, և ըրեա թէ մեծ մասամբ 'ի յորդայորդ աղբերականց և մանաւորապէս 'ի հալոցաց ձեանց լերանցն և արձակէ յիւրմէ զմի և եթ զայն ջուր (507)՝ որ համարի երկրորդ ճիւղ Հրազդան գետոյ, և հազիւ համեմատի քառորդ բաժնի ջուրցն մտելոց 'ի ծովակ անդր. իսկ զմիւս

զաւելորդան ընդ երկրաւ ընդ ներքոյս շրջապատ լերանց՝ և գրեն թէ ընդ չորեսին կողմանսն Թորէզմեծ և զփոքր աղբերակունս՝ ընդ արևմուտս 'ի ձորամէջսն Հրազդան գետոյ և 'ի սահմանսն Կոտայից, ընդ հարաւայինն 'ի ձորամէջսն Ազատ գետոյ, Վէտոյ և գետոյն Գառուրայ, ընդ արևելս 'ի սահմանսն Արձախայ, ընդ հիւսիս յաշխարհն Գուգարացւոց. զի թէպէտ ծովակն ունի 'ի շրջապատս իւր զբարձր լերինս, այլ զդրութիւն իւր ևս ունի կարի բարձր 'ի յիշատակեալ սահմանացըն: Համեղ է ջուր ծովակիս և մարսողական և սնուցանէ յինքեան զերկոտասան տեսակ համեղաճաշակ ձկունս՝ որք են. 1, իշխան. 2, ամար. 3, կեղաջունի. 4, կարմրախայտ. 5, կողակ. 6, բախտակ. 7, բօճակ. 8, ծուար. 9, բեղլու. 10, կուակտոց. 11, չալէ. 12, ալըջան: Այսքիկ ձկունք առատութեամբ իւրեանց լիացուցանեն զմերձաւոր և զհեռաւոր բնակիչս շրջակայ սահմանաց՝ մանաւանդ Երևանայ և Տփխեաց. քանզի 'ի սահմանեալ ժամանակսն երթևեկեալ ձկանց երամովքն 'ի շրջակայ գետակսն՝ կալնուն զայնս դիւրին եղանակաւ և դիւրագին վաճառեալ բեռն բեռն՝ արձակեն զմեծամեծ կարաւանս 'ի Տփխիս և յԵրևան. 'ի նոսա միայն զկողակ անուանեալ ձուկն դնեն յաղաջուր, զի առանց այնր ոչ ունի նման փալամուտ ձկան կոստանդնուպօլսոյ:

519, Սեւան կղզի 'ի մէջ ծովակին գեղաքունւոյ յարևմտեան սպառուածի նորա՝ հեռի 'ի ցամաքէն այնքան, մինչև 'ի ձայնել ուրուք 'ի լաստադադար տեղւոջէ լսեն բնակիչք կղզւոյն. ցամաք նորին երկայնեալ յարևելից յարևմուտս նման ծովակին, իսկ ստորոտն արևմտեան հիւսիսոյ ընդարձակեալ փոքր ինչ դիւր դրութեամբ՝ կացուցանէ զկղզեակն ըստ իմիք եռանկիւնի. յարևելից և 'ի հարաւոյ է վիմուտ և 'ի տեղիս տե-

ղեն զառընդթամբ սարանց ստորոտի · շրջապատ տարածութիւն կղզւոյս ըստ գրուածոց Զաքարիա արքեպիսկոպոսի Գուլասպեանց Տփխիսեցւոյ աւելի է քան զերկու հազար կանգուն կամ գազ պարսկային, և կամ զերկու վերստ ռուսաց : Խոտաւէտ և ծաղկաւէտ է այս կղզեակ ոչ և շրջակայ վայրք և լերինք գեղաքունւոյ, և՚ի գարնան վայելչանայ բուսովք և հոտարձակ ծաղկամբք՝ յորս գտանի ծաղիկն Դեխոյ անուանեալ և վորտ վայրենի · գտանին ՚ի սմա և սակաւ ծառք պտղատուք՝ շլորենի, ալոճի և ուռենի · ևս և պարտէզ բանջարոյ :

520, Աւանդութիւն բնակչացն և մերք գրուածոց հայ հեղինակաց և հետք աւերանացն թաղելոց ՚ի ջուրս հաստատեն լինել աստ շինուածոց ամրոցի՝ և թերևս սկզբնաւորեալ ՚ի Գեղամայ անտի · և յետ ժամանակաց կանգնեալ և բագին․ յորում տեղւոջ ՚ի բարձրութեան անդ ՚ի ժամանակի լուսաւորութեան քրիստոնէական հաւատովք ողջոյն ազգի հայոց կառոյց մեծն Գրիգոր պարթև տաճար փոքրիկ յանուն սրբոյ Յարութեան յամի 305՝ զոր յիշատակէ կոնդակ վանացս և զայսոսիկ · ՚ի կառուցանել մեծին Գրիգորի զայս եկեղեցի՝ կոչեաց և անուն տեղւոյս, Սևավան · որ հոլովել աղաւաղանօք ՚ի լեզուս՝ եհաս առ յետագայն և առ մեզ անուամբս Սևան · և եթող աստ սրբն Գրիգոր պարթև և զոմանս ՚ի կրօնաւորացն եղելոց ընդ ինքեան ՚ի փառաբանութիւն անուանն աստուծոյ ՚ի տաճարի անդ · այս եկեղեցի ՚ի բազում դարուց անցելոց ՚ի վերայ փլեալ կայ իսպառ՝ որոյ մասնաւոր որմունք ցարդ ևս երևին · և կայ տակաւին վիմեայ խաչն մեծ առ ընթեր աւերակի եկեղեցւոյս յարևմտից՝ զոր ասեն օծեալ իւրով ձեռամբ նորուն մեծին Գրիգորի :

Երկիցս առաւ այս ամրոց ՚ի հագարացի

թշնամեաց․ յառաջնումն՝ ՚ի Սահմէտայ․ ըստ Սէ-խէլմարոյ տոյրէվանեցւոյ ՚ի միջոցս Թուոցն ,, ձծ = ձկ էառ Սահմէտ զՍևան ,,․ Բ̃ յամի իբր 706․ յերկ-րորդումն՝ ՚ի Սրուանայ ոստիկանէ ՚ի մէջն անդ Ը̃․ գարուն՝ ըստ Գ̃, Յովհաննու կաթողիկոսի․ ,, Իսկ Սևան կղզի որ ՚ի ծովակին գեղամայ՝ թէպէտ և յսկզբան նուագի անդ ոչ ըմբռնեցաւ ՚ի ձեռս նորա, սակայն զկնի երկեամ մի ամաց մատնեցաւ ՚ի ձեռս նորա․ և որք միանգամ բնակեալք կային յամրոցի անդ՝ գերի առեալ տանէր․ և զկապուտ կողոպուտն յաւարի առեալ՝ սպառսպուռ քան-դէր, աւերէր զամրոցն ,, ։

Նոյն ամրացաւ և Աշոտ Թագաւոր Բագ-րատունի հարիւր արամբք և եթ, յամի 923․ այլ ՚ի յարձակել ՚ի վերայ՝ թշնամւոյն իւրոյ Բշրայ վերակացուին Դունայ բազմութեամբ զօրաց, ել արքայ ինքնին ՚ի կղզւոյ աստի եօթանասուն արամբք կորովեօք ՚ի տասն լաստս և այնպէս յար-ձակեալ յեզր կոյս ՚ի վերայ թշնամեացն՝ հալա-ծական արար անտի՝ ըստ նորուն Յովհաննու կա-թուղիկոսի ։

521, Զկնի յարութեան տաճարին կառու-ցելոյ ՚ի սրբոյն Գրիգորէ լուսաւորչէ կառու-ցան և այլ երեքին տաճարք ՚ի կոփածոյ քարանց ՚ի սոյն կղզեակ․ յերից անտի երկուքն կառուցան ջերմեռանդ արդեամբք ՚ի Մարիամ Թագուհւոյ դստերէ Աշոտոյ Թագաւորի հայոց՝ որ էր կին գաբուռն Վասակայ սիւնւոյ, ՚ի յիշատակ հո-գւոյ առն իւրոյ յամի 874, յաւուրս վանահայ-րութեան Մաշտոցայ է, նախ քան զկաթուղիկո-սանալն․ և պատմի ըստ այսմ՝՝ ՚ի գրուածս հեղի-նակաց և յաւանդութիս կրօնաւորաց կղզւոյս ։

Վերոյիշեալդ Մարիամ Թագուհի ընկալ-նու պատուէր յառնէ իւրմէ ՚ի գաբուռն Վա-սակայ ՚ի վախճանի նորուն՝ տալ կառուցանել

զեկեղեցի թուով քառասուն. զկնի շինութեան միւսոցն յայլևայլ տեղիս 'ի գեղաքունի՝ գայ 'ի վերջոյ և 'ի կղզիս այս յայցելութիւն կրօնաւորելոցն անդէն և 'ի յիշատակութիւն հոգւոյ առն իւրոյ յաղօթս նոցին և 'ի լրումն կտակի առն մն շինութեան եկեղեցւոյ և այս. այլ արգելեալ լինի մնանել 'ի կղզին 'ի Մաշտոցայ սրբոյ հօրէ՝ թէ ոչ երբէք մնեալ է այսր կին մինչև ցայժմ, և արդ ես չէ՛ կարելի. բայց 'ի թախանձանաց ջերմեռանդ տիկնոջն ստիպեալ՝ յղէ պատգամ առ նա, թէ դու այդր 'ի ցամաքաբերդ տեղւոջդ աղօթեա առ ած և ընկալջիր զհայցուածս քո. և ինքն ես երանելին Մաշտոց յոտնկացութեան աղօթելով առ Տէր անցուցանէ զայն գիշեր և խնդրէ յԱստուծոյ, զի թէ հաճոյ իցէ ինքեան՝ գալ, մնանել տիկնոջն՝ յայտնեալ ցուցցէ վերնական տեսլեամբ. և այնինչ երկոքեան սուրբն Մաշտոց 'ի կղզւոջ, և Մարիամ Թագուհին 'ի ցամաքաբերդ ջերմեռանդ խնդրուածովք յաղօթս կային յայն գիշեր, 'ի մերձիլ ծագման լուսոյ՝ տեսանէին զտեսիլ միօրինակ. զի ահա բացեալ հաստատութեան երկնից և ցոլացեալ լոյս իջանէր 'ի վերայ ծովուն. և ընդ լուսոյն 'ի չորից կողմանց առաքեալքն երկոտասան ընթանալով 'ի վերայ ջրոյն եկանէին 'ի ցամաք անդր կղզւոյն. և մերձ 'ի տաճարն սրբոյ Յարութեան 'ի հարաւոյ կողմանէ 'ի տեղի ինչ տափարակ թափօր արարեալ օրհնէին զտեղին և ցսուրբն Մաշտոց ասէին. աստ կառուցէ՛ք զեկեղեցի յանուն մեր. և ապա վերանային յերկինս. որոյ վասն ըստ հրամանի սրբոյ հօրն 'ի կղզին մնանէր Տիկինն ջերմեռանդ և պատմելով իւրերաց զցոյց յայտնութեանն և նկատելով իսկ 'ի տեղւոջն զհետս ոտից առաքելոցն և զցօղ լուսափայլ 'ի դալարիսն անդ՝ հիմնարկեալ տային կատարել զշինուած տաճարին 'ի

Թիւ Հայոց ՅԻԹ․ (յամի 880), ըստ կոնդակին․ իսկ ըստ թիւ գրուածոց Ստեփաննոսի Օրբէլեան 'ի Հայ թիւ ՅԻԳ (874), առ Հայր Վ․ Ուկասու Ինճիճեան 'ի Հին Հայաստան․ Թղթ․ 276։ Եկեղեցին է կատարեալ խաչաձև առանց սեան․ ունի կաթուղիկէ 'ի մի-ջավայր տանեացն, զմի սեղան սրբազան խորհրդոյն և զերկուս աւանդատունս յաջմէ և յահեկէ․ դուռն հիւսիսային աւանդատան է արտաքուստ և 'ի ներքս եկեղեցւոյն ընդ դասն ունի լուսա-մուտս պատուհան մի՝ զորմէ ունին աւանդու-թեամբ կրօնաւորքն թէ՝ գիտութեամբ եւ այն-պէս առնել տիկինն 1, Մարիամ 'ի ժամանակի անդ շինութեանն սակս ինքեան առանձին աղօթելոյ անդէն 'ի պահու ժամերգութեան։

Այս տաճար ունի և զերկուս դրունս՝ ա-րևմտեանն ընդ փոքր փայտաշէն գաւթաւ․ և է միափերտ փայտ ընկուզենի կարի կարծրացեալ 'ի հնութեանց ժամանակին ([illegible] դրանն [illegible] բանող [illegible] Օտարին [illegible])․ Յո-րում գոյ մակագրութիւն յանուն ընծայողի զայն-կայս օրինակ․ ,, 'Ի թվ Հայոց ՈԻԵ․ (1176) Նորո-գեցաւ դուռն սուրբ եկեղեցւոյս հրամանաւ

1, Ա[illegible] բնակիչք նշանակեն՝ այն Մարիամ տի-կին [illegible] առանձնացեալ [illegible] բարեկրօնութեամբ [illegible] 'ի որդւոյն Սմբ-[illegible] յարևելից հիւսիսոյ տաճարի [illegible] ա-[illegible]․ [illegible] 'ի մահուն [illegible] և [illegible]-[illegible] 'ի [illegible] խանգարեալ [illegible]։ Այս [illegible] Գ, Յովհաննու խա-[illegible] 'ի [illegible] Տ-[illegible]․ ,, Տարեալ հանգուցանեն [illegible] Մարիամ [illegible]) 'ի [illegible] 'ի [illegible] եկեղեցին եւր 'ի Տ[illegible] ,,։

իշխանաց՝ իշխան Վրդին և ձեռամբ Յովհաննիսի հիւսան. որք ընթեռնոյք յիշեսջիք ,,: Հարաւային դուռն ես մաքրերթ ՚ի նոյն փայտէ, այլ յաւէտ ընտիր ճարտարարուեստ գործուած՝ փորուածոյ բոլորովին և պէսպէս դրուանօք պատկերաց և ծաղկանցն նման արդարև շնորհաց եւրոպեան ձեռին. ունի և սա յիշատակագրութիւն և թուական ՚ի բաժանմունսն անդ քանդակացն և ՚ի շրջապատսն՝ ըստ այսմ:

,, Ջհա, թուականի լէ թիւ աւելի (1557), յաթոռակալութեան տեառն Սարգսի, ՚ի խանութեան Յաղուպ բէկի ծաղկեցաւ (ծանդաշեցաւ) դուռն տաճարիս առաքելոցն քրիստոսի, հրամանաւ վ͞դի եռամեծիս Դանիէլի և սիրելի որդւոյ սորին եպսիս տէր Ներսեսի, ձեռամբ սորին աշակերտի անարժանիս Աբրահամ: Նա և եղբաւր մեր սիրելի շնորհաւք ՚ի լի գ͞րգսի: ոտս անկանի յամի հայցել տեառնէ պարգև ձրի: րաբունոյիս համայն ազգի և ծնողացն իրոց բարի կ͞րպտ քահանայի և մաւրն ..... ,,:

Ունի այս տաճար արձանագիր շինութեանըն առաջնոյ. և գուցէ լեալ և ՚ի նորոգութեանն անհետացեալ. բայց նորոգութեանն գտանի արձանագրութիւն արտաքուստ յորմն հարաւային աւանդատան՝ ըստ այսմ:

,, Շ͞նհք և ողորմութեամբ ամենազօրէին Աստուծոյ մեք երեք հարազատ եղբարքս Սուլխան, Օսալ և Օրապ տվաք նորոգել սուրբ եկեղեցիս յիշատակ մեզ և մեր ննջեցելոցն՝ հօր թաղին և մօրն բէկի սուլթանին, հանգուցեալ եղբօրն պապին և ամենայն ազգայնոց: այլև խոստացաք շահ ստացուածոց ընդ սմայ տասանորդեսցուք. և միաբան սուրբ ուխտիս խոստացան յետ ութօրէիցն աւուր տօնի ս͞բ կարապետին պատարագ մատուցանել վասն մեր: Նորոգեցաւ ՚ի թո-

ւականիս Հայոց ռՃգ. (1654) 'ի Հայրապետութեն տեառն Փիլիպպոսի, առաջնորդի Մխիթար:

Զկնի շինութեան այսր տաճարի յանուն առաքելոցն երկոտասանից տայ կառուցանել նոյն տիկինն Մարիամ և զերկրորդ եկեղեցի 'ի լայնեալ սարոտի անդ արևմտեան հիւսիսոյ յանուն Մարիամայ մօր տեառն 'ի կոփածոյ խարտեալ քարանց՝ որ ունի զմի սեղան պատարագի, զերկուս աւանդատունս, զերկուս սիւնս և զերկուս դըրունս. և է օրոցաձև առանց կաթուղիկէի, մեծդրութեամբ քան զմիւսն. չունի և սա թուական կամ արձանագիր նոյն առաջին շինութեան, այլ նորոգութեանն միայն դարձեալ 'ի նոյն արանց երից եղբարցն տփխեցւոց գրեալ 'ի մէջ տաճարին յարևմտեան ճակատի հարաւային սեանն՝ ըստ այսմ:

,, Յամի ռ̃ երրորդի, ճգ̃ծ̃ան երրորդի շնորհօք այ̃ մեք հարազատ եղբարք խօճայ Սուլխանս և Զալս 'ի քաղաքէն տփխեաց ապքէն չիթղենց, որդիք Թաղայի եկեալ 'ի սբ̃ անապատս 'ի Սևան ծովապատ՝ զոր 'ի բազում ժամանակաց մեր կամաւ խոստացա. . մեր ապրանաց շահն տասանորդ տանք Սևանայ, ամէն: զոր շինեցաք սուրբ Աստուածածինս եկեղեցիս յիշատակ՝ մի արծաթի կանթեղ, խաչ, բուրվառ, սկի հոգոցս հօր մերոյ Թաղային, մօր բէկի սուլթանին, եղբաւր պապին, զօրապին, քվերանց որդոց բածինին. նայ և միաբանքս խոստացաք տարին գ̃ ժամ մատուցանել. կատարողք վարձս առցեն. 'ի հայրապետութեան տեառն Յակոբայ ,, :

*Բաց յայսմ այն արձանագրութեանս գտանի և այլ գրուած յարևմտեան ճակատ եկեղեցւոյս ար-տաքուստ ՚ի ներքոյ լուսամտին՝ ըստ այսմ։*

„Յամի ՌՃԳԺ անի երրորդի շնորհօք աստուծոյ մեք հարազատ եղբարք Մուլխան, Զալո ՚ի քաղաքէն Տփխաց ազգն չթաղենց որդի Թաղայի որդւոյ միրզէլու եկեալ ՚ի սուրբ անապատ Սեան՝ տեսեալ սուրբ Աստուածածնի եկեղեցիս շինեալ յիշատակ մեր ազգականաց շահի ժանորդ տալ զտեղի բնակողաց. և միաբանքս խոստացաք տարին Գ ժամ մատուցանել ՚ի մեր զատկին, վարդավառին, ջրօրհնեաց տօնից։ Այս եղև հայրապետութի տեառն Յակոբայ. առաջնորդ Աստուածատուր եպիսկոպոս, Իսրայել վարդապետ հանգուցելոյ„։

*՚Ի հարաւակողմն այն վերոյիշեալ արձանի գրի և այս։*

„Շնորհ քրիստոսի և ողորմութեամբն աստուծոյ նորոգեցաւ եկեղեցիս իւր կնածովն, ՚ի թուին ՌՃՁԹ. (1740) ՚ի հայրապետութեան տեառն Ղազարի, և առաջնորդ Մարտիրոս վարդապետի. աստուած ողորմի ասացէք տուրք և ողորմութիւն տվողացն սուրբ տանս և աշխատողաց. և ս Մարտիրոս վարդապետի որդի աթաբէկին որ տվաւ Է թումանն ողորմութիւն„։

՚Ի վերայ արևմտեան դրան եկեղեցւոյս է փայտաշէն գաւիթ. յորում կան հանգուցեալ մարմինք ոմանց վանահարց մենաստանիս և կրօնաւորաց՝ որոց տապանավէմք կան առանց գրուածոյ։

Յայս եկեղեցի աղօթեն սովորաբար կրօնաւորք մենաստանիս. և շէնք կացարանաց նոցա ևս կից են ընդ եկեղեցւոյն՝ յարևելից և ՚ի հա-

րաւոյ՝ այնպէս, զի 'ի մտանելն յեկեղեցի և յելանելն ընդ յարկաւ ճանապարհի սենեկացն երթևեկեն. այսմ անվայելչութեան պատճառ է արդարև սաստկասառոյց ցրտութիւնն ձմեռնային որ տիրէ անդ իբրև ամիսս վեց. շինուածք կացարանացն են 'ի հասարակ քարանց և 'ի հողոյ և 'ի փայտէ. և կարի փոքր են սենեակքն՝ յորում հազիւ արկանին մահիճք միոյ անձին. և են ըստ առաւել մասին կրկին՝ 'ի մէջ իրերաց: Այս անձկութիւն սենեկացն և խոնաւութի՛ նոցին՝ մանաւանդ ծուխ ճրագացն 'ի գիշերային ժամանակի վշտացուցանէին զկրօնաւորսն. ուստի միաբանութեամբ հանդերձ խնդրամատոյց եղև վանահայրն Յովհաննէս վարդապետ առ տէր Յովհաննէս ներկայ կաթուղիկոս յամի 1834, կամ քակել զայնոսիկ կացարանսն և նոր 'ի նորոյ փոքր ինչ ընդարձակել, և կամ առանց ձեռնամուխ լինելոյ յայնս, կառուցանել նորոգ սենեակս ըստ յարմարութեանն. ընկալեալ վանահօրն զհրաման վասն վերջնոյս՝ հոգացաւ, եւ կառուցանել յարևմտեան կողմն եկեղեցւոյն և առաջին սենեկացն զնոր սենեակս ընդարձակ և բարձր դրութե՝ թուով քսան և հինգ. որոց միջին ճանապարհ դարձեալ ընդ յարկաւ մտանէ յառաջին ճանապարհ առաջին սենեկացն և այնպէս յեկեղեցին ցամաք ոտիւք:

Առաջին փոքրիկ յանուն սրբոյն Սինասայ է մերձ յայս եկեղեցի սրբուհւոյ Աստուածամօր կուսի 'ի հիւսիսոյ կողմանէ. և է խարխուլ և խոնարհել յաւեր. այլ թէ ե՛րբ և յորում ժամանակի՝ չիք ինչ գրուած մակագրութեան և ոչ աւանդութիւն:

Եկեղեցի հինգերորդ յայս կղզի Սևան մերձ յարևմտից եկեղեցւոյ սբ̄ց առաքելոցն 'ի բարձրութեան անդ. և է յանուն սրբոյն Յովհաննու

Պրոշի · զորմէ աւանդեն բնակիչք կղզւոյս՝ կառուցեալ արդեամբք տանուտեարց գիւղօրէից Պետղաքունւոյ· և է փոքր դրութեամբ քան զեկեղեցի առաքելոցն, նոյնպէս առանց սեան և ունի կաթուղիկէ փոքրիկ՝ յորոյ հարաւային կողման դնի թուական՝ ըռ այսմ։ ,, Թվին ՌՃԿԳ (1714)· նորոգեցաւ սուրբ Կարապետ ,,։

Ունի և սա գաւիթ փոքրիկ փայտաշէն· և ինչ ինչ խուղս կրօնաւորաց, այլ խարխուլ և կիսաւեր, որպէս և եկեղեցին մօտ առաքելոց,

522, Կրօնաւորական միաբանութիւն 'ի մենաստանի աստ՝ ըստ յառաջբերելոյ կոնդակին և աւանդութեան միաբանիցն, սկսեալ է 'ի ժամանակէ անտի սրբոյն Գրիգորի Լուսաւորչի՝ այնինչ եկեալ աստ կառոյց զտաճարն յանուն սրբոյ Յարութեան և եթող յեղելոցն առ իւր զոմանս 'ի փառաբանութիւն ամենաբարձրելոյն յայնմիկ տաճարի· իսկ պատմիչք դնեն 'ի մէջն Թ, դարուն առ ժամանակօք սրբոյն Մաշտոցայ՝ յորոյ աւուրս շինեցան վերոյիշեալ երկու եկեղեցիքն և բազմացան կրօնաւոր անձինք անդէն ըռ *, կանոնի սրբոյն Բարսղի միակրօնք 'ի տան աստուծոյ եղեալ յամենայն դէպս ընկերութեան· և յորէ անտի և այսօր տևեաց այն հաւասարութիւն ուխտի կրօնաւորական կենաց յայս կղզի և յայլ ինչ ինչ մենաս

* , Կանոն սրբոյն Բարսղի Մեծի հայրապետին կեսարու հաղորդակցութեան յաղագս կրօնաւորաց գտանի ընդդէմ և յաղթի հայոց ընդդիմանեալ յերանելի նախնեացն առաջնոց, այլ որպէս կարծի անծանօթ է այն 'ի բազմաց՝ ևս և պատճառն այնմ, մանաւանդ յառաջանալն … և. յորմէ երբեք ընդհանուր ընթացք գտանին 'ի գրեանս առաջնոց Կղզեացն՝ որ պարունակէ յինքեան զերբեք հարիւր և չորեքտասան պատճախանիս հարցմանցն. և մանաւանդ թե մատենին է. ,, յաղագս հարցմանց սրբոյն Բարսղի ,,. առաջ պատմութեան այնմ որ

տանս Հայաստան աշխարհի ; յոր մեր դրէ Առաքէլ վարդապետ Սիւնեցի 'ի լուծմունս սահմանացն՝ յասելն .,, Հարց. զի՛նչ է արդարութի...: Պատասխանի՝ արդարութիւնն կրկին է՝ այսինքն՝ կշռողական և արժանական. արդ կշռողականս ար-

[illegible]

գարութիւն ՚ի վանորայս լինել ՚ի միաբանութեանն՝ որք ընդ Ներսէի կանոնացն միաբան լինին, զի անդ կշռողապէս և հաստատապէս լինին ամենայն ինչ. այսինքն՝ կերակուր և հանդերձ միապէս տան ա-

Բայց առաջնորդքն խնամ ածէին ամենեցուն նոցա. որում և ըն- Ստեփաննոս որ ըն՛ էր հոգևոր որդւոյ՝ վերակացուին ընկերօքն նո- ցին տեսուչ եդին առաջնորդն. և այնպէս միաբանեալ էին, զի ամենայն ինչ նոցա հասարակաց էր. և [illegible] [illegible] առ-ըէ- անուանէ յաւելն. եղբայր պաշտօն տանել որդւոյն որ Յովհան- նէսն. իսկ որք ողջ հաւատային, նոքա չառաջնորդեալ հալածե- ցին և զՍտեփաննոս քարկոծեցին և չհանգուցին ՚ի վերայ որ- չին յաշտարակէ առաջին: Նորա՝ իբրև լսեաց չարաչարութեան ժամանակ ցեալ համբարձման տեառն մերոյ և մերձեցան առաքեալ- քն առաջ ակն ՚ի վերայ Յովհաննու, յայնժամ հրեշտակի ա- առաջնորդութեամբ գնացին ամենայն հաւատացեալքն՝ առ դա- տաստան և խաչ Յովհաննու անապատն, և չլինէին վա- նորայս կրօնաւորաց և կուսանաց և բազում հարին չհրեշտակա- կան վարուց: Նա ցեալ էլանելոյն նոցա Յովհաննէս, էին Տէրն և Ս[illegible] [illegible] և [illegible] ամենայն հրեշտակաւ և չՅովհաննէս ՚ի չարիս տանին: Նորա՝ այնուհետև էին որ մինչ ՚ի ժամանակս որդւոյ հայրապետացն Գրիգորի և Ներսէի կա- ցեալ, ՚ի նոցանէ շնորհաց իրաւանն խնդրէին. զի կրէին վար- ուց յանցինս իւրեանց. շնորհ և չարիքն վարուց այնպէ- սեացն գոլէ ուանչելին փիլոն՝ անմարմնոյն նմանեցուցանե- լով. և հեռեալ չնոր ամէն՝ որ է անմարթս: Նայց այլ թէ՝ յայնժամ էին [illegible] [illegible] և այլ հարանց հայրապետաց ըն- ցրեն [illegible] էրթային հանել [illegible] [illegible] [illegible] [illegible] յե-րամ [illegible], թէ որ յեգիպտոս էին՝ [illegible]: Բայց [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] հարցուածն՝ երէ հարիւր [illegible] և [illegible], [illegible] և [illegible] էին [illegible] [illegible]. [illegible] թէ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] էրէ, [illegible] [illegible] է այս և [illegible]՝ էրէ հարիւր [illegible] [illegible] և [illegible] [illegible] [illegible] ժամանակ [illegible] [illegible] գոլ [illegible] [illegible]. և [illegible] [illegible] [illegible] գոյր [illegible], [illegible] [illegible] էջէ [illegible]

մենեցուն. կշռողապէս, մաշկաւ մեծի և փոքու՝ հանդերձ և կերակուր և ամենայն ինչ: Իսկ առ. ժամապէս և այլն,,:

՚Ի բուն արևելեան ծայրի կղզւոյս փոքրինչ ընդ հարաւակողմն յեզեր անդ ծովուն են երկու

[illegible]

[illegible]

փոքրիկ խորշիթք՝ տեղի ճգնութեան սիրողի զա_
ռանձնութիւն խոպառ · ունին մի մի կայր փոքրիկ
դրունս և լուսամուտս ընդ արևելս · թէպէտ շէնք
սոցա 'ի նորոց են՝ 'ի հասարակ քարանց , 'ի հողոյ և
'ի փայտէ , բայց աւանդութեամբ ասեն՝ լինել տե_

[illegible]

,,[illegible] գրոյն փիլոնի՝ որ [illegible]
[illegible],,:

,,[illegible]

[illegible]

ղուղն ՚ի ժամանակէ անտի սրբոյն Մաշտոցայ, և սեղի առանձին ճգնութեան նորա. ուր երբեմն առանձնացեալ ՚ի միաբանութեանց անտի՝ աղօթից և խնդրուածոց պարապէր և հազիւ ուրեմն երևէր յետ քանի ինչ աւուրց. և խորշիթքն այնք իսկ անուանին ցարդ Մաշտոցնէր. Ճանապարհ սորին կարի դժուարին է՝ գոլով Ը՞ գառ ՚ի վայր, թէ և դիւր. ուսոյ բազումք իջանեն և ելանեն յափսիթերս:

523, Պատանէին արդարև յայամիկ մենատանի և արք գրագէտք եկեղեցական և վարդա-

պետք ՚ի խուժանս եգիպտացւոց՝ բնակեցան ՚ի Սինեա լեառն և յանապատն, և կէսք ՚ի Թեբայիդ լերինն. և անդ խոյին այնպիսի վարուք՝ զոր պատմէ ասանդէլին փիլոն. զորս և հրեշտակաց համեմատ ցուցանէ ՚ի մաքրութեանն՝ յաւելն. ասն էր նոցա երկիրն; և յեղունս երկինսն, և քահ և ճրագ՝ արեգակն, լուսին և աստեղք. և խաւարս անկողինս՝ երկիրն. կնոյ ժամանակ և ո՛չ երբէք, այլ անդադար խոյին զգի և զգինչէր ՚ի հոգւոյն փառաբանութեանն աստուծոյ, և այսպիսիս համբաւել անուն նոցա յանենայն Թերապեւտրիա: Եւ յաղագս այնորիկ զոգա մեծն փիլոն գեղանէլ զնոսա. այլ ո՛չ բնաւին արգելեալ էին նոցա յարինացն, զի ի՛ իրանսցուն. նաև զի զարինացն ...ն հմաութեամբ գիտէին. է՛ր որ թողեալ էին, և է՛ր որ դէռ կրէին զո՛չ վնասարարն ՚ի համապատմութեան աւետարանին. իսկ իբրև եւես զնոսա յայնպիսի խստամբերութեան մեծն փիլոն, (Հեսեայս) էր անուն նոցա. այսինքն որոշեալս յաշխարհէ: Եւ դարձեալ առ բան՝ եթէ ՚ի գնալն Պետրոսի ՚ի Հռոմ կարգել զբանն կեանց համբաւեցուցն աշխարհի, եւս Մարկոս ոչ ... զփիլոն, խառն ... ցուցանէ զոր և աստ յաւելն հասք և օրհնոյ և հագուսն որբոց. և ո՛չ առ յանէն աւելում՝ ՚ի ծերութեան համեալ կամ, անձնեալ ժամանակ զոլ ... աս. զէ՛ ՚ի դէղ այժմ ինչ առինքնեցուցանէ ...: այլ զորինչ առնէ առաջնորդ Մարկոս առինքնեցուցանէ, արդարեւ և ինչ աղաչերով նորա ընդ իմաստ չափաւոր Պետրոս վասն զի ընդունակութեան էր բանիցս՝ ո՛չ հոգա-

պետական մատենից՝ Թերևս և ի ժամանակէ իսկ
անտի որքայն Մաշտոցայ. որ վասն և յոլով մա-
տեանք սուրբ գրոց հաւաքեցան անդէն ը. պատ-
մելոյ Խորենեայ: Բացայայտ է՝ թէ անձինքն այնո-
քիկ չկարէին հասանել ցմեզ, այլ հեղինակու-
թիւնք նոցին և այլ զանազան հաղուագիւտ մա-
տեանք հոգացեալք 'ի նոցունց միայն և ցարդ-
և յաւիտեանս ժամանակաց 'ի ձեռս յարգողաց
զայնպիսիս, այլ չէք ինչ նշմարանք այնօրինակ թան-
կագին հնութեանց այժմ անդէն. քանզի որպէս
լսեմք, 'ի ժամանակի անդ կաթուղիկոսութեան
Սիմէոնի Երևանցւոյ՝ այնինչ յաւուր միում լսեն
կրօնաւորքն այսր մենաստանի թէ՝ կաթուղիկոսն
ունի յայց ելանել յայնսաիկ կողմանս և 'ի մե-
նաստանն իսկ, անձապարհնութեան մաքրել զմե-
նաստանն վայելուչ դրութեամբ. և զկնի աւար-
տելոյ զամենայնն՝ փութան իբրև 'ի յետին գործ
և 'ի մատենադարան վանացն, և տեսեալ թէ չէք

[illegible]

հնար մաքրելոյ զայն 'ի փտութեանցն և 'ի մկնա-
կեր և 'ի ցեցակեր խեշերանաց թղթոց մատենիցն
յայնմիկ համառօտ միջոցի. և զի ջուրք անձրևաց
ևս իջեալ 'ի ծակտեաց տանեացն միջոց առ մի-
ջոց իսպառ փչացուցեալ են զմատեանսն, և թէ՝
եկեալ կաթուղիկոսն տեսանէ յայնպիսի դրու-
թեան զգրանոցն, ունի անպատուել զնս և պատ-
ժել խստապէս, միաբանութեամբ հանդերձ ժո-
ղովեալ 'ի մի և զաշխատութիւն մեծ ստանձնել
'ի բախտաւորութիւն ինքեանց և յանբախտու-
թիւն ազգի՝ զամենայնն 'ի միասին զոչնչացեալսն
և զամբողջսն, զբովանդակ մատենադարանին ըզ-
պահեստն հնութեան տան կերակուր ալեաց ծո-
վուն. աւա՜ղ յետին թշուառ տգիտութեանն. ե-
րանի թէ նոքին իսկ անօպայքն էին լեալ խորա-
սոյզ 'ի ծով անդր, քան այնպիսի անձնամաշ ձը-
գամբք բազմաժամանակեայ դարուց ժողովեալ
պահեստն նախնեաց՝ յորոց միջի անտարակոյս եմք՝
թէ էին այնպիսի մատեանք, որք տակաւին ան-
ծանօթ են հասարակութեան ազգի:

‹Մատենագիրք յետ Վանահայրք Ինքնապանիս.

524. Մաշտոց սուրբ հայրապետն յամի 874. այլ թէ որչափ ժամանակ եկաց աստէն նախ քան զկաթուղիկոսանալն, չէ՛ յայտ:

Ստեփաննոս. որ և զկնի կաթուղիկոս՝ իբր յամի 965:

Սարգիս. որ և զկնի կաթուղիկոս՝ իբր յամի 985:

Սարգիս Բ, այր գիտնական և լեզուագէտ՝ որ և թարգմանեաց զինչ ինչ գիրս, և արար ճառս և մեկնութիւս. և էր անդ 'ի մէջ ԺԱրդ դարու. առ որ. գրեաց և Գրիգոր մագիստրոս զթուղթ:

Սարգիս Գ, Թերևս վանահայր՝ որ գտաւ

՚ի Լոռի ՚ի ժողովն առ Զաքարիա սպասալարին յամի 1205:

Դանիէլ. որ յիշատակի յարձանագրութեն եղելոյ ՚ի վերայ փորածոյ դրան եկեղեցւոյն սբց առաքելոց յամի 1557:

Կարապետ եպիսկոպոս սրբոյ Էջմիածնի՝ զոր Առաքել վարդապետ դաւրիժեցի յիշատակէ Թղթա՛ 250. սա թերևս զկնի աւերանացն Շահապասի եկեալ աստ անդրէն նորոգեաց զմենաստանն:

Մխիթար եպիսկոպոս. սա էր յառաջն քահանայ ՚ի դալիղարդաշ գիւղ գեղաքունւոյ, զկնի վախճանի ամուսնոյն մտանէ ՚ի սևան. և ապա ՚ի Փիլիպպոս կաթուղիկոսէ ձեռնադրեալ եպիսկոպոս կարգի վանահայր. յոր պաշտաման և առնու զվախճան կենաց յամի 1662, ըստ Զաքարիա սարկաւագի. հատոր ա, գլ, 45:

Ոնոփրիոս յաւուրս Յակոբ կաթուղիկոսի ջուղայեցւոյ առ ժամանակ ինչ. զորմէ Զաքարիա սարկաւագ. բ, գլ, 38:

Բարսեղ վարդապետ՝ որ վտանգեալ ՚ի սառուցէ ծովակին սուզաւ ՚ի ջուր անդր ընդ իւր եղելովքն՝ յորոց բ անձինք և եթ զերծան յամի 1660. յԱռաքել վրդպտ դաւրիժեցի. Թղթ, 619:

Մխիթար եպիսկոպոս՝ յորոյ աւուրս նորոգեցան երկու եկեղեցիք վանացս յերից եղբարց անտի տփխիսեցւոց յամի 1664, ըստ արձանագրութեանցն. վախճանեցաւ ըստ գրելոյ Զաքարիա արք եպիսկոպոսի յամի 1695:

Մարտիրոս եպս չէրքէզեանց ՚ի Շահրիզ գեղջէ ծաղկունեաց. յաւուրս սորա ևս նորոգեցաւ տանիք եկեղեցւոյ սրբուհւոյ Ածածնի ըստ արձանագրութեանն եղելոյ անդէն՝ յամի 1740:

Յովհան վարդապետ ՚ի Նորատուաց գեղջէ գեղաքունւոյ. յաւուրս սորա յերկրորդ յար-

ձակման լեղկեաց 'ի գեղաքունի, ժողովին շրջա-
կայ բնակիչք ծովակիս յայս կղզի իբր յանքոյթ
տեղի՝ յորս էին յերեւելեաց անտի մելիք Սար-
գիսջանն, և Մալահվերդի իւզպաշին (421) 'ի 5,
յունվարի իբր ամի 1755, այնինչ տեսանեն լեղկիք
թափուր զգեղաքունի և լի՛ ժողովրդեամբ ըզ-
կղզին՝ աճապարեն ընդ սառուցեալ ծովակն 'ի
կղզի անդր. յորում միջոցի սոյն վանահայր վարդա-
պետ կատարէր զորբաղան խորհուրդ պատարագին
յայնմ երեկոյի ճրագալուցին յեկեղեցւոջ սրբոց
առաքելոց. և այն ինչ ազդեն սրբազան պատարագ-
չին՝ ասէ ցնոսա. յաղօթս կացէ՛ք և պատրաստե-
ցէ՛ք զանձինս 'ի հաղորդութիւն սբ̄ խորհրդոյն.
և ահա նոր հանդէս պատժոյն փարաւոնի, զի այն
ինչ սուր 'ի ձեռին մերձ էին լեղկիք մտանել 'ի
կղզին 'ի սպանումն և 'ի գերութիւն, ահագնա-
գոյն դղրդմամբ բեկեալ սառին՝ ընկղմեաց զբազ-
մութիւն նոցին 'ի խորս ջրոյն. որոց սակաւք զեր-
ծեալ փախեան ուստի եկինն: Այս զկնի ամաց
ինչ վախճանեցաւ յիշեալդ Յովհան վարդապետ 'ի
դոյն պաշտաման:

Աթանաս վարդապետ մակուեցի յարտազ-
գաւառէ. որոյ կացեալ 'ի վանահայրութեանն ա-
մըս 5, վախճանեցաւ:

Ազարիա գանձակեցի եպիսկոպոս յԱղուա-
նից անտի ամիս ինն: Յաւուրս սորին գայ 'ի Լի-
մըն անապատէ այսր Գրիգոր վարդապետ ոմն այր
ճգնասէր. և յաւուր միում առեալ ընդ իւր
զմի սարկաւագ և զերկուս կրօնաւոր մանհտեսիս՝
գնայ լաստիւն յաղագս հարկաւոր ինչ գործոյ
արտաքոյ ծովակին. և զի նորոգ սառիլ սկսանէր
ջուր ծովակին՝ կոտորելով զսառն ընթանային
դժուարութեամբ. ապա ծանրացեալ լաստին 'ի
սառուցից անտի՝ ընկղմի յիշեալ վրդ̄պտն և մին
'ի մանհտեսեաց և միւս երկուքն զերծանին կի-

սահեղձ։

Նշխազար եպիսկոպոս ՚ի Գանձասարայ՝ յերիս ամս կացեալ վախճանի ՚ի կենաց աստի։

Գրիգոր վարդապետ գանձակեցի՝ ամս 8. սա գնացեալ ՚ի Ղզլար սակս ժողովարարութեան մենաստանին՝ անդ առնու զվախճան կենաց։

Սարգիս վարդապետ յԱսկանապատ գեղջէ գանձակայ. սա վախճանեցաւ ՚ի մերում ժամանակի։

Յովհաննէս վարդապետ ՚ի գաւառէ Դուդարաց առ կենդանութեամբ նորին սարգսի. սա ևս կացեալ ամս ինչ, և զկնի կառուցանելոյն ըզ նորոգ կացարանն կրօնաւորաց՝ ետ հրաժեշտ ՚ի վանահայրութէ և գնաց յԵրուսաղէմ յերկրպագութիւն սբ տեղեացն. և անտի վերադարձեալ ՚ի կարանթին Աղեքսանդրապօլայ և անդ հիւանդացեալ՝ վախճանի զմահկանացու կեանս յամի 1840, յամսեանն յունիսի։

Մինաս վարդապետ ՚ի Ճաթղեան գեղջէ կոտայից՝ իբր ամ մի։

Յարութիւն եպիսկոպոս գանձակեցի յէջմիածին ձեռնադրեալ. յորում պաշտաման կացեալ ամիսս ինչ՝ առաքի ՚ի յաջորդութիւն վիճակին հին Նախիջևանայ և կայ այժմ անդէն։

Յովհաննէս վարդապետ տփխիսեցի անտոնեան՝ որ վարէ այժմ զպաշտօն վանահայրութեանն։

Նշխարք հինաց կրօնաւորելոցն յայս մենաստան.

525, Յառաջ ժամանակաւ յաւուրս իշխանութեան հայոց եղանէր ապրուստ կենաց ՚ի սրնունդ. և ՚ի զգեստ կրօնաւորաց մենաստանիս ՚ի սեպհական կալուածոց գիւղորէիցն՝ ընծայելոց մեծխանաւորաց անտի հոգեկան նուիրմամբ՝ զորս և յառաջբերէ հայր Ղուկաս ինճիճեան ՚ի գրո-

ւածոյ յօրէնելեան Ստեփաննոսէ · և յայլոց ևս գիւղորէից պատկանելոց մենաստանիս՝ զորս աւանդեն կրօնաւորքն լինել քսան և չորս: Նոյն և յաւուրս Մխիթարայ Է, առաջնորդի վանացս պարգևեցան 'ի ջերմեռանդ հայազգեաց բնակչաց Տփխիս քաղաքի հինգ կրպակք՝ յորոց մին 'ի խօջայ Բեհպուտէ իշխանապետէ հայոց վրաստանի հանդերձ միով մեծ ջրաղացաւ · և հետ զհետէ ստացան յանուն մենաստանիս ջրաղացք չորք · առ կէս մ 'ի Նորք Թաղի անդ Երևանայ · և կրպակ մ 'ի գաւառի գեղաքունւոյ:

Նա այնինչ մ' էր բնակչաց և ժողովըդեան գեղաքունի գաւառ, եղանէր հարկաւոր պիտոյքն 'ի կալուածոց անտի գիւղորէիցն · ապա զկնի աւերմանց յիշեալ գաւառին և տարագըրութեան բնակչացն յայլև այլ հեռաւոր սահմանըս օտար իշխանութեանց, մնացին միայն արդիւնքըն վերոյգրեալ կրպակաց, և կամաւոր նուէրքըն հայազգեաց բնակչացն Երևանայ, Արշարունեաց (Սուրմալու), Կուգարաց (Գ աշախու) նուիրմամբ յաղքատին ձեռս միուն 'ի կրօնաւորաց առաքելոցն 'ի մենաստանէն յայն սակս · իսկ 'ի վերջին ժամանակս այնինչ սակաւ առ սակաւ սկսան նորոգիլ գիւղորայք ինչ 'ի գեղաքունի, 'ի պարսից անտի վերադարձան 'ի սեպհականութիւն մենաստանին երկու գիւղորայքն և եթ՝ Ճամբարբերդ և Գոմաձոր, զոր և ունին այժմ. և 'ի հոգևոր իշխանութենէ յատկացան ինչ ինչ գիւղորայք յանուն մենաստանին յաղագս արդեանցն 'ի հոգևոր մասին մինչև ցբացումն լուսաւորչեան հայոց սինհոդոսի և 'ի կարգաւորումն յատկացեալ վիճակաց · ապա այն գիւղորայք անդրէն հաշուեցան ընդ վիճակաւորելոցն Արքեպիսկոպոսութեան Երևանայ: Նոյն յայնժամ ապա 'ի կարգի եդաւ այս մենաստան 'ի հոգևոր առենէ վիճակին Երևանայ

ընդ միւս վանորէիցն. և տուաւ նմա տումար,
զի յիւրաքանչիւր ամի զընական արդիւնս 'ի կա-
լուածոց անտի վերոյիշատակելոյ ցուցցեն 'ի տու-
մարի անդ, նոյնպէս և զհարկաւոր ծախսն մենաս-
տանին. և այնպէս 'ի լրումն ամին ներկայացուսցէ
զայն տումար՝ ում հարկն է, յատեան վիճակին
Երևանայ 'ի վերադննութիւն. զի թէ մուտք բը-
նական կալուածոցն բաւական լիցի ծախուցն, և
յաւելցի ևս ինչ, այն յաւելուած մնասցէ 'ի սեպ-
հականութի մենաստանին. իսկ թէ ո՛չ՝ յայնժամ
վասն պակասորդին տնօրինեսցէ այն հոգևոր ա-
տեան ըստ կանխագոյն յայտարարութեան իւրում
առ ծայրագոյն հոգևոր իշխանութիւնն:

Իսկ վասն եկեղեցական պաշտամանցն, և
վասն բարուց և վարուց նոցին կրօնաւորելոցն
աստէն, դիցուք առաջի զգրուածս նորին Զա-
քարիա արք եպիսկոպոսի տփխիսեցւոյ՝ որ եկաց
առ նոսա յամին 1825:

Եկեղեցական պաշտամունքն:

526. „Զօրհանապազ 'ի մէջ գիշերի վա-
ղայարոյց լեալ՝ հնչեցուցանեն զզանգակս և երա-
մովին գան ժողովին յեկեղեցւոջ, իբրև ձայնիւ
փողոյ 'ի հոգևոր մարտ. և սկսանին ասել զմի
կանոն սաղմոս և զգիշերային ժամերգութիւնն
ըստ պատշաճին, մինչև ցզքէն գոհանամքն: Ապա
զերկու կանոն ևս ասեն հանդերձ կանոնագըլ-
խով՝ ըստ հասարակ սովորութեան մեծի Աթո-
ռոյն: Յետ որոց անընդմիջաբար զմնացեալ ժա-
մերգութիւնն արևագալի երգօքն հանդերձ 'ի
պահոց աւուրս. և կատարեալ զայնոսիկ՝ գնան իւ-
րաքանչիւրքն 'ի սենեակս իւրեանց. ուր զառանձ-
նականն առնեն աղօթս ըստ կամաց: Գումարին
յերրորդ ժամուն և ասեն զճաշուն երգօք և մեծ-

աղօթիւք պահոց. այլ գնան 'ի ճաշել. ուր ընթեռնու ոմն զվարս հարանց սրբոց, որում ունկնդիր լինին՝ լռելեան ճաշակելով զպարգևս աստուծոյ: Եւ զկնի քանի ժամուց անցանելոյ, զերեկոյեանն սկսանին. նախ՝ զ'Ի նեղութեանն ասելով, և զհետևեալսն: Քանի ինչ րօպէ մնացեալ, զեկեսցեն ասեն. զոր և պսակեալ գնան 'ի սենեակս առանց ինչ ճաշելոյ: Եւ ոմանք 'ի նոցանէ՝ որք իսկ և իսկ ննջեն. և են՝ որք 'ի վերայ այնոցիկ երկար աղօթից 'ի ժամս ձիգս առանձնականաց պարապին մաղթանաց: Եւ որ մեծն է՝ գրեթէ 'ի մեծի պահոց զսակաւ ժամս գտանեն ննջելոյ առ աղօթից երկար լինելոյն. յորում են ոմանք՝ որ զօր ամենայն զուլթն կանոնն լրացուցանեն 'ի ծածուկ: Հանդերձեալ ժամարարնոցին հսկէ զգիշերն ողջոյն պաշտօնէիւք հանդերձ լովք 'ի սպասաւորել սրբոյ պատարագին. իսկ 'ի տարւոջ տասն գիշեր խմբովին հսկեն. հինգ աւուրս նաւակատեաց. հնգից՝ տեառնընդառաջի, ծաղկազարդի, մեծի ուրբաթու, նոր կիւրակէի և հոգւոյ գալստեան. յորս ամենեքեան գրեթէ 'ի բերան սաղմոսեն. և այնպէս զգիշերս զայնոսիկ անքուն անցուցանեն 'ի պատիւ և 'ի փառս անքուն ակամբ պահպանողին Իսրայէլի, Աստուծոյ, , :

### Վարք և բարք նոցին:

§27 ,, Արթութեամբ ունին զբարս հեզս և խոնարհս ամենայն հլութեամբ և հպատակութբ. ո՛չ երբեք լսելի լինի 'ի նոցին բերանոց բան որգեղ տաղտկացուցիչ լսելեաց պատուականաց. զորըս ծանեայ արդարև կատարող բանից Քրիստոսեան... : Եւ եթէ կարի վշտանան յերերաց, զայս միայն ասեն՝ թէ քո հայրն օրհնեմ. բայց դու մի՛ զճարտասանականն իմանար զհեգնութիւն, այն զէ

Նոցա բանն է անպատրուակ՝ այոն այո՛, և ոչն ո՛չ. ո՛չ բնաւ ննջեն ոխս ՚ի սրտի ունելով՝ ըստ առաքելական պատգամաց, այլ նոյն ժամայն փոքրն, եթէ յանդգնեալ իցէ մեծին անհնազանդութե̄ իւիք, համբուրմամբ ձեռացն աստ զմեղայն կատարեալ զղջման. յորմէ զխոհութիւնն գտանէ առանց նենգութեան: Իսկ վարուք են գո՛գցես հանդէտ նախնի սրբոց հարց, մաքուր յարատոց ՚ի մարդկային բնութեց տանելեաց և կարելեց. Հասարակաբար յաւուրն միանգամ ուտեն զկերակուր կազմեալ ՚ի լոբիայէ, յոսպանէ և յայլ ընդեղէնաց. և գրե՛թէ զամ̃ն ողջոյն պահեն՝ բաց ՚ի շաբաթէ և ՚ի կիրակէէ. յորս նաւակատեաց կերակրով շատանան: Իսկ ՚ի վերայ այսոցիկ ամենայնի, են ոմանք՝ որ զջերմ̃ն կերակուր ո՛չ ուտեն, այլ լոկ հացիւ և ջրով բաւականանան. են և ոմանք որք երբեմն զաւուրս հինգ անսուաղ անցուցանեն, բայց որքան կարելի՛ն է գաղտաբար. սակայն ՚ի յայտ ելանէ գործն բարութեան. ո՛չ ապաքէն աստուածային է հրամանն՝ (որ ոչ անցանէ) ոչինչ է ՚ի ծածուկ, որ ո՛չ յայտնեսցի ևն:: Իսկ որպէս ըզմարմնաւո՛րն պահեն պահս հրաժարմամբ ՚ի կերակրոց, ըստ այնմ և զհոգևորն պահեն՝ հրաժարմամբ ՚ի մեղաց ըստ կարի՝ զոր տեսեալ եմ. ապա ցուցանել յօժարեցայ. ՚ի սաստիկ ձմեռան ո՛չ վառեն զհուր ՚ի սենեակս իւրեանց, այլ աստուածեղէն վառեալ հրով ջերմանան: Ի՛ն ե՛ն յիրաւի ը̅ս̅ ամենայնի անկեղծ ՚ի վարս. զի որով օրինակաւ կեան ՚ի մենաստանիս, նովիմբ վարին յաշխարհի: Զգեստ մարմնոց նոցին են խարազն յոյժ մեկին (այսինքն անշարր)՝ սկսեալ ՚ի վանահօրէն մինչև ցյետինն միօրինակ, որպէս տեսանէք: Վանահայրն ո՛չ կարէ առանձին վասն իւր տալ եփել ինչ առանց հաճութեան հասարակութեան. ամենայն ինչ հասարակաց է. ո՛չ ոք ՚ի նոցանէ ու_

նի մինչ ցմի դրամ, այլ զորինչ ունին՝ պահէ ար֊կեղապահն. որ հաշուիւ զայնոսիկ ծախէ ՚ի պէտս մենաստանիս: Ահա քեզ իսկապէս կրօնաւորութե ուղիղ սահման պայմանի. որք չեն են . . . :

Մխիթ. Վիէննայոյն

528, Զաքարիա արք եպիսկոպոս դնէ հան֊դերձ վանահարբն զանձինս քսան և մի. յորոց եօթն աբեղայք, եօթն սարկաւագունք, երեք դպիրք և չորս մանհանեսիք՝ այսինքն առանց աստիճանի կրօնաւորք:

Այժմ գտանին հանդերձ վանահարբն ե֊րեքտասան անձինք. հինգ աբեղայք, մի սարկա֊ւագ, երկու դպիրք և հինգ մանհանեսիք. Թէպէտ աբեղայքն մետասան էին, բայց ամօք ինչ յառաջ ըստ տնօրէնութեան հոգևոր ատենին Երևանայ, Գ, ՚ի նոցանէ փոխադրեցան ՚ի մենաստանն Այրի֊վանայ (որ է Գեղարդայ). Գ ևս առաքեցան՝ մին, այսինքն Անտօն տփխեցի ՚ի մենաստանն Ագուլեաց. երկրորդն՝ Յովսէփ ՚ի գեղաքունեաց՝ ՚ի նոյն գա֊ւառ յաղագս վիճակային գործակալութեան. ե֊րրորդն՝ Մատթէոս յարտապատականէ՝ յարագածո֊տն գաւառ նոյնպէս յաղագս վիճակային գործա֊կալութեան. գտանին այժմ անդէն և վարձաւոր ծառայք վեց. Դ, ծառայող լաստին, և Բ՝ ՚ի պաշ֊տաման հաց և կերակուր եփելոյ:

Լաստ Մենաստանիս.

529, Այս լաստ կազմեալ է յեօթն մեծա֊մեծ գերանաց ՚ի մայր փայտից և ամրացեալ ընդ֊իրեարս դարձել փայտեայ ստուար գամեօք բևե֊ռակապ և է առանց առագաստի. այլ վարեն զայն երկու մեծամեծ Թիակօք՝ ՚ի մի Թի երկու ան֊

ձինք․ յերկոսին կողմանս ՚ի վերայ լաստին են եր֊
կու տախտակամած անշուք վանդակք․ յորոց վե֊
րայ զծանրոցս և զմարդիկ առեալ՝ տարուբերեն
ընդ կղզին և ընդ ցամաքակողմն․ զայս պաշտօն
վարէին յառաջագոյն կրօնաւորքն, այլ այժմ
վարձաւոր ծառայք․ կարի տարժանմամբ վարեն
զայս լաստ ՚ի ծովակին յաղագս ծանրութեան և
անհեթեթ գոլոյ այնր և յաղագս բուռն լինելոյ
երբեմն ալեաց և հողմոյն, մանաւանդ երբ հնչէ
արևելեանն հողմ՝ անուանեալ առ նոսա յանուն
Սօթայ․ ուստի ՚ի դադարելն ՚ի վարելոյ՝ թէ ՚ի
կղզի անդ և թէ ՚ի կեամադուռն կոչեցեալ տե֊
ղւոջ՝ որ է հանդէպ կղզւոյն ՚ի ցամաքի, հաստագոյն
շղթայիւք պրկագոյն կապեն ՚ի պրկոցի, զի մի
կորզեալ ՚ի բռնութենէ հողմոց վարեսցի տարա֊
դէպ․ Սնէին կանխաւ զհարկաւոր պարագայս
առ ՚ի նիւթ օրինաւոր նաւակի՝ պատրաստեալ
զայն ՚ի տփխիսայ, այլ չգտանելոյ վասն նաւակա֊
շէն հիւսան՝ մնայր այնպէս․ և զկնի ևս շինեցաւ
թէպէտ ՚ի ռուս արհեստաւորէ, այլ յաղագս ան֊
հմուտ գոլոյ ծառայողացն մնայ այնպէս անգործ․
և ՚ի գործ դնեն դարձեալ զնոյն լաստ տարժա֊
նակիր։

Լուր ՚ի գրուածոյ Օ. Զաքարիա սրկ. եղիազարեանի քան֊
աքեռցւոյ յաղագս ոմանց հանգուցեալ վարդա֊
պետաց Դաբանից տեղւոյս․

530․ „Յռ առաջնորդութեան Սարգսի վար֊
դապետի (ունանապատեցւոյ) փայլէին մ̄ծահաճոյ վա֊
րուք երեք վարդապետք՝ որոց անուանքն էին
Ռափայէլ, Մխիթար և Մակար․ նախայիշատա֊
կեալ Ռափայէլ վարդապետն ծնեալ էր ՚ի Գան֊
ձակ ՚ի թուականի հայոց ՌՄԺ, (1761) ՚ի Ե․ նոյեմ֊
բերի․ որոյ գնացեալ ՚ի մեծ անապատն տաթևու

կրօնաւորեալ էր անդանօր: Նա տենչալով հասանել ևս գերազանց կրօնից, եկեալ այր ումեք (1793), որ 'ի նմին ամի ձեռնադրեալ աբեղայ, անցուցանէր զկեանս Ճշմարիտ և անկեղծ կրօնաւորութեամբ՝ որ էր խոստովանահայր և միանգամայն վարժապետ կրօնաւորացն: Ասեն ըզնմանէ՝ թէ զամենայն աւուրս իւր կենաց հացիւ և ջրով շատանայր. և թէ՝ ոչ վայրկեան ինչ անցուցանէր առանց ծնրադրութեան և աղօթից. զի զաւուրն հազար ծունր կրկնէր այնմ՝ որում կրկնի ծունր յամենայն արարածոց: Երանելին այն փոխեցաւ առ տէր ռմկզ, (1817) է, հոկտեմբերի, գոլով յիսուն և վեց ամաց. և թաղեցաւ փառաւորապէս 'ի կողմն հիւսիսոյ եկեղեցւոյ սրբ աստուածածնի. որոյ հուչակեալ անուանն սրբութեան՝ քարոզէ շուրջ զգաւառաւս և այլուր,,:

,, Ոչ պակաս քան զնա համբաւեալ էր յառաքինական ներգործութիւնս և աշակերտ նորին Մխիթար վարդապետն շամքօրեցի. նմանօղ ըստ ամենայնի լինելով նմա, որպէս և նայն քրի. որ հանգեաւ պատուական մահուամբ ռմկէ, (1818) ին մարտի. և թաղեցաւ հանդիսութեամբ 'ի գաւիթ եկեղեցւոյ սուրբ աստուածածնի,,:

,, Իսկ Մակար վարդապետն շամշադինեցի (ղուղուղէ) համանմանն ռափայէլի և մխիթարայ՝ պատահական դառն մահուամբ ել յաշխարհէ, սովին օրինակաւ. 'ի սոյն ամի (որ է 1825) 'ի 1, մարտի՝ որ էր կիւրակէն տնտեսի, պատարագեալ էր զքրիստոս. և 'ի 2. յաւուր երկու շաբաթի մինչ կամեցեալ նորա գնալ յայցելութի պօղոս վարդապետին, արտաքս քան զկղզեակս եղելոյ. և այն 'ի վերայ սառին թուլացելոյ, և մերձ էր 'ի ցամաք կոյս, բեկեալ սառին հեղձոյց զնա. զորոյ զմարմինն որոնեցին այսր անդր թէպէտ կրօնաւորքն կարի հետազօտութեամբ զաւուրս բազումս,

բայց ո՛չ գտին։ Նոյնպէս մնաց զամիսս ութն ՚ի յատակ ծովակին. այն զի չև ևս էր փթեցուցել ջուր զհանդերձս՝ զոր զգեցեալ ունէր. որ գըտաւ սքանչելեօք՝ այսպէս։ Երևեալ երկիցս նորա՝ վարդապետի ումեմն ինքեանց միաբանակցի ՚ի տեսլեան քնոյ, ասացեալ էր. թէ է՞ր զիս ո՛չ բերեալ թաղէք, զի ես ելեալ եմ առ եկեղեցին. բայց առանց յատկացուցանելոյ՝ թէ ո՞ր եկեղեցի է այն. և կրօնաւորքն կարծելով զմին յեկեղեցեաց կղզւոյս, մանաւանդ զսուրբ Աստուածածնին՝ որ մերձ է առ ծովեզրն. ստիպաւ որոնեցին զժամս բազումս յեզր ծովակին յայսկոյս և յայնկոյս, սակայն ո՛չ գտին։ Մինչ տրտմեալ էին կրօնաւորքն մինչև յոյժ առ ո՛չ գտանելոյ զնա, ահա եկն տաճիկ մի և պատմեաց կրօնաւորաց արտաքոյ կըղզւոյս եղելոց, ընդ որս էի և ես (Զաքարիա արք եպիսկոպոս)՝ թէ գտի զմարմին մակար վարդապետին առ ծովափին հանդէպ եկեղեցւոյ գանձավանից՝ որ ՚ի գիւղն Պորտակ, և ծանեայ զնա ՚ի կոտորոյ փօտւոյ նորին։ Զայս լուեալ կրօնաւորացն՝ առ խնդութենէն յարտասուս հարեալ՝ ետուն պարգևս տաճկին, և առաքեցին ընդ նմա զոմն յինքեանց բերել զմարմին նորա, զոր բերեալ թաղեցին մերձ ՚ի գերեզման ռափայէլ վարդապետին մեծաւ յուղարկաւորութեամբ և ցօղով արտասուաց ՚ի 22, Նոյեմբերի 1825. ,,։

Պէզաշունի գաւառ.

531, Այս գաւառ ըստ յառաջբերեալ բանիցն հին Հայաստանի պարունակէ յինքեան զեզրեսին կողմանսն շուրջ զծովակաւն, բայց գտանին դարձեալ յայնմ մասնաւոր գաւառք՝ Աղուն՝ որ որպէս նկատի ՚ի գրուածոցն Տ. Յովհաննու կաթողիկոսի, անկանի յարևմտեան եզր ծո-

վակին՝ ՚ի միջոցս Սեւանայ, Վարաժնունեաց և Կոտայից. քանզի յարձակումն Աշրայ ոստիկանի ՚ի վերայ կղզւոյն սեւանայ անցանելոց է ընդ կոտայս գաւառ և ընդ արեւելեան սահմանս վարաժնունեաց և այնպէս հասանել ՚ի սեւան, զի չիք այնպիսի յարմար ճանապարհ զօրաց ՚ի դունայ ցը-կղզին սեւան յայլ մերձակայ տեղիսն. ուստի այժմ պարունակի այն ՚ի վարաժնունիս. և Սոթք՝ որ անկանի յարեւելեան վայրսն ծովակին, ունի ՚ի հիւսիսոյ զլերինս գուգարացւոց, յարեւելից զլերինս Արձախայ և ՚ի հարաւոյ զՎայոյ ձորոյ. և զի զհողմն՝ որ յարեւելից աստի ՚ի լերանցս հնչէ ՚ի ծովակն, անուանեն և այժմ յանուն այդր գաւառի. և այս գաւառ ևս պարունակի այժմ ՚ի գեղաքունի. ուստի գեղաքունին սկսեալ ըստ այժմեան առման ՚ի հարաւային եզերէ ծովակին գնայ մինչև ցարեւելեան սահմանսն և անտի պըտոյտ առեալ ընդ կէս սահման հիւսիսային եզեր դադարի անդէն. իսկ միւս մասն հանդերձ արևմտեան սահմանաւն ծովակին միացեալ է այժմ ընդ վարաժնունիսն.

Այս գաւառ դարձեալ ըստ այժմեան առման բաժանի ՚ի չորս մասն ըստ չորից երևելի գիւղորէիցն ՚ի նոսին՝ Գաւառայ, Կոթայ (Ներքին աթէլման), Վարանլըղայ և Սոթայ (Խաչքայ).

ը. Տան.

532. Գաւառ. այսպէս անուանեալ ըստ ցուցանելոյ գրուածոցն ՚ի տապանավէմն չիրմացանդէն, և ՚ի յիշատակագիրս մասանց (69). տունք 500. եկեղեցին զոր յառաջագոյն փայտայարկ արարին, անուանեցաւ յանուն սուրբ Կարապետի ՚ի յիշատակ անուան եկեղեցւոյն՝ որ ՚ի Պայազիտխան երկրորդն՝ չէ օծեալ տակաւին ՚ի պատճառս

մասնաւոր թերութեանցն՝ յորում և վարձաւոր աշխատաւորացն զծախսն վճարէ ջերմեռանդութեամբ աղայ Նարսեղն արծրունի, ըստ մտադրութեան ժողովրդոցն պարտի անուանիլ Ծիրանաւոր՝ այն է, յանուն սրբուհւոյ Աստուածածնի՝ դարձեալ 'ի յիշատակ անուան միւս եկեղեցւոյն որ 'ի Պայազիտ: Նաև է այս գիւղաքաղաք հեռի յարևմտեան ծայրէ ծովակին՝ այն է, յօրդակլու գեղջէ ընդ արևելս իբրև երկուց ժամուց՝ յարևմտեան եզեր շատաջուր գետակին Չէօքչայ անուանելոյ. յառաջն կարի ջերմաջերմ եռանդեամբ քաղաքացի գաղթականք 'ի Պայազիտոյ բնակեցան աստէն յուսով օրքանզօր բազմանալոյ բնակչաց և լինելոյ քաղաքագեօղ վաճառօք, շինեցին տունս և կրպակս. այլ ամբաստամէ տեսեալ թէ՝ ոչ այնքան աճի առևտրութի, որքան խաշինք և արջառք բազմանան, 'ի վաճառականաց անտի փոխադրեցան ոմանք յԵրևան և ոմանք յԱղէքսանդրապօլ շիրակայ. իսկ մնացեալքն ըստ առաւել մասին պարապին յերկրագործութիւնս և են 'ի հաշուի քաղաքացեաց առանց վճարելոյ զհարկ այնպիսի՝ զոր պարտաւորին գիւղականք. 'ի սոյն հաշուի են և բնակիչքն ղուլուլայ և փաշաքեանտի:

Յարևելից գիւղաքաղաքիս է լեզուակ ինչ առապարի, գլուխ նորա ընդարձակ տափարակ. յերից կողմանց է փոքր ինչ զառընդթափ, իսկ 'ի միւս կողմանէ եղեալ է յառաջագոյն որմն կամ պարիսպ. և որպէս նկատի եղեալ է այս տեղի փոխանակ ամրոցի 'ի պաշտպանութիւն բնակչացն. յոլով շիրիմք են 'ի սմա խաչվիմօք զարդարեալ:

533, Նորատուսոյ գիւղ ըստ արձանագրացն եղելոց 'ի սմա. իսկ ըստ Յովհաննու կաթուղիկոսի՝ Նորատուն. և ըստ օրբէլեան Ստեփաննոսի՝ Նորատուս և Նորատուն, զորս յառաջքերէ ստորագրու-

Թիւնն հին հայաստանի. այլ այժմ կոչի Նորատուս. և է հեռի ՚ի գաւառայ իբրև միով ժամու ընդ արևելեան հիւսիս յեզեր անդ ծովակին. ուր և յարևմտից գեղջս անկանի գետակն կեօքչայ անուանեալ ՚ի ծովակն. բնակին ՚ի սմա տունք 96. եկեղեցի գեղջս յանուն սբ Աստուածածնի՝ զոր շինեաց Սահակ սիւնի եղբայրն գրիգորի սուփանայ ըստ պատմելոյ Յովհաննու կաթուղիկոսի. և նա ինքն սահակ վախճանեալ՝ թաղի ՚ի դրան այսր եկեղեցւոյ. և է այս տաճար ՚ի կոփածոյ խարտեալ մեծամեծ քարանց՝ բաւականաչափ մեծութեամբ առանց սեան. կամարայարկ նորա օրոգաձև խոնարհեալ կայ, իսկ որմունքն ամբողջ: Աւանդի վասն այսր եկեղեցւոյ թէ՝ երբեմն ՚ի գալ լեզկեաց ՚ի գեղաքունի՝ ժողովին բովանդակ բնակիչք գեղջըս յայս եկեղեցի ՚ի ներքս և ՚ի տանիսն, զոր պաշարեն լեզկիք և հուր հարեալ՝ այրեն զեկեղեցին բնակչօքն հանդերձ. և ՚ի պատճառէ աստի խոնարհեալ ասի կամարայարկ նորա. քանզի ՚ի գալ յայս գիւղ նորոգ բնակչացս և ՚ի մաքրելն զայս եկեղեցի յաւերանաց, լի՛ էին ՚ի մէջն հողոյն ոսկերք մարդոյ՝ մեծաց և փոքունց և այրածք կանացի զարդուց յայտնի ապացոյց պատահմանն այնորիկ: Արտաքոյ եկեղեցւոյ ՚ի հարաւոյ են քանի ինչ շիրիմք մեծամեծ որձաքար վիմօք. մին ՚ի նոսա ունի զկարի մեծ և սուտար տապանավէմ, և թերևս իցէ շիրիմն նորին Սահակայ սիւնւոյ կառուցանողի տաճարիս:

Գերեզմաննոց գեղջս յարևելից նորա կարի արձակ տարածութեամբ զարդարեալ մեծամեծ փորածու խաչվիմօք, յորում են երկու մատրունք տեղիք պատարագելոյ յաւուրս յիշատակի ննջեցելոց. մատուռն փոքրիկ յորմն իւր հիւսիսկողմն ունէր արձանագիր շինութեանն, այլ սկըսուած նորա եղծեալ՝ ըստ այսմ:

,, . . . . . . . . . . գաւառութեան
. . . . . . . . . . որդի մխիթարա՝
որ եղէ առաջնորդ մեծահռչակ գեղիս
Նորաշինոյ կամ եղև ինձ և կանգնեցի զխո_
րանս, և զնշանքս տէրունական յիշատակ
հոգւո իմո և զուգայինն և հաւր իմո մխի_
թարա, և համաւրէն ննջեցելոց իմոց. որք
երկրպագէք սմա զմեզ յաղաւթս յիշեցէք,,:

Այց հիւսիսակողման մատրանս լայնագիր պատուանդանաւ կառուցեալ էր խաչվէմ մի մեծ՝ որ անկեալ դնիւր զառաջեաւ պատուանդանին. և 'ի ճակատ այնր պատուանդանի էր արձանագիր՝ ըստ այսմ:

,, 'ի ոկ. թվ. (1211) 'ի ժամանակս բարեպաշտ իշխանաց մերոց Զաքէի և Իվանէի ես մխիթար փէճարենց որդի դաւթի շնորհիւն աստուծոյ և հրամանաւ մեծին իվանէի եղէ առաջնորդ մեծահռչակ գեաւղիս Նորաշինոյ, կամ եղև ինձ կանգնեալ զխաչս 'ի փրկութիւն ննջեցելոց իմոց. որք երկրպագէք, յիշեցէ՛ք 'ի տէր,,:

Իսկ միւս մատուռն 'ի հիւսիսակողմն գերեզմաննոցին. որոյ յորմն արևմտեան յերկուս կողմանս դրանն գտանի արձանագիր այս ինչ: ,,Ես Աղէքսանս որ եկեղեցիս շինեցի խիստ դառն դժար ժամանակ էր,,: 'ի հիւսիսակողմն դրան. ,,Ես սարգսի թոռ միրզատի որդի Աղէքսանս շինեցի սուրբ եկեղեցիս. թվ. ռճկգ. (1714) էր: ես տէրս գրեցի անարժան,,:

534, Ի հարաւակողմն գեղջս 'ի մէջ անդաստանաց է փոքրիկ տաճար սրածայր կաթուղիկէիւ՝ զոր անուանեն յանուն սրբոյն Գրիգորի լուսաւորչի. շուրջ զորով են քանի ինչ աւերակ տանց. և որպէս երևի՝ լեալ է սա յառաջագոյն մենաստան կուսան կանանց: Սիմէոն կաթուղիկոս երևանցի կոչէ զայս տաճար՝ Գոտփայ վանք. չուանէր գը_

րուած ինչ յորմունսն։

535. Վ. Շուշ գիւղ՝ տունք 46. եկեղեցին յանուն սուրբ Աստուածածնի. և է 'ի միջոցի անդ գաւառայ և նորատուաց գեղջ 'ի ձորամիջի անդ գիտակին յարևելեան եզեր նորա։

536. Մանէշ. և այժմ կոչեցեալ փաշաւէանք մերձ 'ի գաւառ յարևմտից հարաւոյ նորա առ ըստորոտով երկարաձիգ ինչ առապարի, ուր բըղխին ցոլով աղբիւրք՝ յորոց մին կարի ստուար յորդութեամբ և սկզբնաւորեն զգետակն հէօշաց անուանեալ. բնակիչք սորա 'ի հաշիւ բնակչաց գաւառայ են, և են տունք 113. կրկին եկեղեցիք են աստ՝ մին խսպառ աւերեալ և միւսն կայ 'ի կանգուն 'ի կոփածոյ քարանց և է փոքր դրութբ և անսիւն և ունի կաթուղիկէ փոքրիկ. 'ի զննութեան իմ աստ չգտի գրուած ինչ յորմունսն. և չգիտէին ևս բնակիչքն զանուանակոչութիւն եկեղեցւոյս՝ թէ և բարեպէս մաքրեալ աղօթէին 'ի նմա և կատարէին զխորհուրդ սրբազնագործութեանց. հետախոյզ եղեալ 'ի շրջակայս նորա՝ տեսի զվէմ մի մեծ կոփածոյ անկեալ անդ և ծածկեալ 'ի թփոց, և ետու շրջել զայն ընդ միւս կողմն և ահա գրուած 'ի նմա այսպիսի. ,,Կամաւն աստուածոյ Տաղլուղանսդու պարոն դաւթին կենաց կից փիրհամզայ աղին՝ որ նորոգեցի շրջապատս Գրիգորիս յիշատակ հոգւոյ իմոյ. ՋՂԸ (1549),,։

537. Պոլոլէ. տունք 130. եկեղեցին յանուն սուրբ Աստուածածնի. այս գիւղ անկանի 'ի հարաւակողմն գաւառայ, հանդէպ փաշաքեանտի յարևելից նորա առ հիւսիսային ստորոտով այլում առապարի։ Եկեղեցի գեղջս՝ զոր անուանեն սուրբ Աստուածածին, եղեալ է յառաջագոյն կամարայարկ, այլ այժմ միայն սեղանն և կամարայարկ նորա կայ առաջին շինուածովքն. իսկ միւսն նորոգ ծածկեցաւ փայտիւք 'ի բնակչացն. 'ի հա-

րաւակողմն 'ի հիման անդ կամարին սեղանոյ էր գրուած այսպիսի . , , Շնորհօքն քրիստոսի շինեցաւ սբ տաճարս թվին ռճի և գ . (1674), ես տանուտէր գասպարս և քահանայքս և ժողովուրդս միաբան շինեցաք սուրբ տաճարս յիշատակ հոգւոց մերոց , , :

Յարևելակողմն եկեղեցւոյն է գերեզմաննոց՝ յորում 'ի շիրիմսն անդ են խաչվէմք փորածոյք, յորոց մին կարի նուրբ և ճարտարարուեստ քանդակեալ և ունէր գիր ըստ այսմ . , , ... ծդ . փիրհամզես որ ուխտանիս ոսկոդ տանս գեղամայ ետու կազմել տապանս և նկարել զխաչս՝ որք կարդայք յի՛՛ , , :'ի հարաւակոյս խաչվիմին անուն քանդակագործին . , , ես Գրիգոր եպիսկոպոս նրկարեցի զխաչս 'ի խնդրոյ փիրհամզին 'ի փրկութի 'հոգո որդոյ իւրոյ զաւրհապին , , :

538, Գանձակ գիւղ՝ ըստ գրուածոյ տապանավիմին եղելոյ 'ի մէջ եկեղեցւոյ գեղջս . և այժմ անուանի Քէօսամահմուտ հեռի է 'ի փաշաքեանս գեղջէ ընդ հարաւ միով ժամաւ . բնակիչքն՝ տունք 86 . եկեղեցին յանուն սուրբ Գէորգայ՝ կառուցեալ ըստ ձևոյ և ըստ մեծութեան եկեղեցւոյն նորատուաց, և գրեա՛ թէ միոյ ճարտարապետի գործ երկոքին են և 'ի միում դարու . այլ ըստ նմանութեան այնմ խոնարհեալ է և կամարայարկ սորա՝ զոր փայտածածք արարին բնակիչքն: Ի մէջ եկեղեցւոյս 'ի հարաւակողման է տապան մեծադիր և ունի գրչութիւն 'ի վերայ՝ ըստ այսմ . , , Թվ . ջկբ (1513) . Այս է հանգիստ Ազարիին որ էր առաջնորդ գանձակիս . յիշեցէք 'ի քրիստոս : ես Գունագս կանգնեցի զտապանս , , :

539, Տէլիզարդաշ՝ տունք 118 . եկեղեցին անուամբ սուրբ խաչի . և է 'ի հարաւակողմն գանձակ գեղջ հեռի 'ի նմանէ իբր ժամ մի . բազում աղբերակունք են զառաջեաւ գեղջս՝ որոց ջուր

ժողովեալ 'ի լճակ՝ գնայ 'ի վայր և անցեալ առ արևմտեան եզերբ ղուղաղի գեղջ՝ խառնի 'ի կեօքչայ անուանեալ գետակն մերձ 'ի գաւառ:

540, Վիշաճի՝ տունք 41. եկեղեցին յանուն սուրբ խաչի. հեռի է այս գիւղ 'ի տէլիղարտաշ գեղջէ ընդ արևելս իբրև միով ժամու և է յարևմտեան ստորոտի առապարին՝ որ բաժանէ զայս մասն 'ի միւս մասնէն որ յանուն Կոթայ:

541, Հայր Օհաննավանք. այսպէս անուանեալ 'ի բնակչացս. և է յարևմտից հիւսիսոյ գաւառայ հեռի 'ի նմանէ իբրև ժամ և կէս առ ծովեզերն կառուցեալ 'ի վերայ ուղղաբերձ ժայռի. տաճար նորա փոքր և անսիւն 'ի կոփածոյ քարանց. արևելեան և հարաւային որմունքն են 'ի քարաբաշի. բարձրութիւն ժայռին յերեսաց ջուրցն իբրև գիրկ երեք. 'ի հիւսիսոյ և յարևմտից են աւերակք տանց. եկեղեցին գտանի յամբողջութեան. բազում հետախոյզ եղէ, այլ չգտի գրուած ինչ յայտարար հնութեան կամ նորութեանն, տեսիլ նորա որպէս կարծիւր՝ 'ի հին ժամանակաց. և առ նմա փոքր ինչ հեռագոյն 'ի հիւսիսակողմն է տեղի մեծի աւերակի մինչև կարծել իսկ քաղաքի. զի աւելի ընդարձակ էր տեղին՝ մինչև բաւական լինել աւելի քան երկու հազար գերդաստանաց. 'ի միջին տեղւոջ այսր աւերածի 'ի փոքր ինչ բարձրը դիրս կային կանգուն ուղղաբերձ որմունք քարամբք և կրով ձուլեալք. անմիջոց յեզերս ջուրց ծովակին հիմունք տանց և հովանոցաց և շէնք նոցին բոլորովին խոնարհեալ և քայքայեալ՝ որոց տեսիլ և եթ գրաւէ զոյշ մարդոյ 'ի զարմանս և զոգի հայրենասէր 'ի հառաչանս հոգւոց 'ի խորոց սրտէ:

Է, Վան.

542, Կոթ. այժմ անուանեալ 'ի բնակ-

չաց՝ Մարթէոսեան · տունք 64 · եկեղեցին յանուն սուրբ Մծածնի : Սա ՚ի հնոց գիւղաքաղաք անուամբ Եւս վերակոչի · և էր կացուրդ իշխանաց Նախնեացն Գրիգորի որդւոյ գաբուռն վասակայ՝ սուփան անուանելոյ , ըստ յառաջ բերելոյ Ստորագրութեն հին հայաստանի ՚ի գրուածոցն Ստեփաննոսի օրբէլեան : Գնէ և Գրիգոր մագիստրոս զԿոթ՝ գաւառ անուամբ ՚ի գեղաքունի՝ առ հին հայաստանի · Թերևս զայն մասն՝ զոր մեք բաժանեցաք ՚ի վերոյ (531) : Այս գիւղ յատկացեալ ինքեան գիւղորէիւքն սահմանակից է գաւառայ՝ ունելով զնա յարևմտից , և ղարանլըղայ՝ յարևելից · և է յարևելեան եզեր շառաջուր գետակին այժմ Իշխանագետ (544) անուանելոյ և է մերձ ՚ի ծովակն աւելի քան զքառորդ մի ժամու :

Բաց յեկեղեցւոյն որ ՚ի գիւղամէջ անդր , է և աւերակն մեծի եկեղեցւոյն կառուցելոյ ՚ի վերոյիշեալ գրիգոր իշխանէ սուփան անուանելոյ · և եղեալ է բոլորովին ՚ի կոփածոյ քարանց և է յարևմտից գեղջն ՚ի բարձրաւանդակի ՚ի վերայ սարահարթի փոքր քարափան ձորոյ գետակին · մեծ մասամբ յաւերութեան կայ · կամարայարկ նորա գլխովին խոնարհեալ է և մասնաւոր տեղիք յորմունս նորա · նոյնպէս յաւերութեան կան և շուրջ զնովաւ շէնք բնակութեանցն և պարսպին :

Արձանագիր շինութեան եկեղեցւոյս առ հին
հայաստանի՝ ըստ յառաջբերելոյ Ստեփաննոսի
օրբէլեան , է այս :

,, Ինձ սուփանայ յիշատակարան հաստատեալ հոգևոր ՚ի քրիստոս ՚ի Քաղաքագիւղս Կոթայ ՚ի կացուածի իմոյ նախնեացն · զոր նախ քան զայս պարսպափակ շրջապատեալ էին ՚ի բազմածախ գանձուց յոլով աշխատութեամբ · յետ այ-

որ ապա յիմոց խորհրդակցեալ կամօքն աստուծոյ՝ շինեցի տուն տեառն և յարկն աստուծոյն յակոբայ, անուանակոչութեամբ սրբուհւոյ տիրամօր ածածնին՝ վիմատաշ կոփածոյ քարամբք, և ՚ի սմա սեննակս ը· ՚ի վերոյ և ՚ի ներքոյ· և ապա ՚ի սմին սուրբ քաւարանիս կարգեցի քահանայս, և զարդարեցի զատենաքահանայ ՚ի նախնեաց իմոց, և այլ սպասաւորս բազում· և ազատ արարի յարքունական ծանրութէ և ՚ի բեկարէ· և սահմանեցի հողս և ջուրս· և ետու միոյ միոյ քահանայի ծ· դրամ ՚ի տարւոջն՝ որ լինի հնկեցիկս, և սահմանեցի չորեցս քառասունս, և սաղմոս՝ զնեղութեան կանոն, և զառաւօտուն սաղմոսն ||։ Զսոյն եա գրել և ՚ի յիշատակագրին որ ՚ի մաքենիս,,։

Աստ ՚ի սմին եկեղեցւոջ պահիւր երբեմն երկաթեայ քառաթև սբ խաչ մի՝ որ անուանի կոթայ սբ նշան· և աւանդութիւն է լինել այնմ ձեռագործ սրբազան առաքելոյն Թադէոսի· և պահպանի այժմ այն ՚ի Սևան կղզի յեկեղեցւոջ սբ աստուածածնի։

543, Աքէտան գիւղն· այսպէս անուանեալ յորոշումն ՚ի ներքին ատխեամանայ՝ նխ· տունք 34, եկեղեցին անուամբ սրբոյն Գէորգայ· Այս գիւղ հեռի ՚ի կոթայ իբրև կէս ժամ ընդ գետակն ՚ի վեր՝ յարևմտեան եզեր նորա ՚ի բարձրութեան անդ ձորակին։

544, Այս գետ բղխեալ ՚ի բարձրութենէ անտի լերին գեղամայ յարևելեան կուսէ յորդաբերականց և իջեալ այնպէս իբրև ժամս երկուս, և անցեալ ընդ այս գիւղ յարևելից, և ընդ կոթ յարևմտից՝ անկանի ՚ի ծովակն· ՚ի ծովակէն մինչև ց կոթեն տեղիք որսալոյ զկողակ և զայլ ձկունս ըստ իւրաքանչիւրոցն յատկացեալ ժամանակի· քանզի ՚ի վերջին աւուրս յունիսի և յսկզբանն՝ յուլիսի է ժամանակն որսալոյ զկողակ ա-

նուանեալ ձուկն՝ որպէս յայս գետակ, նոյնպէս և յայլսն. յայս գետակ մերձ 'ի գիւղն բաժանեալ են յերկուս զջուր նորա. և այն ինչ ելանէ ձուկն 'ի ծովակէն երամ երամ բազմութբ կարի յոյժ և դիմէ 'ի գետակն, առնուն զառաջս միոյ բաժին ջրոյն և արկանեն 'ի միւսն. և որքան նուազի ջուրն յանցսն անդ, այնքան շտապաւ աճապարեն, լուղան ընդ անցսն 'ի վեր՝ այնքան, մինչև լի՛ իսկ լինել ձկամբք անցիցն այնորիկ, և բազում անգամ չկարօտիլ իսկ ուռկանի և այլ գործեաց, այլ մտեալ արանցն կալնուն ձեռամբ և արկանեն արտաքս, և այնպէս յեզերսն անդ գետակին 'ի փոքր միջոցի բազմանան կուտակք ձկանց իբրև շեղջք ցորենոյ 'ի կալի. որոյ 'ի զննին կացելոցն է տեսարան մեծ 'ի զանազան նպատակս։

Այս ջուր անուանի և իշխանգետ յանուն ձկանն իշխան կոչեցելոյ. և ձուկն այն յանուն իշխանի ուրումն. քանզի աւանդեն թէ. դէպ լինի երբեմն ելանել փոխանակ ձկան՝ բազմութեան օձից 'ի ծովակէ անտի ընդ գետն. յորոյ տեսլենէ զարհուրեալ հասարակութեան՝ տարակուսին, այլ իշխան ոմն բարեպաշտօն ժողովեալ զհասարակութիւնն դիմէ առ ած աղօթիւք և տրովք առատանօք. և հայցէ խնայել 'ի մարդիկ 'ի սնունդս նոցա՝ զոր առատացուցել է նախախնամութն. ապա թէ զայն կամի, եղիցին կամք բարձրելոյն. 'ի ջերմեռանդութէ աստի ըստ խնամոց տեառն դառնան օձք անդրէն 'ի ծովակն և ելանէ ձուկն առատութբ ըստ անցելոցն. ապա հասարակութին 'ի տրիտուր ջերմեռանդութեան իշխանին, անուանէ զձուկն մի 'ի տեսակաց անտի իշխանաջուր յանուն նորա. և է իւղալից և համեղամիս. և այն իշխան բարեպաշտութբ վախճանեալ՝ ամփոփի յեզեր այսր գետակի 'ի ձորամիջի անդ յարևելակողմն հանդէպ վերոյիշեալ գեղջս՝ յորոյ շեմք

վերայ արարեալ են և մեծամեծ վիմօք ծածկոյթ· զոր և անուանեն Գերեզման Իշխանի ։ ՚Ի հանդիպմունս այնօրինակ պատահմանց՝ ըստ անցելոյն դարձեալ հասարակութիւնն դիմէ աղօթիւք առ աստուած ևն ։

545, Լորէտօ· տեղին թէպէտ ՚ի վաղուց կայր և անունն անյայտ, այլ որովհետև նորոգութիւն սորին զկնի եղև քան զմիւս գիւղորէիցն, վասն որոյ յայս անուն անուանեցաւ. տունք 15. եկեղեցի ոչ գոյ տակաւին ։

546, Ռոքքէթայ գիւղ. որոյ անուանակոչութիւն յեկեղեցւոյ անտի ընկալեալ. և եկեղեցին կամ մենաստանն՝ որ ՚ի նմա, ըստ Լողչեայ. Գ. Գլ, 32. „Իսկ Պռագին յաւուրս մանկութեան իւրոյ՝ յորժամ շրջէր նա ՚ի գաւառին գեղամայ, տայ նմա (այսինքն, Սարգսի կաթողիկոսի՝ որ ՚ի վերջն անդ Ժ, դարու), տեղի և վանս բնակութեան զվանսն՝ որ յաղագս ծագման իրիք լուսոյ աստուածայնոյ Ռողագայ անուանի„. և է ՚ի ծոցաւոր վայրի ՚ի մէջ երկուց առապարաց՝ յարևմտից կողմայ աւելի քան զմի ժամ և կէս հեռաւորութեամբ. և այժմ անուանի Սողէ ողէ գիւղ՝ սակս երբեմն բնակելոյ աստ այլազգւոյն այնմիկ. տունք 46. եկեղեցին որ ՚ի հասարակ քարանց յանուն սուրբ Աստուածածնի ։ Եկեղեցին կամ մենաստանն Ռողագայ անուանեալ ՚ի պատմագիրս գտանի յայս գիւղ. քանզի յարևմտից գեղջս ՚ի մէջ երկուց առապարացն երկայնեալ է հարթ դրութեամբ լեռնակ ինչ. յարևելեան ծայրի անդ լեռնակին՝ որ հայի ՚ի վերայ գեղջն, կառուցեալ է տաճարն ՚ի սրբատաշ քարանց առանց սեան. և գուցէ յերկրաշարժութենէ կործանեալ կայ. և կայ կանգուն միայն հիւսիսային որմն նորա. եղեալ է արձանագիր շինութեան այսր եկեղեցւոյ միակարգ՝ սկսեալ յարևմտեան ծայրէ հիւսիսային որմոյն. և այնպէս շրջապատեալ

զԹիկամբ սեղանոյն և յորմն հիւսիսային՝ նկատին անդէն յորմն հիւսիսոյ քանի ինչ բառք՝ յորս և ՚ի յայտ եկն շինուԹիւն տաճարին յանուն սրբոյ առաքելոյն Պետրոսի· այլ որովհետև հարաւային և արևելեան որմունքն խոնարհեալ էին և ընդ նոսին մեծ մասն արձանագրուԹեան և մնացեալն ևս կիսեղծ, վասն որոյ Թողաք ՚ի բաց։

Զայս եկեղեցի ևս ետ կառուցանել նա ինքն Մարիամ տիկին ամուսին գամբռոն Սասակայ տեառն սիւնեաց· զորմէ գրէ Ստեփաննոս օրբելեան՝ առ Ջին հայաստանի ։,, Այն Մարիամ շինէ զմեծապայծառ եկեղեցին ՚ի Տողուագայ յանուն սրբոյ առաքելոյն պետրոսի, և կարգէ ՚ի նմա կրօնաւորանոցս, դասս բազմահոյլ քահանայից վասն հոգեաց տեառն իւրոյ վասակայ իշխանի սիւնեաց· և գնեալ ՚ի հագարացի մարդկանէ զդեօղն Տաղուագայ ընդ կ͞ղ· դրամի, ազատ յամենայն աշխարհական հարկաց ընծայէ սեպհական ժառանգուԹիւն սուրբ եկեղեցւոյն· նմանապէս և գիւղ մի ՚ի մազազ գաւառի ընդ դ͞ռ· դահեկանի գնէ, և տայ ՚ի սուրբ եկեղեցի՝ որոյ անուանն գեղջն դնէր, և հաստատէ արձան անջինջ յիշատակի առաջի Գէորգայ կաԹուղիկոսի (որ է գէորգ ͞Է) և Յովհաննիսի սիւնեաց եպիսկոպոսի և Գագկայ սիւնեաց տեառն,,։

Յարևմուից այսր տաճարի են պէսպէս խաչվիմօք շիրիմք և յոլով գերեզմանք· մերձ եկեղեցին ՚ի հարաւոյ ևս հանդերձ պատուանդանաւ խաչվէմք· յայսոսիկ շիրիմս բազումօք հետաքրքիր եղէ չկարացի գտանել զշիրիմ յիշեալ Մարիամայ տիկնոջ· և գուցէ կարի մերձ լեալ եկեղեցւոյն՝ ընդ փլածովքն անյայտացեալ· տե՛ս (521) ՚ի ծանօԹուԹեան։

Յստորև քան զՏողագայ գիւղ յարևելս հարաւոյ իբր կէս ժամ՝ է տաճար փոքրիկ ՚ի կո-

փածոյ քարանց և աւերակք տանց շուրջ զնովաւ. այլ թէ մենաստան իցէ լեալ կամ գիւղ չունիմք ինչ ասել. զի ոչ գտաւ 'ի նմա գրուած ինչ։

547, Սամխան. գիւղ յատորև քան զՇողագայ. տունք 31. եկեղեցին անուամբ սրբուհւոյ Աստուածածնի։

548, Զօփ. այժմ անուանեալ Սորմեա. տունք 56. եկեղեցին յանուն սբ. Աստուածածնի։ Սա յատորև քան զաղամխան մերձ 'ի ծովակն։

549, Ծոփ փոր. գիւղ յարևելից ձագայ. տունք 22. եկեղեցին անուամբ սուրբ Ստեփաննոսի. յարևմտից գեղջս անցանէ գետակ և մերձ գեղջն ջուր գետակիս անցանէ 'ի բնական դիրընդ վիմաւ միով իբր Բ կամրջաւ՝ բացեալ այն անցք 'ի ջրոյ անտի. յանուն այսր բնական կամրջի անուանի և գիւղն։

550, Պէօղ գիւղ. տունք 52. եկեղեցին յանուն սուրբ Աստուածածնի. առ գեղջս 'ի հիւսիսոյ ելանեն աղբերակունք. և անտի ժողովեալ ջուրցն՝ գտանի լճակ ինչ եղեգնուտ եզերօք և է 'ի միջոցս ծովակին և գեղջն։ Եկեղեցի գեղջս է արտաքոյ քան զշէնսն 'ի բարձրաւանդակի. որոյ շրջապատն է գերեզմանուտ խաչվիմօք. և անդ նշանաւոր տեղի ինչ՝ յորում և երկու մեծ խաչվէմք կանգնեալ 'ի վերայ պատուանդանաց, և ունէին այսպիսի գրուած անհարթ. „'ի թվ. ՉԼԳ (1284) 'ի հայպ. տր գրի. մեք և եղբայր աբրահամ քահանայ անարժան հայրաձայն և այլքս կանգնեցինք զխաչ հաւրեղբաւր մերոյ հայրապետին կուտակրաւն քահանայ բազմաչարչար մուցողի և ծնողաց մերոց հայրուտին և խաթունին և քվեր մե. . . . յաղաւթս յիշ”։ և էր մեր Է ականի ջաղացաքար ինխա. . . օշէնած պահող էաք դարապիս գանձին արքունեաց„։

551, Ընդ մէջ վերոյիշեալ երկուց գիւ-

ղորէից՝ ծագքարայ և գեօղայ է ձորակ մինչ առ կաւաջուր՝ ուր որսան առատութեամբ զկողակ ձուկն. ուստի և անուանի՝ Կողակոգէտ։

Գ, Լաւն

552, Վարանըշ ներքին. տունք 67. եկեղեցին յանուն սուրբ Աստուածածնի. այս գիւղ համդերձ ինքեան յառկացեալ գիւղորէիւքն անկանի յարևելս սահմանին կոթայ. և ընդ մէջ այսր գեղջ և կոթայ հեռաւորութի իբրև կէս ժամու։

553, Վարանըշ վերին. տունք 58. եկեղեցին անուամբ սրբոյն Գէորգայ. այս գիւղ հեռի է ՚ի վերնոյն ընդ հարաւ իբրև ժամ մի ՚ի հատածս փոքրաջուր ձորոյն յարևմտեան ստորոտի լերին ՚ի ձորի անդ յարևմտից ջրոյն։

554, Ատալ ադըլը. գիւղ յարևելս ներքին ղարանլղայ, տունք 22. եկեղեցին վերակոչի յանուն սբ Ածածնի։

555, Ամ ղըլըճ գիւղ. նոյնպէս յարևելս նորին. տունք 33. եկեղեցին անուամբ սրբոյն Պետրոսի և Պօղոսի։

556, Օրախոն գիւղ. անուանեալ յանուանէ մեծի խաչվիմին կառուցելոյ ՚ի մէջ գեղջն. և է գիրկ և կէս բարձր միաստանի և նկար քառաթև խաչին՝ ՚ի նմա. զոր և այլազգիք անուանեն Օրախոն։ տունք 61. եկեղեցին յարևմտից գեղջս ՚ի բարձրաւանդակի յանուն սբյն Գէորգայ. ուր է և գերեզմանատուն ՚ի հնոց անտի՝ յորում է շիրիմ մինչ երևելի, ձգեալ ՚ի վերայ սեաւ տապանավէմ և ձևացուցեալ ՚ի նմա ձև գաւազանի և գրուած թերի՝ ըստ այսմ. ,, Դաւիթ յաղթ յիշէք ՚ի Քրիստոս ,,. յարևելից տապանավիմին կանգնեալ կայ խաչվէմ մեծ. և ունի գիր ՚ի բարձրութեան անդ՝ ըստ այսմ. ,, Հանուն աստուծոյ ես դաւիթ

երկց կանկեցի զխաչս յիշատակ հոգւոյ իմ ծնողաց իմ,,:

557, Գուէօշալտարա. տունք 108. եկեղեցին յանուն սրբուհւոյ Ածածնի. այս գիւղէ յարևմտեան սարահարթի ձորակի գետակին անուանելոյ յանուն գեղջս. յարևելեան եզեր գետակին հանդէպ գեղջս է գերեզմաննոց ի վաղ ժամանակաց և ՚ի նմա աւերակ մատրան. ՚ի հարաւոյ գեղջս փոքր ինչ հեռի յստորոտի անդ առապարին ելանէ աղբիւր բարեհամ յարբումն բնակչաց գեղջս՝ թէև ըմպեն և ՚ի գետակէն:

558, Վրէօլաղան. և երբեմն Վրէօլանի զանակս այնպիսի ինչ անցից երբեմն աստէն. և է մերձ յեզր ծովակին առ փոքր քարուտ բլրակաւ. տունք 28. եկեղեցին յանուն սրբոյն Գէորգայ:

559, Ալէնչալու. գիւղ յարևմտեան եզեր փոքրիկ գետակի՝ որ և կոչի յանուն գեղջս. տունք 34. եկեղեցին անուամբ սուրբ Ածածնի:

560, Սանահնու մենաստան. է հանդէպ յիշեալ ալէնչալու գեղջն յարևելեան եզեր գետակին ՚ի հատածս անդ ձորոյ գետակին առ քարատակաւըն հեռի ՚ի ծովակէն ընդ հարաւ իբրև կէս ժամ. և է տաճար փոքր առանց սեան և ունի գմբէթ, և քարինք շինուածոցն ոչ այնքան հարթ յղկեալ. կառուցեալ է այս տաճար յանուն սրբոյն Գրիգորի լուսաւորչին՝ ըստ յառաջբերելոյ Հին Հայաստանի ՚ի գրուածոցն Ստեփաննոսի Օրբէլեան Թղթ" 277: Այս տաճար ունի զմի սեղանատեղի սրբազան խորհրդոյն և զմի դուռն յարևմտից, և ետ կառուցանել զսա յսկզբան անդ Ժ.րդ դարուն Շապուհ Բագրատունի որդի Աշոտոյ Թագաւորի` Հայոց վերակացութեամբ քեռն իւրոյ Մարիամայ ամուսնոյն Գաբուռն Վասակայ տեառն Սիւնեաց. և ունի արձանագիր յիշատակագրութեանն արտաքուստ ՚ի գմբէթի անդ ե-

կեղեցւոյն յարեւմտից եւ 'ի հարաւոյ հանդերձ թուականաւ՝ ըստ այսմ ։

,, Յանուն աստուծոյ ես Շապուհ Բագրատունի հայոց սպարապետ տէրանց տէր, որդի Աշոտի հայոց թագաւորի, 'ի ժամանակս հայոց թագաւորի մեծի Սմբատայ հարազատ եղբաւր իմոյ, եւ վերադիտողի հայոց հայրապետի տեառն յովանիսի՝ իմացայ եւ ծանեայ, թէ ամենայն փառք եւ մեծութիւն սպառելոց են 'ի վաղիւն եւ կորնչելոց. եւ մեծափափագ տենչանօք վերակացու եւ տեսուչ առնելով զքոյր իմ Մարիամ սիւնեաց տիկին յիւրում իշխանութեան 'ի Սեւանայ տուն աստուծոյ կանգնել վիմատաշս կոփածովք. շատածախս գանձիւք եւ մեծաջան վաստակովք կատարել՝ թերեւս լիցի ողորմութիւն յայնմ աւուրն յորժամ բանք սպառին եւ գործք թագաւորեն ։ Եւ տուաք 'ի քեզ վանավանու վանական հայր Աբրահամ՝ աղաւթել եւ վայելել. եւ որ այլ յետ քո այլ յաջորդին. եւ պաշտօնեայք խորանին յորժամ ժողովիք միաբան յաղաւթս եւ կերակրիք անմահական կերակրոյն, յիշեսջիք զիս եւ զիմսն. զի արասցէ ողորմութիւն ողորմածն աստուած ։ Դ̄ գեղս սահման՝ դրամք, 'ի կոթաքար, շ̄լ̄. 'ի Բ̄ = տէլեացն. ռ̄կ. յաղիբողանաց. ջ̄ղ̄. 'ի կարբին գետերէն եւ նաւերէն ։ տէր ողոմ. տէր աթանաս. սմպատ.... աստուծով բերաւ ջուր յոնձոռ... են ։ 'ի թուիս հայոց յծբ. (903) ,, ։

Զայս յիշատակարան ես ինքնին ներկայ լինելով՝ անդէն՝ վերառի 'ի գիր ամենայն զգուշութեամբ՝ զոր համեմատեալ ընդ գրուածոյն յօրբէլեան ստեփաննոսէ՝ որ առ Հին հայաստանի, գտաւ զանազանութիւն 'ի մէջի՝ մանաւանդ 'ի կալուածաննուիրանաց. ուստի եւ մեք եդաք ըստ վերահասութեանն մերում ։

561, Մակենոցաց մենաստան. հեռի դ. տանի 'ի

վերոյիշեալ Միասնատանէն ընդ հարաւ 'ի բարձ-
րութեան անդ 'ի լանջս լերին աւելի քան զժամ
և կէս 'ի վայելուչ վայրի 'ի վերայ նոյն գետակին.
տաճարն խաչաձև կառուցեալ կայ 'ի միջին տե-
ղւոջ պարսպին յանուն սրբուհւոյ Աստուածած-
նի. որ և կոչի սուրբ Աստուածածին գեղամայ. և է ա-
ռանց սեան միջակ մեծութեամբ, բարձրակամար.
և ունի կաթուղիկէ նոյնպէս քարաշէն, զմի սե-
ղանատեղի սրբազան խորհրդոյն և զմի դուռն 'ի
հարաւոյ. քարինք շինուածոյ տաճարիս հանդոյն
եկեղեցւոյն վանավանու ոչ այնքան հարթ յղկեալ:
Սեղև հնար մեզ գտանել զարձանագրութիւնն
'ի Գրիգոր ստեփաննոս իշխանէ սիւնեաց՝ զոր յա-
ռաջբերէ հայր Ղուկաս ինճիճեան 'ի ստորագ-
րութեան հին հայաստանի՝ թէ և այն ևս թերի
ը գրուածոյն ստեփաննոսի օրբելեան. և գտու-
ցէ ծածկեալ էր այն ընդ որմովքն՝ որք կից են
որմոց տաճարին 'ի չորից կողմանց:

Նայց գտան երկու արձանագիրք անդէն,
և այնք ևս առանց թուականի. մ՝ 'ի հարաւոյ տա-
ճարին յարտաքին կողմանէ յորմն ինչ մերձ անդր,
յայս օրինակ: ,,Կամաւն աստուծոյ՝ որ սիւնեաց
ստեփան իշխան շինեաց մաքենուց եկեղեցիս 'ի
գ. ձ. թվին (հայոց). ես առաջնորդ սուրբ ուխ-
տիս Ջուղայեցի Խաչատուր վարդապետս՝ որդի
գողով յակոբա վերստին նորոգեցի և պայծա-
ռացուցի 'ի ժամանակս սրբազան հայրապետու-
թեան Յակոբա. և միաբան սուրբ վանացս՝ զտէր
պարսամն, զտէր գրիգորն, և զվարկապետն՝
զգրիգորն, ղազարն և ստեփաննոսն. մնաեւս սա-
րուխան յիշեցէք 'ի քրիստոս աստուած. և որք
յիշատակէ զմեզ, յիշատակ նոցա խաղաղութեամբ
պահեսցի յաւմէն. հայր",, : իսկ բ՝ յարևմտեան ճա-
կատի անդ տաճարին. ,,Տ Նորհօքն աստուծոյ ես
Մելիք Մելիքբեկեան որդի մեծի պարոն տա-

պսակին, և շինող տանս գեղամս՝ վերստին նորոգեցուք սուրբ եկեղեցիս իշատակ իմ և իմոցն, ամէն. յիշեցէք նիւազ վերակացու.

Պարիսպ մենաստանիս բաւական բարձրութեամբ հիւսեալ ՚ի հաստարակ քարանց. հարաւակողմանն կառուցեալ կայ ՚ի վերայ քարափան փոքր ձորակի ջրոյն. իսկ միւս երեք կողմանն ՚ի դիւր գետնի. և ունի զմի և եթ տեղի դրան մերձ յանկիւնն արևմտեան հարաւոյ. բազում որմունք են ՚ի պարսպի աստ շուրջ զտաճարաւն՝ տանց, բնակութեանց և այլ հարկաւոր շինուածոց. և են հիւսուածք ՚ի հաստարակ քարանց անհաստատ. և որպէս երևի՝ սակս անընդհատ մնալոյ յեկեղեցականաց, ՚ի չուական այլազգեացանդ են հիւսեալ այն որմունք և կցեալ իսկ ընդ տաճարն. ուստի և չկարողացաք գտանել զերևելի ինչ շիրիմ, կամ զնոյն իսկ զշիրիմն Տէրդ Յովհաննու կաթուղիկոսի Հայոց՝ որ վախճանեալ թաղեցաւ յամի 854. այլ միայն մերձ յեկեղեցին յարևմտից նորա են երկու մեծ շէնք սենեկաց բարձրորմն կրով և քարամբք՝ որոց կամարայարկքն խոնարհել կան.

՚Ի մէջ անդ պարսպին յարևելակողմն տաճարին կայր առանձին շինուած ինչ ՚ի բարւոք յղկեալ քարանց՝ որոյ որմունք ամբողջ, ծածկոյթ կամարին կիսով չափ խոնարհեալ. և էր իբրև մատուռն, այլ որովհետև բնակէին անդ այլազգի գերդաստանք, և գերդաստան մի ևս ՚ի նմա ՚ի փոքրկութեան անդ ամենայն աղխիւքն, չե՛ղև հնար լաւապէս զննել և զներքին կողմն շինուածոյն առ ՚ի գտանել թերևս զգրուած ինչ։

Ընդ մէջ այսր մատրան և տաճարին գտանէր ճանապարհ ջրոյ յարդարեալ ՚ի կոփածոյ մեծամեծ քարանց՝ զօրէն ճանապարհին ջրոյ ՚ի պարտիզի անդ կաթուղիկոսարանին աթոռոյ Էջմիածնի. թերևս երբեմն ընդ այս ճանապարհ խո-

տորեցուցեալ զջուր գետակին փոքրիկ, և անդրէն հանեալ ընդ պարիսպն՝ վերստին արկեալ են ՚ի ձորակ անդր, որպէս տեսանի և անցք ջրոյ ՚ի պարսպի անդ և արտաքոյ։

Իսկ զվիպս ծանօթութիւնս աւերութեց և նորոգութեանց, և այլ հարկաւոր պարագայից այս մենաստանի՝ տեսցես ՚ի Հ͞րն Հայաստան. Թղթ" 270. ց273։ Այս տեղի այժմ ըստ այլազգականին կոչի ՂԸՂ ԸԸՒԻԼԻՍԱ։

Դ, Սօան

562, Այս մասն գեղաքունեայ, որ և գաւառ Սօդից կամ Սօթից կոչեցեալ առ Խորենացւոյն և առ ստեփաննոսի օրբէլեան, անկանի յարևելեան կողմն ծովակին՝ յերից կողմանց պատեալ դիւրագնաց լերամբք. և է դաշտավայր նորա փոքր ինչ ընդարձակ արգաւանդահող և խոտաւէտ. յորում են երկու գիւղք բնակեալք ՚ի հայոց։

563, Սաղաչլաղէն գիւղ՝ կոչեցեալ այժմ Գիաւրէնչար. և է ՚ի մէջ դաշտին. բնակիչքն տունք 63. եկեղեցին յանուն ս͞բ Ծածնի և է ՚ի նոյն առաջին տեղւոջն՝ զորմէ գրէ Ուռաքել վարդապետ դավրիժեցի վասն մահուան Յովհաննու վարդապետի ծարեցւոյ թէ՝ ,, որոյ պատուական մարմինն եդեալ կայ ՚ի յերկիրն գեղամայ ՚ի գիւղն Սաղաչլաղէն հուպ դամբարանի վարդապետին Սարգսի ,, Թղթ" 581։ երկոցունցն ևս շիրիմք առ միմեանս են ՚ի մէջ այսր եկեղեցւոյ ՚ի միջին տեղւոջ զառաջեաւ միջին դասուն՝ ուր ՚ի պատարագի դասաւորին դպիրք. և անուանք նոցին ևս գրեալք ՚ի տապանավէմսն անդ. կիսով չափ աւելի որմունք եկեղեցւոյս էին ՚ի վաղուց անտի, իսկ միւս մասն հանդերձ փայտեայ ծածկովքն ՚ի նորոյ շինեցան յայժմեան բնակչաց։

564, Վարդագօղուր կամ Ղըզըլ-ղալ՝ գիւղ բազ-

մաղթիւր. հեռի 'ի Վասակաշէն գեղջէ ընդ հարաւ իբրեւ ժամ և կէս՝ յարեւմտեան ստորոտի առապարին. տունք 34. էր 'ի սմա եկեղեցի հիմնարկեալ 'ի վաղ ժամանակաց, զոր մաքրեալ բնակչացն յաւերանաց անտի՝ արարին փայտածածք. որ և օծաւ 'ի մէնջ յամին 1834, և անուանեցաւ յանուն սրբոյն Գէորգեայ. բազում աղբերակունք են յստորոտս այսր առապարի մերձ 'ի շէնս տանցն, այլ մին 'ի հարաւոյ գեղջս կարի մերձ յայն՝ ելանէ առատութեամբ յոյժ մինչեւ բաւական լինել երկուց ջրաղացից. որոց ամենեցուն ժողովեալ 'ի մի և գետակնացեալ գնայ, անկանի 'ի ծովակն:

565, Զկնի այսոցիկ հայաբնակ գիւղորէից պարունակելոց 'ի չորեսին մասունսն բաժանման գեղաքունւոյ, գտանին ոչ սակաւ և գիւղորայք բնակեալ յայլազգի մահմէտականաց. և յամենեսին 'ի նոսա գրեա՛ թէ՝ գտանին՞ աւերակք տաճարաց և եկեղեցեաց և գերեզմանուտք զարդարեալ խաչվիմօք և մատրամբք՝ մնացեալք 'ի վաղ ժամանակաց անտի հայոց, որպէս և 'ի վերոյ ստորագրեալ գաւառսն. և են 'ի ներքոյ գրեալքդ:

Աղբուլաղ. որ և ասի Բէգլէ Հիւսէյին Քէանդ. տունք 6: Աղբուլաղ, ասի և Ղէյթնաղ յորջորջումն 'ի վերնոյն. տունք 5: Բաղլան Քէանդ. տունք 2: Համզէ Ճաղան. տունք 14: Խաճիբէկ. տունք 18: Ղըզ Ղալա. տունք 6: Հայրամանց կամ Հայր Ահմանվանց. զորմէ (541). տունք 15: Բաշքէանդ. տունք 17: Զախուրլու. տունք 16: Յայս գիւղ գտանի հին եկեղեցի փոքրիկ, և կամարայարկ նորա խոնարհեալ. յարձանագրաց անտի որոշեցաւ անուանակոչութիւն եկեղեցւոյն Սուրբ Բէթղէհէմ. որոյ 'ի ներքոյ բեմին ելանէ աղբիւր յորդառատ իբրեւ ջուր միոյ ջրաղացի: Կէօթաք պուլաղ. տունք 12: Պըղըլ Վանք կամ Ղըղըղընեկլեա՝ Հաճէնիս (561), տունք 8: Նարթալաղըր.

տունք 12։ Օձունի․ տունք 26։ Բէհարփէն․ տունք
7։ Կամլը Ալասհէքէրտէ․ տունք 18։ Կ. Ըըռ Գալըն
տունք 42։ Կ. Օղուաղ․ տունք 19։ Տողուտիկ որ և
ասի Հէրեմյան Ըօլէ Ալայ․ տունք 22։ Տողուտիկ որ և
ասի Արըքէնսըրդ յորաշուխն 'ի վերինոյն․ տունք 24։
Ձորակէնէ՝ տունք 20։ Օշական․ գիւղաքաղաք տեղի
համանուն գաւառին (562)․ և է 'ի վաղակաշէն
գեղջէ ընդ արևելեան հիւսիս հեռի իբրև ժամ
մի 'ի խոնարհ ստորոտի լերին․ և է արդարև վայր
մեծի աւերակի և գտանի 'ի նմա եկեղեցի մե_
ծակառոյց երկար քառանկիւնի օրոցաձև 'ի կո_
փածոյ քարանց․ և ունի զմի սեղանատեղի որբա_
ղան խորհրդոյն և զերկուս աւանդատունս․ յամ_
բողջութեան կայ եկեղեցին, այլ սալքարինք տա_
նեացն քայքայեալ և մանաւանդ խախտեալ
կամարայարկ նորա․ չգտաւ ամենևին գրուած ինչ
ոչ 'ի ներքս և ոչ արտաքս՝ յորմունս նորա․ և որ_
պէս տեսանէր 'ի դասաւորութենէ քարանց շի_
նուածոյն, էր այն կրկին շինութիւն յառաջին
աւերանացն․ և կոչի ցարդ այս տաճար՝ եկեղեցի
Օշկայ․ և երբեմն Լաշքայի․ Թերևս բնակելոյն աս_
տէն չուական այլազգեաց (Քեշլաքէնտէ)․ յորոց բը_
նակին այժմ աստ՝ տունք 44, 'ի ձմռան․ և յա_
մառանն լեռնանան։ Պուցէ վասն այսր գեղջ իցէ
գրեալն յԱռաքել վարդապետէ դաւրիժեցւոյ
Թղթ" 94․ յորում 'ի վերադարձին իւրում 'ի
Վրաց աշխարհէ նա ինքն Շահապաս արքայ պար_
սից՝ իջևանեցաւ 'ի տան հայազգի մելիք Շահ_
նազարին․ և անդէն կոչի անուն գեղջս՝ Օշկայ։

Յարևմտից գեղջն է գերեզմանատուն ընդար_
ձակ․ յորում է և Լապաքան տեղի պատարագելոյ 'ի
խարտեալ քարանց, այլ կիսաւեր․ 'ի մէջ խաչքա_
րանց շիրմացն երկոքին են ականաւոր․ որք գո_
լով միասնանի՝ կանգնեալ կան 'ի վերայ պատուան_
դանաց քառակուսի ձևացութե․ բարձրութի նց

իբրև գիրկ երկու. և թանձրութիւնն մի քառա-կուսի գազ պարսից. և են ընտիր փորածոյք գլխոյքն և փոքրիկ կաթուղիկէք քանդուածոյք ՚ի ծայրն ՚ի նոյն վիմացն, այլ գրուածք նոցին դժուարընթերցք, չեղև առնուլ ՚ի գիր։

Յարևելեան լերանց իջանէ ջուր փոքրիկ և անցեալ ղառաջեաւ այսր շինու՝ անկանի ՚ի լը-ճակն եղեգնուտ՝ որ է ընդ մէջ ծովակին և սահ-մանի այսր գեղջ։

Յարևելից և ՚ի հարաւոյ այսր գեղջ երևին երկու տաճարք կաթուղիկէիւք հանդերձ անդ ՚ի սորոտս լերանցն. զորոց ասեն լինել եկեղե-ցիք այնց գիւղատեղեաց։

566. ՄԵԾ ԽԱՉՐԱՅ. տունք 37։ ՓՈՔՐ ԽԱՉՐԱՅ. տունք 25։ ՄՈՒՂԲԱՆ ԱԼԻՂՇԼԱՂ. տունք 11։ ՈՂՐԱ-ՃԱՅ. տունք 17։ ԲԵՍՏԱՄԻ. տունք 18։ ՇԻՂՂԱՅԵԱՅ. տունք 46։ ՋԻԼ. տունք 18։ ՕՐԴԱՆԻՇ. տունք 19։ ՇՕՐՋԱԼՈՒ. տունք 25։ ԱՂՂՈՒԼԱՂ. տունք 20։ ՊՈՐԱԽ-ԱԼԷՆ. որ այժմ ասի ԽԱՉԼՈՒ-ՃԱՅ. տունք 41։ ԼԱՅԷՋԷ. ղարաղօյունլու կոչին բնակիչքն. տունք 4։ ՄԱ-ՏԻՆԱՅ. տունք 11։ ՁԱՂԷԲԻ. տունք 6։ ԱՉԻՆԱԼՈՒ-ՎԵ-ՐԻՆ՝ մերձ ՚ի մենաստանն Ս. Անավանու. տունք 18։

567. ՚Ի վախճան ստորագրութեան գաւա-ռիս գեղջքունեաց արժան համարեցաք յիշատա-կել աստէն զգրուածս ՚ի քեօթուկ անուանեալ մատենին Սիւնեաց արքեպիսկոպոսարանի ՚ի տա-նուտէարց անտի գիւղորէիցն գեղջքունեաց ՚ի թիւ հայոց ՋԿԲ. (1513) յաղագս ծանօթութեան անուանց գիւղորէիցն յայնմ ժամանակի. զոր անագան ուրեմն ՚ի ձեռս բերաք. ապա թէ ո՛չ հարցմամբ զոմանս ՚ի հին բնակչաց, բացայայտէին արդեօք՝ թէ ո՛ր գիւղ այն, որ այժմ այնու այ-լազգական անուամբ յիշատակի։

„ ՚Ի թուին հայոց. ՋԿԲ, ին. մեք գիւղոր-քունու մելիք ու տանուտէարքս եկաք ՚ի սուրբ

աթոռս Տաթեւու սիւնեաց՝ երկոտասան գա-
ւառ, և առաւել երկիրն մեր գեղամայ. որ ճըշ-
մարիտ երկիրն մեր գեղարքունի թեմ և վիճակ
է սուրբ առաքելոյս Թադէի սուրբ առաքելոյն
Բարդուղիմէոսի հաստատած մինչև լուսաւո-
րիչն. լուսաւորչէն մինչև ցթոռունան՝ Սահակայ
և Մեսրովպայ. մինչև այս ժամանակս հաստատ
և անխախտ մեք տեսեալ մեր հօրէ և պապէ լը-
սեալ. զամենայն հաս և իրաւունք տայինք և հը-
նազանդ ժողովուրդք: Ապա գալս մեր յուխտ
սուրբ աթոռս զկոնդակս տեսաք, մեր բերանովս
կարթացաք և ականջով մերով լսեցաք. և կըր-
կին հաստատեցաք այս բանս՝ որ ճշմարիտ էր.
յուխտ և դաշինք դրինք դրանց սուրբ առաքե-
լոյս և առաջի եպիսկոպոսացս՝ Շմաւոն եպիս-
կոպոսի և տէր Ստեփաննոսի, Մարտիրոս փա-
կակալի և տէր Ղուկաս հայրապետի և այլ մի-
աբանից մեծի և փոքու: Ես փիրհամզէս որդի
եղիշէին և թոռն մելիք միրզին. ես Խանգրիղու-
լիս որդի մէլիք ղուկասին և թոռն պուղիկին.
ես Նիֆէս որդի բուդաղին՝ թոռն դէլուղար-
դաշին. ես Խարխանս քիթաշինեցի. ես Շահղու-
բաթս գավառնեցի որդի ածատուրին՝ թոռն մե-
րանչին. ես Նաշարաթս կոթեցի. ես Մաթէոսս
կածեցի. ես Պիլու կնձուտեցի. ես փիրի որդի
ղուբաթին թոռն բէհրամին. ես Կունզուտս գան-
ձակեցի, և ամէնքն ամենայնի ուխտեցաք. որ ոչ
մերմէ, ոչ մեր ընտանեաց, ոչ զավակաց, ոչ այլոց
գիւղարքունեցեաց՝ որ այս բանիս հակառակ չը-
լինի. կամ հետ խաչենեցեաց, կամ երկրիս եպիս-
կոպոսացն կամ հետ կաթուղիկոսացն միաբանին,
հակառակութիւն անեն հետ աթոռիս, սևերես
լինին առաջի աստուծոյ, և ՚ի մարդկանէ և ՚ի
սուրբ աթոռոյս անիծեալ. մեր և մեր նախնեաց
մեղացն պարտական լիցին. և հազար հազար նահ-

լաթ լեցին ,,։

,, Մեք գիւղաքունու սարկաւագունքս՝ որ եկինք սուրբ աթոռս կարդալու, այս բանիս վկայենք. ես Մուսէս սարկաւագ որդի և Թոռն աւագ երէցի. և Քրիստափոր սարկաւագ որդի ամիրին՝ Թոռն միրզին կաթնուց գիւղէն. ես Նղէշէ սարկաւագ դարանակուց, վկայենք՝ որ գեղարքունու տանուտէրքն որ զայս բանս գրեցին՝ ճշմարիտ է աստուծով ,,։

| Գեղարքունի նահանգ. | Երեւան գաւառն՝ որ է Սուրմալուն ի չարխէլու հողին։ |
|---|---|
| 1, Կոթի. | 1, Մոթք. |
| 2, Կակոյք. | 2, Օփաթաղք. |
| 3, Կոճոձոր. | 3, Մունջի ձոր. |
| 4, Իսկերա. | 4, Հոլուաթափք. |
| 5, Ցցնի. | 5, Եվազան. |
| 6, Խնձի Թաղք. | 6, Համամաբակք. |
| 7, Ցոփեաց ձոր. | 7, Երավիսաբակք. |
| 8, Նորաշէն. | 8, Գուգառինջ. |
| 9, Ցենակաց հուն. | 9, Իետուք. |
| 10, Ցողնի. | 10, Մափչի անապատ. |
| 11, Գանձաղան. | 11, Խորթագետ. |
| 12, Գողտառ ձոր. | 12, Մարդանաբակ. |
| 13, Նրխկոյկ. | 13, Նորաբակ. |
| 14, Գաստակերտ. | 14, Մասկաշէն. |
| 15, Մասկաշէն. | 15, Կութն. |
| 16, Օտանագարակ. | 16, Ենապատ. |
| 17, Եմարիայ. | 17, Երիունջն. |
| 18, Մաժոց. | 18, Տաջրէք. |
| 19, Կամբրիւն. | 19, Կուչկունիք. |
| 20, Հոգգ. | 20, Իարկոյք. |
| 21, Խոկոռին. | 21, Մաղավեր. |
| 22, Խորոան. | 22, Լուռակարպ. |

23, Արգաձին․
24, Խմոզ․
25, Սէհոգաց․
26, Հովուաց ագարակ․
27, Ջագ․
28, Կածիկ․
29, Ութբրուն․
30, Յուղաբերէք․
31, Սարդենիկ․
32, Ներքին Վրդենիկ․
33, Խամբարարք․
34, Նորերուք․
35, Առնջոյհուն․
36, Գոմք․
37, Օհաւանք․
38, Կուտրակի գոմք․
39, Սանահին․
40, Փառականք․
41, Նեռան․
42, Գիղք․
43, Նորդի այրք․
44, Շեկակորքն․
45, Գերափոռ․
46, Ճախկայ․
47, Ախայինք․

23, Ամռնափոր․
24, Շառավան․
25, Շինիք․
26, Աստուածածին․
27, Արեգ․
28, Նակափոր․
29, Սագենոց․
30, Նաւեցիք․
31, Օերիշատ․
32, Ասխող․
33, Աղբերաձոր․
34, Արմնայ․
35, Անապատ․
36, Շապուհաթաղ․
37, Կատակ․
38, Սաչէի բակ․
39, Ջաղացաձոր․
40, Օձուրաբակ․
41, Պաշուք․
42, Տեռնատեան․
43, Ներդաձոր․
44, Տրունք․
45, Որդնիք․
46, Գարանք․
47, Գարանակ․
48, Ախոռատուն․
49, Ոզմունք․
50, Պաշոյ․
51, Զահոյ․
52, Խորտանաբակ․
53, Որոկիք․
54, Ականք․
55, Գողոց ագարակ․
56, Ալեք․
57, Գեղամբրակ․

58, Կախանաղբիւր.
59, Սահակաբակ.
60, Խոնթանաբակ.
61, Ջաղացաձոր.
62, Արբուց.
63, Դպրաբակ.
64, Դգոլաբակ.
65, Տորմղինաբակ.
66, Խորժայ.
67, Անձաձոր.
68, Օխար.
69, Դետաբակ.
70, Երէրի.
71, Սարժանկայ աղբիւր.
72, Հոնջէնք.
73, Յեղջերվինիկ.
74, Սնապատ.
75, Օձի գետ.
76, Բթաշէն.
77, Դէլիղարտաշ.
78, Դավառնի.
79, Կնձուտ.
80, Դարանակ.
81, Կաթունք.

# ՅԱՒԵԼՈՒԱԾ

Բաց 'ի վերոյգրեալ ստորագրութեանց գաւառացն Արագածոտան, Կոտայից, Նիգայ, Վարաժնունեաց և Գեղաքունեաց` զորս մի մի ներկայութեամբ մերով 'ի տեղւոջն պատահեալ զըննեալ քննեցաք, դէպ եղև մեզ անցանել և յինչ ինչ մերձաւոր տեղիս այլոց գաւառաց. և ուր ընդառաջ եղեն մեզ հուչակաւոր մենաստանք, զայնս ևս մի ըստ միոջէ ստորագրեմք յայս յաւելուած:

Նաև դիցուք զկնի զշարակարգութիւն կաթուղիկոսացն աղուանից և զինչ ինչ առանձին արձանագրութիւն մենաստանաց այնր Թի՝ զորս է՛ր որ մերով ներկայութեամբ, և է՛ր որ միջնորդութեամբ բարեկամաց 'ի ձեռս բերաք:

### Մենաստան Հառիճոյ սուրբ Աստուածածնի 'ի Շիրակ գաւառի.

568, Այս մենաստան 'ի ստորոտի անդ Արագած լերին 'ի հիւսիսոյ նորա 'ի սահմանին Շիրակ գաւառի 'ի գիւղ անդր` որ այժմ Պէքնաղ անուանի. ունի զնիստ իւր 'ի բարձր ստորոտի անդ 'ի վայելուչ վայրի. 'ի հարաւոյ և յարևմտից է ձորն փոքրիկ զառընդթափ և հայեցուած իւր ընդ արևմուտս և ընդ հիւսիս ընդ բովանդակ սահմանս գաւառին. ջուրն մաքուր և օդն առողջարար:

Եկեղեցին` որ զկնի շինեցաւ 'ի Զաքարիա ամիր սպասալարէ, է կրկին. ներսին և գաւիթ նորա բարձր շինուածովք 'ի մաքուր կոփածոյ քարանց. ներսին տաճարն է անսիւն և հաւաք գործեալ կամարացն. ունի 'ի միջավայր տանեացն ըզկաթուղիկէ բարձր և սրածայր. և 'ի ներքուստ յերկոսին կողմանս արևմտեան դրան` այնէ, յերկոսին անկիւնս տաճարին` են երկու փոքրիկ մատ-

րունք և 'ի վերայ նոցա ևս որո՛շ որո՛շ սիւնազարդ-
վերնատունք · որոց քարեայ սանդուղքն վերելից
հիւսեալք ընդ որմունս մատրանցն · Թերևս այնք
առանձին տեղիք աղօթից իշխանին և իշխանուհւոյն·
ունի զմի սեղան և զերկուս աւանդատունս ։

Դրսին տաճար՝ այն է , գաւիթ նորա · գործ-
զարմանալի , շնորհ ճարտարարուեստ քարակոփի
կառուցեալ 'ի վերայ չորից սեանց միահատորից
ըստ բաւականին ընդարձակ մեծութեամբ · միջա-
վայր առաստաղն ձգեալ 'ի վերայ չորից կամարաց
սեանցն հաւաք գործեալ՝ է բոլորովին փորածու
մինչև ցբուն միջակէտն · ուր է մեծ լուսամուտ
բոլորակաձև իբրև երկուց գրկաց ։

Գտանին ինչ ինչ արձանագրութիւնք 'ի
գաւթի աստ յորմունսն ներքուստ և արտա-
քուստ՝ զորս մեծ մասամբ առեալ դիցուք առաջի։

'Ի վերայ դրան տաճարին՝ որ ընդ արևմուտս կողմին ,
'ի հիւսիսային կամարի նորայն դնի այսն արձանագիր ։

„ Շնորհիւն Աստուծոյ ես Զաքարէ ա-
միր սպասալար շինեցի զկաթուղիկէ „ ։

'Ի ներքոյ այսն արձանագրութեանս 'ի վերայ նոյն դը-
րանն դնի և այս արձանագիր ։

„ 'ի թիւ ոկգ (1214) „ ·

„ Կամաւն Աստուծոյ մեք Հառիճեցիք հայր
Պետրոս և այլ միաբան եղբարքս հաստատեցաք
յաւիտենից կտակ անջնջելի մինչ 'ի գալուստն
Քրիստոսի , և եդաք սահման անխափան · եթէ
հայր ոք փոխի առ Քրիստոս , գիշերապաշտաւն և
փ̃ քառասունք · և թէ էրէց կամ կուսակրաւն՝
փ̃ քառասունք , ապաշխարողի ե̃ · 'ի մարդն ա̃ աւր
ժամ՝ հաւր և ամէն եղբարց · որք հաստատ պահեն

աւրհնին ՚ի Քրիստոսէ· որք հակառակին դատին ՚ի յԱստուծոյ,,:

Յաջնաշէն այսր արձանի գրէ և այս:

,,Կամաւն աստուծոյ ես Պուտիկս մեծ յուսով միաբանեցայ ՚ի սուրբ ուխտս և ըստ իմ կարողութեանս ետու ընծայք սրբոյ Ա̃ծածնիս· հայր Յովհաննէս և միաբանքս հաստատեցին վկայութեամբ տէր համազասպայ ՚ի տաւնի վարդավառին զամենայն եկեղեցիքս յիմ անուն պատարագել զՔրիստոս· ով խափանէ իմ մեղացն տէր է· և կատարիչքն աւրհնեալ եղիցին, ամէն,,:

՚Ի ներքոյ վերոյգրեալ արձանին·

,,Կամաւն աստուծոյ և յաշխարհակալութեան եվղանայ ղան ղազանին ես Եւլխութլու որդի չաղանին և իմ որդի սըաշէս և իմ խաթունըս խոդլու միաբանեցաք ՚ի սուրբ Ա̃ծածինս և զմեր բաժին գանձով շինած ձեթահանքըն տուաք եկեղեցուս՝ լոյս ընի· ոչ իմ որդու, ոչ աղբաւր ոչ իմ ազգի մարդոյ դաւի չկայ· ով դաւի առնէ յաստուծոյ և ՚ի փեղամպարաց նալաթ է· կատարիչքն աւրհնին յաստուծոյ· ՚ի թվ· չձգ (1334),,:

Փոքր ինչ հեռի ՚ի վերոյգրելոյն·

,,՚Ի ո̃հ· (1221)·

,,Ես Աւաչէ որդի սարգսի և ամուսին իմ Մամախաթուն տուաք երկու այգի ՚ի սուրբ ···· ՚ի փարպի, և ՚ի Տաճարագեղ մեծ յուսով· և յառաջնորդութեան Գրիգոր վարդապետի հաստատեցին կամաւն աստուծոյ· ընկալաք և զայս ···· զծառաղարդարի Աւաչէի և ղաղարու տաւնն Մա_

ծա խաթունին՝ ամէն եկեղեցիքս անխափան · եթէ ոք խափանէ պարտական է մեղացն .... ,, :

'Ի Դէջ գաւառին Ջորին Հաւռայէն ·

,, Կամաւն աստուծոյ ես Մխիթար գնեցի յերեւան զեւագրի որդւոյն այգին յարդեանց իմոց և ետու 'ի հաւիձայու ուխտիս · և տէր Յովհաննէս և միաբանքս սահմանեցին 'ի տարին գ աւր պատարագ · ա ... և բ աւր ինձ ամենն անխափան · կատարիչք աւրհնին յաստուծոյ · որք խափանեն դատին 'ի Քրիստոսէ · 'ի թու" ոհգ · (1224) ,, :

'Ի Դէջ գաւառին Ջորին Հետխառայէն ·

,, Կամաւն աստուծոյ ես Սանասար և Պաղտասար որդիք Խուպասարին 'ի յառաջնորդութե հաւր Համազասպայ ընծայեցաք սուրբ ուխտիս ըզ մեր հայրենի դրամագին այգին որ 'ի Նորաշէն ... ով հակառակ կայ կամ խլումի մերոյ կամ աւտարաց, նզովս առցէ 'ի տեառնէ Յիսուսէ · և հայրս և միաբանքս սահմանեցին որ յետ մահածնին Ժ աւր պատարագ · բն Խուպասարին, բն Կիմայթինս բն Յովհաննէսին, գն Սանասարին · ով զգիշատակս խափանէ դատի 'ի Քրիստոսէ, ամէն : Հաստատեցաւ կտակս 'ի կամս Աստուծոյ · 'ի թվիս ոձդ (1235) ,, :

Ի ներքոյ արձանագիր շինուածէն տաճարին յանուն նորին Զաքարիա մարգարէի և Ներսիսեանց 'ի նմանէ յայս վանաւոր, զոր ի Ջորին Հետխառայէն այն տաճարի արձանագրութ՝ յայս օրինակ :

,, Շնորհիւն Աստուծոյ և ողորմութեամբ մարդասիրին ես Զաքարէ մանդատորթուխուցես

1, ամիր սպասալար Հայոց և Վրաց, որդի մեծին Սարգսի, գանձագին արարի զհռչակաւոր սբ. ուխտս Հառիճոյ յիւր բնական հայրենատիրացն՝ յաղագս կենդանութեան տեառն իմոյ Թամար Թագուհոյ, և փրկութեան ինձ և հարազատ եղբօրն իմոյ Իւանէի, և զաւակաց մերոց Շահնշահի և Աւագին և ծնողաց մերոց· շինեցի զամրոց և զկաթուղիկէս բազում ծախիւք, և զարդարեցի ամենայն սպասիւք սրբութեամբ, և զիմ գեղն՝ որ էր մերձ 'ի սուրբ ուխտս, Սողորիսն՝ ընծայեցի սուրբ Ածածնիս, որ բոլոր իւր ամէն հաղահատով սարովն և ջրովն՝ զոր բնական լեալ է· և ետու ջաղաց 'ի գետուն՝ որ Պիւաղաց կոչի· ջաղաց մի 'ի Անի գլի ձորին և պարտէզ մի 'ի ծաղկոցաձորին, այգի մի յԵրեւան և այգի մի 'ի Թալին· և զառաջին սահմանքն որ բուն լեալ էր հաստատեցի· 'ի սահմանախաչ և հաճոյ գետն կոտմարգով գբերովն, ցամաք ձորովն՝ Ճինարին հարով, գոսցեց ձորովն, արեան աղբերովն, հին հառիճովն· եւ եդի սահման զայս՝ որ յաւագ խորանն պատարագել զՔրիստոս յիմ անուն հանապազ: Արդ՝ որք հաստատուն պահեն զյիշատակս մեր աւրհնին յԱստուծոյ և ամենայն սրբոց նորա· իսկ որք հակառակին և հանել ջանան փոքր ինչ կամ մեծ, զանէծս կայենի և զյուդայի ժառանգեսցեն, և կրկին նզովեսցին յԱստուծոյ· Թէ ոք բռնութբ և յուժով տանի՝ երեք հարիւր տասն ութ հայրապետացն և յամենայն սրբոց եղիցի նզովեալ: Նա և գրեցաւ կտակս հաստատ· Թիւ ոծ· (1201),,:

Գտանին երկու առանձին պատկերք կոփեալք 'ի վիմի յարևելեան Ճակատ եկեղեցւոյս արտաքուստ յերկոսին կողմանս լուսամտին՝ որ

1, Ըստ բառս Վրաց՝ Ամիրսպասալարն, թարգմանի 'ի հայ լեզու՝ արքունի զօրապետ:

անդր քան զտանիք տաճարին՝ որոյ հարաւայինն ե-
րևի յայտնապէս լինել արձան նորին Օպքարեայ
սպասալարի, զի և արձան առիւծոյ դրոշակի իշ-
խանութե նորա գտանի յետուստ կողմանէ նորա
քանդակեալ ՚ի վէմ անդր. իսկ հիւսիսայինն պատ-
կեր Իւանէի նորին հարազատի:

Շինուածք այսր տաճարի բոլորովին հա-
մեմատ է շինուածոց հիւսածու տաճարին Մ.ջրի-
վանաց կամ Գեղարդայ. և ըստ որում երկոքին
ևս ՚ի հրամանէ նորին Օպքարեա սպասալարի կա-
ռուցան, դուցէ և ճարտարապետ նոցա էր մի և
նոյն այր: Յարևմտից հարաւոյ տաճարիս ՚ի ձորի
անդ է ուղղաբերձ սաուար վէմ մի իբրև սիւն,
՚ի գլուխ որոյ կառուցեալ է կոփածոյ քարամբք
փոքրիկ մատուռն և դռնակ ՚ի վերայ՝ զորմէ ա-
ւանդեն լինել տեղի շիրմի քարակոփ ճարտարա-
պետի այսր տաճարի:

Հին եկեղեցի մենաստանիս փոքր և խրթին
կից ՚ի հարաւային որմն գաւթի տաճարին ՚ի կո-
փածոյ քարանց՝ առանց սեան. ունի զերկուս փոք-
րիկ սենեակս կամ աւանդատունս՝ որոց մին յան-
կեան արևելեան հարաւոյ և միւսն յարևմտեան.
և զմի սեղան և զդուռն արտաքոյ գաւթին յա-
րևմտից: Ի ն որա արձանագիր յիշատակի շինութեանն ՚ի
վերայ արևմտեան դրան դրանն, այլ առանց թուականի ըստ այսմ:

„ Ես Սարգիս ճոն շինեցի զեկեղեցիս և ՚ի
քրտանց իմ ետու զայլ ընծայ ՚ի սուրբ ուխտս.
և հայր Համազասպ սահմանեաց՝ որ ՚ի Սարգսի
և ՚ի Նագոսի տօնին Ը աւր պատարագեն զՔրիս-
տոս յիմ անուն „:

՚Ի նորին արևելեան հարաւոյ յորմն հարաւայինն
արտաքուստ.

„ Ես Սարգիս առաջնորդ սուրբ ուխտիս

հառիճայ շինեցի զտեղի սննդեան խմոյ 'ի հարիւր-ամեայ կործանմանէն. և կարգեցի 'ի սմա արս ընտ-րեալս և խրատեալս աւրինաւքն աստուծոյ. և հաստատեցի կամակցութեամբ մեր եղբարց՝ եթէ ոք առաջնորդաց 'ի ընծայից եկեղեցւոյս խորհէ և զվաստակս բազմաց և զտուրս հոգւոց իւրն համարի՝ որչափ աստուած աւրհնած, (նա) այնչափ նզոված. և որ կաշառաւք հայի կրկին նզոված է,,:

'Ի ներքոյ վերոյ գրելոյն:

„Կամաւն աստուծոյ մեք հառիճեցիքս հայր Պետրոս և այլ եղբարքս սահմանեցաք 'ի տաւնի տապանակին իմ մատուռն պատարագել զՔրիս-տոս յանուն Գրիգորոյ փոխանակ արդեանց ի-րոց. որք կատարեն աւրհնեալ եղիցին և որք ոչ նզովս ժառանգեսցեն. Թիւ ոխա (1192),,:

'Ի ներքոյ վերոյգրելոյ արձանին.

„'Ի թուին ոխե (1196). և յառաջնորդութեան հաւր Պետրոսի, կամաւն աստուծոյ ես աստուա-ծատուր ետու զիմ հայրենագին սորա Սրուձի վերի խաչկանց այգի և զնծայս ետու սուրբ Գր-րիգորիս և սուրբ Ածածնիս. և հայր առաջնորդ սուրբ ուխտիս խոստացան ինձ 'ի տարւոջն Բ աւր ժամ. Ա աւրն իմ հայր Նշիկին և Ան իմ մայր Նր-վարթին. և թէ ոք զլանայ և չառնեն 'ի տաւնի սրբ-բոյն Սարգսի, նզովեսցին յաստուծոյ. և որք կա-տարեն աւրհնին յաստուծոյ,,:

Նոյն յայն հողին նոյն արձանագիր.

„Ես Գրիգոր վարդապետս որդի տուտայ ետու զսուրբ նշանս. լուսոյ կրկին պահարանով

երիս մասն զգրաւականս ոգւոյ իմոյ 'ի սուրբ ա̃ծածինս հաւրձայոր. պարտական են ինձ զմխաբանութեան դ̃ քառասուն և զզատկի ճրագալուցին ս̃ ժամարար՝ որչափ ուխտս 'ի հաստատութե̃ է. և որ հանէ զսա 'ի սուրբ ուխտէս զինչ և իցէ պատճառանաւք, նզոված է յաստուծոյ և յամենայն սրբոց, ամէն,,

,, Նուաւ 'ի ձեռն հաւր Պետրոսի. որք ընակէք 'ի սմ̃ տեղիս և կարդայք զգիրս, Պետրոսի և հոգւոյ և մարմնոյ ծնողաց իւրոց և եղբարց թողութիւն խնդրեցէք 'ի Տ̃է աղաչեմ,,

'Ի գաւթին՝ յորմն արևելեան.

,, Աստուածասէր և արդիւնաւոր պատրոնն Հիջուպ Վահրամ շինեաց զվայելուչ ժամատունս և եբեր զմիւս ջուրս յիշատակ հոգւոյ իւրոյ և զաւակաց իւրոց և ամուսնոյ իւրոյ Խամարին. և տէր Համազասպ և հայր Յովհաննէս միաբանաւքս 'ի խնդրոյ դստերն իւրոյ Խաթունին հաստատեցին 'ի տաւնի Աւետման Թագաւորին զմիայն եկեղեցիքս յանուն Խամարին պատարագել զՔրիստոս անխափան. կատարիչքն աւրհնին աստուծոյ, թվ. . . ,,

'Ի հարաւակողմն եկեղեցւոյս մինչև ցզաւրնթացի ձորն լեալ է կոփածոյ քարամբք շինուած ինչ մեծանիստ և սիւնազարդ. որոյ արևմտեան և հիւսիսային որմունք կան 'ի կանգուն, և կամարք ինչ հանդերձ սեամբքն. իսկ այլն ամենայն խոնարհեալ անկեալ դնին առ տեղեաւն. որ թուի լինել կամ առաջնորդարանն, և կամ ուսումնարան իսկ. որովհետև 'ի ժամանակս ինչ 'ի վանորայս Տ̃ Երակայ ծաղկեցաւ արհեստն ուսումնականութեանն,,. որպէս նկատի 'ի ծանօթութեց ինձ պատահելոց՝ աստ ուսուցանէր և հռչակաւոր Սա-

փաննոս վարդապետն քոլթենաւորն կոչեցեալ . առ որ ուսաւ սուրբ հայրապետն Յովհան ուձնեցի 'ի Տաշրաց՝ ըը Վարդանայ բարձրբերդեցւոյ 'ի գովեստն սրբոյ հայրապետին :

Ընդարձակ արձանագրութեան անդ յիշատակի և անուն ամրոցի . այլ ըստ օրինի ամրոցաց հաստատուն պարիսպ շուրջ զեկեղեցեաւս ոչ տեսանի , բայց եթէ հասարակ պարիսպ ինչ ըստ այլոց մենաստանաց՝ որոց հետք երևին արդէն . այլ գուցէ թէ զայն ասէ զտանեաց տաճարին և գաւթին . քանզի կատար չորեքկուսի որմոցն նոցա բարձր է լեալ քան զտանիքն իբրև գիրկ մի 'ի նոյն կոփածոյ քարանցն , այլ այժմ այն մեծ մասամբ քակեալ՝ կայ միայն արևելեան մասն . ուստի և յիշատակեցաւ 'ի վերոյ լուսամուտ մի անդր քան ըզտանիքս տաճարին : Այժմ այս մենաստան է 'ի շէնութեան :

## Մոլաշէն եկեղեցի 'ի Շիրակ գաւառի .

569 , Այս եկեղեցի կամ մենաստան՝ յորում էին շիրիմք հանգստեան նախնեաց Վահրամայ պահլաւունւոյ իշխանաց իշխանի հօրեղբօր Գրիգորի մագիստրոսի , է արդարև 'ի Շիրակ գաւառի , բայց ոչ առ ափն Կարուց գետոյ՝ որպէս յիշատակի 'ի Ճանապարհորդութեան Լեհաստանի , համար 116 , այլ 'ի վերայ միւս վտակին Ախուրեան գետոյ՝ յարևելեան եզեր 'ի ձորամիջի անդ 'ի դիւր տեղւոջ . և գիւղն որ առ սովաւ , կոչի այժմ 'ի բարբառ այլազգեաց Ղանլըճա . և բընակիչքն են 'ի հայ գաղթականաց 'ի սահմանէն Կարուց . հեռի է այս տեղի յարևմուտս հիւսիսոյ յԱլէքսանդրապօլոյ ( կէօմրէ ) ժամ և կէս : Եկեղեցին է կառուցեալ հաստատ շինուածովք 'ի սրբատաշ քարանց՝ բաւականաչափ բարձր և

միջակ մեծութեամբ առանց սեան. ունի կաթուղիկէ 'ի միջավայր տանեացն վայելչաշուք և զմի սեղան և զերկուս աւանդատունս և զմի դուռն ընդ արևմուտս. կայ եկեղեցին յամբողջութե, այլ գաւիթ նորա խոնարհեալ իջեալ է բոլորովին. աստ աղօթեն գաղթական բնակիչքն։

Արձանագրութիւն շինութեան եկեղեցւոյս գտանի 'ի հարաւային որմն նորա արտաքուստ՝ յայս ձև օրինակի.

,, Շնորհիւն աստուծոյ ես Սահրամ իշխանաց իշխան և անթիպատ պատրիկ որդի Գրիգորի իշխանի հայոց մեծաց 'ի ցեղէն պահլաւունի, և 'ի զարմից սբյն Գրիգորի հայոց լուսաւորչի. որ յաղագս 'ի Քրիստոս յուսոյն հիմնադրեցի զսուրբ և զտիեզերական ուխտս Մարմաշէն՝ ընկեալ 'ի հնէ, թուականին հայոց (988) յաւուրս Սմբատայ որդւոյ Աշոտոյ հայոց թագաւորի մինչև 'ի ժամանակս Յովհաննիսի որդւոյ Գագկայ հայոց շահանշահի առն իմաստնոյ շինողի և խաղաղարարի. և 'ի թուականիս հայոց ՆՀԸ. և կատարեցաք մեծաւ ջանիւ և բազում ծախիւք ես և մայր իմ Շուշիկ հայոց տիկնաց տիկին, և եղբարք իմ Վասակ իշխանաց իշխան՝ որ նահատակեցաւ 'ի թուրքաց պատերազմի, և Ապլխարիպ հայոց մարզպան և մանուկն Համզէ. որք էաք ամենայն տամբ և տոհմիւ հաւատարիմք տերանց մերոց, և նահատակէլ 'ի վերայ տանս հայոց աշխատութեամբ և արեամբ մերով և որդւոց մերոց և գանձուց առատութեամբ և ամենայն հնարիւք խնդրէաք զխաղաղութիւն աշխարհիս և զհաստատութիւն եկեղեցեաց. շինեցաք և այլ բազում եկեղեցիս և վանորայս. բայց զտեղի հանգստեանս մերոյ առաւել պատուով մեծացուցաք և լիացուցաք ամենայն գոյիւք՝ լերամբք

և դաշտաւք. աւանդեցաք ՚ի սա գեղս և ագա-րակս գանձագրնս՝ զՆագարանի գեղ և զԽուր ա-գարակն, զՊոդխան և զՊորտանգն, զՄարգէծ, և զՇաստաղասմանէն և զՍոզնկայն, ՚ի Մշակունի այգիք և Գ ջրաղացս, և Բ ջաղաց ՚ի Պոդս, ՚ի Մշտրկէ այգի, ՚ի Կարբոյ դաշտի այգի, ՚ի Սերկեւլի այ-գի, ՚ի Կ ժան այգի, ՚ի Սինենի այգիք. ՚ի Մշնի տներ և կղպականի. և զարդարեցաք զսա ամե-նայն կազմութբ ՚ի միշտաստ յաւիտենից մեզ և որդւոց մերոց. և կարգեցաք ՚ի ձեռն տր հաւր Ներսիսի, և որ զկնի յաջորդեցաւ Սոսթենէս Ներքին որդիացեալ. և փոխարէն հատուցման ըն-կալեալ մեր ՚ի ժառանգաւորաց սուրբ ուխտի տարին Ղ քառասունք անխափան մինչև ՚ի գա-լուստն Քրիստոսի։ Արդ՝ եթէ ոք ՚ի մերոց կամ յաւտարաց աւագ որ զմեր տուրս ՚ի սուրբ ուխ-տէս պակասեցանէ, կամ հայր որ զմեր ժամս խա-փանէ, ինքն որոշեալ լիցի ՚ի Քրիստոսէ, և դա-տող նորա սատանայ, և մի տեսցէ զփառս Աս-տուծոյ. իսկ որք հաստատուն պահեն զաւանդս մեր, աւրհնեալ եղիցին ,,։

՚Ի նոյն տեղին՝ ՚ի հիւսիսարևմտեան ծերոյ գրեալ արձա-նին գրի և այս արձանագիր.

,, Շնորհիւն Աստուծոյ ես Մարխամ ափ-խազաց և Հայոց թագուհի դուստր մեծին Սե-նեքերիմայ, և թոռն Գագկայ Հայոց արքայի, որ ետու զՀարուս ՚ի տր և ՚ի տիեզերական ուխտս Մարմաշէն առաջնորդութեամբ հաւր Սոսթե-նիսի վասն Գագկայ իմ պապոյն մեղաց թողու-թեան և Կատային իմ հանկան. և հատուցումն բարի ընկալայ ՚ի սրբոցս՝ զսեանն եկեղեցին զտր Պետրոս ՚ի Քրիստոս պատարագաւ զտարին ող-ջոյն կատային իմ հանկանն մինչև ՚ի գալուստն

Քրիստոսի: Արդ՝ եթէ ոք ՚ի մեծամեծաց կամ ՚ի փոքունց՝ ՚ի Հայոց կամ ՚ի Վրաց՝ որ այս գրոյս հակառակս, և զիմ գիւղն զՀարուս ՚ի յայս ուխտէս հանէ, ինքն եղցէ ՚ի կենացն աստուծոյ և պարտական լիցի արեանն Քրիստոսի, և մի՛ տեսցէ զփառս աստուծոյ. իսկ որ հաստատուն պահեն զաւանդս մեր՝ աւրհնեալ եղիցին ,,:

՚Ի Հեթմեանցն որմն անդր արտաքուստ դնի այն որ ջանադիր վերանորոգութեան եկեղեցւոյս:

,,՚Ի ժամանակս բարեպաշտից և ա̅ծասիրաց պարոնաց մերոց աթաբակ Իւանէի և մանդատորթախուցէ Շահնշահի. հրամանաւ սոցին վերատին նորոգումն եղև հրաշափառ տաճարիս Աստուածածնիս սրբոյ կաթուղիկէին մարմարոնեայ շինուածովք ՚ի ձեռն Ապուղամրի մագիստրոսի, տէր Գրիգորոյ արհի եպիսկոպոսի, և հարազատ Մուխարգիլի Թոռանցն վահրամայ իշխնաց իշխանին ՚ի զարմից շառաւիղէ սրբոյն Գրիգորի շինողի ՚ի հիմանց մեծաւ տենչմամբ և յուսով, և բազմագումար նորանոր ստացուածովք. այսինքն. յոլով գիւղորայս, այգեստանս, կուղպակս ՚ի քաղաքն Անի և ջաղացս Գ̄, որոց արձանագիրն ցուցանէ մի ըստ միոջէ. և փարթամացուցեալ զվանս ամենայն գոյիւ առ ՚ի լնուլ և առաւելուլ զպէտս կարևորս զիւրեանց և զեկաց. այլև ունէր սուրբն ժամանակս ոչ սակաւ. յետոյ աւերեալ յանաւրինաց և զվանս գեւղ արարեալ, և զկաթուղիկէն բերդանման ամրոց. և կայր ՚ի խաւարի, ՚ի սգաւորութեան՝ զրկեալ յամենայն գոյիցն մինչև ցաւուրս յայսոսիկ: իսկ ՚ի ոհդ. թուականիս հայոց (1225). քաջ և արի զաւրականն Քրիստոսի սիրելի եղբայրն իմ Խարիպն՝ իմով կամակցութեամբ խորհուրդ բարի ՚ի միտ արկեալ տղաւեալ զա՚ի

զաղէր մթնազգածութենէ հատուցանել յառա_
ջին փառաւորութիւնն, և հանեալ աղօթքս զշէ_
նականսն, և եղև վանք քահանայից կրօնաւո_
րացն հաճոյացելոց այ· հուսկ յետոյ զարդարեցաք
զսա սպասիւք, պայծառազգեստիւ սրբութեամբ,
ոսկեղէն, արծաթեղէն, հին և նոր կտակարանաւք
եկեղեցականաւք· և ընծայեցաք 'ի սմա նուէր
զմեր այրն և զՍ'ջատ գիւղն, և նոր 'ի նորոյ վանի_
ցըս ջաղացս վերաշինեցաք, ուստի անուանի տէր_
ղէն· յայսկոյս գետոյն և յայնկոյս գետոյն յՍ'նի
որ կամուրջէն 'ի վայր և 'ի վեր զխոտ և զջուրն
և զհողն· և զորինչ 'ի սկզբանէ ունիմք 'ի քաղաքի
'ի մեր պապէն հայրենիք ստացուածք մեզ ·նախ
զսուրբ Ստեփաննոս եկեղեցին բոլոր ժողովըր_
դեամբ· և երկու այգի 'ի Սարմէտ' որ 'ի նախ_
նեաց մերոց մեզ էր հասեալ, միաւորեցաք զվե_
րին վանքն մեծ վանիցս իւր ամենայն ստացուա_
ծովք, և լիցի հրամանաւ միոյ առաջնորդի 1· այս_
քանս կատարեցաւ, ընդ այն ժամանակս գեղեց_
կադեղ եղբայրն իմ Պարիսն մագիստրոսն գո_
վեալն յամենայն լեզուաց մարտիրոսացաւ 'ի պա_
տերազմի անաւրինաց, և միայն մնացի ես Գրիգոր
եղկելիս· և զմարմին նորա բերեալ թաղեցաք առ
դրան սրբոյ կաթուղիկէիս մերձ առն մերոյ Ահ_
րամ իշխանին · փոխարէն հատուցանէք սպասա_
ւորք սորա ընդ մերոյ արդեան' զոր արարաք զկա_

1 Իսկ գրուածն տէր Յօհան և Խաչատուր քահանա_
յից' ըստ այսմ: ,, Այնչ առ այս այսպէս կատարեցաւ առ
ժամայն գեղեցիկ եղբայրն իմ Խարիփ · · · · թաղեցաք առ
դրան սրբոյ կաթողիկէիս մերձ առ նշխարհս հաւրն մերոյ
Ահրամայ իշխանի և փոխարէն հատուցին · · · ընդ մերոյ
արդեանցս զոր արարաք զկաթողիկէիս շառադ խորանին պա_
տարագն յանուն նահատակին Սրբ Խարիփին կատարել զմ ամառ
'ի ներքևանէ և այլն,, 'ի 118 համար ձանձրհորդուոյ էջ հատուածի:

Թողէկէիս զաւագ խորան յանուն Նահատակիս Վր-կային Վ՚րխատոսի, զաւր Նահատակին կատարել յամենայն յամի ՚ի սկզբանէ տարւոյն մինչև ցկատարումն տարւոյն՝ յայսմհետէ մինչ ՚ի ծագումն որդւոյն աստուծոյ. որ ոք խափանէ կամ շորթել ջանայ յընչից եկեղեցւոյս, որոշեսցի ՚ի փառացն աստուծոյ և զրկեսցի ՚ի մշտնջենական կենացն. կատարիչ գրոյս աւրհնեսցի յաստուծոյ և ՚ի սրբոցն, Նորոգի և ՚ի մարմին, ամէն։

Երեք ինչ նշանակին յարձանագրութե աստ ա̄, մարմարոնեայ շինուածք՝ որոց հետք չերևին այժմ բնաւին, այլ գուցէ յառաջագոյն լեալ իցեն մարմարոնեայք՝ խաչկալ սեղանոյն սրբոյ և ինչ ինչ շէնք ՚ի խոնարհեալ գաւթի նորա, և կամ յերկոսին սիւնաձև փոքրիկ տաճարսն (որ շինէ)՝ յորոց անուանեալ իցէ ըստ հաւանական մտաց այս տաճար Մարմաշէն, կամ ըստ ոմանց՝ Մարմարո-շէն։ բ̄, վերին վանք. տեղի սոյն վանիցս կայ տակաւին և է բարձր քան զմիշատակեալն Մարմաշէն ՚ի լանջս նոյն կողման ձորոյն յարևելս հիւսիսոյ. և արևելեան որմն ինչ նորա կայ ՚ի կանգուն և հեռի է ՚ի մեծ եկեղեցւոյն իբրև ձիարշաւ մի ընդ զառ ՚ի վեր։ գ̄, Այրն և զԱցատ գիւղն, ցուցանեն բնակիչքն ՚ի հիւսիսոյ կողմանէ վերին վանաց ըշմեծ այր մի (մաղարայ) կարի հարկաւոր ՚ի պէտս բնակչացն. և Ացատ գիւղն՝ նոյն է ընդ Ացատաղամանէ գեղջն՝ որ յարձանագրութեան անդ Վահրամայ իշխանաց իշխանի։

Յերկոսին կողմանս մեծի եկեղեցւոյս Մարմաշինոյ ընդ հարաւ և ընդ հիւսիս կարի մերձ նմին՝ են երկու փոքրիկ մատուռք սրածայր կաթուղէկէիւք. որոց արտաքին տաշածու քարինք բոլորովին քակեալ յայլազգեաց՝ բարձեալ են այլուր ՚ի պէտս այլ շինութեանց ըստ հաւասարի պամութեան բնակչացն. ուստի եթէ արձանագրու-

թիւնք լեալ իցեն 'ի նոսա, ընդ այնց քարանց անհետացեալ են իսպառ: Եւ զի գուցէ սեան եկեղեցի յանուն սրբոյն Պետրոսի՝ որ յարձանագիրն Մարիամ Թագուհւոյ, իցէ մին յայսց երկուց մատրանց՝ որք են արդարեւ սիւնաձեւ շինուածք.

Չիք ինչ հետք պարսպի կամ սենեկաց մենաստանիս. քանզի յոլովակի փոփոխութիւնք այլազգի բնակչաց ընդ ժամանակս ժամանակս անհետացուցեալ են զայնպիսի շինուածս.

Առաջնորդք կամ վանահարք մենաստանիս.

570. Յիշատակի ումն նախ քան զԵրեմիա 'ի կոնդակին Յօհաննավանաց որ 'ի Զաքարիա սարկաւագէ՝ որ ոչ յիշէ զանունն:

Երեմիա՝ որ 'ի վէր անդր յարձանագրութեան, հրաժարեալ 'ի պարտաւորութենէ վանահայրութեան եւ փոխանակ իւր կացուցեալ ըզՍոսթենէս՝ գնացեալ կրօնաւորի 'ի վանսն անդ Յօհաննու որ 'ի կարբի. եւ անդ ընկալեալ զվախճան ամփոփի անդէն. յորոյ վերայ կանգնեն արձան խաչի՝ որ ունէր գիր այսպիսի ըստ յառաջբերելոյ նոյն յիշեալ սարկաւագի.

„ՆՁԲ թուին (1033).

„Ես հայր Երեմիա՝ առաջնորդ Սբ ուխտին Մարմաշենու, սիրեցի զվարս միայնութեան. աւանդեցի զվերակացութիւն ուխտին իմոյ անդրանկին իմում Սոսթենէսի. եւ ես եկեալ ընակեցայ յանապատի աստ եւ 'ի տեղւոջս ընկալայ զփոխումն: Որդ՝ աղաչեմ յիշեսջիք 'ի Քս„.

Զկնի՝ նոյն Սոսթենէս. առ սա գրեաց Գրիգոր մագիստրոս զերկուս թուղթս. առաջնումն խօսի զնմանէ իբրեւ զառաքինի եւ զսուրբ առնէ. եւ երկրորդաւն առաքէ զոսկի մատանի

ծանրագին յակինթ ակամբ՝ պարգև առ ինքն 'ի Մոնոմախ կայսերէ ։ Գովութեամբ խօսին զմանէ և այլ արձանագիրք ։

ՄԵՆԱՍՏԱՆ ՎԻՐԱՊԻՆ ԱՐՏԱՇԱՏՈՒ ․

571 , Նա վիրապ խորագոյն յԱրտաշատ քաղաքի շինեալ 'ի հրամանէ թագաւորաց հայոց վն չարագործ և մահապարտ անձանց ․ տեղին 'ի հիւսիսային եզեր երասխայ հեռի յԱրտաշատու ը՟ հարաւ իբրև չորից ժամուց՝ 'ի վերայ արևելեան բլրոյ քաղաքին , էր կարի խորագոյն՝ ուսափ և յատակ նորա տղմուտ ․ ուր և արկաւ մեծն Գրիգոր պարթև , զի մեռցի անդ անարև ․ զորմէ ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ ԸՍՏ ՅԵՏԱԳՐԻՆ ․ ,, Արդ՝ իբրև այնմ եւս հասանէր թագաւորն (Տրդատ) 'ի վերայ իրացն՝ թէ արդարև որդի Անակայ պարթևի է՝ որ սպան իսկ զԽոսրով հայրն նորա , հրաման տայր կապեալ ոտիւք և կապեալ ձեռաւք և կապեալ պարանոցաւ խաղացուցանել զնա յԱրարատ գաւառ և տալ զնա 'ի դղեակ բերդին Արտաշատ քաղաքի և իջուցանել զնա 'ի վիրապն 'ի ներքին՝ որ անհնարին էր խորութբ , մինչև անդէն մեռցի ։ . . . Եւ զայն ժգ ամ՝ որ եղև Գրիգորիոս 'ի բերդին , 'ի բանտին և 'ի խորվիրապին . . . . ուր ընկեցին զնա , պահեալ լինէր նա կենդանի շնորհաւք տեառն իւրոյ ․ իսկ զայլ մարդիկ որ միանգամ էր իջուցեալ անդր , ամենեքեան մեռեալ էին վասն դժնդակ չարաչուք դառնութեան տեղւոյն՝ վասն կարակտում տղմոյն և աւձախառն բնակութեան և խորութեանն ․ վասն չարագործաց իսկ էր շինեալ զայն տեղի և 'ի սպանումն մահապարտաց ամենայն հայոց ,, ։

Նա վիրապ մահապարտաց յԱրտաշատ քաղաքի յարևելեան լանջս բլրոյն՝ որպէս այժմ

տեսանի, չէ՛ այնքան խորագոյն որպէս յայտնեն Ագաթանգեղոս և այլք. քանզի այժմեան խորութիւն նր̃ 'ի յատակէ եկեղեցւոյն՝ որ 'ի վերայ նր̃, ցյատակ վիրապին է քսան և հինգ աստիճանաց սանդղոց ուղղակի 'ի խոնարհ, և յիսուն ոտնաչափ ընդարձակութիւն բոլորաձև շինուածոյն 'ի ներքուստ. այլ որպէս երևի կիսովչափ և աւելի ևս լցեալ են զայն հողով. զի յատակ նորա ը̃ մտաց պատմութեան՝ էր տղմուտ և կարի խոնաւ. և այս ո՛չ լինէր՝ թէ չէ՛ր վիրապն այն խորացեալ գէ՛թ ցհաւասարութիւն ստորակայ դաշտին. իսկ այժմեան յատակ նորա գտանի 'ի կիսաբաժնի անդ լանջի բլրոյն և է բարձր յերեսաց դաշտին իբրև 15, գազ պարսկային:

Նոյն վիրապ մահապարտաց զկնի ելանելոյ անտի սրբոյն Գրիգորի լուսաւորչի և ընդհանուր լուսաւորութեան հայաստան աշխարհի, պատուեցաւ 'ի հաւատացելոց ընդ այլ նշանաւոր և սրբ̃ տեղեաց առ 'ի մշտնջենաւորել զյիշատակն երեքտասանամեայ տքնութեան և վաստակոց սրբոյ հօրն մեծի. յորոյ վերայ թերևս շինեցաւ և եկեղեցի ընդ այլ եկեղեցեացն Արտաշատու՝ զորս կործանեցին ընդ քաղաքին զօրքն Է, Շապհոյ արքային պարսից. այլ անդրէն նորոգեաց զեկեղեցին Մահան մամիկոնեան որդի Համայեկայ. որպէս գրէ Մարտան. ,, Իսկ Մահան շինեաց զեկեղեցին Արտաշատու զաւերեալն 'ի պարսից,,:

Զկնի ապա Գ̃, Ներսէս կաթուղիկոս շինող անուանեալ՝ յետ յաջորդելոյ յԱթոռ հայրապետութեանն, տայ կառուցանել զեկեղեցի և 'ի վերայ այսր Խոր վիրապի Արտաշատու, որպէս Յովհաննէս Գ̃, կաթողիկոսն. ,, Զկնի ապա շինէ տաճար սրբութեան և 'ի վերայ վիրապի սրբոյն Գրիգորի՝ ուր 'ի մէջ թունաւորացն թաղեալ առաքելանմանւէր այրն աստուածոյ, զկամակոր վիշապին ջախջա-

խեաց զգլուխս,,:

Ի շինութենէ աստի՝ որ եղև անդ ՚ի մէջ Էրդ դարուն մինչև ցաւերումն նորա՝ թէ որչափ միջոցք անցին, չէ՛ յայտ. այլ միայն այսքան տեղեկութիւն գոյ՝ թէ շինուածք այսր Գ՛ Ներսէս կաթուղիկոսի ո՛չ տևեցին ընդերկար:

Այժմեան շէնք մենաստանիս՝ եթէ երկուց եկեղեցեացն և եթէ պարսպին և սենեկացն են աշխատութեամբ Դաւիթ վարդապետի ուրումն տփխիսեցւոյ՝ որ վախճանեցաւ յամի 1695. որոյ ահա՛ արձանագիր տապանին փորագրեալ ՚ի վէմ շիրմին եկեղեցւոյն որ ՚ի վերայ վիրապին մեծի ՚ի հիւսիսոյ նորա արտաքուստ ընդ այսմ օրինակի:

,, Ի տապանի աստ ամփոփի՝
մարմին Դաւիթ վարդապետի.
որ էր վարուք առաքինի՝
կենօք մաքուր բարուք բարի.
մեծահաւատ քաջ և արի՝
խոնարհամիտ հեզահոգի.
ազնուատոհմ յազգէ վրացի՝
սնեալ ՚ի սուրբ Էջմիածնի.
շինող, հիմնող սրբո ուխտիս՝
և նորոգող սրբոյ վանիցս.
եկեղեցեացս և պարսպիս՝
կենդանաթաղ գերեզմանիս.
լուսաւորչին մերոյ ազգիս՝
որ վճարեաց զկեանս աշխարհիս.
վերափոխեալ ՚ի յերկնայինս՝
՚ի հայկական թուականին.
ռճխ եւ դ ամին՝ (1695)
որ զօրէնի կիւրակէին.
փետրվարի ժ երրորդին՝
որք վայելէք յարդիւնս սորին,
զսա յիշեսջի՛ք առ ՚ի բարին՝
՚ի ժամ սրբոյ պատարագին.

յաղօթս և յերգս ածային,,:

Մեր որմով եկեղեցւոյս 'ի ներքոյ սոյն արձանագրութե յարտաքին կուսէ աւանդեն ծերունիք թէ՝ էր գերեզման սոյն յիշեալ Պօղոս վարդապետի՝ որոյ և վէմ տապանին իւր քառասուն ամօք յառաջ գտանէր 'ի վերայ, այլ յանբնակ լինելն մենաստանիս 'ի միաբանից՝ այլազգիք գեղջն բեկեալ և անհետացուցեալ են,

Այն այս յիշեալ եկեղեցի 'ի կոփածոյ քարանց օրոցաձև, փոքրադիր և անսիւն և է կից յորմէ հարաւային պարսպի·ոնի [illegible] 'ի [illegible]:

,, 'Ի թուին ՌՃԺ, և ... յաւուրս Յակոբ հայրապետին, 'ի յառաջնորդութեան Տէր Պօղոս վարդապետին նորոգեցին զսուրբ եկեղեցիքս խօճայ Ռամօնն Սգուլեցի, և խօճայ Մաթանդիլն Թիֆլիզեցի, յիշեցէ՛ք 'ի Քրիստոս աստուած,,:

Ի ճրապն մեծ անկանի ուղղակի 'ի ներքոյ բեմի սեղանոյ եկեղեցւոյս և մօտ նորա է ընդ հարաւային աստիճանօք բեմին՝ ամրացեալ փոքր դրամբ. ընդ որ մտեալ իջանեն 'ի վերայն՝ յորում գոյ տեղի պատարագելոյ և կանգնեալ 'ի պատուհանի անդ արևելեան՝ վէմքար. 'ի հար[illegible]

,, Յիշեալ լիցին առաջի Քրիստոսի խօճայ Սիմոն և իւր Ե՛, ամուսին գուլում խաթունին իւր ննջեցեալքն՝ որք նորոգեցին սուրբ վիրապս·թըւին ՌՃԺ (1661),,:

Պնի աստէն 'ի մէջ վիրապիս այսորիկ որձաքար փայլուն վէմ մի 'ի գոյն մութն դեղնաշորթ՝ յորոյ վերայ մաշուածք, տեղիք իբրև երկուց ծնգաց. զոր աւանդութեամբ հաստատեն գործեալ այնպէս 'ի յաճախ ծնրադրութենէ սբ

հօրն մերոյ մեծին Գրիգորի յերեքտասանամեայ ժամանակին ։

Ի մէջ տաճարիս ՚ի ժողովրդանոցի յարևմտակողմն դրան է գետնափոր տեղի ինչ · զորմէ աւանդեն լինել տեղի նշխարաց մեծին Արդանայ բարձրբերդեցւոյ և Ներսեսի ուրումն եպիսկոպոսի ՚ի սահմանացն տարօնոյ՝ զորս յառաջ բերէ վերոյիշեալ Պաւլիթ վարդապետ առաջնորդ վանացս ՚ի շրջաբերական թուղթս իւր՝ որ գտանի օրինակեալ ՚ի ձեռագիր յայսմաւուրս ինչ· յորում խօսի և զնշխարաց սրբոյն Գրիգորի լուսաւորչի՝ որպէս թէ իցէ ՚ի Խորվիրապի աստ, որ հակառակի ընդ հանուր պարզ իմացութեան գըրուածոց պատմութեանց ազգիս՝ զորմէ (335)· որպէս վս̅ լուսաւորչի, նոյնպէս և վասն վերոյիշեալ երկուց անձանցն · այլ ստուգութի̅ աւանդեն պատմիչք լինել յայսմ տեղւոջ նշխարաց գ̅, Ներսեսի կաթուղիկոսի՝ ըստ պատմելոյ Չամչեան հայր Միքայէլի · հատոր Բ, երես 360 ։

Իսկ միւս եկեղեցին՝ ուր կատարի սովորական ժամերգութի̅ն, է կառուցեալ ՚ի միջին տեղւոջ կառակուսի պարսպին՝ նոյնպէս ՚ի խարտեալ քարանց · և մեծ է դրութեամբ քան զայն որ ՚ի վերայ վիրապին և ունի կաթուղիկէ (զանգակատուն) և գաւիթ վայելուչ, զմի սեղան, զերկուս աւանդատունս և զմի դուռն յարևմտից ։

Կառակուսի պարիսպ մենաստանիս հիւսեալ է ՚ի հասարակ քարանց և ՚ի կրոյ և է բաւականաչափ բարձր · և ունի հաստատուն բրգունս, զմի դուռն մեծ ընդ արևելս · ամենայն հարկաւորեալ շէնք մենաստանիս են ՚ի մէջ պարսպին՝ է՛ զի կամարայարկ և է՛ զի փայտածածք ։

Արտաքոյ պարսպին յարևմուտս նորա ՚ի լանջս արևելակողման բլրոյն են քանի մի ապառաժ վէմք կից յիրեարս · ՚ի վերայ միոյն են նշանք

երկուց քառաթև խաչից դրոշմեալք ՚ի վէմ անդր հնագոյն ձևացութեամբ. և աւանդեն ոմանք լինել այնմ՝ Օրբէլեայ խաչ. զոր Բարդուղիմէոս և Յուդա Թադէոս ՚ի հանդիպումն միմեանց ՚ի բըլրին Արտաշատու և յօթևն անդէն զմի գիշեր առ վիմաւն՝ դրոշմեցին զայն և անուանեցին՝ Օրբէլեայ խաչ. Այլ պատմութիւնն դնէ զայն բլուր արտաշու կամ արտաշատու մերձ ՚ի յԱղեակ՝ որ կարի բացակայ է յարևելս հարաւոյ յԱրտաշատ քաղաքէ աստի. նա ՚ի սահմանին պարսկահայոց և սա ՚ի դաշտին Դուին քաղաքի յԱրարատ. թէպէտ և ամա լինել այն ոչ երևի այնքան տարադէպ՝ յաղագս հին ձևացութեան նշանացն, կոչման բլրոյն, անուան Արտաշատու և յարմար ճանապարհորդութեան նոցին Առաքելոցն:

572, Առաջնորդք մենաստանիս յիշատակեալք ՚ի գիրս. Անտոն եպիսկոպոս յամի 1441, որ գտաւ ՚ի ժողովն ընտրութեան Կիրակոսի վերապեցւոյ ՚ի նորոգութեան աթոռոյ Էջմիածնի: Մանուէլ եպիսկոպոս յամի 1603, որ ընդ Դաւթայ կաթուղիկոսի մնաց ՚ի հայաստան: Եւ Դաւիթ վարդապետ տփխիսեցի վերջին նորոգող մենաստանիս և եկեղեցեացն՝ յամի իբր 1661: Այժմեան ներկայ վանահայր մենաստանիս՝ Գալուստ վարդապետ դարունեցի ՚ի Կոգովիտ գաւառէ:

## Մենաստան Աշխէնեայ, կամ ՚ի Դեղձարուտայ.

573, Այս մենաստան ՚ի ստորոտս արևմտեան հարաւոյ լերին Գեղամայ, հեռի ՚ի գիւղաքաղաքէն գառնւոյ ընդ յարևելս հիւսիսոյ իբրև ժամ և կէս՝ ՚ի սկսուածս անդ ձորոյն գառնւոյ՝ պատեալ յարևելից, յարևմտից և ՚ի հիւսիսոյ բարձր լերամբք. և կարի մերձ անցանէ յարևելից նորա գետակն կարկաչասահ ընթացիւք զառընդթափ

զգլխովք մեծամեծ վիմաց և քարանց ։ Նորբեմն ը, Յովհաննէս կաթուղիկոս խոյս տուեալ 'ի բռնութենէ Նսրա ոստիկանի հագարացւոյ՝ գայ յայս մենաստան. և աստ ես չկարացեալ ունել ժոյժ՝ անցանէ 'ի Սևան կղզի. զայս փախստենէ իւրմէ ստորագրէ նա ինքն՝ յայս օրինակ. „ Նյապէս ապա ելեալ 'ի վանաց անտի Մայրեաց՝ 'ի կացրդից սրբոյն Սահակայ՝ որ 'ի ծործորս լերինն Գեղայ 'ի ձորակի միոջ, դէպ ուղիղ գնացաք և ելաք 'ի վերին վանս՝ ուր կայանքն անասնոցն էին. և անտի չուեալ գնացաք 'ի միանձնացելոցն կուսակրօնից միայնարանս՝ որ 'ի Սևան կղզւոջ ,, ։

Այս մենաստան՝ որպէս և վկայեն պատմիչք, է մի 'ի հնագոյն վանորէից հայաստան աշխարհի. ուր որպէս և 'ի վեր անդր ըստ գրուածոցն եկաց 'ի ժամանակս ինչ սուրբ հայրապետն Իսահակ պարթև. բայց չերևին նշմարանք ինչ հին շինուածոց. հիմնադրութի և ինչ ինչ տեղիք շրջապատ պարսպին և եթ նկատին լեալ 'ի հնութեց անտի ։ Ձևակերպութիւն պարսպին քառակուսի, այլ արևմտեան կողմն փոքր ինչ սրացեալ կից է մեծի սեպացեալ վիմի՝ որ բարձրացեալ բարձրութեամբ հայի 'ի մէջ անդր մենաստանին. հիւսիսային որմն նորա է 'ի վերայ բարձր վիմուտ առապարի, իսկ միւսքն 'ի խոնարհ. երկու դրունք են պարսպին՝ մեծն յարևմտեան կողմն մերձ 'ի սեպացեալ վէմն ընդ հարաւ, իսկ փոքրն ը արևելակողմն՝ որ հանէ 'ի գետակն ։

Առաջին տաճարն՝ ուր լինի սովորաբար ժամերգութիւն, է կրկին՝ բոլորովին շինեալ 'ի կոփածոյ քարանց. ներսի տաճարն է առանց սեան բաւականաչափ բարձրութեամբ և ունի 'ի միջավայր տանեացն կաթուղիկէ սրածայր. երկու աւանդատունք են 'ի նմա յերկոսին կողմանս սրբազան սեղանոյն հանդերձ վերնատամբք՝ ընդ

որս մտանեն 'ի բեմն սեղանոյն. հանդէպ այսորիկ աւանդատանց յարեւմտակողմն 'ի մէջ տաճարիս՝ յերկոսին կողմանս արեւմտեան դրան են երկու փոքր մատրունք հանդերձ սիւնազարդ վերնայարկօք. յորս որպէս երեւի աղօթէին իշխանուհիք կամ իշխանազունք Հայաստանի. ուր ելանեն ընդ որմն հիւսեալ սանդղովք քարեայ. ըստ այսմ տեսանի և յինչ ինչ մենաստանս՝ որպէս յեկեղեցին Հառիճոյ վանաց. ունի և զերկուս դրունս մին յարեւմտից և միւսն 'ի հարաւոյ:

Դրսին տաճար՝ այն է, գաւիթ նորա կից այնմ 'ի միասին կառուցեալ՝ մեծագիր քան զայն և է 'ի վերայ չորից միահատոր սեանց. միջոց չորից կամարացն ձգելոց 'ի վերայ սեանց հաւաք գործեալ՝ է բոլորովին քանդակ ընտիր մինչև ցգագաթ կիսաբոլորակ գմբեթին՝ ուր է բոլորակաձև լուսամուտ մեծ. ունի սա զմի դուռն ը̄ արեւմուտս. 'ի մէջ գաւթի աստ յերկոսին կողմանս դրան ներքին տաճարի կանգնեալ կան ընդ որմն 'ի վեր պատուանդանաւ ը̄, ընտիր փորածու մեծամեծ խաչքարինք: Շինութիւն եկեղեցւոյս եղեալ է յամի 1214, որոյ յիշատակագրութեանն արձան գոյնի 'ի վերայ կամարի արեւմտեան դրան ներքին տաճարի արտաքուստ 'ի մէջ գաւթին՝ յայսօրինակ:

,, 'Ի ժամանակս թագաւորազնոյն Զաքարիայի և Իւանէի նորին հարազատի. և որդւոց նոցին Շահնշահին և Աւագին. և յառաջնորդութեան Սարգսի միայնաւորի և աշխատութը̄ եղբարցս շինեցաւ կաթուղիկէս մեծափառ. ոկգ (1214),,:

Հիւսիսային որմն գաւթի տաճարիս է բոլորովին միապաղաղ վէմ մի տաշածու. քանզի 'ի հիւսիսակողմն իսպառ կից եկեղեցւոյս երկայնութեամբ ընդ արեւելս և ընդ արեւմուտս 'ի միջոցս պարսպին և եկեղեցւոյն է վէմ ահագին և

բարձրութեամբ կրկին քան զեկեղեցին. և տեսակ նորա նման տեսակի երկանաքարի. այս վէմ ըստ արտաքին տեսութեանն անհարթ իբրև վիմեայ բլրակ ինչ բնական և է խիկ, այլ մէջ նորա դատարկ գրեա թէ բոլորովին. զի են ՚ի նմա չորք տաճարք. Գ. ՚ի ներքոյ՝ հաւասար միւս ստորադրեալ եկեղեցւոյն և Դ-րդն մեծ ՚ի վերայ այնց երից: Առաջին յերից անտի փորեալ է արդեամբ Պռօշ իշխանին Վասակեան և դուռն նորա ընդ մէջ վերոյիշեալ գաւթի տաճարին՝ ընդ որ սկըսեալ է փորուածն. և ունի լուսամուտ Ը. հարաւ ՚ի բարձանց. մեծութիւն փորածոյ տաճարիս է իբրև քառասուն քառակուսի գազ պարսից. և ունի բեմ և սեղան և խորհրդանոց ՚ի մի և ՚ի նոյն վիմէ անբաժան. ՚ի հիւսիսակողմն ՚ի մէջ տաճարիս ընդ երկայնութիւն նորա՝ իբրև երկու գազ լայնութեամբ է փորածու դատարկ տեղի ինչ ՚ի յատակի տաճարին: ՚Ի հիւսիսային դասէ կղերց ելանէ սևորակ ջուր անախորժ յորդունս՝ որ անցեալ ընդ յատակաւ եկեղեցւոյս և գաւթին երթայ անկանի ՚ի գետակն. յորմն հիւսիսոյ քանդակեալ կան Է. առիւծք դէմ առ դէմ շըղթայակապ. նոյնպէս քանդակեալ և արծիւ մի ՚ի վերայ սաւառնեալ՝ ունելով մագլօք և կոցաւ զթիկանց միոյ յառիւծուց անտի. այլ թէ զինչ դուշակէ՝ չէք ինչ ծանօթութիւն: Հնչտոտոնագրութիւն շինութեան փորածոյ տաճարիս յանուն յիշեալ իշխանին գտանի յորմն հարաւոյ ՚ի ներքսոյ՝ ցայցուքինով:

„՚Ի տէրութեան բարեպաշտ աստուածասէր թագաւորին վրաց Լաշային և Շահնշահի և որդւոյ նորա Զաքարիայ ես Պռօշ որդի Վասակա յազգէն Խաղբակա գանձագին արարի ՚ի տերանց աշխարհիս զմեծահռչակն Այրիվանս լերամբ և դաշտաւ և ամենայն կազմութեամբ՝ որ կայր ՚ի սմա. փորեցի ՚ի վիմէ տուն Աստուծոյ յիշա-

տակ ինձ և որդեաց իմոց և ամուսին իմո Կյութլու խաթունին ,,, (Տէջ տշմ տշլ տէտմ Գերոհ), իմովքն զամէն տվի 'ի դուռն սբ. Գեղարդին վանին,,:

Կից այսմ տաճարի յարևելից են և երկու փոքր տաճարք նմանապէս փորեալք 'ի նոյն վիմի գեղեցկաձև և վայելչազարդ. և հանդոյն վերնոյն բեմքն, ատեանքն, սեղանքն սրբազան խորհրդոյն, լուսամուտքն և այլ հարկաւոր պարագայքն բովանդակ են 'ի մի և 'ի նոյն միապաղաղ վիմէ բոլորովին. դրունք այսոցիկ տաճարացս են յառաջին դասի անդ հիւսիսակողման 'ի մէջ հիւսածու գաւթի տաճարին հանդէպ սեանն արևելեան հիւսիսոյ և չունին զարձանագիր շինութեանն. ուստի թէ յորոց աշխատասիրեալք և յորում ժամանակի՝ չէ՛ յայտ. և գուցէ այս երկու տաճարք լեալ իցեն 'ի վաղուց անտի և յանուն սոցա իսկ անուանեալ իցէ այս մենաստան՝ Մշէճան. քանզի 'ի պարսկի աստ մենաստանիս չե՛ք այլ այնպիսի շէնք բնական կամ արհեստական՝ յոր անուն անուանեալ իցէ այս մենաստան. թէև 'ի բացակայս, մանաւանդ 'ի հարաւոյ 'ի ձորամիջի անդ յարևելեան եզերս գետակին գտանին ինչ ինչ բնական և արհեստական այրք (Տաղարշ):

Չորրորդ տաճարն 'ի նոյն վիմի մեծ քան զերբին և 'ի վերայ տանեաց նոցա՝ նմանապէս փորածու. դուռն նորա արտաքոյ յանկեան արևմտեան հարաւոյ մեծի վիմին. ընդ որ մտեալ և յառաջացեալ իբրև քայլս հինգ մտանէ 'ի տաճարն. փորածու շէնք նորա բովանդակ է 'ի վերայ չորից սեանց՝ ներքնախարսխօք և վերնախարսխօք կամարազարդ յօրինեալ բոլորովին. 'ի միջոցս չորից սեանցն՝ ուր կամարք նոցա միանան, փորեալ է սրածայր իբրև մէջ կամ առաստաղ գմբեթի հանդոյն այլոց կաթուղիկէից տաճարաց և ունի լուսամուտս. ձև նորա կատարեալ քառակուսի՝ այլ

չունի բեմ, սեղան և զայլ հարկաւորս եկեղե-ցւոյ, զի յատակն յամենայն կողմանս ունի զմի և զնոյն հաւասարութիւն ։

Փորել ետ զայս գործ մեծ՝ որդին Պռօշ իշխանի յիշատակելոյն 'ի վեր անդր, Պապակ անուն՝ յիշատակ ինքեան և ամուսնոյն իւրոյ Ռուզուքանայ · որոյ յիշատակագրութիւն արձան գտանի 'ի վերոյ շրջանակի վերին խորանի ուսանն արևելեան հիւսիսոյ՝ [illegible] ·

„ Աւգնականութեամբն Աստուծոյ ես ... Պապաքս որդի Պռօշայ և ամուսին իմ Ռուզուքան փորեցաք զժամատունս յինքնափոր վիմէ յիշատակ հոգոց մերոց և զաւակ մեր անմահ 'ի հալալ արդեանց մերոց · և եղև առաջնորդութեամբ տէր Գրիգորի · Թուին չլէ „ · (1288) ։

Ի վերայ այդր վիմափոր մեծի շինուածոյն 'ի հարաւոյ են և այլ փոքր մատրունք փորեալք 'ի նոյն վիմի յաղագս առանձին պատարագելոյ · նոյնօրինակ փորածոյք և յարևելից՝ հանդէպ արևելեան դրան պարսպին 'ի նոյն մեծի վիմին ։

Յարևմուտս այսոցիկ եկեղեցեաց արտաքուստ կից ընդ պարիսպն 'ի գրկի անդ մեծի սեպացեալ վիմին բաշացելոյն 'ի վերայ մենաստանին, է ոստ ինչ վիմի 'ի հիման նորա անբաժան 'ի նմանէ · այս վիմեայ ոստ է բոլորովին փորածու բաժանեալ 'ի կրկին յարկս՝ ներքին և վերին · և դարձեալ բաժանեալ այնք 'ի փոքր մատրունս՝ յորս են վէմքարինք, սեղանք սրբազան խորհրդոյն և խորհրդանոցք՝ տեղիք պատարագելոյ կրօնաւորաց յառանձնութեան · մեծութիւն իւրաքանչիւր այսոցիկ մատրանց հազիւ պարունակէ զպատարագիչն և զայլ չորս անձինս · 'ի վէմ [illegible] անդ 'ի ներքնատան յարկին հարաւոյ գտանի [illegible]՝ [illegible] ·

„ 'Ի Թուիս չե (1256), նորոգեցաւ սուրբ Աստուածածինս „ ։

Սենեակք կամ ընակարանք միաբան կրօնաւորելոցն են առ հարաւային և արևելեան պարսպաւն. ընակարանն վանահօր կամ առաջնորդի մենաստանիս է հանդէպ հարաւային դրան հիւսածու միջին տաճարի և է կրկնայարկ. եթէ այսորիկ և եթէ այլ սենեակքն են բոլորովին 'ի տաշածոյ և 'ի հասարակ քարանց և 'ի կրոյ՝ հաստատ շինուածովք։

Թէպէտ կարի մե՛րձ է գետակն, այլ հոգացեալ են առաջինիքն և բերեալ ջուր 'ի մենաստանն ընդ երկրաւ կաւակերտ խողովակաւ 'ի հիւսիսոյ կողմանէ. այս ջուր մտեալ 'ի պարիսպն և յաւազան ինչ քարեայ հիւսածու և անտի երկբերան անցիւք յայլ աւազան. և ապա անցեալ զառաջեաւ առաջնորդարանին և անցեալ ընդ պարիսպն քարեայ խողովակաւ՝ մտանէ 'ի փոքրիկ պարտէզն բանջարոյ և ոռոգանէ զայն. այլ այս ճանապարհ ջրոյ խափանեալ գոլով այժմ, բերեն զջուրն 'ի գետոյ անտի ընդ երեսս երկրի՝ որ մըտեալ ընդ արևելեան դուռն պարսպին և անկեալ յառաջին ճանապարհն՝ գնայ ելանէ յայն վերոյիշեալ փոքրիկ պարտէզ։

'Ի մենաստանի աստ պահիւր երբեմն Գեղարդն սուրբ մխեալն 'ի կող կենարարին մերոյ Յիսուսի իբրև 'ի յատկացեալ ինչ տեղւոջ. զորմէ վկայեն՝ աշխարհագրութիւնն Վարդանայ, պատմութիւնն Թովմայի Մեծոբեցւոյ, յիշատակագրութիւնն ծանրակշիռ արծաթեայ պահարանի նոյն սուրբ Գեղարդայ՝ նուիրեալն 'ի վերոյիշեալ Պռոշ իշխանէ և այլ զանազան գրուածք՝ զորս տե՛ս յա̃, հատոր՝ (42). այլ թէ յորում ժամանակի եդաւ յայս մենաստան և յորում միջոցի բերաւ անտի 'ի սուրբ այս Կաթուղիկէ եկեղեցի Վաղարշապատու, չէ՛ք ինչ որոշ ծանօթութիւն. բայց 'ի կոնդակաց կաթուղիկոսաց տեսանի լինել նոյն

սրբութեան գործեաց և երբեմն աթոռ ՚ի Կաթուղիկէ եկեղեցւոյ։ Գրիգոր կաթուղիկոս Ժ, րդ յիշատակէ զսուրբ Գեղարդն ՚ի կոնդակի իւրում՝ զոր գրեաց առ միաբանս վանաց Սաղարթայ լերին ՚ի թուականին հայոց Ջա՟, (1452) ՚ի Ժ, երդ ամի, միոյ ամսոյ և տասն աւուր կաթուղիկոսութեան իւրոյ. ապաքէն ըստ գրուածոց պատմութեանց և կոնդակացն, է՛ զի երևի պահեալ երբեմն յայս մենաստան, և է՛ զի ՚ի հայրապետական Կաթուղիկէ եկեղեցւոյ Վաղարշապատու։

Այս մենաստան աւերեցաւ զառաջինն ՚ի Հագարացի զօրացն Նսրայ ոստիկանի և կողոպտեցաւ ՚ի զարդուց և ՚ի զգեստուց և յայլ ստացուածոց յամի 923. ուր և կրօնաւորքն ՚ի սաստիկ անողորմ հարուածոց զօրացն սակս գիւտի ընչից՝ հետ ըղհետէ ՚ի փաքր միջոցի վախճանեցան։ Վերջին աւերութիւնն թուի լինել ՚ի կովկասեան լեզկեաց իբր հարիւր ամօք ինչ յառաջ. քանզի Սիմէոն կաթուղիկոս երևանցի ՚ի գրուածս իւր յիշատակէ թէ՝ ՚ի մենաստանի Ամենափրկչին հաւուց թառայ՝ որ մերձ է յայս մենաստան Այրիվանից, նստէին մինչև ՚ի ժամանակս մեր առաջնորդք ՚ի ցեղէն Գրիգորի մագիստրոսի պահլաւունւոյ. յորմէ որպէս երևի ՚ի շինութեան էր յայնժամ և այս մենաստան։

Այս վերջին աւերութի՟ վերանորոգեցաւ յամի 1834. քանզի սրբազնագոյն տէր Յովհաննէս Ը՟րդ կաթուղիկոս ետ զայս մենաստան կոնդակաւ տէր Յովհաննու այրի աւագ քահանայի եկեղեցւոյն Նախիջևան քաղաքի Արարատայ. որոյ ընկալեալ յայն աւուրսն զվնկուղ վարդապետական գնաց անդր և սկսաւ նորոգել. զոր տեսեալ ժողովրդականաց կողմանցս յաւելան օր յաւուր ՚ի նուէրս տրոց՝ մանաւանդ տփխիսեցիք. և զի ՚ի ժամանակն աւերութեան անդ իսկ յաճախէին

սաստ ջերմեռանդ ուխտաւորք բնակիչք Երեւանայ
և մերձակայ գաւառացն երկիցս ՚ի տարւոջ՝ յաշ-
նան և ՚ի գարնան յանուն սրբոյ Գեղարդայ. ուս-
տի և ՚ի բնակչացս ՚ի մուացօնս եղեալ առաջին
անուանակոչութիւնն՝ Այրիվանք, վերաձայնի՝ Գե-
ղարդայ վանք: Այս վերանորոգութիւն տեւեաց ցամ
տեան 1840՝ յորում ՚ի 20, յունիսի ՚ի սաստկու-
թենէ երկրաշարժութեան անկան հիւսիսային և
արեւմտեան սալքարինքն կաթուղիկէի տաճարին.
և նոյն հիւսածու տաճարի արեւելեան որմն ՚ի
լուսամուտէն ցկատար շինուածոյն պատառեցաւ. և
ինչ ինչ քանդմունք և պատառմունք ՚ի պարիսպն,
՚ի սենեակսն վանահօր և միաբանից, ՚ի տնտեսա-
տունն և յայլս և ՚ի կամարն մեծի դրան պարիս-
պին. վէմ մի մեծ ևս հոսեալ ՚ի դժուարագնաց
զառապարէն և թափ առեալ ընդ զառ ՚ի վայրն
ոստնու և անկանի ՚ի պարիսպ մենաստանիս և թա-
ղի անդէն յերկիր անշարժ: Այն այժմ աստէն ե-
րեք միանձունք ՚ի կրօնաւորաց անտի Սեւանայ
հանդերձ քանի սպասաւորօք:

Առաջնորդք մենաստանիս Այրիվանից ՚ի ԺԳ դարէ.

574, տէր Գրիգոր յիշատակեալ ՚ի վեր ան-
դրեր յարձանագիրն Պապաքայ որդւոյ Պռօշայ՝ յա-
մի 1288:

տէր Յովհաննէս յիշատակեալ ՚ի յիշատա-
կարանի աւետարանի միոյ յամի 1475:

Աստուածատուր եպիսկոպոս՝ որ ընդ Մել-
քիսէթ կաթուղիկոսի գնաց յԱսպահան առ Շա-
հապաս, իբր յամի 1603:

Դաւիթ եպիսկոպոս ՚ի տոհմէ Պռօշ իշխա-
նի եկաց յառաջնորդութեան յամէ 1635, ց 1675:

Ստեփաննոս եպիսկոպոս եղբայր վերնոյն՝
այր գիտնական՝ եկաց յամս 4. զի ՚ի յերկրաշար-

ժութեանն յամի 1679, եղև ընդ փլատակաւ եկե-կեցւոյն անապատին Նանիա առաքելոյ յԵրևան:

Դաւիթ եպիսկոպոս եղբօրորդի վերնոյն անմիջապէս զկնի նորա. սոքա երկոքեան 'ի միաւին յիշատակին 'ի յիշատակարանի յայսմաւուրի մեոյ եղելոյ 'ի գրանոցի աթոռոյ սրբոյ Էջմիածնի:

Պետրոս վարդապետ ջահկեցի յիշատակեալ 'ի ջամբռ անուանեալ մատենի 'ի թուին տաճկաց 1153. յամի տեառն 1740:

Ղուկիանոս վարդապետ ևս 'ի նոյն ջամբռ անուանեալ մատենի:

տէր Յովհան Նախիջևանցի յիշատակեալ 'ի վեր անդր:

Մարտիրոս արեղայ վաղարշապատցի մին 'ի կրօնաւորաց անտի յերից՝ որք 'ի վերոյ յիշատակեցան:

## Մենաստան Ամենափրկչին Հաւուց թառոյ.

575. Եկեղեցի յանուն Ամենափրկչանուանեալ պատկերի խաչելութեան տեառն մերոյ 'ի Հաւուց թառ 1, անուանեալ վայրի՝ որ յարևելս հիւսիսոյ գիւղաքաղաքին Գառնոյ, կամ ընդ մէջ

1, Հաւուց թառ և հայոց թառ. չէ ընդհատին նոյա-նուն 'ի գրչութիւնս երբեմն հեղինակի, բայց հաւանէ լի դատէ հաւուց թառն ասն դ-ան. ասելի յայտ անուն յիշատակի ան-դէն գիւղ ինչ. և թէպէտ յարջանագրութ Գիրք Դատաստանի գրէ՝ հայոց թառ, այլ գուցէ օրինակօք այնր Յովհաննէս ա-նուն անվաւեր գրչապատկերի՝ ըստ կարծիքի ըստ ըմա 'ի գործ էառ: Սակայն անեցի կամ այրէվանեցի 'ի մէջս նշ=նշ թառոյն հայոց դնէ շինութիւն եկեղեցւոյ 'ի Պետրոս էշ-խանէ. ,, Շինէ հաւուց թառ 'ի Պետրոս իշխանէ ևայլն ,, և այլ պատմիչ հայոց նոյն շինէ եկեղեցւոյ պարզապէս

մենաստանին Այրիվանից և Գառնւոյ՝ յարևե_լակողմն գետակին 'ի բարձրավանդակ վայելչու_տեղւոջ 'ի լանջի անդ լերինն. շինեալ 'ի Գրիգոր մագիստրոսէ վասակեան պահլաւունւոյ 'ի թո_ւականին հայոց ՆԿԲ, այն է՝ յամի 1013. [illegible] ինքն Գրիգոր մագիստրոս 'ի ձեռս բերեալ զայն պատկեր՝ (ըստ Բեէր 'ի ցուցակութեան որդւոյն Արտոյ Իշխա_նի [illegible] 'ի Պարիզ (պաշտիս) 'ի Մոսկուա [illegible]) (տե՛ս 48) նոր 'ի նորոյ եւ կառուցա_նել տաճար փառացի աստէն 'ի կոփածոյ քարանց և հանգոյց 'ի նմա զայն հռչակաւոր պատկեր. ուս_տի և անուն եկեղեցւոյն մերձակայեցաւ յանուն նոյն փրկչական պատկերին՝ Ամենափրկիչ. այլ թէ ա_ռաջին եկեղեցին մենաստանիս զինչ անուանակո_չութիւն ունէր՝ չէ՛ յայտ։

Մեք ինչ նշմարանք այժմ 'ի շինութեանց անտի եկեղեցւոյն որ 'ի Գրիգոր մագիստրոսէ. քանզի յերկրաշարժութենէն դիպելոյ յամի 1679, մեծապէս խախտեալ գոլով և մնացեալ 'ի պատ_ճառս կրկին շինութեան եկեղեցւոյն 'ի յետնոց զորմէ զինի, խապառ անհետացեալ։ Գտանելով մեր երբեմն անդ 'ի Կոստանդինուպօլիս յամէն 1820, ց1825, ծերունի տիրացու Աւաքեալ [illegible] ճապի մականուանեալ եւ ինձ զարմանագրութ-

հասոյ [illegible]. [illegible] 'ի 19, [illegible]. Ս[illegible] [illegible] [illegible] 'ի [illegible]. [illegible] 'ի Մոսկուա [illegible] 'ի Պարի_զու, և [illegible] 'ի Պ[illegible] (տե՛ս 48. 49). [illegible] [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] Գէորգ Իշխանէն [illegible]. և [illegible] [illegible] 29, [illegible] [illegible] [illegible] [illegible]։

այն եկեղեցւոյ ասելով. խնդրէ եղեալ այդ ինձ՝ յորմէ հետէ հանեալ եմ զդա 'ի գրանոցէ աթոռոյ Էջմիածնի. զոր ահա՛ վերադարձուցանեմ առ ձեզ տանել դարձեալ անդր՝ ուր թերեւս չգտանիցի օրինակն. իսկ մեր վերադարձեալ յԱթոռս՝ տեսաք զօրինակն այնր արձանագրութեան 'ի գրուածս Սիմէոն կաթուղիկոսի երեւանցւոյ, բայց ո՛չ զայն գրուած յայտարար թէ՝ ո՛վ զայն արձանագրութիւն 'ի գիր էառ 'ի գրուածոց անտի եկեղեցւոյն, եւ ե՛րբ. որ գրեալ 'ի ներքոյ արձանագրութեանն՝ ունէր օրինակ զայս. ,,Վերոյ գրեալ արձանս գրեալ կայր 'ի վերայ սուրբ Ամենափրկչին արքայաշէն դարպասին դուրս կողս հարաւակողմն 'ի վերայ մեծ լուսանցոյց պատուհանին՝ որ 'ի շարժմանէն խախտեալ կայր: ՌՃՀ, թուին (1721) Աստուածատուր կաթուղիկոսն կամեցաւ վերստին նորոգել, 'ի քակելն ես մեղաւոր ծառայ սուրբ տանս քուրդ Յոհաննէս իմ ձեռամբս վերատի զարձանս զայս եւ գրեցի աստ ,,:

Իսկ օրինակն արձանագրութեան եկեղեցւոյն էր ըստ այսմ:

,,Ի Թուականիս, (1013) 'ի թագաւորութեանն Գագկայ եւ 'ի հայրապետութեան տեառն Սարգսի ես Գրիգոր մագիստրոս վերստին շինեցի զեկեղեցիս յիշատակ ինձ եւ ծնողացն իմոց. նաեւ 'ի տերանց աշխարհիս գանձագին արարի զվայրս սորա լերամբքն եւ դաշտամբքն եւ ամենայն կազմութեամբքն որ 'ի սմա. քառադէմք, չորս անկեամբ՝ յաջամբ եւ ահեկամբ, 'ի դիմաց եւ 'ի թիկանց. եւ տուաք յիշատակ անջնջելի արձանագրով եւ աշխարհական թագաւորի թղթովք եւ կայսերական կնքովք, հաստատեցաք ձեռագրով եւ հայրապետական նամակաւն. եւ 'ի նաւակատի տաճարիս՝ զոր շինեցաք, ընծայեցաք զհայրենիս մեր սուրբ եկե-

ղեցւոյս՝ որ է Հայոց Թառ, Հանգստարան և օթարան անձեռագործ սուրբ պատկերին Յիսուսի Քրիստոսի՝ որ 'ի փայտին, խնդրելին Յոհաննու սուրբ աւետարանչին Հրամանաւ Մօր տեառն մերոյ սուրբ Ածածնին· և նորոգեալ վերստին հաստատեցաք զսուրբ ուխտս վերջինս քան զառաջինն· աստ եդաք զվէմն հաւատոյ հիման սուրբ եկեղեցւոյ: Գրիգոր վահրամ պիտանին ,,:

Պարիսպ մենաստանիս ընդարձակ հիւսածոյ 'ի քարանց· և սենեակք և կացարանք միաբանիցն և այլոց հարկաւորութեանց 'ի մէջ անդ պարսպին· հայեցուած բովանդակ մենաստանին կարի վայելուչ և զուարճալի ընդ յարևմուտս է փոքրիկ սահմանս դաշտավայրին Գառնւոյ, և կիսով աւելի ընդ լայնարձակ դաշտն Արարատայ ցաւերակն Արմաւիրայ և անդր ցԱարդող լեառն՝ որ յարևմտեան եզեր դաշտին:

'Ի յարևելակողմն անդ 'ի մէջ պարսպին է քայքայեալ կարի հնագոյն շինուած ինչ տաճարաձև՝ որ թերևս կարծի լինել եկեղեցին որ 'ի Գէորգ իշխանէն Բեղոյ կամ Բեղայոյ· իսկ յարևելս նորա 'ի մէջ պարսպին լեալ է տեղին եկեղեցւոյ՝ որ 'ի Գրիգոր Մագիստրոսէ՝ զոր վասն խախտմանն 'ի շարժէն և յաւերանացն, յետինք յառաջնորդաց նր ձեռնարկեալ 'ի կառուցանել յայնմ իսկ տեղւոջ և զշինուածն հաստուցեալ ցալալթոումն՝ այն է, ցհիմունս կամարացն, թողեալ են այնպէս անկատար սակս վերջին ասպատակութեան կովկասեան ելուզակացն· և յօրէ անտի ցայժմ կայ այնպէս աւերակ այս մենաստան և չերևի ևս նշան ինչ անդրէն նորոգութեան:

Յարևմտակողմն հանդէպ մենաստանիս 'ի վայելուչ դիրս է հանգստարան նր գերեզմանաց միաբան կրօնաւորելոցն 'ի նմին· և անդէն 'ի միջին տեղւոջ տաճար փոքրիկ տեղի պատարագելոյ,

այլ մեծ մասամբ քայքայեալ. ունէր թէպէտ գը֊
րուած ինչ, բայց բեկեալ գոլով յայլազգեաց և
մաշեալ յանձրևաց՝ չեղև առնուլ 'ի գիր: Գտա֊
նի քան զայս՝ փոքրիկ մատուռն մի յարևելակողմն
մենաստանին՝ թերևս 'ի վերայ շիրմի ուրումն իշ֊
խանաւոր կամ կրօնաւոր երևելի անձին, այլ ըստ
այնմ չեղև կարելի առնուլ 'ի գիր զծանօթու֊
թիւն ինչ յաղագս եղծուածոյն յարձանագիր
նորին:

Ջուր մենաստանիս եկեալ է յառաջագոյն
'ի բարձանց անտի յարևելից տեղւոյս՝ թերևս
'ի կողմանց Աղջոց վանաց, բայց ճանապարհ նորա
քայքայեալ և աւերակ գոլով՝ չե՛ք հնար գտանել
անդ ջուր ըմպելոյ:

## Առաջնորդք Մենաստանիս յիշատակեալք 'ի գիրս.

576, Յաղագս առաջնորդաց այսր մենաստանի
լինելոյ 'ի տոհմէ Գրիգոր մագիստրոսի այսպէս
գրէ Սիմէոն կաթուղիկոս Երևանցի 'ի Ջամբռ֊
անուանեալ մատենին յերես 1047. „Սա վե֊
րոյիշեալ Գրիգոր մագիստրոսն (Պահլաւունի) մինչ
վերանորոգեաց զվանքս զայս, և հաստատեաց զսա
հողովք և ջրովք, և զորդին իւր ետ կացուցանել
'ի սմա առաջնորդ որպէս ասացաք. վասն որոյ և
յայնմ հետէ որպէս թէ հայրենի մուլք արարեալ
զսա որդիք և թոռունք և յետագայ ազգատոհմք
սորին՝ մի զկնի միոյ յաջորդեցին զառաջնորդու֊
թիւն սորին՝ ոչ միայն 'ի յիշխանութեանն հայոց,
այլև 'ի ժամանակս թագաւորացն պարսից մինչև
գրէ թէ՝ 'ի ժամանակս մեր. որքան շէն էր վանքս
այս. . . . : 'Ի յաղագէ վերոյգրեալ Գրիգոր մա֊
գիստրոսին մի զկնի միոյ յաջորդելով, նստի ա֊
ռաջնորդ 'ի վանքս յայս 'ի նոյն գեղջէն հայոց
թառու. Զաքարիա վարդապետն. . . . : Զի սոքա

'ի բնէ անտի ազատազունք էին և անուանիք, շատազգ և հարուստք. յորոց թէպէտ ոմանք վանականք լինէին՝ ոմանք աշխարհականք, սակայն մի էին տամբք և ընչիւք . . . . . : Ապա յետ սոյն Զաքարիա վարդապետին 'ի փոփոխել 'ի նուազել կարողութեանց և իշխանութեանց սոցա, և 'ի բաժանել ազգականացն յիրերաց, սկսաւ խռովութիւն անկանել 'ի մէջ վանականացն և աշխարհականացն վասն մլքից և այլոց ընչից ,, ևն:

Վահրամ՝ որ և Գրիգոր վկայասէր, առաջին առաջնորդ Մենաստանիս կարգեալ 'ի հօրէն իւրմէ 'ի Գրիգոր մագիստրոսէ 'ի նորոգութեան անդ՝ այլ 'ի սակաւ միջոցի:

Եղիա. յամի 1205, որ գտաւ 'ի ժողովն լօռւոյ յաւուրս Զաքարիա սպասալարի, և 'ի կարգի եդ զերաժշտութիւն երգոց 'ի Մենաստանի աստ ըստ Կիրակոսի գանձակեցւոյ:

Մխիթար եպիսկոպոս յամի 1294:

Զաքարիա եպիսկոպոս յամի 1441, որ գտաւ 'ի ժողովն ընտրութե Կիրակոսի վիրապեցւոյ 'ի կաթուղիկոսութիւն:

Մանուէլ եպիսկոպոս յամի 1602, յաւուրս երկուց կաթուղիկոսացն Դաւթի և Մելքիսեթի. որ և սպանաւ յայրի անդ 'ի քարագնաց զօրացն Միրզիւնայ նախարարի:

Համազասպ եպիսկոպոս յամի 1619, յաւուրս նոյն Մելքիսէթ կաթուղիկոսի՝ որ և էր առաջնորդ Երևանայ:

Մկրտիչ եպիսկոպոս յամի 1627, յաւուրս Սահակ կաթուղիկոսի:

Տէր Յովհաննէս յամի 1658, յիշատակեալ 'ի յիշատակարանի աւետարանի միոյ:

Մատթէոս վարդապետ յամի 1658, 'ի գրուածս Սիմէոն կաթուղիկոսի Երևանցւոյ:

Ստեփաննոս յամի 1696, որ գրի 'ի յիշատա-

կարանի տօնացոյց գրոց գրել 'ի սոյն մենաստանի ։

Սիմէոն Ջուղայեցի · յաւուրս Փիլիպպոս կաթուղիկոսի Աղբակեցւոյ · յԱռաքել պատմիչ յերես 396 · 397 ։

Մարկոս վարդապետ · յաւուրս Յակոբայ կաթուղիկոսի Ջուղայեցւոյ · առ Զաքարիա սարկաւագի՝ հատոր Ա , գլուխ ԼԱ ։

Մաղաքիա վարդապետ յամի 1726 · 'ի գրոց Սիմէոն կաթուղիկոսի Երեւանցւոյ ։

Յովհաննէս վարդապետ յամի 1745 · անդ ։

Ազարիա վարդապետ 'ի նոյն ամի · եւս անդ ։

Զաքարիա վարդապետ եւս անդ 'ի գրոց Սիմէոն կաթուղիկոսի Երեւանցւոյ ։

Մենաստան կամ վանք Աստապատու ·

577 , Այս մենաստան յանուն սրբոյն Ստեփաննոսի Նախավկայի կոչի եւ Կարմիր վանք սակս կարմրագոյն քարանց շինուածոցն · եւս եւ Աստապատու վանք՝ վասն մերձ գոլոյն այնմ գիւղաքաղաքի · զի մենաստանն եկեղեցեաւն հանդերձ կառուցեալ է գրեթէ 'ի վերայ միաստանի վիմի 'ի հիւսիսային ստորոտս քարուտ ինչ լերին , յարեւելեան եզեր Երասխայ , 'ի սպառուածս դաշտին Նախիջեւանայ եւ Աստապատու՝ որք անկանին 'ի հիւսիսակողմն մենաստանիս ։

Տեղին մենաստանիս է փոքր ինչ բարձր քան զդրութիւն դաշտին · եկեղեցին կառուցեալ է 'ի միջին բարձր տեղւոջն 'ի մէջ պարսպին · շէնք հիմանցն են 'ի կոփածու քարանց եւ այլ բովանդակ շինուածքն 'ի թրծեալ աղիւսոյ՝ միջակ մեծութ̃ · ունի զերկուս սիւնս , զմի սեղան սրբազան խորհրդոյն եւ զերկուս աւանդատունս եւ զմի դուռն ընդ արեւմուտս՝ յորոյ վերայ է եւ գաւիթ քարաշէն 'ի վերայ երկուց սեանց եւ ունի զանգակա-

տուն փոքրիկ. իսկ կաթուղիկէ տաճարին 'ի միջավայր անդ տանեացն ։

Այս տաճար չունի որոշ արձանագիր ինչ շինութեան կամ նորոգութեան, այլ գտնին թուականք և եթ յերկուս խաչվէմս՝ որք ամրացեալ կան յերկոսին կողմանս դրան տաճարին՝ այսպէս․ ,,Ի թվ․ Ն․ Ի․ Զ,, (977)․ իսկ հարաւայինն՝ ,,Ի թվ․ Չ․ Ի․ Զ,, (1277)․ որք ոչ յայտնեն՝ թէ արդեօք շինութեանց կամ նորոգութեանց իցեն թուականք, թէ այնպէս այլուստ բերեալ յաւերակաց ինչ 'ի ժամանակի կառուցման եկեղեցւոյս ամրացան աստէն ։

Գտանին 'ի մէջ տաճարիս և գաւթի սորին գամբարանք ոմանց վարդապետաց՝ թերևս առաջնորդաց մենաստանիս, պատուեալք մարմարոնեայ վիմօք․ որոց արձանագիրք ընդ աղօտ ինձ ցուցանեն զնորոգութենէ մենաստանիս ։ Տապանն՝ որ 'ի մէջ տաճարիս առ դրան հիւսիսային աւանդատան, ունի մակագրութիւն ըստ այսմ․

,, Այս է տապան գամբարանի,
տեառն Յակոբայ վարդապետի․
այսր սրբունյս մըյ, վհի․
էին աղինք արք երեքի․

Աստուածատուր և Պաւլոն և Յեդոն որդիս սոցին․ ծախիւք վէմս կազմի և կափարիչ ընծել շիրմի․
Թվ․ ռՃԻԲ (1673),, ։

,, Պալոնի Հայր Հայրապետ ․
Թեդոսի որդի Նուրիջան ․
Ծատուրի որդի աւագ ,, ։

'Ի մէջ գաւթի տաճարիս միոյ շիրմին արձանագրեան հարայ գտանի տապանակէն մարմարինեայ՝ որ ունի մակագրութիւն այսպիսի․

,, Յայսմ տապանի կայ պահեստի,

Յովսէփ քաջ եպիսկոպոսն արհի.
որ է տեղեաւ աստապատցի,
նորոգող և բազմաշխատ այսմ ուխտի.
աշակերտն Յակոբայ մեծի,
որ կայ ՚ի դուռն խորանի.
առ որ հանգեաւ ՌՃԾԵ (1706) ի,
յաւուր սրբոյ մեծի զատկի,,:

Տաշածու քարինք արևելեան հիման սրբոյ եկեղեցւոյս արտաքուստ քայքայեալ անկեալ էին՝ զոր եւ նորոգ ամրացուցանել առաջնորդն մենաստանիս Նիկողայոս վարդապետ յամի 1831:

Ընդապատ պարիսպ մենաստանիս կառուցեալ է ՚ի կարմրագոյն խարտեալ քարանց բաւականաչափ բարձրութեամբ՝ մանաւանդ հիւսիսայինն՝ սակս առաւել ցածուն դրութե՟ տեղւոյն. ունի և բրգունս նմանապէս ՚ի տաշածու քարանց. սենեակքն առ արևմտեան և հիւսիսային պարսպօքն են ըստ առաւել մասին քարաշէն և կամարակապ՝ կրկնայարկ և եռայարկ. իսկ միւս շէնք կացարանացն փայտածածք՝ յորոց բազումք քայքայեալ, աւերեալ կան բաց ՚ի սակաւուց հարկաւոր եղելոցն:

Այս պարիսպ գոլով երկար քառանկիւնի յարևելից յարևմուտս՝ բաժանեալ է յերկուս. ՚ի բաժնի անդ արևմտեան է տաճարն և կացարանք միաբանիցն քարաշէնք հանդերձ պարսպօքն. իսկ յարևելեան բաժնի տեղիքն անասնոց և վերաբերելոցն այնց. միակ պարիսպն՝ որ բաժանէ զմենաստանն յերկուս, գոլով ՚ի հողոյ՝ քայքայեալ է ինքնին. իսկ քարաշէն կամար դրան նորա կայ յամբողջութեան. և ՚ի միջոցի անդ կամարին և վերին բարաւորի դրանն եդեալ կայ խաչվէմ. Յորոյ երկոսին կողմանս և անդր ՚ի ներքոյ կամարին, ՚ի հիւսակողմանն գրէ արձանագիր նորոգութեան պարսպոյն՝ յայս օրինակի:

’Ի ժամանակս պատրօնյալո ճղնոյտ ոջրադիմ Հ., ահապաշտ Եմ Պօղոս Վրդ. պտս 1, Խումանյ Եղոպ. ատաշնորհ Ե....

| | |
|---|---|
| Նու մեք | Նու ըն- |
| աստապատե, | կերօքս իմ |
| ցի քահանայք | շինեցինք ըղ- |
| և ժողովուրդք | պարիսպս ’ի հի- |
| նորոգեցինք ըղ- | մանց կամաւն ա- |
| պարիսպս զայս | մենակալին Յուի.. |

Բ...Ձող քարերոյս գրովանէս արք.......

Արտաքին մեծ դուռն ( [illegible] ) արևե-
լեան պարսպի մենաստանիս մերձ յանկիւնն արևե-
լեան հիւսիսոյ կայ յամբողջութե. և է ընդար-
ձակ կամարագործ ’ի տաշածոյ քարանց. և անդ
’ի միջոցս բարաւորի դրանն և կամարին եդեալ
կայ խաչվէմ և ’ի պատուանդանի խաչին է գրո-
ւած այսպիսի: „ Սուրբ խաչս բարեխօս է. և յի-
շատակ է պարսպիս վերակացու Յովանէս վար-
դապետին և ծնողացն մախասին, ղեթարին և
քվերն շահփարվարին. Թվին ՌՃԾԶ՝ ին (1707) „:

Այս արտաքին արևելեան պարիսպ և ըղ-
մամն ինչ ’ի հարաւային պարսպէ մինչև ցայն վե-

1, Այս Պօղոս վարդապետս յիշատակեալ յայսմիկ ար-
ձանագրութեան է այն, զորմէ գրեն Առաքել վարդապետ դաւ-
րիժեցի յերես 267. և Ս[illegible] յերես
566:

բոյխշեալ մեծ դուռնն կամարակապ եւ քակել 'ի մերում ժամանակի արքայորդին պարսից Ապ-պազի միրզայ և տանել հիմնովին զքարինս 'ի պէտս շինութեանց պարկէն փոսին (խանդակ) ամրոցին յերումէ կառուցելոյ 'ի բուն տեղւոջն գիւղաքաղաքին Աստապատու, որպէս և զեկեղեցի մենաստանին կուսան կանանց՝ որ ընդ մէջ այսր մենաստանի և Աստապատու:

Այս մենաստան այժմ կայ 'ի շինութեան և վանքական կառավարութիւնն՝ որ 'ի սմա, գըտանի ընդ տեսչութեամբ հոգևոր կառավարութեանն Նախիջևանայ՝ ըստ նորոգ կարգադրութեանն. ունի ինչ ինչ կալուածս արդեանց:

'Ի գետնաշարժութեն դիպելոյ յամի 1840, ձեղքեցաւ 'ի տեղիս տեղիս զանգակատունն եկեղեցւոյ մենաստանիս՝ որ 'ի վերայ գաւթին. և ինչ ինչ խարխալմունք 'ի սենեակսն և 'ի պարիսպն. քանդեցան խալառ ձիթիհանք և ջրաղացն:

Աստապատ և Թծախաշոյց եկեղեցի նորին.

578. Այս հռչակաւոր գիւղաքաղաք Աստապատ անուանեալ՝ է 'ի հիւսիսոյ վերոյիշատակեալ մենաստանին Քարատակի հեռաւորութեամբ իրրև կէս ժամու առ Երասխ գետով յարևելից նորա. յառաջագոյն բազմամարդ էր այս տեղի բնակեալ 'ի հայոց, այլ զկնի զանազան աւերութեանց և ապստամբութեանց պարսից՝ գաղթեալ բնակչացն յայլ և այլ սահմանս, եղև իբրև գեօղ մի փոքրիկ. և ապա 'ի մերում ժամանակի արքայորդին պարսից Ապպազի միրզայ տեսեալ զյարմարութիւն տեղւոյն և մերձ գոլոյն յԵրասխ գետ, եւ հանել զբնակիչսն անտի և բնակեցոյց յարևելից նորա հեռագոյն միջոցաւ, և զտեղին զայն ըստ յարմար դրութեանցն եւ ձևացուցանել ամրոց

պարսպապատ՝ ածեալ շուրջանակի և խրամ խո-
րագոյն. և եդ ’ի նմա զզօրս և զպատրաստութիւ
զինուց. եւ շինել ’ի նմա և զհամբարանոցս՝ ուր
ժողովէին ամի ամի զեկամուտ արդիւնս ’ի սահ-
մանացն Նախիջևանայ և այլոց:

Զայս ամրոց զառաջինն անդ գրաւեցին
զօրք ռուսաց յամի 1827. ’ի մէջ ամրոցիս այսմիկ
գտանի մեծակառոյց եկեղեցի շինեալ ’ի նախնի
բնակչաց Աստապատու յեզեր անդ Նախիջևանայ.
քանզի ընդ մէջ Նախիջևանայ և եկեղեցւոյս է արև-
մտեան պարիսպ ամրոցիս և խրամ նորա. չէնք
սորին բոլորովին փլուսակերտ՝ որմունքն, տանիքն
և կաթուղիկէն. և է կրկին՝ ներքին տաճար և
ընդարձակ գաւիթ նորա:

Այս տաճար կառուցեալ է յանուն սրբոյն
մեծին Վարդանայ Մամիկոնեան զօրավարի. և ա-
ւանդութիւն է բնակչացն վասն ստուգաբանու-
թեան անուանս Աստապատ. քանզի ասեն՝ թէ զկնի
նահատակութեանցն մեծին Վարդանայ և ընկե-
րաց նորուն, բերեն այսր զմարմինս նոցին. և այն
ինչ պատանեն զայնս առ ’ի ամփոփել անդէն, ե-
կեալք ’ի բնակչացն Ոսկուայ գան և առնուն
զայնս և տանեն ամփոփեն անդ ’ի Ոսկու. և յօ-
րէ անտի մնաց այս անուանակոչութիւն Աստապատ.
իբր աստ պատեալ՝ կամ աստ տեղի պատանելոյ մար-
մնոց սրբոց վարդանանց. նորին աղագաւ և ա-
նուանադրութիւն եկեղեցւոյս սուրբ Վարդան:

Այս եկեղեցի բաւականաչափ մեծութեամբ,
բարձրակամար կառուցեալ ’ի վերայ չորից սեանց՝
որպէս և ընդարձակ գաւիթ նորին ըստ երկայ-
նութեանն. ունի զմի սեղան յընդարձակ կամա-
րայարկի և զերկուս աւանդատունս և զկաթու-
ղիկէ ’ի միջավայր տանեաց ներքին տաճարի:

Արձանագիր ՚ի վերայ արծաթեան դրան ներքին տաճարի՝ ցայս օրինակ.

„ ՚Ի Թուականիս Հայոց ՌՃԴ, (1655) կանգնեցաւ սուրբ դուռնս այս հրաշազան յօրինմամբ՝ որ անուն սուրբ Սարգսան զօրավարին ՚ի վայելչութիւն ածապահ գիւղաքաղաքիս Աստապատու՝ զոր ես կազմել խօջայ Սաֆարն ՚ի հալալ ընչից ՚ի փրկութիւն հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց՝ Մելիքջանին և Նարինին; և կողակցին Հուռումին (հաւէթ-աբէդէն), և որդւոցն պարոն Յովանէսին և Մարգարին և քուերն Խանումին; և ........ „ ։ Վերջին երկտող արձանագրութիւնն խորտակեալ էր ՚ի վնասող ձեռաց։

Արձանագիր ՚ի ձախմէ բեմին սեղանոյ սրբոյ ՚ի գլխն տեղւոջ ՚ի պատուանդանի խաչկին.

„ Սուրբ խաչս բարեխօս է ազինց Պետրոսին, և ծնողացն Աբրակոսին, Խաթուջանին, և կողակցոյն Նունումին, և դստերցն Պէտփրին; Պցեթարին, Հրեքնխազին. Թվին ՌՃԷ „ (1658)։

Արձանագիր ՚ի ձախմէ մատրանի սեղա մասնաբանեայ վէմ տապանին սրբոյ.

„ Յիշատակ է սուրբ սեղանս պարոնենց Ածատուրին և մելքումենց Կարապետին՝ որդեանէտիքին. Թվին ՌՃԼ „ (1681)։

Արձանագիր շինութեան եկեղեցւոյս ՚ի գաւթի անդ յարեւելեան ձախմէ սեղանն արեւելեան հարաւոյ՝ ցայս օրինակ.

„ Աշակերտ տեառն Յովսեփայ մեծի բա-

բունապետի · սուրբ խաչս խարեխօս լիցի ամենայն եկեղեցւոյս վերակացու . . . . Մարտիրոսի վարդապետին՝ որ բազում երկամբք ՚ի յաւարտ հասոյց · յիշեցէ՛ք և ա̃ծ ողորմի ասացէ՛ք իւրն̃ և ծնողացն տէր Ներսէսին և Մարթային · ռճծբ թվին ,, (1703) :

Այս գիւղաքաղաք Աստապատ գտանի ՚ի սահմանին Նախիջևան քաղաքի և մերձ նմին յարևմտից հարաւոյ նորա՝ հեռաւորութեամբ աւելի քան զժամ մի , և ո՛չ ՚ի Գողթն · որպէս դնէ Միքայէլ Չամչեան ՚ի ցանկն վերջին հատորոյ պատմութեանն ՚ի բառն՝ Աստապատ :

### Մենաստան Մաղարթայ լերին յանուն սրբոյն Ստեփաննոսի նախավկայի :

579 · Մենաստան մեծահռչակ ՚ի պարգևագիրս Աշոտոյ Թագաւորի և ՚ի կոնդակս կաթուղիկոսաց՝ կառուցեալ անդ ՚ի խորաձորս Երասխայ ՚ի հարաւակողման նորին առ հիւսիսային ծոցաւոր ստորոտով մեծի լերին Մաղարթայ , մերձ ՚ի գիւղն Շամբի (Դարաշամբ) յարևելից նորա · և անկանի ընդ մէջ աւերակացն Խրամ քաղաքի և հին Ջուղայու հաւասարաչափ հեռաւորութե̃ յերկոցունցն ևս իբրև միով ժամաւ՝ ունելով զԽրամ յարևմտից , և զՋուղայ յարևելից ՚ի հիւսիսակողման անդ Երասխայ :

Սկզբնաւորութիւն մենաստանիս եղեալ է յերկուց սրբոց Առաքելոցն՝ Թադէոսի և Բարդուղիմէոսի ըստ վկայութեան պարգևագրի Թագաւորին Աշոտոյ և կաթուղիկոսին Խաչկայ պարունակեալ ՚ի մի կոնդակ և գրեալ ՚ի թուականի հայոց ՆԻԵ · այն է՝ յամի 976 · յաւուրս առաջնորդութե̃ մենաստանիս արք եպիսկոպոսին Բարդենի · որոյ օրինակն պահեալ ՚ի մենաստանիս ընդ այլ հնութեանց՝ է ըստ այսմ:

580. „Նուամբ անեղին Աստուծոյ՝ Հօր և ՚ի փառս ծնիցելոյն ՚ի նմանէ անեղապէս Որդւոյն Միածնի, և ՚ի փառս բղխեցելոյն յէութենէ Հոգւոյն Ճշմարտի: Այս մեր գիր հոգևորական բարձր հրամանի հաստատութիւն է և օրհնութիւն. և ՚ի հոգևոր հովուութեան տեառն Խաչկայ Հայոց կաթուղիկոսի և ըստ մեծի մերոյ տէրութեան արևելից և հարաւային Հայոց թագաւորի՝ Աշոտ յորջորջեալ անուամբ բարեպաշտ և մեծ Շահանշահի. ես Աշոտ թագաւոր թագաւորաց ամենայն տիեզերաց եկեալ ՚ի սուրբ ուխտս ածաբնակ Նախավկայիս հանդերձ զօրօք թագաւորականօքս և իշխանօք տեառն Խաչկայ Հայոց կաթուղիկոսի՝ երկրպագեալ սբ տաճարիս հէն Սողորդոյ վանից: Երանելի կրօնաւորս ածամեծար մեծանուն տէր Բարգէն հայկազն նախաշինող և ՚ի Քրիստոս ծնող հոգևոր գառանց մանկանց եկեղեցւոյ. . . . . եղև ձեռնադրեալ արք եպիսկոպոսապետ: Նիւ, տումարիս արամեան Յացուածիս եղև կատարումն շինութեան և նորոգման ածաբնակ սուրբ նախավկայիս՝ ջանիւք և աշխատութեամբ տեառն Բարգենի՝ որ էր սա շինեալ սբ առաքելոցն Բարդուղիմէոսի և Թադէոսի: Եւ ՚ի սուրբ տաճարիս կայ հանգուցեալ սևեռեալ բևեռն բազկացն Յիսուսի, և յարքայական թագէց փուշ պսակէն Ճուղ մի. և Քրիստոսի ձեռացդ, հատ մանանայն 1. և բազմահաւաք սրբու-

1, Սան այսր դ, հատ մանանային գրի և ՚ի վերծանի պատմութեան [illegible] ՚ի [illegible] հովուաց հայաստանի՝ ըստ այսմ. „ Եւ տէրն [illegible] հէն և նոր բերեալ ՚ի հայս՝ դ, հատ մանանայ ՚ի Բարդուղիմէոսէ և [illegible] ՚ի հին եկեղեցւոյն՝ որ հանդէպ հայի Գողթան գաւառին առ Արաքս գետով ՚ի տեղւոջն, որ Սողորդն կոչի:

թիւնքս՝ որք աստ կան հաւաքեալք։ Նաեւ տուն հըն-
ձէքս եւ հայրենիքս եւ դաստակերտ եւ ընծայան
հին Մաղարդայ վանից սուրբ Ստեփաննոս նախա-
վկային, տիրամայր Աստուածածնին եւ սուրբ Գէ-
որգ զօրավարին անդառնալի եւ բարձր հրամանաւ
մերով՝ Թէմ եւ վիճակ. որ եւ սահմանեալ էր 'ի
նախնեաց մերոց եւ 'ի սուրբ հայրապետացն մերոց
տեառն՝ Ներսիսէ Թոռին մերոյ սուրբ Լուսաւոր-
չին. Նախ եւ առաջին հոյակապ եւ հռչակաւոր մայրա-
քաղաքն Նախչուան. Նոյ (Նոյ) գաւառ բոլո-
րովին, Խոյ՝ որ է Զարեւանդ գաւառն եւ ամե-
նայն վիճակ իւր բոլորովին մինչ 'ի Նուան, 'ի
Պարադարան՝ որ բաժանի 'ի Սալամաստայ. 'ի ՃՆ-
բախայ մինչ 'ի Մարանդայ գրխէն, Մարանդ իւր
վիճակովն, Շիրինթալն իւր վիճակովն գնայ մինչ
'ի դղեակն խոսրովու, 'ի Ջաղատ եւ 'ի Գիլան,
'ի Զուզա եւ իւր վանքն, Ճաստապատ եւ իւր
վանքն, 'ի Շամբ եւ իւր վանքն, 'ի Զաղաց տեղն
եւ իւր վանքն, Ճորաք եւ իւր վանքն... տուաք
ընծայ եւ հայրենիք անդառնալի եւ բարձր հրամա-
նաւ մինչեւ 'ի գալուստն Քրիստոսի եւ ահեղ դա-
տաստանն. եւ մի՛ ոք իշխեսցէ 'ի մեծաց եւ 'ի փո-
քունց արգել առնուլ.....։ Եւ աւարտումն
եղեւ բանիս եւ գրիս ձեռամբ մեծանուն տեառն
Խաչկայ կաթուղիկոսի ամ՛ հայոց եւ տէր Բար-
գենի եւ մեծ իշխանացն՝ Ապղարիպի իշխանին.....
եւ հայոց, Վասակ իշխանին սիւնեաց, Գրիգոր
իշխանին Ռշտունեաց, Գէորգ իշխանին գնունեաց,
Շապուհ իշխանին արծրունեաց. Նամակիս եւ սի-
կիլիս կատարիչքն օրհնին յաստուծոյ եւ յամենայն
սրբոց, խափանիչքն դատին 'ի Քրիստոսէ այ մե-
րոյ, որ է օրհնեալ յաւիտեանս ամէն։ Տէր Խա-
չիկ կաթուղիկոս ամենայն հայոց եւ պատրիարգ ա-
րեւելեան տանս՝ առաքեցաք գրաւորական օրհ-
նութե հրամանաւս զմեծանուն երջանիկ տր Բար-

գէն որք եպիսկոպոսն գալ առ ձեզ և առաքելաբար շրջիլ 'ի մէջ ձերում՝ վարդապետել, խըրատել և ուսուցանել յօրէնս և 'ի պատուիրանս տեառն . . . . . լինել այցելու որբոց և այրեաց, և կարօտելոց կարեկից՝ սիրովն Քրիստոսի . կոչեսցէ զարժանաւորս և զիմաստունսն 'ի կարգ և յաստիճան կիսասարկաւագութեան, սարկաւագութեան և քահանայութեան . կայցի և հրամանաւ մերով 'ի վերայ ձեր իշխանութիւն առաքելական կապել և արձակել յերկինս և յերկրի։ . . . . Այլև կանոնեալ հայք և զիրաւունս զոր և պարտիք տալ Աստուծոյ՝ բաժինն Աթոռոյ . տեառնականս, զխաչօրհնեան և զպրբանուէրս, զիրաւունս մատաղաց, կենդանեաց և ննջեցելոց բաղմականսն, զյանկարծամահ և զառակամահ . և զամենայն իրաւունս կենաց և մահու լիով անթերի տուք 'ի ձեռս դորա զուարթ և առատ սրտիւ . . . . . ։ Շնորհեցաք 'ի ձեռս դորա ձեզ պարգևս հոգևորական զեւղն օծութեան սրբալոյս և զնծագործակ սուրբ մեռոնն 'ի լուսաւորութիւն նորածնելոցն աւազանաւ յորդէգրութիւն հօրն երկնաւորի և 'ի ժառանգակցութիւն Քրիստոսի աստուծոյ յուսոյն մերոյ . զնոյն 'ի ճակատն նշանն հաստատութե, յօծումն քահանայութե, 'ի նորոգութիւն սուրբ եկեղեցւոյ Քրիստոսի աստուծոյ մերոյ՝ որ է օրհնեալ յաւիտեանս ամէն,,։

,, Խաչիկ ծառայ Յի Քի աստուծոյ մերոյ, շնորհօք և ողորմութեամբ նորին կաթուղիկոս ամենայն Հայոց ,, ։

,, Գրեցաւ ձեռամբ Ագաթանգեղ դպրի Նիե (976) . տումարի արամեան Միացուածիս ,, ։

Գտանի 'ի մենաստանի աստ խաչ մի ապակեայ տասնևութն հատուածովք ագուցելովք յերկաթ՝ տասն հատուած անկիւնաւոր ապակիքն յերկայնութեան, և ութն նոյնօրինակ անկիւնա-

ւոր յերկուսին Թեւսն · բարձրութիւն խաչին իբրեւ կանգուն մի · իսկ պատուանդան կամ բուն խաչին՝ որ ագուցանի ՚ի ձող, է իբր Թզաչափ մի արծաթի · յորոյ վերայ գոյ յիշատակագրութիւն յանուն Յովհաննէս Թագաւորի Հայոց և որդւոյ նորա Աշոտոյ · որ ունի օրինակ զայս ·

,, Յիշատակ է սուրբ խաչս Յովհաննէս Թագաւորին Հայոց եւ կ՟ւկց Ռուշան տկն (տիկնոջն) Նաւ որդի Աշոտ Թագաւորս բազում զօրօք եկի ՚ի սուրբ ուխտս · եւ տուր Ռամբա ջաղացներն, Նբասխի նաւն և Աստապատու հողն սուրբ նշխին՝ յիշատակ մեզ և ծնողաց · Թվին ՆԺԵ (966) ,,:

՚Ի ստորին ծայրի պատուանդանի խաչիս ՚ի բոլորակ շրջանի նորին՝ յոր ագուցանի ձող, է ամրացեալ փոքրիկ օղ իմն արծաթի՝ ընդ որ անցուցանի և կապի ժապաւէն յամրութիւն ամբարձման խաչին ՚ի գլուխ ձողոյն · և ահա յայսմանէ ըստ իմիք գուշակի լինել նոյն ապակեայ խաչին՝ խաչ դրօշակի Թագաւորին Հայոց Յովհաննու :

Որպէս ունի այս մենաստան զայս խաչ հնագոյն պարգեւ, նոյնպէս ունի և յօրէ անտի ընդկալուածոն արդեանց՝ զյիշատակեալսն ՚ի յիշատակարանի խաչին սեպհականաբար մինչեւ ցարդ անփոփոխ՝ ՚ի բազմակի փոփոխութեան իշխանութեանց աշխարհի ը̃ այսչափ հոլովեալ դարս :

581, Բաց ՚ի պարգեւագրէ աստի գտանին և այլ զանազան կոնդակք կաթուղիկոսաց աթոռոյ Էջմիածնի տուեալք յանուն արքեպիսկոպոսաց՝ առաջնորդաց սոյն վանաց և վիճակի նորին · որք ցուցանեն զհնութիւն մենաստանիս և զընդարձակութիւն վիճակին · որոյ չինոյն ամբողջ օրինակ առեալ եդաք աստէն յաղագս ապագայից ծանօթութեանց յիշատակելեացն :

,, Անուամբ անեղին Աստուծոյ Հօր և ՚ի

փառս ծնեցելոյն 'ի նմանէ անեղապէս Աստուծոյն Միածնի, և 'ի գովեստ բղխեցելոյն 'ի Հօրէ Հոգւոյն Ճշմարտի. այս մեր գիր հոգևորական բարձր հրամանի հաստատութիւն է և օրհնութիւն ,,:

,, Գրիգոր ծառայից Աստուծոյ ծառայ Յիսուսի Քրիստոսի տեառն մերոյ՝ շնորհօք և ողորմութեամբ նորին կաթուղիկոս ընդհանուր ամենայն հայաստանեայց և եպիսկոպոսապետ մեծաց Հայոց և պատրիարգ արևելեան Վաղարշապատու, տեղապահ և յաջորդ, աթոռակալ և փոխանորդ սրբոց առաքելոցն՝ Բարդուղիմէոսի և Թադէոսի և սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին. զոր գրեմք 'ի դրանէ ա̄ծադիր աթոռոյ և լուսակիր տաճարէ ա̄ծաշէն կաթուղիկէ սուրբ Էջմիածնի և 'ի բազմահաւաք սրբութեանց սր̄նախ յա̄ծամուխ սուրբ Գեղարդէ ներկեալ արեամբն Յիսուսի Քրիստոսի, և 'ի թագն արքայական 'ի փշոց պսակէ եդեալ 'ի գլուխն Յի̄ի, և սևեռեալ բևեռացն բազկացն Յիսուսի, և 'ի ծածկոյթ յերեսացն Յիսուսի 'ի սուրբ վարշամակէն, և 'ի տէրունական ա̄ծընկալ սուրբ նշանացս, և 'ի շնորհաբաշխ աջոյս մեր լուսաւորչին Գրիգորի, և 'ի սուրբ կուսանաց գերեզմանացս Հռիփսիմեանց և Գայիանեանց. և այլ շըրջակայ սրբութեանցս ա̄ծազարդ սուրբ աթոռոյս Էջմիածնի. զոր և առաքեմք նախ 'ի սուրբ Նախավկայի վանքն և յիւր սեպհական թէմն և վիճակն. նախ 'ի յամենօրհնեալ և յա̄ծապաշտ, յանուանի և յականաւոր մայրաքաղաքն 'ի Խոյ՝ որ է զերևանդ (շարհանդ) գաւառ և յամենայն վիճակն իւր բոլորովին, 'ի Մարագարէն՝ որ բաժանի առաքելոց յերկրէն և գնայ մինչև 'ի Մարաթափայն, և բաժանի 'ի Սալմաստայ. յԱրամախայ մինչև 'ի Մարանդայ գիւղէն, 'ի Ճերինթալն իւր երկրովն, 'ի յա̄ծախնամ գիւղաքաղաքն Ջուղայ

'ի յԱստապատ, 'ի մեծ քաղաքն Նախջուան և 'ի Համբու ձորն բոլորովին. որոց յայդոցիկ բնակչացդ 'ի միասին՝ պատուելի քահանայից, սրբասէր կրօնաւորաց, իմաստուն վաճառականացդ, ա̄ծասէր ձեռագործացդ, բարեպաշտ տանուտերացդ, ձեռնահմուտ արհեստաւորացդ, աշխատասէր հողագործացդ և ամենայն չափու հասակի՝ մեծի և փոքու, արանց և կանանց, ծերոց և տղայոց, երիտասարդաց և կուսից, հոգևոր զաւակաց բազմաչարչար նահատակին սուրբ հօրն մերոյ Գրիգորի լուսաւորչին՝ որոց անուանք ձեր գրեալ են 'ի գրին կենաց յանմոռաց յիշատակութիւնն Աստուծոյ,,:

,, Գիտութիւն լիցի ձեզ ամենեցուն՝ հոգևոր որդիք մեր 'ի Քրիստոս, զի որպէս օրէն է ա̄ծային և սահման մահկանացու բնութեան՝ ամենայն որդի հարազատ ժառանգել զտուն և ըզհայրենիս իւրեանց, Նոյնպէս և այսու օրինակաւ եկն առ մեզ 'ի յազգմանէ հոգւոյն սրբոյ ընտրեալդ ա̄յ և 'ի մարդկանէ՝ հեզահոգի, բարեմիտ և սրբասէր կուսան և ս̄բ վարդապետ տէր Աթանասդ՝ որ է սնեալ և վարժեալ 'ի ս̄բ Նախավկայի վանքն. և ուսեալ էր զիմաստս կրթական 'ի ձեռն Ստեփաննոսի քաջ րաբունապետի սաղմոսեցւոյ. որ եկն 'ի ս̄բ Աթոռս ձեր ամենայն միաբանից վկայութե̄դ, մանաւանդ բոլորեցունց ձեր թէմովդ վկայած՝ նա և յԱստուծոյ իսկ. իսկ մեք որպէս խնամածու և գթած հայր 'ի վերայ սիրելի որդւոյ իւրոյ՝ պատշաճ և իրաւունք համարեցաք զԱթանաս վարդապետդ լինել եպիսկոպոս ս̄բ Նախավկայիդ և իւր սեպհական վիճակին և զոչ այլ ոք օտար. զի օտարն վարձկան է և ոչ ճշմարիտ հովիւ. վասն որոյ կոչեցաք զդա 'ի կարգ և յաստիճան եպիսկոպոսութեան խորհրդով ձեռնադրութեան ա̄ծային իշխանութ̄ն: Նաև զԱթանաս վարդապետդ՝

եպիսկոպոս ծ̃ամուխ ո̃ր Գեղարդեամբս և աս_
տուածախօս սուրբ Աւետարանաւս , և շնորհա_
բաշխ ո̃ր Աջովս մեր լուսաւորչին Գրիգորի ՚ի
մէջ երկնանման ո̃ր տաճարիս Էջմիածնի : Աւ_
պարգևեցաք դմա յականաւոր ո̃ր ուխտն նախա_
վկային՝ բոլորովին ընական և սահմանեալ վիճակ
իւր՝ զոր վերագրեցաք դմա Թէ՛մ, աթոռ և հան_
գստեան տեղի · վասն որոյ առաջնորդութ̃ե Մի_
ածնի որդւոյն Աստուծոյ առաքեցաք զԱթանաս
վարդապետդ՝ սրբազան եպիսկոպոս առ ձեզ մե_
րով առաքելական և հայրապետական իշխանութ̃ե՝
հովուել զձեզ և ուսուցանել , գնալ յօրէնս և
՚ի պատուիրանս անարատութ̃ե և սրբութ̃ե՝ տա_
լով զանձն օրինակ բարեաց ամենեցուն · մանա_
ւանդ պահեսցէ զանձն իւր սրբութ̃ե , արդարու̃ե
և խոնարհութ̃ե՝ առնելով ինքն և ապա ուսու_
ցանելով ձեզ · պահելով զանձն իւր ՚ի բամբա_
սանաց առ մարդիկք և անդատապարտ առ Աս_
տուած : Կոչեսցէ զիմաստունսն և զարժանաւորսն
և զվկայեալսն ՚ի կարգ և յաստիճան կիսասարկա_
ւագութ̃ե , սարկաւագութ̃ե և քահանայութեան ·
կալցի և հրամանաւս մերով ՚ի վերայ ձեր առաքե_
լաբար իշխանութիւն կապելոյ և արձակելոյ ,, :

,, Այլև՝ զամենայն կանոնեալ հաս և իրա_
ւունս ձեր՝ զոր յամենայն տարի պարտիք տալ ա_
թոռոյ բաժին , տուք ՚ի ո̃ր Նախավկայի վանքն՝ ՚ի
ձեր հոգւոյ տունն · և եթէ զի՛նչ է հաս և իրա_
ւունք՝ այս է հաս և իրաւունքն · զի՛նչ էրէց որ ՚ի
թէմս կայ՝ նոցա տանէն զինչ հասք որ լինի , մուտ_
քրն նախավկային է · տեառնական մատաղն որ լինի
երին , մորթին իւր աթոռոյն է · յանկարծամահ որ
լինի՝ խ̅ իցն ու մատաղն եպիսկոպոսին է · և կողո_
պուտքն՝ լաւ խալի մի , կամ լաւ շուրջառ տան
յաթոռն · զերախայրիս կալոց և հնձանաց · երա_
խայրիքն այն է՝ յերգնագլուխն կէս մարդան հաց ,

յամէն հնձանէ մէկ դորակ գինի տան. զսրբանուէրն՝ որ է սրբադրամ, այդ եկեղեցւոյ և խաչի լուսոյն է. այս՝ յամենայն աշխարհ յոր տեղ որ քրիստոնէութի կայ, զայդ կուտան իւրեանց աթոռոյն. և ս առաւել զսրբանուէրն՝ որ եկեղեցւոյ և խաչի լուսոյն է, որ 'ի շատէն շատ, և 'ի փոքրէն փոքր. որպէս ասէ տէրն յաւետարանն թէ՝ որում շատ տուաւ՝ շատ խնդրեսցի 'ի նմանէ, և որում սակաւ, սակաւ. որ յամէն տարի միանգամ սրբանուէր ժողովեն՝ որ սրբոցն է բաժին. և այլ զինչ հարկ որ լինի, առանց աթոռոյ հրամանին չունիք իշխանութիւն կատարել՝ թէ մատաղ, թէ խաչօրհնէք, թէ այլ ինչ պատեհն՝ աթոռոյն, որպէս յամենայն տեղի. այս է հաս ու իրաւունք աթոռոյն և բաժին՝ որպէս ասացաք զամենայն,,:

,,Իսկ մի՛ ոք իշխեսցէ հակառակիլ դմա և կամ խորհիցէ իրաւանց դորա և կամ չի հնազանդի դմա, և հակառակ լինի հրամանաց մերոց և կաթուղիկոսարանիս. այնպիսիքն եղիցին 'ի ներքոյ պատժոյ և դատապարտութե. իսկ հնազանդեալքն դորա և հրամանի սբ Աթոռոյս՝ օրհնեալ լիցին յԱստուծոյ և ամ սրբոց և 'ի մէնջ, ամէն,,:

,,Իսկ դուք սպասաւորք սբ Նախավկայիդ՝ Յովհաննէս վարդապետ և Մկրտիչ եպս և տէր Ներսապետ եպս և այլ մեծ և փոքր միաբանք սբ ուխտիդ՝ սիրով ընկալարուք զԱթանաս վարդապետդ՝ ձեզ եպս, որպէս արժանաժառանգ այդմ աթոռի և գահի: Շնորհեցաք և 'ի ձեռն դորա ձեզ զպատուական պարգևս զիւղն սբ օծութե, զսրբալոյս մեռոնն սբ՝ զոր հոգին սբ արասցէ 'ի լուսաւորութիւն նորածնելոցն աւազանաւն յորդեգրութիւն հօրն երկնաւորի և 'ի ժառանգակցութի Քի. նոյն և 'ի ճակատն նշան հաստատութե 'ի յօծումն քահանայից և 'ի նորոգութիւն սբ ե-

կեղեցւոյ. բայց յա՟մ ամի նոր առցի 'ի մէնջ և զհինն 'ի նորն խառնեսցէ, 'ի փառս Ք՟ի Աստուծոյ մերոյ՝ որ է օրհնեալ յաւիտեանս ամէն ,,:

,, Գրեցաւ գիր օրհնութե՟ բարձր հրամանի մեծի ս՟բ աթոռոյս Էջմիածնի, 'ի թուականութ՟ես Հայոց մեծաց Ջ՟Ղ (1541) ամի. և ես առաւել հաստատութե՟՝ ձեռագրեցաք մերով սովորական կարմիր ձեռնագրաւդ 'ի փառս Ք՟ի ,,:

,, Գրիգոր ծառայ ծառայից ա՟յ Յ՟ի Ք՟ի շնորհօքն և ողորմութ՟բ նորին կաթուղիկոս ա՟մ Հայոց, և պատրիարգ Վաղարշապատու սուրբ Էջմիածնի ,,:

582, Ապա յետ ժամանակաց Յակոբ վարդապետ Ջուղայեցի (որ շինէ խօճա-շէկօն) կացեալ առաջնորդ մենաստանիս և մեծ ջանադրութ՟բ հոգ կալեալ՝ նորոգէ 'ի հիմանց յամի 1643 զեկեղեցին և զբոլորանդակ շէնս մենաստանին պարսպաւն հանդերձ:

Եկեղեցին միջակ մեծութ՟բ կառուցեալ 'ի կոփածոյ քարանց ուղիղ քառակուսի 'ի վերայ երկուց սեանց. ունի զմի սեղան պատարագելոյ և զերկուս աւանդատունս և զվերնատուն յարևմտեան բաժնի՝ 'ի միջոցս սեանցն և արևմտեան որմոյն 'ի կոփեալ քարանց և 'ի թրծեալ աղիւսոյ. այս վերնատուն՝ որ է տեղի աղօթից ուխտաւոր կանանց, ունի զերկուս ելանելիս (նէրտիվան) յերկոսին արևմտեան անկիւնս եկեղեցւոյն 'ի նոյն քարեայ շինուածոց. 'ի միջոցս այսց ելանելեաց, սեանցն և որմոց են երկու փոքրիկ մատուռք՝ որք են ընդ վերնատամբն. 'ի մէջ հիւսիսային մատրան ամփոփեալ կան մասունք՝ նշխարք հազար սրբոց՝ զորս անդէն եգիտ նա ինքն Յակոբ վարդապետ 'ի նորոգ հիմնարկելն զայս տաճար, և անդէն 'ի նոյն տեղւոջն դարձեալ հան֊

գոյց և եդ 'ի վերայ սպիտակ վէմ մարմարոնեայ տապանաձև՝ որ ունի գրուած ըստ այսմ:

,, Աւուրին ողջ երկրի,
հիմնարկութիւն այսմ տաճարի.
որք հազարաց նշխարքս յայտնի՝
ձեռամբ Յակոբ վարդապետի.
որ յետ իններակ եռակ ամի՝
կաթուղիկոս Հայոց լինի.
դարձեալ 'ի տեղւոջս ամփոփի
թուին ՌՃԷ ամի ,, (1658) :

Ճակատ բեմին սեղանոյ և կիսաշրջանակն կամարի նորին բարձր իբրև մարդաչափ յարդարեալ են թափանցիկ սպիտակ և սեաւ մարմարոնեայ վիմօք. և արևմտեան մեծի դրան յատակի վէմն է միապաղաղ սեաւ մարմարիոն իբրև չորից կանգնոց երկայնութիւն, երից լայնութիւն և երկուց թզաց թանձրութեամբ:

Կաթուղիկէ տաճարիս՝ որ 'ի վերայ արևելեան բաժնին, է կարի գեղեցկաձև բազմանկիւնի՝ վայելչապէս զարդարեալ երկոտասան Առաքելոց, և չորեցն՝ Տիրամօր կուսի, Յովհաննու կարապետի, Ստեփաննոսի Նախավկայի և Սբ Լուսաւորչի պատկերօք եղելովք քանդակեալ 'ի վէմ 'ի վեշտասան անկիւնսն արտաքուստ. և նոյնաթիւ այլովք պատկերօք զանազան կենդանեաց 'ի գագաթան անկեանց՝ յորոց իւրաքանչիւրոց բերանաց հոսին ջուրք անձրևացն իջելոց 'ի սեպացեալ և սրացեալ տանեաց կաթուղիկէին:

'Ի հարաւակողմն եկեղեցւոյս կից ընդ որմն արտաքուստ բարձրացեալ երկ յարկօք է զանգակատուն վայելուչ՝ որոյ կրկին յարկն է գմբէթն 'ի վերայ չորից սեանց: Թէպէտ հոգացեալ են տալ կառուցանել և զայլ երկուս զանգակատունս 'ի վերայ արևմտեան դրանն և 'ի հիւսիսակողմն հանդէպ հարաւային զանգակատանն, այլ

որպէս երևի պանդխտութի նորին Յակոբայ կա_ թուղիկոսի և վախճանն իսկ անդ ի Կոստանդի_ նուպօլիս եթող զայնս կիսակատար․ քանզի երկո_ ցունցն հիմունք ևս լցեալ և յարդարեալ՝ կան այնպէս թերի ։

Ստուաչան հիմնարկութեան և աւարտման տաճարիս այսո_ րիկ գտանի յանկեան արևելեան հիւսիսոյ հիման խա_ րուշինին տանեայն արտաքուստ՝ այսպէս․

„ Ս․Վ․ ՌՂԲ (1643)․ հիմնարկեցաւ ։ Թվ․ ՌՃԴ (1655), աւարտեցաւ „։

Ի գագաթն չորս վայելչուղ արուեստաւոր ծործա կա_ մարի դրանն արևմտեան՝ ի ներքոյ լուսամըտյց գա_ ւահանին ի պատուանդանի մարմարինեայ խաչքարի և ի հատորակ վիմին եղելոյ ի ներքոյ նորին՝ գրի այսն արձանագիր․

„ Յիշատակ է և բարեխօս սուրբ խաչս նա_ խիջևանեցի Աղամալին, և կողակցոյն Մա_ րիամին, և ծնողացն Աղաջանին, Նանա_ գուլին․ որ սայ է պատճառ արևմտեան պա_ տիս նորոգութէն․ Թուին ՌՃԾԳ․ (1704)„։

Ի վերայ Բծի վիմին՝ որ եդեալ կայ ի վերայ դրանն արևմտեան, գրի այս արձանագիր Բ և նոյն մասօք ըստ վերնոյն․

„ Կամօք և ողորմութեամբն Աստուծոյ նորոգեաց սրբոյն Ստեփաննոս նախավկայի եկեղեցւոյս արևմտեան կողմիս դրան երեսն նախիջևանցի Աղամալն յիշատակ իւրն և կո_ ղակցուն Մարիամին, և ծնողացն Աղաջա_ նին և Նանագուլին„։

'Ի վերին ծայրս վիմոյ երկայն սեամոյ այսր արեւմտեան
դրան գրեալ սոյն արձանագրութիւն։
'Ի ծայր հիւսիսային սեամոյն.

,, Յիշատակ է դուռս ագուցեցի խօճայ Նիկողայոսին և կողակցացն Մարիամին և Մարգարտին, և պապին Բարդուղիմէոսին, և ծնողացն Պարտաշպալուն և Զինջակին, և եղբօրն Նազարին, և որդւոց սոցին: ('Ի ծայր հարաւային սեամոյն). Տէրունին, Յարութիւնին, Ահարոնին, Սամուէլին, Նիկիային, Խաչատուրին, Պօղոսին, Մովսէսին, Նիկիազարին, և միւս Նազարին, և քերվերն Նիկիարեթին. Թվ. ՌՃԻԹ. (1680) ,,:

Աից այս տաճար 'ի հիւսիսակողմն է փոքրիկ եկեղեցի ընդ երկայնութիւն մեծի եկեղեցւոյն՝ յանուն սրբոց առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, բայց օրոցանն կամարայարկն խոնարհ. Գրտանի արձանագիր 'ի ճակատ բեմին դասող ընդերկայնութեան 'ի վէմ սեան մարմարեան՝ ըստ այսմ.

,, Յիշեցէ՛ք 'ի Քրիստոս սատապատեցի խօճայ Ծատուրն և ծնօղացն (ծնողին) խօճայ Արզմանն, և գիւլխանն, և որդի Սարդանն, և կողակիցքն. ՌՃՀԵ. (1726) ,,:

Այս մենաստան ունի կրկին պարիսպ՝ զմին շուրջ զտաճարաւն և զմիւսն 'ի հարաւակողման կից նմին. միջոց երկոցունցն են աւելի որմունք սենեկաց քան պարսպ. որոց շինուածք և որմունք կացուցանեն զպարիսպն յերկուս բաժինս. յայս միջոցում են տնտեսատունք և ձիանոցք՝ ե՛ն որ քարայարկք, և ե՛ն որ փայտածածք. 'ի հարաւակողման պարսպի են մեծ և փոքր սենեակք առաջնորդին կամ վանահօրն և միաբանից, նմանապէս քարայարկք և փայտածածք, կրկնայարկք և եռայարկք. բոլորանդակ շրջապատ պարսպին հան_

դերձ բրգամբքն հիւսեալ է 'ի հաստարակքարանց և է բաւականաչափ բարձր · յարևմտից կողմանէ պարիսպ տաճարին ունի դուռն մեծ երկփեղկեան երկաթապատ։

583, Հիւսիսակողմն մենաստանիս է զառ 'ի վայր իբրև քառորդ մի ժամու ցգետն Նրասի· իսկ արևելեան և արևմտեան կողմունքն են դիւր առապարք, բայց հարաւակողմն զառ 'ի վեր՝ խոտորագնաց ցգագաթն մեծի լերին Սաղարթայ։ 'Ի պարսպէ մենաստանիս դէպ յայս կողմն՝ այն է, ընդ հարաւ հեռի իբրև քարընկէց մի են ժայռք ինչ յաւազուտի անդ՝ յարևելակողմն հեղեղատին փոքու· 'ի ներքուստ այնց ժայռից ընդ երկրաւ ելանէ աղբիւր յորդ՝ խոնարհ յերեսաց գետնոյն աւելի քան զերիս կանգունս· որ ընդ երկրեայ կազմեալ ճանապարհաւ անցեալ ընդ հեղեղատն և խառնեալ զանջքք արևմտեան առապարին՝ գայ ելանէ 'ի դուրս հանդէպ արևմտեան դրան պարսպին և դարձուցանէ անդէն զփոքրիկ ջրաղացն· և անտի իջեալ 'ի խոնարհ յաւազան մի մեծ՝ արբուցանէ զծառաստանսն և զայգիս վանացն՝ որք ընդ զառ 'ի վայրն· ջուր աղբերն ոչ այնքան ախորժ յարբումն և ունի փոքր ինչ զօրութիւն լուծողական յսկզբանն։

Զայս աղբերբ աւանդեն բնակիչք մենաստանիս՝ բղխեցուցեալ առաքելոյն Բարդուղիմեայ· ընդ մէջ ական աղբերս և հեղեղատին գոյ մուտ մարդոյ 'ի ճանապարհն ջրոյս· ընդ որ մտել և իմ՝ գնացի ընդ ջրանցսն 'ի վեր կիսահասակ փոքր ինչ ը̄ աջկոյս իբրև քայլս քսան և հասի յակն աղբեր լոյս 'ի ձեռին· ուրանոր բազմաբերան հոսի ջուրն ընդ պատառուածս ժայռին· և անդ յաջ կողման իբր 'ի պատուհան ինչ դնի խաչ երկաթեայ կարի հնագոյն ձևացութեամբ՝ որոյ և ծայր վերին թևոյն ևս բեկեալ· զորմէ ասեն շինեալ 'ի

Բարդուղիմեայ · մնանեն աստ ուխտաւորքն 'ի տես աղբերս և 'ի համբոյր նշանին սրբոյ, այլ անձուկ գոլով ճանապարհին չկարողանան մարմնեղ և ստուար անձինք մուտ գործել:

'Ի սպառուածս ծառաստանին և այգեաց՝ որք անկանին 'ի հիւսիսակողմն մենաստանին, յարևելեան եզեր անդ ճանապարհին կամ հեղեղատին են սպառածք ինչ ուղղաբերձ՝ յորոց միոյն վերայ տեսանին ձևակերպութիւք քառաթև նշանի խաչին. 'ի մէջ այնց զերծիս և եթ ցուցանեն ձևացուցեալ 'ի ձեռաց վերոյիշեալ Առաքելոյն սբյ՝ և չէ՛ օտար ինչ. քանզի 'ի յոլով տեղիս հայաստանի՝ ընդ որ կոխեցին ոտք սրբոց Առաքելոցն և Աշակերտաց նոցին, մանաւանդ 'ի դիւարնակ տեղիս, երևին հնագոյն ձևացութեամբ նշանք տէրունեան խաչի. զորոց ճառեն և եկեղեցական մատեանք:

Առաջնորդք Վանատանս.

584, Բարդուղիմէոս առաքեալ նախկին հիմնող մենաստանիս:

Բարգէն եպս յիշատակեալ 'ի Թուղթն Աշոտոյ Թագաւորի և Խաչկայ կաթուղիկոսի, յամի 976:

Աթանաս եպիսկոպոս ձեռնադրեալ 'ի Գրիգոր Ժա, կաթուղիկոսէ յամի 1541:

Մատթէոս եպիսկոպոս ձեռնադրեալ 'ի Միքայէլ կաթուղիկոսէ յամի 1563:

Մարտիրոս եպիսկոպոս ձեռնադրեալ 'ի Դաւիթ և 'ի Մելքիսեթ կաթուղիկոսաց յամի 1587:

Շմաւոն եպիսկոպոս՝ որ ընկալաւ զնշխարս մասանց Յովհաննու կարապետի, զգտեալն յաւերակս եկեղեցւոյն հին Ջուղայու յամենէ այ_

լուգի մահմէտականէ. յԱռաքել Դաւրիժեցի. գլ. խզ. Թղթ" 498, ց501։ 'ի Հայր Միքայէլ Չամ-չեան, հտր. գ., յերես 646. 647։

Առիստակէս վարդապետ շամբեցի մինչև ցվախճան կենաց իւրոց՝ ըստ Առաքել վարդապետի դաւրիժեցւոյ Թղթ" 250։

Այժմ ևս այս մենաստան գտանի 'ի շինու-թեան և են 'ի նմա քանի կրօնաւոր անձինք վա-նահարք հանդերձ և կան ընդ իշխանութեամբ արքեպիսկոպոսին ատրպատականի։

Ս. Երիցին վանք Նորընջակայ յանուն Յովհաննու կարապետի.

585, Այս մենաստան անկանի 'ի միջոցս Նա-խիջևան քաղաքի և աւանին Ագուլեաց 'ի սահ-մանի անդ Նորնջակայ. և է յարևելս Նախիջևա-նայ հեռի չորս ժամօք, յԱգուլիս աւանէ յարև-մուտս ութն ժամօք. իսկ յՆորնջակայ՝ որ գտանի յարևելեան հիւսիս՝ ժամ և կէս միջոցօք. և է 'ի գլուխ տեղւոյ յարևմտեան եզեր գետակին։

Առաջին մենաստան Նորնջակայ մերձ յամ-րոցն Նորա՝ յանուն սրբոյն Գէորգայ եղև լքեալ յառաջնորդացն ինչ ինչ բանաւոր պատճառանօք. ապա Եսայի վարդապետ իսպառ լքեալ զայն՝ գայ յայս տեղի և նորոգ հիմնարկութեամբ տայ կա-ռուցանել փառացի տաճար 'ի կոփածոյ քարանց յամին 1551, յանուն սբ. Յովհաննու կարապետի։

Ճաճարն է միջակ մեծութեամբ 'ի վերայ չորից սեանց. ունի զմի սեղան սրբազան խորհր-դոյն և զերկուս աւանդատունս և զկաթուղիկէ 'ի վերայ սեանցն։ Ունի յերկուս տեղիս զթուական շինութեանն. Զառաջինն՝ յարևմտեան ճակատ որմոյն արտաքուստ 'ի բարձր դրանդեան անդր քան շրջանակաց 'ի պատուանդանի խաչվիմին՝ ըստ այսմ։

" Եսայի և Ղազար վարդապետ շինողք.

Թվ. Ռ. (1551) ,, ։

,,Օ երկրորդն՝ 'ի միջոյ բնոյ վերոյիշեալ խաչին՝ ըստ այսմ.

,,Թվ, ՌՃԷ. (1658) ,, ։

Իսկ չորրորդն՝ 'ի հիւսիսակողման որմն անդ եկե-ղեցւոյս՝ նոյնպէս բարձր քան զշինուածոյն 'ի խաչվէմ՝ ըստ այսմ.

,, Մուսայի վրդ-պտ շինող. Թվ. ՌՃԴ (1655) ,, ։

Փոքրիկ դաւիթն եկեղեցւոյս հասարակ քարամբք և թրծեալ աղիւսովք՝ որոյ հիմունքն և եթ կան, իսկ միւս շէնք նորա բովանդակ խո-նարհեալ։

Կից յայս տաճար 'ի հարաւոյ է փոքրիկ եր-կարաձև մատուռն յանուն սրբոյն Ստեփաննոսի նախավկայի. և անդ յիշատակագրութիւն կարծր [illegible] գրութիւն սիւնաց հիւսիսոյ կամարին առաջնոյ՝ ըստ այսմ։

,, 'Ի թուոյ ազգիս մեր հայկի,
հազար հարիւր վաթսուն երեքի.
խօջայ Սըյվազն գովելի,
յոյժ բարեպաշտըն ցանկալի.
տեղեաւ գոլով շուօթեցի,
շինեաց տաճարս այս նազելի.
յանուն սրբոյն Ստեփաննոսի,
նախավկային մարտիրոսի.
իւրն յիշատակ է միշտ կենդանի,
որով Քրիստոս պատարագի.
մաւն և բաժին իւրըն լիցին,
և ծնողացն Մկրտչին և Նատարին ||.
և կողակցին Խաթունին, և
քեռցն Ոննայուն և փառանկուն,
և դստերացն և իւր տան.
արբանեակն է Մարգարիտն,
զոր տէր աստուածն ամենայնի
զինքն 'ի ցասմանց անփորձ պահի.
երկար կենօք յայս աշխարհի,

պայծառ փառօք ՚ի յաւետենի․
աթոռս մեծին Յովհաննիսի,
իւրն օգնական միշտ լինիցի․
թէ՛ առաջնորդ թէ՛ միաբանք,
եմք յՍ․ յվաղէն շնորհակալ,,։

Սյս փոքրիկ տաճար ունի ՚ի վերայ տա֊նեաց իւր զփոքրիկ վայելուչ զանգակատուն․ որոյ արեւմտեան հարաւոյ սեանն ունի յարեւմտեան ճակատ իւր շըր֊ջան ձիշտառնագրութեան՝ այս օրինակ։

,, Յիշատակ է զանգակատունս նախչուանցի աղաջանի որդի պարոն Սղամալին․ ՚ի ռճծդ,
թուին․ (1705),,։

Գերեզմաննոց միաբանից վանացս ՚ի կողմն հիւսիսոյ մենաստանիս՝ ՚ի վերայ փոքրիկ բլրակի․ ուր կայ ամփոփեալ մարմին ուրումն Եսայեայ վար֊դապետի միաբանի վանացս․ եւ ՚ի տապանաքարին անդ ՚ի հարաւոյ կողմանէ գրի այս ինչ։

,, Սյս է տապան․ ․ Եսայի երանաշնորհ հոգեընկալ վարդապետի, հանգեաւ ՚ի տէրն ամենի․ թուականին ռճձ, ին․ (1731),,։

Սյս մենաստան ունի շուրջանակի պարիսպ հանդերձ բրգամբք․ բոլորովին նիւթ շինուածոյն է ՚ի հողոյ, բաց ՚ի քանի սենեկաց եղելոց ՚ի հա֊րաւկոյս։

Ունի այս մենաստան եւ արդիւնատու կա֊լուածս ՚ի սահմանի իւրում ՚ի պէտս ծննդեան ՚ի նմա եղելոցն․ եւ է այժմ ՚ի շինութեան ընդ իշ֊խանութեամբ հոգեւոր կառավարութեանն Նա֊խիջեւանայ։

586, Հանդէպ վանացս յարեւելս հիւսիսոյ իբրեւ յերկիս քառորդս ժամու է գիւղն Դ․ամա կոչեցեալ՝ յարեւելեան սարոտի ուղղաբերձ սե֊պացեալ քարաժայռի՝ զոր այլազգիք կոչեն Իլան դաղը՝ օձալեառն․ յայս գեղջէ էր Յովհան քահե֊

ցի կոչեցեալն միաւորիչ հայրենեաց՝ անդ 'ի սկիզբն ԺԴ՝րդ դարու. որոյ մենաստանն և կայ տակաւին առ ընթեր գեղջն լքեալ գլխովին՝ որպէս և ինքն 'ի համազգեաց:

### ՄԵՆԱՍՏԱՆ ՅԱՆՈՒՆ ԹՈՎՄԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՅ՝
### ԱՅՆ Է
### ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՐԱՆ ԳՈՂԹԻՆ ԳԱՒԱՌԻ.

587, Ագուլիս աւան ուղղակի յարևելս Նախջևանայ հեռաւորութեամբ աւելի քան զաւուր ժամ. որոյ նիստն է 'ի ձորամիջի և ձորն երկայնեալ 'ի հիւսիսոյ ընդ հարաւ ցգետն Երասխ ժամ և կէս միջոցօք. 'ի հիւսիսային ծայրէ ձորոյն՝ որ սկզբնաւորի 'ի մեծ լեռնէն Կարուայ (339), ըմկանեն շէնք տանց բնակութեանց խառն ընդ այգեաց, պարտիզաց և ծառաստանաց մինչև ցգիւղն Կաշտ անուանեալ: Ընթանէ ընդ մէջ աւանիս գետակ փոքրիկ՝ որ ընդ ջուրց աղբերց բղխելոց 'ի տեղիս տեղիս, ոռոգէ զայգիս, զծառաստանս և զպարտէզս:

Մենաստանն կամ եպիսկոպոսարանն այսր գաւառի է 'ի մէջ սոյն Ագուլիս աւանի. որոյ եկեղեցին 'ի սկզբանէ անտի հիմնեալ է յանուն առաքելոյն Թովմայի. և այժմ նոյն տաճար փառացի կառուցեալ 'ի յետնոց՝ է 'ի վերայ չորից մեծամեծ սեանց. շէնք նորա կատարեալ քառակուսի բաւականաչափ բարձրութեամբ. ունի կաթուղիկէ վայելչաձև 'ի վերայ չորից սեանցն և զերիս փոքրիկ զանգակատունս 'ի վերայ արևմտեան, հարաւային և հիւսիսային դրանցն և զմի սեղան սրբազան խորհրդոյն՝ որոյ յերկոսին կողմանս են երկու աւանդատունք:

Արձանագիր շինութեան եկեղեցւոյս գտանի ՚ի վերայ հիւսիսային դրանն ընդ զանգակատամբն՝ այսօրինակ.

,, ՚Ի Թուականիս Հայկականի,
մի յոբելեան երկշրջանի.
եռակ տասանց որով վարի,
սա կառուցաւ քառակուսի.
ձեռամբ Յոհան վարդապետի,
որ է յաջորդ յայսմ դահի.
բազում ծախիւք անթուելի,
չորիւք ամօք սա կատարի.
երեք դրամբք ըստ խորհրդի,
կամարակապ զարմանալի.
անուամբ մեծին սբ Թումայի,
նման վերնոյնըն սիոնի.
սա մեզ շնորհեաց պարգեւ բարի,
զաստուածամուխ աջն ձրի.
ամուր պատուարք բոլոր թեմի,
պաշտօնէից իւր հովանի.
պարծանք է սա Գողթ գաւառի,
եւ ցնծութիւն Հայոց ազգի.
Նպաստութբ Տեառն Յսի մի եռակի ,,:

Թիւ սոյն արձանագրութեան հաւաքի ՚ի ռճխդ թուականն Հայոց՝ այն է, յամ Տեառն 1695:

՚Ի վերայ դրանն հարաւային՝ դարձեալ ընդ զանգակատամբն, գտանի արձանագիր անուանց իշխողացն եկեղեցւոյ ՚ի ժամանակի անդ շինութեան եկեղեցւոյս՝ ըստ այսմ.

,, Իշխանութեամբ պարսից ազգի,
շահ Հուսէն Թագաւորի.
դիւանբէկութեամբ Մուսաբէկի,
որ էր տեղեաւ ագուլեցի.
եւ Յոհաննու առաջնորդի,
վերախնամող յայսմ թեմի.

որոց յաւուրս սա կանգնի ,
այս վայելուչ եկեղեցի ,,:

'Ի հարաւակողման մեծի դրանն արևմտեան յորմն անդր գրեն անուանս աշխատաւոր վերակացուացն և օժանդակ եղելոցն 'ի շինութեան եկեղեցւոյս՝ ըստ այսմ ·

,, Յիշեցէ՛ք ագուլեցի քալանթար Սվանէսն, վանքիս վէքիլ Հայրապետն, մելիք Ասկարխան, մղտեսի Հայրապետն, Սարգանն, Սաաքելն, Ալէքսանն, Աղամջանն, Սվանէսն, Նահապետն, Մելքոնն, Խասալին, Աղամիրզէն, Մաթեոսն, Ամիրն, Պուլին, Մուշկին, Պուլպասարն՝ որք օժանդակ եղեն սուրբ եկեղեցւոյս ,,:

Նոյնպէս 'ի հիւսիսակողմն այսր մեծի դրան յորմն անդր անուանս աշխատողաց և նպաստ եղելոցն ·

,, Յիշեցէ՛ք ռամեցի խօջայ Աւետիքն և եղբարքն իւր Նաւասարդն և Նազն և երէցփոխան Սարգանն և Գրիգորն և Պետրոսն, Փիրին, Նուրին, Արզանին, Սարգանն, Բարաքեաթն, Գրիգորն և տէր Գրիգորն՝ որ բազում օժանդակ եղեն սուրբ եկեղեցւոյս ,,:

Բարձր քան զայս գրուածս անուանց 'ի ներքոյ լուսամուտին դնի թուագրութիւն հայկական խոշոր տառիւք · թվ · ռճխգ · (1694) · միով պակաս քան զիսկական թիւն շինութեան :

Արձանագիր ուխտաւորութեան եկեղեցւոյս և անուանց գիւղերէից վիճակի նորին և հաստատութեան այնց յաւաժելոյն Բարդողիմեայ և 'ի Գրիգոր Լուսաւորչէ՝ գտանի 'ի վերայ արևմտեան մեծի դրան ընդ զանգակատամբն՝ որ է

և ընթերցումն Խաչմաշի շնորհ տեառն՝ յանդդաշեալ 'ի վէմ:

„Բարդուղիմէոս 'ի Հայս եկեալ,
զտուն տեառն նախ աստ հիմնարկեալ.
որ Խոտանայի առաքելոյն անուն կոչեալ,
Կոմսի անուն զիւր աշակերտն տեսուչ
տեղւոյս զնա եդեալ.
որ և զտուն Գողթ գաւառիս 'ի նա
յանձնեալ,
զՀօտն ընտրեալ՝ մերձ Ագուլիս և Գաշտ
գոմեալ.
Յովնա, Սամիս սմա յանձնեալ,
Բուստ, փառակս ևս ամեալ.
Բուհրուտ, Տեւի անքակ եղեալ,
և Մ ըջու ընդ Սարեւան, Ագահեցիկ
ցանկ հաստատեալ.
Դաստակ, Ս անանդ կցորդ եղեալ,
Տրունիս, Տնակերտ միաբանեալ.
Օրդուանիս և Բաղաքիկ և Անապատն
յանդամիջաց.
Մ եռն, Գետցիկ և Գեղերեցիկ՝ Նունիս,
Յորդվատ բաժին կարգեաց.
սուրբն Գրիգոր յորժամ եկեալ է առա-
քելոյն նօմոս տեսեալ,
ձեռագրով զայն հաստատեալ, և նզո-
վիւք ամրափակեալ.
յամի տեառն գճ և հինգ հասեալ,
Լուսաւորչին պատճէն գրեալ,
արձան գրիս որ աստ եդեալ„:

Հակառակ այսոցիկ վերոյգրեալ Թուականաց շինութե եկեղեցւոյս գտաւ և գրուած ինչ այլով Թուականաւ՝ յիսուն և ինն ամօք յառաջ քան զյիշեալ ուղիղ Թիւն շինութեան եկեղեցւոյս՝ այն է յիշատակարան մագաղաթեայ ձեռագիր շարակնոցի իմիք՝ որ գտաւ յայս մենաստան առ վարդապետի ուրումն. հանգամանք շի-

նութեան եկեղեցւոյն միւնոյն յերկոսին ևս, իսկ զշինութիւն պարսպին և սենեկացն այլովքն հանդերձ ստորագրէ յիշատակարանն՝ զորս ոչ ունին արձանագիրքն ։ Յերկոսին ևս այլ և այլ են անուանք առաջնորդացն և թագաւորաց՝ յորոց աւուրս եղեն այս շինարարութիւնք. ուստի երկոքին գրուածքն ևս երևին աներկբայելի ստուգութիւնք՝ ը̅ յառաջ բերեալ նոցին հանգամանացն ։ Այսպէս կարելի՛ է ասել՝ թէ երկիցս ևս եղեալ է շինութիւն եկեղեցւոյս յայնպիսի համառօտ միջոցի. առաջինն յամի 1636. իսկ երկրորդըն՝ 1695. այլ թէ ՚ի սոյն համառօտ 59 ամաց միջոցի յորպիսի արդեօք փոփոխութեանց ներքոյ անկեալ իցէ մենաստանն, մինչև կարօտանալ կրկին շինութեան եկեղեցւոյն ՚ի հիմանէ, չէ՛ք ինչ տեղեկութիւն, բայց թէ անկեալ կործանեալ իցէ ՚ի շարժէն դիպելոյ յամին 1679, (364). և այն յիշատակարան շարակնոցին ունէր զկնի քանի տողից գրուած՝ օրինակ զայս ։

,, Արդ՝ կազմեցաւ շարակնոցս ՚ի թուականիս Հայոց ՌՁԵ, (1636) ՚ի կաթուղիկոսութեան Էջմիածնայ խարազնազգեաց ճգնաւոր վարդապետի (Փիլիպպոս Հաղբակեցին), ՚ի առաջնորդութեան Պողթան գաւառի սուրբ ուխտիս Սուչաջի ՚ի նոյն վերասացեալ տէր Խաչատուր վարդապետաց վարդապետի՝ որ յայսմ ամի շինեաց և նորոգեաց ՚ի հիմանց զս͞բ ուխտս Սուչայի բարձրաբերձ կամարակապ և գմբէթաձև զս͞բ եկեղեցին, և բարձր պարսպով և չորեք անկիւնի խուցերով ([illegible]) և մուդբախերով ([illegible]) զարդարեաց, և բազում նեղութեամբ և չարչարանաւք շինեաց. զի յայսմ ամի եկն. . . . խօնդքարն սօլթան Մուրատն ՚ի վերայ պարսից անթիւ և անհամար զօրօք ըն͞դ արամբ . . . և էառ զամուր բերդն Երևան և էանց գնաց ՚ի շահաստան

քաղաքն Մարվէզ . . . . յետոյ դարձաւ գնաց 'ի տեղի իւր. և 'ի հասանել աշնան ժամանակին եկն շահ Սէֆի պարսից թագաւորն բազում և անթիւ զօրօք վասն ծովացեալ մեղաց մերոց և ժողովեաց բազում արս քրիստոնէից և ամենայն ազգաց ընդ ա̃մ երկիրս տէրութեան իւրոյ և էառ, գնաց 'ի յԵրևանայ բերդին վերայ առ 'ի առնուլ զնա. այլ ո՛չ գիտեմ զինչ լինելոցն է,,:

Պարիսպ մենաստանիս է ուղիղ քառակուսի և տաճարն 'ի միջին տեղւոջ. 'ի ներքուստ 'ի չո-րից կողմանց առ պարսպօքն են զանազան շէնք կացարանաց. սենեակքն Արքե̃պսի կամ առաջնոր-դի վիճակիս են յանկեան արևմտեան հիւսիսոյ մեծ մասամբ քարաշէն և կամարակապ՝ մանա-ւանդ ներքնայարկքն. սենեակք միաբանաց կամ հիւրոց են առ հիւսիսային և արևելեան պարըս-պօքն. և խոհանոցն ընդարձակ գմբէթաւոր յան-կեան արևելեան հիւսիսոյ՝ ուր բղխի աղբիւր ականակիտ ջրոյ. 'ի հարաւային կողմն և մասամբ յարևմտեան առ պարսպօքն են համբարանոցքն: Այս ամենայն շինուածք են քարամբք և կրով և 'ի թրծեալ աղիւսոյ բաց յինչ ինչ շինուածոց վերայարկաց. փայտածածք վերնայարկն հարաւա-յին կողման՝ որ անկանի 'ի վերայ համբարանոցա-ցըն, է կարի ընդարձակ. և է ուսումնարանն ման-կանց բնակչաց այսր աւանի՝ որ պարունակէ աւե-լի քան զերկու հարիւր աշակերտս:

Պարիսպն ունի զերիս դրունս. ա̃ մեծ դու-ռըն յարևմտեան բաժնի 'ի միջին տեղւոջ՝ որ հա-յի ուղղակի ընդ արևմտեան դուռն տաճարին. իսկ միւս երկուքն փոքր՝ և են դրունք պարտի-զաց և այգեաց վանացն՝ որք շուրջ զմենաստա-նաւս, քան պարսպին:

Մերձ յայս մենաստան 'ի հիւսիսոյ նորա է փոքր մատուռն՝ զոր անուանեն Սյոնէ, որ էր աշա-

կերտ Բարդուղիմէայ առաքելոյ. շէնք այսր մատրան անշուք, խոնարհ յարկօք, երկու փոքր սեամբ ունի և փոքրիկ պարիսպ. յորում են ինչ ինչ շիրիմք ննջեցելոց։ Յայս տեղի մատրան առեն լինել նահատակութեան նորին Կոմսեայ և ամփոփումն մաքուր նշխարաց նորա. և աւանդեն ևս՝ թէ երբեմն 'ի բերելն անդէն խորագոյն մերձ 'ի հիմն այսր մատրան, երևեցան 'ի կտաւ ծրարեալ արիւնամած քարինք ինչ՝ զորս անդրէն ամփոփեալ՝ ամրացուցին. և գուցէ այլ ուրումն քարկոծեալ սրբոյ իցեն այնք և ոչ Կոմսեայ. քանզի ը̅ ո̅ր Յովսեփայ ջուղայեցւոյ կատարեցաւ Կոմսի իւրով մահուամբ (169)։ Յայս մատուռն բնակիչք աւանիս գնան երբեմն երբեմն յուխտ խնկովք և մոմովք յանուն նորին ս̅բ̅յ առաջին հօր հաւատոյ իւրեանց։

### Առաջնորդք Գնատանիս և վիճակին։

588, Բարդուղիմէոս առաքեալ.
Կոմսի աշակերտ Բարդուղիմէայ առաքելոյ.
Բաբելաս եպիսկոպոս յաջորդ Կոմսեայ.
Մովսէս եպ̅ս կարգեալ 'ի Գրիգոր Լուսաւորչէ՝ որում և յաջորդեցին
Սահակ տարօնացի.
Զրուանդատ.
Ստեփաննոս.
Յովհաննէս.

Սիոն եպիսկոպոս՝ որ գտաւ 'ի ժողովն Դունայ վասն ընտրութեան ա̅ծ, Աբրահամ կաթողիկոսի յամի 594։

Մարտիրոս եպիսկոպոս՝ որ գտաւ 'ի ժողովն Կարնոյ առ Եզրիւ յամի 628։

Եսայի եպիսկոպոս յամի 768, որ գտաւ 'ի ժողովն Պարտաւայ, և ապա զկնի եկաց կաթողիկոս։

Խաչատուր վարդապետ յաւուրս Յակոբայ կաթուղիկոսի Ջուղայեցւոյ՝ զորմէ Զաքարիա սարկաւագ, հտր Բ, գլ 38. եւ յարձանագիրն սբ Գէորգայ վանաց (403)։

Պետրոս եպիսկոպոս՝ որ գնաց հրաւիրակ առ Եղիազար զկնի վախճանին Յակոբայ Ջուղայեցւոյ. դարձեալ նոյն Զաքարիա սարկաւագ. հտր Բ, գլ 52. եւ յարձանագիրն սբ Գէորգայ վանաց (403)։

Յովհաննէս եպիսկոպոս՝ որ յանկման Ղազարու Ջահկեցւոյ ըստ հրամանի Շահին՝ յամի 1745, կալաւ զԱթոռն տեղապահութբ իբրեւ ամիս վեց. եւ ապա անդրէն ՚ի տիրանալ Ղազարու գնաց ՚ի վիճակ իւր ՚ի Գողթն։ Եւ այսպէս յաջորդեցին մի զկնի միոյ եպիսկոպոսունք մինչեւ ցՍիմէոն Եպիսկոպոս՝ որ ՚ի մերում ժամանակի վախճանեցաւ. եւ ապա այս մենաստան յամի 1837, թուեցաւ ընդ մենաստանս վիճակին Երեւանայ եւ ժողովուրդն ընդ ժողովրդեան՝ ընդ իշխանութբ վիճակային հոգեւոր ատենին։

## Շարունակութիւն

589, [illegible] 1279, [illegible]

[illegible] (1675). [illegible]

և շայլին. այլ թէ Սերաֆիմ սուտ ասնա՝ չէ՞ ինչ յայտ_
նութիւն ։

Զայս ինձէս յարմարութեամբ ընծանէ Աբեան հա_
թուղինս երևանցի 'ի ջամբս անուանեալ մատենին 'ի ձեռն
որ վասն եկեղեցականութեանց Լազարեանց և ազատութեան
կաթողիկոսաց նոյին յանուանս Լ.ջնածնի 'ի պատճառս ինք_
նագրաւ ընկերոյ նոցա 'ի կաթողիկոսաց Հայոց՝ և առէ. թէ
չինէ վերբագետս նոյին Լազարեանց դասատուեցին այնպէս նաև
ման Պրոֆեսորն Շալեանին եկեղեցականաց, որպէս չէ անէցին
իրաւունս յեղանակութեան կաթողիկոսի իշխանաց ծերեանց
եկեղեցականաց. այլ թէ ոչ՝ Լորդնորդեն այնր գաւառին
կաթողիկոսաց պա՛րս էր ընթանալ ըստ Լորդնորդութեն հա_
ւանականացացն՝ է՛րէ Լուծէր ասաչէ Լայլ ոչ պատկեր նաև
ման Լեա. և չէ՛ ցարդ կա յայտնեալ. և ըստ գրոածոց նորա
արդարև չէ՞ այլ ոչ. չէ եթէ գտանէր՝ անհնա՛ր էր թէ ո՛չ
ծեղատակէր Լանուն նորա ։ Եւ Սերախօս կա Լայս դասատորու_
թեան անտանելոյ ասանց դատողութեան մայց պատմութեանն
Լորդնորդէ Լպահլաթին չինէ վէց եկեղեցականաց. վասն որոյ
ժէ՛ հայեցեալ 'ի ժամ գրոածոց կաղանկատուացայն, և 'ի
թուղթն Պետրոսի եկեղեցականն առ Ս.ահէ արքայ՝ եղբայր
դառեցաք Լեա ծՍեղելոյ առաքելոյ, եւ Լ(Ճ) ոսկեհաղելոյ
թողաք ըստ դատաւորութեան նորին Սերախօսի՝ թէ և գտանէ
ծանօնակուս վերըջին և քան զՍերեթա ։

## 590 · ՏԱՐԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱՑՆ Աղուանից սկսեալ ՚ի սրբոյն Եղիշայ աշակերտէ Թադէոսի առաքելոյ Հայոց և հասուցեալ ցվախճան կաթուղիկոսութեան նոցին՝ այն է, ց տր̃ Սարգիս վերջին՝ հանեալ ՚ի պատմութենէ նոցին Աղուանից և Հայոց։

ամփ փրկչ″
թուն եղեւ″

ա̃ · Սուրբն Եղիշա՝ որ զկնի նահատակութեան վարդապետին իւրոյ Թադէոսի առաքելոյ չոգաւ յԵրուսաղէմ ձեռնադրեցաւ անդ յեպիսկոպոս և վերադարձաւ յԱղուանս ՚ի քարոզութիւն և անդէն կատարեցաւ նահատակութեամբ յամի 79՝ զկնի աշակերտելոյ զբազումս և շինելոյ զեկեղեցի ՚ի Գիսն անուանեալ տեղւոջ (163)։

բ̃ · Սմա ըստ երանելի եպիսկոպոսական պատուով շնորհեցաւ առաջնորդ Աղուանից՝ այնինչ Ուռնայր արքայ նոցին մկրտեցաւ ՚ի մեծէն Գրիգորէ լուսաւորչէ Հայոց · զորմէ Գիւտ եպիսկոպոս Հայոց ՚ի Թուղթ իւր առ Վաչագան արքայ Աղուանից՝ որ ՚ի պատմութեան Մովսեսի կաղանկատուացւոյ · հտր̃ ա̃, գլ. ժա̃ · և Կիրակոս գանձակեցի։

340 2 գ̃ · Սուրբն Գրիգորիս պահլաւիկ որդի սրբոյն Վրթանիսի որդւոյ մեծին Գրիգորի լուսաւորչի՝ որ զկնի մահուան մեծին Տրդատայ նահատակեցաւ յԱղուանից անտի՝ կացեալ անդ զամս է̃։

488 Դ, Սուրբն Շուփհաղիշոյ եկն յԵ-րուսաղէմէ. յորոյ աւուրս եղև գիւտ նշխարաց սրբոյն Գրիգորիսի՝ այն է, յամի 488. իսկ ե̅ Սիմէոնի(?) այրեվանեցւոյ 'ի միջոցս 500 = և 530, թուոցն։

Ե, տէր Մատթէոս ա̅.

Զ, տէր Սահակ ա̅.

Է, տէր Մովսէս ա̅.

Ը, տէր Պանոս.

Թ, տէր Ղազար.

Ժ, տէր Զաքարիա ա̅.

Ժա, տէր Դաւիթ ա̅.

Ժբ, Սուրբն Յովհան ա̅՝ որ էր եպիս-կոպոս Հոնաց.

Ժգ, տէր Երեմիա ա̅, յորոյ աւուրս գիրն Աղուանից 'ի սրբոյն Մեսրով-պայ I։

552 44 Ժդ, տէր Աբաս 'ի գաւառէն Ծծա-րանց. սա փոխադրեաց զաթոռն հայրա-պետական 'ի Ջողա քաղաքէ 'ի մայրա-քաղաքն Պարտաւ յամի 552, 'ի պատճառս հինիցն թշնամեաց։

600 34 Ժե, տէր Վիրոյ, սա ձեռնադրեցաւ յԱբրահամէ ա̅, կաթողիկոսէ Հայոց. գերեցաւ 'ի պարս և եղաւ 'ի բանտի

I, Սուրբն Մեսրովպ արար զնշանագիրս Աղուա-նից յաւուրս սորին Երեմիա ա̅, եպիսկոպոսի Աղուանից էր ամի 423, բայց նշանակելոյ չափ-չեան հայր Մեսրոպեալ. իսկ 'ի վեր անդր նշանակէ Շուփհաղիշոյ էր ամի 488, դարձեալ բայ նո-րան չափչեանէ. և 'ի միջոց երկուցունց եւս յե-ղանակին ...(?)

յերկար ժամանակս՝ մինչև ցքսան և հինգ ամ յաւուրս Խոսրովու Բ, արքային պարսից. որոյ զկնի մահուանն ազատեցաւ և եկն յաշխարհ իւր յԱղուանս և ազատեաց զբազում գերիս յազգէ հայոց, Աքաց և Աղուանից՝ ՚ի Շաթա-խաղրէ որդւոյ Ջեբու-խաքանայ:

610 Ժզ, տէր Տիրանուն. զորմէ Մխիթար այրիվանեցի ՚ի ժամանակագրութեան ՚ի միջոցս ծ—կ հայ թուականին. ուր և ասէ՝ թէ արար զլուծմունս Ճ դժուարիմաց բանից:

17 Ժէ, տր̃ Զաքարիա Ա, այր սուրբ. սա յերաշխի էառ զմեծ քաղաքն Պարտաւ և ազօթիւք իւրովք զերծոյց ՚ի գերութենէ զբազում անձինս. և ձեռնադրեաց եպիսկոպոս սիւնեաց զԱբրթանէս անուն ոմն:

25 Ժը, տէր Յովհան Բ, յեպիսկոպոսութենէ Մամրասայ կոչեցեալ յԱթոռն:

12 Ժթ, տէր Ուխտանէս. սա ձեռնադրեցաւ ՚ի Կոմիտասայ կաթուղիկոսէ հայոց. անէծ զնախարարսն Աղուանից վասն ազգաշաղախ ապօրէն ամուսնութեանն նոցին՝ և պատուհասեալ բարձան ՚ի միջոյ յանցաւորքն ՚ի նոսին:

6 Ի, տէր Եղիազար յեպիսկոպոսութէ Շաքուայ. սա եգիտ զխաչն՝ զծածկեալն ՚ի մեծէն Մեսրովպայ ՚ի Գիս գիւղ. և ՚ի նորին կենարար փայտէն մասն առեալ եդ ՚ի ՃԻ, դահեկանի ոսկւոջ և գրեաց Եղիազարայ է. և կարգ եդ յօր խաչին տօնել ՚ի Գիս:

17 Իա, տէր Ներսէս Բ, յեպիսկոպո-
Դ սութենէն Գարդմանայ ձեռնադրու-

թեամբ Սպրամ տիկնոջն Աղուանից․ որք ՚ի միասին այնինչ կամէին փոփոխել զեկեղեցական կարգսն, աղաղակեաց հասարակութիւն առ Եղիա կաթողիկոս Հայոց․ և թէ՝ միտս ունին երկոքեան նոքա առ յոյնս․ Աբդլմէլիք ամիրայ հագարացւոց լուեալ զայն՝ արձակէ ՚ի հայս առնոյն Եղիա կաթողիկոս զներքինի մի յիւրոցն և հրամայէ գնալ յԱղուանս և ընկենուլ զնա յիշխանութենէն, և զ տիկնոջն ուղարկել յարքունի դուռն կապանօք․ Ներսէս լուեալ զայն և տեսեալ ևս՝ զկնի ութն աւուր մեռանի․ և իշխանք Աղուանից տան ձեռագրով ցԵղիա կաթողիկոս Հայոց՝ մի՛ ևս միւսանգամ դնել կաթողիկոս առանց գիտութեան և հրամանի կաթողիկոսի Հայոց։ Սա ինքն Ներսէս կալաւ զաթոռն ՚ի խաղաղութե զամս ԺԴ, և ՚ի խռովութեանն Գ և կէս։

710 Ղ Իբ, տէր Սիմէոն Ա, սա սարկաւագ պետ եկեղեցւոյն Աղուանից՝ ընտրեցաւ յիշխանացն և ձեռնադրեցաւ յԵղիա կաթողիկոսէ Հայոց և եբարձ զտարաձայնութիւնն ՚ի Ներսեսէ և եդ կանոնս եօթն գլխով։

35 Իգ, տէր Միքայէլ՝ որ էր յառաջն սարկաւագ ՚ի Շաքու․ սա կոչեաց զՍողոմոն զհայր Մաքենոցաց վանացն և նովաւ հանդերձ նզովեաց զիշխանս Աղուանից՝ որք զերից ազգաց զծնունդս ամուսնացուցանէին, և զԽալիլէ առաջնորդ Վրաց՝ որ հրաման տայր այնպիսի ամուսնութեան։

14 Իդ, տէր Անաստաս․

.4 ԺԵ, տէր Նանիա.

746 17 ԺԶ, տէր Յովսէփ Ա, յեպիսկոպոսութենէ Ամարասայ. 'ի սորա հինգերրորդ ամին լցաւ թուականն հայոց յ' Մ:

763 4 ԺԷ, տէր Դաւիթ Բ, սա ազատեաց զկալուած եկեղեցական և զոպաս սրբութեանցն. և ապա դեղ մահու 'ի դաւողաց ընկալեալ յանգէտս՝ վախճանի:

768 9 ԺԸ, տէր Դաւիթ Գ, յեպիսկոպոսութենէ Մեծկուենից. սա վաճառեաց այլազգենից զդաստակերտսն և զահմանախառն կոչեցեալ տեղին:

1/Զ ԺԹ, տէր Մաթէոս Բ, յեպիսկոպոսութենէ Կապաղակա. սա ևս թունոք ընկալնու զվախճան:

2 Ի, տէր Մովսէս Բ.

2 ԻԱ, տէր Ահարոն.

·/Զ ԻԲ, տէր Սողոմոն Ա.

4 ԻԳ, տէր Թէոդորոս յեպիսկոպոսութենէ Գարդմանայ:

11 ԻԴ, տէր Սողոմոն Բ,

Զ ԻԵ, տէր Յոհաննէս Գ. սա փոխադրեաց

25 զկաթողիկոսարանն 'ի Պարտաւ քաղաքէ 'ի Բերդակոր 'ի տեղի հովանոցաց իւրեանց:

·/Զ ԻԶ, տէր Մովսէս Գ.

28 ԻԷ, տէր Դաւիթ Դ, յեպիսկոպոսութենէ Կապաղակա. սա օրհնեաց զանօրէն ամուսնութին տեառն Ապքուայ, և ընկալաւ յեղջօրէ ամուսնացելոյն զնախատինս:

1, 2, Վասն երկուց կաթողիկոսացս տես ժողովոյն 'ի Մովսիսէ Կաղանկատուացւոյ, հատոր Բ, համար 412, 'ի ժողովն Պարտաւայ առ Սիոն կաթողիկոսիւ Հայոց ամի 768:

848 25 Լը, տէր Յովսէփ Բ, յեպիսկոպո-
սութենէ Սեծկունենից. 'ի սորա եր-
րորդ ամին լցաւ Թուականն Հայոց յ՝
ԳՃ:

873 17 Լթ, տէր Սամուէլ յեպիսկոպոսու-
թենէ Սեծկունենից. սա անձամբ ա-
ռեալ զպատիւն՝ լուծաւ 'ի Գէորգ
Բ, կաթուղիկոսէ Հայոց. այլ զկնի գնա-
ցեալ 'ի Դուին առ նա՝ անդրէն հաս-
տատեցաւ յաթոռն:

8 Խ, տէր Յովնան. սա էր դրան եպիս-
Է կոպոս Հայոց, և մինչ 'ի գերութեան էր
Գէորգ Բ, կաթուղիկոս Հայոց՝ գնաց
յԱղուանս և ձեռնադրեցաւ յաթոռն
Աղուանից առանց կամաց նորա. և իր-
րև դարձաւ Գէորգ Բ, միջնորդութբ
իշխանացն Աղուանից՝ ելոյծ զնա 'ի պա-
տւոյն, այլ միջնորդեալ նոյն իշխանացն
հաստատէ զնա անդրէն յաթոռն:

21 Խա, տէր Սիմէոն Բ, սա էր դրան ե-
պիսկոպոս Աղուանից՝ և առաւել զար-
դարեաց զսուրբ խաչն սպասուք. և գը-
տաւ հանդերձ եպիսկոպոսօք իւրովք
ներկայ 'ի հանդիսի նաւակատեաց եկե-
ղեցւոյն Տաթեւայ՝ որ հիմնարկեցաւ յամի
895՝ 'ի Հայոց ՅԽԴ:

5 Խբ, տէր Դաւիթ Է, յառաջնորդու-
թենէ Փառիսոսա վանաց:

18 Խգ, տէր Սահակ Բ, յեպիսկոպոսու-
թենէ Սեծկունենից:

947 11 Խդ, տէր Գագիկ Ա, յեպիսկոպո-
սութենէ Գարդմանայ. 'ի սորա չորրորդ
ամին լցաւ Թուականն Հայոց 'ի ԴՃ. և
վախճանեցաւ 'ի ԺԱ. յամի 958:

Խե, տէր Յովհաննէս Գ, զոր յիշատա-

նէ Միքայէլ չամչեան հատոր Բ , երես 837 · 840 · և ասէ՝ թէ գտաւ յԱնի ՚ի ժողովն անդ որ վասն օծման Աշոտոյ թագաւորի · և ս անդ յընտրութեանն Վահանայ ՚ի կաթուղիկոսութիւն՝ յամին 961 · 965 ։

7 ԽԴ , տէր Դաւիթ Գ , յեպիսկոպոսութենէ Կապաղակայ ։

6 ԽԵ , տէր Դաւիթ Ե , ՚ի Խոստակերաց վանացն · սա առնու ձեռնադրութիւն յԱնանիա կաթուղիկոսէ Հայոց ։

16 ԽԶ , տէր Պետրոս կամ Պենեղաս Ա , յեպիսկոպոսութենէ Գարդմանայ ։

6 ԽԷ , տէր Մովսէս Գ , յառաջնորդութենէ փառխոսա վանաց ։

Մինչև ցաստ շարակարգեն ՚ի 23րդ գլուխն Գ հատորոյ պատմութեանն Աղուանից ՚ի Մովսիսէ կաղանկատուացւոյ բաց ՚ի չորեցն՝ ՚ի նախորդէն պահլաւկին Գրիգորիսի , ՚ի Տէրանունայ՝ զոր յիշատակէ Մխիթար այրիվանեցի , և յԱնանիայէ՝ զոր Կիրակոս յիշատակէ , և ՚ի Յովհաննիսէ Դ՝ զոր չամչեանն յառաջբերէ ։

Ծ , տէր Մարկոս Ա , այր Աստուածոյ

Ծա , տէր Յովսէփ Գ · սա ՚ի ՆՂ թուին Հայոց գտաւ ՚ի զօրս Դաւթի որ ընդդէմ Ապուսվարայ · իսկ Տ Միքայէլն չամչեան ՚ի ՆԾԵ թուին , ես և կոչեցաւ յԱնի քաղաք ՚ի ժողովն որ վա Պետրոս Ա , կաթուղիկոսի և անկմանն Դէոսկորոսի · այլ այս թիւ ՆԾԵ յառաջբերեալ ՚ի չամչեանէ երևի պակաս հինգ ամօք · քանզի արձանագիրն այգւոյ ՚ի մեծ եկեղեցին հին Խաշնայ (379) գրէ

յաւուրս Դիոսկորոսի կաթուղիկոսի և դնի թուական արձանագրութեանն նձթ. գիտեմք ստուգիւ՝ թէ Դիոսկորոս անկաւ յաթոռոյն յբ ամի իշխանութեան իւրոյ և անդրէն յաջորդեաց Պետրոս ա. ապաքէն Յովսէփ գ, կաթուղիկոս Աղուանից գնաց յԱնի ՚ի թուին հայոց նղ, և ոչ ՚ի նձե: Այլ ուղղ երևի նա ինքն Յովսէփ գ, ընդ երկար եկաց յիշխանութեն. քանզի ասէ Մխիթար այրիվանեցի ՚ի միջոցս շլ — շլդ հայ թուականին. „Կիւրիկէ որդի դաւթի եա ձեռնադրել Յովսեփայ աղուանից կաթուղիկոսի զտէր Բարսեղ. և զդրան երեցն զՍարգիս եա ձեռնադրել եպիսկոպոս Հաղբատու, և յայնմ հետէ եղև աթոռ„: Բայց Միքայէլ չամչեան ըղձեռնադրութի Բարսղի դնէ ՚ի Ստեփաննոսէ ա:

ծբ, տէր Սարգիս բ.

ծգ, տէր Ստեփաննոս ա. սա վախճանեցաւ ՚ի շծբ թուին հայոց (1103) ըստ Մատթէոսի ուռհայեցւոյ:

1103 10 ծդ, տր Յովհաննէս ե, եղբայր Ստեփաննոսի ա, ձեռնադրեցաւ ՚ի Բարսեղ կաթուղիկոսէ հայոց և անդրէն լուծաւ. ՚ի պատմութեան չամչեանի. հտր գ, համար 25:

1113 I ծե, տէր Ստեփաննոս բ. սա վախճա-
Ղ նեցաւ ՚ի տիս պատանեկութե՝ կալեալ զաթոռն ամ մի և ամիս վեց:

Զկնի Ստեփաննոսի բ, ոչ ումեք յաջորդեալ՝ անցանէ միջոց պարապոյ իե, ամաց. Նպա

1140 ծզ, տէր Գագիկ բ, անուանեալ և

Գրիգորիս. ձեռնադրեցաւ ըն միջնորդելն Աղուանից աշխարհին՝ հրամանաւ Գրիգոր Գ. կաթուղիկոսի Հայոց ի Սահակայ եպիսկոպոսէ Կարնոյ ի շձթ. թուին Հայոց յամի 1140։

Ծէ, տէր Իժգէն. սա եթող զկարգն և էած կին։

Ծը, տէր Ներսէս Է. զսա յիշատակէ յիշատակարանն պատմութեան Կաղանկատուացւոյն յերկրորդ օրինակի ի հայ թուական ոի. յամի 1171։

40 Ծթ, տէր Ստեփաննոս Գ. սա գտաւ յէ, ժողովն Հռոմկլայի։

40 Կ, տէր Յովհաննէս Գ. սա շինեաց եկեղեցի հրաշալի ի գաւառն Մխաւոր ի վանքն կոչեցեալ Խամշի. իսկ Մխիթար այրիվանեցի դնէ զսա ի միջոց հայ թուոյն, ոխ – ոկ, զԽամշի վանս Աղուանից կաթուղիկոսաց աթոռ հաստատեցին,,։

1235 27 Կա, տէր Ներսէս Գ. այր հեզ և մարդասէր՝ եղբայր Յովհաննու Գ. ձեռնադրեցաւ ի ոձդ հայոց՝ յամի 1235. սա կոչեցաւ յԱյլթինայ խաթունէն Զարմաղանայ և գնացեալ ի տես նորա՝ պատուեցաւ ի նմանէ և պատուով վերադարձաւ ի տեղի իւր. օրհնեաց և օծ զեկեղեցին Գանձասարայ զկառուցեալն ի Ջալալ Դօլ Հասանայ որդւոյ Վախթանկայ որդւոյ մեծին Հասանայ ի թուին հայոց ոձթ, յամի 1240. որպէս ցուցանէ արձանագրութի նոյն եկեղեցւոյն։ Օսմանէ վախճանեալ ասէ Վարդան պատմիչ ի չժա թուին հայոց՝ յամի 1262, ցաւով ջրգողութեան։

Մինչև ցայն Ներսէս Գ, շարակարգէ զԹիւ կաթուղիկոսացս Առաքելոս պատմիչ գանձակեցի բաց ՚ի հինգ անձանց՝ ՚ի Տիրանունայ, ՚ի տէր Անաստասայ, ՚ի տէր Յովհաննիսէ Գ, ՚ի տէր Պօղոսայ Բ, և ի տէր Ներսէսէ Գ։ Իսկ աստ անտի և այսր աւելաւ մինչ ինչ հատուածական Թըղթոց գտելոց առ Բաղտասարայ արքեպիսկոպոսի և ՚ի յիշատակարանէ մատենից և յօրագրութեանց ոմանց կաթուղիկոսաց Հայոց. և սկսուցել զոմանս ՚ի նոցանէ արձանագրութեանք շիրմաց նոցին և եկեղեցեաց աշխարհին այնորիկ՝ շարակարգեսցուք մինչև ցվախճանն այն է, ցտէր Սարգիս Բ։

1262 61 Կը, տէր Ստեփաննոս Դ, 1. սա յաջորդէ յաթոռն ՚ի Թուին Հայոց չժա, և վախճանի ՚ի Թուին չհբ, յամի 1323. և յիշատակի յարձանագրութիւնսն եկեղեցւոյն և գաւթի նորին ՚ի գիւղն Սուրեկայ ՚ի Թիւսն հայկական չիր, չէգ. յիշատակի սա և առ Միքայելի չամչեան. հատոր Գ, համար 284։

1323 83 Կգ, տէր Սուքիաս. | ՚ի չհբ, Թուականէն
Կդ, տէր Պետրոս Բ. | հայոց մինչև ցպծե, Թիւն՝ երկու կա-

1, Ժամագիրքն տպեալ ՚ի Մոսկուայ ամի 1838, ընդ չորս երկուս կաթուղիկոսսն՝ Ներսէս և Ստեփաննոս անուանէ, որք ո՛չ ուրեք գտանին՝ ո՛չ ՚ի գիրս պատմութեանց և ո՛չ ՚ի հատուածական Թղթս. ուստի երկոքին չեն եղ կաթողիկոսութեանք անուանեցն Ներսէսի Գ, և Ստեփաննոսի Գ, սխալմունք գրաշարին։

Թուղթկոսունք մի-
շտակին Նստեալ
յաթոռ՝ որոց անո-
ւանք Մուքիաս և
Պետրոս. իսկ ամբո-
ղոշտեղեկութբ իշ-
խանութեան Նոցին
անյայտ ։

1406 Կե, տէր Կարապետ յաջորդեաց յաթոռն ՚ի պծե թուին. հաստատական թուղթն որ առ Խաղտասար արքեպիսկոպոսն և միշտակարանն Է, պատմուէ կաղանկատուացւոյն հասուցանեն զթիւ տևողութեան իշխանութեան որ ցպհգ, բայց տապանագիրն՝ որ ՚ի վանս Ճ՚ալէթու ՚ի վերայ երից կաթուղիկոսացն, ցուցանէ զվախճան սորին ՚ի պկ, թուին. և լրութիւն շինութեան եկեղեցւոյն ևս ՚ի նոյն թիւ ըստ արձանին վանաց ։

Կզ, տէր Դաւիթ Ը. սա ոչ ուրեք միշտատակի ՚ի գրուածս, այլ տապանագիր սորա ցուցանէ ըստ այսմ.
,, Այս է հանգիստ Դաւիթ կաթուղիկոսին, պկ, թուին (1411) ,, ։

1436 Կէ, տէր Մատթէոս Գ.

1 Կը, տէր Աթանաս.

1441 Կթ, տէր Գրիգոր Ժ, հանեցի անուանեալ ՚ի Մակույեցէ ջամշեանց. յորոյ ժամանակս ասէ՝ գրեաց մԱղուանս թուղթ Կիրակոս կաթուղիկոս վերապեցի. հտոր Գ. համար 488 ։

Հ, տէր Յովհաննէս Է, որդի Տ.աւալին. սա ը տապանագրի շիրմին իւրոյ վախճանել է ՚ի թուին ջժթ, յամի 1470 ։

Հա, տէր Մատթէոս Գ.

ՃԲ, Տէր Արիստակէս Ա.

1478 ՃԳ, Տէր Ներսէս Դ. սա հաստատե-ցաւ յաթոռն իւր 'ի ՋԻԷ թուին, յամի 1478:

1481 ՃԴ, Տէր Շմաւոն Ա.

ՃԵ, Տէր Թովմա Սօկութլուեցի. սա վախճանի 'ի թուին ՋԽԴ, յամի 1495. որպէս ցուցանէ տապանագիրն սորին անդ 'ի վանս Ճ'ալէթու:

ՃԶ, Տէր Աբրահամ՝ եւ սօկութլուե-ցի. յիշատակի սա 'ի յիշատակարանի ա-ւետարանի միոյ եղելոյ 'ի թուին ՋԽԸ, ՋԾԳ. իսկ արձանագրութի տապանին՝ որ 'ի վանս Ճ'ալէթու, հաստուցանէ ցՋԿ:

1511 ՃԷ, Տէր Արիստակէս Բ.

ՃԸ, Տէր Սարգիս Ա, Ղլաղեցի, սա գնեաց գեօղս իւրովք դրամովք եւ յա-ւել 'ի կալուածս վանացն Գանձասա-րու ըստ ցուցանելոյ արձանագրութեան 'ի թուին ՋՂԵ, յամի 1546. եւ վախճանե-ցաւ յամի 1555, 'ի Մեհեկի ԺԹ, յաւուր երկուշաբաթի:

1556 17 ՃԹ, Տէր Գրիգոր Դ. յիշատակի սա 'ի յիշատակարանի յայսմաւուրքի միոյ գրելոյ 'ի թուին ՌԸ. 1559: իսկ յամի 1573, ուրանայ զհաւատ իւր:

1 Ճ, Տէր Դաւիթ Թ, Արջաձորեցի. զսա 'ի նոյն ամի կախեալ 'ի զանգակա-տանէն եկեղեցւոյն Գանձասարու խեղ-դամահ առնեն խաչենեցիք:

1563 ՃԱ, Տէր Փիլիպպոս Պուսեցի.

ՃԲ, Տէր Յովհաննէս Գ. յիշատակի սա 'ի ձեռագիր մագաղաթեայ աւետա-րանի միոյ յիշատակարանի՝ յերկրորդումն կազմի նորա 'ի թուին ՌԻԷ, 1578. իսկ

բուն գրչութիւն աւետարանին յամի 1337 ։ իսկ վախճան սորին եղև 'ի թուին ՌԼԵ, 1586 ։ յիշատակէ զսա և Զաքարիա սարկաւագ Յօհանավանաց. ա՟ հատոր, գլ. ԻԹ ։

ճգ, տէր Շմաւոն Բ, քօլատակեցի. սա վախճանի 'ի թուին ՌԿ. յամի 1611 ։

1588 ճդ, տ՟ր Արիստակէս Գ, քօլատակեցի.

1593 ճե, տէր Մելքիսեթ արաշեցի.

1596 ճզ, տէր Սիմէոն Գ, հայրենեօք քօլատակեցի՝ բնակեալ 'ի Ռահմասուր ։

1633 ճէ, տէր Յովհաննէս Թ. սա շինեաց զեկեղեցին Գանձակայ՝ Խլեավէտապօլայ ։

1634 19 ճը, տէր Գրիգոր Դ. սա վախճանեցաւ 'ի թուին ՌՃԲ, 1653. որպէս և ցուցանէ արձանագիր գերեզմանի նորա. յիշատակի սա և 'ի յիշատակարանի ձեռագիր շարակնոցի միոյ գրելոյ 'ի թուին ՌՃա ։

1653 22 ճթ, տէր Պետրոս Գ, խանձկեցի. զսա յիշատակէ արձանագիրն որ 'ի ճակատ բեմի վանացն Աղթամարու 'ի թուին ՌՃԹ, 1660. և յիշատակարան մաշտոց գրքոյ միոյ եղելոյ 'ի թուին ՌՃԺա. յիշատակէ և Զաքարիա սարկաւագ Յօհանավանաց, հատ՟ր Բ, գլ. 38. որ և վախճանեցաւ 'ի ՌՃԻԴ թուին. յամի 1675 ։

Մինչև ցաստ ես շարակարգէ յիշատակարանն երկրորդ օրինակի պատմութեան կաթողիկոսութեան բաց յութն անձանց՝ յեպիսկոպոսէն որ ընդ Աւոնայր արքայ, 'ի Տիրանունայ, 'ի տէր Անանիայէ, 'ի տէր Յօհանայ, 'ի տէր Յովհաննիսէ Գ, 'ի տէր Դաւ-

թէ Զ, 'ի տէր Յովհաննիսէ Զ, և 'ի տր Պաւղթայ Ը:

1675 26 ՂԷ, տէր Սիմէոն Դ, խոտորաշինեցի՝ կոչի և չարաբերդցի. սա անձամբ առեալ զպատիւն առանց հաւանութեան կաթուղիկոսի Հայոց և ժողովեալ զինչս կաթուղիկոսական՝ թողու զաթոռն և բնակի 'ի գեղջ իւրում յենլով յայլազգի իշխանն. և վախճանի 'ի թուին ռճծ. 1701:

1676 24 ՂԸ, տէր Երեմիա Ե, գանձասարցի ջալալեանց. սա ձեռնադրեալ 'ի Յակոբայ ջուղայեցւոյ կաթուղիկոսէ Հայոց՝ տիրէ աթոռոյն. և այնպէս հակառակութեամբ վարեն զիշխանութիւն ինքն և Սիմէոն Դ, մինչև նոյն Յակոբ կաթուղիկոս կոչեալ առ ինքն զերկոսեան ևս՝ առնու գիր երդման և նզովից 'ի Սիմէոնէ՝ չլինել միւսանգամ 'ի խնդիր կաթուղիկոսութեան, ոչ ինքեան և ոչ ազգայնոց նորա. և այնպէս յանձնէ ըզպատիւն ցԵրեմիա: Դարձեալ 'ի ռճիգ թուին հակառակին ընդ իրեարս՝ յորոց տաղտկալի գրութեանց ձանձրացեալ և Եղիազարու կաթուղիկոսի Հայոց, տայ բերել զերկոսեան ևս առ ինքն յԷջմիածին և խրատուք հաշտեցուցեալ միաւորէ զնոսա՝ վարել զիշխանութիւնն միաբան խորհրդով ըստ գրաւոր կանոնացն տուելոց յիւրմէ. և դնէ վճիռ, զի 'ի շեղել միումն յայնց կանոնաց՝ զրկեսցի յամենայն իրաւանց. յետոյ շեղեալ Սիմէոնի՝ զրկի: Իսկ Երեմիա հասեալ 'ի ռճխթ թիւն՝ վախճանի:

1702 26 ՂԹ, տէր Եսայի գանձասարցի. քու-

լաթաղեցի եւ կոչի · սա նստաւ յաթոռ 'ի թուին ռճծա · 1702, առանց գիտութեան կաթուղիկոսի Հայոց · զոր կոչեալ առ ինքն Նահապետ կաթուղիկոս՝ խրատէ և անդրէն կոնդակաւ հանդերձ դարձուցանէ յաթոռ իւր ։ Սա հոգ տարեալ ետ նորոգել զարձանագրութիւնս ինչ ինչ եկեղեցեաց, մենաստանաց եղելոց 'ի սահմանսն անդ վիճակին իւրոյ 'ի թուին ռճկէ, 1718 · և վախճանեցաւ 'ի թուին ռճհէ՝ 1728, ըստ ցուցանելոյ տապանագրի նորին · զայս թուական երկու ամու պակաս դնէ Սիմէոն կաթուղիկոս երևանցի ։

1706 57 Ղգ, տէր Ներսէս Է, յազգականաց Սիմէոնի Գ, օծանի հակառակ Նասյեայ 'ի ռճծե, թուին յամի 1706 ։ Ըստ բողոքելոյ ժողովրդոցն կոչէ զերկոսեան եւ առ ինքն Ջուղայեցի Աղէքսանդր կաթուղիկոս Հայոց 'ի թուին ռճծդ · և քննեալ 'ի մէջ երկոցունցն գտանէ ըզ Ներսէս պարտաւոր՝ զոր լուծանէ 'ի կարգէն և արձակէ ։ Յոչ դադարելն նորա 'ի յարուցանելոյ զվէճս, վերստին կոնդակաւ բանադրէ զնա նոյն Աղէքսանդր կաթուղիկոս 'ի յաջորդ ամին · զկնի վախճանին Նասյեայ այնու կապանօք բանադրանացն յանզղջութե վարէ զիշխանութիւնն կաթուղիկոսական · և հուսկ ուրեմն արձակի 'ի կապանաց անտի 'ի Պաղար կաթուղիկոսէ Ջահկեցւոյ · և կացեալ այլ եւս ամս՝ վախճանեցաւ 'ի թուին ռմժբ, 1763 ։

1763 Ղդ, տէր Իսրայէլ թոռն եղբօր Ներսէսի Է · սա ամօք ինչ յառաջ նախքան

զվախճան նորին Ներսէսի օծանի կա-
մակցութեամբ նորին ՚ի կաթուղիկոս
՚ի թուին ռմժբ. և ամենևին անլուրե-
ղեալ բանից Սիմէոնի կաթուղիկոսի ե-
րևանցւոյ և ոչ գնացեալ յաթոռ Էջ-
միածնի ՚ի կոչ նորա առ ՚ի անօրէնու-
թիւն երկպառակութեան ժողովրդոցն
Աղուանից՝ որ ՚ի պատճառս կաթուղի-
կոսաց նոցին, լուծանի ՚ի կաթուղիկոսա-
կան պատւոյն ՚ի ռմժդ, թուին և կա-
ցեալ այնպէս՝ վախճանի:

1763 23 Ղե, տէր Յովհաննէս Ժ, գանձա-
սարցի. սա ևս կամակցութեամբ միա-
բանի ժողովրդեանն օծանի կաթու-
ղիկոս առանց հաւանութեան, մանա-
ւանդ ընդ դէմ հրատարակեալ կամաց
Սիմէոն կաթուղիկոսի երևանցւոյ, այլ
յապստամբել Իսրայէլի և յանկանել
՚ի պատւոյն՝ հաստատի ինքն յաթոռ կա-
թուղիկոսութեան՝ ընկալեալ զկոնդակն
՚ի Սիմէոն կաթուղիկոսէ ասա ՚ի տա-
ճարի Էջմիածնի ՚ի ռմժդ, թուին և
՚ի 25, դեկտեմբերի. և ապա այնպէս
կացեալ յիշխանութե իւրում՝ վախ-
ճանի ՚ի թուին ռմլե, ըստ տապանագրի
շիրմի նորին:

1794 16 Ղզ, տէր Սիմէոն Ե. խոտորաշինեցի՝
եղբայր վերոյիշեալ Իսրայէլի՝ ձեռնա-
դրեցաւ ՚ի կաթուղիկոսութիւն յամի
1794, և վախճանեցաւ ՚ի 1810:

1794 34 Ղէ, տէր Սարգիս Բ, գանձասարցի
եղբայր Յովհաննու Ժ, ձեռնտուութբ
Ջաւատ խանին և մելիք Մէջլումայ հայ
ազգի իշխանին ձեռնադրեցաւ կաթու-
ղիկոս ՚ի Գանձակ՝ յԵլիսաւէտպօլ՚ի

թուին ռմխդ. ՚ի Ժէ. դեկտեմբերի.
եւ ապա զկնի քանի աւուրց գրէ թուղթ
առ Ղուկաս կաթուղիկոս Հայոց համ֊
դերձ յայտարարականն գրովք ժողովրդեան
սուտ համբաւով թէ, Իսրայէլ կաթու֊
ղիկոսն վախճանեցաւ, եւ վասն այնորիկ
ես ձեռնադրեցայ՝ զի մի՛ դարձեալ երկ֊
պառակութիւն ծագեսցի ՚ի մէջ հասա֊
րակութեան ժողովրդոց վիճակիս Աղ֊
ւանից եւ այլն: կացեալ սորա մինչեւ ցամն
1815, իշխանութեամբ կաթուղիկոսու֊
թեան, ապա ՚ի նոյն ամի հոգեւոր իշխա֊
նութեամբ Աթոռոյ Էջմիածնի ըստ
ձեռնտուութեան աշխարհական իշխա֊
նութեան օրհնաբանեալ Տէրութեանն
Ռուսաց վէր առաւ պատիւ եւ կոչումն
կաթուղիկոսական, եւ տուաւ միեւնոյն
անձին փոխան այնր կոչման պատիւն մետ֊
րապօլտութեան յԱրքեպիսկոպոսական
պաշտաման. եւ կացեալ այնու վերա֊
տուութեամբ՝ վախճանեցաւ յամի 1828:

Արձանագրութիւնք ինչ ինչ մենաստանաց, եկեղեցեաց եղելոց արտաքոյ այժմեան նահանգիս Երևանայ· զորս ոմանք ընթերցասէր անձինք հանդիպեալք ՚ի տեղւոջն առեալ էին ՚ի գիր ըստ օրինակացս այսոց:

591, Արձանագիր երկրորդ շինութեան հրաշալի տաճարի վանիցն որբոյն Յովհաննու Կարապետի՝ որ ՚ի Մուշ-րանդ գաւառի, կոչեցեալ այժմ Իւչքիլիսէ՝ այն է, երեք խորան:

,, Ի թիւ Հայոց Ձ̄Գ, քսան և մի ամսոյն (ամին) ա̅ծ̅ապահ Հրակղէ թագաւորի Հռոմոց ամսոյ վեց, և վեց հարիւր երեսուն և չորս ամի տեառն մերում տեղիքն խորանաց երից հաճոյիւքն աստուծոյ հիմնարկին սրբոյ եկեղեցւոյս, և ՚ի քսան և վեց ամի նոյն Հրակղէ թագաւորի յամսեանն նաւասարդի քսան և ութն եղև կատարումն նոյն գործոյս տեղւոյս. սա շէն եկաւ ամենայն իրօք վարդապետութեամբ ՚Ի սրայելի գոո աղջնգւոյ ,,:

592, Արձանագրութիւն վանաց Թադէոսի առաքելոյ՝ որ ՚ի Արտազ գաւառի, հանեալ ՚ի յիշատակարանէ գրոց ինչ. ընդ որ յարակարգեալ էին և չէ յայտնի եղբայրսպասաւոր առաջնորդս այնր վանաց:

,, Այս տաճար լուսակիր և երկնանման առկայացեալ հաստատագոյն հիմամբք ՚ի վերայ ա̅ծ̅աբնակ շիրմի սուրբ առաքելոյն Թադէոսի՝ որ վ̅ս̅ բազմատեսակ յանցանաց մեր զկործանումն էառ ՚ի շարժէ. իսկ ես նուաստ սպասաւոր նմին Զաքարիա եպիսկոպոս որդի պարոն Մանուէլին, կարողութեամբն Աստուծոյ սկիզբն արարի կրկին նորոգութեան առաւել քան զառաջինն՝ ՚ի ժամանակի սաստիկ նեղութեան և հալածանաց քր-

րիստոնէից, որ և բազում եկեղեցիք քակտին. վասն որոյ արձանագրեցաք զյիշատակս մեր առ ՚ի յիշատակել զմեզ առաջի մեծին այն և անարիւն զենման զառին Աստուծոյ հանդերձ ծնողօք և զարմիւք և զաջորդն մեր զտէր որբացուն. այլև զհարազատ եղբայր մեր զՊետրոս և զՍարգիս՝ որք ըստ կարութեան նպաստաւորք եղեն ընչիւք. կատարումն թուին ՉՀԸ (1329)»:

Առաջնորդք վանացս.

1, Զաքարիա եպիսկոպոս ընտացի՝ որ եղև և կաթուղիկոս և ասաց բազում ճառս և վախճանեցաւ ՚ի Ստամպօլ.

2, Յովհաննէս եպիսկոպոս զկնի նորա.

3, Յակոբ վարդապետ յետ նորա.

4, Պետրոս վարդապետ.

5, Ներսէս եպիսկոպոս.

6, Արապիոն եպիսկոպոս.

7, Գրիգոր եպիսկոպոս.

8, Արթանէս եպիսկոպոս.

9, Պետրոս եպիսկոպոս քօսեցի.

10, Դանիէլ վարդապետ.

11, Մկրտիչ եպիսկոպոս.

12, Արապիոն եպիսկոպոս փոքր.

13, Թադէոս եպիսկոպոս.

14, Թադէոս եպիսկոպոս միւս՝ արայիշենց.

15, Նարսեղ եպիսկոպոս բեստենց.

16, Մկրտիչ եպիսկոպոս՝ որ նորոգեաց զեկեղեցի սուրբ առաքելոյն ՚ի հիմանէ, և շինեաց զդարպասն և զմատուռն ՚ի տեղի նահատակութեան առաքելոյն և սրբուհւոյն Սանդխտոյ կուսի. որոյ ձեռնտու և գործակալք էին տէր Դանիէլ և տէր Պետրոս բազում աշխատութեամբ. ՚ի թուականիս հայոց ՌՃ (1651), հրամանաւ երից երանեալ

և ճգնազգեաց Փիլիպպոս կաթուղիկոսին ,,։

593 . Արձանագիր Հոռոմոսի վանից (Ղօշավանք)` որ գտանի 'ի վերայ արևմտեան մեծ դրան մեծի գաւթին։

,,'Ի ՆՁԷ (1038) Թվականիս Հայոց եսու ես Յովհաննէս շահանշահ որդի Գագկայ շահանշահի զիմ այգին` որ 'ի Կողբ, զիմ եկեղեցին 'ի սուրբ Յօհաննէս` զոր շինեցի 'ի վանս Հոռոմոսի հանդերձ ժամատամբս. և հարիւր բեռն աղ. յամենայն ամի ազատ յամենայն հարկէ. 'ի հայրապետութեան տեառն Պետրոսի Հայոց կաթուղիկոսին, և յառաջնորդութեան ուխտիս հօր Յօհաննէսի։ Արդ` եթէ ոք զկնի մեր հակառակի այսմ գրոյս և իմ պարգևացս, պարտական եղիցի մեղաց իմոց առաջի այ և երեք հարիւր ութսուն և ութն հայրապետացն որ 'ի Նիկիայ` նզովեալ եղիցի 'ի կեանս և 'ի մահ. իսկ որ հաստատուն պահեն զգիր արձանի ընծայիցս, օրհնեսցին 'ի Քսէ ,,։

Արձանագիր 'ի վերայ չորից հաստատակերտին 'ի մէջ վերաշինեալ ժամատան նոյն Հոռոմոսի վանաց։

,,'Ի ՈԾ (1201) Թուիս, 'ի տէրութե երկրիս Զաքարիայի ես Տիգրան ծառայ Աստուծոյ և հաւատարիմ պարոնին Զաքարիայի միաբանեցայ սուրբ ուխտիս և ետու զիմ զջաղացն` որ 'ի կորդոյ շինեալ էի 'ի Գիլէ ձորին` հիմնակից է ներքին դիհն Գօնիջանենց, յիշատակ ինձ և ծնողաց իմոց։ և միաբանք սուրբ ուխտիս խոստացան յիշել զմեզ 'ի պատարագն բժ, յամ ամի 'ի տօնի սուրբ մարգարէին Երեմիայի անխափան մինչև 'ի ծագումն որդւոյն Աստուծոյ. կատարողք գրոյս օրհնեսցին յԱստուծոյ ,,։

Արձանագիր նշխարատան 'ի հիւսիսային դրան նոյն Հռոմոսի վանաց ։

„ Շնորհիւն Քրիստոսի ես Վաչէս որդի Սարգսի և ամուսինն իմ Մամախաթուն դուստր Ապուսերհին շինեցաք զնշխարատունս 'ի վանս Հռոմոսի յառաջնորդութեան տեառն Բարսղի արհի եպիսկոպոսի որդւոյ ամուր երկաթայ, և տուաք ընծայ զմեր գանձագին այգին 'ի յիշել զմեզ ։ Թիւ ՈՂ„ (1241) ։

Արձանագիր շինութեան սուրբ Գէորգայ անապատի հրաշալի տաճարին՝ որ 'ի ձորն հիւսիսային վանացն Հռոմոսի, գրեալ յարեւելակողմն եկեղեցւոյն արտաքուստ ։

„ Թուին ՆԿԱ (1012), ո՛վ հռչակաւոր դու մեծ անուանիդ 'ի վկայս քս Գէորգէոս աւգնեա բարեխօսութեամբ՝ Գագկայ շահանշահի շինողի զվկայարանս զայս քոյով անուանակոչութեամբ. 'ի քոյդ բարեխօսութի յուսադրեալ զի ընկալցի զողորմութիւն 'ի Քրիստոսէ այ յանվախճան արքայութեան՝ ընդ ամ արդարացեալսն ապաշաւանաւք հասանիլ լուսոյ փառաց որդւոյն աստուծոյ, 'ի վերջնում գիշերին 'ի ծագիլ մեծի և աներեկ առաւօտին այցելութիւն գտանել առաջի ահաւոր բեմի անաչառ դատաւորին՝ աղաչեմք „ ։

594. Արձանագիր կաթողիկէ եկեղեցւոյ մեծի քաղաքին Անւոյ՝ առընթեր որոյ էր և կաթողիկոսարանն ։

„ 'Ի ՆԾ (1001), Թուոյս Հայոց 'ի ժամանակս մեծապատիւ և հոգևոր տեառն Սարգսի Հայոց կաթողիկոսի, և 'ի մեծափառ թագաւորութեն Գագկայ Հայոց և Վրաց շահանշահի ես

Կատրանիդէ (Կատրամիդէ) Հայոց թագուհի դուստր Վասակայ Սիւնեաց թագաւորի յողորմութիւն այ՟ ապաւինեցայ, և հրամանաւ առն իմոյ Գագկայ շահանշահի շինեցի զսբ՟ կաթուղիկէս՝ զոր հիմնադրեալ էր մեծի Սմբատայ, և կանգնեցաք տուն այ՟ Նորոգ և կենդանի ծնունդ հոգևոր և արձան մշտնջենաւոր. զարդարեցի և զարդուք պատուականօք նուէրք ինձ 'ի Քսի՟, և զարմից իմոց և որդւոցս՝ Սմբատայ, Աբասայ և Աշոտոյ ,,:

Այլ ևս գրեալ է այս ինչ.

,, Հրամայեալ եմ ես տէր Սարգիս սպասաւորաց եկեղեցւոյս՝ յետ ելից բարեպաշտ թագուհւոյս յիշել 'ի սբ՟ պատարագն՝ որ 'ի յիւնեկին վարդավառի անխափան մինչև 'ի գալուստն Քսի՟. և արդ՝ որ ընդ արձանագիրս փոյթ կալ̄էլ անձին կատարէ, վարձատրեսցի 'ի Քրիստոսէ այ՟ մերմէ, ամէն ,,:

595, Արձանագիր տաճարի վանացն Սանահնի առաջելոյն՝ որ 'ի հիւսիս Տաշրի 'ի Լոռւ գաւառի Սիւնեաց, գրեալ 'ի վերայ հարաւային սեանն:

,, Այս գիր յիշատակի և արձան անջնջելի է իմ Զաքարիայիս իշխանաց իշխանի, որդւոյ մեծին Իխպարտի՝ եղբօր Սմբատայ մեծ իշխանի կողմնակալին այսմ նահանգի՝ որ իշխողէ այսմ գաւառաց. 'ի դրանէն բարկուշատայ մինչև ցսահմանն Երզնկոյ. միաբանեցայ Զաւթեռս սբ՟ Առաքելոցս, և տուի զիմ հոգւոյ մասնն 'ի յիմ սեփհական ուխտըս 'ի սբ՟ եկեղեցիս գիւղս չորս՝ զոր լուեալ էաք 'ի հին ժամանակաց ժառանգութի լեալ սմին. 'ի Ճ՟ ննհէր իւր սահմանովն լերամբ և դաշտիւ. Ղլոտան աւան սահմանօք իւրովք լերամբ և

դաշտիւ, և 'ի խոստադետ զմեր ձեռնատունկ այգին, և զՏէրունի իւր սահմանովն լերամբ և դաշտիւ, և զՀաժիս իւր սահմանովն նմանապէս՝ զորոյ զկէսն գանձագին էի արարեալ, և 'ի բոլոր զՄ̃էթէ-վանսն իւրովք սահմանովք: Նաև եդաք տեղւոյս տ̃ր Հայրապետ և տ̃ր Սողոմոն հաստատեցին մեզ միշտատակ, և կարգեցին և պատարագ մի մեր յամ ամի մին քառասունք, զԺ յայտնութեանն, զԺ զատկին, զԺ ծ̃ննդեանն, և զԺ աւագ տօներուն. զԺ օրն ինձ Տարսայիճիս, և զԺ օրն իմ եղբօրն Սմբատայ: Արդ՝ որ յետ մեր կամ 'ի մերայնոց, կամ յօտարաց, կամ միշխանաց և կամ 'ի մերձաւորաց այս հաստատ պայմանիս և անքակ վճռիս խափանել ջանայ, կամ զայն գիւղօրայքն, կամ զայգին յայս եկեղեցւոյս հանել խորհի, բաժին ընդ Յուդայի և ընդ այլ խաչահանուացն առցէ, և զկայենին և զա̃մ չարագործացն առցէ զպատիժս, և յերից ս̃բ ժողովոյն նզովեալ եղիցի. և եթէ տաճիկ աւագութիւն փոխի և յափշտակել ջանայ՝ յա̃յ և յիւր փէյղամբարէն աւիզար եղիցի, և ընդ սատանայի 'ի դժոխս իջցէ, և տամբ և զաւակօք ջնջեալ և բարձեալ եղիցի, և իւր հալալն մ̃այ հարամ, և ռ̃ ռ̃ ռ̃ նալաթ եղիցի: Ես եղև 'ի թուին Հայոց ՉԻԳ (1274), յամսեանն նոյեմբերի ԺԴ. և են վկայք այսմ վճռիս՝ տէր Սարգիս արք եպ̃ն Նորավանից, և Սարգիս եպ̃ն փակակալ ս̃բ եկեղեցւոյս. և յիմ ազատաց՝ Հասան կարապետայ որդի, Սրոտ շահնորայ թոռն, միրանուէրայ որդին. հաստատ է կամաւն ա̃յ. Նծ-շնորհաւոր արասցէ ս̃բ ուխտիս. յուսովն ա̃յ ես Տարսայիճ իմ ձեռագրովս հաստատեցի զընծայքըս ,,:

,,Արդ՝ որ յետ իմ կամ յիմ զաւակաց և թոռանց և կամ յայլ իշխողաց զմեր հօգիս զըրկել խորհի և զմեր յոյսն խափանել, և զմեր սահ-

մանեալս քակել ջանայ՝ յՃԺԸ Հայրապետացն Նզո_ վեալ եղիցի 'ի մահ և 'ի կեանս, և կորեալ և ջնջեալ լիցի յայս կենացս և 'ի հանդերձելումն, ամէն եղիցի եղիցի,,։

596, Արձանագրութիւնք աշխարհին Աղուանից՝ զորս ժողովեաց յեկեղեցեաց և 'ի խաչարձանաց Եսայի կաթողիկոս նորին Աղուանից 'ի թուա_ կանութեանն Հայոց ՌՃԿԷ (1718) 'ի մի տետր․ յորոյ գրուածոյ առեալ մեր դիցուք աստէն 'ի տեղեկութիւն հայրենի հնութեանց։

597, Արձանագիր շինութեան եկեղեցւոյ հանգս_ տարանի վանաց Գրաբէլի աստուածածնին՝ որ կոչի Խրոխլայ վանք։

,, Շնորհիւ ամենակարողին այ և միածնի որդւոյ նորա Յսի Քսի, և պարգևօք ամենասբ Հոգւոյն՝ ես Սղու խաթուն նուաստ աղախին Քսի, դուստր մեծի իշխանաց իշխանին Քրդին, և ամուսին Սախտանկա թագաւորազնոյ տեառն Հաթերքոյ և ամ վերին Խաչենոյ, յուսով մե_ ծաւ շինեցի զսբ կաթուղիկէս 'ի տեղւոջ հան_ գստարանի առն իմոյ և զաւակաց իմոց՝ Հասանայ անդրանկին իմոյ և Գրիգորի՝ որ 'ի տէրն կեսօ_ րեայ վախճանելոց․ զի վասն մեղաց խրատեաց զիս այ և եբարձ 'ի գլխոյ իմոյ զերկոսեան պսակն վայելուչս․ զի անդրանիկն իմ Հասան սպանաւ 'ի թուրքաց պատերազմին վասն քրիստոնէական հա_ ւատոյս՝ և զկնի երից ամաց զկրսեր որդին իմ զԳրիգորն 'ի տէրն կոչեցեալ զպարտ բնութեանս հատուցանելով և վճարեաց 'ի կենցաղոյս և փո_ խեցաւ առ Քս՝ սուգ անմխիթար թողլով թշուա_ ռացելոյ մօրս իւրեանց։ Արդ զի 'ի կենդանութե իւրեանց յոյս 'ի մտի եդեալ նոցա շինել եկե_ ղեցի յայսմ տեղւոջ, և ոչ ժամանեցին վասն ա_

բագահատ լինելոյ 'ի վերայ նոցա մահուն, և ինձ աւանդեցին անդարձիւ կատարել զփափագ սըր-տից նոցա. և իմ յանձն առեալ մեծ յուսով և շատ աշխատութեամբ շինեցի զքաւարանս 'ի փըր-կութիւն հոգւոց նոցա և իմս դստերաց և ամ զարմից: Արդ՝ աղերսիւ հայցեմ՝ որք երկրպա-գէք սրբոյ խորանիս յիշել յաղօթս ձեր զվերոյ-գրեալս 'ի սմա: Կատարեցաւ 'ի թուականութեան Հայոց ՈԿԳ. (1214), 'ի փառս Աստուծոյ,,:

Արձանագիր խաչքարին եղելոյ 'ի նոյն կղզւոջ վանին՝ գրեալ յերկուս կողմանս եւս:

,, Անուն Աստուծոյ՝ ես տէր Գրիգորէս առողջութեամբ եկի 'ի դուռն եկեղեցւոյս, շատ աշխատանք արարի, իշխանութիւն շահ Թահմազին էր. զվանքս տուին աւրհուլ. ես ղաբուլ չարարի. գնացի նոր շէնն շինեցի երեք ջաղաց, երեք բաղ-ձայ, և եկի 'ի դուռն սբ Առաքելոյն, շինեցի րղ-խութ. որ եկեղեցւոյս մուլքն քաշէ՝ զբաղուբաղ-ջէս և զջրաղացներս և այլ ամ աշխատանքս ե-կեղեցւոյս վախմ տուի: Արդ՝ ով որ այս գեղե-րանքերս և զիմ վախմերս հանել ջանայ 'ի սբ Առաքելոյս, երեք հարիւր տասն և ութ հայրա-պետացն նզովված է. մասն և բաժին ընդ յուդայի և կայենի և խաչահանուացն առցէ. և մեր մեղա-ցըս տէր է. և ով որ չէն պահէ և զմեզ յիշէ՝ վարձս 'ի Քէ առցէ, ամէն: Թուին ՌԷ. (1558),,:

Այս վերոյգրեալ Ռծի արձանին գրեալ կայր և այս ինչ:

,, Ես 'ի նորոգութիւն սբ ուխտիս և 'ի սահ-մանք ժառանգութեան սրբոյ եկեղեցւոյս գեօղս և ագարակս իւրեանց սահմանօքն՝ զԱղահէն,

զեղնարածանց, զըչանց, զկանաչաւորն՝ որ 'ի Սա-յոյ ձոր, և է տունս Մարփայ՝ հաստատեցաք կամակցութեամբ եղբարցս զաւագ խորանի պատարագն յանուն վերոյգրելոցս՝ կատարի անխափան. եթէ ոք այսմ վճռի հաստատնոյ խափանումըն առնէ յիշխանաց կամ յառաջնորդաց տեղւոյս, կամ ո ոք իցէ, խափանեսցի յոյս նորա՝ որ առ Քրիստոս, և դատապարտեսցի յԱստուծոյ,,:

## Որդիք և Թոռունք Դոփայ և վախճան նոցա:

,,Դոփ բարեպաշտուհի դուստր Սարգսի իշխանաց իշխանին. սա ունէր ամուսին իւր զբարեպաշտ իշխանն զղարա Գրիգորն, և որդի սոցա քաջ և յաղթօղ զօրավարն և մեծ իշխանն Հասան տէր Մկանոյ, Հանդաբերդոյ, Սոթից, Ճաղվաքու և այլ բազում գաւառաց. և քան զամ առաւել սիրէր զդեօղն Ոսար, հայրենիք և պարգևք քաջութեան՝ որ են գինք արեան տուեալ աշխարհակալացն Հայոց: Սա ունէր զկին Մամքան դուստր Քրդին. և որդի սոցա զբարի Գրիգորն, և ամուսինն իւր Մամայ դուստր կոմսի Տարսայիճին իշխեցողի կողմանն Սիւնեաց. և սա բազում ընչիւք և ծախիւք փարթամացոյց զմեր ուխտն զԳադի վանս և զԽաթրի վանս, զի շինեաց զտաճարսն որ է դարպասներն, և այլ բազում արդիւնս արար. և միւս որդին տէր Յովհաննէսն՝ որ շինեաց զմեր ուխտն Գետամէջ. և որդի Գրիգորին Սահրամն, որդի սորա Սարգիսն՝ զոր բազում արդիւնս արարեալ՝ և մի 'ի բազմացն այս է՝ զգեղեցիկ զանգակնին 'ի Գառի վանս, 'ի Խաթրի վանս, 'ի Գետամէջ, 'ի գեօղաքաղաքն Ոսար, և է մինչև ցայսօր: Որդի սորա Հասանն. և այս Հասանէս բաժանին Դոփայ ցեղն՝ որք են այսոքիկ. Ճահանշէն ուլուբէկանց պապ, Սըրուշէն այտինեցւոց

պապ, Ջհանչէն ջհանչեցւոց պապ. և որդի Համանայ Մըղըուղէն, և որդի սորա Տուրասուննն, և որդի սորա Այաբինն, և ՚ի ժամանակի սորա ՚ի զօրանալ խամայելացւոցն և ՚ի նուաղիլ տանս Հայոց, ցիր և ցան լինելն իշխանացն Հայոց, յարեան այլազգիքն և զմուլքն մեծ իշխանին Հասանայ պէթալմալ արարին. գնաց պարոն Այաբինն ՚ի դիւան և երեք ամ աշխատեաց, և բազում ինչ տուեալ ազատեաց ՚ի ձեռաց այլազգեացն զվանորայքս, և զշինարէնքն, զոր տէրն ա̃մի տացէ զվարձս վաստակոց իւրոց ,,:

,, Կամաւն ամենակալին ա̃յ և տեառն մերոյ Յ̃ի Ք̃ի, այս մեր գիրն է իշխանական հրամանի ,,:

,, Ես Տուրասունս, Սէյտխս, Պռօշս, Գրիգորս, Հասանս, և եղբարքս և որդիքս մեր զայս հաստատ սիկիլս տուաք տէր Աւագ եպ̃սին և իւր եղբայր Սամուէլ արեղային՝ որ մեր հայրենի աթոռն զԴադիվանս, զԽաթրի վանս, զԳետամէջըն՝ որ մեր գերեզմանատուն է ՚ի մեր պապանցն մեզ մնացած, վասն սոցա լաւ միամտութեան համար. զի վանորայքս մարդ չէր՝ որ յառաջն կայր և չէն պահէր և զեկեղեցիքս լուսաւորէր. յայս պատճառէս երեսդրաք և զայս սուրբ աթոռնին ՚ի նոցա ապսպարեցաք, և զերկու իշխանութիւնն որ է եպիսկոպոսութիւնն և պարոնութիւնն՝ էլ հէնց ՚ի նոսա յանձնեցաք. որպէս առաջին մեծ կաթուղիկոսն մեծ տէր Զաքարիային, տ̃ր Աթանասին և տ̃ր Սարգսին էր տուեալ զԴադի վանքս, զԽաթրի վանս, զՀաղբաթ իւր վիճակաւն. նոյնպէս և այս հոգևոր տ̃ր Գրիգոր կաթուղիկոսն զայս երեք աթոռս հաստատեաց վիճակաւ և շրջաբերական թղթիւ ,,:

,, Կամաւն ամենակալին Աստուծոյ. ես Սէյտխս որդի պարոն Ճանչին, թոռն պարոն Հասա-

նայ. եւ Գրիգորս, Հասանս, Պէկիս, Ալթունս՝ որդիք պարոն Սահրամայ Թոռունք պարոն Հասանայ. եւ Աջոտինս որդի պարոն Տուրսունին Թոռըն պարոն Աղբուղին. եւ Շանշանս որդի Հասանայ՝ Թոռն պարոն Շահանշին. մեք չորս եղբարքս տուաք մեր վանորէիցս Ապահէն, զԽութ, զԽոզենակս իւր չորս սահմանովն. ՚ի Զափարէն հանդէն ձագունանց Ագարակ դեղովն, Բունչի աղբիւրովն, Խաղանանց գետովն. Պետրոսապակ որ մեր պապերն տուել են զՄոխանանց զծովատեղն, ջաջռանց չօլըէկանց զԾրտնոտն, զշիռմանանց, զԳրիգորաթաղս, զԿոտի վանս իւր քօլատակերովն, զՀերանանց հակառակաբերդովն, Նաւի աղբիւրովն, Ներդաքարովն, Կռապաշտուցովն, Ողնովն, Խոզենակուց մեծ այգին, Մանանաձորովն ծաղիկանց, եզնարածանց՝ տուաք Աւագ եպսին՝ որ մեր ճոճաւոր էր, քանի որ իւր պէտքն է՝ վարէ ով ազատ է. իսկ թէ այլ մարդ վարէ (հերկէ) տասանորդն առնու եւ տայ վանքին անպատճառ. այս եղեւ մեր ուխտ առաջի այ, եւ մր Թադի առաքելոյս: Արդ՝ ով որ զէնի մեր այս վախմիաթերս այլայլէ կամ խլէ՝ թէ յորդւոց եւ թոռանց մերոց եւ յազգայնոց իցէ, առաջի Աստուծոյ պարտական եւ սեւերես լինի. յժը հայրապետացն նզոված է, կայենի եւ յուդայի դասակից. իսկ թէ այլազգեաց կամ թուրքաց իցէ՝ իւր հալալն հարամ լինի, եւ իւր փէղամբարէն ապիզար լիցի, ամէն„:

„Աւգնականութբն Աստուծոյ եւ Մամքան ամուսին արխականին Հասանայ, եւ որդիս մեր տէր Գրիգոր տէարք գոլով տեղւոյս հայրենօք, որ եւ մեր պարոնայքն հաստատեալ էին, եւ մեք տուաք ՚ի մր ուխտս զծովատեղն, զճաճռանց, զչօլպէկանց: Նա Գրիգոր տուի զծագունանց հողերն զմեր բաժինն իւր չորեցովն որդին իմ ՚ի տէր Սարգիսն. ով որ հանէ մր ուխտէս դատի

տուածոյ։ չԺԶ (1267)։ Նոյն միաբանքս սահմանեցին սբ Ստեփաննոսի տօնին ժամն՝ որ լինի մօրն իմ, և ամուսնոյն իմոյ Նափին. թէ ոք զժամն խափանէ կամ ընծայն՝ դատի այ։ Նաև մոխրապակս մեր բաժինն ես տուաք ՚ի սբ ուխտս, չկա (1312) թուին,,։

,, Կամաւն Աստուածոյ ես Սմբատ իշխանս որդի մեծին Լպարտին միաբանեցայ սբ ուխտիս Գետի վանացս առաջնորդութեամբ տէր Աթանէսին, և գնեցի զխուանտաշանց այգին և եղեգիս իմ գնած ձիթահանքն և այլ արդիւնք ը կարի, և զկանանչաւոր գեղն և այլ, որ հաստատեցի ամէն խարձումն անչար. և ետու սբ կաթուղիկէս։ տէր Աթանասն և այլ միաբանքս սահմանեցին մեզ զատկին յարութեան կիրակի օրն զամէն եկեղեցիքս մեզ ժամ։ Արդ՝ ով խլէ զմեր տուածն կամ զժամն խափանէ, յՃԸ հայրապետացն նզոված եղիցի, թուին չԺԴ,,. (1265)։

,, Կամաւն Աստուծոյ ես Վախտանկ որդի Սմբատայ ծառայ Յսի, և ամուսին իմ Նանայ աղախին Քի միաբանեցաք Գետի վանացս, և տուաք ՚ի հայրենեաց մերոց զՕչայձորին բերդէն մինչի յայգին խաղենակս, զմանանայս։ Արդ և մեծածախ մասամբ խաչ մի մեծաւ յուսով. և բնակիչքս տէր Գրիգորիս և միաբանքս սահմանեցին մեզ Է օր ժամ զամէն եկեղեցիքս զտօնն Յօհաննու՝ Նանայեն. և տօնն Վարդանանց՝ Վախտանկայ։ Արդ՝ ով ոք զընծայս և հայրենիքս հանէ ՚ի սուրբ վանիցս, և կամ զժամն խափանէ, յՃԸ հայրապետաց նզոված է, և մեր մեղացն տէր է,,։

,, Կամաւն Աստուծոյ ես Հասան որդի Վախտանկայ տէր Հաթերքու և Հանդաբերդու, Խաչէնաբերդու և Հաւքախաղացին կացի յաւագութեան ամս Ի. շատ պատերազմաւ յաղթեցի թշնամեաց իմոց օգնութեամբն Աստուծոյ,

և եղեն ինձ վեց որդի, զբերդերս և զգաւառս ետու նոցա. և ես եկի 'ի վանքս մօտ իմ եղբայր պարոն տէր Գրիգորէս և եղէ կրօնաւոր և բերի զխաչաքարս 'ի յԱզուայ շատ աշխատութեամբ և բազում հնարիւք, և կանգնեցի ս՟բ նշան հոգւոյ իմոյ: Արդ՝ վասն ձեր հոգւոյդ որք ընթեռնոյք՝ զիս յաղօթս յիշեցէ՛ք. ո՜ղ թուին ,,. (1182):

,, Ես Մամայ Թագուհի ամուսին Հասանայ դուստր Կուրիկայ Թագաւորին, կացաք յաւագութե ամս Լ՟, ես և այր իմ. և թողեալ ըզհայրենիքս որդւոց մերոց եկաք 'ի վանքս մօտ տէր Գրիգորիս, և որդին մեր համանուն նորին, և զգեցաք զձև միանձանց. և կանգնեցի զխաչս յիշատակ հոգւոյ իմոյ, որք երկրպագէք՝ յաղօթս յիշեցէ՛ք. ո՜ղ թուին ,,:

598, Խոշաբերայ վանուց արձանն է:

,, Շնորհիւն Ք՟ի ես Ասփէ դուստր արքայաշուք իշխանին Տարսայիճին Թագազարմ մօրն իմոյ Մինա խաթունին՝ նպաստ եղեալ ք՟պական գլխոյ իմոյ մեծափառ իշխանին Գրիգորի 'ի շինութեան լուսանուէր սուրբ եկեղեցւոյս՝ կամեցաւ 'ի ձեռն քահանայապետին մեծի տեառն Յովհաննեսի, զիմ յարդար ընչից կանգնեցի բեմբ, սեղան 'ի զենմանն Ք՟ի, զի ամենայն կիրակէ և շաբաթ տօն ծննդեան և տեառնընդառաջին, զատկին, վարդավառին, ա՟ծածնին և ս՟բ խաչին ինձ կատարեսցեն պատարագ զամէն եկեղեցիքս. որ և տուի զմեր խաս հողն բլրի հանդի զնենեկպան. տ՟ բաժի ջուր: Թէ ոք 'ի մերոց կամ յօտարաց զայս՝ այս եկեղեցւոյս հանէ կամ զպատարագն խափանէ, 'ի փառաց որդւոյն Ա՟յ օրոշեալ եղիցի ,,:

,, այս ձախակողմ խորանի սուրբ Պռօկօպիոս է, զմեծ տէր Յովհաննէս շինող եկեղեցւոյս որդին

Դօփին՝ եղբայր մեծ իշխանին Հասանայ յաղօթս յիշեցէ՛ք․ ձախակողման սուրբ Մինաս, զՄինայ խաթուն դուստր մեծ իշխանին Ջալալին, և ամուսին Տարսայիճին յաղօթս յիշեցէ՛ք ,,։

Ս. [illegible] տանն գետամիջի խաչի վերն է․

,, Կամաւն Աստուծոյ ես Ախայ դուստր մեծ իշխանին Տարսայիճին և Մինայ խաթունին, և ամուսին հոկայազօր իշխանին Գրիգորի որդւոյ մեծ իշխանին Հասանայ քաջի տեառն Աղուանից՝ կանգնեցի զխաչս, շինեցի զկարմունջս յիշատակ հոգւոց մերոց՝ անցելոց, ներկայի և ապագայի ,,։

Ք. [illegible] տանն խաչի վերն է։

,, Յորժամ թուականն էր ո̃ծ (1201), բարեպաշտ պատրոնիկն Վասակ թոռն Կիւրիկայ թագաւորին, որդի Հասանայ որդւոյ Սակռայ տ̃ն Հաթերքոյ, Հանդաբերդոյ, Հաւքախաղացին, եղբայր Վախտանկայ Նորին աթոռակալի եբեր զխաչս և ո՛չ կարաց կանգնել վասն անպարապութեան. քանզի երթեալ եղև ՚ի Գողաշտեան. և առ զնա յանօրինաց օգնութ̃ն Աստուծոյ, և բնակեցոյց անդ զորդին իւր, և ինքն նահատակեցաւ ՚ի վ̃ր քրիստոնէից, և իջեալ լոյս ՚ի վերայ ՚ի տեսութիւն բազմաց. և յետոյ ո̃ծ, թուին կանգնեցին որդիքն նորա Խոյտան և Խօչախն յիշատակ հոգւոյ նորա, և յերկարութիւն կենաց իւրեանց. որ երկրպագէք յաղօթս յիշեցէք ,,։

,, ՚Ի թուին ոհդ (1225), ես Դօփս դուստր Սարգսի քոյր Զաքարէի և Իւանէի շինեցի զգաւիթս և մատուռս և տունս աւետարան և զյանկաբակուց երկիրն և հակուուրինայ զիմ մատաղխ

իմ հոգւոյս. ա̃ծածնին ժամն է որ արարէք. ով խափանէ չունի թողութիւն յԱ̃յ„ ։

599. Ի դերձոր կողմն Ա̃ծածին եկեղեցւոյ արձանն է.

„Յուսով ամենակալին Աստուծոյ ես Տար-սայիճս իշխանաց իշխան որդի մեծին Լիպարտին, և ամուսինն իմ Մինայ խաթուն դուստր մեծին Ջալալ դօլին կողմնակալ յայսմ նահանգի՝ զոր ետ մեզ Ա̃ծ 'ի Արկուշատայ մինչ 'ի դաշտն Գիլայ, շինեցաք Ա̃ծածինս ի հալալ արդեանց մերոց 'ի փրկութիւն հոգւոյ և յերկարութիւն կենաց մե-րոց. տուաք 'ի պէտս սպասաւորաց Աստուծոյ տա-փին հողն, նահատակի հողն, և ներքի ծաղկոցն 'ի Մ̃նչեր, 'ի Հաթեայ լուսագին. և կատարի 'ի տա-րին Ժ̃ ժամ, Ե̃ յայտնութե̃, Ե̃ զատկին վասն իմ Տարսայիճիս և Մինայ խաթունին. եթէ ոք 'ի մե-րոց կամ յօտարաց խափանեսցէ զսահմանեալս մեր, յԺ̃Ը հայրապետաց նզովեալ է, թուին չ̃իա„ (1272)։

600. Արձանագիր Յովհաննու վանաց.

„'Ի ժամանակին յորում տիրեալ էր ազ-գըն նետողաց բազում աշխարհաց և մինչև յով-կիանոս ծովն և Մասամպօլն, 'ի Պոնտոս և մինչև ցգետն Եփրատէս տիրելով գոռոզաբար և ծանր հարկապահանջութե̃ ցաւեցուցանելով զամենե-սեան՝ զմեծամեծս և զփոքունս 'ի մահ և 'ի գե-րութիւն մատնելով. յայսմ ժամանակի դառնու-թեան որ էաք մեք տ̃ր Յովհաննէս դոխեանց որ-բուպ և նուաստ և տկար հոգի, հասաւ մեզ հրա-ման 'ի նախահարցն մերոց գնալ 'ի մեր հայրապե-տացն առաջնոց յաթոռն հռչակելըն Հախպատ, այլ դարձ արարեալ 'ի մեր հայրենական և 'ի բը-

նակ տունս հարազատ աւագ եղբօր Հասանայ քաջ զօրականին և հռչակաւոր արիացելոյն, որ և որդի իւր Գրիգոր սիրող եկեղեցւոյ և քահանայից և ամուսինն իւր բարեհամբաւ Նափայ դուստր մե_ծի կոմսի Տարսայիճի իշխեցողի կողմանցն սիւ_նեաց. և մեր հայեցեալ 'ի ծորակս զի հոսէին ջուրք աստի և անտի և 'ի միջի նոցա բլրակ մի գե_ղեցիկ, ես հաճեցայ ընդ սա և մտա անապատս, և սկսայ շինել մատուռն մի. և յայսմ խորհրդի եկն Գրիգոր եղբօր որդի մեր և իշխան գաւառիս, և այլ շատ կողմանց իշխեցօղ, և կամեցաւ շինել զսբ Ածածինս 'ի բարեխօս մեզ և ամ քրիստոնէից. ես տր Յովհաննէս առաջի սկիզբն շինութեան ե_կեղեցւոյս 'ի թուին չծ,, (1301):

Դրան խաչի վերն է.

,, Աստուծով ես Սայտի որդի պարոն Շանշին քաջ և յաղթող զօրավարին և մեծ իշխանաց յազ_գէն, և 'ի թուին պհթ, (1430) տեղեացս տէր և պարոն փոքր սիւնեաց Ականոյ և Հաթերքոյ և Հանդաբերդոյ և ծովակին Գեղամայ մինչ 'ի Շաղվարայ՝ կանգնեցաք զխաչս հօր մերոյ Շան_շին. որք երկրպագէք յաղօթս յիշեցէք,,:

601, Սորհէ Խոտակերաց վանից խաչի վերն է.

,, Կամաւ կարողին Աստուծոյ ես Աւաչի որ_դի Հասանայ որդւոյ Պռօշայ, որդւոյ մեծին Ա_սակայ յազգէն Յաղբականաց տիրեցի հայրենի երկրիս իմոյ Շապունաց և այլ յոլով գաւառաց՝ զօրավիգ և օգնական ունելով զՔս, և զսուրբ նշանս Խոտակերաց՝ որով և նախնիքն իմ զօրա_ցան. ետու կազմել պահարան սմին անջինջ յիշա_տակ. որք հանդիպիք սմա զիս և զծնողսն իմ զա_

մեր Հասան և զԽաճերն և զհօրեղբայրն իմ Ըղ-
Պապաքն յաղօթս յիշեցէք․ այլև զտ̃մ Նախնին
մեր և զազգատոհմն ։ Սուրբ նշան աւէրունական ,
դու Խաչըդ լե՛ր օգնական ։ Թուին չխթ ,, (1300) ։
'Ի սմին արձանագրութեան յիշատակեալ
սուրբ նշանն արծաթեայ պահարանաւ գտանի այ-
ժմ աստ 'ի գանձարանի սրբութեանց աթոռոյ
Էջմիածնի , և ունի զմի և զնոյն օրինակն այսր
գրուածոյ․ (52) , տե՛ս ա̃ հատոր ։

602 , Կաթողիկէ վանից արքունագիրն է․

,, Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ
ես Սարգիս և Վարդան եղբարք հիմնարկեցաք զե-
կեղեցիս 'ի ռղ̃ , (1341) Թուիս շատ աշխատութբ̃
զաւազ խորանն խփեցաւ․ և եղբայրս իմ տէր
Սարգիս 'ի Ք̃ս փոխեցաւ․ ես տ̃ր Վարդան կա-
տարեցի բազում աշխատութեամբ և հալալ ար-
դեամբք իմովք ռղէ (1248) Թուիս , 'ի դառն և
'ի նեղ ժամանակիս՝ որ ազգն նետողաց զբազում
գաւառս աւերեցին , և մնաց այլասեռից աթոռ
և վիճակ սրբոյն Գրիգորիսի , որ է հաստատեալ
աջով և տր̃ նշանաւն և գաւազանաւն սրբով․
վիճակեցաւ և սահմանով 'ի յԱղուանայ դետոյ
մինչ 'ի Երասխն , մինչ 'ի աւազն գառուհասի վա-
կունիս Սաղաղնագետոյ , 'ի քարանիս և խոզա-
նագետովն , զԱրիստ իւր գետովն , Հաքարի հա-
զարագետովն , Որոտագետ իւր գետովն իւր սահ-
մանովն , Գիզակ՝ բէլուկան իւր գետովն և հայ-
րենիքն եկեղեցւոյս տունքն՝ փարախն և գոմա-
նոցն , Եկեղեցաձոր իւր սահմանովն․ ա̃ լուծ ու-
հող 'ի Տայիս․ ա̃ լուծ 'ի Գող 'ի Գագս , ա̃ 'ի
Մոխրենիս․ ով որ այս սահմանէս յետ ունէ կա-
Թուղիկոս կամ իշխան կամ հայրապետ , երեք տր̃
ժողովոյն նզոված եղիցի՝ յայ̃ և ամենայն սրբոց

անիծեալ՝ մասն և բաժին ընդ Յուդայի առցէ ,,:

603, Գոշայ վանից արձանն է.

,, Ի ոխ (1191) թուին զկնի չորս ամաց առնլոյ զեէմ Սալահադինին՝ սկսեալ եկեղեցիս այս ի Նորս Գետիկ, և կատարի ամս է. ի խանգար զատկին յունաց ձեռամբ վարդապետին Մխիթարայ ի հայրութեան Վարդանայ, ձեռնտուութեամբ բարեպաշտ իշխանին Վախտանկայ և նորին զուգակցին Արզու խաթունին, և նորին եղբարցն Սմբատայ, Վասակայ և խորդն Գրիգորայ, և նոցին զաւակացն: Լիցի նոցա պատարագ յեկեղեցիս ի տօնի սուրբ Ածածնին զ աւուրսն. բայց զմէկն Հասանայ հօր Վախտանկայ, և մէկն մօր նոցին՝ մամին, և մէկն հօր Արզու խաթունին՝ Կուրդին բարեպաշտի անխափան ,,:

Առաջ դրանն գիրն է.

,, Յուսով ողորմութեան Աստուծոյ ես Ճարս որդի պարոն Սմէկին, թոռն Ճարին աշխարհաւ մանձկերտացի, աշխարհակալութե Գարանուին, և թագաւորութեանս վրաց Դեմետրէ բագրատունւոյ. իմ հայրն Սմէկ գնեալ էր ըզԳետիկ ի քառասուն հազար կարմիր ոուդանի. ես Ճարս գնեցի զՅովս իւր ամէն սահմանօքն ի դառն ժամանակի՝ որ հայրենիքն արժան էր ոսկին թանկ, ի դ ռ կարմիր ոսկով Գետկա Ածածնին իմ հոգւոյ տանս յիշատակ անջնջելի՝ իմ ծնողացն Սմէկին և Թագուհւոյն, ինձ և իմ որդեացն Արզութին և իւր եղբարցն, առաջնորդութեմբ Գասապ վարդապետին. և միաբանքս սահմանեցին զաւագ ե շաբաթ օրն, և զատկի օրն զամէն եկեղեցիքս պատարագ որչափ

մեք կենդանի եմք՝ մեր ծնողացն լինի, և յետ ելիցն մերոց յաշխարհէս՝ մեզ լինի։ Արդ՝ ով զայս գեղս հանել ջանայ յայս եկեղեցւոյս, կամ զիմ յիշատակն խափանէ, ով ոք և իցէ որ լինիցի 'ի ծննդոցն ադամայ՝ եղիցի նզովեալ։ չլբ ,, (1283)։

Զանգակատան գիրն է.

,, Կամաւն ամենակալին Աստուծոյ 'ի թուին չխ, (1291) մեք երկու եղբարքս Պասապետ վարդապետ և Կարապետ եդաք հիմն, 'ի վերայ եդաք զանգակատունն և եկեղեցի յանուն հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի սակաւ ընչիւք մերովք և քեռոյն մերոյ Իգնատիոսի, արդեամբք բազմօք վերագրեալ պարոնացն դրաք պարիսպ շուրջ եկեղեցւոյս, և այլ աշխատութիւս ըստ մերում կարի. Սարգիս վարդապետն զհայր վանիցս և միաբանքս հաստատեցին զատկին և ճրրագալուցին պատարագ, որ յեկեղեցին Պասապետ վարդապետին և Կարապետին սահմանեցին։ Արդ՝ աղաչեմ զձեզ ժառանգաւորսդ յիշման արժանի արարէք զմեզ աշխատեալսն 'ի սմա. և առաւել Զաքէոսն և Գրիգորն ,,։

Մարագայ որէ Նշանի Ներսի արքային է.

,, 'Ի թուին ոձ, (1231) ընդ այլ աշխարհս յոլովս հարաւ գաւազան ցասմանն աստուծոյ. գաւառն Խլաթայ 'ի ձեռն Խորազմին և Թագաւորին. ընդ որս և մեծահռչակ սուրբ ուխտն Մարգ յիշեցեալ վանս մեղաց մերոց յայսմ ամի։ Եւ Ղուկաս հայր վարագայ առեալ զոխեզբերահամբաւ սբ Նշանն՝ զշնորհեալն յայ 'ի փրկութիւն մարդկան 'ի ձեռն Պատրոնիկէի և սբ Հռիփսիմեանց և Խօթկայ. և վեց ամ շրջեցայ թափառեալ տեղւոյ

'ի տեղ. ապա 'ի կամս յառաջատես խնամոց տ՟ն հասի 'ի Նոր բերդն առ ք՟սասէր իշխանն Սասակ, ա՟ծաբնակ անապատ կոչեցեալ վանքս. և ազդումն ինչ լեալ առիս՝ հաճոյանալ ո՟ր նշանիս 'ի տեղւոջըն՝ նկատեցի և զգեղեցկաշէն եկեղեցիս արժանի հանգստեան սրբոյս՝ և մեծարեալ 'ի բնաւիցս աւի զվանքս և ետու զխաչս եկեղեցւոյս աստուծոյ առաջնորդութեամբ և վկայութեամբ տ՟ն Յովհաննու շինող եկեղեցւոյս առաջի հրեշտակաց և մարդկան. և հաստատեցաւ ինձ 'ի տօնի սրբոց առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, Յակոբայ և Յովհաննու զամէն եկեղեցիքս պատարագ։ Արդ՝ եթէ ոք հանել ջանայ ստի, կապանս և անէծս ժառանգեսցէ 'ի հոգի և 'ի մարմին անբժշկելի 'ի ո՟ր Նշանէս և ա՟մ սրբոցն Աստուծոյ. որչափ այս եկեղեցիս շէն է, մի՛ ոք իշխեսցէ զխաչս հանել, կամ զիմ յիշատակս խափանել,,։

## ԴՈՒՌՆ ԳԼԽԻ ԳԻՐՔԷ.

,, 'Ի ո՟ձզ (1237) թուին ես Սասակ որդի դաւթի որդւոյ վասակայ 'ի տանէ բագրատունի 'ի տոհմէ Դաւթայ մարգարէին 'ի փառս աստուծոյ կատարեցի եկեղեցիս՝ զոր շինեցի 'ի ձեռն տեառն յովհաննու և ընծայեցի զծաղկափղէ իւր կապարո՟ւն 'ի վանքս. և հաւանութե՟բ եղբարցս հաստատեցաւ պատարագ յայտնութեան և զատկին յիմ շինեալ մեծ եկեղեցիս, ո՟պ և իմ հօրն իւր շինեալ փոքր եկեղեցին. գրեցաւ և կնքեցաւ անուամբն աստուծոյ, յաւուր յորում վարագայ հայրն Մուկաս զո՟ր նշանն ետ եկեղեցւոյս։ Արդ՝ եթէ ոք զմեր տուեալ գեղերս 'ի մեր եկեղեցւոյս հանել ջանայ, և մեր յիշատակն խափանել՝ թէ քրիստոնեայ է 'ի ք՟ոէ և իւր ընտրելոցն է նզովեալ, եթէ այլազգ է յա՟յ և դինէն և յառաջնորդաց իւ-

րոց, և մեր մեղացն պարտական է ,,։

604, Հաղարծնոյ վանից արձանն է․

,, Ի թուին ՈԾԵ, (1206), ՚ի յաշխարհակալ տէրութե Զաքարէի և Իվանէի, յառաջնորդութեան Անեցիաննոսի, ես Խաղաղ որդի Սմբատայ իմ Գեօղն Պանաքեռ, սկանդարանց հողն գնեցի և ՚ի Հաղարծին ետու վս իմ հոգւոյս և վասըն երկարութե կենաց Շահնշահի և Աւագին․ և միաբանքս զծառազարդին և զերկրորդ գալստեան ժամն ինձ ետուն զամէն եկեղեցիքս․ ով զայգին աստից հանէ, և կամ զժամն խափանէ՝ մեր մեղացս տէր է ,,։

Դրան արձանն է․

,, Կամաւն ամենակալին Աստուծոյ այս մեր գիր և յիշատակի է և արձան մշտնջենաւոր որդեաց մեծին Սարգսին յազգէ բագրատունեան Իվանէի և Զաքարէի․ յորժամ նախախնամութիւնն Աստուծոյ եհաս յարարածս և ետ տիրել սեփհական ժառանգութեան նախնեացն մերոց, ետ ՚ի ձեռս մեր յառաջ զանառիկ դղեակն զՆոբերդ, և թագաւորանիստ քաղաքն յԱնի․ և ապա զամուրսն Բջնի, զՍարանդ մինչև գաւղանդ ՚ի Խէվրիզ, Կարնոյ քաղաքն մինչև ՚ի Խլաթ, ըզՇաքի և զՇորուան, զԱրտա մինչև ՚ի Պէլուկան, և այլ բազումս իւրեանց սահմանօքն՝ զոր աւելորդ համարեցաք յիշատակել։ Այլև զանբարկանալին ԱԾ սիրեաց զթագ պարծանաց գլխոյ իմոյ զԶաքարիայն և կոչեաց առ ինքն՝ որոյ ձեռն եղև արիութիւն։ Իսկ ես շինեցի մեր հայրենի վանքն Հաղարծինս ժամատուն վիմարդեան կամարակապ ՚ի դրան սբ Գրիգորիս․ և մին այգի

Նորեան ետու վասն յիշատակի եղբօրն իմոյ, և պարտ են սպասաւորք սորա զաւագ խորանի պատարագն Զաքարէի մատուցանել անխափան. կատարիչք գրոցս օրհնեալ լինին յԱյ, ամէն,,:

## Արձանագրութիւնք վանացն Գանձասարայ՝ ՚ի ներքս և արտաքս.

605, Յաջակի Դրէ Դռծ արձանագիրն է.

,, Յանուն սուրբ Երրորդութեան՝ Հօր և Որդւոյ և սրբոյ Հոգւոյն. այս գիր արձանի է զոր ես նուաստ ծառայ այ Ջալալ դօլայ Հասան որդի Վախտանկայ՝ Թոռն մեծին Հասանայ բնակաւոր ինքնակալ բարձր և մեծ արձախական աշխարհի՝ Թագաւոր և ՚ի յոգնասահման նահանգի: Զի հայրն իմ ՚ի վախճան կենաց ելից իւր աստեացս անդարձ կոչակի հաստատեաց ինձ և մօր իմոյ Խորիշահի՝ որ էր դուստր մեծ իշխանաց իշխանին Սարգսի, զի շինեսցուք եկեղեցիս ՚ի գերեզմանատուն հարց մերոց ՚ի Գանձասար. զոր սկսեալ մեր ՈԿԵ (1216) Թուին օգնութ̅ բարերարին Աստուծոյ, և ՚ի խփել լուսամուտին արևելից մայրն իմ կրօնաւորեալ, չոգաւ յԵրուսաղէմ երրորդ անգամ. և անդէն ՚ի դրան Յարութեան խարազնազգեաց ճգնութ̅, բազմամեայ ժուժկալութ̅ հանգեաւ ՚ի Քրիստոս լուսոյ վկայութեամբ և անդէն պահեցաւ: Իսկ մեր զբազմածուփ կենցաղոյս ՚ի մին եդեալ փոյթ գործոյ արարեալ՝ աւարտումն եդև շնորհօք ողորմութեան ամենաւարտումն(?) գութ տեառն ՈՁԷ (1238) Թուին զօտևորեալ ամենազան ձևօք, պատկերազան յօրինակերտ գըմբէթարդ յօրինուածովք յօժարութեան կամաց մերոց որպէս տեսանէ Աստուած. հոգացաք ըզպէտս միաբանիցս գիւղօրայս՝ Մաչէգ, Հարչան-

տուս, բոլորքոջն, մէկ լուծ Խոյաչինաձոր, Նորաշէնկան գետն այգետան, Սեղնկնի՝ զոր իմ հայրն էր տուեալ սահակայն, փուրկատոտայն. արծաթենիան՝ որ ես տուի խաչօք, գրանօք, մասամբք, նշխարօք պատուական և ձուլածու ամ սպասուք, և հանդերձ երևելի զարդիւք 'ի փառս Քի Այ մերոյ. և այլ 'ի մեր իշխանութե եկեղեցիքս ազատ են. կամաւ տէր Սարդանայ առաջնորդի սրբ ուխտիս և միաբանիցս գրեցաք ժամ՝ զաւագ սեղանն բոլոր տարին մեզ, և զայլ ամէն եկեղեցիքս զատիկն իւր ծրագալուցովն իմ հօրն է Սախտանկայ. Ածածնին դ օրն իմ մօրն Խորիշահին, և յայտնութիւնն իւր ծրագալուցովն իմ եղբօր Զաքարէի, զաւագ սեղանն որ իմ է յածածնէն մինչ 'ի խաչն իմ պապուն Հասանայ, յխնակամուտէն մինչ 'ի յայտնութեն Մամքանայ իմ կենակցին, ութօրէից ելից մինչ 'ի առաջաւորն համարակաց անյիշատակաց, բարեկենդանին ա շաբաթն իմ եղբօրն Կոլին. ա շաբաթն իմ քուերն Մարինոյ, աղուհացից շաբաթ կիրակէքն իմ եղբօրն Իվանէի, զատկէն մինչ 'ի ածածինն և 'ի խաչէն մինչ 'ի յխնակամուտն ինձ Հասանայ: Օրհնեցաւ եկեղեցիս ոձթ (1240) թուին, 'ի հայրապետութե տեառն Ներսիսի Աղուանից կաթուղիկոսի: Հաստատ է գիրս կամաւն Այ. որ հակառակի, ասոխն նորա Ած է և իւր սրբքն: Անտօնի տօնին մին օր ժամ Յովասափ միակեցին կատարի կամաւ մեծին Հասանայ,,:

Ի ժամատան ներսն աջ և ահեակ պատին է գրեալ.

,, Ի թուին չծե (1306) կամաւն ամենակալին Այ ես Ջալալ դօլայս որդի Սախտանկայ կողմանցս Արձախայ և ամուսին իմ Մամքան թոռն բաղուց թագաւորին, և հարազատ որդին

իմ Աթարակն, յետ կատարման եկեղեցւոյս հիմ-
նարկեցաք ժամատունս, և բազում աշխատութբ
աւարտեցաւ. զոր և հայցեմ անմոռաց յիշել յա-
ղօթս ձեր. փոքր ընծայ տուի զՍուռ գեղն իւր
չարէքսարովն, զձուանց իւր սահմանովն: Դարձել
ես Աթարակս ընծայեցի յօժարութբ ոսկետուփ
աւետարան, և սպասուական սուրբ նշան գերխ-
տափորն, և զմեր հայրենի հարաւակուռն, զբլրին
իւր սահմանովն. և սահմանեցին զխաչի ութօրէքն
պատարագել զՍն. և թէ քաղաքական ոք հանել
ջանայ՝ ՚ի փառացն Աստուծոյ մահով և կենօք
նզոված է. և յիշատակ նորա մի՛ յիշեսցի առաջի
Աստուծոյ. և թէ մահմէտական ոք զհողն հանէ
այս եկեղեցւոյս առ հասարակ նզոված է յԱս-
տուծոյ և մարգարէիցն,,:

,,Անուն երրորդութեան և մի աստուածութեան
Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. ես Նուաստ
աղախին Քրիստոսի Սամս խաթուն դուստր ինքնա-
կալ իշխանաց իշխանին Ջալալ Դօլայ Հասանին
տան Խաչենու, և բարեպաշտ մօր իմոյ Մամքա-
նին, և ամուսին մեծ պարոնին Սեմեկին եկի մեծ
յուսով ՚ի սուրբ ուխտս Գանձասարայ ես և որդին
իմ Սախտանկ. և սոքա խոստացան ժամ՝ զվար-
դավառին տօնին զամէն եկեղեցւոյ պատարագն.
քանի ես կենդանի եմ զժամն հօր և իմ մօր կա-
տարեն, և յետ մահուանն ինձ կատարեն. կատա-
րիչքն օրհնին Աստուծոյ. Թուին չԻԹ ,, (1280):

Դրանց հիւսիսի և հարաւ և արևմտեան.

,,Թուին ՋՂԵ, (1546) կամաւն աստուծոյ
ես Սարգիս կաթողիկոս որդի Հատիր մելիքին՝
թոռն մեծին Այտունին, և գնեցի զհայրենիքն
Կարայ՝ Զ ստակն մինակ տանն. Դ ստակ ու կէսն
Առաստունոց, Է ստակն Կուռալանայ. Դ ստակն

տուի սբ. ուխտս Գանձասարայ. որ զայս հայրենիքս հանէ սբ. եկեղեցւոյս, յմ՟ր հայրապետացն նզոված է. և սբ. Ովհանէսին կապած է,,։

,, Կամաւն Աստուծոյ ես Մէլիճան և եղբարք իմ՟ որդիք Այտունին՝ Թոռն մեծին Աղբաստու տեառն Խաչենու, տուաք Ալմանոյ իւր ջրոս սահմանօք ՚ի սբ. ուխտս Գանձասարայ, առաջնորդութե՟ տէր Ներսէսին. Թուին Ջ ԽԹ,, (1500)։

,, Կամաւն ամենակալին Աստուծոյ ես տէր Նիկոլայ առաջնորդ սբ. ուխտիս Գանձասարայ տուի զիմ՟ հոգւոյ որդիքս. ա՟ յայսմաւուրք, ա՟ տարեգիրք, ա՟ շուրջառ, Ադամայ գ. սատկն. որ զայս գրեանքս և հայրենիքս հանէ ՚ի սբ. Ովհաննէսէս, յմ՟ր հայրապետացն նզոված է. ՋԺԶ (1467) թուին,,

,, Թուին Ջ Ի (1471) ես Նաւասարդ ու Մախատանկս և այլ եղբարքս միաբանեցաք ու տուաք փառուանց, Կակաշանց, Չղադաշլանց [illegible] սատկն ՚ի սբ. ուխտս Գանձասարայ առաջնորդութե՟ տէր Ներսէսին: Որ՝ որ զայս վախճս հանէ ՚ի սբ. ուխտէս, յմ՟ր հայրապետացն նզոված է, և սբ. Ովհաննէս մկրտչին կապած,,։

,, Կամաւն Աստուծոյ ես Մէլիքս որդի Այտունին՝ Թոռն մեծին Աղբաստու տուի շուրջառ, սկիհ, ու այլ ընծայ. Կակաշանց, փառուանց, Չղադաշլանց [illegible] սատկն դնեցի, տուի ՚ի սբ. ուխտս Գանձասարայ. որ զայս ընծայս և վախճս հանէ ՚ի սբ. եկեղեցւոյս, յմ՟ր հայրապետացն նզոված է, և յուդայի մասնակից. Թուին Ջ ԽԸ,, (1499)։

,, Կամաւն Աստուծոյ ես Սուրբէկս որդի Մէջլիմին տուի զիմ՟ հայրենի հողն Նուղամնոսի կտուրն որ ՚ի վարդան բերանցէ իւր սահմանօք ՚ի սբ. ուխտս Գանձասարայ իմ՟ հոգւոյ յիշատակ. յառաջնորդութեան Մատթէոս վարդապետին և

իշխանութե Օշականի. Արդ՝ որք զհողն հանել զանան ՚ի սոյն ուխտէս՝ մեր մեղացն պարտականեն առաջի Աստուծոյ. և մասն զ յուդայի առցեն. և միտրանիցս մնչեւցեն զմեղ խաչեանց յաղօթս. ազգ. (1407) թուին.

Ես Հուրամ՝ թոռն մեծին Ջալալին տուի Աներսին հողն ՚ի սոյն ուխտս Գանձասարայ առաջնորդութե տէր Ներսէսին. որք զհողն հանենեն նզովեալ են Աստուծոյ. ջիբ. (1463) թուին.

Ես Աշխեն և Խոմշէս որդիք Աթաբակին տուաք Աւլմաձատախ հողն ՚ի սոյն ուխտս Գանձասարայ առաջնորդութե տր Ներսէսին. որք ըզհողն հանել ջանայ, յԺԸ հայրապետացն նզովեալ է և մասն յուդայի առցէ. ջժզ. (1467) թուին.

Ես Ամիրա որդի Փիրհամզին տուի Նեմին հողն իմ պապենց հօգւոյն ՚ի սոյն ուխտս Գանձասարայ. առաջնորդութե տէր Ներսեսին. որք զհողն հանեն ՚ի սոյն ուխտէս, յԺԸ հայրապետացն նզովեալ է, և որ Ամենէսին կապած. ջի (1471).

Ես Պասատամ որդի մեծին Ջալալին տուի Կուռնձի հողին կալէն վերն ՚ի սուրբ ուխտս Գանձասարայ՝ առաջնորդութե տէր Ներսէսին. ով զհողն հանէ յուխտէս, յԺԸ հայրապետացն նզովեալ է. թուին ջի (1471).

Կամաւն Աստուծոյ ես Սայթուն որդի պարոն Աղբաստայ տուի իմ հայրենեացն գՆանձայոր ՚ի սոյն ուխտս Գանձասարայ՝ առաջնորդութ տր Նիկողայոսին. որքա եմուն տարին երեք ժամ. ով զայս հայրենիքս հանէ ՚ի սոյն եկեղեցւոյս, յԺԸ հայրապետացն նզովեալ է. և որ Ամենէսին կապած. թուին ջժզ (1467).

Ես Աստուածատուր բաղդասարեց Նուերբին հողն ՚ի սուրբ ուխտս Գանձասարայ՝ առաջնորդութե տր Ներսէսին. եթէ ով զհողն հանէ, նզովեալ է յից. ջխդ. թուին (1495).

« Թուին ՉԻ · (1271) կամաւն Աստուծոյ ես Յովհաննէս որդի Իվանէի առաջնորդ սուրբ ուխտիս Գանձասարայ հրամանաւ տեառն Իւանէնու Աթաբէկին · և իմ հալալ արդեանց գնեցի զԱ արդնախթաղս՝ մին չորից եզն , և այլ ընծայեք տուի 'ի սբ կաթուղիկէս · միաբանքս տուին զՅովհաննու և Յակոբայ ամեն զամէն եկեղեցիքս պատարագ ինձ · ով խափանէ դատի յԱստուծոյ »

« Կամաւն աստուծոյ ես տր Ա արդան որդի Ջալալին տուի Նուհ խաչին հողն 'ի սբ ուխտս Գանձասարայ իշխանութե Աղդատայ , առաջնորդութե տր Եղիային · սոքա տուին Ե օր ժամ · ով խափանէ դատի յԱստուծոյ · Թուին ՊՂԲ » (1443).

« Կամաւն Աստուծոյ անհնարկալին , հրամանաւ Աթաբակին տեառն Իւանէնու ես Ներսեղ որդի Աբաջուր իրեցու , անձամբն իմ Սնմայք · միաբանեցայ սբ ուխտիս · և իմ հալալ արդեանց գնեցի զՃնկին երկիրն , տուի 'ի կաթուղիկէս · միաբանքս եստուն Է օրժամ 'ու ետեաց Ամածնին · կատարիչ ըն օրհնին յԱստուծոյ և խափանողքըն դատին · Թուին ՉԻԵ » (1276).

« Կամաւն Աստուծոյ ես Ազարեկի որդի ամիրաայ միրին հողն՝ իմ հայրենիք էր , իմ սըրտով տուի 'ի սբ ուխտս Գանձասարայ 'ի փրկութիւն հոգւոյ իմոյ · ով հողն հանէ՝ դատի յԱստուծոյ · Թուին ՌԺԲ » (1563).

« Ես Շ անհուշէս որդի Աղբուղին տուի նովերին հողն 'ի սբ ուխտս Գանձասարայ · ով հողն հանէ՝ սբ Սիմէոնս կայած է ».

« Յաւսանն Աստուծոյ ես Աբուլբան և անձամբն իմ Սոփեայ խաթուն միաբանեցաք սուրբ ուխտիս իշխանութե Ջալալին և առաջնորդութեամբ տէր Յոհաննին տուաք Զարերնար և այլ ընծայ · ետես և միաբանքս եստուն Է պատարագ տմ այլայլանութե Ջրապաւուցին՝ Ե ինձ , Ե Սոփեայ

խաւթունին. կատարիչքն օրհնին յայ, չկ, թուին ,, (1311).

605. Մեղրատ գիւղի գերեզմանատան գիրն է.

,, Ի ողբ, (1243) թուին, ողորմութեամբն Աստուծոյ, և ամենայն Խաչենոյ՝ Ջալալին և որդւոյ իւրոյ Աթաբակին. ես տէր Սարգան վարդապետ հաւատարեցի. պարոնայքն հողն ինձ տուին. ես գնեցի զԱնունին հանդն, զՀեղջատին, երկրին Հնատեղն՝ տուի վասն հոգւոյ իմոյ փոխմ՝ ՚ի սբ. ուխտս Գանձասարայ. որքս տուին տարեր ժամ՝ ՚ի տանի վարդանանց. ով զհայրենիքս հանէ ՚ի սբ. ուխտէս, յէր հայրապետաց նզոված լիցի, և իմ մեղացն պարտական ,,.

607. Սանահնու եկեղեցւոյ գիրն է.

,, Շնորհիւն Աստուծոյ ես Հասան որդի Սախաթանեայ և Խորիշահի՝ տէր Խաչենու շինեցի զսուրբ եկեղեցիս՝ յօժամ՝ յայտնեցաւ մասունք սուրբ Յովհաննու ՚ի սոյն աւուրս ՚ի թուին ոՀը (1229). աւանդեցի ՚ի սպասաւորացս զժամ պատկերն վասն ինձ և վասն հօրն իմոյ ,,.

Սանահնու փոքր եկեղեցւոյ գիրն.

,, Ես Մամքան թագուհի ամուսին Ջալալ դօլին և թոռն քաղաքաց թագաւորին՝ ի սինեայ, շինեցի զեկեղեցիս, և տուի ընծայ Սանահնու հողն զիմ հոգւոյ. սպասաւորքս հինգ պատարագ առնեն ինձ. և ծննդեան ու թ աւուրն իմ ծննդեանն առնեն՝ միշտ մեռանիմ ինձ. ով որ զատուածս հանէ, կամ զժամս խափանէ, դատի յԱստուծոյ և ՚ի սրբոց. թվին չ ,,(1251).

608. Սեծառանից, ի Հովհաննու վանից գիրն է.

,, Ի ՈԿԱ (1212) թուին. ես Խորիշահ ամուսին Վախթանկայ տէր Խաչենոյ՝ դուստր մեծին Սարգսի, քոյր Զաքարիայ և Իւանեայ վերստին շինեցի զեկեղեցիս մեծարանից ՚ի փրկութիւն հոգւոյ իմոյ, ՚ի բարեխօս զաւակաց իմոց. որ ի ժամ ինձ յիշատակ իմ՝ ծնողացն, զՎախթանկ և զիս յաղօթս յիշեցէք ,,

609. յՍուրբէկոյ տաճարի արձանն է.

,, Ի քահանայապետութեան տէր Ստեփաննոսի. զշինող եկեղեցւոյս զտէր Հովհաննէս յիշեցէք ՚ի Քրիստոս. նաև զծնողսն և զեղբարսն իւր. ՉԻԸ. (1279) թուին ,,

Արձանագիր գաւթի նոյն տաճարի.

,, Հայրապետական տէրութեանն Աբաղայ խանին, և ՚ի հայրապետութեան տէր Ստեփաննոսին, և ՚ի պարոնութեան Լորադինին, և Սրաջադինին և Պուրթելին ես տէր Հովհաննէս շինեցի զգաւիթս յիշատակ ինձ և եղբարց և ծնողաց իմոց. ՉԼԳ. (1284) թուին ,,

610. Հաւաթառայ եկեղեցւոյ գիրն է.

,, Թուին ՈՁԲ (1233). էր յիշխանութեան Հասանայ որդւոյ Վախտանկայ և ամուսնոյն նր Մամքանայ, ես Հովհաննէս քահանայ քուերորդի տէր Գրիգորի, և Գէորգի եղբօրորդի և այլ միաբանքս շինեցաք սուրբ եկեղեցիս ՚ի փրկութիւն հոգւոց մերոց ,,

611. Ռստակաց ծովոյ եկեղեցւոյ գիրն է.

„Ի թուին ՈԼ. (1181) և յիշխանութեան Սմբատայ եւ Ռուսուդ երէցս, Սարգիսս և եղբարքս մեր ժողովրդովքս շինեցաք զեկեղեցիս. բերդք զՏէրս. որք երկրպագանէք զմեզ յաղօթս յիշեցէք„։

Արձանագիրք Նորշէնի որ առ ափեալ վանից.

612. Նորեկեղեցւոյ Շնորհեան գիրն.

„Ի թուին ՈՂԴ. (1244) ես Սերոբ սարկաւագս սուրբ ուխտիս շինեցի զսուրբ Նշանս ի վերայ առաջին հիմանն. յաղօթս յիշեցէք„։
„Կամաւն այլ ես տէր Անդթէոս տուեցի զեկեղեցիս թուին ՉԿԶ. (1317). և զանգակատունս շինեցաւ, թուին ՉՀԲ (1323). յաղօթս յիշեցէք„։

Արձանագիր Շնորհեան ժամատան.

„Ի թուին ՉԺԳ. (1264) կամաւն Աստուծոյ ես Խաչատուր շինեցի զժամատունս առաջնորդութե տր Սիմէոնի. աղաչեմ զձեզ յիշեցէք զիս ի Քս„։

613. Արձանագիրք Ճուլեթոյ վանից.

„Հրամանաւ Աստուծոյ ես Կարապետ կաթողիկոս շինեցի զեկեղեցիս ի թուին ՊԿ, ին (1411) յիշատակ հոգւոյ իմ. յաղօթս յիշեցէք„։

Գրոսած ի վերայ սպիտակ տապանաքարի՝ եղեալ դրց ի
դրան ցուցեալ եկեղեցւոյդ՝ առ ներքոյ նկարել
Դր յամն 1838, ամսոյ ի գիր.

Ճ. „Ի թվ. ՋԻԴ. (1475) հանգիստ Խոսրովայ

կաթուղիկոսին: 'Ի թվ. ՋԿ (1511) ես տր Սուքեալ կաթուղիկոս գնեցի վերստին պարոն Հասանբէկէն եկեղեցւոյս դրան Ճ'ալէթ գիւղս: Դու թանկայ խարճ արի. և տվի վան մեր հոգւոյս սուրբ Ս'ծածնին ս., և ով հակառակի այս գիւղ Ճ'ալէթիս, կամ խլէ....:

(Այց ածն 'ի նոյն տապանակէն)

,, Եւր Կարապետ կաթուղիկոսին ՊԿ (1411).... Այս է տապան երկից վեհից՝ որք օծեցեալք 'ի տունն Աղուանից, աստ թափառացեալք յայնմ միջոցից, կան ամփոփեալք 'ի ներ տապանից, յոր սպասեն հարաշչին ընաւից, ակնկալեն յուսով պտղալից,,:

614, Արձանագիր տաճարի վանացն Աղխան գեղջ՝ որ Մերձ 'ի ձորոյն Շամախի, գրեալ 'ի ճակատ բեմին աջակողմանոյ:

,, Արդ՝ ես մեղապարտս 'ի ծնունդս եկեղեցւոյ Կիրկոս (Բերթոս Կերակոս) պիտակ վարդապետ ընիկ յերկրէն Աղուանից 'ի գեղջէն Աղխանու շնորհօք և ողորմութբ Աստուծոյ ետու շինել զեկեղեցիս վայելչակերտ անուն սրբոյն Ստեփաննոսի Նախավկային 'ի ՌՃԹ, (1660) թվին 'ի հայրապետութե սրբ Էջմիածնի տռն Յակոբայ, և 'ի կաթուղիկոսութե սրբ Գանձասարայ տր Պետրոսի. զոր և աղերսեմ զհանդիպօղսդ յիշել զիս և զտր Ղազարն հոգաբարձու վանիցս, և զամ աշխատաւոր սորին. որք յիշէն՝ յիշեալ լիցին առաջի Աստուծոյ, ամէն,,:

'Ի հիւսիսային որմն տաճարին արտաքուստ.

,, Նորոգեցաւ հիւսիսային կողմն տաճարիս

հանդերձ գլխոյ սալիւքն՝ աշխատանօք առաջնորդ Ոսկան վարդապետին. և ՌՄ լինար ահակն (ներ) փոքր ըսկանդարի որդի մահտեսի Յարութին եառուր մամանակից եղև, թվին ՌՄԼԵ ,, (1786):

615, Արձանագիր տաճարի վանաց Մոկէրի գեղջ՝ որ կոչի 'ի Շամախի քաղաք:

,, Ի̅ր թվին + ՌՃԻԹ ,, (1680):

,, Արդ՝ ես հուսկ Անտոն վարդապետս նորոգեցի զԱծածնի վանքս. որք հանդիպիք՝ ող. աղօթս յիշեցէ՛ք 'ի տէր ,,:

616, 'Ի միջոցի ձիւէաւ գեղջէ և վանացն է տեղի գերեզմանոցաց և 'ի միջի մատուռն խաչաշէն, յորոյ դրան վերայ 'ի վէմ մի գրեալ այս էին.

,, Աստուծով թվին ՌՃԿԸ, ին, (1719) ,,:

,, Շինեցաւ ՍԲ Նշանայ եկեղեցիս յիշատակ ամ՟ քրիստոնէից ննջեցելոց՝ եկաց և բնակաց, արանց և կանանց և ծերոց և տղայոց. մանաւանդ ջողայեցի Գէորգի որդի պարոն Պետրոսին, և Շամախու Յակոբի որդի Ամալուրին և Ահանին, և ծնողացն Եղիսապետին, և հանգուցեալ որդւոյն Մաթէոսին. ով ընթերցողք յորժամ ընթեռնուք յիշեցէ՛ք 'ի յաղօթս ձեր անդոն անարժան քահանայ. յիշեալ լիջիք առաջի անմահ գառին Աստուծոյ, ամէն ,,:

Արձանագիր ևս այն մատրան գրեալ 'ի վերայ միւսոյն վէմին՝ որ կանգնեալ է 'ի ճակատ բեմին տաճարին՝ ըստ այսմ:

,, 'Ի թվին ՌՃ եկի. վեցից տասանց և ութեկի 'ի ժամանակս հայրապետի Էջմիածնայ ՍԲ աթոռի Ածատուր կաթուղիկոսի լուսաւորչի փո-

խանորդի, Գանձասարայ ս՟ր աթոռի տ՟ն Եսայեայ և տէր Ներսէսին, յայսմ երկրի առաջնորդ Պօղոս անուն վարդապետի, յորդորանօք բարեսիրի Մնացօն անուն քահանայ պատճառ եղեւ եկեղեցոյս ա՟ծընկալ ս՟ր Նշանին, դաւթի որդի Կարապետին, իւր կողակցին Գուլանամին, իւրեանց որդւոյն Ա՟ծատուրին, նորաբողբոջակ Պօղոսի, այլ յիշատակ Թադէոսին, իւր կողակցին Սիմային, որդւոյն իւրեանց Արզաման կօկչին, իւր կողակցին Տաստագուլին, Եղիսաբեթ իւրեանց նուին, դստերն իւրեանց Սանիեային, ծաղկեալ որդւոցն Կոկճային, Կարապետին և Սարգսին. զի այս էր իղձ մերոյ սրտին և կատարումն հասուցինք։։

## ՎԱԽՃԱՆ Ի ՀԱՏՈՐՈՅ

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ССР А... 7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

# ՑԱՆԿ

Հատուածոց երկհատոր հաւաքածոյս.

## Ա


Աբգար արքայ 156
Աբրահամ ա, կաթուղիկոս 213
Աբրահամ բ, կ. 301
Աբրահամ գ, կ. 302
Ագարակ յԱրագածոտն 397
Ագարակ ՚ի Կոտայս 446
[illegible] խան գեղ 547
[illegible] հայրապետ 164
Ազատ գետ 352
Աթանագինէ յեպիսկոպոսացն Սեբաստեայ 184
[illegible]
[illegible] 415
[illegible] 555
Ալեքսանդր հայ 559
Ալեքսանդր Մակեդոնացին 566
[illegible] 517
[illegible] 455
[illegible] գեղ 565
Ախուրեան գետ 348
[illegible] 517
Ախտայ վերին 512
Ախտայ ներքին 511
Ակակիոս եպիսկոպոս [illegible] 178
[illegible] վերին | 415
[illegible] ներքին | 415
[illegible] 383
[illegible] 440
[illegible] 415
[illegible] 583
[illegible] 298

[illegible] 96
[illegible] 305
[illegible] 176
[illegible] 565
[illegible] 372
[illegible] 566
[illegible] 415
[illegible] 388
[illegible] 488
[illegible] 415
[illegible] 514
[illegible] 373
[illegible] 573
[illegible] 315
[illegible] 242
[illegible] 256
[illegible] 218
[illegible] 392
[illegible] 397
[illegible] 421
[illegible] 423
[illegible] 5 : 6 : 7 : 8 :
[illegible] 76
[illegible] 381
[illegible] 401
[illegible]
[illegible] 62
[illegible] 64
[illegible] 63 : 69
[illegible] 60
[illegible] 65 : 79
[illegible] 61
[illegible] (79)

սրբոյն Գէորգայ (79) 67
Առաջնորդք այրեվանայ 574
Առաջնորդք բջնայ 485
Առաջնորդք գողթան գաւառի 588
Առաջնորդք խորվիրապայ 572
Առաջնորդք կեչառուայ 492
Առաջնորդք հաւուց թառայ 576
Առաջնորդք մարմաշինու 570
Առաջնորդք յօհաննավանայ 405
Առաջնորդք վանաց Սաղարթայ ծրեն 584
Առաքեալ. է. 290
Արենջ 434
Անեղ 536
[illegible]. է. 196
[illegible] 578
Աստուածընկալ սուրբ նշան 57
Աստուածատուր. է. 299
շինուածք նորա 110
[illegible] Գայիանեաց 76
[illegible] 383
[illegible] 543
Արագած լեառն 343
Արագածոտն գաւառ 377
Արագածու սբ նշան ·56
[illegible] 383
Արամոս. [illegible] 441
[illegible] 394
[illegible] 480
[illegible] 445
[illegible] 189
Արիստակէս ը, է. 277
Արիստակէս դ, է. 279
[illegible] Պռօշայ վանաց 603
[illegible] վանաց 597
[illegible] վանաց 591

Արձանագիր Ռազերձան որ ծածկէ 599
Արձանագիրք Խաթրայ վանաց 598
Արձանագիր մարզէ Խոտակերաց վանաց 601
Արձանագիրք Օձարայ վանաց 600
Արձանագիր կաթուղիկէ եկեղեցւոյ Անի քաղաքի 594
Արձանագիրք Հաղարծնայ վանաց 604
Արձանագիրք Հառիճոյ վանաց 593
Արձանագիրք վանաց Գանձասարայ 605
Արձանագիր և առաջնորդք վանաց Խորակերտ առաքելոյ յԱրտազ 592
Արձանագիր վանաց Սրբոյ Թադէի առաքելոյ ի Տարօն 595
Արձանագիր Տաթեւոյ վանաց 602
Արձանագիր գերեզմանատան Տօլմակ գեղի 606
Արձանագիրք եկեղեցւոյն Ս. Աճառա 607
Արձանագիր Ս. Նէծաւրանից՝ յայտնեալն որ Յովհաննու վանից 608
Արձանագիրք տաճարին Սեւանայ 609
Արձանագիր եկեղեցւոյն Հառաւանից 610
Արձանագիր եկեղեցւոյն Իմանաւանոյ քարայ 611
Արձանագիրք Լուսաւորչի որ առաքելոց վանից 612
Արձանագիրք Ճարեկաւա վանից 613
Արձանագիրք տաճարի վանաց Սաղխան գեղջ 614
Արձանագիր տաճարի վանաց Սանահերի գեղջ 615
Արձանագիր մատրան գերեզմանոցաց նոյն գեղջ 616
Արձանագրութիւնք Աղուանից աշխարհին 596
Արձանագրութիւնք Յօհանավանից 405
Արձան խաչքարին ի Կանաքեռ 433
Արձանագիր նախընտրութեան եկեղեցւոյ 31
Արմաւիր քաղաք 368
Արմաւալու 372
Արուճ աւան 384
Աւան գեղ 435
Աւետարանք և ձեռագրեալք Կաթուղիկէ եկեղեցւոյ Հայաստանեայց ..9։13։14։
Աւագ աղբիւր 554
Աշնագեղ 465

Աբդեղայս եպս ՚ի Միջագետս հայոց 179
Աշէաս եպս յաջորդ Մաշտէի Տարօնեցւոյ 186

## Բ

Բաբասեղէ ՚ի Հռոմայեցւոց 504
Բաբասեղէ ՚ի Նիկ 477
Բաբգէն . Բ . 204
Բաբելաս եպս Գոշեան 171
Բամբակէ զեռան 345
Բաթրենոս կեալ 397
Բաղանէս Ողիմպեան 105
Բան ՚ի Յովհաննէս Ե, Ճանապարհորդ ՚ի կայսրս
ԿԱՅՍՆՐ 316
Բան ՚ի դարձն Պետրոսի որդւոյն Նորհամողին ՚ի բանսէն այնը 314
Բաղկեալ 440
Բաղխեամբ 565
Բարդող զեռան 344
Բարդողեմէոս առաքեալ 161
Բարսեղ . Բ . 250
Բարսամա հայկազն եպս Նդէսիոյ 172
Բարդածի 442
Բայազրարեան անուէան քաղաքացի ՚ի հրեշտակէն 2
Բայաւյն քաղաքացեան որդհասոյ հայոց 313
Բենիամին 393
Բուրաթիա բերան 376
Բջնի 484
Բրաբիոն . ծաղ իք մարբանս 483
Բրխելոյ . Բ . ՚ի ծանօթութեան 197

## Գ

Գագաթն Խաչմայի առաքելոյ 80
Գագաթն Խադէոսի առաքելոյ 81
Գագաթն արբոյ հօրն Հռիփսիմեայ 59

[illegible] 538
[illegible] 392
[illegible] 532
[illegible] 384
[illegible] 378
[illegible] 367
[illegible] 438
[illegible] ·39
[illegible] 531
[illegible] 355
[illegible] 353
[illegible] 557
[illegible] 550
[illegible] 376
[illegible] 231
[illegible] 236
[illegible] 470
[illegible] 446
[illegible] 433
[illegible] 398
[illegible] 376
[illegible] 201
[illegible] 324
[illegible] 329
[illegible] 497
[illegible] 108
[illegible] 73
[illegible] 415
[illegible] 114
[illegible] 188
[illegible] ··3
[illegible] 318
[illegible] 326
[illegible]
[illegible] 332

[illegible] 333
Գրեգոր Բ, Պ. 249
Գրեգոր Գ, Պ. 251
Գրեգոր Դ, Պ. 253
Գրեգոր Ե, Պ. 254
Գրեգոր Զ, Պ. 255
Գրեգոր Է, Պ. [illegible] 259
Գրեգոր Ը, Պ. 270
Գրեգոր Թ, Պ. 274
Գրեգոր Ժ, Պ. 276
Գրեգոր ԺԱ, Պ. 284
Գրեգոր ԺԲ, Պ. 287
Գրեգոր ԺԳ, Պ. [illegible]


[illegible]


[illegible] 186
[illegible] 597
[illegible] 446
[illegible] 310
[illegible] 346
[illegible] 159
[illegible] 517
[illegible] 223
[illegible] 233
[illegible] 256
[illegible] 267
[illegible] 291
[illegible] 309
[illegible] 534
[illegible] 502
[illegible] 415
[illegible] 566
[illegible] 35
[illegible] 29

## [illegible]


[illegible] 566
[illegible] 503
[illegible] 383
[illegible] 415
[illegible] 565
[illegible] 216
    [illegible] 327
[illegible] 335
[illegible] 221
[illegible] 296
    [illegible] 330
[illegible] 163
[illegible] 241
[illegible] 281
[illegible] 412
    [illegible] 137
    [illegible] 139
[illegible] 227
[illegible] 347
[illegible] 293
[illegible] 375
[illegible] 418
    [illegible]
    [illegible] 419
    [illegible] 420
    [illegible] 421
    [illegible] 422
    [illegible] 423
    [illegible] 424
    [illegible] 425
    [illegible] 426
    [illegible] 427
    [illegible] 428

[illegible] 429
[illegible] 430
[illegible] 431
[illegible] 432
[illegible] 358 : 359 : 360 : 361 : 362
363 : 364 : 365 : 366 :
[illegible] 165
[illegible] 331

[illegible]

[illegible] 565
[illegible] 16 : 18
[illegible] 446
[illegible] 195
[illegible] 166
[illegible] 235
[illegible] 276
[illegible] 282
[illegible] 168
[illegible] 415
[illegible] . . .
[illegible] 175
[illegible] 565
[illegible] 556

[illegible]

[illegible] 442
[illegible] 476
[illegible] 372
[illegible] 391

[illegible]

[illegible] 160
[illegible] 280
[illegible] 289
[illegible] 380
[illegible] 379

[illegible] 413
[illegible] 506
[illegible] 372
[illegible] 397
[illegible] 517
[illegible] 446
[illegible] 491
[illegible] 240
[illegible] 265
[illegible] 249
[illegible] 167
[illegible] 456
[illegible] 382
[illegible] 372
[illegible] 477
[illegible] 446
[illegible] 157
[illegible] 158

[illegible]

[illegible]
[illegible] 372
[illegible] 469
[illegible] 544
[illegible]
[illegible] 378
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 442
[illegible] 511
[illegible] 495
[illegible] 373 · 374 · 375
[illegible] 219
[illegible] 383

## Լ


[illegible] 395
Լեւոն [illegible] 342
Լեւոն [illegible] 339
Լեւոն [illegible] 340
Լեւոն [illegible] 338
Լեւոն [illegible] 341
[illegible] Արարատայ 336
[illegible] Էջմիածնէ ·30


## Խ


[illegible] 186
[illegible] } 415
[illegible] 415
Խաչիկ Ա. Կ. 245
Խաչիկ Բ. Կ. 248
[illegible] Էջմիածնէ ·32
[illegible] 390
[illegible] 415
[illegible] 373
[illegible] ·52
[illegible] 571
[illegible] 372


## Ծ


[illegible] 549
[illegible] 501
[illegible] 589
[illegible] 518


## Կ


[illegible] ·83
[illegible] Էջմիածին 33·34

Սաղտոսծոյ տան հոռոմկենդաբանի և ճգնաւորանի
    նորին 129, 155
Սամուէլ առ Նաւուրոյ վերջին 401
Սամուէլ առ Օշականու 399
Սարգսեանի յՈրսանէ վէս ՛ի դատաստանաց երկնային 347
Սարապեոն ա, ի. 266
Սարապեոն բ, ի. 268
Սարապեոն գ, ի. 300
Սարեի 407
Սարենիա 516
Սեհաւառայ ճգնաւորն 490
Սեօղորա 383
Սեպաւս պալտող 565
Սեոս քեղեան 442
Սեղբերո 372
Սիրահոս Հերապեցի ի. 275
    նորա վէ ճգնաւորանն Լուսաճնի 87
Սիմէոն համ Սիմէոնէս եպիսկոպոս Սպարտուհեցւոց 181
Սոփ. ադեխանն նետին 542
Սոշահավէն 551
Սոփիա համ Սոփիա աշակերտ Բարդուղիմէոսի առաքելոյ 169
    Հերեթ նշխարաց նորա 587
Սոն, Սոնաս համ Սոփոնաբեա եպս Լուդեացւոց 173
Սոնդոհ ժա, Գրիգոր հոռոմէական. 581
Սուրբ Գէորգ 385
Ստեփանոսին ա, ի. 257
Ստեփանոսին բ, ի. 259
Ստեփանոսին գ, ի. 260
Ստեփանոսին դ, ի. 263
Ստեփանոսին ե, ի. 272
Ստրատոյ վկայն 417
Սուրբ. Տ. Սուր
Սուքիաս համ Սուքիաս ի. 214
    նորա վէ շաւարշ Հաբեթաւթեանց 320

## [illegible]


[illegible] 373
[illegible] 415
[illegible]
[illegible] 565
[illegible] 467
[illegible] 476
[illegible] 415
[illegible] 541
[illegible] 565
[illegible] 447 : 482
[illegible]
[illegible] 568
[illegible] 415
[illegible] 575
[illegible] 373
[illegible]
[illegible] 156 ց 185
[illegible]
[illegible] 188 ց 312
[illegible] 373
[illegible] . . .
[illegible] 351
[illegible] 507 : 508
[illegible]
[illegible] . 88


## Չ


Չագ · [illegible] 548
Չագ [illegible] 443
Չագավանք 444


## Պ


Պ[illegible] 303

[illegible] 98 : 99 : 100 : 115
Պ [illegible] 98 : 115
Պ [illegible] 460
Պ [illegible] 415
Պ [illegible] 457
Պ [illegible] 483
Պ [illegible] 565
Պ [illegible] 446
Պ [illegible] 517
Պ [illegible] 552
Պ [illegible] 553
Պ [illegible] 466
Պ [illegible] 564
Պ [illegible] 473
Պ [illegible] 475
Պ [illegible] 372
Պ [illegible] 383
Պ [illegible] 415
Պ [illegible] 462
Պ [illegible] 209
Պ [illegible] 185
Պ [illegible] 415
Պ [illegible] · Տ · Մ [illegible]
Պ [illegible] · Տ · Ն [illegible]
Պ [illegible] 565
Պ [illegible] 376
Պ [illegible] 372
Պ [illegible] 308
[illegible] 109 : 111 : 112 : 113
Պ [illegible] 535
Պ [illegible] 537
Պ [illegible] 383
Պ [illegible] 463
Պ [illegible] 372
Պ [illegible] 383

Պ[illegible] 397
Պ[illegible] 'ի [illegible] 565
Պ[illegible] 517
Պ[illegible] 483
Պ[illegible] 517

## Ջ

Ջ[illegible] 439
Ջ[illegible] 373

## Ս

Ս[illegible] 566
Ս[illegible] 383
Ս[illegible] 566
Ս[illegible] . . .
Ս[illegible] 391
Ս[illegible] 486
Ս[illegible] 446
Ս[illegible]. Տ. Ս[illegible]
Ս[illegible] 197
Ս[illegible] 237
Ս[illegible] 336
Ս[illegible] 337
Ս[illegible] 'ի [illegible] 77
Ս[illegible] 'ի [illegible] 55
Ս[illegible] 66 : 69 : 78
Ս[illegible] 75
Ս[illegible] 66
Ս[illegible] 68
Ս[illegible] 71
Ս[illegible] 51 : 66 : 76 : 77
Ս[illegible], Ս[illegible], Ս[illegible] 74

Սատանայ ուրացութեանց և նշխարք որոց ՚ի պատմութի
  խաւարայինն Լուսաւորչին 39 և 82
Սապարա 378
  հայրապետ յանուն Լուսաւորչին 136 : Բնաշխարհն 139
Սարգսեան առաջն ամառնի ՚ի Կեսարիա 441
Սարգսի Գէորգ 372
Սարկաւագ վանքն 569
Սարութիւն ապստամբ միան նշխարաց 79
Սբրեմեանց վանքն (ՀՀԱՆՀհայ) 561
Սեբաստիա 489
Սեբաստ Տ. 199
Սեղբեսութ է, ՚ի ծառայութեան 291
Սեծաւորի Գէր 349
Սենեկապան Լուսաւորչին 464
Սենեկապան Լուսաւորչայ. Տ. Ներսէսի ար ամաւր.
Սենեկապան Գէորգեայ Հայրապետի ՚ի Սիսի 403
Սենեկապան Լուսաւորչայ 414
Սենեկապան Խաչենեայց 479
Սենեկապան ՚ի Հռոմայեցի 478
Սենեկապան ՚ի Կարենեան 516
Սենեկապան ՚ի Նիկ գաւառէ ՚ի Գէորգ Տարոնոյ 471
Սենեկապան Կառաջ աւանի 386
Սենեկապան Սարգսեայ լերին 579
  Սերգեա նորագիւտութիւն վանքին 582
Սենեկապան ար Սարգսեայ Սուրբ Գէորգ 401
Սենեկապան յանուն Խաչկարի առաջնոյ ՚ի Գողթն 587
Սենեկապան Յովհաննու հայրապետ Սուրբ Հոգւոյ 585
Սենեկապան Կարմրաւոր հօրեղբայր Սուրբ Գէորգ 401
Սենեկապան Յովհաննու ՚ի Կարին 404
Սենեկապան Թովմ Գէորգ 408
Սենեկապան հրեշտակ ՚ի Նիկ 483
Սենեկապան առաջն Գրիգորի ՚ի Փոքր Գէորգ 397
Սենեկապան հայր եկեղեցւոյ արքունական Հռոմկլայ 318
Սենեկապան հայր եկեղեցւոյ արքունական Գեղարքունեաց 326
Սենեկապան հայր եկեղեցւոյ ոսկոր հանդերձ Սարգսեանց՝

Գոյն ըմպելեացն Հաւատացելոց 332
Մենաստան առ Օշական 400
Մենաստան Վրացի տաճար 493
Մենաստան Տեղերոյ 389
Մենաստան Պաղատանի կամ Լուսաւորչի 577
Մերուժան կ. 262
Մեհենի գեղ 449
Մեհրեկան 383
Մեհեակ 442
Մեհրուժան եպիսկոպոս հայոց ՚ի Կեսարիա 177
Մելիտոս կ. 304
Մելքիսեդեկ կ. 286
Մխիթար կ. ՚ի ծանօթութեան 261
Մխիթար (եպս) հայր Միաբանութեան վանաց ՚ի Մեսինա 174
Մովսէս Ա, կ. 200
Մովսէս Բ, կ. 212
Մովսէս Գ, կ. 293
որոյ շինուած Յովսէփեանն 88 և 92
Մուշ անուանեալ պատուղ. Շիրակ 491
Մուշի գեաղ 452
Մուղանձաղ 415
Մաշկ կ. 206
Մոտեկաւթ 372
Մուշաստարանն. Տ. Կուշի գեղն
Մուշաշամ 472
Մուշաղայաշեն 372
Մուշի գեղ 402
կալուած յանուն Յովսէփեանց 138 : ընակեցան 139

Յ

Յակոբ Ա, կ. 258
Յակոբ Բ, կ. 261
Յակոբ Գ, կ. 269
Յակոբ Դ, կ. 295
որոյ շինուածն 95 : 582

Յակոբ Ե, Հ. 306
Յաջորդութիւն Լուսաւորչութեան կամ Հայրապետութեան յանուն Սրբոյ Եկեղեցւոյ Էջմիածնի ՚ի ծանօթութե հաստատածոյն · 13
Յեսայի Թլթոյ աստուածաբանք գերեզմանաց և անապատ գտանելոյ ՚ի ամիսն 16, ըդ դարուն 567
Յովնան Հ. 229
Յովհան Մանդակունի Հ. 203
Յովհաննէս Բ, Հ. 211
Յովհան որ և Յովհաննէս Գ, Հ. յաղագս անհամաձայնութեան իւրոյ եղելոց հաղորդեալ յունաց և պարսից հայոց հաստատելոյ ՚ի Ս. Սահակ հայրապետ ՚ի թուականն մեր յունաց յամի 600. և քննեցաւ ՚ի Ս. Գրիգոր վարդապետ և շինեաց եկեղեցի (435). ՚ի պատմութեան պարսից ըստ յունաց թէ նեցաւ անդ. ՚ի Սարգիս իւր յայնմ ինչ ժողով, այլ ՚ի ժողով պարսից այնմ խաղաղ, և ՚ի գեր ծովակերտեանն Ս. Հայրապետ, գերեցաւ և սա էինքն Յովհաննէս Գ, և ըստ Ս. Հայրապետ ընդ ժողովն կենաց՝ յամի 616:
Յովհաննէս Դ, Հ. 222
Յովհաննէս Ե, Հ. 234
Յովհաննէս Զ, Հ. 238
Յովհաննէս Է, Հ. 256
Յովհաննէս Ը, Հ. 312
Յովհաննու Մկրտչի մասն նշխարաց · 80
Յովսէփ Ա, Հ. 198
Յովսէփ Բ, Հ. 232
Յովսէփ Գ, Հ. 273
Յովսէփ անուանեալ Հ. ՚ի ծանօթութե 309
Յուդա Թադէոս եղբայր Տեառն՝ կոչի և Ղեբէոս 162
Յուսիկ որդի Ս. Ներսիսի Հ. 191

## Ն


| | |
|---|---|
| Նահապետ Կ. | 297 |
| Նահատակութիւն ութից Հռիփսիմեանց | 317 |
| Ներշապուհ [illegible] | 481 |
| Ներսէս Մեծն, Կ. | 193 |
| Ներսէս Բ., Կ. | 210 |
| Ներսէս Գ., Կ. | 217 |
| շինուածք նորա | 335:571 |
| Ներսէս Դ., Կ. | 252 |
| Նիգ գաւառ կամ Նիգական | 447 |
| Նիկողայոսի [illegible] | 76 |
| Նոյեան տապանին տախտակ. | 53 |
| Նորաշինաց գիւղ | 533 |
| Նոր գիւղ 'ի [illegible] | 442 |
| Նոր գիւղ 'ի [illegible] | 545 |
| Նուրհան | 517 |


## Շ


| | |
|---|---|
| Շահակ Կ. | 194 |
| Շահապ | 442 |
| Շահվարդա | 373 |
| Շահրեար | 370 |
| Շահրեղ | 500 |
| Շարակարգութիւն կաթողիկոսաց Ս. Էջմիածնի | 590 |
| Շինուածք տան [illegible] հայոց [illegible] | 116 |
| Շինութիւն Կաթողիկէ եկեղեցւոյ Ս. Էջմիածնի 'ի Վաղարշապատ | 3 |
| Շինութիւն նորոգութեան 'ի նոյն Կաթողիկէ եկեղեցի 'ի Ս. Վահանայ Մամիկոնեանէ և 'ի [illegible] նորա | 9:10 |
| Շինութիւն [illegible] Ս. Էջմիածնի 'ի Ս. Վահանայ Մամիկոնեան | 85 |
| Շինութիւնք նորոգութեանց 'ի նոյն տաճար Ս. Էջմիածնի 'ի Կոմիտաս կաթողիկոսէ | 11 |
| 'ի Ներսէսէ Գ. | 12 |

'ի Սաղմոսէ Է, ըստ ... · 15
'ի Գեղեցիկ նախադրինակ · 16
'ի Օրինակըն ... յօհաննու · 17
յՄեծ ... նախադրինակ · 18
յԱստուածածնայ համառօտագոյն · 20
'ի Սեփանէ երանելոյ · 22
'ի Պօղոսէ նորինեցոյ 24 · 26
եւ յԱ. ... նախադրինակ · 27

Ըսկզբան 566
Ըստ... 458
Ընթերցուածք եւ ... 

'ի Գնացականի ... 325
'ի Գնացականի ... 331
'ի Գնացականի Ս... 334
'ի ... Լուծմանէ, 315 : 298
'ի ... Լուծմանէ · 311

Ը... 383
Ը... 'ի ... 197
Ը... 546
Ը... եւ ... 415
Ը... 566

## Ո

Ողջաբերք 446
Որդիան 411
Ոսկեբերան 374
Ոսկեփորիկ 372
Ոստանիկ 517
Ոսկէ դար 409
Ոսկան վարդապետն Կաթուղիկէ Էջմիածնի Երեւանցւոյ հայաստանեայց
եւ տպագրութեան ... նորա՝ 117 : 118 : 119
յորս եւ
'ի Փոխղին, 120
'ի Սեւոնս, 121

՚ի Ս. Երա հանդերձ նշանագրովք , 122
՚ի Բաժնի անդ ջրհեղեղ , 123
զՄատթէոս հանդերձ նշանագրովք . 124

Ջ

Ջախրդա 565
Ջամրդա 454
Ջարչելեւ 565
Ջահ Թծոռթեան Սարթուղինէ էջէշէցոյ Էջմիածնի . . 4
Ջերպոխդա 495
Ջերպոխձէ 372

Պ

Պաշարմուղ 459
Պաշմամուղ 383
Պանդուխտ ՚ի համարան 374 : 379 : 426 : 448 : 460 . 509
Պանտալէոնի ասէր Ման . 81
Պաշտպարն . Տ . Ճաշուղ
Պատկեր ամենասրբուհւոյ անուանեալ . 48
Պատկերք ՚ի Թծանուն Նկարչաց ՚ի տաճարին
Էջմիածնի 36 : 37 : 38
Պարգեւատէր Մաշտոց Թագաւորի 580
Պետրոս ա , է . 247
Պետրոս Բ , Վերանու Խոշեցեալ և ՚ի Ճանապարհ այնր
համարոյ 303
Պետրոս Զեղբախօրաստացն Սեբաստոյ 183
Պղխէր 461
Պղնձահանք 493
Պողինարդոն Վհայի Ման Նշխարաց . 76
Պորտակ . այծմ Օրոխեա 498
Պոզնի 442
Պօղոս ա , է . 264
Պօղոս Բ , է . 271
Պօղոս է . ՚ի Ճանապարհութեան 249

## Ջ.


Ջանշու յարքայնութեան · պահպան սահէր 448
Ջանփէրայ 372
Ջահանգր · արմաթ Բաղդայ · 491
Ջաֆարաղա 372
Ջեւ գետ 566
Ջոր աշտին Գեղամայ 356
Ջոր Նախիջեւանու 354
Ջոր յանձանէն Լուծանայ 94 : 95 : 106
Ջորք մանուանց յերկաթ խոշանու Լոռեցւոց 357
Ջրվէժ 436


## Ռ.


Ռնդամաւ գետ 507


## Ս


Սահակ Ա, պարթեւ հյ,
 Ներսէսէ շատատր հայրապետութեանց 197
 319
Սահակ Բ, հ. 207
Սահակ Գ, հ. 220
Սահակ Դ, հ. 292
Սահակ Ե, անառականեալ հ. ի ծանօթութեան 305
Սաղմոսավանք 410
Սամատարգիւ 468
Սամաշար 415
Սամուէլ հ. 205
Սամուէլ հայր վանաց Հաւուցթառայ 325
Սաշտա 474
Սարաշտա | Սարաշտա շէյխաւ | 565
Սարգիս Ա, հ. 246
Սարգիս Բ, հ. 278
Սարգիս Գ, հ. 283

Սարգիս Հ. 'ի ծանօթութեան 249
Սարդարապատ ամրոց 369
Սեղանատուն Պետրոսի առաքելոյ 70
Սեղանք որբաղան խորհրդոց 'ի Կաթուղիկէ տաճարին
Էջմիածնի 5 : 18 : 19 : 21 : 28
Սերովբէ 406
Սեւան կղզի 519
Նախնին շինք նորին եւ ժամանակն, 520
Ընդարձակ պատմութեան, 521
Սկզբն կրօնաւորութեան, 522
Կարգաց սահմանադրութիւնքն, 523
Նախորդք կամ վանահարքն, 524
Նշանաւոր կրօնաւորացն, 525
Եկեղեցեաց պաշտամանցն, 526
Սուրբ եւ բարի կրօնաւորացն, 527
Ինչք կրօնաւորացն, 528
Իսաւ ճգնաւորին, 529
Սարկաւագ հանգուցեալ կրօնաւորաց ճգնա_
ւորին. 530
Սեփիապատ 415
Սիմոն Հ. 307
Շինուած նորա 101 ց 108
Սիօն Հ. 226
Սկզբն կրօնաւորութեան Հայոց յԷջմիածին. 84 : 85 : 131
Սահաթն կոչեցեալ ժամացոյց 373
Սողոմոն Հ. 230
Սուլթան ալի շահաշ 566
Սուաքէլին 510
Սուքիաս Հ. 'ի ծանօթութեան 197
Ստեփաննոս Ա, Հ. 228
Ստեփաննոս Բ, Հ. 239
Ստեփաննոս Գ, Հ. 244
Ստեփաննոս Դ, Հ. 'ի ծանօթութեան 259
Ստեփաննոս Ե, Հ. 285
Ստեփաննոս Զ, Հ. 288

Ստեփաննոս անուանեալ է. ՚ի ծանօթութե 297
Սրապիոն է. ՚ի ծանօթութեան 291
Սօլայ 513

## Վ.

Վահան է. 243
Վաղարշապատ 134 : 139 : 415
Սատրագրութե նորա և տեղի ապարանից թագա-ւորացն. ՚ի ծանօթութեանն ·84
Վանաչանու ճննդաման 560
Վանդակ գլխոյ՝ իջման ուղղացն ·20
Վանս գեղարդեան ... Տ. յակովբայ ...
Վաստակեն 563
Վասակայ մարզպանութեան ասացեալ անընդհատ ցորեն Գրիգոր լուսաւորիչ 187
Վարաժնունիք. 494
Վարդեր. այժմ Զանզը 499
Վճան գետ 387
Վլասիոս եպս սեբաստիոյ 182
Վրանաբնակ մահմետականք՝ արաբիք և քրդեր 416
Վրթանէս է. երէց որդի լուսաւորչի 190

## Տ

Տաճար յաթուղին Աստղկան 1, էն ց31
Տաճարաքաղ. այժմ Պոլսոփաղ. ... ... թէքիրտաղ 437
Տարակերպեալ ՚ի Սամոսա 446
Տարակերպեալ ՚ի Նեկ 450
Տանձութ ՚ի Նեկ 471
Տանձութ ՚ի Վարաժնունիս 515
Տաղաւար 383
Տաշէթի
Տաշէթի ամբերդ 565

Տաճկին երրորդ 566
Տապանակ Բաշխաման անդամանեաւ ·58
Տապալու 383
Տեղի նշխարաց տեառն Յովհաննու Մկրտչի 334
Տեառն յարութեան կաթողիկէին Աստուածածնի 'ի լու-
սաւորչէ ··1
Տեսիլք՝ որոյն գերեզմանաց 482
Տեղեկութեանց 539
Տօնելոյ երրորդ· եպիսկոպոսն Մեթոդիոս 170
Տպարան Աստուածածին 107
Տրդատ Ա, Է· 224
Տրդատ Բ, Է· 225

Ր

Րահման ջեանս 565

Ց

Ցամաքեբեր 496

Փ

Փախչելով 'ի Մ արածնունդս 517
Փախչելով 'ի Գերմանիա· Տ· Մանել
Փառաւորեալ կամ Փառքն է· 192
Փարպի 396
Փերոզ 397
Փիլիպպոս Փահլաւունեցի է· 294
Ընտանեաց նորա 'ի պատմութեան Աստուածածնի, 93:94
Յետ ... որբոց Հռիփսիմեայ, 321
Յետ ... որբոց Գայիանեայ· 328
Փրկչեանն, Պարթեւեանն կամ Պերճեցեանն եպիսկո-
պոս կարգաւորեցուց 180

Ք

Քաղոր 487
Քանանէա 433

Քանքան ջրոյ. Տ. ջրոր քանքանին Աղթամարի:
Քասաղ գիւղ 451
Քասաղ գետ 350
Քարվանսարայք. Տ. Պանդոկք
Քարվանսարայ գիւղ 509
Քէալաչէարի 371
Քէալալան խան Քարալամ 477
Քէալաշբէկի դուռլոյ 376
Քէալաշքէանդ 477
Քէաշշիանէ. Տ. Գործարան Ըշիշալինուրէան.
Քէամալ |
Քէանքան | 446
Քէասաման 566
Քէարիմարի 372
Քէարքիէալ 565
Քեղարդայ վանք. Տ. Այրիվանք.
Քէօլանալու 397
Քէօլան թաղը 515
Քէօլագուան 558
Քէօլանի և Սարուխ |
Քէօփալու | 415
Քէշիշ քէանդ |
Քիւլանի 'ի Գիւղաքունի 540
Քիւլանիկ 'ի Սոդոյս 446
Քիւլլուծայ 453
Քիւմպէդ. իշխան դադարեայ 374
Քիւրքէանլու 415
Քոռնա գիւղ 586
Քրիստափոր Ա, կ. 202
Քրիստափոր Բ, կ. 208
Քրիստափոր Գ, կ. 215

## Օ

Օշական 517

Օրեայ խաչ 571
Օձալէտան · իշխան տաշր 586
Օգրուձայ 566
Օշական 398
կառուած յանուն Ս. Ըղիածնի 135 : ընծայեցեան 139
Օրմանէչ 566

Ֆ

Ֆարուխ 505
Ֆուանկանոց 415


*Ի Ս. Երատեւչութեան տպարանիս Մ. եւոնիք վար-դապետի Ծաղիկեանց՝ Ներսամոյ լուսաւորչեան հայոց սինհոդոսի սրբոյ Էջմիածնի ։*



[illegible]
[illegible]

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | . | . | . | . | 1 | ... |
| 1 | 1 | . | . | . | . | ... |
| . | 1 | . | . | . | . | ... |
| . | . | . | . | . | . | ... |
| 1 | 1 | . | . | . | . | ... |
| 1 | 1 | . | . | . | . | ... |
| 1 | . | . | . | . | 1 | ... |
| 2 | . | . | 1 | . | 1 | ... |
| 2 | 1 | . | . | . | . | ... |
| 1 | 1 | . | . | . | . | ... |
| 1 | 1 | . | . | . | . | ... |
| 1 | 1 | . | . | . | . | ·29 |
| . | . | . | . | . | . | ··9 |
| . | . | . | . | . | . | ··8 |
| . | . | . | . | . | 1 | ··9 |
| . | . | . | . | . | . | ·28 |
| . | . | . | . | . | . | ·11 |
| . | . | . | . | . | 1 | ·11 |
| , | . | . | : | . | . | ··7 |
| 1 | 1 | 1 | 2 | . | 1 | ·15 |
| . | . | . | . | . | 1 | ·17 |
| 2 | 1 | . | 2 | . | . | ·30 |
| 1 | 1 | . | . | . | . | ... |
| 1 | 1 | . | . | . | . | ... |
| 1 | 1 | . | . | . | . | ... |
| . | . | . | 1 | . | 1 | ... |
| . | . | . | . | . | 1 | ... |
| 34 | 27 | 1 | 6 | . | 9 | 174 |
| 95 | 79 | 2 | 17 | 5 | 24 | 1680 |

# ՑՈՒՑԱԿ

[illegible]

| [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | | [illegible] | | [illegible] |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| [illegible] | | | | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| [illegible] | 65 | 3 | 1 | . | . | . | . | . |
| [illegible] | 83 | 1 | 1 | . | . | . | . | . |
| [illegible] | 14 | 1 | 1 | . | . | . | . | . |
| [illegible] | 35 | 1 | 1 | . | . | . | . | . |
| [illegible] | 55 | 1 | 1 | . | . | . | . | . |
| [illegible] | 20 | . | 1 | . | . | . | . | . |
| [illegible] | 35 | 1 | 1 | . | . | . | . | . |
| [illegible] | 20 | 1 | 1 | . | . | . | . | . |
| [illegible] | 52 | 3 | 1 | . | . | . | . | . |
| [illegible] | 16 | 1 | 1 | . | . | . | . | . |
| [illegible] | 22 | 1 | 1 | . | . | . | . | 9 |
| [illegible] | 12 | 1 | 1 | . | . | . | . | . |
| [illegible] | 38 | 1 | 1 | . | . | . | . | . |
| [illegible] | 20 | . | 1 | . | . | . | . | . |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | . |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | 52 |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | 12 |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | 31 |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | 49 |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | 26 |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | 5 |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | 49 |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | 13 |
| | 487 | 16 | 14 | . | . | . | . | 246 |
| **[illegible]** | | | | | | | | |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | 5 |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | 3 |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | 50 |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | 21 |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | 11 |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | 4 |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | 1 |
| **[illegible]** | | | | | | | | 95 |
| [illegible] | 85 | 2 | 1 | . | 2 | . | 2 | .. |
| [illegible] | 43 | 2 | 1 | . | 1 | . | . | .. |
| [illegible] | .. | . | . | . | 1 | . | 1 | .. |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | 15 |
| [illegible] | 38 | . | 1 | . | . | . | . | .. |
| [illegible] | 10 | 1 | 1 | . | . | . | . | .. |
| [illegible] | 1 | . | 1 | . | . | . | . | .. |
| [illegible] | 9 | . | 1 | . | . | . | . | .. |
| [illegible] | 11 | 1 | 1 | . | . | . | . | .. |
| [illegible] | 14 | 2 | 1 | . | . | . | . | .. |
| [illegible] | 12 | 1 | 1 | . | . | . | . | .. |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | 9 |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | 8 |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | 14 |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | 11 |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | 4 |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | 7 |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | 5 |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | 5 |
| | 223 | 9 | 9 | . | 4 | . | 3 | 78 |
| **[illegible]** | | | | | | | | |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | 13 |
| [illegible] | 15 | 1 | 1 | . | 1 | . | 1 | 11 |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | 9 |
| [illegible] | .. | . | . | . | . | . | 1 | 6 |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | 9 |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | 6 |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | 12 |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | 8 |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | 6 |
| | 15 | 1 | 1 | . | 1 | . | 2 | 80 |
| [illegible] | 33 | 1 | 1 | . | . | . | 1 | .. |
| [illegible] | .. | . | . | . | . | . | 1 | 31 |
| [illegible] | 28 | 1 | 1 | . | . | . | 2 | .. |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | 26 |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | 29 |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | 11 |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | 9 |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | 7 |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | 11 |
| [illegible] | .. | . | . | . | . | . | . | 4 |
| | 61 | 2 | 2 | . | . | . | 4 | 118 |
| [illegible] | 118 | 3 | 1 | 1 | 3 | . | 1 | .. |
| [illegible] | 153 | 3 | 2 | . | . | . | 1 | .. |
| [illegible] | 15 | 1 | . | . | . | 1 | . | .. |
| [illegible] | 25 | 1 | 1 | . | . | . | 1 | .. |
| [illegible] | 84 | 2 | 1 | . | 1 | . | . | .. |
| [illegible] | ... | . | . | . | . | . | 1 | 29 |
| [illegible] | 4 | 1 | . | . | . | . | 1 | 6 |
| [illegible] | 11 | . | . | . | 1 | . | . | .. |

| [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | | [illegible] | | [illegible] |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| [illegible] | 53 | 2 | 1 | . | . | . | 1 | .. |
| [illegible] | 46 | 1 | 1 | . | . | . | . | .. |
| [illegible] | 17 | 1 | 1 | . | . | . | . | .. |
| [illegible] | 19 | 1 | 1 | . | . | . | . | .. |
| [illegible] | 19 | . | 1 | . | . | . | . | .. |
| [illegible] | 11 | 1 | 1 | . | . | . | . | 3 |
| [illegible] | 6 | . | 1 | . | . | . | . | 15 |
| [illegible] | 34 | 2 | 1 | . | . | . | . | .. |
| [illegible] | 40 | 1 | 1 | . | . | . | . | .. |
| [illegible] | 38 | 1 | 1 | . | . | . | . | .. |
| [illegible] | 21 | 1 | 1 | . | . | . | . | .. |
| [illegible] | 18 | 1 | 1 | . | . | . | . | 18 |
| [illegible] | 6 | . | . | . | . | . | . | 12 |
| [illegible] | 14 | . | . | . | . | . | . | .. |
| [illegible] | 34 | . | 1 | . | . | . | . | .. |
| [illegible] | 30 | . | 1 | . | . | . | . | .. |
| [illegible] | 60 | 1 | 1 | . | . | . | . | .. |
| [illegible] | 21 | 1 | 1 | . | . | . | . | .. |
| [illegible] | 67 | . | 1 | . | . | . | . | .. |
| [illegible] | 11 | . | . | . | . | . | . | 17 |
| [illegible] | 381 | 7 | 1 | . | 1 | 4 | . | .. |
| [illegible] | 11 | . | 1 | . | . | . | . | 13 |
| [illegible] | 13 | 1 | 1 | . | . | . | . | 4 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 2 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 11 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 3 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 9 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 46 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 47 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 12 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 290 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 170 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 182 |
| | 1442 | 33 | 26 | 1 | 6 | 5 | 6 | 889 |
| **[illegible]** | | | | | | | | |
| [illegible] | 41 | 1 | 1 | . | . | . | . | ... |
| [illegible] | 7 | 1 | 1 | . | . | . | . | ... |
| [illegible] | 39 | 1 | 1 | . | . | . | . | ... |
| [illegible] | 14 | 1 | 1 | . | . | . | . | ... |
| [illegible] | 33 | 1 | 1 | . | . | . | . | ... |
| [illegible] | 46 | 1 | 1 | . | . | . | . | ... |
| [illegible] | 62 | 3 | 1 | . | . | . | . | ... |
| [illegible] | 18 | 1 | 1 | . | . | . | . | ... |
| [illegible] | 50 | 1 | 1 | . | . | . | . | ... |
| [illegible] | 38 | 1 | 1 | . | . | . | . | ... |
| [illegible] | 21 | 1 | 1 | . | . | . | . | ... |
| [illegible] | 7 | . | . | . | . | . | . | ... |
| [illegible] | 30 | 1 | 1 | . | . | . | . | ... |
| [illegible] | 30 | 1 | 1 | . | . | . | . | ... |
| [illegible] | 14 | 1 | 1 | . | . | . | . | ... |
| [illegible] | 22 | 1 | . | . | . | . | 1 | ... |
| [illegible] | 44 | 1 | 1 | . | . | . | . | ... |
| [illegible] | 19 | . | 1 | . | . | . | . | ... |
| [illegible] | 10 | . | . | . | . | . | . | ... |
| [illegible] | 14 | 1 | 1 | . | . | . | . | ... |
| [illegible] | 18 | 1 | 1 | . | . | . | . | ... |
| [illegible] | 24 | 1 | . | . | . | . | 1 | ... |
| [illegible] | 29 | 2 | . | . | 1 | . | 1 | ... |
| [illegible] | 24 | 2 | 1 | . | . | . | . | ... |
| [illegible] | 23 | 1 | 1 | . | . | . | . | ... |
| [illegible] | 25 | 1 | 1 | . | . | . | . | ... |
| [illegible] | 9 | 1 | 1 | . | . | . | . | 29 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 9 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 8 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | 1 | 9 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 28 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 11 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | 1 | 11 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 7 |
| [illegible] | 34 | 1 | 1 | 1 | 2 | . | 1 | 15 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | 1 | 17 |
| [illegible] | 29 | 2 | 1 | . | 2 | . | . | 30 |
| [illegible] | 51 | 1 | 1 | . | . | . | . | ... |
| [illegible] | 29 | 1 | 1 | . | . | . | . | ... |
| [illegible] | 28 | 1 | 1 | . | . | . | . | ... |
| [illegible] | ... | . | . | . | 1 | . | 1 | ... |
| [illegible] | ... | . | . | . | . | . | 1 | ... |
| | 882 | 34 | 27 | 1 | 6 | . | 9 | 174 |
| [illegible] | 3110 | 95 | 79 | 2 | 17 | 5 | 24 | 1680 |

# [illegible]

[illegible]

| [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | | [illegible] | | [illegible] |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| [illegible] | | | | | | | | |
| [illegible] | 950 | 17 | 6 | 2 | 1 | . | . | 1662 |
| [illegible] | 57 | 2 | 1 | . | . | . | 1 | .... |
| [illegible] | 30 | 1 | 1 | . | 1 | . | . | .... |
| [illegible] | 18 | 1 | 1 | . | 2 | . | . | .... |
| [illegible] | 22 | 1 | 1 | . | . | . | . | .... |
| [illegible] | 21 | 1 | 1 | . | 1 | . | . | .... |
| [illegible] | 41 | 1 | 1 | . | . | . | . | .... |
| [illegible] | 39 | 1 | 1 | . | . | . | . | .... |
| [illegible] | 7 | . | 1 | . | . | . | . | .... |
| [illegible] | 45 | 1 | 1 | . | . | . | . | .... |
| [illegible] | 28 | 1 | 1 | . | . | . | . | .... |
| [illegible] | 13 | . | . | . | . | . | . | .... |
| [illegible] | 4 | . | . | . | 1 | . | . | .... |
| [illegible] | 26 | 1 | 1 | . | . | . | . | .... |
| [illegible] | 16 | 1 | 1 | . | . | . | . | .... |
| [illegible] | 29 | 1 | 1 | . | . | . | . | .... |
| [illegible] | 6 | . | 1 | . | 1 | . | . | .... |
| [illegible] | ... | . | . | . | 1 | . | 1 | .... |
| [illegible] | ... | . | . | . | 2 | . | 1 | .... |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 16 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 41 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 11 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 19 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 14 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 19 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 2 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 6 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 17 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 3 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 16 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 8 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 6 |
| | 1352 | 30 | 20 | 2 | 10 | . | 3 | 1840 |
| [illegible] | | | | | | | | |
| [illegible] | 63 | 1 | 1 | . | . | . | . | .... |
| [illegible] | 15 | 1 | 1 | . | . | . | . | .... |
| [illegible] | 15 | . | 1 | . | . | . | . | .... |
| [illegible] | 44 | 1 | 1 | . | . | . | . | .... |
| [illegible] | 27 | 1 | 1 | . | . | . | . | .... |
| [illegible] | 45 | 2 | 1 | . | . | . | . | .... |
| [illegible] | 42 | 1 | 1 | . | . | . | . | .... |
| [illegible] | 61 | 3 | 1 | . | . | . | . | .... |
| [illegible] | 29 | 1 | 1 | . | . | . | . | .... |
| [illegible] | 18 | 1 | 1 | . | . | . | . | .... |
| [illegible] | 27 | 1 | 1 | . | . | . | . | .... |
| [illegible] | 44 | 1 | 1 | . | . | . | . | .... |
| [illegible] | 115 | 3 | 1 | . | . | . | . | .... |
| [illegible] | 50 | 1 | 1 | . | . | . | . | .... |
| [illegible] | 65 | 2 | 1 | . | . | . | . | .... |
| [illegible] | 58 | 2 | 1 | . | . | . | . | .... |
| [illegible] | 44 | 1 | 1 | . | . | . | . | .... |
| [illegible] | 79 | 3 | 1 | . | . | . | 1 | 14 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 14 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 7 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 10 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 4 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 20 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 15 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 10 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 8 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 15 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 15 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 17 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | 1 | 149 |
| | 841 | 26 | 18 | | | | | |
| [illegible] | | | | | | | | |
| [illegible] | 500 | 5 | 2 | 1 | 2 | 1 | . | .... |
| [illegible] | 96 | 3 | 1 | . | 2 | . | 1 | .... |
| [illegible] | 46 | 1 | 1 | . | . | . | . | .... |
| [illegible] | | | | | | | | |

| [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | | [illegible] | | [illegible] |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| [illegible] | 113 | 1 | 1 | . | . | . | . | . |
| [illegible] | 13[illegible] | 2 | 1 | . | . | . | . | . |
| [illegible] | 86 | 2 | 1 | . | . | . | . | . |
| [illegible] | 118 | 3 | 1 | . | . | . | . | . |
| [illegible] | 41 | . | 1 | . | . | . | . | . |
| [illegible] | 64 | 2 | 1 | . | . | . | 1 | . |
| [illegible] | 34 | 1 | 1 | . | . | . | . | . |
| [illegible] | 15 | . | . | . | . | . | . | . |
| [illegible] | 46 | 1 | 1 | . | . | . | 1 | . |
| [illegible] | 31 | 1 | 1 | . | . | . | . | . |
| [illegible] | 56 | 2 | 1 | . | . | . | . | . |
| [illegible] | 22 | 1 | 1 | . | . | . | . | . |
| [illegible] | 52 | 2 | 1 | . | . | . | . | . |
| [illegible] | 67 | 2 | 1 | . | . | . | . | . |
| [illegible] | 58 | 1 | 1 | . | . | . | . | . |
| [illegible] | 22 | 1 | 1 | . | . | . | . | . |
| [illegible] | 33 | 1 | 1 | . | . | . | . | . |
| [illegible] | 61 | 2 | 1 | . | . | . | . | . |
| [illegible] | 108 | 2 | 1 | . | 1 | . | . | . |
| [illegible] | 28 | 2 | 1 | . | . | . | . | . |
| [illegible] | 74 | 1 | 1 | . | . | . | . | . |
| [illegible] | ... | . | . | . | 1 | . | 1 | 8 |
| [illegible] | 63 | 2 | 1 | . | . | . | . | . |
| [illegible] | 34 | 1 | 1 | . | . | . | . | . |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 6 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 5 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 2 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 14 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 18 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 6 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | 1 | 15 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 17 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 16 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 12 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 12 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 26 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 7 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 18 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 48 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 19 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 22 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 24 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 20 |
| [illegible] | ... | . | . | . | 1 | . | . | 44 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 37 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 25 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 11 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 17 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 18 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 46 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 18 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 19 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 25 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 20 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 41 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 4 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 11 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 6 |
| [illegible] | ... | . | . | . | . | . | . | 18 |
| | 1958 | 42 | 26 | 1 | 7 | 1 | 5 | 675 |
| [illegible] | | | | | | | | |
| [illegible] | ... | . | . | . | . | 2 | . | .. |
| [illegible] | ... | . | . | . | 2 | 2 | 1 | .. |
| [illegible] | ... | . | . | . | . | 1 | 1 | .. |
| [illegible] | ... | . | . | . | . | 1 | . | .. |
| [illegible] | ... | . | . | . | . | 1 | . | .. |
| [illegible] | ... | . | . | . | . | 1 | . | .. |
| [illegible] | 4151 | 58 | 64 | 3 | 19 | 9 | 11 | 2664 |

650

[illegible]
27/I ... թ.